ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

EE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)
Téléphone : Glacière 15 - 70
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ՀԻՆԳՇԱԲԹԻ 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ JEUDI 1 OCTOBRE 1936

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,— ՏԱՐԵԿԱՆ ՎՃՑԱՄՍԵԱՑ ԵՒԱՄՍԵԱՑ

Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա	250 »	130 ֆրանք	—
Ամերիկա եւ ուրիշ երկիրներ	200 »	100 ֆրանք	—

ԺԸ ՏԱՐԻ — 12e Année No. 3232

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒՒ ԽՕՍՔ

ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔ

կարելի չէ թեթեւօրէն առնել թուրք մամուլին արտայայտութիւնները՝ Իսքէնտէրունի եւ Անտիոքի հարցին առթիւ։

Մի՛շտ այսպէս է եղած Թուրքիան,— ամէն անգամ որ մտանար ծրագիր մը որոճաց, նախ մթնոլորտ կը ստեղծէ լրագրական պայքարներով, կ'արձակէ սանձերը, որպէսզի կարելի եղածին չափ չատ ազմկեն։

Մեւնոյն ատեն, կառավարութիւնը ինք յարատեւօրէն կը լարէ մեքենան, բոլոր պատեհութիւններէն օգտուելու, ի հարկին հարուածը իջեցնելու համար։

Ներկայ պարագային ալ այդ դիծն է որ աչքի կը զարնէ։

Իսքէնտէրունի եւ Անտիոքի պայքարը ուղղուած է Ֆրանսայի եւ Սուրիոյ դէմ։ Մարզիկ հին յանձնառութիւններ կը յիշեցնեն, եւ Ֆրանքլէն Պուլեօնի կնքած դաշնագիրը (1921 Հոկտ. 20) ալ բաւական չսեպելով, նոր բաներ, մինչեւ անգամ անկախութիւն կը պահանջեն, հովանաւորութեամբ Թուրքիոյ։

Այս պահանջը միայն հողային բռնագրաւում չի նշանակեր, այլեւ նոր դաւ մը՝ Սուրիա հաստատուած հայ գաղթականութեան դէմ։

Համոզուելու համար, բաւական է կարդալ միայն երէկ հրատարակուած լուրը,— «Իսքէնտէրունի Հայերը կը փախչին»։

Լրատուն Թուրքերէն «Ծան»ն է (նախկին «Միլիյէթ»), որ դիտալին չարախնդրութեամբ մը աւետելով Հայերու փախուստը, կ'աւելցնէ.

— « Օգտուելով Անգարայի դաշնագրէն (20 հոկտ. 1921), բազմաթիւ հայրենազուրկներ ժամանակին տեղաւորուեցան ամէնէն մօտիկ բազաթիւներուն՝ Իսքէնտէրունի, Անթաքիոյ եւ Հալէպի մէջ։ Առեւտուրի միակ միջոցը՝ մահասանեցգուրթիւնն է։ Այս նպատակով բացած են խանութներ ուր մահասանեցգուած ապրանքներ կը ծախուին։ Անոնք իրենց կարելին կ'ընեն, ձեռքի տակէ հարուածելու համար Թուրքիոյ տնտեսութիւնը։ Հիմա դանակով կարելի չէ քանալ անոնց կզակները։ Վերջին կացութեան վրայ, այդ խանութներէն մէկ մասը այլ եւս ապրանք չի բերեր, իսկ մեծ մասը փակուած է»։

Նոր չէ մաքսանենգութեան այս պատմութիւնը։

Հինգ – վեց տարի առաջ, Լինկիւրի ահաւոր համեմատութիւններ տալով այս հարցին, արտակարգ միջոցներ առնօրինեց, եւ զօրաւոր գունդ մը տեղաւորեց սահմանին վրայ։ Այդ առթիւ մասնաւոր լիազօրութիւններ արուեցան հրամանատարին, եւ խիստ պատիժներ սահմանուեցան։

Ճիշդ է որ մաքսանենգութիւնը տեւական սխտ մը դարձած է Սուրիոյ եւ Թուրքիոյ սահմանին վրայ, իրրեւ հետեւանք տեղական պահանջներու։ Բայց եթէ Հայերը կան, կրկնապատիկ, եռապատիկ թիւով աւելի Թուրքեր եւ Քիւրտեր են որ բանուկ առեւտուրի մը վերածեր են մաքսանենգութիւնը. անոնք են որ ցանցեր կազմած են Անատոլուի բոլոր կեդրոններուն մէջ, եւ մինչեւ Կարին։ Եւ, ընդհարումներու առեն ալ, անոնք են որ կը բանուին, կը վիրաւորուին կամ կը սպաննուին։

Կը բաւէ թղթատել վերջին տասնամեակի Թուրքերէն Թերթերը, հաստատելու համար այս պարագան։

Ըսել կ'ուզենք թէ մաքսանենգութիւնը չատ սխտ պատրուակ է, չարունակ ահուդողի մատնելու համար սահմանամերձ չրջանները Հայ գաղթականութիւնը, որ արդէն փուչի վրայ նստած է։

Արդ, Իսքէնտէրունի եւ Անտիոքի հարցին հետ կրկին յուզելով մաքսանենգութեան խնդիրը, Թուրքիա կ'ուզէ երկու Թռչուն զարնել միեւնոյն քարով, — Սուրիոյ վրայ ճնշում բանեցնել թէ՛ քաղաքական եւ թէ տնտեսական տեսակէտով։ Երկու պարագաներուն մէջ ալ, խնդիրը սերտ կապ ունի Հայ գաղթականութեան ճակատագրին հետ։

Ի՞նչ միջոցներ ունինք, չարիքը սահմանափակելու եւ նոր անակնկալներ կանխելու համար։

Միջոցներու մչակումէն առաջ, անհրաժեչտ է խմանալ թէ որ եւ է գործակցութիւն հաստատուա՞ծ է Փարիզի եւ Սուրիոյ ազգ. իչխանութեանց միջեւ։

Մենք չատ ալ վստահ չենք այս մասին։ Թերեւս քանի մը նամակներ հասած են կաթողիկոսարանէն, Ֆրանքեւսուրիական բանակցութեանց առթիւ, եւ «զրոյց» մըն ալ տեղի ունեցած է երեւելիներու միջեւ։ Իսկ որ եւ է հիմնական ծրագիր եւ աչխատանք՝ դժուար թէ մաքէ անցած ըլլայ։

Գիտենք թէ ինչպէս կը կատարուին այս գործերը, տարիներէ ի վեր։ Իսկ այսօր չատ աւելի ժժգոյն է պատկերը։ Ջունինք պատասխանատու գլուխ մը, դեկավարութիւն մը, որուն օձիքէն կարելի ըլլար բռնել, այսպիսի պարագաներու մէջ։

Կ'ըսեն թէ դժուար, գրեթէ անկարելի է ընդհանուր դեկավարութիւն հաստատել, հայ ժողովուրդի այս աչխարհացրիւ կացութեան մէջ։

Մէկզի դնելով ակադեմական վիճաբանութիւնները, կ'ուզէինք հարցնել թէ ինչո՞ւ դժուար պիտի ըլլար, օրինակ, գործակցութիւն մը հաստատել Փարիզի եւ արեւելեան գաղութներու Հայ գաղթականութիւնը, որ արդէն փուչի վրայ նստած է։

*Արդ, Իսքէնտէրունի եւ Անտիոքի հարցին հետ կրկին յուզելով մաքսանենգութեան խնդիրը, Թուրքիա կ'ուզէ երկու Թռչուն զարնել միեւնոյն քարով, — Սուրիոյ վրայ ճնշում բանեցնել թէ՛ քաղաքական եւ թէ ան

ՕՐԸ ՄԻՇ, ՀԱՍԸ ՀԱՍ

— ○ —

Ն. Ա. Ասլանյանը «Ֆրանս-Պրես» գործակալության հետ հարցազրույցում անդրադարձել է Ֆրանսիայի ներկա ներքաղաքական կացությանը։

Ֆրանսիայի ներկայիս ներքաղաքական կացությունը, ասել է նա, ծանր է։ Ֆրանսիան ապրում է ներքաղաքական ճգնաժամ։ Ֆրանսիայի ներկայիս կառավարությունը, որ ստեղծվել է Ֆրանսիայի ազգային ժողովի ընտրություններից հետո, ներկայացնում է ընտրություններում հաղթած ուժերի միայն մի մասը։ Ֆրանսիայի ազգային ժողովում ներկայացված ուժերի մեծ մասը դուրս է մնացել կառավարությունից։ Ֆրանսիայի ներկայիս կառավարությունը ստիպված է եղել ապավինել ազգային ժողովում ներկայացված ուժերի մի մասի աջակցությանը։ Ֆրանսիայի ներկայիս կառավարությունը ստիպված է եղել ապավինել ազգային ժողովում ներկայացված ուժերի մի մասի աջակցությանը։ Ֆրանսիայի ներկայիս կառավարությունը ստիպված է եղել ապավինել ազգային ժողովում ներկայացված ուժերի մի մասի աջակցությանը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ի՞նչ կը բանին ուրիշ երկիրներու մէջ

Սեղանաւորական շրջանակներէ կը հաղորդեն թէ Իտալիա իր դրամին գինը պիտի կոտրէ 40 առ հարիւր համեմատութեամբ եւ կամ «արտաժման լիրէթ» մը պիտի հաստատէ, իբրեւ հետեւանք ֆրանսական, գուիցերիական եւ հոլանտական դրամներու արժեզրկման: Այս նոր լիրէթը 25 — 30 առ հարիւր աւելի աժան պիտի ըլլայ քան ներքին լիրէթէն: Անոր շնորհիւ Իտալիոյ առեւտրականները պիտի կրնան մրցիլ օտար հրապարակներու վրայ: Այդ պարագային անփոփոխ պիտի մնայ լիրէթին ներկայ արժէքը: Եթէ այս գործողութիւնը կատարուի, Իտալիա երեք տեսակ դրամ պիտի ունենայ,— 1. Ներքին գործածութեան համար. — 2. Օտար առեւտուրի համար — 3. Շրջիկներու համար:

*** Գուիցերիական կառավարութիւնը լիազօրութիւն ստացաւ խափանելու զինեղու ապօրէն բարձրացումը: Գերմանական կառավարութիւնը առ այժմ չուզեր հետեւիլ ուրիշ երկիրներու օրինակին: Չեխական կառավարութիւնն ալ երկար խորհրդակցութենէ մը վերջը որոշեց արժեզրկել քուրոնը:

*** Սակարանները գոց են տակաւին, բայց անգլիականը արդէն կ'արժէ 96, երբեմն 100 (փոխան 75 — 77ի), իսկ ոսկեղը՝ 18.90 եւ աւելի:

ԾՈՎԱՑԻՆ ՃԱԿՍՏԱՍԱՐՏ ՄԸ ՃԻՊՐԱԼԹԱՐԻ ՄԷՋ

Սպանիոյ ապստամբներուն ձեռքը մնացած երկու մարտանաւեր երեք շաբթի օր ձիպրալթարի նեղուցին մէջ յարձակեցան երկու կառավարական թորպիլանաւերու վրայ: Այս վերջիններէն մէկը վնասուեցաւ, իսկ միւսը ընկղմեցաւ: Ֆրանսական չոգենաւ մը թորպիլանաւին նաւաղներէն 40 հոգի ազատեղով Մարսէյլ տարաւ: Ճակատամարտը տեւեց երեք ժամ:

Նոյն օրը հինգ ապստամբ օդանաւեր ռմբակոծեցին Պիլպաոն, թէեւ քաղաքին կառավարիչը կը սպառնար սպաննել 1500 պատանդներ: Այս հինգ-րորդ ռմբակոծութիւնն է որ կը կատարուի: Ընդհանրապէս հրթիռ ռումբեր կը նետուին գլխաւոր պողոտաներուն վրայ:

Մատրիտի կառավարութիւնը որոշեց ինքնավարութիւն շնորհել Պասքեան նահանգներուն, ինչպէս եղած է Քաթալոնիոյ մէջ:

Զօր. Ֆրանքօ սպարապետ նշանակուեցաւ բոլոր ապստամբ ուժերուն: Լուրի մը համաձայն, զօրավարը որոշած է Մատրիտ մտնել հոկտեմբեր 12ին: Այս առթիւ իր կուսակիցները կ'ըսեն.— «Զօրավարը կրնայ անմիջապէս Մատրիտ մտնել 40,000 գինուոր զոհելով, բայց քաղաքական պատճառներով կը նախընտրէ մայրաքաղաքը գրաւել նուաղագոյն կորուստով»: Զօրավարին կարծիքով կարմիր բանակը խորտակուելու վրայ է: Ինք հեգնութեամբ կ'ընդունի վճռական զիմադրութեան խօսքերը:

Ֆրանկոսուրիական դաշնագրին գլխաւոր տրամադրութիւնները

Ազատական մամուլը հետեւեալ մանրամասնութիւնները կը հաղորդէ Ֆրանսայի եւ Սուրիոյ միջեւ կնքուած դաշնագրի մասին.—

Սուրիական պատուիրակութիւնն ու Ֆրանսական կառավարութիւնը համաձայնութիւն գոյացուցին նախ Սուրիոյ մէջ հրատարակելու համար դաշնագրին պատճէնը: Դաշնագիրը պատրաստուած է երկու լեզուներով՝ Ֆրանսերէն եւ արաբերէն: Եթէ տարակարծութիւն մը ծագի դաշնագրի որ եւ է մէկ կէտին չուրջ, իրրեւ հիմ պիտի ընդունուի Ֆրանսերէն բնագիրը: Այս պայմանը անոր համար որ սուրիացի պատուիրակները Ֆրանսերէն կը հասկնան, մինչդեռ Ֆրանսացի բանագնացները անծանօթ են արաբերէն լեզուին:

Հետեւեալ դաշնագրին էական կէտերը.—

1.— Դաշնագիրը ամբողջովին կը ընդէ հոգատարութիւնը եւ կը ճանչնայ Սուրիոյ անկախութիւնը, ընդունելով անոր միջազգային գոյութիւնը: Հէկպէ Տրիւզի եւ Ալէվիներու երկիրները կը կազմեն Սուրիոյ մաս, սակայն կ'օժտուին ներքին առանձին իրաւունքներով եւ օրէնքներով:

2.— Ֆրանսա եւ Սուրիա փոխադարձ պաշտպանութեան համաձայնութիւն կը կնքեն:

3.— Սուրիա, համաձայն այս դաշնագրին, կը կազմէ իր բանակը: Ֆրանսական ուժերը կը քաշուին հեզհեզուկ: Դաշնագրի ստորագրութեան հինգերորդ տարին Ֆրանսական ուժերը ամբողջովին քաշուած կ'ըլլան Սուրիայէն: Այժմէն սուրիական կառավարութեան կը փոխանցուին Ֆրանսական ուժերու ձեռքը գտնուող ամրութիւններն ու ռազմական դիրքերը: Ֆրանսացիները պիտի ունենան երկու օդանաւային ու երկու պինուորական կայաններ, քաղաքներէն հեռու վայրերու մէջ:

4.— Առանց սահմանափակման սուրիական կառավարութիւնը պիտի վարէ երկրին ելեւմտական ու անտեսական գործերը:

5.— Սուրիական կառավարութեան իրաւունքն է նշանակել ներկայացուցիչներ, հիւպատոսներ կամ դեսպաններ այն բոլոր երկիրներու եւ մայրաքաղաքներու մէջ որ պէտք կը տեսնէ:

6.— Ֆրանսա կը հրաժարի պահանջելէ զրաւման եւ հովանաւորութեան ծախքերը (համաձայն հոգատարութեան դաշնագրին Ֆրանսա իրաւունք ունի պահանջելու այդ ծախքերը):

7.— Ֆռան դատարանները կը զգրին: Բոլոր դատաւորներն ալ սուրիացի պիտի ըլլան: Սակայն, այն պարագային, երբ, օտարահպատակի մը դատավարութիւնը տեղի կ'ունենայ, այն ատեն Ֆրանսացի դատական - խորհրդական մը կը մասնակցի առեանին:

8.— Սուրիական կառավարութիւնը պատ է ուղածին չափ Ֆրանսացի պաշտօնեաներ կամ մասնագէտներ ծառայութեան կոչելու:

9.— Արգելք չկայ Լիբանանի Սուրիոյ միացման: Եթէ երկու երկիրները համաձայնին ապագային, կրնան միութիւն կազմել:

10.— Սուրիա եւ Լիբանան համախորհուրդ կրնան մշակել նոր օրինագիծ մը հասարակաց չահերու խնդրին կարգադրութեան համար:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՄԸ ՏՐՂԱՒ

ՁԻՒՆ ԿԸ ՏԵՂԱՑ Ֆրանսայի գանազան մասերուն մէջ, մանաւանդ Կրընոպլի կողմերը եւ զէպի Ջուիցերիոյ սահմանը: Փարիզի մէկ ալ օդը ցրտած է երկու օրէ իվեր:

ՑՈՐԵՆԻ ՀՈՒՆԳԸՐ այս տարի անբաւական պիտի գայ Գերմանիոյ մէջ: Կառավարութիւնը յանձնարարեց խնայողութեամբ գործածել արմտիքը:

ՈՒԽ ԱՂՋԻԿՆԵՐ ՓԱՒԱՆ Փարիզի ուրիչ մէկ թաղէն՝ Փիքփիւսի զգաստարանէն, կապելով երկու պահապաններուն ձեռքերը, ոտքերը եւ բերանները: Անցեալ շաբթու ալ Պիյանքուռի մէջ այսպիսի դէպք մը պատահած էր:

Հ. Ց. Դ.

Գաւառ

ՄԱՐՍԷՒԼԻ Ե�րՋ. կոմիտէն ընդ. ժողովի կը հրաւիրէ Ռոստոմ, Իշխան, Քրիստափոր եւ վաճագն ենթակոմիտէները եւ խումբերը, հինգշաբթի 1 Հոկտ., երեկոյ ժամը 8.30ին, Շաֆրիկեան սրահին մէջ:

ԹԷՕԱՍԵՂԱՆ

Ի ՊԱՏԻՒ ՏԻԿԻՆ Լ. ՇԱՆՔԻ ԻՐ ՍՈՒՐԻԱ ՄԵԿՆԵԼՈՒՆ ԱՌԹԻՒ

Կազմակերպուած Ֆր. կ. Խաչի Փարիզի մասնաճիւղին կողմէ

ՏԵՂԻ Կ'ՈՒՆԵՆԱՅ կիրակի 4 Հոկտ., ժամը 3—7

Ռուսական ֆոնսէրվաթուարի սրահին մէջ, 26 Av. Tokio, Métro Alma եւ Iéna

Կարելի է նախօրօք արձանագրուիլ հետեւեալ Հասցէներուն.—

Mlle H. Petrossian, 6 rue de Trétaigne, Paris (18)

Հեռ. Mont. 13—09

եւ Mlle Mérangulian: 27 rue Desnouettes, Paris (15):

ՄՈՒՏՔ 5 *ՖՐ.*, (մէջը ըլլալով՝ թէյ, խմորեղէն, շամփայն):

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

փարիզի Հարաւ. Շրջանի ցառաջդիմասիրաց Միութեան վարչութիւնը իր շնորհակալութիւնը կը յայտնէ բոլոր անոնց, որ քանիւ եւ գրով իրենց շնորհաւորութիւնները յայտնած են Ակումբին բացման առիթիւ, որուն պաշտօնական ինանդէսը տեղի պիտի ունենայ մօտ օրէն:

Ակումբին անդամատուրքը տարեկան 50 ֆր. է: Հասցէ— M. Achdjian, 14 rue Meyerbeer, Blanc-Mesnil (S. et O.):

«ՀԱՅ ԱՐԾԻԻ»

վերջերս պարզած էինք այս միութեան նպատակը:

Ակումբին վարչութիւնը կը բազկանայ հետեւեալներէն.— Հիմնադիր նախագահ Ա. Լ. Աշճեան, քարտուղար՝ Օր. Լ. Ձիմմէճեան, գանձ. Օր. Ի. Ֆուռնուճեաճօ: Խորհրդականներ՝ Ֆիկ. Բ. Աշճեան, Պ. Հ. Գալիճեան, Օր. Ս. Էլմասեան. Պ. Ն. Սեդրոսեան: Ակումբը մասնաւոր ուսուցիչներ նշանակած է Ֆայերէնի եւ երաժշտութեան համար: Հայերէնի եւ երաժշտութեան դասերը պիտի աւանդուին ամէն չորեքշաբթի օրեր ժամը 21—23, Salle Wackerh մէջ, 67 69 rue de Douai (Place Clichy) Paris (9): Առաջին եւ երկրորդ նիստերը տեղի ունեցան, ժողովներուն ներկայ եղած են 20էն 25 անդամներ:

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Փարիզի Հարաւ. Շրջանի Ցառաջդիմասիրաց Միութեան վարչութիւնը սարքած է բժշկական դասախօսութիւն մը յառաջիկայ շաբաթ գիշերը Հոկտ. 3, ժամը 9ին, Դպրոցի սրահին մէջ:

Կը դասախօսէ՝ բժիշկ Պ. ՊՕՂՈՍԵԱՆ

Կը հրաւիրուին շրջանիս բոլոր հայրենակիցները:

ԸՆԿԵՐԱՀԱՄԱԿՐԱԿԱՆ ԵՐԻԿՈՑԹ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ Հ. Ց. Դ. ՎԻԵՆԻ ԿՈՄԻՏԷԻ ԿՈՂՄԷ

Նուիրուած ընդհանուր հայ հերոսներու յիշատակին,

ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ 3 Հոկտ. շաբաթ երեկոյ ժամը 8ին,

Հ. Ց. Դ. «Թաժակ» Ակումբին մէջ:

Այս առթիւ պիտի բանախօսէ ընկ. Կ. ՄՐԱՁԵԱՆ

ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՆ երգեր, արտասանութիւններ եւ նուագ:

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ Է:

Մարսէյլի Աբեղեան թատերախումբը

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՆԷ

«ՄԵԾԱՊԱՏԻԻ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐԸ»

3 Հոկտ. շաբաթ երեկոյ ժամը 8ին, Շաֆրիկեան սրահին մէջ,

5 Rue de l'Eclipse

Վարագոյրը կը քաշուի հիշատ ժամը 9ին:

ՏՈՒԱԵՐու գիները՝ Ա. կարգ 4 ֆր.; Բ. կարգ 3 ֆր.:

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ (Սեւր)

Մխիթարեան Հայրերու Սեւրի Մուրատեան Վարժարանին 1936—1937 դպրոցական տարեշրջանը կը սկսի յառաջիկայ Հոկտեմբեր 1ին. Վարժարանը կ'ընդունի զիշերօթիկ, կէս-զիշերօթիկ եւ ցերեկօյթ աշակերտներ:

Արձանագրութիւններու համար դիմել վարժարանի ցեսչուհեան Direction du Collège Arménien Samuel Moorat, 26 Rue Troyon· Sèvres (S. & O.)

ԸՆդունելութեան օրերն են երեքշաբթի ժամը 9էն 12 եւ կիրակի օրերը ժամը 15էն 18:

ԵՂԻՇԷ ԱՐՋՈՒՄԱՆԵԱՆ

ՁԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

AMERICAIN LLOYD — **48 rue de la République**

ORIENT LLOYD — **7 rue Auber, Paris**

Մարսէյլ, Tél. C. 47-22 եւ C. 74-51 Tél. Opéra 67-77 67-78

Նաւային բոլոր բնկերութիւններու ներկայացուցիչ:

ՏՈՒՄակներ՝ ամէն տեղի համար, Հայ Ճամբորդներու համար մասնաւոր գին: ընտիր ենթակայներ աշխարհի ամէն կողմը:

ՎԱՍԱՒԵԼԻ ՏՈՒՆ:

Etude de Me BERNARD WAHÉ

(17e ANNÉE)

Licencié en Droit de la Faculté de Paris

Ancien élève de l'École des Hautes Études Sociales

JURISCONSULTE

de]

Droit Français et International Privé

Mandataire en Justice

159 rue Lafayette, Paris (Gare du Nord) Tél. NORD 68—02

ԿԸ ՍՏԱՆՁՆԷ ամէն տեսակ դատեր, Փարիզի, դաւառի, գաղութներու եւ արտասահմանի մէջ: Ներշրջակայքութիւն իրաւագիտ. ամէն տեսակ խնդիրներու. Արկածի դատեր, ամէն լեզուէ թարգմանութիւններ: Նաթիւրալիզասիոնի օրինական ձեւակերպութիւններ եւ անուններու փոփոխութիւն, ընկերութիւններու կազմութիւն եւ լուծում: Ամէն տեսակ դործերու խմբագրութիւն: Իրաւագիտական քննութեանց եւ մրցումներու պատրաստութիւն: Ճառերու եւ գաւառասութիւններու խմբագրութիւն: Ներշրջակայքութիւն 25 ֆր.: Կ'ընդունի ամէն օր ժամը 5—7, բացի շաբաթ, կիրակի եւ տօնի օրերէ:

Կ'ընդունի նաեւ ժամադրութեամբ:

ԳԱՁԷՔ ՏԵՍԷՔ

CIGALE CINÉMA

60 Avenue de Saxe-LYON.

ԳԱՁԷՔ ՏԵՍԷՔ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Cinéma REXY

Rue Cours Lafayette, angle Garibaldi

Le Gérant: H. STEPHAN

Imprimerie A. DER (AGOPIAN) 17, Rue Damesme, PARIS (13)

Դ. ՏԷՐԻԿ

Գամիլլիէն ցեխոտ ու լեռնային ճամբաներէ անցնելէ վերջ կը հանդիպինք գարձեալ հայաչատ կեդրոն մը՝ «Տէրիկ»:

Տէրիկի բնակչութիւնը ամբողջ Հայերէ կը բաղկանայ,— մօտ 170 բնակիչ որոնք գաղթած են վերջին տարիները Թուրքիայէն, առաւելապէս Ուրֆայէն:

Հայերը որոնք մեծ մասամբ քրտախօս են, ունին եկեղեցի մը ու դպրոց մը 100 աշակերտութեամբ եւ 4 պաշտօնէութեամբ:

Ժողովուրդին մէկ մասը կը զբաղի արհեստով եւ մանր առեւտուրով, իսկ մեծամասնութիւնը կամաւորաբար ֆրանսական զբօշին ծառայող պինուորներ են:

ԱԶԱՏԱՄԱՐՏ ԹՈՒՐԲՈՆԷ (10)

ՁԱՐԹՕՆԻ

(ՎԷՊ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵԱՆՔԷ)

—o—

Կեանքի զարմանալի խաղաղ չրջան մը սկսաւ մեր Քաչալին համար, որ Փարաքարի մէջ վեստին մկրատած՝ նոր անուանակոչութիւն մը ստացեր էր: Վարժապետ Յակոբ, ինչ որ ալ լինէր, Քաչալ օտարոտի անունէն պակաս չէր նորը. երբ իսկական անունը չէր կրնար գործածել, իր ի՞նչ հոգը, թէ չուրջինները ի՞նչ անունով կը կանչէին զինքը:

Վարժապետ Յակորի եւ Գէորգի անկողինները տանիքը կը փէչին: Աբեւի Ճառագայթները հավիւ կ'օսկեզօծէին վեհափառ Մասիսի Ճակտին նստած ձիւնը, երբ Յակոբ վարժապետը ամէնքէն առաջ կ'ելլէր անկողնէն, այդիի մէջէն անցնող առուակի կկլւացող ջրով երեսը կը լուար, մինչեւ որ տնեցիք տեղերնէն ելլելով նախաճաշը պատրաստէին:

Տնեցիք չատ չուտով մտերմացան հիւրին հետ, բայց մանաւանդ կէս երկուսնեակ երեխաները, որոնց խաղկան խաղընկերը դարձած էր վարժապետ Յակորը: Ան որքան ալ չատ հէքեաթներ գիտէր:

Երեխաները հանգիստ չէին ձգեր մտքով մօրուքով այդ բարձրահասակ մարդը, նոյնիսկ Գէորգ հօրեղբայրէն աւելի:

Գէորգի ուշադիր եւ յարգալից վերաբերմունքէն Սարգիս Աբերն ու Գէորգի եղբայրները չատ չանցած գլխի ինկան, որ այդ օտարական հիւրը աւելի բան մըն է, քան սովորական հայ վարժապետ մը: Բայց քանի որ Գէորգը ոտկէ աւելի բան մը չէր յայտներ, իրենք ալ եզածովը կը գոհանային: Անգամ մը սակայն Սարգիս Աբերը լուրջ պատճառ ունեցաւ անհանգստանալու: Շրջանի ռուս պրիստաւը երկու ոստիկաններու հետ յանկարծ այդին մտաւ: Հին ծանօթ մըն էր պրիստաւը եւ չատ անգամներ հիւր եկած:

Հապա թէ եկուորները տեսած՝ վարժապետը, որ ցնցուղով ծաղիկները կը ջրէր, բոլորովին ապրծած տուն մբտաւ, եւ գուրս չեկաւ, մինչեւ որ ատոնք մեկնեցան այդիէն:

Սարգիսը Աբերը հին, փորձուած մարդ մըն էր: Դունջը ձեռք առած՝ սկսաւ մտածել. ինչո՞ւ վարժապետը պրիստաւը տեսնելուն այնքան վախցաւ: Այդ մասին՝ Գէորգին խօսք բացաւ, բայց աւելի եւս զարմացաւ, երբ տգան բոլորովին անհանգստացած՝ խնդրեց, որ էդ պաշտօնական մարդին քիչ մը հետու պահէ այդիէն: Սարգիս Աբերը աւելի ծանր սկսաւ մտածել:

Անգամ մը յուլիսի կէսերուն, վահէն անակնկալ կերպով մէջտեղ ելաւ: Իր հաղորդական ջերմ բնաւորութեամբ անմիջապէս բարեկամացաւ անեցւոց բոլորի հետ: Սարգիս Աբերն ալ, որ ուրախ մարդիկ կը սիրէր, դոհունակութեամբ ձեռքերը չփեց: Վերջապէս, Գէորգի ընկերներէն մէկը եղաւ, որ սեղանի վրայ նոր հարսի նման նազ ընել չէր գիտեր երկու բաժակ օղի խմելու համար: Երկու օր հիւր մնաց Վահէն: Մէկ ալ երրորդ առտու անեցիք ելան, որ Վահէն չըկայ, գիշերով անյայտացեր է: Սարգիս Աբերը այլեւս ոչինչ հարցուց Գէորգին:

Փարաքար գիւղը հողագործի ծանր աշխատանքով կը ապար: Արարատեան Դաշտի հզօր արեւն երկնքէն ոսկի ճառագայթ կը մաղէր ցորենի հչչացող արտերուն, կանաչ այդիները, բամպակի դեղին եւ ճերմակ ծաղիկներուն վրայ:

Մեր վարժապետին համար այդ հըսկայ դաշտի ծովը, անատառապատ գիւղերով, մշակուած արտերով, անսովոր պատկեր մը կ'երեւէր: Աբեւ-մուտի ժամանակ, երբ տուներնները կ'երկարէին, ժամերով տանիքը նստած, աչքը Մասիսներուն եւ Դաշտին, նայիլէն չէր կշտանար:

Այդպէս անցաւ յուլիս ամիսը: Վարժապետը հետզհետէ կը կաղդուրուէր:

Օգոստոս երեքի մեծ ցոյցը առաջին զէպքն էր, որ տեղի ունեցաւ Աբատեան Դաշտին մէջ: Հազարաւոր բամպակի մինչեւ էջմիածին գընաց Հայրապետին բողոքելու, եւ խնդրելու, որ հայ եկեղեցիի կալուածները ցարական կառավարութեան չյանձնէ: Գէորգի եղբայրները, ինչպէս նաեւ բամպակի գիւղացիներ մէացան ցուցարարներուն:

Այդ ցոյցէն վերջ, քաղաքի ինչպէս նաեւ Դաշտի բոլոր գիւղերուն մէջ անօրինակ եռուզեռ մը սկսաւ: Գիւղական ժողովներ, որոշումներ իրարու կը յաջորդէին: Քաղաքն էր չարժման ուղղութիւն տուողը: Այդ տրամադրութիւններու խմորումը աւելի ուժեղացաւ անով, որ այդ տարի, օգոստոսի 28ին տեղի պիտի ունենար էջմիածնի մէջ միւռոնօրհնէքի մեծ հանդէսը: Զորս կամ ութ տարին անգամ մը միայն տեղի կ'ունենար միւռոնօրհնէքը, եւ ամէն անգամ տասնեակ հազարաւոր ուխտաւորներ կը հաւաքուէին էջմիածնի տաճարի չուրջը:

Քանի օգոստոս 28ը կը մօտենար, Յակոբ վարժապետը, չնչուած կերպով հոգեկան խաղաղութիւնը կրկորանցնէր: Տասնեւչորս տարի անցած էր անէն մեկնելէն իվեր: Այդ սարսափելի տարիներու ընթացքին մեռած էին մայրը եւ մեծ եղբայրը: Հիմա կը մընային ծերունի հայրը եւ քոյրը, որ հազիւ թէ երկու տարեկան երեխայ մը լինէր, երբ ինք մեկնեցաւ անէն:

Թիֆլիսէն հեռանալէն վերջ, Եւգինէի հետ կը կանոնաւորաբար կը թղթակցէր Քաչալը: Վերջին նամակը տացած էր Ալէքսանդրոպոլէն: Նպրաղելէ վերջ հոն տեղի ունեցած զովրդական մեծ ցոյցը, Եւգինէն մացնէր, որ Զանկեզուրէն Քաչալհայերն ու քոյրը միւռոնօրհնէքի դնէին պիտի գան, եւ որ ինքն ալ նի մը օրէն կը լինի Փարաքար:

Հարազատներուն եւ Եւգինէի լու լուրը բարձրացուց Քաչալի տրմադրութիւնը, որ երբեմն չատ կամ կը լինէր ապագայի անորոշութեան պատճառով: Երկու սիրահարները, հազիւ թէ քանի մը օր անցուցած էին, երբ տիպուած մը նուեցան, անորոշ ապագայի մը կիւղը իրենց սրտերուն մէջ:

Եւգինէի հետ ունեցած կապը, դեկան բաւականութեան հետ միասին, ծանր պատասխանատուութիւն մը առաջացուցեր էր Քաչալի սրտին մէջ:

ՄԱՒԻԱՆ

(Շար.)

ՓՆՏՌԵՑԷՔ ԵՒ ԿՈՐԴՈՒՑԷՔ՝ «Մ Ե Ղ Ո Ի» երգիծաթերթ՝ Փարիզի եւ Ջրջանի Ցառաջի ցօրսի:

Գ. ԱՒԵՏԻՔԵԱՆ:

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

EE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)
Téléphone : Glacière 15 - 70
(ԵՐԹԵԻԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ՈՒՐԲԱԹ
2
ՀՈԿՏԵՄԲԵՐ
VENDREDI
2 OCTOBRE
1936

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,—

	ՏԱՐԵԿԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ	ԵՌԱՄՍԵԱՅ	
Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա	250 »	130 ֆրանք	—
Ամերիկա եւ ուրիշ երկիրներ	200 »	100 ֆրանք	—

ԺԸ ՏԱՐԻ — 12e Année No. 3233 — Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ — ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՂԱԶՈՅՆ Հ. Յ. Դ. ՇՐՋ. ԺՈՂՈՎԻՆ

Այսօր կը բացուի Հ. Յ. Դ. Արեւմտեան Եւրոպայի 14րդ Շրջ. Ժողովը, մասնակցութեամբ կուսակցութեան մը:

Անոնք որ հետու կը մնան կուսակցութիւններէ կամ ծանօթ չեն կուսակցական կեանքի մանրամասնութեանց, անշուշտ շատ բան չեն հասկնար այս տարեկան ժողովներէն: Իսկ կուսակցութեան անդամները գիտեն թէ ի՛նչ կը նշանակեն, տեղական ընդհանուր ժողովներէն վերջը, Շրջանային ժողովները, որոնք անխափան կը շարունակուին տարիներէ ի վեր, ամէն ուր որ կեդրոնական Կոմիտէները ունի Դաշնակցութիւնը:

Առանց այս պարբերական ժողովներուն, ոչ միայն կուսակցական կեանքը պիտի առանար ժժգոյն եւ լճացած վիճակ մը, այլ եւ պիտի տկարանար պատասխանատուութեան զիտակցութիւնը, որ կը կազմէ հիմը մեր հաւաքական գործունէութեան:

Այս ժողովներուն չնորհիւ է որ շարքերը առիթ կ'ունենան մօտէն ծանօթանալու կուսակցութեան ներքին կեանքին, գաւեղու անոր չարն ու բարին, քննելու տրուած որոշումներու գործադրութեան մանրամասնութիւնները, եւ մշակելու նոր բանաձեւեր, յաջորդ շրջանին համար:

Մինչեւ Շրջ. Ժողով, կազմակերպութեան իւրաքանչիւր մասնիկը, կոմիտէ, ենթակոմիտէ կամ խումբ գումարած կ'ըլլայ իր տեղական ժողովները, ուր կը քննուին օրակարգի հարցերը, եւ կը քուէարկուին բանաձեւեր: Այդ բանաձեւերն են որ պատգամաւորներու միջոցով պիտի պաշտպանուին Շրջ. Ժողովին մէջ եւ պիտի մշակուի բուն ուղեգիծը, ամբողջ շրջանին համար, մինչեւ յաջորդ ժողովը:

Ազանդական բառով, պատգամ. ժողով մըն է այս (ինչպէս կը կոչեն Մ. Նահանգներու մեր ընկերները), շրջանին գերագոյն մարմինը, համաձայն ծրագիր - կանոնագրի սրամադրութեանց:

Թերեւս աւելորդ չէր յիշել այս տարրական գիտելիքները, հարեւանցի գաղափար մը տալու համար անոնց որ չտճախ չեն թուիթեան կը մասնակցին դաշնակցական ժողովներու բազմազան նութեան առիթ:

×

Ի՞նչ մթնոլորտի մէջ կը բացուի մեր Շրջ. Ժողովը:

Ներքին՝ կուսակցական տեսակէտով, բուն պատկերը պիտի պարզուի ժողովին մէջ, գրաւոր եւ բերանացի զեկուցումներով, որոնց կը մասնակցի, նաեւ, կուսակցութեան Գերագոյն Մարմնին ներկայացուցիչը:

Անշուշտ կուսակցական իւրաքանչիւր շրջանի գործունէութիւնը, ընդհանուր հոգերէն զատ, սեփականը կ'ունենայ մէկայն վայրի կեանքին հետ:

Արդ, ի՞նչ կը ներկայացնէ մեր շրջանը, այս տեսակէտէն:

Ազգային ճակատին վրայ, բաղդատաբար տանելի է Ֆրանսայի եւ Հարեւան երկիրներու պատկերը, համեմատելով ուրիշ գաղութներու հետ:

Այստեղ չունինք սուր վէճեր, չունենալով ազգային կազմակերպութեան այն կարգ ու սարքը որ կը տիրէ միւս գաղութներուն մէջ:

Կուսակցական, բուն բառով հակադաշնակցական պայքարը այստեղ ալ կը հասցնէ իր թռոյները, պղտորելով մթնոլորտը եւ խափանելով գործակցութեան ճամբան, գոնէ հիմնական հարցերու մէջ: Բայց, բաղդատելով քանի մը տարի առաջուան վիճակին հետ, որոշ մեղմացում կը տիրէ:

Իրականին մէջ, անզօր կատաղութեան մը ջղաձգութիւններն են որ սիրտ կը պղտորեն այստեղ ալ, մինչեւնոյն կախարդական ազդանշանով — «Հայաստանի բարեկամ», «Հայաստանի թշնամի»: Եթէ մարդիկ փորձ մը կատարէին մէկդի նետելու այդ զարշելի բանաձեւը, ո՛րքան ամպեր ինքնին փարատած պիտի ըլլային, ճամբայ բանալով չինարար գործունէութեան եւ հաւաքական գործակցութեան համար:

Քաղաքական եւ ընկերային տեսակէտով, այս երկրին մէջ կատարուած յեղաշրջումը զգալապէս ազդած է, նաեւ, մեր շարքերուն վրայ, որոնք աշխատաւորներ են, ջախջախիչ մեծամասնութեամբ:

Հակառակ տիրող անատուգութեան, ընկերային օրէնքները ունեցան բարերար հետեւանքներ: Օտարներու դէմ հատուածած շահագործումները չվերցան, նորէն 10 ատ հարիւրն է տիրապետողը օրէնքը: Եւ սակայն, կարելի չէ ժխտել մթնոլորտին նպաստաւոր ազդեցութիւնը:

Իրականութիւն է որ բազմաթիւ ընկերներ, ինչպէս ուրիշ հայ աշխատաւորներ անդամ արձանագրուեցան Արհեստակցական Միութեանց, անցեալ յունիսէն ի վեր, թէ իրենց իրաւունքները ապահովելով եւ թէ մերժեցում, ճակատագրի եղբայրակցութիւն հատուցանելով:

Այս երեւոյթը կը ներկայացնէ ուրիշ երեւոյթներ, որոնք անշուշտ պիտի քննուին Շրջ. Ժողովին մէջ, ընդհանուր ուղեգիծ մը մշակելու համար:

Մեր շրջանը միւս գաղութներէն կը տարբերի, նաեւ, ուրիշ տեսակէտով մը:

Գանուելով արեւմտեան Եւրոպայի սրտին վրայ, ակնախիղ եւ համայնակուլ միջավայրի մը մէջ, մեր երիտասարդութիւնը թերեւս շատ աւելի կը կարօտի ուշադրութեան եւ աշխատանքի, քան այլուր: Մեր կազմակերպութիւնն ալ մեծամասնարար կազմուած ըլլալով երիտասարդներէ, կը ներկայացնէ այնպիսի պահանջներ որոնք լուրջ քննութիւն կը պահանջեն:

Մենք հաւատացի կը յիշենք այս պարագաները, ողջունելով Շրջ. Ժողովին բացումը եւ ցանկալով նոր շրջան մը՝ թարմութեան եւ ինքնագործունէութեան:

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԾԵՐԱԿՈՑՑՆ ԱԼ ՔՈՒԷԱՐԿԵՑ ԱՐԺԵԶԱՐԿՈՒՄԸ ԲԱՑՑ ԱՆՆՇԱՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԵԱՄԲ

ԲՈՒՌՆ ԺԱԿԱՏԱՄԱՐՏ ՄԸ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՀԵՏ

Երեսփ. Ժողովը կը յանձնէ եղած փոփոխութիւնները

Երեսփ. Ժողովէն վերջը, Մերակոյտն ալ չորեքշաբթի օր քուէարկեց Փըրանքին արժեզրկումը, բայց անշնան մեծամասնութեամբ,— 127ի դէմ 137 ձայնով եւ մերժելով օրինագծին ընկերային տրամադրութիւնները: Փոփոխուած օրինագիծը անմիջապէս վերադարձուեցաւ երեսփ. Ժողովին, նորէն քննուելու համար: Աւելորդ է ըսել թէ բացորոշ պայքար մը բացուած է երկու ժողովներուն միջեւ, ծանր տագնապի մը մատնելով կառավարութիւնը: Եթէ երեսփ. Ժողովը չընդունի Ծերակոյտին կատարած փոփոխութիւնները, կառավարութիւնը աւելի պիտի ծանրանայ: Երբ օրինագիծը երեսփ. Ժողովին վերադարձուեցաւ ժամը 11.45ին, անոր ելմտական յանձնաժողովը անմիջապէս նիստ գումարելով, յայտնեց թէ կը մերժէ Ծերակոյտին կատարած փոփոխութիւնները:

Քուզումնալից տեսարան մը պարզուեցաւ Մերակոյտին մէջ, օրինագծին վիճաբանութեան առեն: Ժողովը առանց մեծ դժուարութեան հաւանութիւն յայտնեց Փրանքին արժեզրկման, բայց մէկդի դրաւ անոր ընկերային տրամադրութիւնները, 14րդ յօդուածէն մինչեւ 25րդը, եւ անոր տեղ քուէարկեց բանաձեւ մը որ կառավարութեան արտօնութիւն կուտայ զսպել դիներու բարձրացումը, համաձայն անցեալ օգոստոսին քուէարկուած օրէնքի մը:

Վիճաբանութեանց ընթացքին ուժգին ճառ մը խօսեցաւ Լէօն Պլում, ազդարարելով թէ երեսփ. Ժողովին մեծամասնութիւնը չի կրնար ընդունիլ կատարուած փոփոխութիւնները: Վարչապետը պաշտպանեց իր ներքին քաղաքականութիւնը եւ մերժից այն մեղադրանքը թէ կառավարութիւնը կը գործէ աչխատաւորական կազմակերպութեանց ճնշումին տակ: «Ինչ կը վերաբերի գործարարներու գրաման, կը յիշեցնեմ թէ ես ընկերվարական ըլլալով հանդերձ, չեմ գործեր իբրեւ պետը ընկերվարական կուսակցութեան: Ես նախ ու առաջ կառավարական դահլիճի մը եւ չեմ փորձեր կեդծաւորաբար իրականացնել իմ կուսակցութեանս վարդապետութիւնները: Թերեւս պիտի գայ օր մը երբ ընկերվարութիւնը պիտի հաստատուի Ֆրանսայի մէջ: Այսօր այդտեղ հասած չենք: Ես ուղղամտօրէն կը գործադրեմ միացեալ ճակատի մը, գործակցութեան մը քաղաքականութիւնը եւ ուրիշ ոչինչ: Շատ խօսուեցաւ սեփականութեան դէմ եղած յարձակումներու մասին: Մենք սեփականազրկութեան կառավարութիւն մը չենք· այդ չէ իմ պաշտօնս կամ դիտումս: Բայց սեփականութեան իրաւունքը պէ՞տք է որ ներկչռութիւն վայելէ հաւաքական չահերուն դէմ: Երբ օրէնքներ հաստատեցիք վարձակալութեանց վրայ, զգաք չեզո՞ք սեփականութեան իրաւունքին: Կը կրկնեմ ինչ որ ըսի երեսփ. Ժողովին մէջ,— մենք վստահութիւն ունինք բանուորական կազմակերպութեանց վրայ, որպէսզի անոնք իրենց կարգապահութեամբ հաշտարար միջոցներէն տարբեր բանի չդիմեն բարեկարգութիւնը պահպանելու համար: Հանրապետական կառավարութիւն մը չի կրնար չկապուիլ բանուորական կազմակերպութեանց հետ: Ասիկա ոչ սկարութիւն է, ոչ ալ մոլորանք, այլ ուժ մը, որովհետեւ չկայ ընկերային խաղաղութիւն առանց կառավարութեան եւ արհեստակցական միութեանց վստահելիք յարաբերութեանց: Հարցը այն է թէ որքան ընկերային յառաջդիմութիւն եւ մարդկային հաւասարութիւն կրնանք իրականացնել մեր հաստատութեանց օրինական շրջանակին եւ արդի ընկերութեան մէջ: Այսպիսի փորձի մը ձախողանքը ծանր պիտի ըլլայ մեր երկրին համար»:

ԾԱՆՐ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Վարչապետին դէմ ճակատեցաւ Պ. Քայէօ, որ մեծ հեղինակութիւն կը վայելէ իբրեւ նախկին նախարար եւ ելմտագէտ:

Խօսելով իբրեւ նախագահը Մերակոյտի ելմտական յանձնաժողովին, Պ. Քայէօ բացատրեց թէ երկրին տնտեսական գործունէութիւնը տկարացած է, մինչ միւս բոլոր մեծ երկիրները կը բարգաւաճին, թէ գործազուրկներու թիւը աւելցած է 30,000 հոգի: «Դուք Փրանքին դիմը կոտրեցիք, որովհետեւ մեքենան չէր բաներ: Ինքնախաբէութիւն է կարծել թէ տագնապը պիտի փարատի աւելցնելով դնելու կարողութիւնը: Ֆրանսան, որ հողագործական երկիր է, կը տառապի ճարտարագործական գերարտադրութենէ: Մի ծածկէք ճշմարտութիւնը: Պէտք է երկրին ընդունիլ տալ անհրաժեշտ զոհողութիւնը, առանց որու գահավիժօրէն պիտի իջնենք անդունդէ մը որուն ծայրը դուք ալ չէք տեսներ»:

Ազակոմմանները ուժգնօրէն կը ծափահարէին այս խօսքերը: Ուրիշ նախկին նախարար մը, Թունդ ազգայնական Լէմէռի, ատելի յառաջ գնաց, տիրող տագնապին պատասխանատուութիւնը ձգելով դահլիճին վրայ: «Դուռ չորս ամիսը չլրացած, Պ. Լէօն Պլում կը տիրապետի խոստովանիլ իր անկարողութիւնը: Ինչ որ ալ ըլլայ, Ֆրանքը կոպտօրէն իջած է 13 սանթիմի: Այսօրուան գործողութիւնը դարման մը չի կազմեր, այլ կարկտան մը: Կառավարութիւնը մեզ կ'առաջնորդէ նոր անանկութեան մը, նոր արժեզրկումի մը: Ձեր քաղաքականութիւնը անանկացաւ: Մնանկութեան մը հաշուեյարդարը բուն իսկ անանկացողին չեն յանձներ: Հնչա՞ծ է իմաստութեան ձայնը: Ես կը խնդրեմ ծերակոյտէն եւ իմ բարեկամներէս դէմ քուէարկել Պլումի կառավարութեան ծրագրին»:

Այս քննադատութեանց պատասխանեց Պ. Վէնսան Օրիօլ, ելմտական նախարարը, պաշտպանելով օրինագիծը: Բացատրեց թէ սթերլինին եւ տոլարին արժեզրկումը ցաւալի վիճակի մը մատնած էին Փրանքը: «Կրցանք երկար ատեն դիմանալ չնորհիւ մեր ներքին հաւասարակշռութեան: Ի զուր փորձեր եղան, սակայն, մեր գիները յարմարցնելու համաչխարհային հրապարակին: Սահմանափակումներու երկար չրջանէ մը վերջը, կը գտնուէինք ուժասպառ տնտեսութեան մը եւ գնելու կարողութեան նշանակելի նուազման մը առջեւ:

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՕՐԸ ՕՐԻՆ

ՈՐՈՄ ՅԱՆՈՂՆԵՐԸ

ՃիշդՄէկ տարի է որ խումբ մը հայ բեհաւսէրներ — բոլորովին անկուսակցական — սրտանց կ'աշխատին վայելուչ յուշարձան մը կանգնել Անդրանիկի գերեզմանին վրայ:

Արդէն գոյացած է շօշափելի գումար մը, եւ մրցում բացուած, լաւագոյն նախագիծը կազմելու համար:

Կոչը ուղղուած ըլլալով ամբողջ գաղթաշխարհին, դէմ հատաւուեցաւ նոյնիսկ ամէնէն թշուառ գաղութներուն, օրինակ՝ Սելանիկի եւ Աթէնքի մէջ:

Եւ սակայն, հանգիստ չեն որոմ ցանողները: Անդադար կը էրէրեն եւ կը գրգռեն, միտք պղտորելու եւ ձեռնարկը վիժեցնելու համար:

Ի՞նչ կ'ըսեն·— Անդրանիկի տեղը Հայաստանն է, հոն փոխադրենք «ոսկերոտիքը» եւ հատաւուած գումարով նոր Շ. Գարահիսար մը շինենք:

— Փոխադրելու հրաման ունի՞ք:

— Կոմիտասը փոխադրուեցաւ, ինչո՞ւ կարելի չէ փոխադրել նաեւ Անդրանիկը:

Հիմա եկէք բացատրեցէք այս ապուշներուն, թէ Կոմիտաս եւ Անդրանիկ տարբեր բաներ են կարմիր երեւանի աչքին, թէ Խանջեանն էր որ յաջողցուց Կոմիտասի փոխադրութիւնը, իսկ անկէ ի վեր ինչե՛ր, ինչե՛ր պատահեցան Հայաստանի մէջ, նոյնիսկ Խանջեանի յուղարկաւորութիւնը արգիլուեցաւ եւ գերեզմանը հսկողութեան տակ առնուեցաւ, թէ կատաղի խաչակրութիւն մը կը կատարուի որ եւ է ազգայնական պատկառելի յայտնութեան դէմ, թէ տարիներով ուղղակիօրէն համարուած համայնավարներ անգամ վտարուած եւ բանտարկուած են, թէ ··

Անոնցմէ մէկը այդ ապուշներէն որ շատ - խարազ կը կարդայ խմբագրականով մը (*Արեւ*, 14 սեպտ·):

— «Վերջին մէկ տարուան ընթացքին ականատեսը եղանք ազգայնական մը զանգան գաղութներու մէջ, Անդրանիկի յուշարձաններ կանգնելու համար: Ազգայնականութիւն՝ որուն կ'ընկերանար դրամահաւաքութիւն ալ, առաջադրուած նպատակին համար: Այս սիւնակին մէջ մենք քննադատեցինք այդ ուղղութեամբ կատարուող չանքերը, որոնք կորովի եւ գաղութահայութեան մնացած նիւթական միջոցներուն իր գուր վատնումին համարժէք են: Անդրանիկի ոսկորները զատ հողերու վրայ չէ որ պատապարուած պիտի ըլլան մնալու, անոնց օր առաջ հայրենի հողի վրայ փոխադրութիւնը լաւագոյն վարձատրութիւնը ըլլալով, յետմահու, այն գիւցազնական դէմքին, որ ապրեցաւ ու մարտնչեցաւ հայրենիքին ազատագրութեան համար ու մեռաւ այն խոր հաւատքով ու մխիթարութեամբ թէ՝ ինչ որ կար իրբեւ Հայաստան, արշալոյսն էր հայ ժողովուրդին խաւարամած պատմութեան վրայ ծագող արեւին»:

Եւ ըսե՞լ թէ այս մարդիկը ոչ իսկ մէկ փրանք բաժին ունին հաւաքուած դրամին մէջ···

Ի՞նչ փոյթ, որոմ ցանելը դրամ չի պահանջեր,— թիւխ եւ ցանէ, աղբանո՞ց կը պակսի:

ՎԱՀԷ

ՄԱՏՐԻՏԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ ՍԿՍԱՒ

Կառավարական աղբիւրէ կը հաղորդեն թէ Մատրիտի կառավարութիւնը արտօնած է որ կիները եւ մանուկները հեռանան, ի նախատեսութիւն քաղաքին պաշարման: Բոլոր տղաքը դէպի Վալենսիա եւ Միջերկրականի միւս քաղաքները կը փոխադրուին: Ներքին նախարարը դիւրութիւններ կ'ընծայէ բոլոր անոնց որ կ'ուզեն Վալենսիա, Պարչելոնա եւ ուրիշ կառավարական քաղաքներ երթալ:

Մայրաքաղաքին պաշարումը սկսած է արդէն: Օդակը հետզհետէ կը սեղմուի եւ պարենաւորման ճամբաները վտանգուած են: Ապստամբներու գլխաւոր ճնշումը տեղի կ'ունենայ հարաւային - արեւմտեան, ուր Զօր· Վարէլայի բանակը Թոլէտոն գրաւելէ վերջ, Մատրիտի մօտեցած է մինչեւ 30 մղոն: Արդէն իսկ տպուած են մանաւանդ տոմսեր, ուտելիքի համար: Մանաւանդապէս պակաս կուգան կաթը, հաւկիթը եւ կարագը: Կիներու բազմութիւններ կարգի կը սպասեն նպարավաճառներուն առջեւ, թէեւ ճաշարանները լաւ են առայժմ:

**** Զարհուրելի պատմութիւններ եւ հերոսական դրուագներ կը պատմուին, Ալքազարի պաշարման առթիւ, որ տեւեց եօթանասուն օր եւ խորտակուեցաւ կիրակի օր: Պահակազօրքին հրամանատարը, գնդ· Մոսքարս առտու մը հեռաձայնով աղդարարութիւն կը ստանայ թէ իր տղան վար գրուած է իբրեւ պատանդ եւ պիտի գնդակահարուի, եթէ քաղաքը անձնատուր չըլլայ: Գնդապետը արտօնութիւն ստացաւ հեռաձայնով խօսելու իր զաւակին հետ եւ բսաւ·*

— «Ինձմէ կը խնդրեն սակարկել իմ վինուորներուս կեանքը եւ իմ պատիւս՝ քու ապահովութեանդ համար: Եթէ պիտի մեռնիս, մեռիր իբրեւ քաջ մարդ մը»:

Սպանալիքը գործադրուեցաւ եւ գնդապետին տղան գնդակահարուեցաւ:

Ականատես մը կը պատմէ·

— *Բոլոր պաշարեալները ապաստանած էին ստորերկրեայ թաքստոցներու մէջ, բացի անոնցմէ որ վինուորական պարտականութիւններ ունէին: Նախապէս 1250 հոգի էինք, մէկդի ըլլալով շատ մը կիներ եւ մանուկներ: Հիւանդանոց մը բացուեցաւ եւ կիները հիւանդապահ եղան: Առատ ուտելիք ունէինք, բացի օդանաւերու ձգած պաշարէն: Բայց միս չկար եւ ամէն օր ձի մը կը մորթուէր: Մեր թերթը տպելու համար թուղթ չունենալով, ստիպուած էինք հին վաւերագիրներ գործածել: Պաշարումը սկսած ատեն ունէինք 97 ձի եւ 27 ջորի, ապառուած ատեն մնացած էին մէկ ձի եւ հինգ ջորի: Միւսները մեծ մասով կերած էինք: Հերոսական ոգի մը կ'ոգեւորէր ամբողջ պահակազօրքը: Կիներն անգամ չէին ուզեր հեռանալ, իրենց ճակատագիրը կապելով պաշարեալներուն հետ:*

**** Ընդհանուր զօրաշարժ յայտարարուեցաւ Մատրիտի եւ Պարչելոնայի մէջ: Կ'ըսուի թէ ապստամբները միայն 35 քիլոմեթր հեռու են Մատրիտէն: Երեք չարք խրամներ եւ զանազան ամրութիւններ շինուած են մայրաքաղաքին շուրջը: Կիներն ալ կը վինուորագրուին:*

Պիլպաոյի ռմբակոծութիւնը կը շարունակուի:

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ Հարապետութեան համայնավար թեկնածուն, Պրաուտըը, բանտարկուեցաւ Ինտիանայի նահանգին մէջ, ծանօթ վիպագիր Ուալտօ Ֆրէնքի հետ, իբրեւ դատարկապորտ: Ոստիկանութեան տեսուչը յայտարարեց թէ թոյլ չպիտի տայ որ «որ եւ է համայնավար ճառ խօսի իրենց շրջանին մէջ»:

ՉԻՆԵՒՃԱՓՈՆ յարաբերութիւնները նորէն լարուած են: Չինաստանի վինուորական նախարարը կարգ մը պահանջներ ներկայացուց որոնք անընդունելի կը համարուին Ճափոնի համար: Կը վախցուի որ պատերազմ ծագի:

ԽՈՀԱԿՈՒՏՅՈՒՆ ԳՈՒՆԴԻ ՄԵՋ

(Ռ. Ի. Վերջին մաս)

Մարդկային սիրտը ինչպես ամբողջ մարմինը, ենթարկվում է ծերացման օրենքին։ Ծերացման հետևանքով սիրտը կորցնում է իր առաձգականությունը, դառնում է կոշտ, ինչպես ասում են՝ քարանում։ Այդ ժամանակ սիրտը չի կարողանում ընդունել այն քանակությամբ արյունը, որ ընդունում էր երիտասարդ տարիքում։ Արյունը սկսում է կուտակվել երակների մեջ, ինչպես ջուրը ամբարտակի հետևում։ Այդ ժամանակ ոտքերը ուռչում են, ինչպես ասում են՝ «ջուր է իջել»։ Ուռչում են նաև ձեռքերը, դեմքը, որովայնը։ Ուռչում է նաև լյարդը։ Ուռչում է ամբողջ մարմինը։ Ուռչում է ոչ միայն մարդկային մարմինը, այլև կենդանիների։ Ուռչում է նաև ձին, երբ նրա սիրտը ծերանում է։

Ձին ծերանում է ավելի շուտ, քան մարդը։ Ձին 15 տարեկանում ծերանում է, իսկ մարդը 50 տարեկանում։ Ձին ծերանում է, ինչպես ասում են՝ «ջուր է իջել»։ Ձին ուռչում է։ Ձին ուռչում է ոչ միայն ոտքերից, այլև ամբողջ մարմնով

Ղ ՈՐՁ ԱՍՏՂԸ

976 հայտ

— · —

Խոսք. Հայտնում ենք մեր բոլոր բարեկամներին, որ մեր սիրելի հոր՝ Ղ. Ա. Ալեքսանյանի մահվան 40-րդ օրը՝ հինգշաբթի, հոկտեմբերի 3-ին, կլինի Ս. Աստվածածին եկեղեցում։ Ներկա գտնվելու խնդրանքով՝ Ալեքսանյանների ընտանիքը։

— · —

Ծանուցում։ Ես ստորագրյալս հայտնում եմ, որ ինձ պատկանող Ալավերդու շրջանի Ղարաքիլիսա գյուղի 1 հա հողամասը, որի վրա կառուցված է 2 հարկանի քարե տուն, 1 հա պտղատու այգի, 1 հա խաղողի այգի, 1 հա ընկուզենու պուրակ, 1 հա ընդարձակ արոտավայր, 1 հա վարելահող, 1 հա խոտհարք, 1 հա ընդարձակ բակ, 1 հա ընդարձակ ճանապարհ, 1 հա ընդարձակ ջրհոր, 1 հա ընդարձակ ջրհոր, 1 հա ընդարձակ ջրհոր

Արտաքին առեւտուրը անդադար կը նուազէր, 52 միլիառէն իջնելով 19 միլիառի: Գործառնութեանց փլուզումը անառնալի դարձուցած էր տուրքերու բեռը եւ հետզհետէ կը տկարացնէր հանրային վարկին աղբիւրները: 1935 յունուարէն իսկ, Ֆրանքը բիրտ յարձակումներու ենթարկուած էր եւ Պանք ը Ֆրանսին ոսկիի մթերքը երթալով կը նուազէր: Ոչ ոք չեմ ամբաստաներ, բայց յիշած իրողութիւններս անվիճելի են եւ մեր իշխանութեան գալէն ա ռաջ պատահած: Կառավարութիւնը կարելին փորձեց, ոսկիին արտահոսումը դադրեցնելու համար, բայց ուրիշ միջոց չկար եթէ ոչ կամ ինքնավար տնտեսութիւն հաստատել եւ կամ կոտրել Ֆրանքին գինը: Իր անտեսական կա ցութեամբ, կապուած ըլլալով հում նիւթեր արտադրող մեծ երկիրներու հետ, Ֆրանսա չէր կրնար մեկուսանալ »:

Ուրիշ երկիրներու մէջ

— o —

Տոքթ. Շախթ, Գերմանիոյ ապգ. դրամատան անօրէնը, պաչտօնապէս յայտարարեց թէ մարքը չպիտի արժեզրկուի: Ան առթիւ չէչտեց.— Կառավարութիւնը եւ Բայխսպանքը քննելով կացութիւնը, առանց վարանումի այն եզրակացութեան յանգեցան թէ Գերմանիա չպիտի սաստկացնէ կարգ մը օ տար դրամներու արժեզրկման հետեւանքով յառաջ եկած անստուգութիւնը, իր կարգին նոր անստուգութիւն մը ստեղծելով:

*** Իտալական սակարաններուն փակումը երկարաձգուեցաւ մինչեւ եր կուշաբթի օր:

*** Ֆրանքին արժեզրկման հետեւանքով, մեծ չահեր պիտի ունենան կարգ մը փոքր երկիրներ: Այսպէս, Հունգարիա, որ երկար աւելնէ ի վեր զգուշ ցուցած է իր պարտքերուն վճարումը Ֆրանսայի, պիտի կրնայ խնայել 20,000,000 չիլին (800,000 անգլ. ոսկի), 70 միլիոն չիլինի պարտքին վրայ: Աւստրիա պիտի չահի 100,000,000 չիլին (4 միլիոն անգլ. ոսկի), 330 միլիոն չիլինի պարտքին վրայ, իսկ 6 միլիոն ալ ոսկոսէն: Չեխոսլովաքիա պիտի չահի 120 միլիոն չիլին (4,800,000 անգլ. ոսկի), 380,000,000 չիլինի պարտքի մը վրայ (Ֆրանսական Ֆրանք, զուիցերիական Ֆրանք, կիլոէր): Եուկոսլաւիա եւ Ռումանիա եւս պիտի չահին տեսականօրէն, թէեւ երկուքն ալ որ եւ է պարտք վճարած չունին:

ՋԱՆԱՉԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՄԸ ՏՂԱՈՎ

ՋՄԵՌՆԱՅԻՆ ԺԱՄԱՑՈՑՑԸ կը սկսի վագը, չաբաթ, կէս գիչերին:

ՍԲՁԱՐԱՆՆԵՐԸ, ՁԱՇԱՐԱՆՆԵՐԸ ԵՒ ՊԱՆԴՈԿՆԵՐԸ նոր տագնապի մը մատնուած են: Հաստատութեանց վարիչները կ'ընդունին յաւելում կատարել, բայց կը մերժեն վերաքննել հաւաքական պայմանագիրները: Ասոն ժողով մը գումարուեցաւ աշխատանքի նախարարութեան մէջ, ելք մը գտնելու համար:

ԱԶԳԵՐՈՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Տանցիկի լիազօրը, Լէսթըր, օգնական քարտուղար նշանակուեցաւ գաղտնի ժողովի մը մէջ: Բայց Անգլիոյ արտաքին նախարարին պնդումով, պիտի չարունակէ Տանցիկ մնալ, մինչեւ որ յաջորդը նշանակուի: Այս փոփոխութեամբ գոհացում տրուած կ'ըլլայ Գերմանիոյ եւ Լեհաստանի, որոնք երկուքն ալ դժգոհ էին Պ. Լէսթըրի պաչտօնավարութենէն:

Տէր եւ Տիկին Յակոբ Քիւրքճեան (Նիւ Եորք), Պ. Պ. Գեղամ եւ Հրանտ Քիւրքճեան, Օր. Ֆիլոս Թագուրեան, Տէր եւ Տիկին Արամ Թագուրեան եւ զաւակունք (Պոլիս), Այրի Տիկին Մաննիկ Չաուէեան (Պոլիս), Տէր եւ Տիկին Աբրակ Կիւրեղեան եւ զաւակունք (Հալէպ), Տէր եւ Տիկին Երուանդ Միասէրեան եւ զաւակունք (Պոլիս), Տէր եւ Տիկին Երուանդ Չաուէեան եւ զաւակունք (Վիէննա), Տէր եւ Տիկին Չարեհ Չաուէեան (Փրակա), Տէր եւ Տիկին Չարուճեան եւ զաւակունք (Պոլիս), ինչպէս նաեւ Քէմանճեան, Արթինեան, Տէմիրճեան, Շահպազ, Պապեան ընտանիքները սրտի խորունկ կսկիծով կը յայտնեն մահը իրենց մօր, քրոջ եւ ազգականուհիին

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ԵԼՄՈՆԷ ՔԻՒՐՔՃԵԱՆԻ

որ տեղի ունեցաւ Սեպտեմբեր 29ին:

Յուղարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ, այսօր ուրբաթ, 2 հոկտ. Փարիզի Հայոց եկեղեցին, (15, Rue Jean Goujon), ցերեկէ վերջ ժամը 3.30ին, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պանէէօյի գերեզմանատունը, իր ընտանեկան յատուկ դամբարանը:

ՇՆՈՐՀ.— Կը խնդրուի մահագրի չստացողներէն, ներկայս իբր այն նկատել:

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

«ՍՏԼԻՆԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ»

Գրեց՝ ՌՈՒԻԼԷՆ

Գինը 5 Ֆր., դիմել Շ. Սամուէլ գրատուն:

ԹԷՑԱՍԵՂԱՆ

Ի ՊԱՏԻՒ ՏԻԿԻՆ Լ. ՇԱՆԹԻ ԻՐ ՍՈՒՐԻԱ ՄԵԿՆԵԼՈՒՆ ԱՌԹԻԻ

կազմակերպուած Ֆր. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղին կողմէ

տեղի կ'ունենայ կիրակի 4 Հոկտ., ժամը 3—7

Ռուսական Քոնսերվաթուարի սրահին մէջ, 26 Av. Tokio,

Métro Alma եւ Iéna

Կարելի է նախօրօք արձանագրուիլ հետեւեալ հասցէներուն.—

Mlle H. Petrossian, 6 rue de Trétaigne, Paris (18)

Հեռ. Mont. 13—09

եւ Mlle Mérangulian: 27 rue Desnouettes, Paris (15):

ՄՈՒՏՔ 5 ՖՐ., (Ճաշը ըլլալով՝ Թէյ, խմորեղէն, շամփայն):

ՊԱՏՐԱՍՏԻԻԵՑԷՔ

ԴՊՐՈՑԱՍԷՐԻ ԱՆԿԷՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ

ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԻՆ

Տեղի կ'ունենայ 17 Հոկտ. շաբաթ երեկոյ, մինչեւ լոյս,

Անկէնի **CASINO MUNICIPAL***ի* *շքեղ սրահներուն մէջ,*

Մանրամասնութիւնները մօտ օրէն:

ԸՆԿԵՐԱՀԱՄԱԿՐԱԿԱՆ ԵՐԻԿՈՑԹ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ Հ. Յ. Դ. ՎԻԷՆԻ ԿՈՄԻՏԷԻ ԿՈՂՄԷ

Նուիրուած ընդհանուր հայ հերոսներու յիշատակին,

տեղի պիտիունենայ 3 Հոկտ. շաբաթ երեկոյ ժամը 8ին,

Հ. Յ. Դ. «Խաժակ» Ակումբին մէջ:

Ակտ առթիւ պիտի բանախօսէ ընկ. Կ. ԽՐԱՅԵԱՆ

Տեղի պիտի ունենան երգեր, արտասանութիւններ եւ նուագ:

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ Է:

Մարսէյի Ազգեան թատերախումբը

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑԱՆՆ

«ՄԵԾԱՊԱՏԻԻ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐԸ»

3 Հոկտ. շաբաթ երեկոյ ժամը 8ին, Շահրիկեան սրահին մէջ,

5 Rue de l'Eclipse

Վարագոյրը կը բացուի հիշատ ժամը 9ին:

Տուներու գիներ՝ Ա կարգ 4 ֆր., Բ կարգ 3 ֆր.:

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻԻՆ

Փարիզի Հարաւ. Շրջանի Յառաջդիմասիրաց Միութեան վարչութիւնը սաքած է բժշկական դասախօսութիւն մը յառաջիկայ շաբաթ գիշեր Հոկտ. 3, ժամը 9ին, դպրոցի սրահին մէջ:

Կը դասախօսէ՝ բժիշկ Պ. ՊՕՂՈՍԵԱՆ

Կը հրաւիրուին շրջանիս բոլոր հայրենակիցները:

«ՅԱՌԱՋ»Ի ՏՈՒԱՐԱՆԻՆ ՀԱՄԱՐ

Ցուցակի գաղութէն.—

Ֆոնէրեան, Նաճարեան, Ջ. Քէնտէրեան 50, Ա. Քէնտէրեան 25, Կ. Շալլաճեան, Հ. Ֆոնիկեան 20ական, Ա. Մելքոնեան, Մ. Յակոբեան, Գ. Հալաճեան, Լ. Գասպարեան, Կ. Վարդանեան, Ա. Բարսեղեան, ոմն 10ական եւ Կ. Բարսեղեան 5 ֆր., ընդհ. գումար 205 ֆր.:

ԽՄԲ.— Տես «Յառաջ» 25 Սեպտ.-

ՅԱՒՇԱՏԵՍ

ՍԷՒՀԷՈԶԻ Հայր. Միութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր անդամները այս կիրակի, ժամը 2ին, Միութեան գրադարանի սրահը, 43 rue de la Défense, իսի լէ Մուլինօ:

ԱՆԴՐԻԱՍի եւ Շրջ. Հայր. Միութեան տարեվերջի ընդհ. ժողովը տեղի կ'ունենայ Հոկտ. 4ին, կիրակի կէսօրէ վերջ ժամը 3ին, Պ. Գարակէօզեանի սրահին մէջ, 45 rue de la Défense, իսի լէ Մուլինօ, կը հրաւիրուին բոլոր հայրենակիցները ասխտիւ: կարեւոր օրակարգ: Նոր վարչութեան ընտրութիւն:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ֆր. Կ. Խաչի Շրջանային վարչութիւնը իր օգոստոսեան Բ. կայանին ի նպաստ շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները.— Տիկ. Վ. Քէօլէեանէ 200 ֆր., Իշխ. Ա.է 25, Պ. Օննիկ եւ ամեանէ 20 եւ ոմն 5:

Այս առթիւ վարչութիւնը իր շնորհակալութիւնը կը յայտնէ նաեւ Անկէնի իր մասնաճիւղին «Արաքս» խումբին սանուհիներուն, որոնք վեց գեղեցիկ «փուլօվըր»ներ հիւսած էին կայանի ադքատ մանուկներուն բաժնուելու համար:

×

Դպրոցասէրի տիկնանց իմ շնորհակալութիւնս կը յայտնեմ, որ իմ մայրագուրկ սոցկաես՝ Ալիս Բարսեղեանի (տարիներէ ի վեր զրկուած իր մայրական լեզուէն) կարճ ժամանակէն սորվեցուցին մաքուր հայերէն խօսիլ, գրել եւ կարդալ, մայրական գուրգուրանքով:

ԱՐՇԱԻԻՐ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Le Gérant: H. STEPHAN
Imprimerie A. DER (AGOPIAN)
17, Rue Damesme, PARIS (13)

«ԳՈՑԱՄԱՐՏ» ՕՐԱՑՈՑՑ, Ը. ՏԱՐԻ 1937

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻԻՆ ՄԱՐՍԷՅԼԻ Հ. Յ. Դ. ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Կը ծախուին Մարսէյլ Միութեան Գրադարան. Ընթերցարան, 5 Rue de l'Eclipse, *Միութեանս բոլոր անդամներուն եւ հետեւեալ նա ըէներուն քով.—*

Մարսէյլ, Ն. Կակոսեան, 49 Rue Nationale

Փարիզ, Հրանտ Սամուէլ, 51 Rue Mr. le Prince (6)

Տեսին եւ Լիոն, Վ. Հիւսեան, 3 Rue Tellier, Décines, Isère

Վալանս, Ղ. Գալուստեան, 58 Rue Bouffier, Valence, Drôme

Սէնթ'Էթիէն, Վ. Խրիմեան, 34 Rue des Frères Chape. St. Etienne

Վիէն, Ն. Խաչիկեան, 124 Rue Lafayette, Vienne, Isère

Նիս, Գ. Շէհրիէեան, 55 Bd. de la Madeleine, Nice. A. M.

Կարտաճ, Լ. Գայաճանեան, Puits Bivert

Ալժէրի, Պ. Արզուհանեան, Hôtel Atlas, Blida, Algérie

Պորսօ, Ա. Քէնտէրեան, Rue Ed. Vaillant, Cenon, Gironde

Պէյրութ, Մ. Ազգասէրեան գրատուն, Bab Yacoub, Beyrouth

Ապատան, Ա. Արգարեան, P. O. Box 22, Abadan, Iran

Շամ, Ա. Լօշխարճեան, Hart. Djanvar, 32 Bay Charky, Damas

Գանատա, Ա. Սիրունեան

Պասրա, Ռսկ. Ծնունդեան, Seef st. Basrah, Irak

Պէյրութ, Ա. Չօրիմեան, Photo Mourad, Rue Gouraud

Փոճ տ'Օպիա, Ա. Կարապետեան, Chez M. Chaberte

Շարվիէօ, Մտ. Թիւրքմէնեան, B. H. 84 Charvieu

Հալէպ, Մ. Քրքէսէլեան, 22 Rue Boustan Kulab, Alep, Syrie

Ամերիկա, Պ. Պալեան, 119 P. O. Box, Milford, Mass.

Լա Սիօթա, Մ. Սարգիսեան, 2 Rue Foces, La Ciotat

Թեհրան, Journal «Alik» Téhéaran Ave. Postkhaneh

Թուլուզ, Ղ. Մարկոսեան, 36 Pl Lucas, Toulouse, H. G.

Ապթ, Թ. Պաղտասարեան, 11 Pl. des 4 Poulies, Apt Vaucluse

Ռոմանս, Ս. Պիլալի, 5 Rue Puy, Romans

Բօնքեմ, Մատոյեան, Usines Berles Carrelage

Ժերս, Մ. Թորոսեան: Բիւժէ Սու Ակժան, Մանասէլեան: Կրաս, Գրիգորեան

Aix, Գ. Աւետիսեան, 3 Rue Emerie-David:

Նաեւ Մարսէյլի եւ արուարձաններու Դաշնակցական Ակումբները եւ բոլոր Դաշնակցական Թերթերու խմբագրատուները:

Ծնողներ,

ԳՆԵՑԷՔ «ՄԱՍԻՍ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐՔԱՑԿՆԵՐԷՆ

Պատկերազարդ, լրատիր թուղթ եւ օգտակար բովանդակութիւն:

Գինը՝ Ցատը Ֆրանս. Ֆր. 1,25 Դիմել «Վէմ»ի վարչութեան:

ԿԱՊՈՑՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ռուսաստանի մէջ գանուած ձեր ազգականներուն եւ բարեկամներուն յաւարտն եւ իրական օժանդակութեան ձեռն երկնելու անոնց կապոյտներով զրկելէն կոտրներ, ճէրմակեղէն, կօշիկներ եւ ծրիքօճաժ:

Այս բոլոր իրեղէններէն մինչ մինչեւ ձոխ մթերք եւ կ'ուզէք զանոնք Ռուսաստան շատ ձեռնտու եւ մատչելի գիներով

Ունինք արտաժդելի ընտրութիւն եւ թէյինկոն զրաւեչնաներ, ինչպէս նաեւ գաշնակներ շատ մատչելի գիներով

Գիներու ցանկը եւ նոյնչներ կը զրկուին առաջին իսկ պահանջին,

Դիմել՝ American Lloyd, Paris (9), 7 rue Auber

Tél. Opéra 67-77, 67-78

ԱՐՔԱՅԱՆ ԽՄԻՋՔ

ՐԱՔԻ ՏԻՒՋ

UN·DUZE
MARQUE DÉPOSÉE
RAKI
40°
DUZE
Véritable Anisette Orientale
DISTILLERIE OTTOMANE ISTAMBOUL

Զուտ խաղողէ քաշուած եւ անիսոնով պատրաստուած օդին է ՐԱՔԻ ՏԻՒՋը:

Զգուշացէք այլ եւ այլ նիւթերով պատրաստուած եւ ձեր կեանքին վնասակար օգիները խմելէ, այլ խմեցէք միմիայն ՐԱՔԻ ՏԻՒՋը, որուն անարատ, կազդուրիչ եւ ախորժաբեր ըլլալը հաստատուած եւ գնահատուած է:

Ֆրանսայի համար արտօնատէր՝ Ա. ՏԱԼԱՒԻՒԻԵԱՆ

8 rue Suffren, Marseille— Tél. D. 70-89

ԳԱՑԷՔ ՏԵՍԷՔ
CIGALE CINÉMA
60 Avenue de Saxe-LYON.

ԳԱՑԷՔ ՏԵՍԷՔ ԼԻՈՆԻ ՄԷՋ
Cinéma REXY
Rue Cours Lafayette, angle Garibaldi.

ՅԱՌԱՋԻ ԹԻՐԹՈՂԸ (103)

ՋԱՐԹՈՂՔ

(ՎԷՊ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵԱՆՔԷ)

— o —

Ո՞ւր պիտի յանգէր այդ զգացումը, երբ ինք, կեանքի յատակ հեռանկար մը չէր տեսներ, երբ պատահական հանդիպում մը միայն կրնար կործանել ամէն յոյս, ամէն երազ: Ասով մէկտեղ Եւգինէն տեսնելու պահանջը այնքան ուժեղ էր Քաչալի մէջ, որ ապագայի մասին ամէն մտահոգութիւն մէկդի նետած՝ անհամբեր կը սպասէր աղջկան գալուն:

Երկու օր վերջը Եւգինէն եկաւ՝ երբ ամբողջ անհնչիք նստած էին Նահաճաչի: Դէսորգի մայրը, իր զաւկի վերադառնալէն վերջ կարծես տասը տարով երիտասարդացած էր, մօր մը ջերմ վերաբերմունքով ընդունեց հիւրը, անոր յատկացնելով տան լաւագոյն սենեակը ընդարձակ երեսպատ յով:

Մեր սիրահարներուն համար, այդ հեռուէր պիւղի յետ ինկած այդիի խաղաղութեան մէջ, ժամանակաւոր երջանկութեան նոր չրջան մը սկսաւ:

— Վերջապէս, եկար, որքան ան համբերութեամբ գալուդ կը սպասէի, — կ'ըսէր տղան, երբ իրիկուան կողմ երկուքը միասին թեւանցուկ կը ճեմէին այգիի վերի ծայրը չարքով բարձրացող բարտիներու չուքին տակ:

Եւգինէն առանց պատասխանելու, ուժով սեղմեց տղուն թեւը: Եթէ միայն գիտնար ընկերը թէ՝ ինք ալ ինչ անհամբերութեամբ կը սպասէր Փարաքար գալուն: Այդիի խաղող մենութեան մէջ, սիրած տղամարդու ներկայութեանը, կուրծքը կ'ուռէր անհուն երջանկութեամբ ու կեանքը կ'ելեւէր կատարեալ:

— Երբեմն անցած օրերը երազ կը թուէին ինձ,— ըսաւ Քաչալը, — չէի կրնար հաւատալ որ դիս կը սիրես:

Աղջիկը գլուխը վերցնելով, լուռ յանդիմանութեամբ նայեցաւ Քաչալին, եթէ միայն գիտնար ...:

— Իմ սէրս Մասիսի նման մեծ, հըպարտ ու բարձր է, — չընչաց աղջիկը, կարծես ինքն իրեն խօսելով:

— Գիտեմ, անգին,—ու տղան աղջիկը սեղմած կուրծքին, համբուրեց:

Եւ սակայն երկուքն ալ մտահոգուած էին ապագայով: Անորոշ սարսափ մը ունէին գալիք օրերու մասին: Ի՞նչ պիտի լինէր իրենց վերջը: Քաչալը չէր կրնար մնալ Ռուսաստանի մէջ, ուր ամէն րոպէ կրնար ձերբակալուիլ: Պէտք է հեռանար, բայց Եւգինէն, կեանքի լաւ պայմաններու վարժուած աղջիկ մը, պիտի կրնա՞ր հետեւիլ իրեն, բաժնել փախստական սիպիրականի մը կեանքը:

— Քեզի միայն անստոյգ ապագայ եւ չարքաշ կեանք մը պիտի կրնամ տալ, ըսաւ Քաչալը, աղջկան աչքերուն նայելով — ու չեմ գիտեր թէ որքան իրաւունք ունիմ այդքան հասակ լինելու:

— Երջանկութիւնը, կեանքի սովորական հանգստութեան մէջ չէ, սիրելիս,— ըսաւ աղջիկը պահ մը մտածելէ վերջ,— քու անակդ ինծի համար պատսպար մը ...

— Այո, եթէ միայն անակ մը ունենայի ...

— Այն ժամանակ,— քրքջալով վերադարձ բերաւ աղջիկը, — այն ժամանակ այծի մաղէ վրան մը կը զարնենք ուր որ պատահի: Չեմ ուզեր որ այդքան մելամաղձոտ խորհուրդներ միտքդ պաշարեն. քիչ մը արեւ պէտք է տեսնել մութ ամպերու մէջէն, հասկացա՞ր:

— Քու մասիդ է որ կը մտահոգուիմ ...

— Ինդրեմ, մի մտահոգուիր: Ես կեանքիս համարն չատ պարզ կը տեսնեմ: Հա, գիտե՞ս թէ քու մեկնելէդ վերջը ինչ պատահեցաւ.

Տղան հարցական աղջկան նայեցաւ: Զարմանալի կերպով, Եւգինէի ներկայութեանը, ծանր մտածումներ կը թեթեւնային, աւելի պայծառ կը տեսնէր, ու ապագան այնքան ալ սարսափելի չէր երեւնար իրեն:

— Երբ Թիֆլիսէն մեկնեցար, ապահովութեանդ մասին չատ մտահոգուած էի: Մի ծիծաղիր վրաս եթէ բսեմ որ՝ ընկերուհիիս հետ Հալաբար գացի բախտ նայող մը տեսնելու համար:

— Է,— ու տղան խնդալով Եւգինէին նայեցաւ:

— Պատաւը ըսաւ որ ես երիտասարդ մը կը սիրեմ ...

— Անշուշտ աղջիկները մէկը կը սիրեն, վերջը՞:

— Բսաւ մէկը կը սիրեմ, որ չատ, չատ հեռուներէն եկած է, չատ փորձանքներ անցուցած է ու դեռ չատ փորձանքներ պիտի անցընէ: Բայց, երկու կամ չորս տարիէն պիտի ամուսնանաք ըսաւ, ու ...

Եւգինէն յանկարծ մինչեւ ականջները կարմրած, լռեց, ու չուզեց չարունակել:

— Է, վերջը՞, ամենահետաքրքիր տեղը լռեցիր,— ըսաւ տղան ծիծաղելով,— չչարունակե՞ս.

—Չէ, այսքանը բաւական է:

— Կ'ուզե՞ս ես չարունակեմ,— կատակեց Քաչալը:

Եւգինէն վախցած նայեցաւ տղուն, բայց անմիջապէս սկսաւ ծիծաղիլ իր միամտութեանը վրայ: Քաչալը ինչպէ՞ս կրնար գիտնալ բախտ բացողի մը խօսքերը, չէ՞ որ ինք ոչ ոքի չէր յայտնած այդ գաղտնիքը:

— Ըսաւ, որ չատ բախտաւոր պիտի լինես,— չընչաց Քաչալը աղջկայ ականջին ... եւ որ ...

Աղջիկը վախցած նայեցաւ ընկերոջ աչքերուն: Այս ո՞րտեղէն գիտէր ...

— Չէ, բաւական է, ալ մի չարունակեր.

— Եւ որ, երեք հատ գաւակ պիտի ունենաս... ճիշդ գուշակեցի, չէ՞:

Ու մինչդեռ աղջիկը ականջները փակած կը փախչէր դէպի տուն, Քաչալը ծիծաղելով հասաւ անոր ու միասին կանգ առին քալել: Երբ տանը մօտեցան, տղան զգուշացուց Եւգինէն.

— Մի մոռնար որ ես հիմա վարժապետ Յակոբ եմ:

Երկու սիրահարները աքաղէլի պէս գիի կատարեալ խաղաղութեան կ'անցընէին իրենց ժամանակը: Քաչալը նոյնիսկ մոռցեր էր, որ փախստական մըէ:

Իրիկուն մը, միւռոնօրհնէքէն երեք օր առաջ, այդիի գռնէն ներս մտան երկու օտարականներ:

ՄԱՒԱԿԱՆ

(Շար.)

ՓՆՏՈՒԵՑՔ եւ ԿԱՐԴԱՑԷՔ Երգիծաթերթ՝ «Մ Ե Ղ Ո Ի» փարիզի եւ Շրջանի Յառաջի ցուցիչ

Գ. ԱԽԵՏԻՍԷՆ:

ՀԱՐԱՉ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

EE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
(ԵՐԹԵԻՆԿԻ ՀԱՄԱՐ՝ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ,—

17, Rue Damesme, PARIS (13e)
Téléphone : Glacière 15 - 70
Métro : TOLBIAC)

	ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐՄՍԵԱՑ	ԵՒԱՄՍԵԱՑ	
Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա	250 »	130 ֆրանք	—
Ամերիկա եւ ուրիշ երկիրներ	200 »	100 ֆրանք	—

ՇԱԲԱԹ 3 ՀՈԿՏԵՄԲԵՐ SAMEDI 3 OCTOBRE 1936

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Թ. ՏԱՐԻ — 12e Année No. 3234

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՁԱԿԱՏԻՆ ՃԻԳԸ

— · —

Իսկապէս ծանր տագնապ մը անցուց Լէօն Պլումի կառավարութիւնը, մասնաւորապէս Մերակոյտին առջեւ, երբ կը քննուէր եւ անխնայ կը քննադատուէր իր քաղաքականութիւնը, Ֆրանքին արժեզրկման առթիւ :

Տագնապ մը որ կրնար լրջօրէն խախտել գահլիճին դիրքը, եթէ ժողովրդական ձակատը արթուն չգտնուէր եւ երեսփ. ժողովը ընդ առաջ գացած չըլլար մէկէն բանաձեւի մը :

Երկուշաբթի օրէն ի վեր, երբ արտակարգ նիստի հրաւիրուեցաւ Մորհրդարանը, երկու կողմերն ալ կազմ եւ պատրաստ կը սպասէին բուռն ճակատամարտի մը: Մանաւանդ որ, Ֆրանքին արժեզրկումէն զատ, ուրիշ ծանրակշիռ դէպքեր պատահած էին երկրին մէջ, արձակուրդի չըլլանին :

Ճակատամարտը մղուեցաւ, բայց յաղթանակը մնաց օրուան կառավարութեան, չնորհիւ ընկերվարական վարչապետին հեղինակութեան եւ ճարպարամտութեան: Օտար մայրաքաղաքներու մէջ անգամ կը գնահատեն Լ. Պլումի «համոզելու» կարողութիւնը:

Անշուշտ այս յաջողութեան մէջ դեր կատարեց նաեւ իրենց ընդդիմադիրներուն մեղսակցութիւնը՝ Ֆրանքի անկման մէջ : Ամէնէն թեթեւ աջակողմեանն ալ չէր կրնար պարտկել նախկին մեղքերը, այնպէս որ, գժուար էր ուրիշ յառաջ երթալ:

Մի եւ կողմէ, արտաքին աշխարհը, մասնաւորապէս Անգլիա եւ Մ. Նահանգները անհամբեր կը սպասէին Ֆրանսայի վերջնական որոշման: Փարիզ չէր կրնար դրժել իր խօսքը, երեք ամսուան բանակցութիւններէն յետոյ: Իսկ եթէ մեկուսանար, հետեւանքը պիտի ըլլար դրամական պատերազմ, որմէ այնքան կը խուսափի ամբողջ Ֆրանսան, նախատեսելով անոր անդարմանելի հետեւանքները:

Այսպէս կամ այնպէս, Լէօն Պլում յաջողեցաւ հետացնել վտանգը, եւ հանդիստ սրտով գնաց Ժընեւ, ուրիշ պայքարներ մղելու համար այնտեղ, Ազգերու Դաշնակցութեան ծոցին մէջ:

Անցեալ յունիսէն ի վեր, երբ հասատատուեցաւ ժողովրդական ճակատի կառավարութիւնը, ալեկոծ վիճակ մը կը ներկայացնէ Ֆրանսան:

— Ցեղափոխական կամ զուտ ընկերվարական գահլիճ մը չէ որ կը վարէ երկիրը: Բայց, առաջին օրէն իսկ ան կատարեց կարգ մը յեղաշրջումներ, որոնք վրդովեցին հիներուն եւ ունեւորներուն հանգիստը: Ցնցող նորութիւններ էին անոր հաստատած ընկերային օրէնքները,— աշխատավարձի բազմակողմանի յաւելում, շաբաթական 40 ժամ, հաւաքական պայմանագիրը, արհեստակցական պատուիրակութիւններ՝ գործարաններու մէջ եւն.:

Ուրիշ աննախընթաց պարագայ մը,— գահլիճը իր կազմին մէջ ներկայացնելով երկու զօրաւոր կուսակցութիւններ, ընկերվարականներն ու արմատականները, դուրսէն ալ կը վայելէ ան-ղիմադրելի առաւելութիւն մը,— Աշխատանքի Դաշնակցութեան գործօն աջակցութիւնը եւ համայնավար կուսակցութեան բարո-կան թեւարկութիւնը:

Միայն այս պարագան բաւական էր յուզելու աջակողմեան կամ ունեւոր դասերը, որոնք չուտով զգային թէ օրերը վտանգուած են:

Պերճմաստ են, այս առթիւ, խորհրդարանին մէջ արտասանուած խօսքերը:

Աջակողմեան երեսփոխան մը չէ՞ր որ կը պոռար Լէօն Պլումի երեսին.— «Դուք ժուհոյի ծառան էք»: (Կ'ակնարկէ Աշխատանքի Դաշնակցութեան ընդհ. քարտուղարին):

Լէօն Պլում այս ակնարկին պատասխանեց ոչ թէ երեսփ. ժողովին մէջ, որուն նախագահը կարգի հրաւիրած էր անարդող երեսփոխանը, այլ Մերակոյտին մէջ, ընդդիմադիրներու ընդհանուր յարձակողականէն վերջը.

— «Ես առաջին վարչապետն եմ որ կը տեսնեմ ժուհօն: Քանի երկու տարի առաջ, գօրաշարժի նախընթաց օրը, օրուան վարիչները չվարանեցան խօսակցիլ անոր հետ, եւ աւանդութիւնը ֆիլմանսյի կը վերագրէ սա խօսքը.— «Ահա իմ թիկնաթոռս, գրաւեցէք իմ տեղս»: Ես բարեկամ եմ Պ. Լէօն ժուհոյի եւ յաճախ կը տեսակցիմ անոր եւ բանուոր դասակարգի ներկայացուցիչներուն հետ: Ես չեմ ըմբռներ հանրապետական կառավարութիւն մը որ յարաբերութիւն չի պահեր բանուորական ժողովրդապետութեան հետ: Պատմութեան ընթացքին պատահա՞ծ է որ հանրապետութիւնը պաշտպանուի առանց բանուոր դասակարգին աջակցութեան»:

Այդ առթիւ էր որ վարչապետը, չէշտելով հանդերձ թէ ինք իրրեւ ընկերվարական վարիչ մը չէ որ կը գործէ, այլ իրրեւ ընկերվարական դահլիճի մը, ապդարարեց.

խագահը գործակցական դահլիճի մը, ապդարարեց.

— «Շատ կը խօսին «Պլումի փորձ»ի մասին: Այդ կը նշանակէ մեծ պատիւ մը ընծայել ինծի: Բայց եթէ այդ փորձը իմաստ մը ունի, իմաստը այն է որ ցուցնենք թէ միներ ո՛ր աստիճան կարելի է գլուխ հանել որոշ չափով ընկերային արդարութիւն եւ մարդկային հաւասարութիւն մեր հանրապետական կարգուսարքին մէջ: Այդ փորձին ծախողումը շատ ծանր պիտի ըլլայ երկրին համար»:

Ուրիշ խօսքով, Ֆրանսայի ներքին կարգուսարքը բարեփոխելու, նորոգելու, «որոշ չափով» ընկերային արդարութիւն հաստատելու ճիգ մըն է որ կը թափէ օրուան կառավարութիւնը : Եւ բանական համբայ կարեց արդէն:

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՄԻՋԻՆ ԲԱՆԱՁԵՒ ՄԸ ԳՏԱ

ՊԱՐՏԱԻՈՐԻԶ ԻՐԱՒԱՐԱՐՈՒԹԻՒՆ 6 ԱՄՍՈՒԱՆ ՀԱՄԱՐ

— · —

Սակառաւը վերաթացուեցաւ երէկ

Գիշեր ցերեկ վիճաբանելէ եւ բանական յուզում պատճառելէ յետոյ, երեսփ. ժողովը եւ Մերակոյտը միջին բանաձեւ մը գտան հինգշաբթի գիշեր, վերջնապէս վաւերացնելով Ֆրանքին արժեզրկման օրինագիծը :

Վէճը անելի մը յանդած էր նախընթաց օր, սակայն ծերակոյտը վերջին պահուն առժամեայ կարգադրութիւն մը առաջարկեց, որ հինգ ժամ վերջը ընդունուեցաւ երեսփ. ժողովին կողմէ, 217ի դէմ 354 ձայնով: Այդ կարգադրութեան բանաձեւը մշակուեցաւ գիշերանց, երբ երեսփ. ժողովը յայտնապէս ջղագրգռուած էր եւ կառավարութիւնը փախուկ դիրքի մը մատնուած: Առժամեայ կարգադրութեան համաձայն, բուն Ֆրանքի արժեզրկման օրէն քէն պիտի անջատուին այն յօդուածները որոնք հատուցումներ կը տրամադրեն այդ արժեզրկման հետեւանքներուն համար: Եթէ նշանակալից յաւելումներ ըլլան դիներու վրայ, կառավարութիւնը պիտի կրնայ միջոցներ ձեռք առնել, նախապէս ստանալով Ազգային Տնտեսական Մորհուրդին կարծիքը: Ասիկա հաւասիկ բանաձեւը .

— « 1936 օգոստոս 20ի օրէնքին արամադրութիւնները դիներու անարդար յաւելման մասին՝ գործադրելի են բոլոր յաւելումներուն համար, որ կրնան կատարուիլ դիներու վրայ, Ֆրանքին արժեզրկման հետեւանքով, պայմանաւ որ անվիճելի կերպով հաստատուած չըլլայ թէ յաւելումը հետեւանք է նաեւ բանաձուած ապրանքներու արժէքին յաւելման: Եթէ, 1936 դեկտեմբեր 31էն առաջ ապրուստի դիներու նշանակելի բարձրացում մը տեղի ունենայ նոյնպէս նայ բաղդատելով 1936 Հոկտեմբեր 1ի սակերուն հետ, կառավարութիւնը կրնայ, Ազգ. տնտեսական խորհուրդին կարծիքը առնելէ վերջ, եւ պետական խորհուրդին հրամանագրով, պարտաւորիչ հաշտութիւն եւ իրաւարարութիւն կազմակերպել, վեց ամսուան համար, կարգադրելու համար այդ բարձրացումը կամ մասնաւոր դէպքերու համար այդ բարձրացման հետեւանքով ծագած աշխատանքի վէճերը: Այդ առթիւ պիտի վերաքննուին նաեւ նախորդ խմբագիրը, Լուքիանով: Թերթին տեղեկութեանց համաձայն, Ռայխովքի կարեւոր պաշտօններ վարած է եւ երկար տարի Մոսկուայի հեռագրական գործակալութեան ներկայացուցիչն էր : Իրրեւ խմբագիր «Ժուռնալ տը Մոսկու»ի մէջ շատ կը գրէր ընդդէմ Ստալինի եւ Ռայխովքի, որ ներկայիս Մոսկուայի հեռագրական գործակալութեան տնօրէնն է: Ան ալ իր կարգին ձերբակալուած է եւ կը մեղադրուի թէ լրտեսութիւն կատարած է Գերմանիոյ համար:

Ֆրանքի արժեզրկման օրինագծին քուէարկութեամբ, վերջապէս խորհրդարանին արտակարգ նիստը, եւ Լէօն Պլում անմիջապէս ժընեւ գնաց, մասնակցելու համար Ազգերու Դաշնակցութեան ժողովին: Եթէ անակնկալ դէպքեր չպատահին, խորհրդարանին վերաբացումը տեղի պիտի ունենայ նոյեմբերի առաջին կամ երկրորդ շաբթուն, քննելու համար 1937ի եւ լմտ. այոյները :

*** Պանք տը Ֆրանսի շաբաթական տեղեկագրին համաձայն, որ հրատարակուեցաւ հինգշաբթի օր, սեպտեմբեր 25ին 2,580,000,000 ֆրանքի ոսկի եւս պակաս էր, որով պահեստը իջած կ'ըլլայ 50,110,000,000 ֆրանքի: Պետութիւնը առանց ոսկոսի փոխ առած է 1,300,000,000 ֆրանք:

*** Վիճելի յօդուածները ժողովէ ժողով փոխանցուեցան երեք - չորս անգամ, եւ ամէնէն աւելի վարչապետին ստիպողական կոչերն էին որ վճռական դեր կատարեցին: Համայնավարներն ալ քուէարկեցին միջին բանաձեւը:

*** Սակարանը վերաբացուեցաւ երէկ: Ընդհանուր կարծիքն այն է թէ առայժմ անգլիականը պիտի տատանի 101—103 ֆր.ի միջեւ: Իսկ տոլարը՝ 20.50 — 20.75: Հաւանական է որ աւելի կարեւոր եղելութիւններ տեղի ունենան, մինչեւ որ կարելի ըլլայ քիչ շատ հաստատուն վիճակ մը գտնել :

Նոր «մախրապուժումներ» Մոսկուայի մէջ

Մոսկուայի հեռագրական գործակալութիւնը կը ծանուցանէ թէ կեղծ. Գործադիր կոմիտէն որոշեց արձակել անտառային ճարտարագործութեան գործավարը, Սիմոն Լոպով եւ անոր տեղ նշանակել Վլատիմիր Իվանովը, անդամ կեդր. Կոմիտէին :

*** « Մաթէն » կը գրէ թէ Մոսկուայի դիւանագիտական շրջանակները յանկարծակիի եկան, իմանալով Ֆրանսերէն «Ժուռնալ տը Մոսկու »ի խմբագրին՝ Սեչքին Ռայխովկիի ձերբակալութիւնը: Շատոնց Միպերիա աքսորուած է նաեւ նախորդ խմբագիրը, Լուքիանով: Թերթին տեղեկութենէն հետեւցնելու համաձայն, Ռայխովքի կարեւոր պաշտօններ վարած է եւ երկար տարի Մոսկուայի հեռագրական գործակալութեան ներկայացուցիչն էր : Իրրեւ խմբագիր «Ժուռնալ տը Մոսկու»ի մէջ շատ չաղկապն էր արտաքին գործակալութեան, օտար դեսպաններուն եւ թղթակիցներուն: Իր հրամանին տակ էին արտաքին գործակալութեան տեղեկատու դիւանին 4 յաջորդական պետերը: «Թասս»ի գործակալութեան վարչութիւնն ալ իր ձեռքն էր: Այնպէս որ, չատ կը խօսուի իր ձերբակալութեան մասին եւ կը կարծուի թէ հարուածը պիտի հասնի աւելի կարեւոր դիրքերու: Ռայխովքի Լիթվինովի պաշտպանն էր եւ մասնաւոր խորհրդականի պաշտօն կը վարէր: Շատեր իր ձերբակալութիւնը ապացոյց կը նկատեն նոյնինքն Լիթվինովի հեռացման, որու մասին զրոյցներ կը շրջին տաճկի մը ի վեր: Կ'ըսուի թէ Լիթվինովի պաշտօնանկութեան եւ հակահրէական յարձակուն շարժման կուսակիցներուն գլուխը կը գտնուին Վորոշիլով, Եէկով եւ Միկոյեան (Հայ) : Իսկ հաւանական յաջորդներ կը համարուին Փարիզի դեսպան Փոթէմքին, որ Վորոշիլովի հովանաւորեալն է, Քրէսթինսքի եւ Միկոյեան :

ՕՐԸ ՕՐԻՆ

ՑԱՂԱԳՍ ԱՌՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Բարեմիտ եւ «առնական» ռամկավար մը խորապէս վրդովուած, գրիչը ձեռք առեր է զօրս դու պատուիրեցեր լուալու համար եղեկուան խնամիներ - ը,— հայ կարմրուկները :

Ինչո՞ւ,— որովհետեւ ստրուկի պէս համակերպեր են երեւանի կեդր. կոմիտէի արձակած վճիռին, ընդդէմ Ա-զատի խանջեանի, եւ չեն համարձակիր բիչ մը «առնականութիւն» ցուցնել :

Բարեհաճեցէք միասին կարդալ (Պայքար, 17 սեպտ.) .

— « Իրենց մօտ պակսեցաւ այդ կօրովը: Թոյլ, վախկոտ, հլու, անջիղ մարդոց երեւոյթը ցոյց տուին, յանդգնութիւնը չունեցան իրենց զգացումներուն արտայայտութիւնը չտկ չիտակ մէջտեղ բերելու եւ կապկեցին ինչ որ ըսուած էր ոչ աւելի, ոչ պակաս :

Անկողմնակալ ոգիով, անաչառ զգացումով, անվերապահ, կտրիճ կեցուածք ցոյց չտուին այս մարդիկը եւ դիմնալով հանդերձ Հայաստանի կուսակցական ակտիւին անհեթեթութիւնը, սկիզբէն սիրնքսեան լուռ - թիւն պահեցին, եւ երբ խօսեցան, ցոյց տուին սոսրապատութեան հա-մակերպութիւն մը, որ յատուկ է մի-այն բանութեան կապանքներուն մէջ իրենց գոյութիւնը քարշ տուող ըսուրուկներուն :

... Այս սարկամիտներէն գաղտնիք կորզելու միամտութիւնը չունէինք , երբ սկիզբէն կը սպասէինք լսել ի - րենց կեցուածքը ակտիւի բանադա - ւած դատապարտութեան մասին, դժբախտ պատահարէն 24 ժամ առաջ այնքան յարգուած առաջնորդի մը վերաբերմամբ :

... Ինչ որ ցուցադրուեցաւ այս խամաճիկներուն կողմէ, հոս Ամերի - կայի և կամ արտասահմանի այլ վար-

ըերուն մէջ, Քամէլիոնական երեւոյ-թի մը տխուր պատկերը կը յիշեցնէ եւ իրենց պաշտածը այրելու հոգեկան տկարութիւնը կը յայտնաբերէ :

Գիտէինք որ իրենք զրկուած էին դէպքին չուրջ հանրութիւնը լուսա - բանելու միջոցներէն, բայց Հայաս - տանի իրական բարեկամները հետա - քրքրութեամբ կ'ակնկալէին, որ այս մարդիկը ակտիւի այդ գոհիկ դա - տապարտութեան հանդէպ ըմբոստ ու կորովի ոգի մը ի յայտ բերէին: Զը-րին տեսիկա, որովհետեւ հայկական առնական ոգին խթթարուած է իրենց մէջ » :

Ինչ կ'ըսէք այս ռամկավար լուա - գողականին :

«Պայքար»ի աշխատակիցը չի՞ գի - տեր որ այդ խմբակին առաջնորդը, «Բանուոր»ի խմբագիրը «առնական» ճառ մը խօսեցաւ ամիսներ առաջ, փարիզի մէջ, պատմելով թէ Ազատ խանջեան վարակուած էր ծաւր տե - սակի «տուպերկիւլոզ»է եւ շարունակ ցուր կը խմէր ճովի գաւաթէն:

Չիմացա՞ւ թէ այդ խմբակին ուրիշ մէկ թեւը, Փարիզի Հօկը, երեւանէն հրաման խնդրեց խոնարհաբար , սգահանդէս կատարելու համար եւ պատասխան անգամ չստացա՞ւ :

Վերջին լուրն ալ ես հաղորդեմ :

Այս շաբթու, երկուշաբթի օր, նոյն Հօկը իմացած ըլլալով թէ խումբ մը անկախ գրողներ բողոքի բանախօսու-թիւն մը սարքած են երեւանի հայ գրողներու դէմ սարքուած հալա - ծանճիներուն առթիւ, իր բարտուղար - ներով, խմբագիրներով եւ ամբողջ շէֆխումբով խուժած էր սրահ, բա - նախօսութիւնը խանգարելու եւ... «էնթէրնասիօնալ» երգելու համար :

Տակաւին ի՞նչ կ'ուզէ «Պայքար»ի միամիտ յօդուածագիրը :

Իսկ եթէ այս «առնական» գործու - նէութեան վրայ աւելցնէինք եգիպ - տոսի ռամկավար պաշտօնաթերթին, «Արեւ»ի պապանձումը ...

ՎԱՀԷ

ՁԻՆՈՒԻԼ ԵՒ ՀՈՂ ՉՏԱԼ ԳԵՐՄԱՆԻՈՅ

— o —

Անգլիոյ պահպանողական կուսակցութեան ընդհ. ժողովը, որուն կը մասնակցին 1300 պատգամաւորներ, երկու կարեւոր բանաձեւեր քուէարկեց առջի օր, գրեթէ միաձայնութեամբ: Բանաձեւերէն մէկը կը տրամադրէ որ եւ է անգլիական դաշինակից չտալ Գերմանիոյ, միւսը՝ փութացնել սպառազինութիւնները: Այս առթիւ խօսած ճառին մէջ, Զըրչիլի փեսան պահանջեց որ կառավարութիւնը «փարատէ կայսրութեան մտահոգութիւնները եւ արտասահմանի մէջ անուցուած սին յոյսերը»: Եւ չէշտեց.

— « Նիւրէնպէրգի մէջ, Գերմանիոյ Առաջնորդը ապաքէն կարդաց: Մեր ժողովը պէտք է պատասխանէ այդ մարտահրաւէր: Տնտեսական տեսակէտով, մեր ափրիկեան հոգերուն կորուստը աննշան պիտի ըլլայ, բայց գինուորական տեսակէտով վտանգը չատ մեծ է մեզի համար: Եթէ Թանկանիքայի գաղթավայրը օտար ձեռքերու անցնի, պիտի տկարանայ ամբողջ կայսրութեան ռազմական միութիւնը, բրիտանական երկրամասին համերաշխութիւնը եւ պիտի խորտակուի Գահիրէ - Բարեյոյս օդանաւային ճամբան »:

Ուրիշ պատգամաւոր մը ազդարակեց.

— « Մեր ափրիկեան ստացուածքները միակ առաւելութիւնն են որ կը մընան: Պիտի զոհ՞նք մեր ապահովութիւնը, տեսնելով որ երկաթապատ բռ - նութիւնք մը կը ցցուի: Պահպանողական համագումարը կը յայտարարէ կառավարութեան պատրաստութիւնները, յայտարարեց .

Ցետոյ խօսք առաւ Սըր Ո. Հօր, ծովային նախարարը, որ բացատրեց թէ կառավարութիւնը երբեք մտքէ չէ անցուցած ուրիշին յանձնել որ եւ է հող : Իսկ ազգային պաշտպանութեան մասին, պարզելով Գերմանիոյ եւ Ո. Միութեան վերազինման ընթացքը եւ նոյնիսկ Ֆրանսայի ձախակողմեան կառավարութեան պատրաստութիւնները, յայտարարեց .

— « Հարկադրուած եմ պնդել միջազգային կացութեան ծանրութեան եւ բրիտանական վերազինման անհրաժեշտութեան վրայ : Վերջին ամիսներու ընթացքին մեծ յառաջդիմութիւններ կատարեցինք եւ այսուհետեւ մեր ապառնի ծրագրին իրագործումը յառաջ պիտի տարուի աւելի սրընթաց : Ոչ եւ է պարագայի մէջ չենք կրնար ընդունիլ զինադադարի առաջարկներ որ պիտի նուիրագործէին մեր բազդատաբար սակաւ ղէրքը: Եթէ, ինչպէս կը յուսանք, ապագային կարելի ըլլայ համաձայնութիւն մը ձեռք բերել ընդհանուր սահմանափակման համար, այդ համաձայնագրութիւնը պէտք է հիմնուի այն ենթադրութեան վրայ է մեր վերազինման ծրագիրը ամբողջովին գործադրուած է» :

— · —

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ վերաբացման առթիւ, պաշտօնի կոչուեցան 3882 նոր ուսուցիչներ եւ 1085 փոխ-ուսուցիչներ: Բոլոր այն դասարանները որ 35էն աւելի աշակերտ ունին, երկուքի պիտի բաժնուին: Սկիզբ եւ ուրիշ կարգ մը նահանգներու մէջ օրական մէկ ժամ մարմնամարզի վարժութիւններ պիտի կատարուին: Աղքատ ուսանողներու թիւը պիտի աւելնայ 50 առ հարիւր, իսկ Թուշակը՝ 3000 ֆրանքէն 4000ի պիտի բարձրանայ :

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ԿԱՐՄԻՐ ԳԻԾԷՆ ՆԵՐՍ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԲԱՆՍԱՐԿՈՒԹԻՒՆ

—o—

«Գրողներու Միութեան ընդհ. ժողովը միաձայն որոշեց վտարել Հայաստանի խորհ. գրողների Միութենից Նացիոնալիստ - արոցկիստ հակայեղափոխականները՝ Դր. Սիմոնեանին, Ալազանին, Ա. Բակունցին, Գ. Մահարուն, Վ. Թոթովենցին, Գ. Վանանդեցուն եւ Վ. Նորենցին»:

Ինդիրը միայն եօթը գրագէտները գոհիկ ու ամարդի հալածանքի են թարկուելուն մէջ չի կայանար: Վէրքը չատ աւելի խոր է եւ հարուածն ուղղուած է Հայաստանի ստեղծագործող մաքին դէմ: Եօթը հոգիի վտարումի որոշումով խորհրդահայ Գրողներու Միութիւնը նախ եւ առաջ կը փորէ իր իսկ հիմերը: Անհատական, Ս. Հայաստանի գրականութիւնը ձգնաժամի օրեր կ'ապրի:

Գրողներու Միութենէն վտարուած եօթը գրագէտներու գրիչը տասը տարիէ աւելի կ'իշխէր Հայաստանի մէջ եւ գրական մարզին մէջ կատարուած բոլոր աշխատանքները հեռուէն կամ մօտէն առնչութիւն են ունեցած այդ մարզոց հետ: Անոնք են եղած երկրին մէջ ճանչցուած տաղանդները, հեղինակաւոր քննադատներ եւ արուեստի վարիչներ: Ամէնէն չատ սպառած դիրքերը կը պատկանին այդ հեղինակներուն եւ արտասահմանը Հայաստանի գրականութիւնը կը ճանչնայ դլխաւորաբար անոնց գործերով (աւելցնելով նաեւ Զարենցը, որուն անունը եւ ոչ մէկ տեղ չի յիշուիր): Դեռ աւելին. վտարուած գրագէտները բոլորն ալ խորհրդային չքնաղ արտադրութիւններ են եւ ուղղափառ համայնավարներ: Եթէ Բակունցը և կամ է պատնէշի միւս կողմէն, Գ. Մահարին, Ալազանը, Նորենցը եւ Վանանդեցին համայնավար կուսակցութեան ծոցին մէջ են հասակ նետած ու գրական կոչումին արժանացած (Բակունցն ալ սկսած է ստեղծագործել խորհրդային տիրապետութեան չրջանին): Եթէ Թոթովենցը կը նկատուէր «անհարապատ» տարր, Դր. Սիմոնեանը եղած է համայնավար գրխաւոր գործիչներէն մէկը՝ վարելով կուսակցութեան քարտուղարի եւ ժողովրդական գործավարի պաշտօնները:

Ահա այդ եօթը հոգիները են որ այսօր կ'ամբաստանուին իբրեւ «նացիոնալիստ - արոցկիստ հակայեղափոխականներ» եւ, ինչպէս հաղորդուեցաւ, առանցքէ չորսը արդէն կը գտնուին փականքի տակ: Եօթը գրիչներ դատապարտուած են լռութեան եւ Հայաստանի գրականութիւնը կը կորանցնէ քանի մէ տպագնդաւոր նուիրուածներ: Կը տուժեն ոչ միայն այդ եօթը հոգիները, այլ եւ մեծ արժէք մը կը զրկուի Հայաստանի գրականութիւնը: Որովհետեւ եթէ հնարաւոր է որ եւ է պաշտօնեայ փոխարինել ուրիշով մը, դիւրաւ չեն ծնիր Բակունցներ, Ալազաններ եւ Մահարիներ: Սակայն միայն այդ եօթին ճակատագիրը չէ որ կը չահագրգռէ մեզ:

Իսկ ի՞նչ կացութեան են մատնուած «ոգի» մնացածները՝ անոնք որ անարգանքի սիւնին կը գամուն իրենց էրկի գրչի ընկերները եւ գործակիցները: Արդեօք ի վիճակի պիտի ըլլա՞ն պահելու Սթալինին, Բերիային եւ Ամառունիին տուած իրենց խոստումը, թէ «նոր թափով կը լծուին ստեղծագործական աշխատանքի»: Ո՞ր ստեղծագործական աշխատանքի մասին է խօսքը: Առայժմ տուող «ստեղծագործական աշխատանքը» կը կայանայ զօրաւորներու առջեւ քծնելու, սողալու եւ իրենց մաերիմները մատնելու եւ զաւաճանելու ստորնութեան մէջ: Թերեւս բանի են ստորագրած Մոսկուա, Թիֆլիս եւ Երեւան ուղղուած նամակներուն տակ: Բուն ոգերգութիւնն ալ ստոր մէջ կը կայանայ: Օրուան իշխանաւորները ոչ միայն հաշմանդամ կը զարձնեն գրականութիւնը, այլ եւ կը խաթարեն գրագէտներու նկարագիրը՝ սերմանելով անբարոյութիւն եւ համաստարած կեղծիք ու մատնութիւն:

Խորհրդային աշխարհին մէջ խօսքի եւ գրչի ազատութիւն գոյութիւն չունի: Միակ ասպարէզը, ուր կարելի էր քիչ չատ ազատ ստեղծագործական աշխատանք կատարել, գրականութիւնն էր մնացած: Ներկայիս խոսքէն կը կաչկանդուի նաեւ այդ ազատութիւնը եւ գրագէտը կը զատնայ սարուկ ու գերի, պարտաւորուած կատարելու միայն կուսակցական պատուէրներ: Խորհրդային բանաստեղծն ու արձակագիրը, երգիծաբանն ու թատերագիրը իրենց գրիչը պիտի չարժեն համաձայն վերին հրահանգի եւ Կենտկոմի քարտուղարութեան գծած ուղիով: Այլապէս անոնք ոչ միայն «նոր թափով ստեղծագործելու» հնարաւորութիւնը պիտի չունենան, այլ եւ ազատ ապրելու իրաւունքէն կը զրկուին: Եւ աչքի առջեւ ունենալով երկուան գրական կուռքերու գահավիժ անկումը, «ոգի» մնացած գրագէտները պիտի համաձակի՞ն իրենց համար գծուած ստեղծագործական սահմանէն քայլ մը անդին անցնել:

Ի հարկէ ոչ: Հոս կամակատար գործիր, կամ թէ գրիչդ կոտրէ: Այս ձեւով է գրուած խնդիրը եւ մի՛ այնոր, որ կը յանդգնի իր սեփական կամքն ու մտածումն արտայայտել: Այդպիսիներու համար ամբաստանութեան բանաձեւն արդէն պատրաստ է եւ բանտարկութիւնը անխուսափելի: Այդպիսի պայմաններու տակ արդեօք հնարաւո՞ր է ստեղծագործական նոր թափ եւ գրական արժէքներու արտադրութիւն: Այս հարցումին թող պատասխանեն անոնք, որ գիտեն միայն չորս թաթի վրայ քալել եւ ծափահարել հայ մշակոյթին հասցուած ամէն հարուած:

Ո՞ր յանցանքին համար չնորհազուրկ եղան Հայաստանի եօթը գրագէտները:

Գրողներու Միութեան ընդհանուր ժողովը գանոնք կը մեղադրէ ազգայնական - Թրոցկիական հակայեղափոխական յանցանքին մէջ: Մէկդի դնելով «Թրոցկիստ» վերագրումը, որ ոտքի վրայ քուն կը բերէ, կը մնայ ազգայնական յանցանքը, որ հակայեղափոխութիւն կը կոչուի: Ահիւղ այս ամբաստանութիւնն է, որ իր էութեան մէջ ամբողջովին բանաւարկութիւն է: Խորհրդահայ եօթը գրագէտները դոհերն են կազմակերպուած բանտարկութեան, առանց «պրոլետարական» ազգայնականները պատասխանատու պաշտօններ ստացան Բագուի եւ Թիֆլիսի մէջ: Այսպէս Զուբաբ կարգուեցաւ Բագուի «Կոմունիստ» Թերթի խմբագիր, Գումեդին՝ Անդրկովկասեան հողային գործակալի օգնական, իսկ Դարագեանն ալ վերջերս մեծ դեր կը կատարէր Թիֆլիսի հայ գրական կեանքին մէջ: Ի մէջ այլոց, Ներսիկ Մաթեւոսեանի առաջին մատնիչը եղած է Նորայր Դարագեանը: Ամենչնայնմահէն եւ կատարուած մաքրագործումէն վերջ, այդ խառնակիչ - դաւադիրները բոլորն ալ վերադարձան Հայաստան՝ ստանձնելով կարեւոր պաշտօններ: Ե. Զուբաբը ստանձնեց «Ա. Հ.»ի պատասխանատու խմբագիրի պաշտօնը, Գումեդին նշանակուեցաւ հողային գործավար, իսկ Ն. Դարագեան ընտրուեցաւ «Խորհ. Գրականութիւն» ամսագրի խմբագիր:

Այս փաստերը կ'ապացուցանեն թէ Հայաստանէն արտաքսուած խառնակիչները իրենց գաւադիր գործունէութիւնը փոխադրած էին Բագու եւ Թիֆլիս, ուր Բաղիրովի (Ադրբէջանի կոմկուսի եւ Անդրերկոմի քարտուղար) եւ Բերիայի թեւարկութեան տակ մտնելով՝ չարունակած են զրպարտել Ստալինեանը եւ ասոր գործակից գրագէտները: Նոր սահմանադրութեան նախագիծին առթիւ հայ համայնավարներուն մէջ յառաջ եկած դժգոհութիւնները բանաարկութեան առաջ նետէ զարձած գաւադիրներուն եւ, առանց միջոցներու մէջ խորհրդային պետութեան դէմ, որովհետեւ միամտութիւնն էր ունեցած հաւատալու Սթալինի մշակութային նոր քաղաքականութեան չիտակութեանը: Ալազանի եւ իր վեց ընկերներու մաքէն իսկ չէր անցներ, թէ սթալինեան հաւատիքները կեղծ են եւ եղած բարեկարգութիւնները չեն վերաբերիր Հայաստանի համար...

Հետաքրքրական մանրամասնութիւն մը: Ռուսիոյ պատմութեան պատգիրքերուն մէջ, ռուսական վերածնունդի ահռելիքայ Լոմոնոսով նկարագրուած է իբրեւ «ազնուականաց թեան գաղափարախօս»: Այդ բնորոչումին դէմ բողոքեց կուսակցական պաշտօնաթերթ «Պրաւդա»ն (փետր. 4), մատնանչելով այն մեծ դերը, որ կատարած է Լոմոնոսով ռուս մշակոյթի զարգացման պատմութեան մէջ: Իսկ երբ Ակսէլ Բակունցը ուսումնասիրութիւն մը հրատարակեց հայ վիպագնունդի ռահվիրայ Ս. Աբովեանի մասին, ցոյց տալով անոր կատարած հսկայական դերը մեր մշակութային նորագոյն պատմութեան մէջ, ատոր համար ներկայիս Բակունցը հակայեղափոխական է եւ ազգայնական: Այս մէկ հատիկ փաստն իսկ կը բաւէ համոզուելու համար, թէ որ աստիճան դեհիկ բանաարկութեան կ'ենթարկուին Հայաստանի գրագէտները:

Սակայն կայ նաեւ ուրիշ կարեւոր պարագայ մը: Երկու երեք տարի առաջ Ստալինեանի Կեդր. Կոմիտէն Հայաստանէն արտաքսեց չորք մը համոզուած կուսակցական խառնակիչներ ու գաւադիրներ (եղիա Զուբար, Գումեդին, վերջերս ալ՝ Նորայր Դարագեան եւ ուրիշներ): Անբմբռնելի պատճառներով այդ պատժուած կուսակցականները պատասխանատու պաշտօններ ստացան Բագուի եւ Թիֆլիսի մէջ: Այսպէս Զուբաբ կարգուեցաւ Բագուի «Կոմունիստ» Թերթի խմբագիր, Գումեդին՝ Անդրկովկասեան հողային գործավարի օգնական, իսկ Դարագեանն ալ վերջերս մեծ դեր կը կատարէր Թիֆլիսի հայ գրական կեանքին մէջ: Ի մէջ այլոց, Ներսիկ Մաթեւոսեանի առաջին մատնիչը եղած է Նորայր Դարագեանը: Ամենչնայնմահէն եւ կատարուած մաքրագործումէն վերջ, այդ խառնակիչ - դաւադիրները բոլորն ալ վերադարձան Հայաստան՝ ստանձնելով կարեւոր պաշտօններ: Ե. Զուբաբը ստանձնեց «Ա. Հ.»ի պատասխանատու խմբագիրի պաշտօնը, Գումեդին նշանակուեցաւ հողային գործավար, իսկ Ն. Դարագեան ընտրուեցաւ «Խորհ. Գրականութիւն» ամսագրի խմբագիր:

Այս փաստերը կ'ապացուցանեն թէ Հայաստանէն արտաքսուած խառնակիչները իրենց գաւադիր գործունէութիւնը փոխադրած էին Բագու եւ Թիֆլիս, ուր Բաղիրովի (Ադրբէջանի կոմկուսի եւ Անդրերկոմի քարտուղար) եւ Բերիայի թեւարկութեան տակ մտնելով՝ չարունակած են զրպարտել Ստալինեանը եւ ասոր գործակից գրագէտները: Նոր սահմանադրութեան նախագիծին առթիւ հայ համայնավարներուն մէջ յառաջ եկած դժգոհութիւնները բանաարկութեան առաջ նետէ զարձած գաւադիրներուն եւ, առանց միջոցներու մէջ խորհրդային պետութեան դէմ, որովհետեւ միամտութիւնն էր ունեցած հաւատալու Սթալինի մշակութային նոր քաղաքականութեան չիտակութեանը: Ալազանի եւ իր վեց ընկերներու մաքէն իսկ չէր անցներ, թէ սթալինեան հաւատիքները կեղծ են եւ եղած բարեկարգութիւնները չեն վերաբերիր Հայաստանի համար...

Հետաքրքրական մանրամասնութիւն մը: Ռուսիոյ պատմութեան պատգիրքերուն մէջ, ռուսական վերածնունդի ահռելիքայ Լոմոնոսով նկարագրուած է իբրեւ «ազնուականաց գաղափարախօս»: Այդ բնորոչումին դէմ բողոքեց կուսակցական պաշտօնաթերթ «Պրաւդա»ն (փետր. 4), մատնանչելով այն մեծ դերը, որ կատարած է Լոմոնոսով ռուս մշակոյթի զարգացման պատմութեան մէջ: Իսկ երբ Ակսէլ Բակունցը ուսումնասիրութիւն մը հրատարակեց հայ վիպագնունդի ռահվիրայ Ս. Աբովեանի մասին, ցոյց տալով անոր կատարած հսկայական դերը մեր մշակութային նորագոյն պատմութեան մէջ, ատոր համար ներկայիս Բակունցը հակայեղափոխական է եւ ազգայնական: Այս մէկ հատիկ փաստն իսկ կը բաւէ համ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՀԱՐՑԵՐՈՎ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՐԳԸ

ՏԻԳՐԱՆ — Լուսանկարիչ մարդ էր։ Նկարում էր ամեն ինչ։ Նկարում էր մարդկանց, ծառերը, ծաղիկները, ամպերը, ձյունը, անձրևը, ամեն ինչ։ Նկարում էր ամեն տեղ։ Ամեն տեղ էլ նրա հետ էր նրա ֆոտոխցիկը։ Ֆոտոխցիկը նրա ամենամտերիմ ընկերն էր։ Նրա հետ նա խոսում էր, նրա հետ նա ուտում էր, նրա հետ նա քնում էր։ Նրա հետ նա ամեն առավոտ դուրս էր գալիս տնից։ Նրա հետ նա վերադառնում էր տուն։ Նրա հետ նա ամեն օր ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն ժամ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն րոպե ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն վայրկյան ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն տարի ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն դար ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն հազարամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն միլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն միլիարդամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն տրիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն կվինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն սեքստիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն սեպտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն օկտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն նոնիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն դեցիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն անդեցիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն դուոդեցիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն տրեդեցիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն քվատուորդեցիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն քվինդեցիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն սեքսդեցիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն սեպտենդեցիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն օկտոդեցիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն նովեմդեցիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն վիգինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն անվիգինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն դուովիգինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն տրեվիգինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն քվատուորվիգինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն քվինվիգինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն սեքսվիգինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն սեպտենվիգինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն օկտովիգինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն նովեմվիգինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն տրիգինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն անտրիգինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն դուոտրիգինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն տրետրիգինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն քվատուորտրիգինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն քվինտրիգինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն սեքստրիգինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն սեպտենտրիգինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն օկտոտրիգինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն նովեմտրիգինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն քվադրագինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն անդրագինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն դուոդրագինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն տրեդրագինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն քվատուորդրագինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն քվինդրագինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն սեքսդրագինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն սեպտենդրագինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն օկտոդրագինտիլիոնամյակ ճանապարհորդում էր։ Նրա հետ նա ամեն նովեմդրագ

ՉԱՐԻՖՈՒՀԻ

(ՎԵՊ ԱՌԱՔԱԿԱՆ ԿԵՆՑԱՂԻ)

— ո —

Մեկ մեր նկատումն էր, իսկ Ջեմալ Ալի Ղալիբ ամբողջ ժամանակ ինքնամոռաց կերպով կը խոսեր, ինչպես որ ամեն մարդ կ՚ընէ, երբ ինքզինքը կը գտնէ իր սիրելի ընկերներուն մէջ։ Ան ալ մեզ կը նկատէր իր սիրելի ընկերներուն շարքին մէջ։ Ուստի ինքզինքը ազատ կը զգար մեզի հետ։

— Գիտէ՞ք, օրհնուած ըլլամ ես, ըսաւ ան, ես ամբողջ կեանքիս մէջ ոչ մէկ ատելի մարդ տեսած եմ։ Ես ատելի մարդ չեմ ճանչնար։ Ինչո՞ւ ատելի մարդ ըլլայ մարդ։ Ինչո՞ւ մարդ ատելի ըլլայ։ Ես ատելի մարդ չեմ ճանչնար։ Ես ատելի մարդ չեմ ճանչնար։ Ես ատելի մարդ չեմ ճանչնար։

Ջեմալ Ալի Ղալիբ ինծի կը նայէր, ինծի կը խօսէր, ինծի կը ժպտէր, ինծի կը ծիծաղէր, ինծի կը ձեռք տար, ինծի կը գրկախառնուէր, ինծի կը համբուրէր, ինծի կը սիրէր։ Ան ինծի կը սիրէր, ինչպէս որ ես զինք կը սիրէի։ Ան ինծի կը սիրէր, ինչպէս որ ես զինք կը սիրէի։ Ան ինծի կը սիրէր, ինչպէս որ ես զինք կը սիրէի։

Ես ալ զինք կը սիրէի։ Ես ալ զինք կը սիրէի։ Ես ալ

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)
17, Rue Damesme, PARIS (13e)
Téléphone : Glacière 15 - 70

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,—

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՅ	ԵՌԱՄՍԵԱՅ
Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա	250 »	130 ֆրանք	—
Ամերիկա եւ ուրիշ երկիրներ	200 »	100 ֆրանք	—

ԿԻՐԱԿԻ
4
ՀՈԿՏԵՄԲԵՐ
DIMANCHE
4 OCTOBRE
1936

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

Ամբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ՀԲ ՏԱՐԻ — 12e Année No. 3235

ԵՐԿՈՒԻ ԽՕՍՔ

«ԱՆՅՈՅՍ» ՀԱՐՑԻ ՄԸ ՅՈՒՍԱՍՏՈՒ ԵԼՔԸ

Թերթի մը մէջ, հետեւեալ տողերը հանդիպեցան մեր աչքին.

— « Մեզ համար, փակուած է այս խնդիրը, հակառակ որ պինդ գլուխ ունայնամիտներ դեռ կը շարունակեն իրենց դիմում - ները եւ յուսադրումները:

Այս պայմաններուն մէջ, լաւագոյն է որ հայ տղաք յանախեն հելլէն նախակրթարաններ եւ խնդրուի որ այդ դպրոցներու մէջ 1 - 2 ժամ հայերէնի թոյլտուութիւն ըլլայ »:

Հակիրճ անչուշտ. հարցը կը վերաբերի յունահայ դպրոցներու փակման, որուն մանրամասնութիւնները հաղորդած ենք ժամա - նակին:

Յունաստանի կրթական նախարարութեան նախակրթարան - ներու տեսչութիւնը յունիս 15 թուակիր հրամանագրով մը, կը փակէր հայկական դպրոցները եւ կ'արգիլէր հայերէնի ուսուցու - մը, հազիւ քանի մը ժամ արտօնելով միայն վերի կարգերուն հա - մար, իբրեւ օտար լեզու: Վերաբացման համար արուած պայման - ները այնքան ծանր էին որ, յոյս չկար որ եւ է հայկական դպրոց պահելու :

Այսպէս, հրամանագիրը կը ժխտէր «հայկական փոքրամաս - նութեան» մը գոյութիւնը, եւ կ'արտօնէր միայն անհատական դպ - րոցներու բացումը:

Լաւ է արտասպել հրահանգը.

— « Այն Հայերը որ հելլէնահպատակութիւնը ընդունած են, կրնան աղերսագիրներ տալ, հիմնելու համար անհատական «տի - մոթիֆօն» վարժարաններ որոնք պէտք է կատարելապէս համա - պատասխանեն 3578 թիւ օրէնքի տրամադրութեանց, այսինքն՝ ասոնք կերպին 3578 թիւ օրէնքի տրամադրութեանց, այսինքն՝ ասոնք պիտի գործեն պետական վարժարաններու ծրագրին համաձայն, ունենալով իրենց պաշտօնէութիւնը միմիայն յոյն ուսուցիչներէ եւ տնօրէնին նշանակումը պիտի վաւերացուի կրթական խորհուր - դին կողմէ եւ որոնց մէջ բոլոր դասերը պիտի ուսանդուին յուն - րէն եւ ոչ թէ հայերէն լեզուով, որուն դասաւանդութիւնը պիտի արտօնուի միմիայն 5րդ եւ 6րդ դասարաններուն, ծրագրէն զատ ժամերու մէջ եւ շաբաթը 6 ժամէ աւելի չպիտի դասաւանդուի իւ - րաքանչիւր դասարանին համար, բացառութիւն կազմելով պետա - կան վարժարաններու ծրագրէն եւ այս պարագան ալ նմանապէս պիտի վաւերացուի կրթական խորհուրդէն »:

Բնականաբար ամբողջ գաղութը մասնակցեցաւ խոր վշտի:

Եթէ հրամանագիրը տառապէս գործադրուէր, մօտ 5000 դպ - րոցականներ պիտի զրկուէին մայրենի դասախօսականութենէ, եւ պիտի փճանար 15 տարուան աշխատանք մը, որ այնքան յուսաւոր հեռանկարներ ձգած էր:

Արդ, ի՞նչ պէտք էր ընել, այս դժնդակ անակնկալին առջեւ. բազկատարած ապօթէ՞լ, պատուհանին առջեւ նստիլ եւ հառաչէ՞լ կամ անիծէ՞լ, թէ գործել:

Առաջին ցնցումէն անմիջապէս վերջը, Աթէնքի եւ Սէլանիկի վարիչ մարմինները եւ կազմակերպութիւնները ընտրեցին ամէնէն բնական եւ արդարանական ճամբան,— հաւաքական դիմումներ կատարել եւ արթագրել տալ կատարուած անարդարութիւնը: Մա - նաւանդ որ, Յունաստանի ժողովուրդը եւ կառավարութիւնը միշտ ալ բարեացակամ եղած են իրենց հիւրընկալած գաղթական - նութեան հանդէպ, նոյնիսկ աչք փակելով չատ մը անհամա - չափութեանց առջեւ:

Դիմումները կատարուեցան չափազանց անյապաղ պարագա - յին մէջ: երկիրը վարչական տագնապ մը կ'անցընէր, ներքին եւ արտաքին հոգեր կը ճնշէին օրուան վարիչներուն վրայ, եւ երկրորդական պաշտօնեաները, գրասենեակի տեսուչներ անդրա - դարձական դիրք մը բռներ էին:

Անոնց գլխաւորը, նախակրթարաններու վերատեսուչ Իպսիր - լիս, հայ պատուիրակութիւնը ունկնդրութեան ընդունած առեն, այնպիսի լեզու մը կը գործածէր որ պիտի յուսահատեցնէր ամէ - նէն լաւատեսն ալ:

— « Չէ՞ որ դուք ձեր տուներուն մէջ, ձեր զաւակներուն հետ հայերէն կը խօսիք: Ատիկա բաւական չէ՞: Թող տան մէջ սորվին հայերէն կը խօսիլ, իսկ երբ կ'անցնին 5րդ եւ 6րդ դասարան, հոն ալ հայերէն խօսիլ, իսկ երբ կ'անցնին 5րդ եւ 6րդ դասարան, հոն ալ հայերէն գրել - կարդալ թող սորվին»: (1936 յուլիս):

Եւ սակայն չյուսահատեցան գործողները: Շարժման մէջ դր - ուեցան բոլոր արտադրելի ուժերը, Հայ Թէ Ցոյն: Կրկնապատ - ուեցան բոլոր արտադրելի ուժերը, Հայ Թէ Ցոյն: Ու վերջա - պէս կարգ մը չորեր երեւցան, ինչպէս կը հաստատեն այսօրուան լուրերն ալ :

Առաջին անգամ Սէլանիկի կրթական տեսուչն էր որ հրահան - գեց բանալ ազգ. վարժարանը: (Մտանաւոր նամակ մը կը տեղե - կանանք թէ նոյն արտօնութիւնը արուած է նաեւ Կ. Կիւլպէնկեան եւ Բարեգործականի դպրոցներուն համար): Իսկ Աթէնքի մասին կը կարդանք այսօր:

Անշուշտ վերաբացումը չի կրնար կատարուիլ նախկին պայ - մաններով: Դպրոցներուն համար մշակուած է մասնաւոր կանոնա - դիր մը, որ գրգռիչ տեղմումներ կը պարունակէ:

Եւ սակայն, կացութիւնը այն չէ ինչ որ կը տրամադրէր յու - նէս 15ի հրամանագիրը: Եւ այժմ աշխատանքները կը չարունակ - ուին, կարելի եղածին չափ դիւրութիւններ ապահովելու համար:

Ինչո՞ւ յիշեցինք այս մանրամասնութիւնները:

Նախ՝ մեր ուրախութիւնը յայտնելու համար ձեռք բերուած յաջողութեան համար: Երկրորդ՝ հաստատելու համար թէ անկար - ելի բան չկայ հանրային կեանքի մէջ, կը բաւէ որ ունենանք հա - տաք եւ խէթալ, չարաչարութիւն եւ աշխատանք, մանաւանդ ծրագրեալ աշխատանք: Իսկ այս բոլորը՝ յանուն գաղութներու ինքնապաշտպանութեան, որ գոց դիրք մըն է իսկապէս «պինդ - գլուխ ունայնամիտներ»ու համար...

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՅՈՒՆԱՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՊԻՏԻ ՎԵՐԱԲԱՑՈՒԻՒ

Հայ կիներն ալ դիմում կը կատարեն

« Նոր Օր »ի մէջ կը կարդանք (27 սեպտեմբեր).—

Շաբաթէ մը ի վեր աւելի եռանդուն կերպով կը հետապնդուէր հայ վար - ժարաններու վերաբացման խնդիրը, կրթական նախարարութեան մօտ: Մա - նաւանդ ամբոխային արտադրութիւնները, չունդալից լուրեր հրատարակելով Անթիոքի եւ Իսքէնտէրունի մասին: Թուրքերէն «Քան» կը հրատարակէ հե - տեւեալ հետագիրը, վերի խորագրին տակ.—

Շատ յուզումնալից դէպք մը ծագեցաւ հոս: Արար ազգայնականները ցոյ - ցեր կը կատարէին Սուրիոյ անկախութեան համար: Այս առթիւ Թուրք աւագ - ձագործ մըն ալ Թրքական դրօշ պարզած էր իր խանութին վրայ: Մեր դրօշը ամենայն Թուրքերը անմիջապէս կը հաւաքուին խանութին առջեւ եւ ցոյցեր կը կատարեն: Ասոր վրայ, Արաբները կը յարձակին եւ մեր դրօշը վար առնելով կը պատռեն: Այս ընթացքը պատճառ դարձաւ մեծ ընդհարումի մը: Ի վերջոյ ֆրանսական զինուորները միջամտելով վերահաստատեցին կարգը: Թուրք հանրային կարծիքը չատ յուզուած եւ լարուած է:

Ֆելլահներ, Հայեր եւ Ցոյներ յարձակուցան Թուրքիոյ տուներուն վրայ

Իսկ « Սօն Փոսթա » իր կարգին կը գրէ, այս խորագրին տակ.—

Այսօր, 28 սեպտեմբեր Իսքէնտէրունի եւ Անթաքիոյ մէջ ծայրայեղու - թիւններ գործուած են Թուրքերուն դէմ: Ֆրանքեւսուրիական զաշնագրին ստորագրութեան լուրին վրայ, կարգ մը Ֆելլահներ, Հայեր եւ Ցոյներ կը յարձակին Թուրքերու տուներուն վրայ եւ կը կոտրեն ապակիները: Եւ կար - ծես չէր բաւեր ասիկա, կը յարձակին Թուրք չարժավարներուն վրայ եւ կ'ա - նարգեն զանոնք:

Թուրքերը թէեւ կը յուզուին, բայց կը պահեն իրենց պաղարիւնը, պատ - ւական չտալու համար խառնակիչներուն: Կացութիւնը չատ դառն է: Հակառակ ատոր, գրգռիչ պետերը չպիտի հանին իրենց նպատակին, որովհետեւ Իսքէն - տէրուն եւ Անթաքիա վստահ են իրենց իրաւունքին:

Եթէ Թուրքերը իրենց յատուկ ազնուականութեամբ կը պատասխանեն կարգ մը տարբերու ատոր փորձերուն, պատճառը այն է որ վստահ են իրենց իրաւունքի ուժին:

ՄՄԲ.— Ուրիշ լուրեր յաջորդով:

ՄԵԾ ՈԳԵԻՈՐՈՒԹԻՒՆ ՍԱԿԱՐԿԱՆԻՆ ՄԷՋ

Անգլիականը 105,75, Տոլարը 21,45

Ուրբաթ օր մեծ ոգեւորութիւն կը տիրէր Փարիզի սակարանին վերա - բացման առթիւ, իբրեւ հետեւանք ֆրանքին արժեզրկման, որուն հրահանա - գիրը հրատարակուեցաւ նոյն օրը: Անգլիականը, որ 76.82 էր անցեալ ուրբաթ օր, բարձրացաւ 105.76ի, իսկ տոլարը 21.45ի (նախապէս 15.19): Տնտեսական գործառնութիւններ կատարուեցան պետական արժեթուղթերու վրայ, որոնք բարձրացան մինչեւ 10 առհարիւր: Ահագին գնումներ կ'առաջարկուէին, բայց մասուցումները աննշան էին:

Պան տը Ֆրանսը 5 առ հարիւրէն 3ի իջեցուց զեղչի սակը :

Մէկ շաբթուան վակումէն վերջը, երբ սովորական զանգը հնչեց կէս օ - րին, դիտուեցաւ որ գիներ նշանակուած չէին տախտակին վրայ: Կէս ժամ վերջն էր որ միջնորդները կրցան համաձայնիլ 3 առ հարիւր Ռանթէրու բաց - ման գինի մասին: Օտար արժեթուղթերու գործառնութիւնները աւելի հան - դարտ էին:

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Գ. էջ)

ՕՐԸ ՕՐԻՆ

ՊԱՐՈՆ ՅԱՌԱՋ ԵՒ ԱՓՐԻԿԵԱՑԻ ԽԱՓՇԻԿԸ ԿԸ ԽՕՍԻՆ

— . —

Ժամը 3:

Վահէն գացած է սեւ ջուր կուլ տա - լու մօտակայ սրճարանին մէջ,— ինչ մը հանգչելու համար, առտուան հեւ - ի հեւ աշխատանքը տակաւին նոր ա - ւարտած:

Ցանկարծ դուռը կը զարնուի:

Կուպրի պէս սեւ դէմք մը կը պըս - պըղայ բացուող դրան մէջ: Անուշիկ դէմք մը, փիանոյի մորթով, սլացիկ հասակ, գանգուր մազերով :

Ափրիկէի արտադրութիւն:

— Պարոն Ցառաջը կրնա՞մ տեսնել, կ'ըսէ խնդումէրես:

— Չթամմեցէ՛ք:

Եւ կը նստիմ գրոյցի: (Ներողու - թի՛ւն, խօսակցութիւնը տեղի կ'ունե - նայ փրանսերէն, եւ ոչ թէ խափշիկ - ներու լեզուով, որեմն ալ կերպասով այդ պատրանքը կուտամ): Խափշիկ բարեկամս կ'ըսէ թէ եկած է ապահո - վագրելու Պարոն Ցառաջի կեանքը:

Այսպէս երբ իր այցելութեան նպա - տակը կը բացատրէ, հարկ կը տեսնեմ ճշդում մը կատարելու.

— Այստեղ ամէն աշխատաւոր «Պա - րոն Ցառաջ» է: Ոչ թէ անոր համար, որ հոս ընտանիք ենք թոռներով ու ծոռներով, այլ որովհետեւ փրանսա - ցին ամէնուն անուններն առանձին ա - ռանձին սորվելու տեղ՝ կարճ կը կա - պէ, Ցառաջ կը կոչէ մեզ: Արդ, Ցա - ռաջ թերթին անունն է, իմ անուս՝ Արազ...

Ցետոյ կեանքի գիներու մասին ընդհանուր ակնարկ մը կը նետեմ:

— Ամերիկացիին եւ Անգլիացիին կեանքը սուղ է անշուշտ: Գիտեմ որ անոնք կ'ապահովագրեն իրենց տունին կեանքն ալ: Ցրանսացիին կեանքն ալ բան մը կ'արժէ: Գերմա - նացիին, Իտալացիին, Պուլկարին, Ցոյնին, Ռումանացիին, բայց ձգենք այդ մարդոց կեանքերը, որ անպայ - ման բան մը կ'արժեն: Դժբախտաբար Հայոց կեանքը բան մըն ալ չարժեր, ատիկա Եւրոպացիները ըսին մեզի: Եթէ բան մը արժէինք, պրասի պէս ջարդել չէին տար մեզ: Կը զարմա - նամ, որ դուք եկեր էք մեր կեանքը ապահովագրելու: Հայու մը կեանքին ապահովագիրը...: Նոյնպես կուգայ ...: Իրականին մէջ՝ մենք ալ կարե - ւորութիւն չենք տար մեր կեանքին : Ցուրջի պէս բան մըն է Հայու կեանք ըսուածը, փորք տ'Իթալիի գաղթա - կայանին մէջ մէկ սու տուող չկայ Հայկազանց զարմին մնացորդաց կեանքերուն: Էհ, մենք ալ բան մը կ'արժէնինք ժամանակ մը: Հիմա իր - րու մսացու անգամ գնող չկայ: Ափ - սո՛ս: Պատերազմ որ ըլլա՞յ,— ինչ մը կը բարձրանայ մեր գիներ:

— ....

— Ո՛չ, ո՛չ, ես իրաւունք չու - նիմ ապահովագրելու իմ կեանքս, ի՞նչ կ'ըսես, եղբայր, Հայու կեանք է այս, ինծի չի պատկանիր նախ, գը - նա Նանսէենեան գրասենեակ, անոնց կը պատկանի մեր կեանքը, թող ա - պահովագրեն, եթէ կ'ուզեն՝ թող ձրի տան, մենք համաձայն ենք, մենք Հայ ենք, Մեծն Տիգրանի թոռներ...

— ....

— Խնդրե՛մ, ինչո՞ւ ապահովա - գրեմ, ինչո՞ւ, ես իմ կեանքս կը շը - ջորհեմ, իմ կեանքս կուտամ, օրի - նակ, ձեզի՝ այնքան յօժարութեամբ, որքան սիրահար մը հոգին կուտայ իր սիրականին, միեւնոյն բանն է, ա - նարժէք է, անարժէք, Եւրոպայի մէջ Հայու մը կեանքը արժէ՞ք ունենայ եւ ապահովագրուի՞, վրադ կը խնդան, բարեկամս, գնա՛ ապահովագրէ՛ Ֆիւրտին, Թուրքին, Ձինկեանէին կեանքը, Եւրոպացիին համար արժէք ունին անոնց կեանքերը...

— Հասկցա՞յ, բան խափշիկ երի - տասարդը, հասկցա՞յ հեգնութիւնը: Ես ալ կը պատկանիմ ցեղի մը, որ ձեր ցեղին չափ տառապած եւ անիրաւ - ուած է: Ես ալ արժէք մը չեմ ներկա - յացներ, ես ի՞նչ եմ, կիրքի մը պտուղը,— Ափրիկէի մեր բնաշխարհը շա - հագործելու եկած Եւրոպացի պաշտօ - նատար մը կնոջ պահանջ է զգացեր գիշեր մը, եւ իմ ցեղս փիզիքական ամէն տառապանք կրելէ վերջ՝ կրած է նաեւ անպատուութիւնը, անկողնոյ ծաղիկ դառնալով եկուորին: Այդպի - սի անկողնոյ պտուղ մըն եմ ես,.. հայրս չեմ ճանչնար, ճերմակ մըն էր ան: Մայրս՝ խափշիկ մը, գերուհի կամ սպասուհի: Հոս բերած են զիս, այս երկրին մէջ, դպրոց եմ ուսա - ցած, իրենց կրթութիւնը առած, բայց երբ պէտք չունին՝ կ'ըսեն.— Գնա՛ երկիրդ: Ո՞վ կրնայ հասկնալ հարստահարուած ժողովուրդներու հոգին,— անոնց կեանքը իրաւ է որ բան մը չարժեր, բայց եթէ հասկնա - յի՛ն անոնց հոգին:

Երիտասարդին աչքերը լեցան: Տառապանքի ընկեր մը գտայ իր մէջ: Սեղմեցի ձեռքը, եւ մենք հաղորդուե - ցանք կարծես իմ սկեպտիկ, հեգնա - սէր վարդապետութեանս մէջ:

Մեկնած ատեն բան, կարծես վր - րէժխնդրութեամբ:

— Օր կուգայ, որ մեր կեանքն ալ կ'արժէ եւ թերեւս աւելի արժէ:

ԱՐԱԶ

ՑԱՌԱՋԻ ՏՈՒՆԸ

(ԱԼԵՓԱԿԱՆ ՏՈՊԱՐԱՆ)

13րդ ցանկ

Մարսէյլի կեդր. Ցանձնախումբին միջոցաւ.—

Գ. Պերիկեան	500
Խ. Թէլեան	300
Ց. Խ.	300
Տոքթ. Սիվրիհիսարլեան	200
Ց. Պապիկեան	200
Տոքթ. Օճնիկ Փափազեան	200
Գ. Հացագործեան	200
Գ. Պաղտասարեան	200
Պարսամ Ցակոբեան	200
Ց. Նշանեան	100
Ց. Էմմէճեան	100
Ս. Տիրատուրեան	100
Գումար՝	2600
Տիկին Զ. Գ. Մարսէյլ	100
Ցակոբ Միհայէլեան, Կրետէ	100
Լեւոն Իլպիզեան, Սէբիճի (Ալժերիա)	100
Արամ Տիւզեան, Պաղտատ	50
Գումար՝	2950
Սեպտ. 25ի գումարը՝	8735
Ընդհ. գումար՝	11,685

ՄԵՐ ՆՈՐ ԹԵՐԹՕՆՆԵՐԸ

Այսօր, Գ. էջին մէջ կը հրատարակենք չափազանց հետաքրքրական թեր - թօն մը.

"ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԼՐՏԵՍՆԵՐԸ,,

Անգլիոյ Ապահովութեան Տեսչութեան վարիչներէն մէկն է հեղինակը, որուն գրչին տակ դէպքերը իրարու կը յաջորդեն իրրեւ կենդանի շարժա - նկար մը:

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՐ ՈՒՐԻՇ ԿԱՐՃ ԹԵՐԹՕՆ ՄԸ

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏԻ ԿԵԱՆՔԷՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ Ս. ՏԱՐՈՆՅԱՆ

— ո —

«Հայրենիքի մի անշունչ կտորն էլ թանկ է մեզ համար, որովհետև նրա հետ կապված են մեր նախնիների ոսկորները, մեր սրբավայրերը, մեր պատմությունը, մեր հպարտությունը, մեր ապրած ու ստեղծած գեղեցկությունը, մեր ամենալավ հիշողությունները, մեր ամենաանկեղծ արցունքները, մեր ամենաանմեղ ժպիտները, մեր ամենաանկեղծ սերերը, մեր ամենաանկեղծ հավատը, մեր ամենաանկեղծ հույսերը, մեր ամենաանկեղծ երազանքները, մեր ամենաանկեղծ ապագան»։

Ս. ՏԱՐՈՆՅԱՆ

Ես միշտ հիացել եմ այս խոսքերով, որովհետև դրանք ինձ համար ամենից ավելի հասկանալի են հավատի մասին։ Ես միշտ ուզում եմ հասկանալ, թե ինչ է հավատը, և ինչպես կարելի է ձեռք բերել հավատ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՍՏԵՑԻՔԸ

Ընդունելի համարելով Ս. Ղազարյանի առաջարկությունը՝ ընդունել նրան իր խնդրագրի համաձայն։

Ընդունելի համարելով Ա

կամ ընկերական ընկերոջ մը գրածը թէ մենք Ֆրանսայի մէջ վախնալիք բան չունինք ոչ պինուորական ըմբոստութենէ մը, ոչ ալ խռովարարներու մէկ հարուածէն»: Ցետոյ քննադատեց Ֆրանքին արժեզրկումը եւ եզրակացուց «մխութիւն, միութիւն» աղաղակելով:

Օsար դրամներու վիճակը

Չեխական կառավարութիւնը որոշեց մօտաւորապէս 16 ու հարիւր կոտրել քուրոնին արժէքը: Տնտեսական եւ էմմտական նախաբարնները ազդ· ղրա - մասան հետ խորհրդակցելով պիտի պակասեցնէն քուրոնին ոսկի պարունակու - թիւնը: Ներքին նախարարութիւնը յայն լիազօրութիւններ պիտի սաանայ, գի - ներու անարդար բարձրացումը արգիլելու համար:

*** Աւստրիոյ էմմտական նախարարը յայտարարեց թէ չիլինին արժէքը անփոփոխ պիտի մնայ:

Լեհական կառավարութիւնն ալ որոշեց անփոփոխ պահել զլոթիին գինը:

15—20 սանթարիր զեղչ մոխասուրիներու

Պաշտօնաթերթերը կարեւոր հրամանագիր մը հրատարակեց, որուն համա - ձայն 15—20 ու հարիւր զեղչ մը կը կատարուի սահմանափակումէ ազատ ապրանքներու համար: Կը զեղչուին կարգ մը անհրաժեշտ նիւթերու եւ մաս - նաւորապէս քարիւղի տուրքերը: Բաժնեգուցակի ենթակայ 750 ապրանքներէ 105ը ազատ կը ձգուին: Կը չնչուին կամ կը զեղչուին այն յաւելուածական տուրքերը որ հաստատուած էին իբրեւ հատուցում, պժան ղրամ ունեցող եր - կիրներէ եղած ապրանքներու համար: Ցանձնաժողով մը պիտի կազմուի սա - կացոյցները եւ բաժնեգուցակները վերաքննելու համար, իբրեւ հետեւանք Ֆրանքի արժեզրկման: Օրէնքը գործադրելի է յառաջիկայ չարաթ օրէն: Ու - րիշ յանձնաժողով մը պիտի զոսկ գիներու բարձրացումը, միջոցներ առա - ջարկելով:

Այս առթիւ կառավարութիւնը յայտարարութիւն մը հրատարակեց, որով կը յայտնէ թէ վճռականօրէն պիտի պայքարի գիներու բարձրացման դէմ եւ ժողովուրդը կը զգուշացնէ չհաղթանակներու դէմ: Ցայտարարութիւնը պատերը փակցուած է ամբողջ երկրին մէջ: Միեւնոյն առեն հետագրով հրահանգներ տրուեցան նահանգապետներուն եւ քաղաքապետներուն, որպէսզի առանց տր - կարանալու զոսկեն գիներու չարաչահութիւնները:

*** Մաքսատուրքերը զեղչուած նիւթերուն մէջ կը գտնուին սուրճը, թէյը, պղպեղը եւ վառելանիւթը (էսանս):

ԱՊՍՏԱՄԲՆԵՐՈՒ ԳՐՈՀԸ ԴԷՊ ՄԱՏԻՍ

Կոխնեերը ուժգնօրէն կը չարունակուին Սպանիոյ մէջ, մասնաւորապէս Մատրիտի դրաւման համար: Վերջին լուրերու համաձայն, Զօր· Ֆրանքօ վճ - ռական գրոհի մը կը պատրաստուի: «Մինչեւ մէկ ամիս սպանիական կարմիր ոսկի զրօչը պիտի ծածանի մայրաքաղաքին վրայ», կ'ապդարարէ Զօր· Վարէ - լա, Ալքազարի յաղթականը: Ուրիշ զօրամասեր կը քալեն Պիլպաոյի վրայ: Ապատամբ օդանաւերը ռումբեր տեղացուցին Մատրիտի վրայ, քանդելով ռումբի գինագործարանը: Մատրիտի կառավարութիւնը հրամանագիր մը հրատարակելով, կարգապահութիւն պատուիրեց բանակին: Ուրիշ հրամանա - գրով մը արգիլուեցաւ ոսկիի եւ արծաթի արտածումը: Քազաքացիները պար - տաւոր են մինչ եօթը օր կառավարութեան յանձնել իրենց ունեցած ոսկին, գրամ թէ ձոյլ, ինչպէս եւ օտար գրամները:

Զօր· Մոլա 2000 Մարոքցիներ զրկեց, ապատելու համար Օվիէտօ քաղա - քին պահակազօրքը, 2500 հոգի, որոնք պաշարուած են 12 չարաթէ ի վեր: Բծաւոր ժանտահարնդը եւ անօթութիւնը աւերներ կը գործեն քաղաքին մէջ: Հրամանատարը օդնութիւն խնդրած է սոխզդարար: Զինուորներէն զատ, 40,000 բնակիչներ կը գտնուին քաղաքին մէջ, օրական մէկ անգամ ճաշելով:

Հիթլէրի մոր ճառը եւ տասնաբանեայ մը

Կիրակի օր ամբողջ Գերմանիոյ մէջ տօնուեցաւ «Հունձքի օրը»: Պերլինի տօնակատարութեան ներկայ էր Հիթլէր, որ կարեւոր ճառ մը խօսեցաւ, չօ - շափելով նաեւ օրուան խնդիրները: Այս առթիւ յայտարարեց թէ գերմանա - կան ղրամը արժեզրկման չպիտի ենթարկուի: Ցետոյ չարունակեց.

— « Եւրոպան եգերական ճակատագիր մը կ'անցընէ այսօր: Եթէ ան ընկղմի համաչխարհաբութեան մէջ, ոչ ոք պիտի օգնէ մեզի. կա՛մ մենք առան - ձին պիտի յաղթենք, եւ կամ պիտի քչուինք ադէպէն: Ինչ որ կ'անցնի կը զատ - նայ Սպանիոյ մէջ, անմոռանալի պիտի բլլար Գերմանիոյ մէջ: Մեզ չի հե - տաքրքրեր թէ ինչ կ'ընէ աշխարհի մնացեալ մասը: Միւս երկիրները կրնան երեք չարաթը անգամ մը աւելցնել աշխատավարձը, արժեզրկել դրամը, բարձրացնել գիները եւ այսպէս չարունակ: Մենք հաստատուն կը մնանք: Մե - զի համար, կեանքը կախում չունի սեզանաւորական չահագիտութիւններէն, այլ աշխատանքէն: Ահա թէ ինչո՛ւ մենք կ'աշխատինք քազաքին ինչպէս գաշ - տերուն մէջ: Մէկ տարիէն, հարիւրաւոր գործարաններ նախանիթ պիտի ճա - րեն մեզի եւ ինչպէս կրանիթեայ ժայռ մը, մենք պիտի ապրինք կարմիր ալե - բեղն տակ խորասուզուած աշխարհի մը մէջ»:

Այս առթիւ տասնաբանեայ մը խմբագրուած էր, ի պէտս տանտիրուհի - ներու, որպէսզի խնայողութեամբ գործածեն պաշարը: Ցրդ յօդուածը կ'ըսէ.

— « Մէկը սառնարանէն կ'անցնի. հետեւաբար խնամէ խոհանոցդ եւ խելացու - թեամբ պատրաստէ զայն »:

Տօնակատարութեան առթիւ կը սատանէին նորագոյն օդանաւեր, ժամը 500 քիլոմէթր արագութեամբ: Ուրիշ ռազմախաղեր ալ կատարուեցան, մեծ ապատրութիւն գործելով:

ՁԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՄԸ ՏՐԱՒԱՒ

ԱՆԳԼԻՈՑ ԱՇԽԱՏԱՒՈՐԱԿԱՆ կուսակցութեան տարեկան համագումարը բացուեցաւ երէկ, երկուշաբթի, Խորհրդարկի մէջ: Օրակարգին վրայ կը գըտ - նուի ժողովրդական ճակատ կազմելու եւ համագործակցութիւնը ներս առնելու առաջարկ մը, որ անկասկած պիտի մերժուի ջանջանիչ մեծամաս - նութեամբ: Ամէնէն կարեւոր խնդիրը կը կազմէ միջազգային կացութիւնը (Սպանիա, Ազգերու Դաշնակցութիւն, ընդհանուր զինաթափութիւն եւն.):

ԹՈՒՐՔԻԱ. վեց նոր առեւտրական չոգենաւեր պիտի յանձնարարէ գեր - մանական տուներու, կ'ըսէն Պերլինի թերթերը: Քանի մը չաբաթ առաջ վեց նաւեր ապսպրուեցան Համպուրկի նաւագործարաններուն:

ՎԵՐՍԱՅԻ զղեակին ձախ թեւէն հրդեհ ծագեցաւ չաբաթ կէս գիչերին: Փարիզէն ալ 10 — 12 կտոր հրչէջներ օգնութեան հասան, բայց կրակը մարած էր արդէն, առանց կարեւոր վնաս պատճառելու:

ՍՐՃԱՐԱՆՆԵՐՈՒ, ճաչարաններու եւ պանդոկներու գործադուլը վերջա - ցաւ տեւելով միայն 24 ժամ, եւ կիրակի առտու բոլորն ալ բացուեցան: Այս առթիւ ալ չատ մը հաստատութիւններ զրաւուած էին, բայց ոստիկանութիւնը միջամտելով դուրս հանեց: 16 հոգինոց պատուիրակութիւն մը ընտրուեցաւ երկու կողմէն, իրաւարարութեամբ լուծելու համար աչխատավարձի եւ վը - ճարովի արձակուրդի վէճերը: Շաբաթ օր 50,000 սպասաւորներ, խոհարար - ներ, պանդոկի ծառաներ եւ դռնապաններ ամէն աչխատանք դադրեցնելով եւ սրճարաններն ու ճաչարանները փակելով անհամ վիճակ մը ստեղծեր էին: Մա - ոյողները աչխատավարձի յաւելումէ եւ վճարովի արձակուրդէ զատ, կը պահանջեն ջնջել պարգեւները եւ 52 ֆրանքի հիմնական օրավարձ մը նչանա - կել, մէկը բլլալով 12 ֆրանք՝ ճաչի համար:

ՄԱՀՈՒԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԵՑԱՒ երիտասարդ մը, Կապրիէլ Սօքլէ, ամ - բաստանուած ըլլալով թէ 1935 ապրիլ 19ին առեւանգած, պղծած եւ ապանձած է 4 տարեկան աղջիկ մը, Նիքօլ Մարէսքօ: Սպառնալից բազմութիւն մը խրս - նուած էր Շօմոնի դատարանին առջեւ եւ ոստիկանութիւնը հազիւ կրցաւ զըս - պել խուժումը: Ամբաստանեալը պնդեց թէ անմեղ է: Երբ նախագահը կար - դաց վերջին խօսքերը,— « կը զատարարուի գլխատման, Շօմոնի հրապա - րակին վրայ», յանկարծ ինքնիրմէ ելաւ եւ պոռաց.—«Անզգամներ, աւազակ - ներ, ես ընկերութեան զոհն եմ եւ դուք, Պ. դատախազ, թշուառական մը»: Իսկ ամբոխը կը սպառնար բզքտել մահապարտը:

ԳԵՐՄԱՆԻՈՑ ԱՌԱՋԻՆ ՄԵՆ ԶՐԱՀԱՒՈՐԸ, «Շարլհոսթ», որ 26,000 Թոն տարողութիւն ունի, Ծով իջեցուցին հոկտեմբեր 3ին, նախագահութեամբ Հիթլէրի: Վերոյիչեալ դաշնագրով գերմանական նոր մարտանաւերուն տարո - դութիւնը չէր կրնար անցնիլ 10,000 Թոնը:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՀԱՑ ՍԱՓԻՐԻՉՆԵՐՈՒ միութեան բա - ցառիկ ցուցադրութիւնը՝ *démonstration*, տեղի պիտի ունենայ 8 շաբտ. ին Ինգ - շաչաթի իրիկուն ժամը 8.30ին, Միու - թեան շքեղ սրահներուն մէջ, 7 *Rue Bernardin, Paris* (5)ի բոլոր անդամ եւ ոչ-անդամ հայրենակիցներէն կը խնդրուի օգտուիլ այս առիթէն:

ՎԱՐԶՈՒ ԵՆ *յարկաբաժին - ներ, ամէն յարմարութիւններով* (tout confort), *մէկ մեծ սենեակ, խոհանոց, 1300-1750 ֆր. (չարժ եւ չօֆաժ մէջը ըլլալով)· Դիմել՝ 13* rue de la Vistule, *մէթրօ* Maison Blanche·

«ԳՈՑՄԱՐՏ» ՕՐԱՑՈՑՑ, Ը· ՏԱՐԻ 1937

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱՐՍԷՅԼԻ Հ. Յ. Դ. ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

կը ծանուի՝ Մարսէյլ Միութեանս Գրադարան. Ընթերցարան 5 Rue de l'Eclipse, *Միութեանս բոլոր անգամներուն եւ հետեւեալ հաս - ըէներուն քով.—*

Մարսէյլ, Ն. *Կակոսեան*, 49 Rue Nationale
Փարիզ, *Հրանտ Սամուէլ*, 51 Rue Mr. le Prince (6)
Տեսին եւ Լիոն, *Վ. Հիւսեան*, 3 Rue Tellier, Décines, Isère
Վալանս, *Զ. Գալուստեան*, 58 Rue Bouffier, Valence, Drôme
Սէնթ'Էթիէն, *Վ. Խրիմեան*, 34 Rue des Frères Chape. St. Etienne
Վիէն, *Ն. Ղազիկեան*, 124 Rue Lafayette, Vienne, Isère
Նիս, *Գ. Շէհրէթեան*, 55 Bd· de la Madeleine, Nice. A. M.
Կարսաճ, *Լ. Գայաճանեկան*, Puits Bivert
Ալժէրի, *Գ. Արզումանեան*, Hôtel Atlas, Blida, Algérie
Պորտօ, *Ա. Քէնտէրեան*, Rue Ed. Vaillant, Cenon, Gironde
Պէյրութ, *Ս. Ազգասէրեան գրատուն*, Bab Yacoub, Beyrouth
Ապատան, *Ա. Աբգարեան*, P. O. Box 22, Abadan, Iran
Շամ, *Ա. Լօշխաճեան*, Hart· Djanvar, 32 Bay Charky, Damas
Պանտատ, *Ա. Սիրունեան*
Պասրա, *Ռսկ· Ծնունդեան*, Seef st. Basrah, Irak
Պէյրութ, *Ա. Չօրխմեան*, Photo Mourad, Rue Gouraud
Փօճ տ'Օպնա, *Ա. Կարապետեան*, Chez M· Chaberte
Շարվիէօ, *Ստ. Թիւրքմէնեան*, B. H· 84 Charvieu
Հալէպ, *Ս. Քրքէսէլեան*, 22 Rue Boustan Kulab, Alep, Syrie
Ամերիկա, *Գ. Պալեան*, 119 P. O. Box, Milford, Mass·
Լա Սիօթա, *Ս. Սարգիսեան*, 2 Rue Foces, La Ciotat
Թեհրան, Journal «Alik» Téhéaran· Ave· Postkhaneh
Թուլուզ, *Զ. Մարկոսեան*, 36 Pl Lucas, Toulouse, *H. G.*
Աբթ, *Թ. Պաղտասարեան*, 11 Pl. des 4 Poulies, Apt Vaucluse
Ռոման, *Ս. Պիլալի*, 5 Rue Puy, Romans
Բօնքէ, *Մատոյեան*, Usines Berles Carrelage
Ժենս, *Ղ. Թորոսեան*: Բիւժ Սու Ալժան, *Մանասէլեան*: Կրաս, Գրիգորեան Aix, *Գ. Աչեմեան*, 3 Rue Emerie-David·

Նաեւ Մարսէյլի եւ արուարձաններու Դաշնակցական Ակումբները եւ բոլոր Դաշնակցական Թերթերու խմբագրատուները:

Մնողներ,

ԳՆԵՑԷՔ «ՄԱՍԻՍ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐՔՈՑԿՆԵՐԸՆ

Պատկերազարդ, ընտիր թուղթ եւ օգտակար բովանդակութիւն

Գինը՝ *Ցատը* Ֆրանս. Ֆր. *1,25* Դիմել «ՎԷմ»ի վարչութեան

ԿԱՐՈՒԶԵԻԻ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Հոկտեմբեր 5ին բացուած է կարուձեւի դասընթացք մը, ամէն օր, առաւօտեան մինչեւ կէսօր, նոյնիսկ կիրակի եւ գիշերները աշխատու - ներու դիւրութիւն: Դիմողները երեք ամսուան միջոցին պիտի սորվին ձեւել, կտրել նոր մեթոտով: Փափաքողները կրնան երեք ամսուան յաւելումով: Մանրամասնութեանց համար դիմել՝ ՏԻԿԻՆ ԳՈՀԱՐ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ, 12 Rue Saint-Sulpice, Métro Odéon, *4րդ յարկ·*

ԵՂԻՇԷ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

ՁԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

AMERICAIN LLOYD — **ORIENT LLOYD**
48 rue de la République — **7 rue Auber, Paris**
Մարսէյլ, Tél. C. 47-22 եւ C. 74-51 Tél. Opéra 67-77 67-78

Նաւային բոլոր ընկերութիւններու ներկայացուցիչ·

Ցումակներ՝ ամէն տեղի համար, Հայ ճամբորդներու համար ժամնաւոր գին: Ունինք թղթակիցներ աչխարհի ամէն կողմը·

ՎԱՏԱՀԵԼԻ ՏՈՒՆ·

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ց· Քիւրքճեան եւ Ն. Թագուրեան ընտանիքները իրենց խորին շնոր - հակալութիւնը կը յայտնեն բոլոր անոնց· որոնք ցաւակցութիւն յայտ - նեցին ԱՅՐԻ ՏԻԿ. ԵԼՄՈՆԷ ՔԻՒՐՔՃԵԱՆԻ դառնադէտ մահուան առթիւ, որ տեղի ունեցաւ Սեպտ. 29ին·

ԳԱՑԷՔ ՏԵՍԷՔ

CIGALE CINÉMA

60 Avenue de Saxe·LYON·

ԳԱՑԷՔ ՏԵՍԷՔ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Cinéma REXY

Rue Cours Lafayette, angle Garibaldi·

Le Gérant: H. STEPHAN
Imprimerie A. DER (AGOPIAN)
17, Rue Damesme, PARIS (13)

ՉԱՐԹՕՆՔ

(ՎԷՊ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵԱՆՔԷ)

Տոքթոր Ուայթը, կինը եւ Վահէն, ճախակոդմեան դասը, վարդապետնե - րու մօտ տեղ գրաւեցին մասնաւոր կարգադրութեամբ:

Դարերու ծանրութենէն խունացած բարձր գմբէթի տակ մեղմօրէն կը հնչէին չարականներու կլկլացող երկար եղեւէջները: Հարիւրաւոր մոմեր զոզ - զոլալով կը լուսաւորէին տաճարի ստ - ւերոտ խաւարը, ու խունկի եւ կնդ - րուկի կապոյտ ծուխը երկարաւուն ո - րթքներ կազմած կը լողար Մայր Տա - ճարի նեղ ու երկայն պատուհաննե - րէն ներս ինկող արեւի լոյսէ սիւներն մէջ:

Փոխն ի փոխ տիրացուներու եր - գեցողութիւնը եւ վարդապետներու աղօթքները վսեմ ներդաշնակու - թեամբ մը կը յայտնէին իրարու:

Ահա, խարտեաշ կեպիսկոպոսի առաջնորդութեամբ Գարեգինը չա - պիկ հագած, դասէն ծնրադիր կ'րս - կսի բարձրանալ դէպի խորանը: Քա - նի մը քայլի վրայ, աղօթք մը կը կարդացուի ու ասիճան կը տրուի անոր:

Մէհմէտ բէկի մօտ գտնուող կինե - րու մէջ փսփսուք մը ծայր կ'առնէ:

— Վայ աչքերս քոռանան, կ'ըսէր քովը կեցող կնոջ մը Ալի բէկի մայ - րը,— մեր տղան ձեռքէ գնացեր է, մեռելի գոյն ունի ...

Գլուխը հանած, աչքերը գետին Գարեգինը բոլորովին զունաթափ, կը հետեւէր խարտեաշ կին, մինչեւ որ խորանը հասած, ստացաւ սարկաւա - գի վեցերորդ ասիճան: Եկեղեցա - կան կարճ արարողութենէ վերջ բաղ - մութիւնը դուրս թափեցաւ եկեղե - ցիէն: Գէորգը, Քաչալը եւ Եւգինէն դիմեցին դէպի էջմիածնի լիճը:

Առտուան կողքին զարնուած էր Մէհմէտ բէկի ընդարձակ վրանը: Ծերունի ցեղապետը կարծես թէ Գարեգինի հարսպատ ծնողքը լինէր: Վրանի վերի գլուխը բացած, եկող - գացող հիւրերը կը հիւրասիրէր առանիրով մը անկեղծ սրտացու - թեամբ: Ծառաներն ու երիտասարդ կիները գունաւոր սփոցով մը վուած կանաչի վրայ, երեկոյեան ընթրիքի սեղանը կը չակէին քառասուն հոգիի համար: Քարէ օճախներու վրայ եր - կու մեծ կաթսաներու մէջ կ'եփէր այդ օրուան մատաղը:

Ալի բէկ մօտեցող Գէորգն ու ըն - կերները սեղանի աճապարեց դիմա - ւորել զանոնք ու առաջնորդեց իր հօր, Մէհմէտի բէկի մօտ:

Շատ ուշ ժամանակ, Մէհմէտ բէկի վրանի չուրջը դեռ կը տիրէր այն քիչ մը ապրկոտ կենդանութիւնը, որ յա - տուկ է ուխտատեղիներու:

Երբ Տոքթ· Ուայթ կնոջը եւ Վահէի հետ դուրս ելաւ Մայր Տաճարէն, ուր հիացմունքով դիտած էր կամարներու արեւելեան նաչխերը, հիւրընկալ վարդապետի առաջնորդութեամբ գա - ցին մատենադարանը տեսնելու: Անդին հարստութիւն մը դիզուած էր այդ չէնքին մէջ: Բազմաթիւ զրչագիր աւետարաններ իններորդ գարէն ըս - կսած դարակներու մէջ խն ամբողջ չարուած էին:

Մատենադարանէն դուրս գալով օ - տար հիւրերը առաջնորդուեցան վե - հարան, ուր Հայրապետը սիրալիր ընդունելութիւն մը ընելով ընթրիքի պահից գանոնք: Երբ ընթրիքէ վերջ ընդունելութեան սրահը քաչուեցան, Վեհափառը չուրջիններէն դուրս ճամ - բելով ինք առանձին մնաց հիւրերուն հետ: Թէ ի՞նչ խօսեցան, արդեօք Ուայթը իր անգլիացիութիւնը պա - հե՞ց,— յայտնի չէ: Երբ կէս գիչերի մօտ դուրս եկաւ վեհարանէն, Ուայ - թի անգլիացի նորահարսը, աքանչա - ցած ժողովրդական մեծ Հայրապետի նահապետական պարզութենէն, լուռ ամուսնին·

— Ազանչելի դէմք մը ունի Նորին Սրբութիւնը, հաղիւ թէ կեանքիս մէջ տեսած լինեմ այդպիսի տպաւորիչ պատկառելի մարդ մը, որ այնքան հարազատօրէն վերակենդանացնէր աստուածաչնչական նահապետները:

Երեքը միասին դուրս ելան վանքի պարիսպէն դէպի վանքի նոր հիւրա - նոցը· Լճի առուի գլխուն նստած ատ - ուեր մը չտապով բարձրացաւ, ու մօտենալով Վահէին, տոմսակ մը սեղմեց անոր ափին մէջ ու անմիջա - պէս անյայտացաւ:

Երբ սենեակը բարձրացան, Վահէն ափին ճմռթկուած տոմսակը մօտե - ցնելով ճրագին հետեւեալ տողերը կարդաց·

« Զաղջ, գաւառապետը սասարկ հետաքրքրուած է օտարական Անգ - լիացիի ներկայութեամբ: Այդ մասին հեռագրած է Թիֆլիս, հրահանգ խնդրելով: Լրտես մը նչանակուած է անոր քայլերուն հետեւելու համար: Կրնան քեզմով ալ հետաքրքրուիլ: Ծոհեմութիւն է հեռանալը: Վերա - դարձիդ հանդիպէ մեզ:

ԳԷՈՐԳ

Վահէն տոմսակի բովանդակութիւ - նը յայտնեց Ուայթին, որ բոլորովին անտարբեր լսելէ վերջ, ուսերը թօթ - ուեց: Անհանգստանալու մտնաւոր պատճառ մը չկար, յաջորդ առտու իսկ երեւան հանդիպելով պիտի անց - նէր Պարսկաստան: Վահէն այդ գի - շեր չմնաց վանքի հիւրանոցը: Բարի ճանապարհ մաղթելով Ուայթին եւ տիկնոջը, դուրս եկաւ հիւրանոցէն ու չիտակ գնաց Սարգիս Աբօր խնա - մոնց տունը, ուր իջած էին իր ըն - կերները:

Ցաջորդ առտու պատարագի ժա - մանակ մեծ չուքով կատարուեցաւ Գարեգինն սարկաւագի օծման հանդէ - սը: Երբ Մայր խորանի առջեւ կանգ - նած, Գարեգինի ճակատն ու ձեռք - ները միւռոնով օծեց եպիսկոպոսը, դառնալով Գարեգին արեղային ը - սաւ·

—Տէր Գարեգին արեղայ, օրհնէ ժողովուրդը:

Հազիւ ոտքի մնալու կարողութիւն մնացեր էր երիտասարդ արեղային վրայ, որ խիստ ժամապահութեամբ ի - եւ ապօթելով դէպի ժողովուրդը, իւ - րարու բերած ձեռքերը բարձրացուց ու խաչակնքեց ժողովուրդը:

— Ցանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգ - ւոյն Սրբոյ, ամէն, — ու արցունքի լոյն Սրբոյ, ամէն, — ու արցունքի երկու խոշոր կաթիլներ վար սահեցան փոսացած աչքերէն:

(Շար·) ՄԱԼԽԱՍ

ՓՆՏՈՒԵՑՔ ԵՒ ԿԱՐԴԱՑԷՔ *երկիծաթերթ՝* «ՄԵՂՈՒ» *փարիզի եւ շրջանի Յառաջի ղ· ուխ·*
Պ· ՈՒԽՏԻՒՆԷ:

ՀԱՐԱՁ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

EE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)
Téléphone : Glacière 15 - 70
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԶՈՐԵՔՇԱԹԻ
7
ՀՈԿՏԵՄԲԵՐ
MERCREDI
7 OCTOBRE
1936

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,— ՏԱՐԵԿԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ ԵՒԱՄՍԵԱՅ

Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա	250 »	130 ֆրանք	—
Ամերիկա եւ ուրիշ երկիրներ	200 »	100 ֆրանք	—

ԺԲ ՏԱՐԻ — 12e Année No. 3237

ԽՄԲԱԳԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՆԵՐՔԻՆ ԽԼՐՏՈՒՄՆԵՐԸ

—o—

Լիճն Պլումի կառավարութիւնը քանի յառաջ կը տանի ժողովրդական ճակատի ծրագրին գործադրութիւնը, այնքան կ'աճին դժուարութիւններն ու ընդհարումները:

Անցուդարձ կը չափազանցեն ազակոդմեան թերթերը, անդամ մանելի ապէտ մը գուշակելով, կամ «քաղաքացիական պատերազմ մի անգունդին ափը հասած» համարելով այս երկիրը, ինչպէս կ'ողբայ Կիւսթաւ Էվէ, նախկին անիչխանականը: Կուսակցական պայքարը եւ ներքին խլրտումները սաստկացած ըլլալով, հասկնալի են այս կարդի չափազանցութիւնները:

Հասկնալի է, նաեւ, երբ կարգ մը թերթեր ամէն օր դահլիճին հրաժարումը կը պահանջեն, իբրեւ պատասխանատուն բոլոր չարիքներուն, տեսանելի թէ անտեսանելի:

Այս կրքոտ արտայայտութեանց մաս կը կազմէ, նաեւ, հրատարակութիւնը հակահրէական կոչերու, թռուցիկներու եւ գրքոյկներու, ինչպէս, օրինակ, «Հրեաները իշխանութեան գլուխ», որ կը ծախուի մեծ հրապարակներու վրայ, բազմութիւն մը հաւաքելով ցրուիչին չուրջը:

Ժամանակի նշաններ են այս բոլորը, ինքնաբեր կամ սարքովի հակազդեցութիւններ, որ կուգան ու կ'անցնին, առանց խոր հետքեր ձգելու:

Անբնական չէ, վերջապէս, աշխուժացումը «Ազգային Ճրան»ի կազմակերպութեան, որ միապետութեան վերահաստատման մէջ կը տեսնէ կացութեան դարմանը: «Թագաւորը միայն կրնայ փրկել»...

Եւ սակայն, կարելի չէ ժխտել կացութեան լրջութիւնը եւ փափկութիւնը:

Միայն վերջին չարթուան դէպքերը խորապէս արտայայտիչ են, այս տեսակէտէն:

«Ֆրանսական Ընկերային կուսակցութիւնը», որ լուծուեցաւ իբրեւ «Հրեղէն Խաչ», եւ որ սակայն կը պահէ իր չարքերն ու կազմակերպական մեթոտները, ժողով մը սարքած էր ուրբաթ գիշերուան համար: Ընկերվարականներն ու համակիրներն ալ հակացոյց մը սարքեցին, իբրեւ պատասխան: Կառավարութիւնը հարկադրուեցաւ արգիլել երկուքն ալ:

Կիրակի օր, համակիրները ժողով մը սարքեցին Փարք տէ Փրէնսի մէջ, եւ այս անգամ գնդ. տը լա Ռոքի կուսակիցները հակացոյց մը կազմակերպեցին, ոչ միայն ժողովը խափանելու, այլ եւ իրենց ուժը ցուցադրելու համար: (Իրենց հաւատարիքներուն համաձայն, մէկ միլիոնէն աւելի են, մեծ մասով՝ նախկին ռազմիկներ եւ երիտասարդներ):

Կառավարութիւնը այս անգամ արձանեց համակիրներուն ժողովը, եւ պատ քաշեց Ընկերային կուսակցութեան առջեւ, չարժման մէջ դնելով 20,000 ոստիկան եւ զինուոր:

— Ի՞նչու այս խորութիւնը, հարցուցին աչքերը:

Եւ ներքին նախարարը պատասխանեց թէ աւելի դիւրին էր բարեկարգութիւնը պահպանել, ցերեկը, Փարք տէ Փրէնսի մէջ, քան գիշերը՝ ամեհնային մարզարանին մէջ:

Անկախ՝ այս բացատրութենէն, իրողութիւն է որ կառավարութիւնը լրջօրէն կը կասկածի գնդ. տը լա Ռոքի կազմակերպութեան մեթոտներէն, ինչպէս հաստատեց պաշտօնական զեկոյցով մը: Եւ արդէն դատական քննութիւն բացուած է, երկու ամբաստանութիւններով,— 1. Փորձ՝ լուծուած կուսակցութիւն մը վերականգնելու.— 2. Փորձ՝ մարտական համախմբում կատարելու (կ'ակնարկէ կիրակի օրուան ցոյցին):

Զախակողմեան հոսանքները եւ մանաւանդ ամբաստանեալ վարներն ու ընկերվարականները բնականաբար ուժ կուտան կառավարութեան, հրապարակաւ պահանջելով ոչ միայն նորա կազմ կուսակցութեան լուծումը, այլեւ գնդապետին բանտարկութիւնը: Զանգուածներն ալ կը ձայնակցին առաջնորդներուն, աղաղակելով բոլոր ժողովներուն մէջ,— «Դէպի կառափնատ՝ տը լա Ռոքը» (ինչպէս եւ Տօրիօն):

Այս կանչերը մոլեգնութեան հասած էին կիրակի օր, երբ հակացոյց մը սարքեցին, իբրեւ պատասխան: Կառավարութիւնը մանաւանդ կը չափուէին, ձակատին պահպանումը: Այլապէս, դժուար թէ կարենայ դիմանալ:

Այս տեսակէտէն ալ ուշագրաւ երեւոյթներ կը ներկայացնէ Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԻՏԱԼԻԱՆ ԱԼ ԿՈՏՐԵՑ ԴՐԱՄԻՆ ԳԻՆԸ

—o—

Զորս բացատիկ օրեցիներ

Իտալական կառավարութիւնը երկուշաբթի օր նիստ գումարելով, միաձայնութեամբ ընդունեց Մուսոլինիի առաջարկը՝ դրամի արժեզրկման մասին: Տրուած որոշման համաձայն, լիրային գինը պիտի կոտրի մօտ 41 առ հարիւր համեմատութեամբ (անգլիականը՝ 90 լիր, տոլարը՝ 19): Կառավարութիւնը իրաւունք ունի նոր արժեզրկում մը կատարելու յետագային, մին չեւ 10 առ հարիւր համեմատութեամբ: Դրամին ոսկի պարունակութիւնը պիտի ըլլայ 4 կրամ 677 (100 լիրի համար), փոխանակ 7 կրամ 919ի:

Դրամին արժեզրկման օրինագծին հետ, հրամանագիր մը հրատարակուեցաւ, փոքրաքանակ վաճառման գիներու մասին, որոնք չպիտի կրնան բարձրանալ մինչեւ երկու տարի, առանց մասնաւոր որոշման: Հրամանագիրը անփոփոխ կը պահէ նաեւ չէնքի վարձքերը, կալի, էլեկտրականութեան, փոխադրութեանց եւն. գիները: Երկրորդ հրամանագիր մը կը փոփոխէ մաքսային սակացոյցները, դիւրացնելու համար ներածումները: Երրորդ հրամանագիր մը հարիւրին 5 նոր փոխառութիւն մը կը հաստատէ եւ բացառիկ տուրք մը՝ անշարժ կալուածներու վրայ: Վերջապէս չորրորդ հրամանագիր մը արտակարգ տուրք մը կը հաստատէ ընկերութեանց վճարած չահաբաժիններուն վրայ:

Նախարարական խորհուրդը որոշեց նաեւ ջնջել արժէքի վրայ (առ վաղորէմ) տուրքը, որուն ենթակայ էր մինչեւ հիմա ներածեալ ապրանքներու մեծագոյն մասը:

**** Իտալական դրամին արժեզրկումով կը վերահաստատուի 1927ի համեմատութիւնը, երբ Անգլիա եւ Մ. Նահանգները դեռ չէին կոտրած իրենց դրամներուն արժէքը եւ սթերլինը կ'արժէր 92.21 լիրա, տոլարը՝ 19,21: Այս համեմատութիւնը ընդունեցաւ, երբ Իտալիա առաջին արժեզրկումը կատարեց 1927 դեկտեմբերին: Իտալիա չպիտի վերահաստատէր նախկին համեմատութիւնը, եթէ համոզուած ըլլար թէ Անգլիա եւ Մ. Նահանգները աւելի չպիտի կոտրեն իրենց դրամներուն արժէքը: Այժմ սթերլինը եւ տոլարը փաստօրէն հաստատուն վիճակ մը ստացած ըլլալով, իտալական կառավարութիւնն ալ հարկ դատեց նոր կացութեան յարմարցնել իր դրամը: Իտալացիները արժեզրկում չեն նկատեր ձեռք առնուած միջոցները, այլ պատշաճեցում նոր կացութեան:*

Շատ կարճ տեւեց նախարարական խորհուրդին նիստը: Արժեզրկման առաջարկը ներկայացուց Մուսոլինի եւ գահլիճը անմիջապէս քուէարկեց մեծ մեծ համաձայնութեամբ: Տրուած որոշման համաձայն, իտալական դրամատան պաշտօնեաները պիտի գործեն Իտալիոյ Պանքի հետ միասին, մինչեւ որ դրամը գտնէ իր նոր հաստատուն հաւասարակշռութիւնը: Ներկայ պահուն, ոչ ոք կրնայ ստուգել թէ ինչ չափով նոր արժէքի հիման վրայ է ներկայ դրամը: Իտալացիները կը կարծեն թէ ամէն օր աւելի մեծ թիւով ձերբակալութիւններ կը կատարուին: Այս կարծիքը պատանդ կը համարուին: Կառավարական զեկոյց մը կը տեղեկացնէ թէ ետ մղուած են երկու յարձակումներ: Ապստամբներու տեղեկատու դիւանը կը ծանուցանէ թէ Ալիքանթէ հասած խորհրդային չոգենաւ մը, որ իբրեւ թէ ուտեստ կը փոխադրէր, իրականին մէջ զէնք եւ ռազմանիւթ հասցուցած է Մատրիտի կառավարութեան: Զորս անուններ որոնց վրայ «հաւկիթ» նշանակուած էր, կը պարունակէին հրացաններ, իսկ 35 տուփեր ալ ռազմանիւթ:

**** Ինչպէս հաղորդած էինք երէկ, Մատրիտի կառավարութիւնը արգիլած է ոսկիի եւ արծաթի արտածումը: Արգիլուած է դուրս հանել նաեւ այն պղինձները որոնք ոսկի եւ արծաթ կը պարունակեն: Բոլոր քաղաքացիները պարտաւոր են ազգ. դրամատան յանձնել ամէն տեսակ թանկագին մետաղներ:*

Երկրէն մեկնողները չեն կրնար չորս արծաթ փղդեմայէն աւելի տանիլ:

Ներս կանոններու տակ առնուած է նաեւ պարենաւորումը: Առժամեայ յանձնաժողով մը կազմուած է, հաւաստարիմ նահանգներու պարենաւորումը կազմակերպելու համար: Ամէն քանէ առաջ հոգ պիտի տարուի ռազմաճակատներուն վրայ գտնուած զինուորներուն: Կարգադրութիւններ եղած են մասնաւորապէս կաթի մասին: Մէկ խօսքով, ամէն բան ըրուած է պատերազմական հիման վրայ, աւելի երկար դիմանալու համար: Միեւնոյն ատեն բանուրական վաշտեր կը կազմուին, զօրացնելու համար մայրաքաղաքին պաշտպանութիւնը:

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՕՐը ՕՐԻՆ

ԴՕԴՕՇՆԵՐԸ

Երէկ, Փարիզեան թերթի մը մէջ, կը կարդայի Ռոժէ Սիմոնէի մէկ յօդուածը... դօդօշներու մասին: Հրապարակագիրներուն ճակատագիրն ալ այսպէս է հապա՛,— ստիպուած են կարդալ ամէն քան, նոյնիսկ եթէ դրդումի համ ունենայ: Տոբք. Վիքթոր Փօշէ կը յանձնարարէ կարդալ միայն ինչ որ կապ ունի ընթերցողին մասնագիտութեան հետ, միտքը չցրուելու եւ չյոգնեցնելու համար: Ընդհակառակն, կ'ըսեն, ուրիշներ, պէտք է ուղեղը լեցնել ամէն ծանօթութիւններով,— իբրեւ իմացական կարողութիւններու մարզանք: Այսպէս,կ'ըսեն թէ Անթոլ Ֆրանս, գրավաճառի տղայ, շատ կը կարդար, ինչ որ հանդիպէր՝ կը կարդար, — ասով կը սրբէր իր միտքը:

Ես կարդացի դօդօշներուն կեանքը, կեր տալու համար տղոց մեքենային: Քանի կարդացի, այնքան հետաքրքրական գտայ:

Կը ճանչնա՞ք դօդօշները: Ասոնք մեծ ու գիրուկ գորտեր են, չոփա-զանց տգեղ եւ սոսկատեսիլ, որ կը բնակին տուներու հիմերուն տակ, մեծ քարերու տակ: Դուրս կ'ելլեն ընդհանրապէս գիշերը: Հայ ժողովուրդը կը հաւատայ, որ դօդօշը տան պահապան է, չարխափան: Սակայն Միջին Դարուն մարդիկ կը հաւատային, որ դօդօշին շունչը ծծելը բաւական էր որ մարդ մեռնէր: Այսպէս կախարդները իրենց շատ մը խորհրդաւոր դեղերուն կը խառնէին դօդօշը: Միջնադարեան հաւատալիք մըն է նաեւ այն, թէ Աստուած դօդօշ կը տեղայ երկինքէն՝ երբ շատ բարկացայ: Ֆրանսերէնի մէջ այդ հաւատալիքին հետքն է անշուշտ, երբ կ'ըսուի, երկինքը մթնած ժամանակ· «Այնքան սեւցած է երկինքը, որ կ'րսես՝ հիմա դօդօշ պիտի տեղայ»:

Դօդօշ թոյն մը ունի, որմէ շատ կը վախնան մարդիկ,— այնքան ալ վտանգաւոր չէ բարեբախտաբար: Ոմանք կը սարսափին նաեւ, երբ դօդօշ «ջուր կը նետէ» գիտէ չարչարողին վրայ:

Մեր գիւղացին կ'ըսէ· «Գորտը կամ դօդօշը շռեց»: Տեսէք թէ ինչ է այս երեւոյթը: Դօդօշը կարմ թեւեր ունի եւ երկար սրունքներ: Մարմինը թանձրը է, այնքան գէր, որ առջեւի ոտքերուն (թաթ) կարճութեան, ետեւի ոտքերուն երկարութեան պատճառով՝ չի կրնար փախչիլ արագօրէն: Ձի սիրեր նաեւ չորութիւնը, իրեն անհրաժեշտ է խոնաւութիւն, ինչ մը ջուր: Ուստի փորի տոպրակին մէջ ամելորդ ջուր կը պահէ: Երբ մէկը կը մօտենայ, վախկոտ ըլլալուն՝ փախչելու ժամանակ կը պարպէ ջուրը, որպէսզի թեթեւնայ, ժողովուրդն ալ կը կարծէ թէ կը միզէ եւ մէզովը վնաս կը հասցնէ: Ոմանք կ'ըսեն թէ դօդօշին մորթը մորթային բշտիկներ կը պատճառէ: Ասիկա նախապաշարում է, եւ ներշնչուած անկէ որ դօդօշին մորթը գունտ գունտ է: Ամէն պարագայի, Պիճնոս կը յանձնարարէ անոնց որոնց մորթը կը բշտկի դօդօշին արսկած ջուրով·— Մոդէսի միս, աւուշ գինի եւ հազարուկի կաթ, խառնել եւ խմել:

Դօդօշը, չչարախօսենք, օգտակար է հողագործներուն, թէեւ ոչ մէկ հողագործ կը սիրէ զայն,— որովհետեւ տգեղ է, բորբոսի գոյն ունի, գարշահոտ է, բարի մը տակ նստած կը ըսպասէ, եթէ էէյֆը չխանգարեն՝ ոչ «տուն» կը փոխէ, ոչ ալ կը հեռանայ իր ծակէն:

×

Զգեցիք կենդանաբանութիւնը:

Մեր ազգային կեանքին մէջ ունինք մարդիկ, որ ճիշդ ու ճիշդ դօդօշի կը նմանին: Տուն տեղ ըրած են ազգային աթոռ մը,— տարիները կ'անցնին, ժամանակները կը փոխուին, բայց մեր դօդօշը չուզեր իր աթոռը թողուլ, ոչ ալ իր բորբոսած կռնակը:

Ունինք նաեւ ազգային գաղափարներ, որոնք նոյնպէս դօդօշի կը նմանին: Արմատացած, տեղաւորուած են հին ուղեղներու մէջ, ոչ մտաւորական յեղափոխութիւններու կը հաւատան, ոչ ալ յառաջապահ շարժումներու: «Ոչ մէկ լուր արեւմտեան կամ արեւելեան ճակատին վրայ»:

Եթէ երբեմն ոմանց զարմանք, ոմանց ալ ցաւ կը պատճառեն Ճառաչի ուժգին յարձակումները, մեր թերթին նպատակն այն է որ կ'ուզէ տեղահան ընել դօդօշները:

ԱՐԱՋ

ՅՈՒՆԱՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԸ ԿՐ ՎԵՐԱԲԱՑՈՒԻՆ

Հորիզոնի սեպտեմբեր 30 թիւէն ուրախութեամբ կը տեղեկանանք թէ կրթական նախարարութիւնը հրահանգած է անմիջապէս, հեռագրական շրջաբերականով մը իմացնել կրթական ճիւղիչներուն թէ կ'արտօնուի յունահայ դպրոցներու վերաբացումը, պահելով անցեալ տարուան գոյավիճակը, մինչեւ որ վաւերացուի Հայերու վերաբերեալ կանոնագիրը: *Նոր Օր* ալ կը հաստատէ այս լուրը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻԹԻՆԿՆԵՐԸ Կ'ԱՐԳԻԼՈՒԻՆ

Ներքին եւ արտաքին յայտարարութիւններ

Ներքին նախարար Գ. Սարաքօղլու առջի օր յայտարարեց թէ քաղաքական միթինկները եւ հակացոյցները պիտի արգիլուին գնոր տնօրինութիւն: Կառավարութիւնը անհրաժեշտ գտած է այս որոշումը, որպէսզի կարենայ պահպանել բարեկարգութիւնը եւ հանդարտութիւնը, յաջողութեամբ յառաջ տանելու համար տնտեսական վերակազմութեան աշխատանքը: Այս առթիւ հրատարակուած պաշտօնական զեկոյցը կ'ըսէ·

— «Բարեկարգութեան պահպանումը կախում ունի կառավարութենէն: Հանդարտութիւնը եւ անդորրութիւնը կախում ունին անհատներու եւ կուսակցութեանց իմաստութենէն: Կառավարութիւնը վճռած է իր կարելին ի գործ դնել, խռովութեանց առիթները խափանելու եւ հանրային կեանքին խաղաղ եւ բնականոն ընթացքը ապահովելու համար»:

Այս առթիւ պաշտպանելով «Ֆրանսական Ընկերային կուսակցութեան» (Հրեղէն Խաչ) ցոյցին արգելումը, պաշտօնական զեկոյցը կ'ըսէ·

— «Այդ կուսակցութեան ցոյցը, որ տեղի պիտի ունենար 30000 հոգինոց սրահի մը մէջ եւ կիրակի օրուան հակացոյցը ճիշդ միեւնոյն հանդամանքն ունէին: Երկուքն ալ կազմակերպուած էին այնպիսի մեթոտներով որոնք, երկար ընդհատումէ մը վերջը, վերսկսած են վերջին քանի մը չաբաթներու ընթացքին: Այդ մեթոտներն են արագ եւ գաղտնի զօրակոչը, որոնք ի հարկէ կ'ենթադրեն նուիրապետական կազմակերպութիւն մը եւ զինուորական կարգապահութիւն մը, խմբական զօրաշարժ, փոխադրութեան ծրագիրներ եւ համախմբում՝ որոշ կեդրոններու մէջ: Այս բոլորը կապ չունին քաղաքական հրապարակային միթինկի մը հետ, որ կը կազմուի հրապարակաւ, քաղաքական կուսակցութեան մը կողմէ, սովորական աղդարարութիւններով: Այդ բոլորին մէջ նմանութիւն չկայ նաեւ հակացոյցի մը հետ, իբրեւ ինքնաբեր հաղորդակցութիւնը հանրային կարծիքի մէկ մասին: Եթէ ամենաթեթեւ տարակոյս մը կրնար տիրել այս մասին, կը փարատի կիրակի օրուան դէպքերով»:

**** Այս որոշումէն առաջ, ժողով մը գումարուեցաւ վարչապետական պաշտօնատան մէջ, ուր հաստատուեցաւ թէ դատական քննութիւն բացուած է գնդ. տլ լա Ռոք կուսակցութեան դէմ, լուծուած կուսակցութեանց վերակազմութիւն եւ հրապարակային համախմբում կատարելու փորձի մը ձեռնարկած ըլլալով:*

«ԾՈՎՍԻ ՄԻ ՍԱՐԴ ՉԱՅԿԱՆԸ, ՀՈՂՍ ԱՌԱՎ...»

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆԵԿԴՈՏՆԵՐ (Սիրուհի)

Ա

Ես ծնուել եմ Ալաշկերտի գաւառում, մի գիւղում, որ կոչւում է Ծովասար։ Ծովասարը մի շատ գեղեցիկ գիւղ է։ Նրա տները շինուած են ամենից լաւ տեսակ քարերից, ամենքն էլ երկյարկանի են, ունեն մեծ պատշգամբներ, ապակեայ դռներ ու պատուհաններ։ Գիւղի մէջ կան երկու մեծ եկեղեցի, մի դպրոց, մի ուսումնարան, մի հիւանդանոց, մի դեղատուն, մի ժողովարան, մի գրադարան, մի թատրոն, մի ակումբ, մի ճաշարան, մի սրճարան, մի գարեջրատուն, մի գինետուն, մի օղեվաճառանոց, մի գրասենեակ, մի փոստ, մի հեռագրատուն, մի հեռաձայնատուն, մի ռադիոյի կայան, մի կինեմատոգրաֆ, մի ֆոտոգրաֆ, մի ֆոտոգրաֆական պատկերների խանութ, մի ոսկերչական խանութ, մի ժամագործական խանութ, մի կօշկակարական խանութ, մի դերձակական խանութ, մի գլխարկագործական խանութ, մի ատաղձագործական խանութ, մի երկաթագործական խանութ, մի պղնձագործական խանութ, մի ներկարարական խանութ, մի ոսկեզօծական խանութ, մի ոսկեգործական խանութ, մի արծաթագործական խանութ, մի ապակեգործական խանութ, մի ճենապակեգործական խանութ, մի ֆայանսագործական խանութ, մի ֆարֆորագործական խանութ, մի ալեբաստրագործական խանութ, մի մարմարագործական խանութ, մի գրանիտագործական խանութ, մի պորֆիրագործական խանութ, մի ագատագործական խանութ, մի ոնիքսագործական խանութ, մի ալաբաստրագործական խանութ, մի մալաքիտագործական խանութ, մի լազուր

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

— ● —

ԹՈՒՐՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայ մատենագրության մեջ Թուրքագիտության պատմության ուսումնասիրության մասին առաջին աշխատությունը հրատարակել է Ստեփան Մալխասյանցը 1910 թ. Սույն աշխատությունը ներկայացնում է Թուրքագիտության պատմության ուսումնասիրության մասին հայ մատենագրության մեջ եղած նյութերի ամբողջական ժողովածուն։ Հեղինակ

նութիւնը: Հակառակ ձեռք առնուած միջոցներուն, տակաւին կան ծայրայեղ տարրեր որոնք նկատի չեն առներ կառավարութեան հրամանները:

*** Ապստամբներու վերջին զեկոյցին համաձայն, Զօր. Ֆրանքօ վերջացուցած է Մատրիտի չրթակալման ծրագիրը եւ խստօրէն կը չարունակէ պաշարումը, Ցարձակման պիտի մասնակցին 150,000 զինուորներ, թնդանօթաձիգ եւ օդանաւային վաչտերով: Պաշարման սահմանուած բանակին առջեւէն պիտի քալեն 15,000 լեգէոնականներ, որոնք Մարոքէն հասած են այս չրթու: Արդէն փոխադարձ չարաբերութիւն հաստատած են հիւսիսային - արեւմտեան, հարաւային եւ արեւմտեան բանակները որոնց ամրողջութիւնը կը կազմէ պայտաձեւ չղթայ մը:

*** կառավարական երկու մարտանաւեր երկուչաբթի օր ամրակոծեցին Սան - Սէպասթիանօն եւ չրջակայքը:

*** ձիպրալթարէն կը հաղորդեն թէ ապստամբները կը լրացնեն իրենց պատրաստութիւնները, ծովէն, ցամաքէն եւ օդէն չարթակելու համար Մալագայի վրայ, որ կառավարութեան նաւակայանը կը կազմէ: Բոլոր մարտանաւերուն գոյնը եւ անունները փոխուած են եւ նոր թնդանօթներ տեղաւորուած: Վերջին տասը օրերու ընթացքին 18,000 նոր զինուորներ Քատիքն հասած են սպանիական Մարոքէն: Ցարձակումը պիտի սկսի այս չրթու եւ աւելի քան 5000 Մարոքցիներ յառաջապահ գունդը պիտի կազմեն:

ԻՍՔԷՆՏԷՐՈՒՆԻ ԵՒ ԱՆՏԻՈՔԻ ԽՆԴԻՐԸ

Հիմակ ոչ խոնհմութիւն կը խաղցնեն...

Պղսէն կը հեռագրեն.— «Ձիմհուրիյէթ» եւ «Ռէփիւպլիք» (նոյնին Ֆը - բանսերէնը) խմբագրական մը կը հրատարակեն որ անշուշտ ներչնչուած է եւ հանդարտութիւն կը յանձնարարէ Թուրք ազգին: Այս առթիւ կը չեշտեն, «Պէտք չէ որ եւ է արկածախնդրութիւն փորձել ի նպաստ Աւտոքի եւ Իսքէնտէրունի, որոնց ճակատագիրը ճիշդ այն պիտի ըլլայ ինչ որ կը փափաքին Թուրքերը, որովհետեւ այդպիսի արկածախնդրութիւն մը բանաւոր չպիտի ըլլայ եւ կրնայ ցաւալի միջադէպեր յարուցանել կամ բարդութիւններ յառաջ բերել, խափանելով բաղձալի ելքը»:

Ինչպէս կ'երեւայ, Թուրք մամուլը չափը անցուցած ըլլալով, երեւի դի - տողութիւններ եղած են Փարիզէն եւ կառավարութիւնը հարկ դատած է քիչ մը քաշել եունուս Նաւիներու եւ միւսներու ականջը... Մանաւանդ որ, Սուրիոյ Արաբներն ալ նոյն ուժգնութեամբ կը պատասխանեն Թրքական յարձակումներուն, բանիւ եւ գրչով:

ԱՐԻՒՆԱԼԻ ԴԷՊՔ ՄԸ ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ

6000 ոստիկան, 250 վիրաւոր

Կիրակի օր չատ ծանր դէպք մը պատահեցաւ Լոնտոնի մէջ, Ֆաչականներու տարեդարձի առթիւ կազմուած թափորին հետեւանքով, որ տեղի ունեցաւ բանուորական թաղի մը մէջ: Աւելի քան 100,000 հոգինոց բազմութիւն մը խռնուած էր արեւելեան Լոնտոնի մէջ, խափանելու համար թափորը, որ կը բաղկանար 7000 Ֆաչականներէ, հրամանատարութեամբ Սըր Օ. Մոսլիի (նախկին ընկերվարական): Ամրոխը այնքան սպառնալից դիրք մը բռնած էր որ, 6000 ոստիկաններ չարժման մէջ դրուած էին, ընդհարումը դադրեցնելու համար: Ամրոխը անզգաստ թշնամական կանչեր կ'արձակէր սեւ չապիկաւորներուն դէմ, որոնք մեծ մասով կազմ նստած էին: Շատ չանցած պաշարման չղթայ մը խորտակուեցաւ եւ ոստիկանները հարկադրուեցան բիր գործածել, ամբոխը ցրուելու համար: Ինը վիրաւորներ անմիջապէս հիւանդանոց փոխադրուեցան (երեքը կին): Հակաֆաչական ցուցարարները եւս մղած սաեն, ոստիկանները կրակ բացին եւ բազմաթիւ հետաքրքիրներ խուճապի մատնուելով, փախան անկարգ անկանոն: Վիրաւորներէն չատեր հրմչակուեցան, ձեռքին ինկան եւ կոխոտուեցան: Պահ մը երբ Թափորը կանգ առած էր, մարդ մը տանիքին վրայ կախեց կարմիր դրօշը, մուրճ - մանդադով: Քիչ անդին կրմինալը մը նետուեցաւ Սըր Օ. Մոսլիի կառքին վրայ, չախչախելով ապակիները: Գիչերուանցմամբ 1 ինհազիւ կարելի եղաւ վերահաստատել բարեկարգութիւնը: Վիրաւորներուն թիւը կը հաշուեն 250: Քանի մը հարիւր հոգի ձերբակալուեցան, բայց միայն 84ը վար դրուեցան, որոնք անմիջապէս պիտի դատուին:

Լոնտոնի Թերթերը մանրամասնօրէն նկարագրելով դէպքը, գիտել կու - տան թէ ոստիկանութիւնը գժուարութէ կարենար զսպել ահռելի ընդհարում մը, եթէ ֆաչականներու հրամանատարը չհամարկերպէր ոստիկանական հրահանգներուն:

Դէպքէն վերջը, Սըր Օ. Մոսլի յայտարարեց թէ առաջին անգամ է որ բրիտանական կառավարութիւնը բացէ ի բաց կը խոնարհի կարմիր սաբատաին առջեւ... (կ'ակնարկէ ցոյցին արգիլման): «Այս առթիւ, ընկերվարականները, համայնավարները եւ Հրեաները բացէ ի բաց միացան ոչ միայն մեր վրայ յարձակելու, այլեւ Լոնտոնի փողոցները բռնի փակելու համար»:

Իսկ համայնավար կուսակցութեան Լոնտոնի կոմիտէն յայտարարութիւն մը հրատարակեց, որով կը պարծենայ թէ Մոսլի ամէնէն նուաստացուցիչ պարտութիւնը կրեց եւ թէ անգամ մըն ալ հաստատուեցաւ որ անգլիացի ժողովուրդը երբեք չպիտի թոյլատրէ ֆաչականութիւնը:

ՉԱՆԱՉԱՆ ԼՈՒԲԵՐ ՔԱՆԻ ՄԸ ՏՊԼՈՎ

ԱԶԳԵՐՈՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ էմտական յանձնաժողովին երկուչաբթի օրուան նիստին մէջ, Պ. Պաութիտ, Ֆրանսայի առեւտրական նախարարը, յայտարարեց թէ իր կառավարութիւնը կը պատրաստուի դադրեցնել բաժնեցուցակներու դրութիւնը (քոնթինժանթման): Առաջին ճաոը խօսեցաւ Անգլիոյ էմտական նախարարութեան խորհրդականը, առաջարկելով անմիջապէս դադրեցնել բաժնեցուցակները եւ մաքսային սակացոյցները: Այս առթիւ աղդարարեց թէ Անգլիա կրնայ նորէն կտրել իր դրամին արժէքը, եթէ մաքսային գոհացուցիչ կարգադրութիւններ չըլլան անգլիական ապրանքներուն համար:

ԳՈՐԾԱԴՈՒԼՆԵՐԸ կը չարունակուին Փարիզի մէջ: Հրատարակուած տեղեկութեանց համաձայն տակաւին 41 գործարաններ գրաւուած կը մնան, 7428 բանթողներով:

«ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐ.Ը ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ ՓԱՐԻԶԻ «ԵԳԻՊՏԱՑԻ» ԿՈՄԻՏԷԻ

կը տօնուի Հոկտ. 17ին, շաբաթ երեկոյ ժամը 8.30ին,

Sociétés Savantesի սրահին մէջ, **28 Rue Serpente**

ԿԸ ԽՕՍԻ **ԸՆԿ. ՎԱՀԱՆ ՆԱԻՍԱՐԴԵԱՆ**

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՃՈՒՆ ԲԱԺԻՆ

—o—

ԿԱՂԱՆՍԻ ՄԷՋ.— Շաբաթ երեկոյ·

ԿԸ ԽՕՍԻ **ԸՆԿ. ՎԱՀԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ**

ՌՕՄԱՆԻ ՄԷՋ.— կիրակի առաւօտ·

ԿԸ ԽՕՍԻ **ԸՆԿ. ՎԱՀԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ**

ՓՈՆ Տ'ՕՊՆԱՅԻ ՄԷՋ.— կիրակի երեկոյ·

ԿԸ ԽՕՍԻ **ԸՆԿ. ՎԱՀԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ**

Մանրամասնութիւնները տեղւոյն վրայ·

ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԾԱԽՈՒ ԵՆ

1.— *6 լամբնոց* **T. S. F.** *մը «փիքոփ»ով միասին, գին՝* **1200** *ֆր. բուն արժէքն է* **3600** *ֆր.:*

2.— *Ինքնաշարժ մը «Մաթիս» մարք, ունի 14 ձիու ուժ, գին՝* **1900** *ֆր: կրնաք սակարկել:*

3.— *Սափրիչի խանութ մը՝ հարուստ եւ բանուկ հրապարակի վրայ, ունի 3 արանց, 3 կանանց աթոռները, նաեւ 2 սենեակ, ճաշարան, խոհանոց եւ պարտէզ մը, կահ-կարասիներով միասին: Մատչելի գին:*

Դիմել՝ ՉԱԼԸՄԵԱՆի, **3 Ave. de la Perte d'Orléans, Paris (14).**

"ՅԱՌԱՋ,, ԿԸ ԾԱԽՈՒԻ

Maison LECOMTE, 31 rue de Palikao, Paris (20)

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՀԱՅ ՍԱՓՐԻՉՆԵՐՈՒ Միութեան բացառիկ ցուցադրութիւնը՝ *démonstration*, տեղի պիտի ունենայ *8* շաբաթ. հինգշաբթի իրիկուն ժամը *8.30*ին, Սիուեեան շքեղ սրահներուն մէջ, *7 Rue Bernardin, Paris* (5)· Բոլոր անդամ եւ ոչ-անդամ հայրենակիցներէն կը խնդրուի օգտուիլ այս առիթէն:

Ֆ. Հ. ԿԱՊՈՑ ՔԱՀի անկէնի ժամանաճիւղի ընդհ. ժողովը տեղի կ'ունենայ այսօր, չորեքշաբթի երեկոյ ժամը *8.30*ին: կարեւոր օրակարգ: Անդամներու ներկայութիւնը պարտաւորիչ է·

ՍԵԲԱՍՏԻՈՑ ՆԱՀ. ՄԻՈՒԹԻՒՆԸ վերակազմուած ըլլալով. նորակազմ վարչութիւնը կոչ կ'ուղղէ բոլոր սրտցաւ հայրենակիցներուն գալ բոլորուիլ միութեանս շուրջ, որուն կէտ նպատակն է օգնել նոր սերաստիոյ եւ տեղւոյս հայրենակիցներուն: Մանակցիլ փափաքողները կը հրաւիրուին արձանագրուիլ հետեւեալ հասցէին.— M. H. Pamboukian, 20 rue de Saigne, Montreuil (Seine):

ՇԱՐԺԱՆԿԱՐ

Հետաքրքրական պատկերներ
Այս երեկոյ ժամը 9ին,
5 rue de l'Eclipse,
Մարսէյլի «Շահրիկեան» սրահին մէջ:
Կը գանձուի մեծերէն 1 ֆրանք, փոքրերէն 50 սանտիմ:

ԳԱՁԷՔ ՏԵՍԷՔ
CIGALE CINÉMA
60 Avenue de Saxe-LYON.

ԳԱՁԷՔ ՏԵՍԷՔ ԼԻՈՆԻ ՄԷՋ
Cinéma REXY
Rue Cours Lafayette, angle Garibaldi.

Le Gérant: H. STEPHAN
Imprimerie A. DER (AGOPIAN)
17, Rue Dameame, PARIS (13)

«ԳՈՑԱՄԱՐՏ» ՕՐԱՑՈՑՑ, Ը. ՏԱՐԻ 1937

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱՐՍԷՅԼԻ Հ. Յ. Դ. ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԿԸ ՇԱՀՈՒԻ՝ Մարսէյլ Միութեանս Գրադարան. Ընթերցարան 5 Rue de l'Eclipse, *Միութեանս բոլոր անդամներուն եւ հետեւեալ հասցէներուն քով.—*

Մարսէյլ, Ն. Գակոսեան, 49 Rue Nationale
Փարիզ, Հրանտ Սամուէլ, 51 Rue Mr. le Prince (6)
Տեսին եւ Լիոն, Վ. Հիւսեան, 3 Rue Tellier, Décines, Isère
Վալանս, Ղ. Գալուստեան, 58 Rue Bouffier, Valence, Drôme
Սեն'Էթիէն, Վ. Որիմեան, 34 Rue des Frères Chape. St. Etienne
Վիէն, Ն. Յակիկեան, 124 Rue Lafayette, Vienne, Isère
Նիս, Գ. Շէհրէլեան, 55 Bd. de la Madeleine, Nice. A. M.
Կարտաճ, Լ. Գայտճանեան, Puits Bivert
Ալժէրի, Պ. Արզումանեան, Hôtel Atlas, Blida, Algérie
Պորտօ, Ա. Քէնտէրեան, Rue Ed. Vaillant, Cenon, Gironde
Պէյրութ, Ա. Ազնաւուրեան գրատուն, Bab Yacoub, Beyrouth
Ապատան, Ա. Աբգարեան, P. O. Box 22, Abadan, Iran
Շամ, Ա. Լօշխաճեան, Hart. Djanvar, 32 Bay Charky, Damas
Գանատա, Ա. Սիրունեան
Պասրա, Ռսկ. Ծնունդեան, Seef st. Basrah, Irak
Պէյրութ, Ա. Հօրիմեան, Photo Mourad, Rue Gouraud
Փօն տ'Օպնա, Ա. Կարապետեան, Chez M. Chaberte
Շարվիէօ, Մտ. Թիւրքմէնեան, B. H. 84 Charvieu
Հալէպ, Խ. Քրքէսէլեան, 22 Rue Boustan Kulab, Alep, Syrie
Ամերիկա, Պ. Պալեան, 119 P. O. Box, Milford, Mass.
Լա Սիօթա, Ս. Մարգիսեան, 2 Rue Foces, La Ciotat
Թեհրան, Journal «Alik» Téhéaran Ave. Postkhaneh
Թուլուզ, Ղ. Մարկոսեան, 36 Pl Lucas, Toulouse, H. G.
Աբթ, Թ. Պաղտասարեան, 11 Pl. des 4 Poulies, Apt Vaucluse
Ռոմանս, Մ. Պիլալի, 5 Rue Puy, Romans
Բօնքէն, Մատոյեան, Usines Berles Carrelage
Ժերս Խ. Թորոսեան· Բիւժէ Սու Ալժան, Մանասէլեան· Կրաս, Գրիգորեան
Aix, Գ. Աւետիսեան, 3 Rue Emerie-David·

Նաեւ Մարսէյլի եւ արուարձաններու Դաշնակցական Ակումբները եւ բոլոր Դաշնակցական Թէյեներու խմբագրատուները:

ԿԱՊՈՑՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ռուսաստանի մէջ գտնուած ձեր ազգականներուն եւ բարեկամներուն յաւազոյն եւ իրական օժանդակութեան ձեւն է՝ զրկել անոնց կապոցներով բրդեղէն կտորներ, ճերմակեղէն, կօշիկներ եւ Թրիքոտաժ·

Այս բոլոր իրեղէններէն մենք ունինք ճոխ մթերք եւ կրնդարկենք զանոնք Ռուսաստան շատ ձեռնտու եւ մատչելի գիներով·

Ունինք տրամադրելի ընտրութիւն եւ էլեկտրական գրասեղաններ, ինչպէս նաեւ դաշնակներ շատ մատչելի գիներով·

Գիներու ցանկը եւ նմոյշները կը դրկուին առանց վճարի·

Դիմել՝ American Lloyd, Paris (9), 7 rue Auber
Tél. Opéra 67-77, 67-78

ԱՐՔԱՅԱՆ ԽՄԻՉՔ

ՐԱՔԻ ՏԻՒԶ

Չատ խաղողէ քաշուած եւ անխտնով պատրաստուած օղին է ՐԱՔԻ ՏԻՒԶը·

Զգուշացէք այլ եւ այլ նիթերովպատրաստուած եւ ձեր կեանքին վնասակար օգիները խմելէ, այլ խմեցէք միմիայն ՐԱՔԻ ՏԻՒԶը, որուն անարատ, կազդուրիչ եւ ախորժաբեր ըլլալը հաստատուած եւ դնահատուած է·



Ֆրանսայի համար արտօնատէր՝ Ա. ՏԱԼԱՖԻԲԻԷԵԱՆ
8 rue Suffren, Marseille— Tél. D. 70-89

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՃԸՐԸ

Ճաշարան Ֆլօրիա

61, Rue Monsieur le Prince, Paris (6)

Մեքբօ՝ Օտէօն եւ Սէն Միքէլ Հեռաձայն Danton : 52 · 73

Աթելիեան Եւ եւրոպական խնամուած կերակուրներ:

ՃԱՌԱՋԻ ԹԻՐԹՈՆԸ (107)

ՁԱՐԹՕՆՔ

(ՎԷՊ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵԱՆՔԷ)

—o—

Պատարագէ աւարտումէն առաջ եւդինէն Քահանայի կողքին կանգնած էր, երբ խնամոց ծառան իրեն մօտենալով ականջին բանիր մը փսփսաց: Հազ - ճեպով ան դուրս եկաւ եկեղեցիէն՝ յայտնելով ընկերոջը որ չուտով կը վերադառնայ: Պատարագը վերջացաւ, ու ժողովուրդը դիմեց դէպի դասը, ուր զրկալի առջեւ կանգնած էր Գարեգին վարդապետը, գլուխը կախ, ձեռքերն իրարու միացուցած: Ըստ հնաւանդ սովորութեան, ժողովուրդը կարգով կը մօտենար, ու կը համբուրէր նոր օծուած արեգայի աջը:

— Տգաս, հնորհաւոր վինի — Աւիթ բէկին մայրն էր ըսողը, որ իր կարգին մօտենալով ծռեցաւ ու համբուրեց վարդապետի աջը:

եւդինէն ընկերներուն հանդիպեցաւ, երբ անոնք դուրս կուգային Մայր Տաճարէն ու բոլորը մէկտեղ ուղղուեցան դէպի Սարգիս Աբօր խնամոց տունը: Ճաշի ժամանակ էր: Խնամոնք, էջմիածնին հին եւ հարուստ համարուած ընտանիքներէն էին: Մեծ դարպասէն կը բացուէր ընդարձակ բակ մը, որու ծայրը կը բարձրանար երկյարկանի տարածուն տուն մը, որ զարմանալի ճարտարապետական խառնուրդ մըն էր, քաղաքի եւ գիւղական չէնքերու: Վարի յարկը ցախատունն էր, մառաններն եւ կամարակապ պահեստը գինիի կարասներու, իսկ վերի յարկը յատկացուած էր բնակութեան:

Մէկը միւսին մէջ բացուող սենեակներէն վերջ կուգար չատ ընդարձակ դահլիճ մը, որ թէ հիւրանոց էր, եւ թէ մասնաւոր պարագաներու ժամանակ՝ ճաշարան:

Երկար սեղան մը դրուած էր հիւրանոցի մէջ տեղը, ծանրաբեռնուած բազմազան կերակուրներու լեցուն պնակներով: Բայց այդ օրուան սեղանի գլխաւոր զարդը, երեւանի հռչակաւոր քիֆիթէն էր, ամէն մէկը երեխայի մը գլխու մեծութեամբ: Երբ հիւրերը կը պատրաստուէին սեղան նստիլ, եւդինէն մօտենալով Քահանային, որպէս թէ անտարբեր ձեւով, ըսաւ.

— Հա մռռայ ըսելու, քեզ տեսնելու համար հիւրեր եկած են....

Ո՞վքեր պիտի ըլլային դինք տեսնելու եկողները, եթէ ոչ ... ու Քահանան հազիւ ինքզինք պահելու կարող եւդինէին նայեցաւ.

— Ո՞րտեղ են...

—Երթանք,— ու ու եւդինէն ողու ձեռքէն բռնած առաջնորդեց դայն,— Քանի մը ժամ առաջ եկան, սենեակ տարի որ հանգստանան:

Քահանան սաստիկ յուզուած բացաւ սենեակի դուռը: Պատուհանի մօտ նստած էր ծերունի մարդ մը, ալեխառն մօրուքով, եւ երիտասարդ աղջիկ մը, որ ձեռքի գիրքը կը փորձէր հեգելով կարդալ: Դրան բացուելու ձայնին հետ, երկուքն ալ տեղերնէն վեր թռան, ու ծերունին թեւերը բացած առաջ նետուեցաւ.

— Արչակ, քէ մատաղ, ազիզ պա - չէս ...

եւդինէն մէկ կողմ քաշուած, զգածուած կը դիտէր հարազատներու այնքան յուզիչ հանդիպումը: Ծերունին զատակը գրկած, ուրախութենէն կ'արտասուէր. քոյրը եղբօրը կողքին կուլար, մինչ Քահանան թէեւ ինքն ալ չափազանց յուզուած, կ'աշխատէր հանգստացնել հայրը:

— Փառք քէ, Աստուած, փառք քէ, աչքերը թեւով սրբելով կ'ըսէր ծերունին,— մէկ էլ տեսայ պալէս:

Քիչ վերջ, երբ բաւական մը հանգստացան, բոլորը միասին վերադարձան հիւրասենեակ, ու իրենց տեղերը գրաւեցին սեղանին չուրջը: Վահէն այդ օրուան սեղանապետն էր: Ընենք սեղանապետի գործը հեշտ էր այդ սեղանին վրայ, ուր խնամոնց պատուական դինին այնքան առատ էր եւ ազդեցութիւնը զգալի: Քահանայ, զոր մենք այսուհետ Արչակ իսկական անունով պիտի յիշենք, անխտիր երջանկութեան պահ մը ապրեցաւ, հօր ու նշանածին մէջտեղը նստած, մինչ քոյրը, որ հազիւ կը յիշէր, դէմն ու դէմը նստած, աչքերը իրմէն չէր հեռացներ: Երեւանեան ուրախ սեղանը՝ երեք ժամէն աւել տեւեց, ինչ որ սովորական երեւոյթ մըն է քէֆին սիրահար այդ ժողովուրդին համար:

Երեկոյեան թէյի ժամանակ, Գարեգին վարդապետն ու Աւիթ բէկը անսպասելի կերպով նորս մտան տիրա - սենեակը: Վարդապետի դէմքը կը ճառագայթէր ուրախութենէն: Երբ ժամ մը առաջ վեհարան բարձրացեր էր Հայրապետի ձեռքը համբուրելու համար, ծերունազարդ կաթողիկոսը հայրական քնքշութեամբ զինք ընդունելով յայտներ էր որ Պարսկաստանի Թադէոս Առաքեալ վանքի փոխ-վանահայր նշանակեր է զինք:

Այս այնքան արագ նշանակումը եւ ուրախացուցեր եւ թէ միաժամանակ չփոթեր էր Գարեգին վարդապետը: Սովորաբար մէկ երկու տարիէն պաշտօնի կը կանչուէին արեգանները, ու չէր գիտեր վարդապետը թէ ի՞նչ բանի վերագրէ Հայրապետի այդքան բարեացակամ վերաբերմունքը: Մինչ ինք զարմացած կը պատմէր այդ ժամին, Վահէն ժպտելով զարձաւ, ու ձեռքը դրաւ վարդապետի ուսին, ըսաւ.

— Գիտեմ: Ես խնդրեցի Վեհափառէն որ քիչ նշանակէ փոխ վանահայր: Գէորգ վարդապետը, որ իմ կնքահայրս է, նաեւ «քաջ հովիւ մըն է», նստած Ազգին եւ եկեղեցիին: Մենք ունինք սպասելիք:

Հանելուկը կը պարզուէր: Վարդապետը զգածուած՝ Վահէի ձեռքը մէջտեղ, համեմատօրէն ըսաւ.

— Ես իմ ամբողջ կարողութիւնս ուրախած եմ ծառայել ազգիս:

Միւռոնօրհնէքի հանդէսը, այդ ցասիկ եկեղեցական արարողութիւներէն է, որ ամիսներ առաջ կը ցուցարարուի ու հաւատացեալ ժողովուրդը մեծ անհամբերութեամբ սպասէ այդ օրուան:

Շատերու համար, երուսաղէմ կը բալու համազօր է՝ էջմիածին երթալու Սուրբ միւռոնի կաթսան համբուրելու եւ իջման սեղանի վրայ մոմ մը վառելու.

ՄԱՆԱՆ

(Շար.)

ՓՆՏՌԵՑԷՔ եւ ԿԱՐԴԱՑԷՔ
երգիծաթերթ՝ «Մ ե ղ ո ւ»
փարիզի եւ Շարլանի Յառաջի
Գ. Ա հ ե ց ի ս ի:

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

17, Rue Damesme, PARIS (13e)
Téléphone : Glacière 15 - 70

(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,—

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՅ	ԵՒԱՄՍԵԱՅ
Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա	250 »	130 ֆրանք	—
Ամերիկա եւ ուրիշ երկիրներ	200 »	100 ֆրանք	—

ՀԻՆԳՇԱԲԹԻ
8
ՀՈԿՏԵՄԲԵՐ
JEUDI
8 OCTOBRE
1936

ԺԶ ՏԱՐԻ — 12e Année No. 3238

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԱՐԹՈՒՒՆ ԵՒ ՊԱՊԱՐԻՒՆ

Այսօր դարձեալ չարք մը վրդովիչ տեղեկութիւններ պիտի կարդաք, Իսքէնդրուն - Անտիոքի շրջանին կացութեան մասին :

Թուրք մամուլը կը շարունակէ կրակ տեղալ, եւ վատ պահել կիրքերը, մինչեւ անգամ այդ շրջանին «կոյսը» նախատեսելով, առաջնորդութեամբ Աթաթիւրքի ...

Լրագրական պայքարին հետ զուգընթաց յառաջ կը տարուի դիւանագիտական աշխատանքը : Թ. Բ. Արասէն վերջ, ուրիշ գործավար մը, Շիւքրի Գայա, Ազգաժողովի հոկտեմբեր 2ի նիստին մէջ նորէն յիշեցուց «Թուրքիոյ մտահոգութիւնները», եւելի դժուշ լեզու մը բանեցնելով :

Բայց կը բաւէ հետեւիլ միայն թուրք մամուլին, իմանալու համար ին - կիւրիի բուն դիտումները :

Երկկ հետապիր մը կը հաղորդէր թէ «Ձիւմհուրիյէթ» եւ անոր ֆրանսերէն տպագրութիւնը, «Ռէվիւլիք», կը յորդորեն ղեկուչանալ արկածախնդրութենէ, չմոռանալու համար հարցին «բաղձալի ելքը» :

Արդ, մեր ձեռքին տակ է Պոլսոյ վերջին թղթաթերը, հոկտեմբեր 2 եւ 3, եւ բոլորովին տարբեր բան կը կարդանք :

Երեւի այս հրատարակութիւններէն վերջը էր որ, կառավարութիւնը չափաւորութիւն յորդորեց : Թէեւ, այսօր իսկ, հոկտեմբեր 5 թուակիր հետապիր մը կը հաղորդէ երբեմնի «Հաքիմիյէթը Միլլիյէ»ին, «Ուլուս»ի բացորոշ սպառնալիքը, ի հարկին «պահանջելու Իսքէնդրունի չրջանին կոյսը» :

Ամէն պարագայի մէջ, լուրջ ախտանչաններ կը մտանէ կացութիւնը : Եւ Թուրքերը, իբրեւ փորձ եւ վարպետ հրձիգ, ջարդ կը սպառնան, «ծայրայեղ Սուրիացիներ»ուն վերագրելով նոյն միտումը :

Այս տեսակէտէն չափազանց պերճախօս է «Ձիւմհուրիյէթ»ի վերջին խմբագրականը.

— « Բացէ ի բաց կը խոստովանիիմ թէ Ֆրանսան է գլխաւոր պատասխանատուն այն դժոխային վիճակին որուն ենթարկուած են Սուրիոյ Թուրքերը : Չենք զարմանար երբ Սուրիացիները համարձակութիւն առնելով Ֆրանսացի պաշտօնեաներէ, ափեղցփեղ խօսքեր կ'ընեն. բայց յայտնապէս կը տեսնենք որ այդ ծայրայեղ խօսքերը ՎԱՂԸ ԿՐՆԱՆ ԴՆՈՒՆԴ ՏԱԼ ԳԷՊԷՐՈՒ ՈՐՈՆՑ ԱՌԱՋՔԸ ՈՉ ՈՐ ՊԻՏԻ ԿՐՆԱՑ ԱՌՆԵԼ » :

Երեւոյթը վրդովիչ է մանաւանդ անոր համար որ Թուրք մամուլը միշտ կը յիշէ Հայերու անունը, իւրաքանչիւր յարմարման առեն.— «20,000 Հայեր տեղաւորուած են», «Թուրքերուն ինչքերը Հայերուն կ'անցնին», «Իսքէնդրունէն մինչեւ Նուսկյային դիծին ամբողջ երկայնքը Հայեր տեղաւորուած են » եւայլն :

Այս առթիւ, Թուրքական խորհրդարութիւնը ալ կը կատաբէն, 250 հազար Թուրք հաշուելով Իսքէնդրուն - Անտիոքի չրջանին մէջ, «50,000 դաղան արիւնէ փոքրամասնութեանց հաւաքածոյ»ի մը դիմաց : Մինչդեռ, պաշտօնական վիճակագրութեանց համաձայն, Թուրքերն ու Քիւրտերը միասին կը կազմեն 74,300ի համրանք մը, 201,830 բնակչութեան մէջ...

Ի՞նչ կը թելադրէ այս կացութիւնը, հայկական տեսակէտով :

Ամէն բանէ առաջ՝ արթուն եւ պաղարիւն դիրք : Թուրքերը գիտակցաբար կը պղտորեն ջուրերը, նախ ահաբեկում ստեղծելու, յետոյ արիւնոտ խաղեր սարքելու համար :

Ձիշդ ասոր համար, զարձեալ արթուն եւ պաղարիւն դիրք :

Եւ յետոյ աւելի սերտ մերձեցում, տեղացիներուն հետ, ժողովուրդէն մինչեւ բարձրագոյն վարիչը : Մանաւանդ որ, Սուրիացիները իրենք ալ կ'ըմբռնեն Թրքական վայրահնչութեանց եւ ցնդաբանութեանց իմաստը, եւ բռնած են կորովի դիրք մը :

Այս տեսակէտէն խորապէս նշանակալից էր սուրիական պատուիրակութեան պատասխանը՝ Թուրք մամուլի հարցումներուն :

Իսկ այս բոլորէն վեր, անհրաժեշտ է տեւական ուշադրութիւն եւ ծրագրեալ աշխատանք, Փարիզէն Սուրիա եւ Հարեւան երկիրներու մէջ :

Աւելորդ պիտի ըլլար մանրամասնութեանց մէջ մտնել, այս առթիւ : Կացութիւնը, ինքնին, լաւագոյն ուղեցոյցը կը կազմէ : Շ.

Թուրքերը կը շարունակեն ապստամբ...

Ենկիւրիէն կը հեռագրեն հոկտեմբեր 5 թուականով.— Թուրք մամուլը կը շարունակէ չատ մօտէն զբաղիլ Իսքէնդրունի հարցով : Կիսապաշտօնական «Ուլուս» (նախկին «Հաքիմիյէթը Միլլիյէ») կը գրէ այս առթիւ.

— « Թուրքիա չուզեր նոր չրջաններ գրաւել կցելով Իսքէնդրունը եւ Անտիոքը, այլ կը բաղձայ միայն ապահովել ազգային խոչոչին զարգացումը, առանց որ եւ է օտար ազդեցութեան, հայրենիքի մէկ մասնիկին մէջ ուր Թուրքեր կը բնակին եւ որ պինդապարէն ի վեր կը գտնուի օտար ձեռքերու տակ» :

Շարունակելով, Թուրք թերթը դիտելով կուտայ թէ սուրիական պետութիւնը անկարող է վարելու Թրքաբնակ հողերը : Ցետոյ կ'ապրարարէ.

— « Պէտք է որ Ֆրանսա լաւ ուշադրութիւն ընէ խոտօրէն հակելու Սուրիոյ դաշնագրին Թուրք փոքրամասնութեանց վերաբերեալ տրամադրութեանց զարգացման, ԱՑԼԱՊԷՍ ՕՐ ՄԸ ԱՓԱԹԻԻՐՔԻ ԹՈՒՐՔԻԱՆ, ՈՐ ՅԵՂԱՊԱՇՏ Է, ՁՄՈՌՆԱՆՔ, ՊԻՏԻ ՊԱՀԱՆՋԷ ԻՍՔԷՆԴՐՈՒՆԻ ՍԱՆՃԱՔԻՆ ԿՑՈՒՄԸ : Եւ դիտենք որ Ալէքսանդրէթը կարեւոր նաւահանգիստ մըն է արեւելեան Միջերկրականի վրայ» :

*** Ազգերու Դաշնակցութեան 6րդ յանձնաժողովին մէջ, հոգատարութեանց հարցին քննութեան առեն, Պ. Վիչեռ, Ֆրանսայի արտաքին նախարարութեան խորհրդականը, հետեւեալ յայտարարութիւնն ըրաւ.

— « Ֆրանսայի առանձնած յանձնառութիւնները պիտի կատարուին : Եթէ նոյն իսկ Թրքական կառավարութիւնը կ'ուզէ օգտուիլ այս առիթէն, նորէն ճշդելու համար յիշեալ չրջանին փոքրամասնութեանց իրաւական վիճակը եւ նոր պահանջներ ներկայացնելու համար, բնականաբար 1921ի համաձայնութեանց չրջանակին մէջ, Ֆրանսա չի մերժեր բանակցիլ : Սուրիոյ լիովին գոհացուցիչ ընդունելութիւնը կնքուած դաշնագրին՝ մեզի յոյս կը ներշնչէ թէ եւրոպական տարուան փոխանցման չրջանը պիտի անցնի անհոգով : Ազգերու Դաշնակցութեան ամենակարեւոր յաղթանակներէն մէկը պիտի ըլլայ անկախութեան հասցնել չրջան մը ուր չահերու մրցակցութիւնը կը դժուարացնէր վերջնական կարգադրութեան մը հաստատումը » :

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

"ԴԱՇՆԱԳՐԻՆ ՀԱԿԱՌԱԿ ԸԼԼԱԼՈՎ 20.000 ՀԱՅԵՐ ԲԵՐՈՒԱԾ ԵՆ,,

«Թուրքերուն ինչքերը Հայերուն կ'անցնին»

Պոլսոյ Գուրուն թերթը կը գրէ այս վերնագրերով.—

Իսքէնդրունէն երէկ եկած անձ մը հետեւեալը պատմեց մեզի.— 1926ին, Իսքէնդրունի երեսփոխանները ժողով գումարեցին եւ որոշեցին ճչդել նահանգին ինքնավարութեան ձեւը : 48 ժամ չանցած, սակայն, նոյն երեսփոխանները հաւաքուելով փոխեցին առաջին որոշումը եւ որոշեցին միանալ Սուրիոյ խորհրդարանին : Միացման այս որոշման դէմ քուէարկեց միայն Անթաքիոյ երեսփոխաններէն եւ Դաշնակ Հայերէն Նարեկ անունով մէկը :

Անկախ Իսքէնդրունի վարչութիւնը ահա հիմնուած է այս տեսակ տարօրինակ որոշումի մը վրայ, եւ նպատակ ունի փճացնել այդ չրջանի Թուրքերը : Քանի մը փաստ յիչեմ : Ամբողջ դաշտը ամբողջովին Թրքաբնակ է : Վերջերս, «Թունուզ» դրամատունը քիչ տոկոսով փոխատուութիւն մը կ'ընէ երկրագործի մը, բայց պայման կը դնէ որ կալուածը իրեն անցնի, եթէ առաջին մասնավճարը չհատուցուի : Երաշտի կամ այլ պատճառով մը, գիւղացին չի կրնար տալ պարտքը եւ կալուածը կը փոխանցուի դրամատան :

Դրամատունը կը ծախէ կալուածը եւ Զօլաք Պետրոս ազա անուն Հայ մը կը գնէ, ինչպէս գնած է չատ մը Թուրք գիւղերու կալուածները : Եւ պայմանը որ Թուրքը աղաչելով չէր կրցած ընդունիլ տալ դրամատան, Հայը ընդունիլ կուտայ : Այս ձեւով, Թուրքերուն կալուածները Հայերուն կ'անցնին :

Սպանիոյ ապստամբ զօրքին հրամանատարութիւնը վերջնագիր մը ուղղեց Մատրիտի կառավարութեան, մայրաքաղաքին անմիջական անձնատուրութիւնը պահանջելով։ Հակառակ պարագային քաղաքը անխնայ պիտի ռմբակոծուի պահանջելով։ Առջի օր սկսած ռմբակոծութիւնը չարունակուեցաւ չորեքշաբթի օր օդէն։ Առջի օր սկսած ռմբակոծութիւնը չարունակուեցաւ չորեքշաբթի օր օդէն։ Ապստամբ օդանաւերը կարկուտի պէս ռումբ տեղացին չոգեկառքի կայարաններուն, օդակայաններուն եւ զօրանոցներուն վրայ, միեւնոյն ատեն ցրուագրեր նետելով հանդերձ, չարունակեց եւ այսօր աւելի ուժգնօրէն կը հնչեցնէ միութեան կոչը։ Անունը մէկդի նետեց, բայց բովանդակութիւնը պահեց։ Ապստամբ օդանաւերը կարկուտի պէս ռումբ տեղացին չոգեկառքի կայարաններուն, օդակայաններուն եւ զօրանոցներուն վրայ, միեւնոյն ատեն ցրուագրեր նետելով հանդերձ, չարունակեց եւ այսօր աւելի ուժգնօրէն կը հնչեցնէ միութեան կոչը։ Անունը մէկդի նետեց, բայց բովանդակութիւնը պահեց։

Տակաւին կիրակի օր, Փարք ոէ Փրէնսի մարզարանին մէջ տարբուած ժողովին առթիւ, Մորիս Թորէզ կ'ազդարակէր.

*Ֆրանսական ճակատ» կազմելու առաջադրութիւնը, երբ համոզուեցաւ թէ ընկերվարական կուսակցութիւնը վճռապէս կ'ընդդիմանայ։ Սակայն, բանաձեւը մէկդի դն

ՆԱՄԱԿՆԵՐ ՊԵԼՃԻԱՑԻՆ

ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ.— ՆՈՐԷՆ ՌԷՔՍԻ ՅԱՐԺՈՒՄԸ

Ինչպէս «Յառաջ» հաղորդած էր, վերջերս տեղական կառավարութեան հրամանով բազմաթիւ խուզարկու - թիւններ ու ձերբակալութիւններ կատարուեցան Պելճիոյ զանազան քա - ղաքներու, մասնաւորապէս յեղափո - խական կեդրոններու մէջ,— Պրիւսէլ, Անվերս, Լիէժ, Մոնս, Նամիւր, Շարլռուա, Մալին, Թիլլի, Ժրմաթ, եւն.: Խուզարկութիւններ կատար - ուեցան նաեւ բնակելարական գրա - սենեակներու եւ ֆաշական շրջանակ - ներու մէջ:

Այդ առթիւ երեւան հանուեցաւ գո - յութիւնը թրոցքիական բաւական կա - րեւոր չարժումի մը, որ տեւական յա - րաբերութեան մէջ էր օտար յեղափո - խական շրջանակներու հետ, եւ կը ձգ - տէր ապստամբութիւն յառաջ բերել Պելճիոյ մէջ, միեւնոյն ատեն քան - դելով Պելճիոյ ընկերվարական եւ համայնավարական կուսակցութիւն - ները: Փակագիծի մէջ ըսենք թէ պելճ համայնավարները, որոնց պետն է Ժանօթ գործիչ Ժաքքմօթ, հետեւող են ստալինեան յեղափոխութեան, մինչդեռ Թրոցքիի կուսակիցները կը ձգտին համաշխարհային յեղափո - խութեան:

Թրոցքիական չարժումին իրրեւ կա - րեւոր պարագրւթիւններ ձերբակալուած են՝ Վալթէր Տօժ անունով հանքա - գործ մը, որ յունիսի գործադուլին վարիչն էր, ինչպէս նաեւ Ժօրժ Վէրէ - էքքըն, չարժավար մը, թունդ Թրոց - քիական: Այս վերջինը յայտարարած է օրագրողի մը.

— «Յեղափոխութիւնը որոշ թուա - կան չունի, ան ծագում կ'առնէ դէպ - քերու պատմական ուժով, օր մը չէ օր մը պիտի պայթի ապստամբու - թիւնը: Յեղափոխական չարժումնե - րը կրնան ընդհատուիլ, բիրտ ուժը կրնայ սանձ դնել յեղափոխութեան, սակայն չի կրնար զայն կասեցնել: Դ. Միլիոդայինը, զոր մենք Թրոցքիա - կաններս պիտի կերտենք, պիտի իրա - կանացնէ այն մեծ յեղաշրջումը, զոր մեր նախորդները չկրցան գլուխ հա - նել: Մենք ապահով ենք մեր վերջնա - կան յաղթանակի մասին»:

Հունգէք անուն սպանիացի համայ - նավարի մը տան մէջ գտնուեցան կա - կաճելի թուղթեր եւ երեւան եկան բազմաթիւ դէնքեր, որոնք Սպանիա կը ղրկուէին:

Անվերսի նաւահանգիստին մէջ ոս - տիկանութիւնը խուզարկեց դէնքերով լեցուն փոխադրանաւ մը, որ իրրեւ թէ ապակեղէն պիտի փոխադրէր Համպուրգ: Ապակեղէնի տեղ, երե - ւան եկաւ մեծաքանակ դէնք: Օսթանտ մէջ ալ երեւան հանուեցաւ զնդա - փիրներու եւ հրացաններու կարեւոր մթերք մը:

Քնութիւնները կը չարունակուին: Արդիւնքը առ այժմ գաղտնի կը պահ - ուի, մինչեւ որ երեւան հանուին թա - քուն կազմակերպութեան գործունէ - թեան բոլոր ներքին ծալքերը:

** Պելճիոյ ֆաշական չարժումը, որու մասին ուրիշ անգամ առիթն ու - նեցած եմ խօսելու, սկսած է բաւա - կան ծաւալիլ, առաջնորդ Լէոն Տէկ - րէլի յանդուգն ու կորովի ջանքերուն շնորհիւ, հակառակ ընկերվարական եւ համայնավար կուսակցութեանց բուռն ընդդիմութեան:

Անցեալ երեքշաբթի Ռէքսի կուսա - կիցները մեծ միթինկ մը կազմակեր - պած էին Սըրէնկի մէջ, Լիէժի մօտ, որ բանուորական կարեւոր կեդրոն մըն է: Տէկրէլ պիտի բանախօսէր պը - դնձի խոշոր հին գործարանի մը մէջ, ուր մասնաւոր հրաւիրատոմսերով քանի մը հազար հոգի պիտի հաւաք - ուէին, լսելու համար առաջնորդին խօսքերը: Միւս կողմէ, ընկերվարա - կաններն ու համայնավարները լուրջ պատրաստութիւններ տեսած էին ա - մէն գինով արգիլելու համար հաւա - քոյթը: Վերջին պահուն, Սըրէնկի քաղաքապետը, կանխելու համար խը - ռովութիւնները, արգիլեց միթինկը, սրահին խարխուլ վիճակը պատրուակ բռնելով:

Նոյն միջոցին Տէկրէլ, որ Պրիւսէլ կը գտնուէր, վերահասու ըլլալով քա - ղաքապետին կողմէ դրուած ապաժամ արգելքին, չոգեմակոյկ մը վարձեց, եւ խումբ մը կամաւորներով ճամբայ ելաւ դէպի Սըրէնկ(*): Հոն ցամաք պիտի ելլէր եւ իհարկին քաղաքին կեդրոնը հրապարակի մը վրայ պիտի արտասանէր իր ճառը, որ բարձրա - խօսով պիտի լսուէր ամէն կողմ:

Երբ չոգեմակոյկը հասաւ Սրէնկի նաւամատոյցը, Ռէքսի կուսակիցնե - րը, որոնք անհամբեր իրենց առաջ - նորդին գալուստին կը սպասէին, ըս - կսան միահամուռ ու բարբարոսային կանչեր արձակել: — «Լեցցէ՛ Տէկրէլ, «Ռէքսը պիտի յաղթանակէ»: Տէկրէլ կամրջակին վրայ, վէս ու խրոխտ կեցուածքով մը, իր եղբայրական ող - ջոյները հաղորդեց Ռէքսի համակիր - ներուն եւ բուռն կոչ մը ուղղեց Սը - րէնկի բանուորական դանգուածնե - րուն: Ձիշդ նոյն պահուն, համայնա - վարները, որոնք դիրք բռնած էին ջրանցքի երկու եղերքներուն վրայ, սկսան երկաթի կտորներ տեղացնել կամրջակին վրայ, միեւնոյն ատեն ամէն անկ ատրճանակի գնդակներ արձակուեցան, որուն հետեւանքով քանի մը հոգիներ վիրաւորուեցան, իսկ Ռէքսի պետերէն Ժէրար Վիլէ - մըս արիւնլուայ վիճակի մը մէջ գե - տին ինկաւ: Մինչ այս մինչ այն, ոս - տիկանութիւնը վրայ հասնելով, յան - ցանքի վրայ ձերբակալեց քանի մը համայնավարներ, եւ ամբոխը ցրուե - լով, խաղաղութիւնը վերահաստատ - ուեցաւ: Վիրաւորեալները տեղին վր - րայ դարմանուեցան, իսկ Ժէրար ծա - նրը վիճակի մը մէջ հիւանդանոց փո - խադրուեցաւ:

Պրիւսէլի եւ դաւառներու մէջ յամա - խադէպ են նմանօրինակ դէպքերն ու կռիւները:

Ռէքսերը ուժգին պայքար կը մղեն խռացնելու համար իրենց շարքերը: Պրիւսէլի մէջ մարդ յաճախ կը հան - դիպի Ռէքսի ծանուցումներուն: «Le pays réel», Ռէքսի պաշտօնական օրգա - նը ձրի կը տրուի անցորդներուն: Այդ թերթին մէջ խստիւ կը քննադատուին ու անխնայ կը ձաղկուին բոլոր կու - սակցութեանց պատկանող քաղաքա - կան մեծ դէմքերը, մինչեւ իսկ վար - չապետն ու կառավարութեան անդամ - ները: Թերթերը լեցուն են դատական հետապնդումներով եւ դատապար - տութիւններով:

Սակայն հակառակ բարոյական ու նիւթական այս բոլոր դժուարութիւն - ներուն ու զոհողութեանց, Ռէքսի կուսակցութիւնը բաղդատաբար քիչ արդիւնք ձեռք բերած է, որովհետեւ չատ դժուար է քաղաքական սկզ - բունքներ ներմուծել Պելճիոյ պէս ա - զատ ու ժողովրդավար երկիրի մը մէջ:

Պարադոքս նոյնն է նաեւ համայնա - վարութեան համար: Պելճ ժողովուր - դին չափազանց մեծամասնութիւնը քաղքենի է ու բարեկեցիկ, մէջն ըլ - լալով նաեւ գործաւոր դասակարգը:

ՀՐԱԶԵՍՑ ՏԷՐՕՍԿԻ

(*) Պրիւսէլ հակառակ ցամաքային բաղաք մը ըլլալուն, ունի իր ցաւա - հանգիստը եւ ցաւարկելի ջրանցքը, այնպէս որ Պրիւսէլէն մինչեւ Անվերս եւ ուրիշ բաղաքներ կարելի է շոգե - մակոյկով ճամբորդել:



ՄԻՀՐԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Երկարատեւ եւ տաժանելի հիւան - դութենէ մը վերջ, սեպտեմբեր 16ին Թաւրիզի մէջ մեռաւ Հ. Ց. Դաշնակ - ցութեան անձնուէր եւ տաղանդաւոր համեստ գործիչներէն մէկը — Միհ - րան Գրիգորեան:

Ծնած էր Տարօն Տուրուբերանի Հարք (Բուլանըղ) գաւառի Մաղիտլու գիւղին մէջ 1881ին: Գիւղական բարե - կեցիկ եւ նահապետական ընտանիքի մը զաւակ էր: Տարրական կրթութիւ - նը ստացաւ Հոփ աւանի դպրոցին մէջ եւ այնուհետեւ ինքնաչխատութեամբ զարկ տուաւ իր զարգացման:

Պատանի հասակէն մտաւ Հ.Ց.Դաշ - նակցութեան չարքերուն մէջ եւ առա - ջին չրջանէն իսկ դաստիարակուեցաւ Տարօն աշխարհի եւ մեր յեղափոխու - թեան սքանչելի գործիչ Հրայրի չունչով, անոր խորհուրդով չարժեցաւ եւ չատ բան իւրացուց Հրայրի բարե - մասնութիւններէն: Գիտցաւ աշխա - տիլ անձնուիրաբար: Իր կեանքը աշ - խատանք ու տառապանք եղաւ. ամէն տեղ, երկրէն մինչեւ Կովկաս եւ Իրան: Իրրեւ յեղափոխական եւ հա - մեստ գործիչ երկու անգամ բանտարկուեցաւ Մուշի մէջ՝ 1905ին եւ 1914-ին: Հայկական մեծ եղեռնէն կրցած էր հրաշքով ազատիլ իր ընտանիքով եւ անցնիլ Կովկաս, ուր չծուեցաւ գաղթականական աշխատանքներու: Հայաստանի Հանրապետութեան տա - րիներուն (1918—1920) Ալէքսանդրա - պոլի, Նոր Բայազէտի մէջ եւ այլուր խնամատարութեան նախարարու - թեան գործերուն մէջ պատասխանա - տու պաշտօններ վարեց, ամէն տեղ ցոյց տալով անձնուէր եւ բարեխիղճ աշխատանք:

Փետրուարեան ապստամբութենէն չետոյ (1921 ապրիլ) անցաւ Իրան. Թաւրիզ: Ատրպատականի Հայոց Ա - ռաջնորդարանի կողմէ նշանակուե - ցաւ Ղարատաղ գաւառի գիւղական դպրոցներու չրջանային տեսուչ եւ այս պաշտօնը վարեց մօտ ութ տարի: Նա գիւղական միջավայրի մէջ բազ - մաեռակ արդիւնաւոր աշխատանք - ներ կատարեց եւ արժանացաւ գիւղա - չիներու անվերապահ համակրանքին եւ վստահութեան: Իր պաշտօնավա - րութենէն առաջ Ղարատաղ գաւառի երեք գիւղերուն մէջ միայն դպրոց - ներ կային, իսկ երբ Միհրան նշանակ - ուեցաւ չրջանային տեսուչ՝ դպրոցնե - րու թիւը բարձրացաւ 12էն 15ի: Ղա - րատաղի գիւղերուն մէջ Միհրան ժո - ղովրդական դեկավարի եւ գաւառա - կան գործիչի իր ընդունակութիւննե - րը եւ կազմակերպելու, աշխատելու անսպառ եռանդը երեւան բերաւ: Գիւ - ղական վէճերը կը վերջացնէր առանց աղմուկի եւ կ'արժանանար կողմերու գոհունակութեան: Գիւղ գիւղ կը չր - ջէր եւ կը հսկէր դպրոցական, եկեղե - ցական, կուսակցական ամէն տեսակ գործերու անթերի կատարման: Կը տառնար չատ համեստ ամոսական մը, որ հազիւ կ'ապրեցնէր իր բազմանդամ ընտանիքը: Տարիներ չարունակ ան - տեսական չատ ծանր եւ անհնարին պայմաններու մէջ, տառապանքով ու դրկանքներով լի ապրուստ ունեցաւ իր ընտանիքը:

Միհրան 1931—1934 թուականնե - րուն նշանակուեցաւ Սուլթանապատի չրջանի գաւառական դպրոցներու չր - ջանային տեսուչ եւ նոյն եռանդով եւ անձնուիրութեամբ աշխատեցաւ նաեւ այդ չրջանին մէջ ձեռք բերելով ժողո - վուրդի ընդհ. համակրանքն ու պո - հունակութիւնը:

Մուղիստան (Հարաւային Իրան) Ա.Համ քաղաքի Հայոց ազգային դպ - րոցի տեսչութեան պաշտօնով հոն մեկնեցաւ Թաւրիզէն՝ 1935ի աշնան: Ա.Համի տաք եւ անառողջ կլիման կա - մաց կամաց ազդեց անոր առողջու - թեան վրայ, մինչեւ որ հիւանդութեան ծանր հարուածը, (Լրդողութիւն) Ան - կողին ինկաւ: Բժիշկներ Բ. եւ Ա. Բաղդասարեաններ, Ս. Եղիազարեան, Ռուբէն Տէր Սահակեան եւ Զարեհ Փիլոսեան կարելին ըրին դժբախտ Միհրանը փրկելու, բայցանոգուտ:

Մօտ երկու-երկուկէս ամիս սոսկալի տառապանքներ քաշելէ չետոյ, բոլո - րիս սիրելի Միհրանը սեպտ. 16ի ե - րեկոյեան յաւիտենապէս փակեց իր աչքերը, խոր սուգի ու թշուառու - թեան մատնելով իր այնքան տանջը - ւած հարազատները (կինը եւ հինգ զաւակները):

Յուղարկաւորութիւնը (17 սեպտ.) եւ թաղումը (18 սեպտ.) կատարուե - ցան արժանապէս: Առաջնորդարան, աղգային դպրոցներ, Հայր. Միու - թիւններ, ընկերներ, մտերիմներ եւ հարազատներ պատերուն փակցուցին 14 մահազդներ: Մահուան մասին հե - ռագիրներ տրուեցան Իրանի քանի մը քաղաքներ: Սեպտեմբեր 18ին, առա - ւօտեան պատարագին, Ս. Սարգիս Ա - կեղեցին լեցուած էր յուղարկաւորնե - րու խումն բազմութեամբ: Պատարա - գէն յետոյ առաջնորդ Ներսէս արք. յուզիչ դամբանականով մը ներկայա - ցուց հանգուցեալ Միհրանի բարե - մասնութիւնները՝ իբրեւ մարդ եւ ժո - ղովրդական գործիչ: Ապա դագաղը դրին Հ. Ց. Դաշնակցութեան յուշար - ձանին առջեւ, ուր դամբանական խօսեցան բժ. Բ. Բաղդասարեան եւ Հայկ Ա.Եմեան: Ցուղարկաւորներու բազմութիւնը լուռ ու վչտաբեկ՝ հե - տեւեցաւ դագաղին մինչեւ գերեզմա - նատուն, ուր դամբանական խօսեցան Դաւիթ Փափազեան եւ Արսէն Խաչիկ - եան: Հայկ Ա.Եմեան կարդաց Թէհրա - նէն եւ Սուլթանապատէն ստացուած 12 ցաւակցական հեռագիրներ — այս - պէս.

Թէհրան.— «Ալիք»ի խմբագրու - թիւն (ներկայացուցիչ Հ. Ա.Եմեան) ընկերներ (ներկայացուցիչ Սամսոն Թադէոսեան), Վարոս Բաբայեան, Ա - լէքսան Մովսէսեան, Ցարութիւն Պա - բոյեան, Մխիթար, Արամ Յովհան - եան, Ասլան եւ Տիգրան Գուլումճեան: Վարչութիւն, Կանանց Կրթասիրաց Սուլթանապատ.— Եկեղեցական Միութիւն, Ազգ. դպրոցի հոգաբար - ձութիւն եւ Օննիկ Վարդապետեան, Եղիա Եղիայեան, Արմենակ Մաքսա - պետեան, Արշաւիր Գապանճեան, Ա - դամ Գրիգորեան եւ Արամ Ադաբէկ - եան:

Ընկերներու կողմէ դագաղին վրայ դրուած էր թարմ ծաղիկներով մեծ պսակ մը, հետեւեալ մակագրու - թեամբ.— «Սիրելի Միհրանին՝ ըն - կերներից. 16 սեպտ. 1936»: Միհրա - նը թաղուեցաւ Մակուեցի Մեսրոպի եւ Գասպար Ճակոբեանի մօտ — և - րեքն ալ գաղափարի, աշխատանքի եւ տառապանքի ընկերներ:

Ինչպէս յիչեցի, Միհրանի ընտանի - քը նիւթական չատ ծանր վիճակի մէջ կը գտնուի: Թաւրիզի մէջ հանգամա - կութիւն կատարուեցաւ: Կը մնայ որ արտասահմանի մէջ մասնաւորապէս Տարօն Տուրուբերանի Հայր. Միու - թիւնները ալ նիւթական օգնութեան հասնին դժբախտ ընտանիքին:

Միհրանի գործունէութեան եւ անձ - նուէր աշխատանքներու մասին ան - չուշ ուրիշներն ալ՝ ընկերներ ու մտերիմներ ըսելիքներ ունին: Կար - ծեմ հանգուցեալը գրած է իր յուչե - րը եւ Տարօն Տուրուբերանի դէպքե - րը՝ 1915—16 տարիներու ընթացքին:

ՄԱՅԻՍ

ՄԻՄՈՂ

Գործաւոր մը արկածով մեռած էր, անօրէնը Մարսէյլի բանուորի մը առաջարկեց խեղճ մարդուն մար - մինը իր տունը տանիլ, յանձնարա - րելով որ նախազգուչութեամբ իմա - ցնէ կնոջը:

Տնօրէնը.— Ի՞նչպէս եղաւ:

Մարսիլիացին.— Գացի դուռը զար - կի, մարդ չբացաւ, կինը բացակայ էր, ես ալ մարդը իրր թէ նստած ի պէս դրան կրծնցուցի որ երբ կինը գայ չվախնայ:

Տնօրէնը.— Արդէն Մարսիլիացինե - րուն խելացի ըլլալը գիտէի, բայց ոչ այս աստիճան:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ ՖՐԱՆՑ ՎԵՐՖԷԼԻ

(Աւստրիացի մեծանուն գրագէտին)

— · —

Լէ Նուվէլ Լիթէրէռի աշխատա - կիցներէն Ռօպէռ տը Սէն Ժան կը գրէ վերջին թիւին մէջ. —

Վերջապէս, Ֆրանսերէն հրատա - րակուեցաւ Մուսա Լեռան Քառասուն Օրերը: Աւստրիացի մեծանուն գրա - գէտի մը կողմէ գրուած այս գիրքը, որուն գործողութիւնը կ'անցնի Հա - յաստանի մէջ, ծայր աստիճան չա - հագրգռեց Մ. Նահանգները, ուր այդ գիրքին վաճառումը երկար ամիսներ անմրցելի մնաց, եւ նիւթը ինչքան մտաւորականներուն նախընտրելի խո - սակցութեան առարկայ:

Չեմ գիտեր թէ մեր մէջ, Ֆրանսայի մէջ, ինչ ընդունելութիւն վերապահ - ուած է Մուսա Լեռան, զոր փէդ Պ - նուա կը ներկայացնէ Ֆրանսացի ըն - թերցողներուն, բայց գիտեմ թէ վէր - ֆէլ որպիսի՛ մտահոգութեամբ կը սպասէ քու գառաստանիդ, ո՛վ գե - րիշեան հասարակութիւն: Տակաւին աչքիս առջեւն է, հոն եղածիս պէս, ամրան քունին տակ ընկճուած վերջ քաղաքը, սովորական եւ ամայի պահ - ղոկը, եւ յարդարանքի զոյն ման - րամասնութիւններն անգամ, որոնք մէջ, մթաստուեր կէս օրէ մը վերջ, անակնկալ այցելութիւն մը ստա - կըսկոր չրջապտղի մը, կլոր մուչ - տակ մը հագած, եւ աստրախանի ձե - ւով գարճեալ կլոր գդակով մը գլու - խը ծածկած, որ ոչ այլ ոք էր՝ եթէ ոչ ինքն Վերֆէլ: Ժամը մէկն էր վէչընական: Ձիւն տեղացած էր մեր չուրջը, նոյնքան նաեւ վիէնական ֆիլմերուն մէջ, նոյնքան ալ Շնից - լըքի վէպերուն մէջ, որքան մեղմաղ - ձոտ որ կրնայ ձիւնել երկրի մը վը - րայ՝ որ ենթարկուած է ճակատա - գրին անողոք հալածանքին, եւ որ ա - կայն չի դադրիր ժպտելէ, հակառակ իր բերանաբաց վէրքին՝ ուրկէ կը սպառի իր արիւնը:

Վերֆէլ անմիջապէս ըսաւ ինձի, Ֆրանսայի վրայ մտածելով.

— Կը կարծէ՞ք որ իմ գիրքս պիտի հետաքրքրէ Փարիզը:

Ցետոյ, առանց պատասխանի մը սպասելու.

— Գիտէ՞ք արդեօք որ այս գործին հրատարակութենէն ետքը մահուան հարիւրաւոր սպառնագրեր ստացայ:

Վերֆէլ՝ ծնունդով Հրեայ եւ կա - թոլիկութեան դաւանափոխ, հակա - սակորդներ ունի ոչ սակաւ տոհմերու (clan) մէջ ...

— Թուրքերն են որ կեանքիս եռե - ւէն ինկած են, կը բացատրէ Վեր - ֆէլ: Չկրցան մարսել այն մանրա - մասն նկարագրութիւնը՝ զոր ըրած եմ հայկական չարդերու մասին ...

— Այդ նկարագրական մասը չէ արդեօք, որ այնքան սաստիկ հետա - քրքրութիւն առաջ բերած է ձեր Ամե - րիկացի ընթերցողներուն մէջ:

— Այդ մասին բան մը չեմ գիտեր... Իմ գիտցածս այն է որ ես լուսանկար - չութեան համար չէ որ կը գրեմ:

Վերֆէլ քիչ մը կը զայրանայ, եւ առանց ծածկելու կ'արտայայտուի: Իմ գործերուս իւրաքանչիւրին մէջ իր - բատպոյքը (réalisme) արտաքին ձեւ մըն է միայն: Ահա կը խոստովանիմ որ ես կը հետապնդեմ տեսածներուս տառական ներկայացումէն աւելի

ԿԱՐՄԻՐ ՍՈՒԼԹԱՆԻՆ ԵՐՋԱՆԻԿ ՕՐԵՐՈՒՆ

— · —

Կալիօպէի աչքը մտնելու համար՝ ինքզինքը ներկայացուց իբրեւ ախոյ - եան մը Մէդալի Խոէահին, այսինքն Բիւզանդիոնին հելլէնութեան վերա - դարձին մեծ գաղափարին: Եորղիա - տիսի, Լրպոյի եւ Վիքթոր Պէրտէի գործերը ծայրէ ծայր կարդաց եւ սորվեցաւ Իսաւրացիներուն, Մակե - դոնացիներուն եւ Կոմնենեանց, Գան - թակուզէնեներուն՝ եւ Պալէոլոգնե - րուն պատմութիւնը:

Բայց այս ամբողջ գեղեցիկ նախան - ձախնդրութիւնն ու եռանդը բանի մը չծառայեցին:

Սիրային այս գինախպութեան մէջ իր ձախողուածներէն ապշահար, Պը - ռիաք պայքարը լքելուն վրայ կը խոր - հէր, երբ բուն գինախպութեան վայրկեանը օգնութեան հասաւ իրեն:

Այն առիւները, Բերա, Ալիանս Ֆը - րանսէզ չէնքին ներքնայարկին մէջ գինավարժութեան յատուկ խոտ լաւ կազմակերպուած սրահ մը կար: Օրին մէկը, Պոխաք իմացաւ որ Կալիօպէի եղբայրը Սօֆօքլը Մավրօկէնի, այդ սրահին մէջ ջերմեռանդներէն մէկն էր: Սպան միտքը դրաւ արձանագր - ուիլ հոն, ընաիր միջոց մը, կը խոր - հէր, աւելի առաջ երթալու ընտանի - քին մտերմութեան եւ բարեհաճու - թեան մէջ: Մնաց որ սպան առաջին կարգի սիրող մըն էր սրախաղութեան, արդէն Զինական Նաւարաժնին մէջ սրախաղութեան ախոյեան էր նախա - պէս: Բախտը չուտ բանեցաւ, ամէնքը կը նկատէին զայն առաջնակարգ նի - ւոթով մըն ալ, մինչեւ իսկ սկսաւ պի - ղատներ ընել երիտասարդ Սօֆօքլին, որ մինչեւ այն ատեն սրահին անպար - տելին կը համարուէր: Պոխաք կը ձե - ւացնէր թէ անկարող է Սօֆօքլի հար - ուածներուն հակադարձել: Ո՞վ չի նե - րեր սիրածին եղբօրը եւ չի կակուղ - նար անոր առջեւ: Վատաբար, ամէն մէկ յարձակումի, Պոխաք պարտուած կը յայտարարէր ինքզինքը:

Չմեռը անցաւ, Պոլսոյ խոտ ձմե - ռը, զոր գիշեր ցերեկ կ'աւլէ փոդոց - ները ճահիճի վերածող անձրեւներով եւ ձիւներով բեռնաւորուած սաստ - կիկ քամին: «Մուէթթ» կարճատեւ մի - ջոցներով միայն կը հեռանար Թօփհա - նէէն՝ անով փոքրիկ պտոյտ մը կա - տարել տալու համար Վոսփորի եւ Մարմարայի մէջ դեսպանին պատ - ուաւոր հիւրերուն, որոնց հպարտու - թիւնը կը ղգար ցոյց տալով իր ղբօ - սանաւը եւ սպաները: Իսկ Պոխաք, երբ պահականաւը սովորական խա - րիսխին կը դառնար, իր պարապոյ ժամերը կ'անցընէր Ստամպօլը տես - նելով ու կրկին տեսնելով անոր մզ - կիթները, պարիսպները, անոր պալատ - րը, Բերայի զարձզարձիկ Տէրվիշնե - րուն եւ Սկիւտարի կաղկանձող Տէր - վիշներուն թէքքէները: Օդը զեղեցիկ եղածին պէս՝ Ոսկեղջիւր կը բարձրա - նար եւ եւրոպական ջուրերը կ'երթար «Մուէթթ»եան մակոյկով: Կալաթայի, ինչպէս նաեւ Բերայի մէջ, այլ եւս ձանձրացած էր մեծ զուբսերուն բո - լոր հանդիսական պտոյտները դիտե - լով, նոյն իսկ նոդկանք կը զդար այլ եւս: Եւ իրաւցնէ մեռնելու չափ ձան - ձրոյթ պիտի իմանար, եթէ առիթ չունենար յաճախ պատահելու իր սի - րական եւ հեչտասիրտ Կալիօպէին, որ միչտ ժպտուն էր, բայց դիմքը չրջա - պատող հացկատակներէն անրաժան:

Ու եկաւ գարունը եւ Վոսփոր սկսաւ թաւալիլ հրաչալի կիտուածներ: Գապ - տուտուն իրիկնամուտներ՝ որոնք մի - գտարար չղարչով կը պատեն Սա - բայ Պրունիի պարտէզները, մդիճներ - րու գմբէթները եւ անոնց խրոխտ մի - նարէները, նաեւ ծիրանեվառ իրիկնա - մուտներ՝ որոնք Ոսկեղջիւրը հրեղէն գետի մը եւ Ստամպօլը հրդեհակէզ քաղաքի մը կը փոխարկեն: Բոլոր մտաղ ընձիւղները արձնցան եւրո - պական եւ ասիական եղերքի եալընե - րուն պարտէզներուն մէջ, եւ նախընծայ ծաղիկները ծայր տուին Թիւբ - պէկներու բակերուն մէջ, ուր թաղ - ուած են սուլթաններն ու սուլթանու - հիները, որոնց հոգին գացած զուգոր - դուած է Ողորմած Ալլահին դրախ - տին: Ֆրէնքներուն համար, որոնք Փատիշահին հպատակ չեն եւ Արեւ - մուտքի տխուր գլխարկը կը դնեն ֆէսին կամ փեթթոցին տեղ, եւ բա - նեներուն համար զուարճութեան և - դանակը վերջացած էր: Ոչ եւս պա - րեր եւ պինավարժութեան փորձեր: Ամէն օր, ճաչէն առաջ, Պոխաք կը չափչփէր Բերայի մեծ փողոցը, զոր երկու կողմի վրայ կը զարդարէին կրպակներ Փարիզ եղածին նման, եւ այս փողոցը միակ ճամբան էր՝ ուր բարձր դասու տիկին մը դուրս կ'ելլէ իր կառքէն եւ քանի մը քայլ հետիո - տըն կրնայ առնել բազմերանգ ամբո - խին արմկումին մէջ: Ամէն տօնի եւ կիրակի օրեր կալիօպէ հոն կը դտնը - ւէր, բարեւ մը, ժպիտ մը, քանի մը բառ, խոտ կարճառօտ: Սպան կը սկսէր յոյսը կտրել:

Վերջապէս եղաւ ամառ, եւ ամէնքը սկսան չուել դէպի զովացիկ գիւղա - գնացութիւններ: Ցուլիսի առաջին օրերուն «Մուէթթ» թողուց իր ձմեռ - նային կայքը եւ եկաւ պարան նետել Թարապիա:

Վերին Վոսփորի եւրոպական եղեր - քին մէկ փոքրիկ ծովախորշն է ան, եւ այս դուղնաքեայ աղեղնաձեւ կոր - ուածքը կախարդիչ տեսարան մը ու - նի: Ցոյներով ու Հայերով լեցուած, հինաւուրց գիւղ մը փայտաչէն տու - ներով, զոր ժամանակը գորշ արծա - թով մը ներկած է: Ափունքն ի վեր կանաչ բլուրներուն եւ ջուրի երե - դին մինչեւ կարգ ըստ կարգէ կուգան ամարանոցներ եւ քէօչկեր իրենց պարտէզներով, դէպի ծովուն հայե - լին կորացած դասիթախ, մեծդի լայ - նատօսիներուն, զալարազարդ նոճի - ներուն, ընկուզենիներուն, չոմխեն - րու, վարդենիներու եւ հսկայարերձ փուքսիաներու մէջ:

Ծովածոցը կը պատապարէր չորս պահականաւեր: Մէջտեղը ցցուած էին իտալական Մէսաջրը, գերմանական Լօրելէյ եւ անգլիական Իմբրին: Մուէ - թի խարսխակալքը ճիշդ եղերքին կը գտնէր, այնքան մօտ անոր որ փոքր չարժումի մը առեն երբեմն անոր ցոուկը անզգուչութեամբ հայ նպա - րավաճառի մը խանութին պատուհա - նէն ներս կը թափանցէր ... կամրջա - կով մը գրօսանաւը ցամաքին կը կպ - չէր: Մօտը կար թրքական ազդանաւ մը որուն անունը ոչ ոք գիտէր: Սուլ - թանին ամբողջ նաւատորմին պէս, զայն ալ յաւէտ անչարժ ըրած էին, խմաստուն նախազգուչութիւն, որով - հետեւ ... կրնար յանկարծ չարժիլ, եւ երթալ ռմբակոծել Ն. համիտական Վեհափառութեան պալատը: Սուլթա - նը կրնար հանգիստ քնանալ, որով - հետեւ իր նաեւրուն բոլոր անուաւոր ղեկերը հանուած էին եւ կը զարդա - րէին ծովային նախարար Հասան փա - շայի եալըին պարտէզները ...

(4)

(Շար.)

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ՀԱՎԱՔԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Հայկական հարցի շուրջ պատմական փաստերը հավաքելու անհրաժեշտության մասին մեր հրապարակած յօդուածը մեծ հետաքրքրութիւն է առաջացրել մեր ընթերցողների մէջ։ Ստանում ենք նամակներ, որոնցում նրանք հայտնում են իրենց կարծիքը այդ հարցի մասին։ Ներկայացնում ենք մի քանի նամակներ։

**Ա. Ա. Ա.

Դրամական կացութիւնը Իտալիոյ մէջ

Իտալական դրամին արժեզրկման հետ, կառավարութիւնը հրատարակեց չարք մը հրամանագիրներ, չարաշահութիւնը արգիլելու եւ ուրիշ ծրագիրներ յաջողցնելու համար: Բացուած է փոխառութիւն մը՝ եթովպիոյ ծախքերը հոգալու համար: Անշարժ կալուածներու վրայ հաստատուած փոխառութիւնէն ազատ են պետութեան, արքունիքին, ֆաշական կուսակցութեան, կ. Խաչի, օտար ընկերակցութեանց, ինչպէս եւ կրթական եւ բարեգործական հաստատութեանց կալուածները: Փոխառութեան ծանրութիւնը պիտի կրեն անհատ սեփականատէրները: Նոյն խստութեամբ պիտի գործադրուի առեւտրականներու կերութեանց չահաբաժիններուն վրայ հաստատուած յաւելուածական տուրքը, բացի 10 առ հարիւր սովորական տուրքէն:

Միւս կողմէ, ապրուստի սղութիւնը արգիլելու համար, Մուսոլինի հրամայած է խիստ միջոցներ ձեռք առնել: Անոնք որ ապրանքներ կը դիզեն եւ չարաչահութիւն կ'ընեն, մինչեւ 100 անգլ. ոսկի տուգանքի պիտի դատապարտուին իւրաքանչիւր յանցանքի համար: Աւելի ծանր պարագաներու մէջ են թակայ են մէկ տարի բանտարկութեան: Արգիլուած է աւելցնել պանդոկներու եւ ամէն տեսակ հիւրանոցներու գիները, մինչեւ երկու տարի: Անսաստող ները պիտի դատապարտուին տուգանքի, բանտարկութեան եւ իրենց հաստատութեանց փակման, 5 — 30 օր, իւրաքանչիւր յանցանքի համար: Արտակարգ յանձնախումբեր կազմուած են, այս տնօրինութեանց հսկելու համար, ամենալայն իրաւասութիւններով:

Գերմանիա պիտի մհկուսացուի՞

Ազգերու Դաշնակցութեան երմտական յանձնաժողովի չորեքշաբթի օրուան նիստին մէջ, Զեխոսլովաքիոյ, Զուիցերիոյ, Հոլանտայի եւ Ճունաստանի ներկայացուցիչները սպառնացին Գերմանիան զրկել ղրամներու արժեզրկման չնորհիւ բացուելիք առեւտրական պատեհութիւններէն, եթէ Պերլին չփոխէ իր դրամական քաղաքականութիւնը: Այս չորս երկիրները Գերմանիոյ յաւագոյն յաճախորդներն են, սովորական պարագաներու մէջ: Զեխական պատուիրակը միեւնոյն ատեն անհրաժեշտ գտաւ բանուկ համաձայնութիւն մը կեդրոնական Եւրոպայի երկու խմբակցութեանց՝ Փոքր Համաձայնութեան եւ Իտալիոյ, Հունգարիոյ եւ Աւստրիոյ միջեւ, տնտեսական յարաբերութիւնները բարելաւելու համար:

Մուսոլինի իր փեսան կը դրկէ Պերլին

Կոմս Զիանօ, Իտալիոյ արտաքին նախարարը, որ Մուսոլինիի փեսան է, պաշտօնապէս Պերլին պիտի երթայ հոկտեմբեր 20ին: Հռոմի մէջ մեծ զգուշաւորութիւն կը տիրէ այս ճամբորդութեան նպատակներու մասին: Լաւ տեղեակ չրջանակներու մէջ կը կարծեն թէ Կոմս Զիանօ պիտի խորհրդակցի Հիթլէրի հետ՝ Լոքառնոյներու յառաջիկայ ժողովի մասին, պիտի քննէ Աւստրիոյ խնդիրը եւ պիտի լսէ Գերմանիոյ տեսակէտներու Ազգերու Դաշնակցութեան մասին: Միեւնոյն ատեն պիտի բացատրէ թէ Իտալիոյ արտաքին քաղաքականութիւնը չէ փոխուած եւ թէ իտալւագերմանական բարեկամութիւնը կը մնայ նոյնքան ամուր որքան վերջին 12 ամիսներու ընթացքին:

Կոմս Զիանոյի առաջին պաշտօնական այցելութիւնն է այս եւ կարգադրուած՝ բուն իսկ Մուսոլինիի կողմէ: Հաւանական է որ կոմսը Հիթլէրի բացատրէ նաեւ Մուսոլինիի տեսակէտները՝ համայնավարութեան մասին: Մուսոլինի եւս նոյնքան հակառակ է համայնավարութեան որքան Հիթլէր, սակայն ընդունելով հանդերձ անոր դէմ ներքին պայքարելու անհրաժեշտութիւնը, համաձայն չէ Հիթլէրի, միջազգային ասպարէզին մէջ ալ անոր դէմ պայքարելու մասին:

Արտք վարիչ մը սպանուած

Երուսաղէմէն կը հեռագրեն թէ արաբական ըմբոստութեան գլխաւոր վարիչներէն մէկը, Սայիտ պէյ էլ Ազի, որ «ժողովուրդի թշնամի թիւ 2» հռչակուած էր անգլիական իշխանութեանց կողմէ, սպաննուած է հոկտեմբեր 7ին, Բեթղէհէմի մօտ, ընդհարման մը միջոցին:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՄԸ ՏՐՈՂՎ

Ալ-Ֆէյի ԻՍԼԱՄԱԿԱՆ համագումարը պաշտօնական ըլլաւ իր նախագահ, Տոքթ. Պէնճէլլուլ, անոր բոնած դիրքը համապատասխան չգտնելով համագումարի ծրագրին:

ՊԱՇԱՐՄԱՆ ՎԻՃԱԿ հրատարակուեցաւ Շանկայի մէջ: Ցարաբերութիւնները այնքան լարուած են որ, պատերազմը անխուսափելի կը համարուի Ճափոնի եւ Զինաստանի միջեւ: Ճափոն չարունակ զինուոր կը դրկէ եւ նաւատորմն ալ չարժման մէջ դրած է:

ՅՕՒՇԱՏԻՏՐ

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ արտակարգ ընդհ. ժողովին չարունակութիւնը՝ վաղը, ուրբաթ երեկոյեան ժամը 8.30ին, փաֆէ վոլթէռի սրահին մէջ, փլաս սը լ'Օպէռն, նոյն օրակարգով:

ԲՈՒԼՈՒԻ Հայր. միութեան (Մարսէյլ) ընդհ. անդամական ժողովը տեղի կ'ունենայ 11 Հոկտ. կիրակի երեկոյ ժամը 8.30ին. *6 rue des Petites Maries, Bar Ararat*ի սրահին մէջ: կը խնդրուի պատճի ներկայութիւնը վճռական նիւթերու համար:

Le Gérant: H. STEPHAN
Imprimerie A. DER AGOPIAN
17 Rue Damesme. PARIS (13e)

Հ. Ց. Դ.

Դասատ

ՎԱՀԱՆՍի կոմիտէն ընկերական ընդհանուր ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները վաղը, ուրբաթ երեկոյ ժամը 8.30ին, Հ. Ց. Դ. «Սիամանթօ» ակումբին մէջ:

«ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐ»Ը ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ ՓԱՐԻԶԻ «ԵԳԻՊՏԱՑԻ» ԿՈՄԻՏԷԻ

կը տօնուի Հոկտ. 17ին, շաբաթ երեկոյ ժամը 8.30ին,

Sociétés Savantesի սրահին մէջ, **8 Rue Danton**

ԿԸ ԽՕՍԻ **ԸՆԿ. ՎԱՀԱՆ ՆՕՒՃՈՒՐԴԵԱՆ**

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՁՈՒՆ ԲԱԺԻՆ

—o—

Կ ԱԼԱՆՍԻ ՄԷՋ.— *Շաբաթ երեկոյ:*
ԿԸ ԽՕՍԻ **ԸՆԿ. ՎԱՀԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ**
ՌՕՄԱՆԻ ՄԷՋ.— *կիրակի առաւօտ:*
ԿԸ ԽՕՍԻ **ԸՆԿ. ՎԱՀԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ**
ՓՈՆ Տ'ՕՊՆԱՅԻ ՄԷՋ.— *կիրակի երեկոյ:*
ԿԸ ԽՕՍԻ **ԸՆԿ. ՎԱՀԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ**
Մանրամասնութիւնները տեղւոյն վրայ:

ՊԱՐԱՆՑԻԿ ԵՐԵԿՈՓԹ ՄԱՐՍԷՑԼԻ ՄԷՋ

Կազմակերպուած «Դրօշակ» Միութեան կողմէ

Ի ՊԱՏԻՒ Պ. ԱԶԱՏ ՔԷՎԼԷՃԵԱՆԻ ՁՈՑԳԻՆ **PITOU & KETTY**

տեղի կ'ունենայ 11 Հոկտ. կիրակի երեկոյ ժամը 8ին,
Շաթրիկեան սրահին մէջ, 5 rue de l'Eclipse, Մարսէյլ:
Ներկայ կ'ըլլան Մարաթոնի պարին մասնակցող ընկերները:
Պզտիկներու մուտքը արգիլուած է:

Կ'ՈՒԶՈՒԻՆ *լաւ ափիէսօրները հագուստներու ըրթուընաժի համար: Լաւ վճարում: Դիմել՝* **45 Rue Chateaudun**. *Փարիզ* (9)ի:

«ԳՈՑԱՄԱՐՏ» ՕՐԱՑՈՑՑ, Ը. ՏԱՐՒՆ 1937

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱՐՍԷՑԼԻ Հ. Ց. Դ. ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԿԸ ՏԱՒՈՒՒ՝ Մարսէյլ Միութեանս Գրադարան-Ընթերցարանը, 5 Rue de l'Eclipse, *Միութեանս բոլոր անգամներուն եւ հետեւեալ հասցէներուն քով.—*

Մարսէյլ, Ն. Կակոսեան, 49 Rue Nationale
Փարիզ, Հրանտ Սամուէլ, 51 Rue Mr. le Prince (6)
Տեսին եւ Լիոն, Վ. Հիւսեան, 3 Rue Tellier, Décines, Isère
Վալանս, Ղ. Գալուստեան, 58 Rue Bouffier, Valence, Drôme
Սեն'Էթիէն, Վ. Խրիմեան, 34 Rue des Frères Chape. St. Etienne
Վիեն, Ն. Խաչիկեան, 124 Rue Lafayette, Vienne, Isère
Նիս, Գ. Շէհրէրեան, 55 Bd. de la Madeleine, Nice. A. M.
Կարման, Լ. Գայլանեան, Puits Bivert
Ալժէրի, Պ. Արզումանեան, Hôtel Atlas, Blida, Algérie
Պորտօ, Ա. Քէնտէրեան, Rue Ed. Vaillant, Cenon, Gironde
Պէյրութ, Մ. Ամիւռեան գրատուն, Bab Yacoub, Beyrouth
Ապատան, Ա. Արգարեան, P. O. Box 22, Abadan, Iran
Շամ, Ա. Լօշխանեան, Hart. Djanvar, 32 Bay Charky, Damas
Գահիրէ, Ա. Սիրունեան
Պաղտատ, Տ.Ք. Գ. Կարապետեան, Surgeon-Deutist, Bagdad
Կրպնպլ, Տիգրան Ալիքեան, 9 Ave Giers
Պասրա, Յակ. Ծնունդեան, Seef st. Basrah, Irak
Պէյրութ, Ա. Չօրիմեան, Photo Mourad, Rue Gouraud
Փօճ Տ'Օպնա, Ա. Կարապետեան, Chez M. Chaberte
Շարվիէօ, Մտ. Թիւրքմէնեան, B. H. 84 Charvieu
Հալէպ, Մ. Քրքէսէլեան, 22 Rue Boustan Kulab, Alep, Syrie
Ամերիկա, Պ. Պալեան, 119 P. O. Box, Milford, Mass.
Լա Սիօթա, Մ. Մարգիսեան, 2 Rue Foces La Ciotat
Թեհրան, Journal «Alik» Téhéaran Ave. Postkhaneh
Թուլուզ, Ղ. Մարկոսեան, 36 Pl. Lucas, Toulouse, H. G.
Ազգ, Թ. Պաղտասարեան, 11 Pl. des 4 Poulies, Apt Vaucluse
Ռոման, Մ. Պիլալի, 5 Rue Puy, Romans
Բօնիէն, Մաուոյեան, Usines Berles Carrelage
Ժնեւ, Մ. Թորոսեան: Բիւժ Ու Ալժան, **Մանասէլեան**: Կրաս, **Գրիգորեան**
Aix, Գ. Աւետիսեան, 3 Rue Emerie-David:

Նաեւ Մարսէյլի եւ արուարձաններու Դաշնակցական Ակումբները եւ բոլոր Դաշնակցական Թերթերու խմբագրատունները:

ԳԱՑԷՔ ՏԵՍԷՔ
CIGALE CINÉMA
60 Avenue de Saxe-LYON.

ԳԱՑԷՔ ՏԵՍԷՔ ԼԻՈՆԻ ՄԷՋ
Cinéma REXY
Rue Cours Lafayette, angle Garibaldi.

Անկլէնի **CASINO MUNICIPAL**ի *շքեղ սրահներուն մէջ,*
ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ
Տեղի կ'ունենայ 17 Հոկտ. շաբաթ երեկոյ, մինչեւ լոյս,
ԴՊՐՈՑԱՍԷՐԻ ԱՆԿԷՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ
ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ
ՀՈՎԱՆԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԵՒ ՏԻԿՆՈՋԸ
Mme & Mr PATENOTRE DESNOYERSի
կը մասնակցին ծանօթ արուեստագէտները ՕՐ. ԻՐԻՍ ՊԻԼՊԻԼԵԱՆ,
Mlle Renée France, Պ. ՖԻԼԻՔ ԱՂԱՋԱՐԵԱՆ,
Պ. ԳՈՒՐԳԷՆ ԱԼԷՄՇԱՀ եւ
Fantaisiste Sud-Américaine ROSITA ALTÉA
որ կ'երգէ եւ կը պարէ մասնակցութեամբ Compositeur José Mariá
եւ յայտնի պարող **PEPITO VASQUEZ**ի
Ինչպէս նաեւ
Casinoի 15 հոգիանոց նուագախումբը եւ 6 հոգիանոց ճաղը:
ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ — ՁՈՒԽ ՊԻՒՖԵ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳԻՆԵՐՈՎ
ՄՈՒՏՔ 10 ՖՐ.:
ՀԱՂՈՐ. ՄԻՋՈՑ.— Շոգեկառք՝ կառ. տիւ Նօռէն, 08 օպիւս՝ ի. 54 Թրինիթէէն

ԱՐԱՐԱՑԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ
18րդ ՏԱՐԵԴԱՐՁ
կազմակերպուած
Հայ Լեգէոնական Միութեան Մարսէյլի Մասնաճիւղին կողմէ
Նախագահութեամբ Միութեան պատուոյ նախագահ
Պ. ՏԻՐԱՆ ՔԷՔԷԼԵԱՆԻ
կիրակի, *11* Հոկտ. Շաֆօ տէ Ֆէօրի վէօ,
18 Պուլվար Միշէլէ (Օն փուան տիւ Բլասը) Հայոց եկեղեցիին մօտ:
ԿԸ ՊԱՏԱՐԱԳԻ ԳԵՐ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿ. ՀԱԶԱՏՈՒՐԵԱՆ

Ս. Պատարագ եւ Հոգեհանգիստ Լեգէոնի նահատակներու հոգւոյն, ֆլաստի Ս. Թափարձակաց եկեղեցիին մէջ, ժամը *10—11.30* նախկայութեամբ զինուորական եւ քաղաքային իշխանութեանց ներկայացուցիչներուն եւ Ֆրանսացի ու Հայ նախկին կռուողներու միութեանց պատուիրակութիւններուն:

1.— Կէսօրին հրաւիրեալները եւ Ֆրանսական նախկին Կռուողներու Միութեանց պատուիրակութիւնները կը պատուասիրուին Շաֆօ տէ Ֆլէօրի սրահներուն մէջ:

Փափաքողները կրնան մասնակցիլ վճարելով ճախքերուն համար 3 ֆր.:

2.— Ժամը 1 30ին ընկերական սեղան յարակից սրահին մէջ, կը հրաւիրուի ամբողջ Լեգէոնական ընտանիքը:

3.— Ժամը 3-30ին ժողովրդական հանդէս, նոյն սրահներուն մէջ:

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՁՈՒՆ ԲԱԺԻՆ:

Այս ցանդէսին *ԱԶԱՏ ՄՈՒՏՔԻ ԻՐԱՒՈՒՆՔ* կուտան Միութեանս սարքած վիճակահանութեան տոմսերը, որ պիտի քաշուի տեղւոյն վրայ:

ԱՐՔԱՅԱՆ ԽՄԻՉՔ
ՐԱՔԻ ՏԻՒԶ
Զուտ խաղողէ քաշուած եւ անհատով պատրաստուած օղին է ՐԱՔԻ ՏԻՒԶը:
Զգուշացէք այլ եւ այլ նիւթերով պատրաստուած եւ ձեր կեանքին վնասակար օղիները խմելէ, այլ խմեցէք միմիայն ՐԱՔԻ ՏԻՒԶը, որուն անարատ, կազդուրիչ եւ ախորժաբեր ըլլալը հաստատուած եւ գնահատուած է:



Ֆրանսայի համար ապահնատէր՝ Ա. ՏԱՒԼԱԹԼԵԱՆ
8 rue Suffren, Marseille — Tél. D. 70-89

ԿԱՊՈՑՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ռուսաստանի մէջ գտնուած ձեր ազգականներուն եւ բարեկամներուն *լաւագոյն եւ իրական օժանդակութեան ձեւն է՝ ղրկել անոնց կապոցներով բրդեղէն կտորներ, ճերմակեղէն, կօշիկներ եւ թրիքոթաժ:*

Այս բոլոր իրեղէններէն մենք ունինք ճոխ մթերք եւ կ'ապահովենք զանոնք Ռուսաստան շատ ձեռնտու եւ մատչելի գիներով:

Ունինք տրամադրելի ընտրութիւնով եւ թէժինկոն ղրամեքնաներ, ինչպէս նաեւ դաշնակներ՝ շատ մատչելի գիներով:

Գիներու ցանկը եւ նմոյշները կը ղրկուին առաջին իսկ պահանջին,

Դիմել՝ American Lloyd, Paris (9), 7 rue Auber
Tél. Opéra 67-77, 67-78

ՉԱՐԹՕՆՔ

(ՎԷՊ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵԱՆՔԷ)

—o—

Անդհանուր առմամբ դիւղացիներու վախը նոր օրէնքէն եթէ դիտակցականն ալ չէր, հզօրապէս բնազդական էր: Այնպէս որ ոչ մէկ տեղ Գէօրգի առաջարկները լուրջ ընդդիմութեան հանդիպեցան:

Սեպտեմբերի չորսին վերջապէս երեւանէն հասաւ պարսկական անցագիրը: Արշակը յաջորդ առտու պէտք է մեկնէր: Երկու սիրահարները ընթրիքէն վերջ առանձնացան այդ իրիկուն անկիւնը եւ ծառի մը տակ նստելով՝ դասուած հանդարտութեամբ սկսան խօսիլ անցած եւ մանաւանդ գալիք օրերու մասին, որ ոչ մէկուն համար ալ այնքան պայծառ չէր երեւնար: Առով մէկտեղ երկուքն ալ կ'աշխատէին իրարմէ ծածկել իրենց մտահոգութիւնները:

— Շուտով,— խօսեցաւ Եւդինէն, — երբ Վարդանը վերադառնայ արտասահմանէն, կ'անցնիմ Պարսկաստան, կուգամ մօտդ՝ քեզի օգնելու, բախտս կապելու քուկինիդ ... եթէ միայն դիս ուզես ...

— Անդին աղջիկս,— ու տղան քընքշօրէն համբուրեց զայն:

Այդպէս ուրեմն, կը մտածէր Արշակ, պիտի բաժնուէին իրարմէ, երբ հազիւ կարճատեւ երազի մը նման իր ճամբուն վրայ յայտնուեր էր Եւդինէն: Մխածանի մը չթիղ գեղեցկուքեամբ այդ աղջիկը երեւցաւ իր առջեւ երկնքին վրայ, ու վազը այլեւս պիտի չլինէր այդ տեսիլքը, ու ո՞վ գիտէր թէ անգամ մըն ալ պիտի հանդիպէի՞ն իրարու ...

— Ուշ է,— չընկալաց աղջիկը,— առանուն երկար ու ձանձրացուցիչ ճամբորդութիւն մը ունիս: Անմիջապէս որ հասնիս պարսկական ափը, անպատճառ գրէ ինձ, Թիֆլիսի հասցէով: Ինքզինքիդ լաւ նայէ, սիրելիս:

Տղան՝ գլուխը կախած՝ մտիկ կ'ընէր, ի՞նչ ըսէր: Ի՞նչ կրնար ըսել: Իրար գրկած, ծանր քալելով մօտեցան տանը, ուր ամէնքը վաղուց քընացած էին:

Արշակի մեկնելէն օր մը առաջ, Եւդինէն վերադարձաւ մօրը մօտ, որ միասին երթան Թիֆլիս: Երբ հակառակ ուղղութեամբ չարժող գնացքները ճանապարհին իրարու հանդիպեցան, Եւդինէն հազիւ կրնար երեւակայել, որ միւս գնացքով Վարդանը փարաքար կ'անցնէր:

Երբ քրոջը Ղարաքիլիսէ վերադառնալու մասին իմացաւ Վարդան, որոշեց քանի մը օր ապասել Վահէի գալուն, որուն անպատճառ կ'ուզէր հանդիպիլ:

Գէորգ թէեւ այդ չրջանի բոլոր գիւղերը այցելած էր, բայց դեռ փարաքարի մէջ գիւղական հաւաքոյթ չէր ունեցած: Իրիկուն մը գիւղի ծերակաց վարժարանի ուսուցիչը կանչելով՝ անոր թելադրեց, որ այդ գիշեր ժողով մը գումարէ Ուստա Ակորի տան մէջ:

Վարդանը փարաքար գալէն ի վեր օրերով կ'առանձնանար այդիի մէկ անկիւնը եւ ժամերով մտն կուգար՝ ձեռքերը եռաւը կապած, գլուխը կախ ծանր մտահոգութիւն մը ունեցող մարդու նման, որ յստակօրէն չի տեսներ բոնելիք ճամբան, ու որքան աւելի կը խորհի, այնքան աւելի անելի մը առջեւ կը գտնէ ինքզինք:

Երբ Գէորգ յայտնեց այդ գիշերուան գիւղական ժողովի մասին, Վարդան ցանկութիւն յայտնեց անոր ընկերանալ: Արեւը մայր մտնելէ բաւական մը վերջ, երկուքը ուղղուեցան դէպի գիւղամէջ գտնուող Ուստա Ակորի տունը:

Ընդարձակ թոնրատան կեդրոնի սիւնէն լապտեր մը կախուած էր, որ հազիւ կը լուսաւորէր այդ ընդարձակ հատատան կէս խաւար անկիւնները: Պատերու տակ չարուած մարդոց դէմքերը անորոշ սուուերներու նման կը դողային ամէն անգամ, երբ սիւնէն կախուած լապտերը կը չարժէր:

Թոնրատան ցածկեհ լինելն հետեւանք հասնող գիւղացիները ծռելով ներս կը մտնէին եւ ընդհանուր բարեւ մը տալով կը տեղաւորուէին անկիւն մը, ծանր ու լուրջ արտայայտութիւն մը դէմքերուն: Մէկ երկու երիտասարդներ, չրջակայ տունիքներէն հրատած, պահակ կը սպասէին, որ յանկարծ պաշտօնական անձնաւորութիւն մը գիւղ չմտնէր:

Գիւղի առաջատար մարդիկը, Սարգիս Աբօր հետ, թոնրատան կեդրոնը՝ սիւնի տակ չրջան մը կազմած՝ կը սպասէին վարժապետին, որ դեռ չէր եկած: Թէեւ ոչ ոք բարձրաձայն կը խօսէր, բայց ընդհանուր փոփոխք մը չրջան կ'ընէր թոնրատան չորս բոլորը: Ասոնցիք այնքան բան ունէին դիւղացիի դարդը ե՞րբ է հատեր:

— Միչա էլ, էղպէս եղած է,— կ'ըսէր քովի նստողին դուրս ցցուած, լայն ականջներով Մուկուչը, որ գիւղի չունեւորն էր.— ե՞րբ արդարութիւն ըրած ունի էդ ըրաչը Ֆախիր քեասպլեն: Տօ, դեռ ջրի ծէրը արտի կէսը չը հասած՝ մէկ էլ կն տեսնեմ՝ ջուրը լուր ցամքեց: Թին ուսս նետած առուի թումբով կը վազեմ. պալքի մէկն ու մէկը ջուրս իր արտը դարձուցած է, պալքի տեղ մը թումբը քանդուեր է: Ճաթած մեծ քարին քով դէմ դիմաց կուգամ ջրաչին: «Այ տունդ չքանդուի, մարդ Աստուծու», կ'ըսեմ, «ջուրս ինչի՞ կտրեցիր, արտս կնաստա մնաց»: «Աղա, խօմ կէօղ չէիր կապելու արտիդ մէջ», կ'ըսէ անիրաւը: «Տօ, ո՞նց թէ կէօղ, հողը քանդան մոխիրի նման չոր չոր, բամպակը կը թռչներ, մէկ երկու օրէն կը չորնայ»: Ախպերս, որո՞ւ ցաւդ ըսես, իմ հալալ իրաւունքս կուտայ ուրիշին: Նորէն տարուան մը արուն չքրտինքս պոչը ...

— Ջուրը որո՞ւն արտը կապիր կը,— հարցուց յօրանջելով քովի տողը.— գուլում մարդ է մեր ըրաչը, գուլում ...

—Որո՞ւն արտը պիտի կապէր ... Սարգիս Աբօր չալթուկը: Ինոր իրաւունքն է՝ կ'ըսէր տնաքանդը: Խպէս էլ ցա՞ւ: Ունեւորի իրաւունքը չես դիտեր ի՞նչ թաւուր, չարաթը անգամ մը կուգայ, մերը՝ երկու չարաթը մէկ հեղ, էն էլ կէս կիսատ:

(Շար.)

ՄԱԼԽԱՍ

ՓՆՏՐԻԵՑԻՔ եւ ԿԱՐԴԱՑԷՔ
երգիծաթերթի՝ «ՄԵՂՈՒ»
փարիզի եւ Շրջանի Ցառագի ցուցիչ
ՊԱՀԵՏԻՆԷՆ:

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN — 17, Rue Damesme, PARIS (13e)

Rédaction et Administration — Téléphone : Glacière 15 - 70

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

(ԵՐԹԵԼԻԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ՝—

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՅ	ԵՒԱՄՍԵԱՅ
Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա	250 »	130 ֆրանք	—
Ամերիկա եւ ուրիշ երկիրներ	200 »	100 ֆրանք	—

ՇԱԲԱԹ 10 ՀՈԿՏԵՄԲԵՐ SAMEDI 10 OCTOBRE 1936

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԺԲ ՏԱՐԻ — 12e Année No. 3240

ԽՄԲԱԳԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՆՈՐԸՆ ԱՐԹՈՒՒՆ ԵՒ ՊԱՂԱՒԱՐԻՒՆ

—o—

Այս խորագիրը կը գործածէինք առջի օր, Իսքէնտէրուն - Անտիոքի մասին դղուած «ճիհատ»ին առթիւ :

Նոյն ազդանշանը այսօր ալ, նոյն առնչութեամբ, սակայն տարբեր ուղղութեամբ :

Ինչպէս կը տեսնէք, թուրք մամուլը նոր ռազմավարութիւն մը կը փորձէ, այս անգամ ալ Հայերը Արաբներուն դէմ գրգռելու համար : Եւ փոխադարձաբար :

Մինչ բոլոր թուրք թերթերը մինչեւ հիմա ամէնէն գաբշելի խաղերը կը սարքէին, երկու ժողովուրդներուն յարաբերութիւնները լարելու, եւ մանաւանդ Հայերը Արաբներուն թշնամի ներկայացնելու համար, ահա « ճիհատուանդ Հայերը Արաբներուն թշնամի ներկայացնելու համար բիյէթ»ը նորէն արիւն կը պղտորէ աւելի բարբարոսական չնկանութեամբ մը,— « Անտիոքի Հայերը թուրքերուն հետ միասին»...

Որպէսզի վերջը, հեռագրին բովանդակութիւնը եւս նոյն նպատակին կը ծառայէ,— ապացուցանել թէ «նահանգին Հայերն ալ որոշած են օգնել թրքական դասին » :

Եւ դեռ ուրիշ գրգռիչ բանաձեւութիւն մը,— « Հայերը թուրք լեզուն կը տարածեն Սուրիոյ մէջ» :

Արդար ըլլալու համար, ըսենք թէ սուտ չէ այս պարագան,— թրքախօսութեան տարածումը Հայերու միջոցաւ : Սուտ չէ ոչ Սուրիոյ, ոչ ալ ուրիշ որեւէ գաղութի համար,— նոյնիսկ արեւմտեան Եւրոպայի մէջ — Մարսէյլ, Փարիզ, Լոնտոն եւ մինչեւ հեռաւոր Ամերիկաները ...

Պէտք է հրապարակաւ ընդունինք այս անպարտկելի դասը, թէեւ 15 տարի կ'ըլլայ որ հեռացած ենք Թուրքիայէն...

Արդ, փաղաքչելով Սուրիոյ հայ գաղթականութիւնը, պանծացնելով անոնց «համերաշխութիւնը» եւ «հայրենասիրութիւնը», «ճիւհուրիյէթ» զարհուրելի խաղ մը կը խաղայ Սուրիոյ Հայերու գլխուն :

Արթուն, պաղարիւն եւ մանաւանդ զգո՛յշ : Այդպէս միայն կարելի է ջախջախել իժերու գլուխը :

Շ.

"ԱՆԹԱՔԻՈՑ ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ,,

« ճիհատուրիյէթ » իր առաջին էջին մէջ եւ վեց սիւնակի վրայ դրած է այս մեծատառ խորագիրը : Ըստոյ կը հրատարակէ Անթաքիոյ իր թղթակցին տեւեալ դրութիւնը :—

ԱՆԹԱՔԻԱ, 4 հոկտեմբեր :— Պայըր Պուճաքի 20,000 թուրքերը որոշած են պատուիրակութիւն մը ղրկել Անթաքիա եւ բողոքել այն կարգադրութեան դէմ որով իրենց գաւառակը անջատուեցաւ Անթաքիայէն եւ կցուեցաւ Լաղքէյէի :

Նահանգին Հայերն ալ որոշած են օգնել թրքական դասին : Ամբողջ ժողովուրդին փափաքն է անջատուիլ Սուրիայէն եւ առայժմ ինքնավար մնալ : Ժողովուրդը չատ բարձր յուզումով կը սպասէ ապագային :

Կառավարութիւնը հրամայած էր պետական պաշտօնատուները գոցել այն օրը, երբ սուրիական պատուիրակութիւնը Հալէպ կը հասնէր : Թուրքերը զայրացան այս հրամանէն եւ բողոքեցին Ֆրանսական պատուիրակին, որ ըսաւ թէ իրեն որոշումը չգործադրուէր հոս, եթէ առաջուընէ լուր տրուէր իրենց, բայց հիմա կատարուած իրողութիւն է : Այսիկա կը ցուցնէ թէ Թուրքերը վրձռաբար որոշած են իրենց նահանգին մէջ տեղ չտալ որ եւ է բանի որ կը վերաբերի Սուրիոյ եւ արարութեան : Մէկտեղ մզկիթի իմամ Մէհմէտ Հօճա, որ դաղտնի Հալէպ գացած եւ մանակցած էր սուրիական պատուիրակութեան դիմաւորութեան հանդէսին, երէկ վերադարձաւ : Ժողովուրդը խուժեց մզկիթը եւ ծանր բառերով մեղադրեց զայն : Հօճան լալով խոստովանեցաւ իր յանցանքը եւ երդուընցաւ ատկէ վերջ չգատուիլ ժողովուրդէն :

ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐՔ ԼԵԶՈՒՆ ԿԸ ՏԱՐԱԾԵՆ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ

« ճիհատուրիյէթ »ի Հալէպի թղթակիցը կը գրէ թէ վաթանի կուսակցութիւնը սկսած է արհամարհել միւս համայնքները, ինչպէս եւ Ֆրանս. իշխանութիւնը : Այսպէս, Հալէպ հասած ատեն, սուրիական պատուիրակութիւնը չէ ընդունած սուրիացի կարգ մը անձեր, որոնց մէջ կային նախկին նախարարներ : Միւս կողմէ, Հալէպ չորս օր դրօշազարդուած է, բայց Ֆրանսական ոչ մէկ դրօշ պարզուած է :

« Վաթանիներու այս ծայրայեղութիւնները, կ'աւելցնէ «ճիհատուրիյէթ»ի թղթակիցը, անախորժ տպաւորութիւն գործած է Հայ, Թուրք, Հահուտի եւ այլ տարրերու վրայ, որոնց թիւը 100,000ի կը հասնի Հալէպի մէջ :

Կ'իմանամ թէ, 80,000ի կը հասնի թիւը Հալէպի փախստական Հայերուն որոնք չատ խիստ դանդուած մը կը կազմեն եւ տիրած են տնտեսական կացութեան : Այս Հայերը, որոնք ներքնապէս չատ համերաշխ են, անցեալ 10—15 տարուան ընթացքին աշխատած են թուրքերէն լեզուն այս կողմերը տարածել եւ այս ձեւով առնել իրենց հայրենասիրական կարօտը : Եւ յաջողած են :

Այսօր մանաւորաբար Պապ իլ Ֆարաճի, Հանտէքի եւ Թիլէլի նման Հալէպի ամէնէն բանուկ եւ բազմամարդ պողոտաներուն վրայ չկայ հասատ - տութիւն մը որ չկրկ հայկական անուն մը.— Նաճարեան, Պէքճարեան, Պուրունուզեան, Թաշճեան, եւայլն : Հետեւաբար խելացաս Արարներուն համար Հալէպ ամէնէն բանուկ եւ բազմամարդ պողոտաներուն վրայ չկայ հասատ - տութիւն մը որ չկրկ հայկական անուն մը.— Նաճարեան, Պէքճարեան, Պուրունուզեան, Թաշճեան, եւայլն : Հետեւաբար խելացաս Արարներուն համար լուրջ խնդիր մըն է խորապէս նկատի առնել այն դերը զոր ապագայ հաւանականութեան մը պարագային պիտի կրնան կատարել Թուրքերը որ բոլորնակատնութեան մը պարագային պիտի կրնան կատարել Թուրքերը որ բոլորնէ Սուրիոյ եւ արարութեան : Մէկտեղ մզկիթի իմամ Մէհմէտ Հօճա, որ դաղտնի Հալէպ գացած եւ մանակցած էր սուրիական պատուիրակութեան դիմաւորութեան հանդէսին, երէկ վերադարձաւ : Ժողովուրդը խուժեց մզկիթը եւ ծանր բառերով մեղադրեց զայն : Հօճան լալով խոստովանեցաւ իր յանցանքը եւ երդուընցաւ ատկէ վերջ չգատուիլ ժողովուրդէն :

Արդ, փաղաքչելով Սուրիոյ հայ գաղթականութիւնը, պանծացնելով անոնց «համերաշխութիւնը» եւ «հայրենասիրական ոգին», «ճիհատուրիյէթ» նոյն ինքն Ֆրանսական իշխանութիւնը : Այսպէս, Հալէպ հասած ատեն, սուրիական պատուիրակութիւնը չէ ընդունած սուրիացի կարգ մը անձեր, որոնց մէջ կային նախկին նախարարներ : Միւս կողմէ, Հալէպ չորս օր դրօշազարդուած է, բայց Ֆրանսական ոչ մէկ դրօշ պարզուած է :

« Վաթանիներու այս ծայրայեղութիւնները, կ'աւելցնէ «ճիհատուրիյէթ»ի թղթակիցը, անախորժ տպաւորութիւն գործած է Հայ, Թուրք, Հահուտի եւ այլ տարրերու վրայ, որոնց թիւը 100,000ի կը հասնի Հալէպի մէջ :

Կ'իմանամ թէ, 80,000ի կը հասնի թիւը Հալէպի փախստական Հայերուն որոնք չատ խիստ դանդուած մը կը կազմեն եւ տիրած են տնտեսական կացութեան : Այս Հայերը, որոնք ներքնապէս չատ համերաշխ են, անցեալ 10—15 տարուան ընթացքին աշխատած են թուրքերէն լեզուն այս կողմերը տարածել եւ այս ձեւով առնել իրենց հայրենասիրական կարօտը : Եւ յաջողած են :

Այսօր մանաւորաբար Պապ իլ Ֆարաճի, Հանտէքի եւ Թիլէլի նման Հալէպի ամէնէն բանուկ եւ բազմամարդ պողոտաներուն վրայ չկայ հասատ - տութիւն մը որ չկրկ հայկական անուն մը.— Նաճարեան, Պէքճարեան, Պուրունուզեան, Թաշճեան, եւայլն : Հետեւաբար խելացաս Արարներուն համար

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

37 ԽՈՒԶԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՒԵՑԱՆ

—o—

Դանիմը եւ Հաժայնավարները դէմ դիմաց

—o—

Երէկ հաղորդած էինք թէ խուզարկութեան ենթարկուեցան Ֆրանսայի Ընկերային Կուսակցութեան գրասենեակները եւ չատ մը վարիչներու բնակարանները :

Հրատարակուած տեղեկութեանց համաձայն, 37 խուզարկութիւններ կատարուած են հինդշաբթի օր, սկսելով գնդ. որ լա Ռոքէն :

Առտուն կանուխ ոստիկանները 45 կառքերով գացին նշանակուած կէտ - րոններն ու մասնաւոր բնակարանները : Ոստիկաններուն մէկ մասը փողոցը կեցաւ, իսկ միւսները ներս մտան եւ բաղմաթիւ թուղթեր գրաւեցին : Մինչ - նոյն ատեն Վերսայլի ոստիկանութիւնը կը խուզարկէր գնդ. որ լա Ռոքի բնակարանը, իր բացակայութեանը : Խուզարկուեցաւ նաեւ Փարիզի իր յարկաբաժինը : Թէեւ 37 չէնքեր խուզարկուեցան, բայց արդիւնքը գաղտնի կը պահուի : Միայն յայտնուեցաւ թէ գնդ. որ լա Ռոքի վիլլային մէջ գտնուած էին հինգ բիր, երեք մետաղեայ գաւազան եւ գերմանական դաշոյն մը (վրան՝ կեռ խաչով, ըստ «Իւմանիթէ»ի) :

Ամէնէն կարեւոր խուզարկութիւնը կատարուեցաւ կուսակցութեան կեդրոնին մէջ, ուր երբ եկաւ, ուր 40 ոստիկաններ տակնուվրայ ըրին սեղաններն ու դարակները, մինչ քարտուղարները կ'աշխատէին : Պաշտօնեաներն ալ խուզարկուեցան : Գնդ. որ լա Ռոքի ներկայ էր իր Փարիզի բնակարանին խուզարկութեան, իսկ երբ կուսակցութեան կեդրոնը հասաւ, խուզարկութիւնը կը շարունակուէր տակաւին :

Խուզարկութիւններէն վերջը, գնդ. որ լա Ռոք եւ իր շրջապատի մը օգնականները, ի մէջ այլոց ծանօթ օդանաւորդ Մէրմոզ եւ երեսփոխան Իպարնէգարի պաշտօնապէս ամբաստանուեցան թէ փորձ կատարած են լուծեալ Հրեղէն Խաչի վերակազմելու եւ ապօրէն համախմբումներ սարքելու :

Գնդ. որ լա Ռոք անմիջապէս յայտարարութիւն մը հրատարակեց : Իսկ մամուլի ներկայացուցիչներուն ըսաւ թէ «երջանիկ է եւ պատիւ կը համարի մակերպութիւններ զորս կատարութիւնը լուծեց Մոսկուայի հրամանով » : Ցետոյ ըսաւ թէ կը խնդայ ոստիկանութեան խուզարկութեանց վրայ որոնք ոչինչ պիտի կրնան ապացուցանել : «Ես չեմ սիրեր ինը Թիւը, իսկ տասը միշտ բախտ կը բերէ ինծի : Պատերազմին ատեն ինը անգամ յիշուեցայ զեկոյցներու մէջ, եւ այս տասներորդ յիշատակութիւնն է : Կառավարութիւնը անպատուութիւն բերաւ իր գլխուն, խուզարկելով ոչ միայն մեր գրասենեակները, այլեւ մեր մասնաւոր բնակարանները » :

Իսկ կուսակցութեան ուղղած յայտարարութեան մէջ, գնդապետը կ'ըսէ :

*— « Պլումի դահլիճը այս առտու կատարեց գործողութիւն մը որ նուաստացուցիչ է ինքզինքը զօրաւոր կոչող կառավարութեան մը համար : Իրականացուցիչ է ինքզինքը զօրաւոր կոչող կառավարութեան մը համար : Իրականին մէջ, իշխանութեան գլուխ անցած հրոսախումբը, ահաբեկ՝ Մոսկուայէն, տեղի կուտայ Թորէզներու, Տիւքլօներու, Քաչէններու, Մարթիներու բոլոր «չանթաժ»ներուն առջեւ... Մեզի դէմ գործադրուած մեթոտները ներշնչուած են Զեկայէն, Կէփէուէն : Անոնք վախ եւ ամօթ կ'արտայայտեն : Ցանուն Ֆրանսայի, որ հակառակ օտար վարձկաններու դաւաճանութեան, կրցաւ մնալ ազատ, յանուն պարկեշտութեան, կը պահանջենք հանրային ողջ, յանուն պարկեշտութեան, կը ՊԱՀԱՆՋԵՆՔ ԼՈՒԾԵԼ ՀԱՄԱՑՆԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ, ՈՒՆՑԱԿԱԼԵԼ ԹՇՆԱՄԻՆ ՄԵՐ ՀԱՅՏԱՏՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՕԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ, ՈՒԽՏԱԿԱ

Ի՞ՆՉՊԷՍ ԿԸ ԴԱՍՏԻԱՐԱԿԵՆ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ

ԳԵՐՄԱՆԻԱ

Տասնեակ մը օրեր առաջ, այս սիւնակներուն մէջ կարդացիք, թարգմանաբար, «Թան»ի արդէն իսկ ձեզի յայտնի յօդուածաշարքին այն գլուխը, որ Զուիցերիոյ արդի դաստիարակչական դրութիւնը կը ներկայացնէր:

Թարգմանական ձեւը մէկդի թողլով «Ցառաջ», այսօրուընէ սկսեալ, ձեզի կուտայ զանազան երկիրներու արդի դաստիարակութիւնը, ամփոփ, խտացեալ, յապաւելով շատ մը մանրամասնութիւններ, գուցէ չհրեկան եւ պիտանի Ֆրանսացիին համար, գրեթէ անկարեւոր մեզի համար:

Իրրեւ գլխաւոր ուղեցոյց պիտի ունենանք վերոյիշեալ յօդուածաշարքը, ինչպէս նաեւ ուրիշ ծանօթութիւններ, զոր անցեալի եւ ներկայի ընթերցումները տուած պիտի ըլլան մեզի:

Զանց պիտի առնենք քաղաքական եղրակացութիւնները, որոնց կը յանգին, անհրաժեշտաբար, «Թան»ի աշխատակիցները, առ հասարակ:

Ֆրանսական մամուլը եւ հանրային կարծիքը մասնաւոր եւ բացառիկ ուշադրութեամբ կը մօտենան բոլոր այն հարցերուն, որոնք Գերմանիոյ կը վերաբերին: Ըլլան անոնք դինուորական թէ արհեստագիտական, առեւտրական թէ ճարտարարուեստական, մանկավարժական թէ գրական: Մեզի գրանք մը չէ այս, այլ հասատատում մը:

«Թան»ի աշխատակիցը չորս երկարաձիգ յօդուածներով կը պատկերացնէ Գերմանիոյ արդի մանկավարժական դրութիւնը: Մինչեւ անգլիականը միակ յօդուածով մը կ'աւարտի:

** Հին Յոյների Գերմանիան մեծ կարեւորութիւն կ'ընծայէ նոր սերունդին: Իր խնամակալութեան, իր պաշտպանութեան տակ առած է զայն: Աչքը չարունակ վրան է: Իր զբաղումներուն եւ մտահոգութիւններուն գլխաւոր առարկան է ան: Նախակրթարանէն մինչեւ համալսարան, ու յետոյ ալ, իր հսկողութեան ենթակայ է ան:

Աղգային-ընկերվարական մանկավարժութիւնը կը հիմնուի այն կարեւորութեան վրայ, որ կը տրուի մարմնակրթութեան: Մարմնակրթութիւնը ամէն բանէ առաջ: Մարմնակրթութիւնը միջոց եւ նպատակ միանդամայն կերտելու համար վաղուան Գերմանն ու Գերմանուհին:

Մարմնակրթութիւնը պարտաւորիչ է նախակրթարանէն մինչեւ երրորդ վեցամսեան համալսարանին: Ու վա՛յ այն ուսանողին որ պէտք եղած մի ջինը չի առնար մարզանքի համար: Կիսատ կը մնայ ուսումը:

Աչխատանքի վեցամսեայ պարապուրիչ ծառայութիւնը ուրիչ բան չէ, եթէ ոչ տեսակ մը զօրոց մարմնակրթութեան, ուր նոր սերունդը, օրական վեց ժամ, բահ ու բրիչով փոս կը փորէ, փոս կը լեցնէ:

«Գիւղի տարին» հիմնուած 1934ին, ուրիչ բան չէ, եթէ ոչ զօրաճալ տեսակ մը զօրոց մարմնակրթութեան: Նախակրթարանէն յետոյ, 25.000ը անցնող քաղաքներուն տղաքը գիւղ կը զրկուին, մէկ տարուան համար: Հոն՝ գաշտային աչխատանքներու կը յձուին, զանազան մարմնամարզեր կը կատարեն եւ ենթակայ են խիստ կարգապահութեան: Դիտուած է որ, քաղաքի այդ եկուորները կը ծանրանան եւ կը բարւոքեն իրենց առողջական վիճակը:

Պիտի հարցնէք սակայն թէ՝ ինչո՞ւ այսքան կարեւորութիւն կը տրուի մարմնակրթութեան:

Սա համոզումով որ՝ մարմնակրթութիւնը ոչ միայն կ'ապահովէ ուժ, առողջութիւն եւ գեղեցկութիւն մարմնոյն, այլ մանաւանդ, վճռապէս կ'ազդէ նկարագրի կազմութեան վրայ: Իսկ նկարագրի կազմութիւնը ազգ. ընկերային նոր դպրոցներուն ուղն ու ծուծն է:

«Առաջնորդ»ը կը յայտարարէ թէ՝ «ուժը եւ առողջութիւնը մարդկային գործունէութեան առաջին պայմանն են»: Հոգեկան ուժերը երկրորդ գծի վրայ են: Իսկ մտաւորական ուժերը՝ երրորդ:

Գերմանը պէտք է ունենայ ուժեղ մարմին, անխախտ նկարագիր: Ըլլայ կարգապահ, տոկուն, ինքնավստահ եւ կարող ինքնազսպումի:

Շարաթը նոր սերունդին օրն է: Հիթլէրեականները, 80 առ հարիւրը դպրոցականներուն, ազատ են դասէ: Մնացեալն ալ առտուն միայն դասի է: Մարզանք ու խաղ: Այսպէս կ'անցնի չարաթը:

Նախակրթութիւնը պարտաւորիչ է: Անհոգ եւ պարտազանց ծնողքները կը պատժուին: Դասերու պակը 18 է վեցքերուն համար, իսկ առաւելագոյն 34 մեծերուն համար: «Գերման ողջոյնը» պէտք է յարգել դասին ընկերը, զուրսը պէտք է իրարու թեւ երկարեն:

Միակ գիրք մը բովանդակ Գերմանիոյ համար եւ կազմուած Ադոլֆոն պիտի ու ազգ. ընկերվարական հեղինակներու գրուածքներով: ընթերցանքը պիտի ըլլայ բոլոր դպրոցներուն:

Ժառանգականութեան եւ ցեղային ծագման վարդապետութիւններու ուսուցումը, ինչպէս նաեւ պատմութիւնը նոր լոյսերու հիման վրայ, գլխաւոր առարկաներն են դպրոցին: Նուազ կարեւորութիւն չի տրուիր նաեւ երգին: Ուսուցիչներու մեծ մասը դաշնակի ընկերակցութեամբ երգել պէտք է գիտնայ:

Արհեստագիտական դպրոցները չատ ծաւալած են Գերմանիոյ մէջ: Պարտաւորիչ է անոնց ուսուցումը:

Միջնակարգ եւ երկրորդական վարժարանները, հետզհետէ տեղի կուտան ազգ. ընկերվարական նոր դպրոցներուն առջեւ:

Երկրորդական եւ բարձրագոյն վարժարանները մանելու եւ անոնցմէ ելլելու ատեն, ուսանողական բնաւորութիւնները խիստ քննութեամբ կը կատարուին: Աւելի՝ երկու նպատակով — ազատ ասպարէզներու խճողումին առաջքը առնել եւ բարձրագոյն ուսումը տալ օժտուածներուն, արժանիներուն, ոչ թէ ունեւորներուն:

Թոչակաւոր ուսանողները կ'ընտրուին ոչ թէ նկատի առնելով անոնց մտաւորական կարողութիւնները, այլ նկարագիրը: «Թան»ի աշխատակիցը կը զրէ թէ՝ անոնց ընտանիքին քաղաքական ուղղափառութիւնն իր որոշ դերը կը կատարէ: Ամէն պարագայի մէջ, սակայն, թեկնածուն պէտք է վկայէ թէ կը պատկանի հիթլէրեան նոր սերունդի կազմակերպութեան:

Գերման արդի համալսարանին մէջ, դուք չէք կրնար տեսնել ուսանողներու աւանդական ազատութիւնը: Ձինուորական կարգ կանոն կը տիրէ հոն:

Իմաստասիրութեան դասընթացքը ի պատուի չէ: Քաղաքականութիւնը եւ դինուորական գիտութիւնները աւելի ուշադրութիւն գրաւելու են:

Մարքսեան ուսուցիչները, ինչպէս նաեւ Հրեաները հեռացուած են դպրոցներէն

Ուսուցիչներու պատրաստութեան համար, մանաւանդ վարժապետանոցներ հիմնուած են, մեծ մասով գիւղերու մէջ: Երկու տարուան չրաջնէն յետոյ, երբ կ'անցընեն աւարտական քննութիւնները, վերջնապէս ուսուցիչ ըլլալէ առաջ դեռ երկու տարուան առժամեայ պաշտօնով՝ ապացոյցը պէտք է տան թէ ասպարէզին կոչեցեալներն են:

Ի՞նչ կը հետապնդէ ազգ. ընկերվարական Գերման մանկավարժութիւնը:

Պատրաստել ոչ թէ կրթուած, զարգացած անհատներ, այլ «բռնել մարդը ամրողջութեամբ, իր խմացական, Ֆիզիքական եւ բարոյական ուժերով, ու զայն առաւելագոյն ճիգի մը ընդունակ դարձնել՝ ի սպաս ժողովուրդին եւ հայրենիքին»:

ԱՐՇԱԻԻՐ ՄԱՆԻՏԱՆԵԱՆ

ԱՅԳԵԿՈՒԹՔ

— . —

ԼԱ ԹՈՒՐ Տ'ԻԿ.— Աչնան մառախլապատ ու ցուրտ կիրակի մը ինքնաշարժով կը սուրանք դէպի Թուր Տ'Իկ: Մեր ճամբան երկար ու դարձ-դարձիկ, բլուրներու եւ այգիներու եզերքէն հովի արագութեամբ կը սուրայ մեր կառքը: Ցուրտ ու կծող քամիի հեծկլտուն ձայնը կը լսենք սգաւոր մայրիներու սաղարթներէն, իբրեւ տեսակ մը ախորժալուր նուագի թրթռուն խաղեր, որոնք մարդկային ղգացումներու վրայօրոր ազդեցութիւն կը գործեն:Կ'անցնինք Վալապրի,Լիոնի և Էքսի մէջէն ու կը սուրանք դէպի հարաւ: Օ՛ ինչքան հաճելի է ճամբորդել հեռաւոր ու անծանօթ այս վայրերուն մէջ: Իւրաքանչիւր քայլիդ կը հանդիպիս սքանչելի տեսարաններու, վիլլաներու, որոնք կանանչներու գիրկը թաղուած կը խոկան անբարբառ: Ես կը սիրեմ այդ վիլլաներու մէջ ապրիլ, հեռու քաղաքներու ու մարդերու բազմաժխոր ձայներէն: Խաղաղ ու ինքնամփոփ այդ առանձնարանները մէջ ես կը զգամ երջանկութիւնն ու հաճոյքը կեանքին:

Հիմա Փէրթուի քաղաքն ենք: Հինգ քիլ. եւս ու կը հասնինք Թուր Տ'Իկ: Քիչ մը հինցած եւ նախկին ճարտարապետութիւններով կառուցուած չէնքեր, տուներ, երբեմն խարխլած պատերով, որոնք կը յիշեցնէին Արեւելքի այն գիւղերն ու տուները, որ Թրքական հարուածներու տակ փլատակներու վերածուեցան: Մենք հիմա կարօտն ունինք մեր պապենական փլփլած տներուն: Հետաքրքրութեան համար կը պտտիմ, այս պզտիկ գիւղին մէջ: Ամէնէն աչքի զարկնողը չաթօն է (դղեակ), որ արժէքաւոր հնութիւն մը կը ներկայացնէ: Գիւղը կը կոչուի դղեակին մէջ բնակող եւ զայն չինել տուղ իշխանին անունով: Շինուած է 1571 թուականին: Ֆրանսական մեծ յեղափոխութեան ժամանակ քանդուած է 1789ին: Կ'անցնինք: Ահա ճամբուն աջ ու ձախ կողմը լեռներու ու արտերու վրայ փռուած են այգիներ, այգիներ: Այգեստան: Այս որքան այգիներ կան, Աստուած իմ: Ամիսներով կը քաղեն, չի լմննար: Սեւ ու սպիտակ խաղողներ տերեւներու մէջ չարաճճի աղջիկներու պէս կը ժպտին, տեսակ մը պղտոր նայուածք մը կը նետեն քեզի: Անհոգ ու միամիտ պէտք է ըլլալ, թափառիլ, քալել, այս կանանչ ու տերեւախիտ այգիներու մէջէն,ողկոյզներու վրայէն բերնով խաղողի հատիկներ փրցնել ու ուտել: Մարսէյլէն ու Լիոնէն գիւղերէն Հայերը լեցուեր են հոս, գործ կը փնտռեն, մաս մը տեղաւորուեր են, մաս մը դուրսը ճամբաներու վրայ, դեռ կը սպասեն որ այգեպանները գան պիրենք տանին: Ինչքա՜ր, մանուկներով եկեր խոնուեր են հոս:

Գործ չունեցողները կը վերադառնան գլխիկոր: Ժանդավառութեամբ ճամբայ ելեր են գործ գտնելու յոյսով: Հայուն Աստուածը այգեկութքի գործին մէջ ալ անճրկեր է: Թշուառութիւնն ալ աննկարագրելի է այս վայրերուն մէջ: Երկու երեք ընտանիք կան այստեղ: Երկար առեներ ի վեր հոս են: Ցաջորդ օրը կը սկսի խաղողի գործը: Ինչ հաճելի է եւ քաղցրահամ խաղողներ կտրել յօտոցով: Ուշաժիղ չափ կեր, ամէնէն լաւ ու խոշոր խաղողներէն: Կը ձանձրանաս: Կը յիշեմ քաղաքը, խանութներու ցուցափեղկին վրայ դրուած խաղողները 3—4 ֆրանքնոց: Դրամով խաղող գնել ու ուտել չատ համով է քան թէ այգիներուն մէջ, թուխին վրայէն ձեռքով պոկել: Քալէ ալ ու ձախ լեռնալանջ այգիներու ցանցով բռնուած:

Այգինե՛ր, այգինե՛ր, ես կը սիրեմ անվերջ թափառիլ ձեր մէջ, խաղալ ձեր ողկոյզներուն հետ, հեռու լքրացած քաղաքներու ժխորէն ու անբարոյացուիչ կեանքէն:

ԼԵՒՈՆ ԳԵՂՈՒՆԻ

ՋԱՄԲՈՒՍ ՎՐԱՑ.-Լը Փիւի

— —

Ֆրանսայի կեդրոնական նահանգներէն Հօթ-Լուառի կեդրոնն է Լը Փիւի, գեղեցիկ քաղաք մը, մօտաւորապէս 25,000 բնակչութեամբ:

Ընդհանրապէս Ֆրանսական չատ մը քաղաքներ կամ գիւղեր իրարու կը նմանին, միօրինակ յարդարուած փողոցներով, տուներով եւայլն: Բայց այս քաղաքին մէջ ինքզինքդ օտար երկիր մը կը կարծես, ոյորուն ու ելեւէջով փողոցներ, նեղ ու նախնական ձեւով, որոնց մէջ պտտած ատեն չատ անգամ սինեմաներու մէջ պարզուած տեսարանները աչքիդ առջեւ կը պարզուին: Եւ ի՞նչու չէ, ինքնիրենդ ալ սինէմայի մէջ խաղացող արուեստագէտի մը հովերը կուտաս ...

Լը Փիւի թերեւս եզական է իր բնական հրաշագործութիւններով: Քաղաքին զանազան մասերէն զուրս ցցուած 100 կամ 150 մեթր բարձրութեամբ ժայռերը հետաքրքրութեան նիւթ եղած են բոլոր այցելու չրջիկներու, կամ այդ ժայռերը պատճառ դարձած են որպէսզի Փիւին դառնայ չրջիկներու քաղաք մը:

Կեցած ժայռին ստորոտը, կը խորհիս որ, եթէ ասոնք Թուրքիոյ մէջ եղած ըլլային, Թուրքերը մինչեւ հիմա քանդած ,աւերած կ'ըլլային իրբեւ սատանայի գործ :

Բոլոր ժայռերուն գագաթները կարելի է բարձրանալ քովերէն չինուած սանդուղներով, իսկ գագաթներուն վրայ չինուած են փոքր տնակներ, սուրբերու նկարներով ու արձանիկներով զարդարուած: Իւրաքանչիւր այցելու կարծես պարտաւոր կը զգայ իր պատուհաններուն կամ արձաններուն անունը արձանագրելու պատերուն վրայ, հակառակ այն ազդարարութեան թէ դիր գրողը տուգանքի կը դատապարտուի: Համակերպելով վճիռի սահմանած տուգանքին, ես ալ իմ անունս կ'արձանագրեմ պատուհանի մը անկիւնը ...

Երկրորդ բարձունքը կը կոչուի «Նօթր Տամ տը Ֆրանս » որ քաղաքէն 132 մեթր բարձրութիւն ունի: Գագաթը չինուած է հսկայ արձան մը Մրիամի պատերազմէն Նափոլէօն Գ.ի կողմէ դերի բերուած 213 թնդանօթներով: Այս թնդանօթները հալածելու եւ արձանը չինելու ծախքը ճարուած է ազգային հանգանակութեամբ, 1860ին:

Գաղափար մը տալու համար արձանին մեծութեան վրայ, բսեմ որ ոտքէն մինչեւ գլուխը բարձրանալու համար ներսի կողմէն չինուած է պատ դուռ մը որ կը համբէ 107 ոտք:

Քաղաքին տուները մաքուր մնացեր են ծխնելոյզներու աղտոտ փոչիէն ու տանիքներու կղմինտրները կը պահեն իրենց կարմիր բնական գոյնը: Օդը միչտ մաքուր է ու առողջարար: Սմառը որքան ալ տաք ընէ, արեւը մշտնջէն վերջ զովութիւն կ'իջնէ քաղաքին վրայ: Ժողովուրդը չատ մարդամօտ ու համակրելի վարքերմունք ունի բոլորին հանդէպ: Դեռ երկու օրուան անձնօթք վրձակալ մը, պանդոկապետին տղան կ'ուղղարկէ որսի երթալ միասին: Շատ գուստները, հրացանները, չուները, վառօքը պատրաստ են բոլորն ալ— ինչպէ՞ս մերժել այս գեղեցիկ առաջարկը ..

Ժողովուրդը վաճառականութեամբ ու մեծ մասը հողագործութեամբ կը զբաղի: Ուրախ են որ հողագործ են, եւ Շարտարարուեստի զարգացումէ իր քեթը չէ խօթած այդտեղ...

Մ. ՏԻՐ - ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԱԼԱԹՈՒՐՔԱՆ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

— . —

ՀԱՑՈՒ ՄԸ ԹՐՔԱԿԱՆ ՁԱՇԱՐԱՆԸ

Թուրք ծանօթ գրող Փէյամի Սաֆա, որ առենի մը ի վեր Փարիզի իր տպաւորութիւնները կը հրատարակէ «Ճիւմհուրիյէթ»ի մէջ, հետեւեալ դրուագը կը պատմէ այնտեղ Հայերու հետ իր ունեցած հանդիպումին եւ ալաթուրքա կեանքին մասին.—

Փարիզի մէջ երկու տեղ իմնէ - սապ մտիկ ըրի: Մէկը դիպուածը գտնել տուաւ ինձի, միւսն ալ՝ Ֆրանսացի բարեկամներս :

Իրիկուան ժամը 9ի տառնները միս մինակ կը սպասէի Օփերայի ու Ռիւ տէ Մարթիհիքի եւ պանդոկիս միջեւ գտնուղ մէկ ամայի վայրին մէջ: Ճամբորդութեանս բովանդակ միջոցին, առաջին անգամ այդ գիշեր անընկեր ու առանձին մնացի:

Փարիզ գիտէ կանուխ լռել այս ամայի թաղին մէջ եւ հանդարտութիւն կը պարզեւէ այն մենակեաց գլուխներուն որոնք գիրենք վրդովող զգայնութիւնները փականքը խորտակելու կ'աշխատին եւ կարօտ ունին լռութեան: Երբ կ'անցնիէի պիստակ ծառերի մը առջեւէն որ իր վաճառքը սալայատակին վրայ էր փռած, յանկարծ կանգ առի: Եռեւս հարազատ Թուրքերէնով բարկ հայհոյութիւնմբ լսած էի: Շարաթէ մը ի վեր մայրենի լեզուս բնաւ խօսած չըլլալուս համար էր թերեւս որ Թուրքերէնի ամէնէն տգեղ խօսքերն իսկ հօրս մէկ բանաստեղծութեան չափ մտերմիկ Թուեցան ինծի: Իսկոյն եռեւ դարձայ. պիստակ ծախողը մէկուն վրայ իր բարկութիւնը կը Թափէր Թուրքերէնով եւ ալաթուրքա: Մօտեցայ ու կանգ առի: Գիրուկ, ճերմակ բաճկոնով, սեւ պէհէով, բարկութենէն ադիւսը գոյն առած Թուխ դէմքովմեծդի պիստակավաճառին դէմ կեցած էր նիհար, չածիլուած մարդ մը որ Թեւերը լուղոդրի մը պէս չարժելով կը պոռար: Պիստակ ծախողը համեմատական չափաւորութիւնով մը կը սէր:

— Բերանդ մի աւրեր: Մինչեւ ո՞ր Հրանտէն մուրհակը չառնեմ հինգ փարա չեմ տար: Իրիկուընով քէֆի մի փափցներ, հայուի ճամբաղ գնա: Միւսը, հետզհետէ բորբոքող սոսկութեամբ մը, իր հայհոյութիւնները կը չարունակէր: Պիստակավաճառը իր խոշոր իրանը քէչ մը անոր մօտեցուց .

— Բերանդ մի աւրեր կ'ըսեմ քիզի. աչխարհը մեզի կը նայի կոր :

Եւ ինծի անհարկիւլով չարունակեց.

— Հէրիֆը չե՞ս տեսներ: Թեթեւս գնում պիտի ընէր, բայց վախցաւ: Հայուի ճամբաղ գնա: Համբերութիւնս հատցնելով, ատ քէչիպուշի դէմքով փրէնկին քով խայտառակ մի բներ :

— Խակոյն մէջ մտայ.

— Ամօթ, ամօթ : Մարդու պէս չխօսի՞ք..

Պիստակ ծախողը բարկութեամբ այնքան գրաւուած էր որ Թուրքերէն խօսիլս չլսեց եւ ցոյց չտուաւ այն զարմանքը որուն կը սպասէի: Ծոսկոյով հեռացող մարդուն եռեւէն պոռաց.

— Մաւրհակ, մաւրհակ:

Ցետոյ ինծի դարձաւ, այնքան պարզութեամբ որ իրը Թէ Գալիոնու Գուլլուք ըլլանք, ըսաւ.

— Ներէ, պէյս, հրաման ըրէք, պիստա՞կ կ'ուզէք :

Նայեցայ որ պղտիկ, Թախտնոցիկ Թուրքէ քսակներով չարուած պիստակներուն հետ դղումի կուտ անգամ կար :

— Պիստակ տուր, ըսի: Փարիզի մէջ դղումի կուտ կա՞յ :

— Հոս ամէն բան կայ, պէյս:

— Էէպլէպի կա՞յ :

— Դէմի խանութը կայ: Քիչ մը անդին, ճաչարանի մը մէջ Թրքական կերակուրներ ալ կան, օղի ալ կայ, փաքլաւա ալ կայ: Հայու մը խանութըն է :

Շէչտէն յայտնի էր որ ինքն ալ Հայ է: Դեռ ճաշ ըրած չըլլալով, ցոյց տուած խանութը դացի:

Կատարեալ: Այս տեղին ալ Թրքուհի՞ քա ճաչարան մը ըլլալը, կերակուրները հանուեցան: Սօֆօքլը տակէն հագած էր նուրբ Թելերով մետաքսէ հիւսկէն մը, մինչ սպային իր բանը երեւցաւ արեւուն դէմ, մերկ, պղնձագոյն, մկանուտ, փառաւոր բան մը: Մատղաչ Հելլէնուհին, իսկ եւ իսկ չփոթ ու վրդով, կը նայէր ...

— Ժամացոյցին հոգ տար, ըսաւ ա՛նոր Սօֆօքլ Թէու կերպով:

Ցարձակումը վերսկսաւ: Պիտի նախ հաճոյք զգաց յոգնեցնելով իր հակառակորդը, յետոյ խոյացաւ եւ երկու անգամ վաղակաւորը նպատակին եկաւ եւ Յոյնը չկրցաւ հարուածները իր դէմ հանել:

— Երեք վայրկեա՞ն, գոչեց կալիոպէ: Եւ եթէ տեսածս չիտակ է, եղբայրս արդէն երկու անգամ զարնուեցաւ: Ինչո՞ւ չես ըսեր, Սօֆօքլ:

— Անտարակոյս, վրայ բերաւ ոխաք քաղաքավարօրէն, ձեր եղրայրը կը խորհի որ իրաւարարին պաշտօնն է հարուածները համրել:

(5)

(Շար.)

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹԻՒՆԸ ԼՐԱՑԱԾ ՉԷ

ԱՀԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ ՅԱՐՈՒԱԾ ՀԱՅՈՑ ՄԱՍԻՆ

Ա. Պ. ԳԱՎԱՌ

ՀԱՅԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ ՅԱՐՈՒԱԾ ՀԱՅՈՑ ՄԱՍԻՆ ՎԱՂԱԺԱՄ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԴԷՄ

Ա. Պ. Գավառ ժամանած է, եւ մեզի հետ ունեցած հանդիպումին ընթացքին ըսաւ թէ ինք ուղեւորութեան մէջ է եղեր Պոլսոյ, Զմիւռնիոյ, Սամսունի եւ Տրապիզոնի հայ գաղթականութեան մօտ, որպէսզի ուսումնասիրէ անոնց վերադարձի հարցը։ Ան ըսաւ, որ իր այցելութեան նպատակն է եղեր տեղեկանալ, թէ ինչպիսի՞ պայմաններ կը պահանջեն հայ գաղթականները իրենց վերադարձի համար։

— Ես կը ներկայանամ ձեզի, որպէսզի ձեզմէ լսեմ ձեր պահանջները եւ ապա զանոնք ներկայացնեմ Պոլսոյ կառավարութեան։ Ես կը խոստանամ ձեզի, որ ամէն ինչ պիտի ընեմ, որպէսզի ձեր պահանջները գոհացուցիչ լուծում ստանան։

Ան ապա հարցուց, թէ ինչպիսի՞ պայմաններ կը պահանջեն հայ գաղթականները։

— Մենք կը պահանջենք, որ մեզ վերադարձնեն մեր տները, կալուածները, արտերը, հոտերը, ինչպէս նաեւ մեր գործարանները, որոնք մեզմէ յափշտակուած են եղեր։ Մենք կը պահանջենք նաեւ, որ մեզ տրամադրեն անհրաժեշտ գումարներ, որպէսզի կարենանք վերականգնել մեր տնտեսութիւնը։

Ան հարցուց, թէ ինչպիսի՞ պայմաններ կը պահանջեն Զմիւռնիոյ հայ գաղթականները։

— Զմիւռնիոյ հայ գաղթականները կը պահանջեն, որ իրենց տրամադրեն 4 շոգենաւեր, որպէսզի կարենան վերադառնալ Զմիւռնիա։ Անոնք կը պահանջեն նաեւ, որ իրենց տրամադրեն անհրաժեշտ գումարներ, որպէսզի կարենան վերականգնել իրենց տնտեսութիւնը։

Ան հարցուց, թէ ինչպիսի՞ պայմաններ կը պահանջեն Սամսունի հայ գաղթականները։

— Սամսունի հայ գաղթականները կը պահանջեն, որ իրենց տրամադրեն 2 շոգենաւեր, որպէսզի կարենան վերադառնալ Սամսուն։ Անոնք կը պահանջեն նաեւ, որ իրենց տրամադրեն անհրաժեշտ գումարներ, որպէսզի կարենան վերականգնել իրենց տնտեսութիւնը։

Ան հարցուց, թէ ինչպիսի՞ պայմաններ կը պահանջեն Տրապիզոնի հայ գաղթականները։

— Տրապիզոնի հայ գաղթականները կը պահանջեն, որ իրենց տրամադրեն 2 շոգենաւեր, որպէսզի կարենան վերադառնալ Տրապիզոն։ Անոնք կը պահանջեն նաեւ, որ իրենց տրամադրեն անհրաժեշտ գումարներ, որպէսզի կարենան վերականգնել իրենց տնտեսութիւնը։

Ան ապա հարցուց, թէ ինչպիսի՞ պայմաններ կը պահանջեն Պոլսոյ հայ գաղթականները։

— Պոլսոյ հայ գաղթականները կը պահանջեն, որ իրենց տրամադրեն 2 շոգենաւեր, որպէսզի կարենան վերադառնալ Պոլիս։ Անոնք կը պահանջեն նաեւ, որ իրենց տրամադրեն անհրաժեշտ գումարներ, որպէսզի կարենան վերականգնել իրենց տնտեսութիւնը։

Ան հարցուց, թէ ինչպիսի՞ պայմաններ կը պահանջեն Զմիւռնիոյ հայ գաղթականները։

— Զմիւռնիոյ հայ գաղթականները կը պահանջեն, որ իրենց տրամադրեն 4 շոգենաւեր, որպէսզի կարենան վերադառնալ Զմիւռնիա։ Անոնք կը պահանջեն նաեւ, որ իրենց տրամադրեն անհրաժեշտ գումարներ, որպէսզի կարենան վերականգնել իրենց տնտեսութիւնը։

Ան հարցուց, թէ ինչպիսի՞ պայմաններ կը պահանջեն Սամսունի հայ գաղթականները։

— Սամսունի հայ գաղթականները կը պահանջեն, որ իրենց տրամադրեն 2 շոգենաւեր, որպէսզի կարենան վերադառնալ Սամսուն։ Անոնք կը պահանջեն նաեւ, որ իրենց տրամադրեն անհրաժեշտ գումարներ, որպէսզի կարենան վերականգնել իրենց տնտեսութիւնը։

Ան հարցուց, թէ ինչպիսի՞ պայմաններ կը պահանջեն Տրապիզոնի հայ գաղթականները։

— Տրապիզոնի հայ գաղթականները կը պահանջեն, որ իրենց տրամադրեն 2 շոգենաւեր, որպէսզի կարենան վերադառնալ Տրապիզոն։ Անոնք կը պահանջեն նաեւ, որ իրենց տրամադրեն անհրաժեշտ գումարներ, որպէսզի կարենան վերականգնել իրենց տնտեսութիւնը։

Ան

կան բոլշեւիկի անցեալը այնքան ալ մաքուր չէ։ Կ'ըսեն թէ 1915ին անդամ է եղեր միապետական ուսանողներու ընկերակցութեան մը։

Սեւ ցանկը անցած է նաեւ Լեպլեւսքի, Սպիտակ Ռուսաստանի Ձեկային նախագահը, յեղափոխութենէն առաջ անդամ եղած ըլլալով հրէական «Պունտ»ին։ Տէրիպաս, Խարկովսքի (Մայր. Արեւելք) Ձեկային վարիչը, կ'ամբաստանուի թէ 1927ին, Մոսկուայի մէջ, անհրաժեշտ կորովը ցոյց չէ տուած, թրոցքիականներու դէմ պայքարելու համար։

« Մաքրագործումի»ը լրացնելու համար, յանձնաժողով մը կազմուած է մասնակցութեամբ Միկոյեանի (Հայ), Բերիայի (Վրացի) եւ Եժովի։

Խ. ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԲՈՂՈՔԸ ԵՒ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՁԱՑՐՈՅԹԸ

— · —

Երէկ հաղորդած էինք թէ Խ. Միութիւնը ծանուցագիր մը ուղղած է չէզոքութեան կուսակից պետութեանց, սպառնալով խզել իր յանձնառութիւնները, եթէ կարգ մը պետութիւններ չարունակէն զէնք ճարել Սպանիոյ ապըստամբներուն։ Ակնարկը ուղղուած էր Գերմանիոյ, Իտալիոյ եւ Փորթուկալի մէջ։

Մորհրդային իշխանութիւնը երկրորդ ծանուցագիր մը ուղղեց, այս անգամ յատկապէս ամբաստանելով Փորթուկալը եւ քննութիւն պահանջելով։ Այս առթիւ զարմանազան լուրեր կը շրջին մայրաքաղաքներու մէջ։ Լոնտոնի մէջ շրջած զրոյցի մը համաձայն, խորհրդային իշխանութիւնը զէնք եւ ռազմանիւթ կը բեռցնէ Սեւ Ծովու նաւահանգիստներուն մէջ, պարսելոնա ղրկելու համար, եթէ գոհացում չտրուի իր բողոքին։ Անշուշտ մեծ մտահոգութիւն կը պատճառեն այս կարգի լուրերը, մանաւանդ եթէ իրապէս խզուի չէզոքութիւնը։

Լոնտոնի մէջ տհաճութիւն պատճառեց Մոսկուայի քոնած դիրքը, քանի որ արդէն ժողովի հրաւիրուած են չէզոքութեան կուսակից պետութիւնները։ Կարելի չէ նախատեսել հետեւանքները, եթէ խորհրդային չոգենաւերը իրապէս փորձեն զէնք հասցնել Սպանիոյ կառավարութեան, խզելով ապստամբ մարտանաւերու ցանցը։

Իսկ Պերլինի մէջ աննկարագրելի է զայրոյթը։ Թերթերը բուռն յարձակողականի մը ձեռնարկած են Մոսկուայի դէմ, առանց հրատարակելու խորհրդային բողոքագրին ամբողջութիւնը։ Կ'ըսուի թէ Գերմանիա կը խորհրդակցի Փորթուկալի եւ Իտալիոյ հետ, իրենց բռնելիք դիրքի մասին։ Գերմանական թերթերը զարմանքով դիտել կուտան թէ պետութեանց մէջ ամբաստանողի դերը կը ստանձնէ խորհրդային իշխանութիւնը, երբ աշխարհ գիտէ որ ան վառեց սպանիական կրակը։ «Մոսկուան յանցաւոր է ոչ միայն զէնք եւ ռազմանիւթ հայթայթած ըլլալով Սպանիոյ ժողովրդական ձակատին, այլեւ ինքն է որ հրահրեց ձախակողմեան չարժումը, սկիզբէն իսկ։ Խորհրդային ծանուցագիրը կ'ապացուցանէ թէ Մոսկուա որքան զործօն չհազրդռութիւն կը ցուցնէ ուրիշ երկիրներու բոլշեւիկացման համար»։

**** Երէկ Լոնտոնի մէջ բացուեցաւ չէզոքութեան յանձնախումբը, որուն կը մասնակցին 27 պետութիւններ։*

ԿԱՏԱՂԻ ԿՐԻՒՆԵՐ ՄԱՐՏԻՒԻ ՁԱՄԲՈՒՆ ՎՐԱՑ

Վերջին լուրերու համաձայն, կատաղի կռիւներ կը մղուին Նավալմէկրալի շուրջը, որ ռազմավարական դիրք մը կը կազմէ Մարտիւի հիւսիսային արեւմտեան ճակատին վրայ, 40 մղոն հեռու։ Կառավարական զօրքը չարաթներէ ի վեր կը պահէ այս դիրքը, հակառակ ապստամբներու ուժգին յարձակումներուն։ Զրոյցի մը համաձայն ապստամբները գրաւուած են քաղաքը, բայց Մարտիւէն կը հաղորդեն թէ եա մղուած են։ Ապստամբները յառաջ կը խթանեն Մարտիւ արեւմտեան կողմէն ալ, 30 մղոն հեռաւորութեամբ։ Կը նշանակէ թէ հիւսիսային արեւմտեան եւ հարաւային արեւմտեան բանակները միացած են։

Վեց հազար մանուկներ հեռացան Մարտիւէն, Վալենցիա փոխադրուելով։

Կառավարական զեկոյց մը կ'ըսէ թէ իր զինուորները կը կռուին Օվիէտոյի փողոցներուն մէջ։ (Այս քաղաքը պաշարուած է 82 օրէ իվեր, եւ անօթութիւնն ու հիւանդութիւնը աւերներ կը գործեն)։

Հայ չարժուար մը անպատ

1934 փետրուար 17ին հայ չարժավար մը, Ցարութիւն Գասպարեան, Ռէնի հրապարակին վրայ սպաննած էր Ֆրանսացի չարժավար մը, Լուի Ռիվէ։ Գործադուլի չրջան էր եւ Գասպարեան կ'աչխատէր, հակառակ սէնտիքայի հրամանին։ Առտու մը Մոնփառնասի կայարանին առջեւ խումբ մը գրգռուած մարդիկ չրջապատեցին զինքը եւ սպառնալին պահանջեցին որ վար իջնէ։ Նոյնիսկ մէկը ամերիկեան բռունցք մը իջեցուց դէմքին։ Գասպարեան տեսնելով որ կեանքը վտանգի տակ է, ատրճանակը քաշեց եւ արձակեց առանց նշան առնելու։ Մէկը ծանրապէս վիրաւորուեցաւ դէմքէն եւ մեռաւ քանի մը օր վերջը։

Այս դատն էր որ տեսնուեցաւ հինգշաբթի օր, Սէնի եղեռնադատատեանին առջեւ։ Գասպարեան չէր բանտարկուած եւ կը դատուէր իբրեւ մահացու հարուածներ արձակող։ Վկաներն ալ՝ իրեն սպառնացողներն էին։ Գասպարեան պատմեց ամբողջ դէպքը, փաստաբանները բացատրեցին թէ ամբաստանեալը օրինաւոր ինքնապաշտպանութեան դիմած էր եւ արձակում պահանջեցին։ Դատարանն ալ անպարտ արձակեց ամբաստանեալը։ Զոհին ընտանիքը 50,000 ֆրանք հատուցում կը պահանջէր, բայց վճռուեցաւ միայն մէկ ֆր.։

«ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐ»Ը ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ ՓԱՐԻԶԻ «ԵԳԻՊՏԱՑԻ» ԿՈՄԻՏԷԻ

կը տօնուի Հոկտ. 17ին, շաբաթ երեկոյ ժամը 8.30ին,

Sociétés Savantesի սրահին մէջ, **8 Rue Danton**

ԿԸ ԽՕՍԻ **ԸՆԿ. ՎԱՀԱՆ ՆԱՒՈՒՍԱՐԴԵԱՆ**

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՃՈՒՆ ԲԱԺԻՆ

— o —

Կ ԱԼԱՆՍԻ ՄԷՋ.— *Շաբաթ երեկոյ։*
ԿԸ ԽՕՍԻ **ԸՆԿ. ՎԱՀԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ**
ՌՕՄԱՆԻ ՄԷՋ.— *կիրակի առաւօտ։*
ԿԸ ԽՕՍԻ **ԸՆԿ. ՎԱՀԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ**
ՓՈՆ Տ'ՕՊՆԱՅԻ ՄԷՋ.— *կիրակի երեկոյ։*
ԿԸ ԽՕՍԻ **ԸՆԿ. ՎԱՀԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ**

Մանրամասնութիւնները տեղւոյն վրայ։

«ԳՈՑԱՄԱՐՏ» ՕՐԱՑՈՑՑ, Ը. ՏԱՐԻ 1937

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱՐՍԷՑԻ Հ. Ց. Դ. ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԿԸ ՇԱԽՈՒԻ՝ Մարսէյլ Միութեանս Գրադարան. Ընթերցարանը, 5 Rue de l'Eclipse, *Միութեանս բոլոր անգամներուն եւ հետեւեալ հասցէներուն քով.—*

Ապսպրանքներու համար դիմել՝ G. Djarayan, *5 Rue de l'Eclipse, Marseille*
Մարսէյլ, *Ն. Կակոսեան*, 49 Rue Nationale
Փարիզ, *Հրանտ Սամուէլ*, 51 Rue Mr. le Prince (6)
Տեսին եւ Լիոն, *Վ. Հիւսեան*, 3 Rue Tellier, Décines, Isère
Վալանս, *Ղ. Գալուստեան*, 58 Rue Bouffier, Valence, Drôme
Սէնթ'Էթիէն, *Վ. Խրիմեան*, 34 Rue des Frères Chape. St. Etienne
Վիէն, *Ն. Խաչիկեան*, 124 Rue Lafayette, Vienne, Isère
Նիս, *Գ. Շէհրէբեան*, 55 Bd. de la Madeleine, Nice. A. M.
Կարտաճ, *Լ. Գայլամանեան*, Puits Bivert
Ալժէրի, *Պ. Արզումանեան*, Hôtel Atlas, Blida, Algérie
Պորտօ, *Ա. Քէնտէրեան*, Rue Ed. Vaillant, Cenon, Gironde
Պէյրութ, *Խ. Ազնաւորեան գրատուն*, Bab Yacoub, Beyrouth
Ապատան, *Ս. Աբգարեան*, P. O. Box 22, Abadan, Iran
Շամ, *Ա. Լօշխաճեան*, Hart. Djanvar, 32 Bay Charky, Damas
Գահիրէ, *Ա. Սիրունեան*
Պաղտատ, *Տ.ը. Գ. Կարապետեան*, Surgeon-Dentist, Bagdad
Կրպնոպլ, *Տիգրան Ալիքեան*, 9 Ave Giers
Պասրա, *Ոսկ. Ծոնունդեան*, Seef st. Basrah, Irak
Պէյրութ, *Ա. Հօրիմեան*, Photo Mourad, Rue Gouraud
Փոճ Տ'Օպնա, *Ա. Կարապետեան*, Chez M. Chaberte
Շարվիէօ, *Ստ. Թիւրքմէնեան*, B. H. 84 Charvieu
Հալէպ, *Խ. Քրքէսէլեան*, 22 Rue Boustan Kulab, Alep, Syrie
Ամերիկա, *Պ. Պալեան*, 119 P. O. Box, Milford, Mass.
Լա Սիօթա, *Ս. Սարգիսեան*, 2 Rue Foces, La Ciotat
Թեհրան, Journal «Alik» Téhéaran Ave. Postkhaneh
Թուլուզ, *Ղ. Մարկոսեան*, 36 Pl. Lucas, Toulouse, H. G.
Ազբ, *Թ. Պաղտասարեան*, 11 Pl. des 4 Poulies, Apt Vaucluse
Ռոման, *Ս. Պիլալի*, 5 Rue Puy, Romans
Բօնիքեն, *Մատոյեան*, Usines Berles Carrelage
Ժերս. *Խ. Թորոսեան*: Բիւժ Սու Ազաճ, *Մանասէլեան*: Կուս, *Գրիգորեան*
Aix, *Գ. Աւետիսեան*, 3 Rue Emerie-David։

Նաեւ Մարսէյլի եւ արուարձաններու Դաշնակցական Ակումբները եւ բոլոր Դաշնակցական Թերթերու խմբագրատուները։

ՁԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԾԱԽՈՒԻ ԵՆ

1.— *6 լմբընոց* **T. S. F.** *մը «փիքթիւռով միասին, գին՝* **1200** *ֆր. բուն արժէքն է* **3600** *ֆր։*
2.— *Ինքնաշարժ մը «Մաթիս» մարք, ունի 14 ձիու ուժ, գին՝* **1900** *ֆր։ կրնաք սակարկել։*
3.— *Սափրիչի խանութ մը՝ հարուստ եւ բանուկ հրապարակի վրայ, ունի 3 սրանց, 3 կանանց աթոռներ, նաեւ 2 սենեակ, ճաշարան, խոհանոց եւ պարտէզ մը. կահ-կարասիներով միասին։ Մատչելի գին։*

Դիմել՝ ԶԱԼԸՄԵԱՆ, **3 Ave. de la Perte d'Orléans, Paris (14).**

ՁԱՆԱՁԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՄԸ ՏՂՐՈՎ

ՊԱՆՔ ՏԸ ՖՐԱՆՍԸ 3 առ հարիւրէն 2ուկէսի իջեցուց զեղչի սակը։ Շարաթական տեղեկագրին համաձայն, ոսկիի պահեստը աւելցած է 17 միլիառ ֆրանք։

«ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱՏԵԱՆ ՄԸ» մահուան դատապարտած է գնդ. տը լա Ռոքի կուսակիցներէն մէկը, Սուասոնի մէջ, կը գրէ «Մաթէն»։ Զոհը չարաչար ծեծուելով ճամբուն վրայ ձգուեր եւ յետոյ հիւանդանոց փոխադրուեր է, մէկ աչքը կուրցած։

ՊԱՐԱՆՑԻԿ ԵՐԵԿՈՓԹ ՄԱՐՍԷՑԼԻ ՄԷՋ

կազմակերպուած «Դրօշակ» Միութեան կողմէ

Ի ՊԱՏԻՒ Պ. ԱԶԱՏ ՔԷՎԼԷՃԵԱՆԻ ԶՈՅԳԻՆ **PITOU & KETTY**

ցեղի կ'ունենայ *11* Հոկտ. կիրակի երեկոյ ժամը 8ին, Շահրիկեան սրահին մէջ, 5 rue de l'Eclipse, Մարսէյլ։
Ներկայ կ'ըլլան Մարաթոնի պարին մասնակցող ընկերները։
Պզտիկներու մուտքը արգիլուած է։

ԱՐԱՐԱՑԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ
18րդ ՏԱՐԵԴԱՐՁԸ

կազմակերպուած
Հայ Լեգէոնական Միութեան Մարսէյլի Մասնաճիւղին կողմէ
Նախագահութեամբ Միութեան պատուոյ նախագահ
Պ. ՏԻՐԱՆ ՔԷՓԷԵԱՆԻ

կիրակի, *11* Հոկտ. շաբթ տէ Ֆլէօրի մէջ,
18 Պուլվար Միշէլէ (Ռօն փուան տիւ Բրատօ) Հայոց եկեղեցիին մօտ։

ԿԸ ՊԱՏԱՐԱԳԻ ԴԵՐ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿ. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

Ս. Պատարագ եւ Հոգեհանգիստ Լեգէոնի նահատակներու հոգւոյն, ապա Ս. Քարոզանց եկեղեցիին մէջ, ժամը *10—11.30* ներկայութեամբ զինուորական եւ քաղաքային իշխանութեանց ներկայացուցիչներուն եւ Ֆրանսացի ու Հայ Նախկին կռուողներու Միութեանց պատուիրակութիւններուն։

1.— Կէսօրին հրաւիրեալները եւ Ֆրանսական Նախկին Կռուողներու Միութեանց պատուիրակութիւնները կը պատուասիրուին Շաթօ տէ Ֆլէօրի սրահներուն մէջ։

Փափաքողները կրնան մասնակցիլ փճարելով ճախքերուն համար 3 ֆր.։

2.— Ժամը 1.30ին ընկերական սեղան յարակից սրահին մէջ, կը հրաւիրուի ամբողջ Լեգէոնական ընտանիքը։

3.— Ժամը 3.30ին ժողովրդական հանդէս, նոյն սրահներուն մէջ։

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՃՈՒՆ ԲԱԺԻՆ։

Այս հանդէսին *ԱԶԱՏ ՄՈՒՏՔԻ ԻՐԱՒՈՒՆՔ* կուտան միութեանս սարքած վիճակահանութեան տոմսերը, որ պիտի քաշուի տեղւոյն վրայ։

ԵՂԻՇԷ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ
ՁԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

AMERICAIN LLOYD — **48 rue de la République**
ORIENT LLOYD — **7 rue Auber, Paris**
Մարսէյլ. Tél. C. 47-92 եւ C. 74-51 Tél. Opéra 67-77 67-78

Նաւային բոլոր ընկերութիւններու ներկայացուցիչ։
Ցոմսակներ՝ ամէն տեղի համար, Հայ Ձամբորդներու համար ամսնաւոր գիներ։ Ընտիր ծրագիրներ աշխարհի ամէն կողմը։
ՎՍՏԱՀԵԼԻ ՏՈՒՆ

ՀԱՅՑ ԿԻՐԻ
(Aigle d'Arménie)
ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ
Հիմնուած 1936ին, **Récépissé de déclaration No. 1929, le 8 Juillet 1936**
Նպատակն է հայ նորահաս սերունդին մէջ զարգացնել ընդհանուր մարմնակրթանքը։
Մշակել երգի ճաշակը։
Պահել ու զարգացնել ընկերական եւ իրերօգնութեան կապը իրարու մէջ։
Պաշտպանել իր անդամակիցներուն բարոյական եւ ընկերային շահերը։
Տեղեկութեանց համար դիմել Ակումբին կեդրոնը, հիմնադիր Ա. Ե. Աճեմեանի, 14 rue Meyerbeer, Blanc Mesnil (S.et O.)

ԱՅԻՇԱՏԻՏ
ԱՆԳԼԻԵՐԷՆ ԴԱՍԵՐ
Անգլիերէնի լեզուի ուսուցման եւ գրականութեան դասընթացքներ։ Դիւրաւսոյց եղանակ եւ չափաւոր գին։ Դիմել՝ ՎԱՀԱՆ ՔԷՐԲԻՄՔԻ ՃԵԱՆԻ, *վկայեալ Թէհրանի Ամերիկեան գոլէճէն,* **Bachelar of Arts**
Հասցէ՝ **V. Kerestedjian, 17 Maître-Albert, Paris (5).**

ԳԱՑԼԷ ՏԵՍԷԹ
CIGALE CINÉMA
60 Avenue de Saxe-LYON.

ԳԱՑԼԷ ՏԵՍԷԹ ԼԻՈՆԻ ՄԷՋ
Cinéma REXY
Rue Cours Lafayette, angle Garibaldi.

Le Gérant: H. STEPHAN
Imprimerie A. DER (AGOPIAN) — 17, Rue Damesme, PARIS (13)

ՁԱՐԹՕՆՔ

(ՎԷՊ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵԱՆՔԷ)

— o —

Թոնրատան մէկ ուրիշ անկիւնը՝ քանի մը գլուխներ իրար եկած մտիկ կ'ընէին ձերուկ գիւղացիի մը պատմութիւնը։ Մարդը այդ օր եկած էր Սուրմալուէն.

— Տօ, էնպէս ծեծ մը քաշեց խեղճ մարդուն, որ սաղ ոսկոր մը չմնաց վրան։

— Գաւառապետ չէ հօ, գազան է գազան,— ընդմիջեց ձերուկին մտիկ ընողներէն երիտասարդ մը։

— Միւռնօրհնէքի օրն ալ,— աւելցուց ուրիշ մը — էդ գազանը տասը ատրաժներնէք (ձիաւոր ոստիկան) հետը վերցուցած, Մարզարայի կամուրջը փակեց գիւղացիներու առջեւ, թէ՝ «էջմիածին պիտի չերթաք, թագաւորի հրաման է»։ Սուրմալուի չրջանի ուխտաւորներէն հարիւրաւորներ ճաբահատ ետ դարձան. որո՞ւ մտքովը կ'անցնէր բողոքել։ Որո՞ւ ալ բողոքելս որ։ Ախբօրս ըսեմ՝ իր ազուոր հնիկը կուպերնաթորի (նահանգապետի) սիրական է, էլ խալխի բողոքին ո՞վ ականջ կը կախէ։

—Տուղ խօսք կ'ըսես, ախպեր, կուպերնաթորը ջաղցի տակի քարը, էդ գազանն ալ վերի քարի պէս կը դառնայ, մենք էլ ցորենի հատիկի նման երկու քարի արանքը իննանք...

— Հա, Մարգարայի կամուրջը կը փակէ, չէ ու չէ, ոչ ոք պիտի անցնի մէկէլ ափը,— չարունակեց պատմողը։ Երկու գիւղացիներ, կամուրջէն վեր, Արագի ծանծաղուտ տեղով կ'անցնէին միւս կողմը։ Սարաժնիկներէն մէկը կը տեսնէ ու խապար կու տայ գաւառապետին, էն էլ թէ՝ «չուտով էդ չանորդիքը առջեւս հանեցէք, ինչպէս թէ մէկէլ ափը անցնին առանց իմ հրամանիս»։ Աստուած գուշմանիս չցուցնէ խեղճերու քաչածը։ «Վայ դո՞ւք էք էջմիածին երթալ ուզողնե-րը, թէ առէք»։ տուր որ կուտաս, էլ մտրակով, էլ հրացանի ղոնդաղով, էլ աքացիով ... Գիղացիներէն մէկը տուն հասնելէն օր մը վերջը մահացաւ, մէկէլն էլ առջի աստմնները թափած, ձեռքն ալ կոտրած, էս քանի օր եղաւ պառկած է...

— Զուլում է աղբեր, Աստուծու կրակը։ Էս քանի տարի եղաւ չաղատուեցանք էդ գազանի ձեռքէն,— գլուխը օրօրելով հոգոց հանեց ծերուկը։

Սարգիս Աբօր կուշտին նստող Քէլէչէնց Պետրոսը՝ գեղին ամէնէն հարուստն էր։ Հալը վախտը տեղը մարդ մը, որ ոչ գիւղամէջ կ'ելլէր, ոչ ալ ուրիշներու գործով կը զբաղէր։ Այդ իրիկուն ալ հակառակ իր կամքին հազար զօռով եկեր էր ժողովի։ Ախպեր, ինք ի՞նչ գործ ունէր խալխի խէր ու չառի հետ, իր ցաւը իրեն բաւական էր։ Ղորղ որ կինկայ մազը երկար, խելքը կարճ կը լինի։ Իր պատաւը սաիպեր էր որ ժողովի երթայ։ «այ մարդ, էլ գնա, դու էլ հայ քրիստոնեայ ես, երեսիդ օրհնած մեռոն կայ»։

Շիտակը ըսելով, Քէլէչէնց Պետրոսը լաւ հետեւանք մը չէր սպասեր այդ ժողովէն, որ պետութեան զակոններուն (օրէնք) հակառակ՝ գազանի տեղի կ'ունենար։ Գլուխը ծռեց էշպէս Սարգիս Աբերը ու ըստ սովորութեան բառերը հատիկ հատիկ արտասանելով պատմեց այդ օր պատահած դէպք մը, որ ինք լսած էր էջմիածինցի կառապանի մը, երբ կառքի ձիերը կը հանգստացնէր ջրաղացի մօտ։

— Երկու օր առաջ, էջմիածնի գաւառապետը կ'երթայ եկեղեցիի երէց-փոխին մօտ ու կը սպառնայ չան նման ծեծելով սպաննել զայն, եթէ Թուղթը չստորագրէ։

« Ոնշոր կտորդ ականջդ կը ձգեմ, չան զաւակ», կ'ըսէ գաւառապետը, «պատմած կաթողիկոսի մը խօսքին մտիկ ընելով, թագաւորի հրամանը ո՞նց թէ ոտքի տակ կ'առնես»։ Ի՞նչ ընէր խեղճ երէցփոխը։ Կնիկն էլ մէկ կողմէն վրայ կուտայ. «այ մարդ, խալխի ցաւը քեզի՞ տուեր են, ի՞նչ գլուխդ փորձանքի տակ կը դնես, որ թագաւորի հրաման է, ստորագրէ Թուղթը, պրծնի գնայ»։

Սարգիս Աբերը հետաքրքրութեամբ մտիկ կ'ընէր։ Էջմիածնի երէցփոխը, բացի չատ հարուստ եւ իր բարեկամը լինելէն, հեռուէն հեռու ալ իրեն խնամի կուգար, Աչոտի կնոջ հօրեղբայրը լինելով։

— Է, յետո՞յ։

— Անճրկացած երէցփոխը ի՞նչ վայ տար գլխին, երկու օր առաջ Թուղթը կը ստորագրէ ու կը յանձնէ գաւառապետին։ Համա դու գեղակատի բանին նայէ։ Ամէն մարդ երես կը դարձնէ իրմէ, կարծես թէ իրենց տունը քանդած լինէր երէցփոխը։ Ագգական, խնամի ճամբան հանդիպած ժամանակնին՝ զինք չտեսնելու կը զարնէն, գլխերով ալ գլուխ լակոտները կը քարեն տունը, ապակիները փշրելով։

— Վայ, վայ, վայ,— գլուխը թափահարելով ցաւակցեցաւ Սարգիս Աբերը,— էս ի՞նչ օրերու հասանք. թագաւորի հրաման է, ախբեր, ո՞նց թէ՝ դէմ կանգնիս ... Ախ, էս մեր ջահիլները ...

— Համա վերջը չիմացար, տնա-քանդ, մէկ մտիկ ըրէ։

Քէլէչէնց Պետրոսը, չրթունքները գրեթէ Սարգիս Աբօր ականջը կոխած, ձայնը աւելի ցածցուց, ու բառերու կէսը ուտելով՝ չարունակեց.

— Էսօր, իրիկուան ժամու զանգրու տաեն երէցփոխը պզտիկ կ'ելլէ միս առնելու։ Մսագործի խանութին մէջ, երկաթէ կեռէն ամբողջ կէս ոչխար մը կը լինի կախուած։ «Այ մարդ, քանի մը դրուանքայ մի՛ տուր, պուտի կողմէն լինի»։ Մսագործը թէ՝ «քեզի համար միս չունինք ծախու»։ Երեցփոխը սուս փուս կը հեռանայ խանութէն։ Վանքի դարպասի առջեւով կ'անցնի։ Ճիշդ հրապարակի մէջ տեղը, մէկ էլ գաղթական զօռպա մարդ մը, երկար բեխերով կը մօտենայ, մէջքէն ատրճանակը կը քաշէ ու իրարու հետեւ երկու անգամ կը կրակէ վրան։ Երէցփոխը ինկածին պէս հոգին կուտայ ...

— Դու մի ըսեր...,— Սարգիս Աբօր Թուքը չորցաւ բերնին մէջ.— Այ, քեզ բան... զարկին, հէ՞, զարկին ... ախպեր, էս կողմն ալ կրակ, էն կողմն ալ կրակ։

(Շար.) ՄԱԼԽԱՍ

ՓՆՏԻԵՑԻՔ եւ ԿԱՐԴԱՑԷՔ
երգիծաթերթ «Մ Ե Ղ Ո Ւ»
փարիզի եւ Շրջանի Ցառագի գրուներ
Պ Ա Ի Տ Ո Ւ Է Ն։

ՀԱՐԱՁԱՏ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN — 17, Rue Damesme, PARIS (13e)

Rédaction et Administration — Téléphone : Glacière 15 - 70

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

(ԵՐԹԵԽԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,— ՏԱՐԵԿԱՆ — ՎԵՑԱՄՍԵԱՅ — ԵՒԱՄՍԵԱՅ

Ֆրանսա եւ գաղութներ ..... 140 ֆրանք — 70 ֆրանք — 35 ֆր.

Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա ..... 250 » — 130 ֆրանք — —

Ամերիկա եւ ուրիշ երկիրներ ..... 200 » — 100 ֆրանք — —

ԿԻՐԱԿԻ 11 ՀՈԿՏԵՄԲԵՐ DIMANCHE 11 OCTOBRE 1936

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ՀԲ ՏԱՐԻ — 12e Année No. 3241

ԼՐԿԱՒԻ ԽՕՍՔ

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

— o —

Վերջերս աւելի յաճախ կը խօսուի եւ կը գրուի երիտասարդական չարժման մասին:

Եթէ միայն խօսիլն ու գրելը նկատի առնէինք, պիտի ըսէինք թէ «ազգերնիս կը յառաջդիմէ»:

Իրականին մէջ, այնքան ալ մխիթարական չէ պատկերը: Եւ եթէ քիչ մըն ալ յառաջ երթայինք, պիտի ըսէինք թէ անոնք որ կոչուած են «միջին սերունդ»ին յաջորդելու, նորոգելու եւ ամրապնդելու կապը երկկուան եւ այսօրուան միջեւ, անոնք իրենց բացակայութեամբ կը փայլին ճակատին վրայ:

Շատերը տարիներէ ի վեր լքած են ճակատը: Ուրիշներ կ'ենթեան միայն հանդիսաւոր օրերու մէջ: Բազմութիւն մըն ալ կը նախընտրէ եռանդ եւ խելք թափել սրճարաններու կամ մտերմական ասուլիսներու մէջ, յետոյ ամփոփուելու համար իր պատեանին տակ:

Այնպէս որ, աւելի չատ նորահասներ կ'երեւան հրապարակին վրայ եւ ճրագ մը, խարիսխ մը կը փնտռեն, անոր ապաւինելու եւ իրենց յատակնութիւնները արժեցնելու համար:

Խօսքը, անշուշտ, անոնց համար է որոնք մաս չեն կազմեր քաղաքական կուսակցութեանց, եւ մասնաւորապէս Հ. Ց. Դաշնակցութեան:

Պատկերը աւելի կազդուրիչ պիտի ըլլար, եթէ երիտասարդներու այս դասը, անոր սուսար մասը իր ճամբան գտած ըլլար, անդամագրուելով քաղաքական կազմակերպութեան մը, համաձայն իր խառնուածքին եւ հայեցողութեան:

Ընդհակառակն, դուրս մնացողները աւելի մեծ բազմութիւն մը կը կազմեն, քան թէ անոնք որ ներս անցած են:

Ուրեմն մեր առջեւ կը պարզուի տարերային վիճակ մը.— անսպառ հունճք մը՝ ինքն իր գլխուն ձգուած:

Աթէնքի «Նոր Օր»ը վերջերս խմբագրական մը նուիրած էր այս հարցին,— «Հայ երիտասարդութիւնը»:

*Զափազանց յոռետես, եւ աւելի չատ զանազան տպաւորութիւններէ ազդուած, մեր պաշտօնակիցը հետեւեալ երեմիական թ

ԱՄՈՒՍԻՆ ԱՍՏՂԱՅԻՆ ԲԱՆԱԿԻ ՕՊԵՐԱՅԻ ԴԱՀԱՐԱՎՈՐ Ի. ՈՒՐԲԱՆՅԱՆԻ ՄԵՌ

(Ն.Ց.-ի թղթակից հաղորդում բեռնակից)

Ինչպես հայտնի է, ամուսնական տարաձայնությունների պատճառով Ամուսնական բանակի օպերայի դահարապետ Ի. Ուրբանյանը հեռացել է Ամուսնական բանակից և տեղափոխվել Ամուսնական ավազանի Ամուսնական ծովի Ամուսնական ափերը, որտեղ ստեղծել է Ամուսնական ավազանի Ամուսնական ծովի Ամուսնական ափերի ամուսնական օպերան։ Ամուսնական բանակի օպերայի դահարապետ Ի. Ուրբանյանի մեռ ամուսնական ավազանի Ամուսնական ծովի Ամուսնական ափերի ամուսնական օպերայի ստեղծման առիթով մեր թղթակիցը հանդիպել է Ամուսնական ավազանի Ամուսնական ծովի Ամուսնական ափերի ամուսնական օպերայի դահարապետ Ի. Ուրբանյանի հետ և խնդրել նրան պատմել իր ստեղծագործական ծրագրերի մասին։

— Ամուսնական ավազանի Ամուսնական ծովի Ամուսնական ափերի ամուսնական օպերայի ստեղծումը, — ասաց Ի. Ուրբանյանը, — ինձ համար ամենից առաջ նշանակում է ամուսնական ավազանի Ամուսնական ծովի Ամուսնական ափերի ամուսնական օպերայի ստեղծումը։ Ամուսնական ավազանի Ամուսնական ծովի Ամուսնական ափերի ամուսնական օպերայի ստեղծումը նշանակում է

ՄԵԾ ՀԱՅՔԱՐԱՁՈՒԹԻՒՆ ՎՐԱՑ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Մեր ատեան վարմունքն ալ 500.000-ջոր. Մ[illegible] ատեաններէն մէկուն մը առջեւ կ'երեւի Գեղեցկուհի անունով, Մ[illegible] տասը, մէկ երկու գեղջկական տնակներ ունի, որոնց մէջ կ'ապրի գեղջկուհի մը, որ ամբողջ տասը տարի է՝ ինչ կը մնայ այդ տնակներուն մէջ։ Ամբողջ տասը տարի է՝ ինչ ոչ ոք կը հետաքրքրուի անոր վրայ։ Ամբողջ տասը տարի է՝ ինչ ոչ ոք կը մտածէ անոր մասին

թէեւ այժմ դժուար է փոխադրութիւնը, երկաթուղին կտրուած ըլլալով։ Կ'ըսուի թէ մօտ 40,000 տարէցներ, կիներ եւ մանուկներ փոխադրուած են, ինչպէս եւ հազարաւոր վիրաւորներ։ Մատրիտ ունի մօտ մէկուկէս միլիոն բնակիչ, որոնք չատ կը նեղուին ուտելիքի պակասէն։

*** կառավարական զեկոյց մը յայտնութիւններ կը հաղորդէ Օվիէտոյի ճակատին վրայ, ուր կռիւը կը չարունակուի փողոցներու մէջ, պաշարող կարմիրներուն եւ 2500 պաշարեալներու միջեւ։ Պաշարումը կը տեւէ 9 չաբաթէ ի վեր։ Անխուսափելի կը համարուի քաղաքին անկումը, եթէ օդնական ուժը ժամանակին չհասնի հարեւան լեռներէն։ Քաղաքին մէկ մասը բոցերու մէջ է։ Կ'ըսուի թէ կարմիր հանքագործները գրաւած են քաղաքին կայարանը։

*** վերջին լուրերու համաձայն, Մատրիտի բոլոր ճամբաները ապըստամբներուն ձեռքը ինկած են։ Կառավարութիւնը պարպած է կեթաֆէի օդակայանը, որ անդադար կը ռմբակոծուէր։ Սէվիլլայէն կը հեռագրեն թէ չատ մը կարմիր վարիչներ Ալիքանթէ հասած են, Ռուսաստան փախչելու համար։

"ՍՊԱՆԻՈՑ ՋԵՆՔ ՂՐԿԱ'Ծ ԵՍ ԹԷ ՈՉ..."

— · —

Փորթուկալի ներկայացուցիչը կը ձգէ կ'երթայ

— · —

Ուրբաթ օր Լոնտոնի մէջ դումարուեցաւ այն յանձնաժողովը որ պաչտօն ունի ատենադումներ կատարելու չէզոքութեան յանձնառութեանց գործադրութեան մասին։ Այս առթիւ յուզումնալից տեսարաններ պարզուեցան ժողովին մէջ, որ տեւեց եօթը ժամ։ Վիճաբանութեանց ամէնէն տաք պահուն Փորթուկալի ներկայացուցիչը ձգեց գնաց եւ ալ չվերադարձաւ, չհանդուժելով խորհրդային պատուիրակին յարձակումներուն։ Նիստին մեծագոյն մասը անցաւ Լոնտոնի խորհրդային գործակատարին եւ իտալական դեսպանին վիճաբանութեամբ։ Իտալական դեսպանը նկատելով որ յաւադոյն պաչտպանողականը զօրաւոր յարձակումն է, կրակ տեղաց Մոսկուայի վրայ։ Ըսաւ թէ խորհրդային իշխանութիւնը ինք խղած է իր յանձնառութիւնները, յիչեց խորհրդային երեք նաւերու այցելութիւնը Սպանիոյ կառավարական նաւահանգիստներուն, եւ պնդեց թէ անոնք զէնք եւ ռազմանիւթ հանած են։ Խորհրդային գործակատարը պատասխանեց թէ անոնք միայն ուտելիք եւ դեղ կը տային գործակատարը պատասխանեց թէ անոնք միայն ուտելիք եւ դեղ կը տային։ Իտալական դեսպանը քմծիծաղ մը արձակեց եւ յետոյ անհիմն հռչակեց Իտալիոյ դէմ եղած մեղադրանքները։ Մինչեւ անդամ «քաղաքական չանթաժ» կոչեց խորհրդային իշխանութեան ամրապնդութիւնները եւ ջանաց ապացուցանել թէ յիչուած զէնքերը տեղի ունեցած են չէզոքութեան յանձնառութենէն առաջ։

Թէր ու դէմ վիճաբանութիւններէ վերջ, որոչուեցաւ խնդրել Իտալիայէն, Գերմանիայէն եւ Փորթուկալէն որ պատասխանեն իրենց դէմ եղած մեղադրանքներուն (զէնք հաղթայթել ապստամբներուն)։ Վիճաբանութեանց ընթացքին գերմանական ներկայացուցիչը յայտարարեց թէ Ա. Միութեան ծանուցագիրը, (որ կը սպառնար քաչուիլ) վեր է յանձնաժողովին իրաւասութենէն եւ «պարզապէս քաղաքական ռազմավարութիւն մը կը կազմէ»։

**** Պ. Իդըն, Անգլիոյ արտաքին նախարարը, Փարիզ հանդիպած ըլլալով, ճաչի հրաւիրուեցաւ Պ. Լէօն Պլումի կողմէ։ Այս առթիւ երկուքը միասին վճռեցին թէ Անգլիա եւ Ֆրանսա չպիտի փոխեն իրենց դիրքը՝ չէզոքութեան մասին։ Մոսկուայի ծանուցագիրը, որ կը ձգտի հանրային կարծիքը պատրաստել ի նպաստ գործօն միջամտութեան մը, ապերեցութիւն չգործեց Փարիզի մէջ։ Ամակոմէան թերթերը դիտել կուտան թէ Լիթվինով այդ ծանուցագիրը խմբագրած է նկատի առնելով իր երկրին ներքին կացութիւնը եւ Կոմինտէրնի դիրքը։*

ՁԱՆԱՁԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Ալժերիոյ վերջին մարդահամարին համաձայն, երկիրը ունի 7,234,684 բնակիչ, որոնց 967,252ը եւրոպացի։

Ալպանիոյ թագաւորին պարեգարձին առթիւ, հնագիտական թանգարան մը բացուեցաւ, հռչակաւոր Իսմայիլ Քէմալի նախկին բնակարանին մէջ։

Մոսկոմիացին կը հեռագրեն թէ ամբաստանութիւնները հաստատուած ըլլալով, բանտարկուած են Սոքոլնիքով, Լոնտոնի նախկին դեսպանը, Փեթաքով, Ծանր ճարտարարուեստի փոխ-գործավարը, Քոլուպիևսքի, Ուխրայնացի ականաւոր վարիչներէն եւ Սեբրիքոփաքով։ Բոլորն ալ ամբաստանուած են իբրեւ մեղսակից Սթալինի դէմ սարքուած մահափորձին։

Եոկոսլավիոյ Ազգային թագաւորին ճիւաղ արձանը բացուեցաւ Միւնխէի հրապարակին վրայ, մեծ հանդիսաւորութեամբ։ Ներկայ էր նաեւ հանրապետութեան նախագահը։

րութեան այս անհաչտ թշնամին իր պայքարը կը բանաձեւէ ոչ թէ բռնութեամբ, այլ միայն կրաւորական դիմադրութեամբ։ Ան կ'ըսէ որ եթէ Թոլսթոյ դէմ է բռնութեան, իր քննադատութեամբ եւ ձգտումով պատրաստած է յեղափոխութիւնը,— Թոլսթոյ դինած է, Լէնին չարժած է զինեալ ձեռքը։ Ըստ Մահաթմա Ղանտիի, Թոլսթոյի գիրքերը աւելի չատ աւեր գործած են, քան ռումբերը։

«ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐ»Ը ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ ՓԱՐԻԶԻ «ԵԳԻՊՏԱՑԻ» ԿՈՄԻՏԷԻ

կազմուի Հոկտ. 17ին, շաբաթ երեկոյ ժամը 8.30ին,

Sociétés Savantesի սրահին *մէջ*, **8 Rue Danton**

ԿԸ ԽՕՍԻ ***ՔՆԿ. ՎԱՀԱՆ ՆՇԻԱՆԵՐԴԵԱՆ***

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՁՈՒ ԲԱԺԻՆ

— o —

ՌՕՄԱՆԻ ՄԷՋ.— *կիրակի առաւօտ։*
ԿԸ ԽՕՍԻ ***ՔՆԿ. ՎԱՀԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ***

ՓՈՆ Տ'ՕՊՆԱՅԻ ՄԷՋ.— *կիրակի երեկոյ։*
ԿԸ ԽՕՍԻ ***ՔՆԿ. ՎԱՀԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ***

Մանրամասնութիւնները տեղւոյն վրայ։

ՊԱՐԱՆՑԻԿ ԵՐԵԿՈՑԹ ՄԱՐՍԷՑԼԻ ՄԷՋ

կազմակերպուած «Դրօշակ» Միութեան կողմէ

Ի ՊԱՏԻՒ Պ. ԱԶԱՏ ՔԷՎԼԷՃԵԱՆԻ ՁՈՑԳԻՆ **PITOU & KETTY**

տեղի կ'ունենայ 11 Հոկտ. կիրակի երեկոյ ժամը 8ին,
Շաֆրիկեան սրահին մէջ, 5 rue de l'Eclipse, Մարսէյլ։
Ներկայ կ'ըլլան Մարթիգնի պարին մասնակցող ընկերները։

Պզտիկներու մուտքը արգիլուած է։

ԴՊՐՈՑԱՍԷՐԻ ԱՆԿԷՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ
ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

ՀՈԼԼԱՆԴՈՒՈՔԵԱՄԲ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԵՒ ՏԻԿՆՈՋԸ

Mme & Mr PATENOTRE DESNOYERSԻ

կը մատակարկին ծանօթ արուեստագէտներ ՕՐ. ԻՐԻՍ ՊԻՒՊԻՒԼԵԱՆ,
Mlle Renée France, *Պ. ՖԻԼԻՔ ԱՂԱՋԱՐԵԱՆ,*
Պ. ԳՈՒՐԳԻՆ ԱԼԷՄՇԱՀ եւ
Fantaisiste Sud-Américaine ROSITA ALTÉA
որ կ'երգէ եւ կը պարէ մասնակցութեամբ Compositeur José Mariaի
եւ յայտնի պարող **PEPITO VASQUEZ**ի
ինչպէս նաեւ
Casinoի 15 հոգիանոց նուագախումբը եւ 6 հոգիանոց ճազը։
ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ — ՁՈՒԽ ՊԻՒՖԷ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳԻՆԵՐՈՎ
ՄՈՒՏՔ 10 ՖՐ.։

ՀԱՂՈՐ. ՄԻՋՈՑ.— Նոգեկառք՝ կառ. տիւ Նօռէն, ութօպիւս՝ թիւ 54 թրթնթէէն։

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՀԱՑ — ԲՈՑԺ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ

Գ. ՏԱՐԻ

Խմբագիր Շ. ՆՇԱՐԴՈՒՆԻ

Բաժնորդագրութեան պայմանները.—

Տարեկան բաժնեգինը՝ Ֆրանսայի համար 20 ֆրանք, արտասահման 25 ֆրանք։ Դիմել Dr. Ch. Aïvazian, 17, Rue Damesme, Paris.

Իր տեսակին մէջ միակ թերթը, ամէնուն մատչելի իր լեզուով եւ գինով։ Մեր ամէնէն չատ տարածուած թերթերէն մին, գործատուած բոլոր հայ բնտանիքներու կողմէ։

Բաժանորդագրուեցէք եւ բաժանորդագրեցէք ձեր բարեկամները, մէկ բաժնեգին վճարելով՝ մէկ այցեգին պաշկաս կը վճարէք ձեր բժիշկին։

Հայ ընտանիքին այցելու բժիշկն է ՀԱՑ ԲՈՑԺը։

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐՎԱՑՐԸ

Ճաշարան **Ֆ Լ Օ Ր Ի Ա**

61, Rue Monsieur le Prince, Paris (6)

Մէթրօ՝ Ծտէօճ եւ Սէն Միշէլ Հեռաձայն Dantor : 52 73

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ։

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Մարսէյլի Բալուի Հայր. Միութիւնը իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ Պ.Պ. Սիմոն եւ Պետրոս Ներսէսեաններու, տիկ. Ալիսէնի (Ամերիկա) իրենց հօր եւ հօրեղբօր՝ ՄԵԼՔՈՆ ՆԵՐՍԷՍԵԱՆի մահուան առթիւ, որ տե ի ու եցաւ կեսգ. 17ին, Ամերիկա։

×

Մարսէյլի Խոշմաճ Գիւղի կարօտեցող Միութիւնը իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ Պ.Պ. Սիմոն եւ Պետրոս Ներսէսեաններու, տիկ. Ալիսէնի (Ամերիկա) իրենց հօր եւ հօրեղբօր՝ ՄԵԼՔՈՆ ՆԵՐՍԷՍԵԱՆի մահուան առթիւ։

ԿԱՊՈՑՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ռուսաստանի մէջ գտնուած ձեր ազգականներուն եւ բարեկամներուն յաւադոյն եւ իրական օժանդակութիւնան ձեւն է ղրկել անոնց կապոցներով բրդեղէն կտորներ, ճերմակեղէն, կօշիկներ եւ Թրիքօթաժ։

Այս բոլոր իրեղէններէն ժենք ունինք ճոխ մթերք եւ կ'ուզարկենք զանոնք Ռուսաստան շատ ձեռնտու եւ մատչելի գիներով։

Ունինք տրամադրելի ընտրութուտ եւ էքսկլիւզիվ գրասենեակներ, ինչպէս նաեւ դաշնակներ շատ մատչելի գիներով։

Գիներու ցանկը եւ նժոյշները կը ղրկուին առաջին իսկ պահանջին,

Դիմել՝ **American Lloyd, Paris (9), 7 rue Auber**
Tél. Opéra 67-77, 67.78

ԱՐՔԱՅԱԿԱՆ ԽՄԻՉՔ

ՐԱՔԻ ՏԻՒԶ

Զուտ խաղողէ քաշուած եւ ածխածնով պատրաստուած օղին է ՐԱՔԻ ՏԻՒԶը։

Զգուշացէք այլ եւ այլ նիւթերով պատրաստուած եւ ձեր կեանքին վնասակար օգիները խմելէ, այլ խմեցէք միմիայն ՐԱՔԻ ՏԻՒԶը, որուն անարատ, կազդուրիչ եւ ախորժաբեր ըլլալը հաստատուած է վնասհատուած է։

UN DUZE
MARQUE DÉPOSÉE
RAKI
40°
DUZE
Véritable Anisette Orientale
DISTILLERIE OTTOMANE ISTAMBOUL

Ֆրանսայի համար ագոնեատէր՝ Ա. ՏԱՒԱՒԻ ԻԲԷԱՆ
8 rue Suffren, Marseille — Tél. D. 70-89

Etude de Me BERNARD WAHÉ
(17e ANNÉE)
Licencié en Droit de la Faculté de Paris
Ancien élève de l'École des Hautes Études Sociales
JURISCONSULTE
de
Droit Français et International Privé
Mandataire en Justice
159 rue Lafayette. Paris (Gare du Nord) Tél. NORD 68-02

ԿԸ ՍՏԱՆՁՆԻ ամէն տեսակ գաղեր, Փարիզի, գաւառի, գաղութներու եւ արտասահմանի մէջ։ Ժառանգութիւն իրաւագիտ. ամէն տեսակ խնդիրներու Արկածի գաղեր, ամէն լեզուէ թարգմանութիւններ։ Նաթարալիզասիոնի օրինական ձեւակերպութիւններ եւ անունները, վաճառութիւն, ընկերութիւններու կազմութիւն եւ լուծում։ Ամէն տեսակ գործերու խմբագրութիւն։ Իրաւագիտական քննութեանց եւ մրցութիւններու պատրաստութիւն։ Ճառերու եւ գաւասխօսութիւններու խմբագրութիւն։ Ժառանգակցութիւն 25 ֆր.։ Կ'ընդունի ամէն օր ժամը 5—7, բացի շաբաթ, կիրակի եւ տօնի օրերէ։

Կ'ընդունի նաեւ ժամադրութեամբ։

ԺԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԾԱԽՈՒ ԵՆ

1.— *6 լամբնոց* **T. S. F.** *մը «փիքափ»ով միասին, գին* **1200 ֆր.** *բան արժէքն է* **3600** *ֆր։*

2.— *Ինքնաշարժ մը «Մաթիս» մարք, ունի 14 ձիու ուժ, գին* **1900** *ֆր։ կրնաք սակարկել։*

3.— *Սափրիչի խանութ մը՝ հարուստ եւ բանուկ հրապարակի վրայ, ունի 3 արանց, 3 կանանց աթոռներ, նաեւ 2 սեղեակ, ճաշարան, խոհանոց եւ պարտէզ մը, կահ-կարասիներով միասին։ Մատչելի գին։*

Դիմել՝ **ՁԱԼԸՄԵԱՆի, 3 Ave. de la Perte d'Orléans, Paris (14).**

REXY CINEMA (Lyon)
Cours Lafayette, angle Rue Garibaldi
9 — 15 Հոկտ.
երեկոյները ժամը 8.30
Իսկ Հինգ. եւ կիր. ցերեկ եւ գիչեր։
Berval
dans
Le Roman d'un Spahi
Գիչեր 3, 5 եւ 6 ֆրանք։
Ներկայ յայտարարութիւնը բեղուկն կը տրուի 2 մուտքի տոմսակ զեղչուած գինով

CIGALE CINÉMA
60 Avenue de Saxe. LYON
9 — 15 Հոկտ.
Առաւտները ժ. 2.30ին երեկոները 8.30ին
Bach
dans
Debout la dedans
Գիները 5 եւ 7 ֆր. location gratuite.
Ներկայ յայտարարութիւնը բեղուկն կը տրուի 2 մուտքի տոմսակ՝ զեղչուած գինով

Le Gérant: H. STEPHAN
Imprimerie A. DER (AGOPIAN) 17, Rue Damesme. PARIS (13)

ՁԱՐԹՈՂՆԻՔ

(ՎԻՊ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵԱՆՔԷ)

— o —

Սարգիս Աբերը ձեռքը դունչին տարած սկսաւ ինքնիրեն մտածել : «Երկար բեխերով, դաղթական մարդ մը» ... Դեռ երէկ իրենց տանը մէջ խնամի երէցփոխ մասին խօսք էր անցեր ... ին ինչո՞ւ Գէորգը յանկարծ բարկացաւ... «Էդ մարդու անունը մի տաք»... Սարգիս Աբերը ինքն իր վրայ կուչ եկաւ : Տէր Աստուած, ան-պամմ երեւանէն երկար բեխերով մէկը, էն կողմի մարդերէն նամակ մը բերած էր Գէորգին... Չո՞ր, չլինի որ... ու Սարգիս Աբերը ինքն իր մտքէն սարսափած, չուրջիններուն նայեցաւ, չլինի՞ որ անոնք ալ միեւնոյն բանը կը մտածէին :

Թոնրատունը գրեթէ լեցուեր էր : Գէորգն ու Վարդանը աննչմար ներս մտան ու տեղաւորուեցան անկիւնն մը՝ սպասելով գիւղի ուսուցչին, որ ժողովը պիտի բանար :

Վերջապէս վարժապետն ալ եկաւ : Երբ սասարդ տղայ մըն էր, թեմական վարժարանի նախկին աչակերտ մը, որ ըմբոստութեան պատճառով արտաքսուած էր դպրոցէն : Երկար մազերը մտաներով սանտրեց, սեւ պլուզի կարմիր վզկապը չտկեց, Գէորգը տեսնելով մտերմաբար ժպտաց ու իր դիրքի կարեւորութիւնը գիտցողի մը հպարտութեամբ չորս բոլորը աչք նետելէն վերջ, սկսաւ խօսիլ :

Ամբան խօսուած էր եկեղեցական կալուածներու գրաւման մասին, որ չիտակը վարժապետը նորութիւն մը չունէր ըսելիք : Բայց եւ այնպէս մեր երիտասարդ վարժապետը չէնքով չբնորհքով ճառ մը խօսեցաւ, որ ուղիղ մէկ ու կէս ժամ տեւեց : Ծոպնած գիւղացիներէն չատեր նստած տեղերնին կը քնանային, ուրիշներ կէս ականջ մտիկ կ'ընէին այդ չատ գրաբար ճառը, որու բառերուն կէսը հազիւ լսած լինէին :

Վարժապետը չատ ազդու խօսքերով վերջացուց ճառը : Ըսաւ, թէ հայ ժողովուրդը այդ ճակատագրական օրերուն պէտք է նախընտրէ մեռնիլ, քան բռնակալ կառավարութեան յանձնել իր դարեւոր եւ անբռնաբարելի իրաւունքները : Վարժարանի աչակերտները, որ այնքան հպարտութեամբ մտիկ ըրած էին իրենց ուսուցչի ճառը, սկսան ծափահարել : Ծափահարեցին նաեւ երիտասարդներէն ոմանք : Այդ ծափահարութիւնը այն անուրանալի օգուտն ունեցաւ, որ քնացողները արթննալով աչքերնին ճմռեցին ու իրենք ալ պակաս չմնալու համար բան կսան ծափահարել :

Երկարատեւ ծափահարութենէն յետոյ, թոնրատան մէջ տիրեց խոր լռութիւն մը : Մոծակներու դղրոցը կը լսուէր : Ոչ ոք կ'ուզէր խօսիլ : Շիտակը խօսելիք բան մըն ալ չկար արդէն : Գեղի եկեղեցին, փառք Աստծու, ոչ կալուած ունէր, ոչ հարստութիւն, դեռ չօշափելի պարտք մը կար վճարելիք : Հետեւաբար, յանձնելիք բան մը չունէին, չատ չատ պարտքի մուրհակները կրնային տալ կառավարութեան : Անլուծելի կը մնար սակայն, ախրտչէի եւ երէցփոխի բռնելիք դիրքը : Անոնք կառավարական յանձնախումբի առջեւ պէտք է բանային եկեղեցին, մատեանները ներկայացնէին, եւ կառավարութեան ներկայացուցած թուղթը ստորագրէին : Անոնց մասին ալ հաւաքուած դիւղացիք ինչո՞ւ ատար ընէին, առաջաւոր մարդիկ էին, Թող իրենց գլխու ճարը տեսնային :

Լռութիւնը անախորժ կերպով կը տարունակուէր : Գիւղացիք՝ անհանգստացած՝ իրարու կը նայէին : Ինչո՞ւ առաջաւոր մարդիկը բերան չէին բանար, հո մինչեւ լոյս հոն մնալու չէին :

— Ասելու բան մը չմնաց,— յանկարծ լսուեցաւ փինաջի Մարտոյի ձայնը, — վարժապետը լաւ ըսաւ՝ ոչ ատորագրութիւն, ոչ բանալի, պրծաւ դնաց : Յալիսը էգուց աշխատանքի պիտի երթայ, էլ ինչո՞ւ կը պահէք, Թողէք երեան կնիկներուն ծոցը հանգստանալու :

Զապտած փրթկոց մը դիմաւորեց Մարտոյի խօսքերը : Նոյնիսկ վարժապետը, որ ճառը վերջացնելէ վերջ այնքան լուրջ դիրք մը բռնած էր, չկրցաւ ժպիտը պահել :

Փինաջի Մարտոն Փարաքարի մէջ միակ մարդն էր, որու խօսքերը ո եւ է դրաքննութեան չէին ենթարկուեր : Մեզքին պառկած միտքը առանց քաշուելու կ'ըսէր, եթէ նոյնիսկ այդ խօսքերը գիւղի աղաներէն մէկն ու մէկի դէմ լինէին,— բան մը, որ բաւական յանդգնութիւն կը պահանջէր : Գիւղի միակ խանութպանն էր փինաջի Մարտոն : Ծանութը ըսուածը էլ միածնի ճամբուն վրայ կ'իյնար, ջրաղացէն քիչ ասդին, փոքր ծակ մը, որուն մէջ ինչ հագիւ կրնար չարժիլ : Կարճահասակ նիհար մարդ մըն էր Մարտոն. երկար եւ ծուռ քիթը քիչ կը մնար, դպչէր վերի շրթունքին : Ոչորը գլուխը երկար եւ բարակ վզին վրայ այնպէս կը չարժէր, ինչպէս հասած տանձ մը կոթին վրայ : Ծանութի մէկ անկիւնը փինաջու խարխլած սեղան մը կար, դարակներուն մէջ քանի մը կապոց չիբ, չաքար, լուցկի, ծխախոտ, թէյ, նաւթ եւ չիր :

Ընդհանրապէս փինաջի Մարտոն կը նստէր սեղանին քովը, ցածլիկ աթոռակի վրայ գինիի կաւէ պղինձը կողքին, որ քիչ մը չատ չաճախ կը բարձրանար դէպի բերանը : Ան սկզբունքով հակառակ էր ջուր խմելու : Այս պղինձի դոյութիւնը առիթ մըն էր Մարտոյի թշնամիներու համար, որ երբոր պատահ լինէին, թէ՝ ան ամբողջ չաբաթներով հարբած վիճակի մէջ է :

Այս դատողութիւնը անչուշտ անիրաւ զրպարտութիւն մըն էր : Ոչ ոք Մարտոյի օրօրուելով քալելը տեսած էր, անշուշտ բացի բարեկենդանի երեքթէն, երբ բոլոր գիւղացիներն ալ քիչ թէ չատ օրօրուելով քալելնուն Մարտոյի մէկ մէկու խառնուած ատքերը չէին կրնար տեսնել :

— Հը, ինչո՞ւ խալխը պահեր ես,— Մարտոն դարձաւ վարդապետին,— որ բան չունիս ըսելիք, Թող վեր կեան՝ ամէն մէկը իր տունը երթայ :

Սարգիս Աբերը ձեռքը ծնօտին տարած՝ կը մտածէր : Շուրջը նստողները բոլորն ալ հարուստ, գիւղի ունեւոր մարդիկ էին :

ՄԱԼԱՄԱՄ

(Շար.)

ԱՆԳԼԻԵՐԷՆ ԴԱՍԵՐ

Անգլիերէնի լեզուի ուսուցման եւ գրականութեան դասընթացքներ։ Դիւրաւոյց եղանակ եւ չափաւոր գին։ Դիմել՝ **Վ.ՀԱՀԱՆ ՔԷՐԻՔԼԻՓԵԱՆի, վկայեալ Թէհրանի Ամերիկեան գոլէճէն, Bachelor of Arts**
Հասցէ՝ **V. Kerestedjian, 17 Rue Maître-Albert, Paris (5).**

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ՝—

17, Rue Damesme, PARIS (13e)
Téléphone : Glacière 15 - 70

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՑ	ԵՒԱՄՍԵԱՑ
Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա	250 »	130 ֆրանք	—
Ամերիկա եւ ուրիշ երկիրներ	200 »	100 ֆրանք	—

ԵՐԵՔՇԱԲԹԻ
13
ՀՈԿՏԵՄԲԵՐ
MARDI
13 OCTOBRE
1936

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

Ամբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԺԲ ՏԱՐԻ — 12e Année No. 3242

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՍԵՒՆ ՈՒ ՃԵՐՄԱԿԸ, ՔԱՆԻ ՄԸ ԳԻԾՈՎ

—o—

Ըսինք թէ «Նոր Օր» չափազանց սեւ կը տեսնէ արդի երիտասարդութեան պահակները, «երեւութապէս չքեղ, բայց ներքնապէս պարապ անօթ մը» գտնելով անոր մէջ։

Այս վճիռը եւ դեռ ուրիշ մեղադրանքներ չեն համապատասխաններ ոչ իր ընթերցողին, ոչ ալ ուրիշ գաղութներու իրականութեան։

Նոյնիսկ եթէ վերի արտայայտութիւնը — չնորհիւ իր ստացած դասախարակութեան — անդին կը մնայ բաղմութիւն մը որուն համար պիտի չկրնայինք ըսել.— « Չի հաւատար ոչ մէկ բանի, չի զոհուիր ոչ մէկ գաղափարի, չի նուիրուիր ոչ մէկ իտէալի»։ Ոչ ալ պիտի կրնայինք զայն կոչել «անդիմադիմ, գաղափարազուրկ եւ հոգիով սնանկ»։

Հապա ի՞նչպէս գունաւորուեցաւ, քիչ - չատ չեշտ եւ գիծ ստացաւ մեր կեանքը, պառնդխուութեան 15 տարիներու ընթացքին։

Իրողութիւն չէ՞ որ եթէ թաղմաթիւ սայթաքումներ պատահեցան, մի - եւնոյն ատեն պատմութիւնը արձանագրեց իսկապէս լուսաւոր երեւոյթներ եւ գործեր։

Եթէ չատերը չափազանց արագ վազեցին եւ ինկան գլխիվայր, կամ ուրիշներ փայլեցան զարմանազան պղծութիւններով, անդին կը մնայ մեծամասնութիւնը, որ կը տեւէ եւ կը գործէ, համաձայն իր խառնուածքին եւ կարողութեան։

Ի՞նչ կ'ապացուցանեն, վերջապէս, Զ. Ո. Մ.ները, Հ. Մ. Ը. Մ.ները, երգչախումբերը, երիտասարդական, լարանական անհամար Միութիւնները, նոյնիսկ «Ցառագիմասիրաց»ները եւ միւսները, որոնք չունէ եւ չարժուն կը տարածեն գաղութէ գաղութ, տասը տարիէ ի վեր, հակառակ այնքան ջլատիչ պայմաններու եւ աննախընթաց վերիվայրումներու։

Երէկուան քաղաքագէտները չէ՞ն որ խարխսիլ մը կառչած՝ կը տեւէին ու կը գործեն այսօր։

Այո, ցանկալի էր որ անոնք հազարներով համրէին իրենց անդամները, փոխանակ հարիւրներու կամ տասնեակներու։ Բայց, համրանքին նուազութիւնը չի կրնար ժխտել իրականութիւնը։ Մանաւանդ եթէ նկատի առնենք իրաքանչիւր գաղութի պատկերը առանձին - առանձին։

Իրականութիւն է որ արեւելեան գաղութներուն մէջ աւելի մխիթարական է կացութիւնը, քան սա լուսացնցուղ պողոտաներուն վրայ։ Օրինակ, Պուենոսայրէս։ Իրապէս այնքան սե՞ւ է պատկերը։ Եւ յուսահատակա՞ն է հեռանկարը, բարձրանալով դէպի Պալքաններէն կամ տարածուելով դէպի արեւելք։

Ո՞ր տարրն է, վերջապէս, որ վառ կը պահէ դիմադրական կորովը, աւիւն կը հոսեցնէ հանրային չարժումներու մէջ, համատարած ապականութեանց վերեւ։

Եւ չատ չեռնենք չարք մը բացառական դիմեր, հիմա որ կը յաւակնինք աւելի լաւ սերտած ըլլալ գոնէ ժամանակակից պատմութիւնը։

Այս հաստատումները կը պարտկե՞ն բուն ողբերգութիւնը։ Ո՛չ։

Արդի երիտասարդութեան մէջ կան մեղքեր որոնք չեն ծածկուիր։

Այդ հարցն էր որ կ'ուզէինք վերլուծել, առանձին։

Շ.

ՕՐԸ ՕՐԻՆ

Հ. Ց. Դ. ԹԱՆԳԱՐԱՆԸ ԵՒ ԱՐՏԱՇԷՍ ՎԱՆԱՐԵԱՆ

—.—

Անցեալ երեքշաբթի օր, Հ. Ց. Դ. թանգարանին բացման լուրին առթիւ, ուշադրութենէ վրիպած էր շատ հարեւոր պարագայ մը։

Թանգարանի շէնքը գնուած է ռադիացեալ ընկերոջ մը, Արտաշէս Վանարեանի կտակած գումարով, **5000** տոլար, զոր Ամերիկայի Պատգամ. ժողովը տրամադրած էր այս նպատակին։

Կը կարծեմ թէ մեր շրջանին մէջ շատ քիչեր կը յիշեն այս անունը, Արտաշէս Վանարեան (Հացագործեան)։

Գաղթականական հարցին Ցատուկ մասնախումբը (որ կը գործէ Ազգաժողովին կից) այս տարի նուիրած է չարք մը նիստեր : 6րդ Յանձնաժողովը նուիրած է ամբողջ նիստ մը, իսկ 4րդ Ելեւմտական Յանձնաժողովը իր հոկտեմբեր 9ի առաւօտեան նիստը : Ազգաժողովին մէջ տիրող ընդհանուր տրամադրութիւնն է, ճիշդ ժամանակին, այսինքն 1938 դեկտեմբեր 31ին, գոյել Նանսէնեան գրասենեակը եւ այլեւս չեղեալ նկատել գաղթականական կնճիռը : Այս նոյն տեսակէտը պաշտպանած է նաեւ Խորհրդային Միութեան ներկայացուցիչը, Պ. Շեթայն, որ միշտ լուռ կը մնար : « Եթէ ճիշդ ժամանակին վերջ չտանք գաղթականական հարցին,— յայտարարած է Աւստրալիոյ ազդեցիկ ներկայացուցիչը, Պ. Պրուս,— այդ հարցը իր հաւանական բարդութիւններով կրնայ սպառնալ Ազգաժողովին գոյութեան» :

Անուրանալի է, որ գաղթականութեան համար աղետալի վիճակ մը պիտի ստեղծուի, եթէ ի վերջոյ Ազգաժողովի մէջ յաղթանակէ այս տեսակէտը :

Թուրքիա կը բանակցի Իտալիոյ եւ Իրանի հետ

Այս ամսու վերջը Թրքական պատուիրակութիւն մը պիտի երթայ Հռոմ, առեւտրական նոր դաշնագիր մը կնքելու համար, քանի որ նախկին դաշնագրին պայմանաժամը կը լրանայ դեկտեմբեր 1ին : Թուրքիան ալ մասնակցած ըլլալով պատժական տնօրինութեանց, Իտալիա նախապէս մերժած էր բանակցիլ հաշուակցութեան մասին, բայց այժմ հաւանութիւն յայտնած է :

Թրքական ուրիշ պատուիրակութիւն մըն ալ ճամբայ ելած է դէպի Թէհրան, նախագահութեամբ Պէրնի նախորդ դեսպան Ձէմալ Հիւսնիի : Պատուիրակութեան նպատակն է պայմանագիր մը կնքել Թաւրիզ — Տրապզոն ճամբու մասին (Թրանսիթ) : Միեւնոյն առեն պիտի բանակցի գաւառական փոխադարձ օգնութեան եւ յանցաւորները յանձնելու մասին :

Եթէ կ'ուզէք հպատակ ու գիտուոր ըլլալ...

Վերջերս ազդ մը հրատարակած էինք, «La « Féderation des Français d'adoption» ընկերակցութեան կողմէ, օտարներու հպատակութեան մասին :

Ընկերակցութիւնը նոր ազդով մը կը ծանուցանէ.— 18էն 30 տարեկան այն օտարականները որ կ'ուզեն քաղաքացի դառնալ եւ կատարել իրենց դասին դիմուորական պարտաւորութիւնները, ինչպէս եւ անոնք որ միեւնոյն բաղձանքն ունին (հպատակութիւն), բայց 30 տարեկանէն վեր են եւ ընդունակ՝ նպաստելու ազգային պաշտպանութեան, կը հրաւիրուին իր կեդրոնը, 152, Bld. Haussmann, ուր ամէն տեղեկութիւն պիտի տրուի առանց ծախքի եւ յանձնառութեան : Ընդունելութեան ժամեր՝ ամէն օր 9էն 19, կիրակի օրերը՝ 9էն 13 : Զրի տեղեկութիւններ կը տրուին նաեւ թղթակցութեամբ :

ՊԵԼԺԻՈՑ ՉԷՑՈՔՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Միջազգային մամուլը կը չարունակէ զբաղիլ Պելժիոյ չէզոքութեան յայտարարութեամբ, որ վերի վայր չէրջեց Մեծերու ծրագիրները : Ֆրանսայի չափ մտահոգ է նաեւ Անգլիա, ուր կը կարծեն թէ երեք երկիրներու սպայակոյտները միշեւ գոյացած զինուորական համաձայնութիւնը կը պահէ իր ուժը : Ֆրանսայի նախարարական խորհուրդի առջի օրուան նիստին մէջ, առաջարկեցաւ Մաժինոյի գիծը երկարել մինչեւ պելժիական սահմանը, բայց առ այժմ յետաձգուեցաւ այս ծրագիրը : Փարիզի պելժիական դեսպանը արտաքին գործերու պաշտօնատունը երթալով, կարգ մը լուսաբանութիւններ հաղորդեց : Ալպակոմեան թերթերը Պելժիոյ դիրքին փոփոխութիւնն ալ կը վերագրեն ժողովրդական ճակատի կառավարութեան, ըսելով թէ երես առաւ համայնավարներուն եւ քայքայեց Մոսկուան՝ խառնուելու արեւմտեան եւրոպայի գործերուն :

ԾԱՆՐ ԿՈՒԻՆԵՐ

Հողագործներու եւ բանուորներու միջեւ

*Աւելի քան 50 հոգի վիրաւորուեցան Շարթի մէջ (Լիօն է Լուառ), երբեմն օր, կռիւ մը ծագած ըլլալով հողագործներու եւ բանուորներու միջեւ : Կռիւը տեւեց աւելի քան մէկ ժամ, բիւրեղով, թիւերով, բահերով, դանակներով եւ ուրիշ զործիքներով : Վիրաւորներէն 30ը հիւանդանոց փոխադրուեցան, մէկը արդէն հոգեվարք (գլուխը ջախջախուած) : Հողագործի մը լեարդը ծակեցաւ, ուրիշ մը մէկ աչքը կորնցուց եւն. : Խռովութեան պատճառն էր զործադուլ մը՝ չաքարի զործարանին մէջ, ուր 900 բանուորներ, կէս առ կէս Արաբ, Լեհ եւ Չեխ, զրաւեցին զործարանը, վար դնելով զործատէրերը : Հողագործները լսելով, բողոքի միթինկ մը սարքեցին եւ պահանջեցին որ նահանգապետը պարպել տայ զործարանը : Այդպէս ալ եղաւ եւ հողագործները, որոնք ճակնդեղ կը մշակեն եւ ուղղակի կապ ունին զործարանին հետ, ցրուելու վրայ էին երբ 50 բանուորներ դիրք բռնելով սկսան քարկոծել : Հողագործները նոյն, երբ 50 բանուորներ դիրք բռնելով սկսան քարկոծել : Հողագործները նոյնպէս

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

EE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
(ԵՐԹԵԻՔԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,—

17, Rue Damesme, PARIS (13e)
Téléphone : Glacière 15 - 70

ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԱՄՍԵԱՑ ԵՒԱՄՍԵԱՑ

Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա	250 »	130 ֆրանք	—
Ամերիկա եւ ուրիշ երկիրներ	200 »	100 ֆրանք	—

ԵՐԵՔՇԱԲԹԻ
20
ՀՈԿՏԵՄԲԵՐ
MARDI
20 OCTOBRE
1936

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

Ամբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԹՒ ՏԱՐԻ — 12e Année No. 3248

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԹՐՔԱԿԱՆ ՋՐԱՂԱՑԸ ԿԸ ԲԱՆԻ...

—o—

Սուրիոյ վերջին թղթաբերէն կը տեղեկանանք թէ արդար վրդովմամբ մը մատնուած է հայկական գաղութը, իբրեւ հետեւանք թրքական սոսր դաւերուն, որ կը չարունակուին աւելի քան մէկ ամիսէ իվեր, Իսքէնտէրուն - Անտիոքի հարցին առթիւ:

« Յառաջ » օրը օրին արձանագրած է ինչ որ տեղի կ'ունենայ այդ ճակատին վրայ: Այսօր ալ պիտի կարդաք չարք մը նորութիւններ, որ կը ձգտին միեւնոյն հիմնական նպատակին.— Հայերն ալ կապել թրքական դաւադրութեան, եւ պահանջելու Հատարի Իսքէնտէրունը եւ Անտիոքը, իբրեւ թրքական չրջաններ:

Էնկիւրի քայլ մը եւս նեռելով այս ճամբուն վրայ, ծանուցած է Ֆրանսական կառավարութեան, պահանջելով անկախ հռչակել «վիճելի» չրջանները...

Ամէն պարագայի մէջ, կարելի չէ ժխտել կացութեան փոփոխութիւնը, որ ամէն բանէ առաջ կը պահանջէ արթնութիւն եւ լրջութիւն, ինչպէս ազդարարեցինք առաջին օրէն:

Պէյրութի «Ազդակ»ը իր Հոկտեմբեր 11ի խմբագրականը նուիրելով այս հարցին, դիտել կուտայ «Թրքական ոճրային դաւադրութիւն մը» խորագրին տակ.

— «Թուրք կառավարութիւնն ու ժողովուրդը, կիլիկիոյ պարպումէն ի վեր ամէն միջոցի դիմած են վնասելու համար սուրիահայութեան եւ կասկածելի ցոյց տալու զայն յաչս տեղական ժողովուրդին ու իշխանութեանց:

Գործածած են միջոցներուն ամէնէն տմարդին ու վատթարագոյնը, վտանգի ենթարկելու համար մեր ժողովուրդի փիզիքական գոյութիւնը: Բացի լրագրական տմարդի պայքարներէ եւ ազտոտ փրոփականտէ, Թուրքերը մասնաւոր գործակալներու միջոցաւ ջանք չխնայեցին վարկաբեկելու համար Սուրիոյ ու Լիբանանի հայութիւնը: Ոչ մէկ առիթ փախցուցին անոնք իրենց զգուելի դիտաւորութիւնները յագեցնելու համար: Սուտն ու զրպարտութիւնը իրենց համար դարման ամէնէն սովորական գործերը՝ քունա-տրելու համար միտքերը:

Անկարելի է մի առ մի թուել Թուրքիոյ սարքած սադրանքները վերջին տասնամեակի ընթացքին, Սուրիոյ հայութեան դէմ: Տեղական թերթերու մէջ մերթ ընդ մերթ երեւցող հակահայ գրութիւնները դրդուած են թրքական գործակալներու կողմէ, որոնց դժբախտաբար յաճախ անմեղօրէն զոհ գացին մեր միամիտ պաշտօնակիցները: Սահմանամերձ շրջաններու մէջ պատահած մահ-տոնակիցները: Սահմանամերձ շրջաններու մէջ պատահած մահ-սանեցութեան կամ ոճրային բոլոր արարքները անմոռթաբար վերագրուեցան Հայերու, երբ այդ դէպքերուն թուրք հեղինակները իրենց դիակները կը ձգէին սահմանագլուխի մերձակայ տարածութիւններու վրայ, երկուստեք ընդհարումներէ վերջ»:

Եւ կ'եզրակացնէ, պարզելով Սուրիոյ հայ գաղութին սրամտութիւնները.

— « Հայութիւնը մանաւանդ կը հիանայ ու կը գնահատէ Սուրիոյ հայրենասիրութիւնը, անշահախնդիր եւ լայնամիտ դեկավարութիւնը, որուն խոհեմութեան ու իմաստութեան արդիւնքն է ձեռքբերուած անկախութիւնը եւ փրանսական բարեացակամ ու հզօր պետութեան բարեկամութիւնը:

Թող իմանան բոլոր դաւադիրները ու բռնակալները որ սուրիացի Հայը, իբրեւ անձնուէր եւ պարտաճանաչ բաղաքացին այս նուիրական հայրենիքի ՈՉ ՄԷԿ ՐՈՊԷ ԶՈՒՏԻ ԹԵՐԱՆԱՅ ԵՒ ՈՉ ՄԷԿ ԶՈՀՈՂՈՒԹԵԱՆ ԱՌՋԵՒ ԿԱՆԳ ՊԻՏԻ ԶԱՌՆԷ այդ հայրենիքին քարգաւաճման եւ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ» :

Ինչ խօսք որ Սուրիոյ հայկական գաղութը պէտք չունի նոր հաւաստիքներ տալու, իր հաւատարմութեան եւ անձնուիրութեան մասին: Եւ կը կարծենք թէ ճիշդ այս դիտակցութեամբ է որ Թուրքերն ալ նոր ոճրամիսող մը կը փորձեն,— կ'ուզեն համոզել թէ Իսքէնտէրունի եւ Անտիոքի Հայերն ալ թրքական տեսակէտին չարած են...

Դեռ անցեալ օր չէ՞ր որ Թուրքերէն թերթ մը, «Փուրուն» (նախկին «Վագըթ»), հետեւեալ աւետիսը կը հաղորդէր, այնքան զարմանազան պատմութիւններու կարգին.

— « Այսօր գոհացուցիչ լուր մը պիտի տամ բոլոր թուրք ընթերցողներուն,— այստեղի Հնչակեան Հայերը հակամէտ կը թերցողներուն,— այստեղի Հնչակեան Հայերը հակամէտ կը թուին մեզի հետ գործակցելու՝ Անթաքիոյ եւ Իսքէնտէրունի անկախութեան համար բացուած ՄԱՐՏԻՒ ԵՒ ՀԱՄԵՍՏ պայքարին մէջ: Վերջին օրերս անոնք ասիկա երեւան հանեցին եւ սկսան գործակցիլ մեզի հետ: Հնչակ Հայերու այս ընթացքը մեծ գոհունակութիւն պատճառած է այստեղի թուրք ժողովուրդին»:

Մենք տեղեկութիւն չունինք թէ Հնչակեաններ կա՞ն Իսքէնտէրուն - Անտիոքի չրջանին մէջ եւ եթէ կան, ի՞նչ դերը բռնած են այս հարցին մէջ:

Բայց, նշանակալից է այս երեւոյթը, իբրեւ արտայայտիչ թրքական դաւին խորութեան եւ խարդախութեան:

Մինչեւ հիմա տրուած լուրերուն մէջ, Թուրք թերթերը յատկապէս կը չեշտեն թէ «Դաշնակ Հայերը» Թուրքերուն դէմ կը գործեն, թէ կ'աշխատին յաջողցնել Սուրիոյ երեսփ. ընտրութիւնները եւն.: Նոյնիսկ Իսքէնտէրուն – Անտիոքի թուրք ժողովուրդը եւն.: Նոյնիսկ Իսքէնտէրուն – Անտիոքի թուրք ժողովուրդին «աղքատութիւնը եւ անօթութիւնը» կը վերագրեն Դաշնակցութեան :

« Առանց գիտնալու ձեռքացիւֆ Հալէպի յոյն վաճառական - ներուն եւ Գրըգիսանի դաշնակ հոգիով Հայերուն եւ շատ պարտք ընդիւֆ: Այս ալ ուրիշ ցաւ մը եղաւ: Հակառակ անոր որ պարտքը եւ տոկոսը հարիւրին հարիւր վճարած ենք, նորէն հազարաւոր ոսկի պարտական ենք »:

Ուրեմն Դաշնակները ամէն տեսակէտով թշնամի, իսկ Հնչակեանները բարեկամ եւ կուսակից՝ թրքական դատին ...

կը խօսինք տակաւին:

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՆՈՐ «ՄԱՔՐԱԳՈՐԾՈՒՄԸ» ԳԼՈՒԽԷՆ ՍԿՍԱՒ

—·—

60,000 ? հաւատացեալներ վտարուա՞ծ

« Մաթէն » կը գրէ թէ Ա. Միութեան Վերստուգիչ յանձնաժողովը վերջացուցած է իր քննութիւնները կուսակցութեան բարձրագոյն ատեաններու մասին, նախագահութեամբ Զեկայի նոր պետին՝ Եէժովի: Տեղեկագիրը անհրաժեշտ կը դանէ անողոք մաքրագործում մը որ տեսնուած չէ մինչեւ հիմա: Նոյն իսկ ժողովրդական գործավարներ (նախարար) ամբաստանուած են: Սեւ ցանկը անցած են անտառներու գործավարը՝ Փոսով, գործարեւսեռից գործավարը՝ Քէրժէնցեւ (նախկին դեսպան Հռոմի), եւ Թղթադարուհուց գործավարը՝ ժուքով: Նոյն բախտին արժանացած են կեդրոնական վոխ - գործավարը՝ ժուքով: Նոյն բախտին արժանացած են կեդրոնական վոխ - գործավարը՝ ժուքով: Նոյն բախտին արժանացած են կեդրոնական վարչութեանց եւ յանձնաժողովներու անօրէնները: Անոնց տեղ պաշտօ

Ա. Ա.

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐԱՆԻ ՀԱՐՑԵՐԸ

Ե. Ա. Ֆրանցուզովի հրատարակած «Հայկական պատմական հուշարանի» առաջին հատորի մասին հրատարակված ակնարկներից հետո, որոնք ցույց են տալիս, որ հրատարակությունը մեծ հետաքրքրություն է առաջացրել, մենք ստացանք հետևյալ նամակը, որ ուղարկել է մեզ

ՍՊԱՍՎՈՒՄ Է ՀԱՂԹԱՀԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐԸ

ԳԼՈՒԽ 4

ԻՆՉՊԵՍ ՀԱՂԹԱՀԱՐՎԵՑ ՎԱՍԻԼԻ ՊԵՏՐՈՎԻՉԸ ԵՎ ՀԱՎԱՏԱՑԻ ՎԱՍԻԼԻՍԱՅԱՆ

— Ես ուրախ եմ, որ ձեզ տեսնում եմ առողջ և ուրախ, — ասաց Վասիլի Պետրովիչը, երբ Վասիլիսան ներս մտավ իր աշխատասենյակը: — Ես ուրախ եմ, որ ձեր հիվանդությունը ձեզ ոչ մի հետք չի թողել: Ես ուրախ եմ, որ ձեր ամուսինը ձեզ հետ չէ

ՉՈՐՈՒԿ

(ՎԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԿԱՐՃԸ)

— ո —

Ցրտից փոքրտուն դէմքերով, ձիւնի փոշիով ծածկուած գլուխներով, ոտքերը ձիւնի մէջ մինչեւ ծունկերը խրած, ամբողջ օրը ձիւնի մէջ կանգնած, ձիւնի մէջ քնանալ սովորած, ձիւնի մէջ ապրող, ձիւնի մէջ մեռնող, ձիւնի մէջ ամբողջ կեանքը անցուցած, ձիւնի մէջ ծնած, ձիւնի մէջ ամուսնացած, ձիւնի մէջ զաւակներ ունեցած, ձիւնի մէջ ամբողջ կեանքը անցուցած, ձիւնի մէջ ամբողջ կեանքը անցուցած, ձիւնի մէջ ամբողջ կեանքը անցու

ՀԱՐԱԶԱՏ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

EE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)
Téléphone : Glacière 15 - 70
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,—

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՑ ԵՒ ԱՄՍԵԱՑ	ԵՌԱՄՍԵԱՑ
Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա	250 »	130 ֆրանք	—
Ամերիկա եւ ուրիշ երկիրներ	200 »	100 ֆրանք	—

ՀՈՐԵՔՍԱԹԻ
21
ՀՈԿՏԵՄԲԵՐ
MERCREDI
21 OCTOBRE
1936

Թ. ՏԱՐԻ — 12e Année No. 3249

Խմբագիր՝ ՇԱԽԱՐԸ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒՇ ԽՕՍՔ

ԱՐԻՒՆԱԾԱՐԱՒ ԽՈՒԺԱՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԻՄԱՑ

—o—

Աւելորդ պիտի ըլլար բացատրել թէ արիւն կը հոսին Թրքական մամուլին խուժանավարական խաղերը, Իսքէնտէրուն - Անտիոքի հարցին առթիւ:

Արիւն կը հոսին մանաւանդ անոր համար որ, Թուրք թերթերը առիթ չեն փախցներ Հայերու անունն ալ խառնելու իրենց «հարմեան եւ մաքուր» պայքարին:

Անոնք օր մը Իսքէնտէրուն - Անտիոքի բոլոր Հայերը կուսակից կը հռչակեն իրենց դաւին, ուրիշ օր մը կը չոյեն Հնչակեան – ները եւ ամբոխային կէրքերը կը գրգռեն «Դաշնակ»ներուն դէմ, գրելով թէ «հակաքարոզութիւն կը կատարեն Հայերու մէջ»: Ցերթով թէ «հակաքարոզութիւն կը կատարեն Հայերու մէջ»: Ցերթով տոյ ուրախութիւն կը յայտնեն որ Սուրիոյ Հայերը «վերջին 10-15 տարիներու ընթացքին աշխատած են Թուրքերէն լեզուն տարածել այս կողմերը եւ այս ձեւով առնել իրենց հայրենաբաղձութեան կարօտը »:

Թուրքերը չատ լաւ սերտած են ժողովրդական առած մը.— «Անուշ լեզուն օձը ծակէն կը հանէ»:

Այս պարագային, իրենք են որ իսկական օձի դեր կը կատարեն, մթնոլորտը թունաւորելու եւ Արաբները Հայերուն դէմ հանելու համար:

Ի՞նչպէս կարելի է խափանել այս վրան -բաց խաղերը:

Բացատրեցինք, առաջին օրէն, բայց աւելորդ չէ միշտ յիշեցնել: Խնդիրը կապ ունի ոչ միայն Իսքէնտէրուն - Անտիոքի չերը - ջանին, այլ եւ բովանդակ Սուրիոյ հայ գաղթականութեան ճակատագրին հետ, ամբողջ սահմանին երկայնքը:

Սուրիոյ գաղութին առաջին պարտականութիւնը պիտի ըլլայ մնալ միշտ արթուն եւ պատրաստ, աւելի քան երբեք լուրջ:

Այս տարրական պարտականութիւնը կը նշանակէ կարճ կապել թեթեւամտութիւն պիտի ըլլար կարծել թէ հզօր պետութեան մը հովանին պիտի վայելենք դեռ երեք տարի, հետեւաբար աւե – լորդ է մտատանջուիլ :

Ընդհակառակն, աւելի քան երբեք ժամանակն է հակազդելու այս արիւնածարաւ խաղերուն, լուսաբանելով արաբական մա - մուլը եւ մտաւորականութիւնը, այլ մանաւանդ աշխատաւոր բազմութիւնները, որոնք այնքան դիւրազգած են, այսպիսի պարագաներու մէջ:

Երկրորդ պարտականութիւն մը,— միանգամ ընդմիշտ վակել այն զզուելի խաղերը, որոնց գլուխն անցած են ափ մը չոչորթ - ներ, ապացուցանելու համար թէ իրենք բարեկամ են Արաբին, իսկ մնացեալները՝ Դաշնակցականները թշնամի, ինչպէս ըսին, տպեցին ու ցրուեցին: Ոչ միայն Սուրիոյ, այլեւ Փարիզի եւ Ամերիկայի մէջ:

Թող Թոյլ տան ըսելու որ՝ այս հարցին առթիւ, կրկնապատիկ աւելի պատասխանատու են այդ ցնդարանութիւնները արտա – տպող Թերթերու խմբագրութիւնները, քան զանոնք յղացող վա - խուկները:

Որ եւ է վրիպում՝ այս ճամբուն վրայ, պարզապէս պիտի ծառայէ ջուր— իրականին մէջ՝ արիւն — հոսեցնելու Թրքական Ջրաղացին մէջ:

Նոյն իսկ իրրեւ կուսակցական պայքար՝ ոճիր են այս կարգի մարզանքներն ու բանգիտութիւնները, ներկայ ճակատագրական պարագաներուն մէջ:

«Զգուշութիւն» պատեհութիւններ չեն պակսիր, ուրիշ դեռնի վրայ, եթէ այդ է իրենց նպատակը:

Թշնամին անդադար կը ծեծէ չէն գաղութի մը դուռները, եւ վա՜յ անոնց որ կը նախընտրեն ցիմար կոյսերու անհոգութիւնը կամ բիւզանդարանութիւնները:

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՄԱՏՐԻՏԻ ՏԱՆԻՔՆԵՐԸ Կ'ԵՐԵԻԱՆ...

—·—

175,000 զոհեր պատերազմի սկիզբեն ի վեր

Սպանիոյ ապստամբները սարսափելի ամբաստանութեան մը ենթարկեցին էլ Խաքօբիալը, ճամբայ բանալու համար դէպի Մատրիտ: Հռչակաւոր պալատին չորկակայ բլուրներէն Զօր - Ֆրանքոյի զինուորները կը սեսնէին Մատրիտ տի տանիքները, 22 մղոն հեռաւորութեամբ, մինչ Թնդանօթի ռումբերը ամպի ծուխեր եւ աւերակներու բեկորներ կ'արձակէին կառավարական դիրքերէն :

Թնդանօթաձգութեան պատրաստութենէն վերջ, հետեւակազօրքը եւ ճեղազօրքը յարձակումի սկսան արտակարգ ուժգնութեամբ: Զորս ապստամբ զօրամասեր վճռապէս քալեցին էլ Խաքօբիալի վրայ, բուռն ճիւնամրրիկի մը մէջ: Երբ այս դիրքը իյնայ, Զօր - Ֆրանքօ ուրեցած պիտի ըլլայ Մատրիտ — կուսատարամա հաղորդակցութեանց գծին: Տեղական Թերթերու Թղթակիցները կը հեռագրեն Թէ կառավարական զօրքը ծանր հարուած մը կրեց, երբ ապստամբները յարձակեցան զրահապատ կառախումբի մը վրայ, Նավալ փէ - պըտամբները յարձակեցան զրահապատ կառախումբի մը վրայ, Նավալ փէ - տրալի եւ Լաս տէլ Մարքուէսի միջեւ, գնդացիրի կրակ մը տեղացնելով: Հարաւային ճակատին վրայ, ապստամբները յառաջ խաղացին Թոլէտօ - Մատրիտ ճամբուն վրայ, 13 մղոն հեռու մայրաքաղաքէն: Իրենց գլխաւոր նպատակն է Նավալքարնէրոյի մարտկոցը :

Կառավարական աղբիւրէ կը հաղորդեն Թէ հանքագործները նորէն պաշարած են Օվիէտօն, որ նոր ազատեցաւ :

**** Զորրորդ ամիսն է որ կը տեւեն Սպանիոյ քաղաքացիական կռիւները: Իրագեկներու տեղեկութեանց համաձայն, մարդկային կորուստը կը հասնի 175,000ի, սպանեալ կամ վիրաւոր :*

**** Օտար Թղթակիցներ կը գրեն Թէ Թշնամին Մատրիտի դուռները հասած է, եւ սակայն սրճարաններն ու սինէմաները լեցուն են գարձեալ, մինչեւ գիշերուան ժամը 10: Միւս կողմէ, հաղարաւոր երիտասարդներ եւ երիտասարդուհիներ խռնուած են ճակատին վրայ: Երիտասարդները խրամներ կը չեն փութոյ պնդութեամբ, իսկ երիտասարդուհիները ուտելիքները կը պատրաստեն եւ սուրճ կ'եփեն զինուորներ ի բուն: Աչքէն ժողովրդական չարժանկարն է «Լա Հիսթօրիա Թէ Լօս Զիուիթէս», Զարկղ Տիքընօի «երկու քաղաքներու պատմութիւնը», որ կը համապատասխանէ օրուան հոգեբանութեան: Ֆրանսայի ժողովուրդին ըմբռնումը՝ միապետութեան դէմ կ'ոգեւորէ բազմութիւնները, որոնք խնդութեան կանչեր կ'արձակեն, երբ չարժանկարին վրայ կը տեսնեն կիներ՝ միացած յեղափոխականներուն: Նոյնպէս բազմութիւնը կը խանդավառուի, երբ Պասթիլը պաշտպանելու համար վարձուած օտար վարձկանները կը գնդակահարուին, իսկ Պասթիլի գրաւումը մոլեգնութեան կը հասցնէ ցնծութիւնը :*

Մատրիտէն դուրս, կամաւորները արթուն կը հսկեն, չգիտնալով Թէ Թշնամին ո՛ր կողմէն պիտի գայ եւ պատրաստ կը սպասեն, Թիլ առ Թիլ կռուելու համար: Բոլորն ալ սպառազինուած են ամէն տեսակ ռազմանիւթերով եւ մանաւանդ ձեռնառումբերով :

«ՄԱՔՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԸ» ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

—o—

Եօթը Խորհրդային Հանրապետութեանց նախագահներ կը ջրատին

«Մաթէն» կը գրէ Թէ Խորհրդային նոր եռապետութիւնը — Սթալին, Վորոշիլով եւ Եժով — յամառօրէն կը չարունակեն ամբողջովին իրենց ափին մէջ կեդրոնացնել իշխանութիւնը: Այս առաջադրութեամբ, եւ ճիշդ այն պահուն երբ պիտի գործադրուի նոր սահմանադրութիւնը, նոր եւ արմատական փոփոխութիւն մը եւս կը կատարուի :

Խորհրդային Միութեան եօթը դաշնակցային հանրապետութեանց նախագահները մինչեւ հիմա, իւրաքանչիւրը առանձին, կը վայելէր Միութեան նախագահին բոլոր իրաւունքները, անջատօրէն ստորագրելով Մոսկուայի հրամանագիրները եւ պաշտօնագիրները: Կը Թուի Թէ վերջ պիտի տրուի դաշնակցային դրութեան վերջին մնացորդներուն: Արդէն, վերջին երկու տարիներու ընթացքին, զանազան գործավարութեանց (նախարարութիւն) վարչութիւնը միացուեցաւ եւ յանձնուեցաւ Մոսկուայի կեդրոնական գործավարութեանց: Այս անգամ Քաղաքական Բիւրոյին նոր անդամները որոշած են սահմանափակել եօթը տեղական հանրապետութեանց նախագահներուն իրաւասութիւնները: Այսուհետեւ միայն մէկ նախագահ պիտի բազմի Մոսկուայի մէջ:

Այս առթիւ, Քրէմլինի վարիչները փոփոխութիւններ պիտի կատարեն այդ բարձրաստիճան պաշտօնատարներուն մէջ եւ անոնց տեղ պիտի նշանակեն մասնաւորապէս վստահելի եւ անձնուէր մարդիկ: Այսպէս, իրրեւ առաջին գործ, պիտի արձակուի այդ նախագահներուն երիցագոյնը, Քալինին, իր տեղը տալով աւելի վստահելի պաշտօնատարի մը: Ամէնէն հաւանական յաջորդները կը համարուին վարչապետ Մոլոթով եւ Ակուլով, կեդր. Գործադիր Կոմիտէին առաջին քարտուղարը, որ Սթալինի պաշտպանեալն է :

ԽՌՈՎՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Պ. Տորժէր, Ֆրանսայի Կանանչ Ճակատին (հողագործներ) նախագահը, մէթինկ մը սարքած էր առջի օր, բողոքելու համար բանջարեղէններու վաճառման տագնապին դէմ: Ժողովին հրաւիրուած էին Փարիզի չրջանին բանջարավաճառներն ու պարտիզպանները: Ոստիկանութիւնը արգիլեց ժողովը: Այս առթիւ խռովութիւններ ծագեցան եւ մօտ 300 հոգի ձերբակալուեցան, մերժած ըլլալով հպատակիլ արգելքի հրամանին: Կալանաւորներուն մէջ կը գտնուի նաեւ Պ. Տորժէր:

Քիչ վերջը, խումբ մը ցուցարարներ Քոնքորտի հրապարակէն ճամբայ ելան, Հալերը երթալու համար: Ոստիկանութիւնը ցրուեց բազմութիւնը, սակայն չատեր յաջողեցան Հալերը երթալ: Այս առթիւ ալ ձերբակալութիւններ կատարուեցան: Պ. Տորժէր ոստիկանութեան դիմելով պահանջեց արձակել կալանաւորները: Ցետոյ բողոքագիր մը ուղղեց մինիսթրին դէմ դրուած արգելքին առթիւ :

**** Նախկին համայնավար Տօրիօ մինիսթր մը սարքած էր Նանթի մէջ: Ոստիկանութիւնը արգիլեց: Այս առթիւ ընդհարումներ պատահեցան համայնավարներու հետ, եւ երեք հոգի վիրաւորուեցան, որոնց մէկը ոստիկան:*

ՕՐԸ ՕՐԻՆ

ԳՈՐԾԸ ՀԱՍԱՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՆԻԿՆԵՐՈՒՆ

Լէնինկրատի մէջ, որ Հայաստանի երկրորդ քաղաքն է, գոյութիւն ունի գործարան մը, որ կերպաս կը շինէ:

Մորհ. Հայաստան կը գրէ (26 սեպտեմբեր)թէ գործարանին արտադրութիւնը նուազած է այս տարի, աշխատաւորները ծուլացած կ'երեւին, այնպէս որ գործարանը երկրին պարտականութիւն կը մնայ աւելի բան Էս միլիոն մեթր կերպաս :

Վրդովուե՞ր են, գիտէ՞ ով, մասնագէտներուն կիները: Եւ 40 կիներ կը հաւաքուին, խիտ նամակ մը կը խմբագրեն եւ կ'ուղղեն իրենց ամուսիններուն : *Մորհ. Հայաստան* կը հրատարակէ այդ հետաքրքրական նամակին պատճէնը, որ հետեւեալն է.—

« Ամուսիննե՛ր, դուք վատ էք վերաբերում արտադրութեան թերութիւններու: Դուք չէք ստեղծել այն բոլոր պայմանները, որոնք անհրաժեշտ են նոր նորմաները կատարելու համար, ստախանովեան չարժումը բարձրացնելու համար: Մենք ձեզ մեղադրում ենք այն բանի համար, որ կոմբինատը երկրին պարտք մնաց 1,517,000 մեթր բիլայ:

Ամուսիննե՛ր, մեթրը ձեզ համար խայտառակութիւն չէ այդքան չատ մնալը: Չէ՞ որ կոմբինատում ամէն ինչ կայ յաջող աչխատանքի համար»:

Ցետոյ նոյն թերթը կ'աւելցնէ, որ այս այրուդատ (այսինքն իրենց էրիկը ճնշադատող) կիները յանձնախումբ մը կազմեցին՝ հսկելու համար իրենց ամուսիններուն աշխատանքին վրայ : Իսկ ամուսինները խօսք տուին, որ պատիւով պիտի կատարեն իրենց աշխատանքը :

Իրապէս հրաշալի երկիր է խորհրդային դրախտը, հապա Ստալի՞նը,— Հրաշք - մարդ է ան, չգտնուած ասուն մը, հանճարափայլ առաջնորդ մը :Ո՞ր երկրին խեղացիին մտքէն կ'անցնէր թելադրել կիներուն, որ յանդիմանեն իրենց էրիկները:

Թահանակին, կիներէն կը սպասուէր որ գիտնան լաւ գուլպայ հիւսել կամ համով փիլաւ մը եփել: Էրիկը, որուն «գլխաւորս» կ'ըսէին անոնք՝ սմբչնալով «էրիկս» ըսել, պատիւն էր տունին: Անոր արժանաւորութեան, ըսենք՝ ընտանեկան վեհապետութեան դէմ պզտիկ ակնարկ մը անգամ կը վիրաւորէր ոչ միայն այրը, այլեւ անոր կինը, զաւակները:

Ֆլօպէր հրաշալի վէպ մը գրեց տալով իր *Մատամ Պովարին*, որուն հե - րոսն ու հերոսուհին, այր մը եւ կին մը, կը ներկայացնեն մասնաւոր փի - լիսոփայութիւն մը: Բայց Ֆլօպէր ողջ բլլալու էր, որ նկարագրէր նոր կինը, — օրինակ Լէնինկրատի հայ *Մատամ Պովարիները՝* իրենց խեղճացած ամուսիններուն գլխուն վերեւ:

Անհմա՞ն Ստալին,— սողալու, ոտք լզելու, խեղճանալու իճիւատիպ ձե - ւեր սորվեցուցիր 160 միլիոն ժողովուրդի, ատոնց եւ իրիկուն ինքզինքդ գովելու եւ չունեցած հանճարդ փա - ռաբանելու վարժեցուցիր Մոսկուա - ռաբանելու վարժեցուցիր Մոսկուա - յէն մինչեւ Եղեւան, Ուկրանիայէն մինչեւ Ղրկըզիստան, տեղի անտեղի անունդ կանչել տուիր Ռուսին ու Հայուն, Թաթարին ու եագուդին, բայց այս մէ՞կը,— հրաշալի է իսկապէս :

Այսպէս ուրեմն չեկիստ Ագրմանու - շը, տասնապետ Վարդանուշը այսու - հետեւ իրաւունք պիտի ունենան ըսելու իրենց էրկան.

— Խայտառա՛կ, այսօր ինչ աշխա - տեցար, պետութեան տրուելիք արտադրութեան նուազելուն պատճառ դարձար, դուն սապոժած կ'ընես ընկերվարական շինարարութեան դէմ, դուն սապոժած կ'ընես ընկերվարական շինարարութեան դէմ, դէպի դատարա՜ն...

Գրաւ կը դնեմ, որ վաղը իրաւունք պիտի տրուի 3 տարեկան երեխաներուն, որ պոռան իրենց հօրը երեսին.

— Պապա՛, այսօր ընկեր Ստալինի հանդէպ պարտուդ չկատարեցիր, դուն խայտառակ հայրիկ մըն ես, սապոժած կ'ընես ընկերվարական շինարարութեան դէմ:

Երջանի՛կ Ստալին, այնքան հան - ճարեղ է, որ հիմա կը զգամ թէ ճիշդ է երբ կ'ըսեն որ հանճարը ախտաբանական երեւոյթ է, այլապէս կարելի՞ էր ենթադրել այսքան հիւանդագին, գարշելի եւ ապաբարոյ վիճակ, որ Ռուսիոյ մէջ կը նշմարուի մասնաւորաբար այս վերջին տարիներուն:

Ա.ՐԱՋ

Ի՞ՆՉ Կ'ԸՍԷ ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԹՌՈՒՑԻԿԸ

—o—

Երկկ հաղորդած էինք թէ երկուշաբթի առաւ ժամը 9ին հայերէն թռուցիկ մը փակցուած էր «Ցառաջ»ի խմբագրատան դուրսի պատի վրայ, խառնակ ճաղանճ չարադրութեամբ: Այս առթիւ արտասպած էինք առաջին մասը: Հետեւեալ մնացեալը (տառադրութիւնը՝ «Գիտակից Աչխատաւոր») —

— « Կովկասեան ֆէտէրասիոնի մէջ բոյն դրած՝ անմահ Միասնիկեաններու եւ խանջեաններու դահիճ՝ երկերեսանի ու աւազակ Ցիցիանով - Բերիաներու երեսին կը պոռանք, «համաշխարհային աշխատաւոր մասսան ձեզ շատոնց անարգանքի սիւնին է գամեր, բ-ճնելով ձեզ պէս քաչքչուկների գաղափարաբանութեան »:

Ցարիզմի հին ստրուկներ, բռնաբարեցէք ձայր ժողովուրդին փառաւոր հին ու նոր յիշատակները, որու լոյսովն իսկ սնանեցաք դարեր շարունակ:

Խ. Հայաստանի շնորհազրկուած եօթը տաղանդաւոր անմեղ գրագէտներու մեր ցասումն արտայայտութիւնն է որ կը բերենք հոս: Թորոմեանցի գրական նուրբեամբ պանծացող ապականած փրանսահայ Հօկը, դաւանանական դիրքի մէջ կը գտնուի այսօր:

Կեցցէ Խ. Միութեան աչքաթող ժողովուրդին ազատատենչ նոր ուղղին.

Կեցցէ՛ Միասնիկեան, կեցցէ՛ Խանջեան,

Անկցի Բերիա, որ կը յուսայ յաչիշտակութեան ենթարկել հայկական երեք գաւառները:

Կեցցէ Վորոշիլօֆ:

ՄՈՍԿՈՒԱ ՊԻՏԻ ԽՕՋԷ՞ ՁԷՁՕՔՈՒԹԻՒՆԸ

—·—

Լոնտոնի Թերթերը կը գրեն Թէ Մոսկուա հետզհետէ կը պատրաստուի խզելու չէզօքութիւնը՝ Սպանիոյ գործերուն մէջ: Ուրեմն պիտի փորձէ գործնապէս օգնել Մատրիտի կառավարութեան, ռազմանիւթ, օգանաւեր, օգաչուներ եւ զինուորական մարզիչներ ղրկելով ոչ Թէ Մատրիտ, որ գրեթէ կորսուած կը համարուի, այլ Պարսելոնա (Քաթալոնիա): Մոսկուա մասնաւորապէս կը հետաքրքրուի այդ նահանգով, որ առանձին իշխանութիւն ունի եւ որուն բանուոր բնակչութիւնը մօտ է Ֆրանսայի ճարտարագործական չրջաններուն :

—·—

ԳԵՐՄԱՆԻՈՑ ՔԱՒԱՄԵԱՑ ԾՐԱԳՐԻՆ դիկտատոր նչանակուեցաւ Զօր. Կէօրինկ: Հիթլէր ամէն լիազօրութիւն տուած է անոր, գլուխ հանելու համար երկրորդ քառամեակի ծրագիրը :

(ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ ԿԱՐԴԱԼ Դ. ԷՋ)

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

— Ես ձեզ ասացի, որ ես ոչ մի բան չեմ գիտեր, ոչ մի բան չեմ լսել, ոչ մի բան չեմ տեսել, ոչ մի բան չեմ հասկանում, ոչ մի բան չեմ հիշում, ոչ մի բան չեմ ուզում ասել, ոչ մի բան չեմ ասում, ոչ մի բան չեմ ասելու, ոչ մի բան չեմ ասի, ոչ մի բան չեմ ասի, ոչ մի բան չեմ ասի

ՍԵՓ ՊՍՏԵՎՈՒՆԻ ԼՑՏԱՆՔԸ

Հայ ժողովուրդը միշտ ծնկի եկած է իր հոգևոր ու մտավոր մեծ մարդկանց առջև, որոնք իրենց ստեղծագործությամբ, գրչի ուժով ու մտքի զորությամբ ոչ միայն ազգի, այլև ամբողջ մարդկության հոգևոր կյանքի վրա ազդեցիկ ներգործություն են ունեցել։ Այդպիսի մեծերից մեկն էր Ղևոնդ Ալիշանը։ Ալիշանի անունը հայ ժողովրդի համար սրբազան է, որովհետև նա իր ամբողջ կյանքը նվիրել է հայ ժողովրդի պատմության, հայ հնության ուսումնասիրությանը։ Ալիշանի անունը հայ ժողովրդի համար սրբազան է նաև այն պատճառով, որ նա իր ամբողջ կյանքի ընթացքում ամենայն ուշադրությամբ հետևել է հայ ժողովրդի ազատագրական պայքարին,

Մուսոլինիի փեսան Պերլինի մէջ

Պ. Ձիանօ, Իտալիոյ արտաքին նախարարը, որ Մուսոլինիի փեսան է, Պերլին հասաւ, երէկ, օդանաւով։

Քաղաքական շրջանակներու մէջ բացառիկ նշանակութիւն կուտան այս այցելութեան։ Իրազեկներու կարծիքով, Պ. Ձիանօ Հիթլէրի հետ պիտի խորհրդակցի ոչ միայն երկու երկիրներու յարաբերութեանց եւ քաղաքական հարցերու մասին, այլեւ պիտի քննէ համայնավարութեան դէմ մղուելիք պայքարի միջոցները։ Նախարարը Պերլին պիտի մնայ մինչեւ չարաթ, տեսակցելով Գերմանիոյ նախարարներուն հետ։ Փայլուն ընդունելութիւններ սարքուած են այս առթիւ։

Խորհրդակցութեանց գլխաւոր նիւթ մը պիտի կազմէ նաեւ Ազգերու Դաշնակցութեան բարեփոխման խնդիրը։

ՁԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՄԸ ՏՊԸԼՈՎ

25 ՏԱՐՈՒԱՆ ԴԱՇԻՆՔ մը Գերմանիոյ, Իտալիոյ, Ֆրանսայի եւ Անգլիոյ միջեւ, դուրս ձգելով Լեհաստանը եւ Ռուսաստանը,— այս է, կ'ըսեն, գերմանական վերջին ծրագիրը, ի պատասխան Լոքառնոյի նոր ժողովին առթիւ եղած հարցումներու։ Եթէ այս ծրագիրը ընդունուի, ինքնին կ'ոչնչանան Ֆրանքեւխորհրդային եւ չեխեւխորհրդային դինակցութիւնները։

«ՌՈՒՄԱՆԱԿԱՆ ՁԱԿԱՏ»ին նախագահը, նախկին վարչապետ Վայտա Վօյվօտ, ճառ մը խօսելով, դատապարտեց Ազգերու Դաշնակցութիւնը եւ փառաբանեց հիթլէրականգերմանիան։ Ցեխոյ չհետեց թէ հզօր բազուկի քաղաքականութիւնը կը ծաւալի ամբողջ Եւրոպայի մէջ եւ իրրեւ օրինակ յիշեց փոքրիկ Պելժիան։

ԱՒԵԼԻ ՔԱՆ 500,000 ԵԳԻՊՏԱՑԻՆԵՐ դիմաւորեցին վարչապետ Նահաս փաշան, որ կը վերադառնար Եւրոպայէն, այնքան յաջող դաշնագիր մը կնքելէ վերջ։ Միայն 1200 ոստիկաններ կը հսկէին բարեկարգութեան, քանի որ Նահաս փաշա հակառակ է զապտոական միջոցներու։ Բոլոր ընդունելութեանց մէջ տիրական դեր կը կատարէին կապոյտ չապիկաւորները։

ՊՈՄՊԷՑԻ ԽՌՎՈՒՐԻՒՆՆԵՐԸ վերջացան։ Սպաննուած են 65 հոգի, վիրաւորուած 500 հոգի։ Կառավարիչը ամբողջ հինգ ժամ խորհրդակցեցաւ հնդիկ եւ իսլամ վարիչներուն հետ, բարեկարգութիւնը վերահաստատելու համար։

ԼԵՀԱԿԱՆ պատուիրակութիւն մը պիտի գայ Փարիզ, արհեստագիտական եւ ելմտական բանակցութեանց համար։ Իրազեկներ կը հաւատան թէ Ֆրանսա 25,000,000 անգլ. ոսկիի վարկ մը պիտի բանայ, Լեհաստանի բանակին եւ օգտաւորմիզին արդիացման եւ զօրացման համար։

ՎԻԹԻՈՒԱՐԻ ՍԱԻԱՌՆԱԿ ՄԸ կը չինուի Մ. Նահանգներուն մէջ, Մ. Միութեան համար։ Պիտի արժէ 200,000 անգլ. ոսկի եւ պիտի կրնայ առնել 44 ճամբորդ։ Զորս մեքենաներու չնորհիւ արագութիւնը պիտի ըլլայ ժամական 160 մղոն եւ մէկ անգամէն ամբարած վառելանիւթը պիտի կրնայ բաւել 4000 մղոն ճամբու համար։

ՃԻՊՈՒԹԻ - ԱՏՏԻՍ ԱՊԱԿՈՒ երկաթուղին քանդուեցաւ տեղ տեղ, Հապէշներու կողմէ։ Իտալացիները անմիջապէս ձեռնարկեցին նորոգութեանց։ Իտալական բանակը նոր արշաւանքի մը կը պատրաստուի, գրաւելու համար այն երկրամասերը որոնք դեռ եթովպիացիներու ձեռքը մնացած են։

ՇԱԲԱԹԱԿԱՆ 40 ԺԱՄԸ պիտի գործադրուի մետաղագործութեան մէջ, գործադրութեան մանրամասնութիւնները ճշդուած ըլլալով։

ՍԱՐԱԱՓԵԼԻ ՓՈՓՈՐԻԿ մը կը տիրէ Անգլիոյ եւ Ֆրանսայի ծովեզերքներուն վրայ, ժամը 130 քիլոմեթր արագութեամբ։ Բազմաթիւ նաւաբեկութիւններ պատահած են։

ՎԵՆԵՏԻԿԻ ՇԱՔԻՆ հետեւանքով մեռած են 26 հոգի։ Ցնցումները կը չարունակուին, բայց թեթեւ։ Միլիոնաւոր լիրի վնաս կրած են Ուտինէի եւ Պէլլունոյի նահանգները։ Հանրօգուտ չինութեանց նախարարութեան պիւտճէտը պէտք է ազէտեալ վայրերը գնաց Մուսոլինիի հրամանով օգնութեան գործը կազմակերպելու համար։

ՀԱՄԱՑՆԱՎԱՐՆԵՐՈՒ ԴԷՄ բուռն ճառ մը խօսեցաւ Տոքթ. Թօդէնհէյմ, Հիթլէրի աջ բազուկը, յանձնարարելով որ Ֆրանսա եւս հետեւի Գերմանիոյ օրինակին։ «Միայն մէկ տեղ կայ համայնավար խռովարարներուն համար,— կեդրոնացման բանակաւորին։ Ֆրանսայի փրկութեան համար պիտի մաղթէինք որ Մորիս Թորէզ, Ֆրանսայի բոլշեւիկ առաջնորդը եւ իր ոճրապարտ ընկերները հիմա նստած ըլլային կեդրոնացման բանակաւորներու մէջ»։

Դ. Ց. Դ.

Գալատուր

ՄԱՐՍԷՑԼԻ վաշտագն խումբի ընկերական ժողովը տեղի կ'ունենայ 22 Հոկտ. հինգշաբթի երեկոյ ժամը 8.30ի, դրօշակ ընկերութեան սրահին մէջ։ Ներկայանալ անդամատեսրով։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ ԿԸ ՏՕՆՈՒԻ

ՄԱՐՍԷՑԼԻ ՄԷՋ.— 24 ՀՈԿՏ. ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅ
ԿԸ ԽՕՍԻ **ԸՆԿ. ՎԱՀԷ ՆԱՒՈՍԱՐԴԵԱՆ**

ԼԻՈՆԻ ՄԷՋ.— 24 ՀՈԿՏ. ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅ
ԿԸ ԽՕՍԻ **ԸՆԿ. ՔԱՀԱՐԸ ՄԻՍԵՓԵԱՆ**

ՎԻԷՆԻ ՄԷՋ.— 25 ՀՈԿՏ. ԿԻՐԱԿԻ ԿԷՍՕՐԷ ՎԵՐՋ ԺԱՄԸ 3ԻՆ
ՍԷՐԲԻԼԸ ԿԱԹՈԼԻԿԻ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ
ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ **ԸՆԿ. Ս. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ**
ԿԸ ԽՕՍԻ **ԸՆԿ. ՀԱՒՍԸՐԸ ՄԻՍԵՓԵԱՆ**

Գեղարուեստական բաժնին կը մասնակցին տեղւոյս կարող ուժերը։

Դռները կը բացուին կէս ժամ առաջ։ Մուտքը 1 ֆրանք։

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

"ՎԻՄ" *ի ժե. թէա. հետեւեալ բովանդակութեամբ.—*

Վ. Մինախորեան, *Արհաւիրքի օրեր.*— Վ. Փափազեան, *Համաշխարհային պատերազմը եւ Տարօնի աշխարհը.*— Տոքթ. Ե Գորգովեան, *Ցուշատեսքս.*— Գ. Գիւզալեան, *Մեծ յոբելեանի առթիւ.*— Ց. Կազանչեան, *Հայ ժեմատութիւն մը Հոմի Մ. Պապոս եւ Վաղարշապատի Մ. Հոխիսիմէ եկեղեցիներուն յատակագիծերու մէջեւ.*—Փ. Սանասար, *Թիւրքիայի պատմութիւնը.*—Ա. Սաֆրաստեան, *Քսենոֆոնի ուղեկիցը Հայաստանի մէջով.*— Ց. Ստեփանեան, *Աղբրանիկը Միւնեաց երկրում.*— Հայ—Հայկական բանակցութիւններ.— Հին Թուղթեր.— Շերմանդատէի նամականին.— Անցեալ.— Ա. Խանջեան, *Բարգէն կաթողիկոս, գերասան Յ. Աբէլեան.*— Կեանք եւ մշակոյթ.— Գիրք եւ Մամուլ.— Գրախօսական։

Տարեկան բաժնեգին 70, 60 եւ 50 ֆրանք, համաձայն իւրաքանչիւր երկրի թղթատարական սակի։

Հասցէ.— S. Vratzian, 13 Rue des Platanes, Gitè Jardin de Plessis-Robinson, (Seine).

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ, ԲԱՑՈՒԱԾ Է

ԹՈՐԳՈՄ ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ

Fournitures pour tailleursԻ ՎԱՃԱՌՈՒՏՈՒՆԸ

43 Rue Richer, Paris (9), *մէթրօ* **Cadet**

Գերմանական եւ գերմանական վերաբերեալ ամէն տեսակ

պիտոյքներու վաճառում։

ՄԵԾԱՒԱՃԱՌԱԿ ԵՒ ՓՈՒՐԱՒԱՃԱՌԱԿ

ԱՆԴՐԱՆԻԿԻ
ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ ՀԱՄԱՐ

Անդրանիկի յուշարձանին կեդրոնական յանձնախումբը, յուշարձանի շինութեան վրցման մասնակցող հայ արուեստագէտներէն կը խնդրէ իրենց պատրաստած նախագիծերն ու նախանձեւերը (*maquette*) դրկել ոչ ետ ջանձնախումբին կեդրոնը, ինչպէս յայտարարուած էր մեր կոչին մէջ, այլ փարիզի Հայ երիտասարդաց Միութեան Ակումբը, 8 rue Bossuet, Paris (10), Place Lafayetteի քով։

ՀԱՅ
ԲՈԼՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆՑ

«ՀԱՅ ԱՐՇԻՒ» ակումբի վարչութիւնը կը խնդրէ փարիզի եւ շրջակայքից բոլոր հայ կազմակերպութիւններէն առանց խտրութեան (հայրենակցականներ, միութիւններ, ընկերութիւններ, ակումբներ եւայլն), որ ցանկանան իրենց ճշգրիտ հասցէները տեղեկացնել ակումբիս, բնտեւեալ հասցէով.— Albert L. Achdjian F.P. 14 rue Meyerbeer, Blanc-Mesnil (S. et O.)

Կ'ՈՒԶՈՒԻ tricoteurs façoniers maille retournée եւ jauge 7 cam façon d'origine *մեքենաներ ունեցող* **façoniers** *ներկայանալ Քէպապճեանի,* 14 Rue de Tracy, Paris. Central 87-19.

Կ'ՈՒԶՈՒԻՆ *մաքուր կար կարող ափիէսէօրներ։ Տեւական գործ։ Livraisonի գիւրութիւն։ Դիմել* 241 *Rue Croix Nivert, մէթրօ* Porte de Versailles։

ԿԱՊՈՑՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ռուսաստանի մէջ գտնուած ձեր ազգականներուն եւ բարեկամներուն լաւագոյն եւ իրական օժանդակութեան ձեւն է՝ ղրկել անոնց կապոցներով բրդեղէն կտորներ, ճերմակեղէն, կօշիկներ եւ թրիքօթաժ։

Այս բոլոր իրեղէններէն մենք ունինք ճոխ մթերք եւ կ'ուզարկենք զանոնք Ռուսաստան շատ ձեռնտու եւ մատչելի գիներով։

Ունինք տրամադրելի քնտրրուած եւ ըէփինկոն դրամեքնաներ, ինչպէս նաեւ դաշնակներ՝ շատ մատչելի գիներով։

Գիներու ցանկը եւ նմոյշները կը ղրկուին առաջին իսկ պահանջին

Դիմել՝ American Lloyd, Paris (9), 7 rue Auber
Tél. Opéra 67-77, 67-78

Եւրոպայի հայկական մեծագոյն գրասենեակը
ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

51, Rue Mr. le Prince, Paris Métro: Odéon. Tél. Danton: 88-65,

Հայերէն, ֆրանսերէն, անգլիերէն եւայլն ամէն տեսակ գրքեր։
Արդիական կազմատուն։ Տպագրական գործեր։

Աշխարհի բոլոր կողմերէն ձասած ապսպրանքները կը կատարուին արագ եւ խղճամիտ կերպով։

PETITES ANNONCES

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՅՏԵՆԻՔՆԵՐ

ԲԺԻՇԿՆԵՐ.—

ՍԵԴՐԱԿ ՍԱՍՈՒՆԻ
Վիրաբոյժ-Ատամնաբոյժ
16, Rue de Vaugirard, Paris (6)
Մէթրօ՝ Odéon *կամ* Սէն Միշէլ
Tél. Odéon 76—22

ՏՈՔԹ. ԵԱՂՈՒԲ
Կ'ընդունի երկուշաբթի, չորեքշաբթի շաբաթ ժ. 2-6 եւ ժամադրութեամբ։
8 Rue Degas, փարիզ։
Tél. Jasmin 11-78

ԴԵՐՁԱԿՆԵՐ.—

Գ. ԱՃԷՄԵԱՆ
Արուեստ եւ կանուխ
42, Rue Blanche, *մէթրօ՝* **Trinité**

ՊՕՂՈՍ ԳՈՐԳԻԿԵԱՆ
Նամուխած կար, չափառոր գիտ
31, Route de Choisy, Ivry s/Seine
Հեռաձայնել **Italie 13 - 45**

Նիւթական նուագախումբի համար գիտ մել Պ. Տիգրան Օճոսեանի, 15, Rue du Pourtour, Clamart, Seine.

OFFICE NANSEN
38 Boulevard Raspail — Paris(6)

ՆՊԱՐԱՎԱՃԱՌՆԵՐ.—

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Աթէներէն ամէն տեսակ ապրանքներ
4, Rue de Metz
մէթրօ՝ **Strasbourg - St. Denis**

ՆՊԱՐՎ. CONSTANTINOPLE
Աթէներէն եւ եւրոպական ապրանքներ
37, Rue de Trévise
մէթրօ՝ **Cadet** **Tél.: Prov. 82 - 90**

ԳՈՒԹԵՔԵԱՆ ՊԱԶԱՐ

փարիզի Հայ տիկնանց միութեան Ողբերու Թղնութեան մասնաճիւղի տարեկան գնութեան պազարը տեղի կ'ունենայ 22 Նոյեմբեր, կիրակի օր, ժամը 15էն սկսեալ, Salle Jean-Goujonի մէջ, 8 rue Jean Goujon, Paris (8)։

կը խնդրուի բոլոր հայ կազմակերպութիւններէն նկատի ունենալ սոյն թուականը՝ չխոչանդելու համար։

ՃԱԽՈՒԻ Է *վալանսի կեդրոն թազամասի մէջ սափրիչի խանութ մը (այրերու եւ կիներու համար) ամենագեղեցուած գիհով։ Վճարման դիւրութիւն։ Պայ՛ վարձի, քանակարանով միասին ամիսը* 140 *ֆր.։ Դիմել՝ B. P. 82 Valence. S/Rhône։*

ՇԱՐԺԱՆԿԱՐ

Հետաքրքրական պատկերներ
Այս երեկոյ ժամը ութ 9ին,
5 rue de l'Eclipse,
Մարսէյլի «Շաւրիկեան» սրահին մէջ։
Կը գանձուի մեծերէն 1 ֆրանք, փոքրերէն 50 սանթիմ։

ԳԱՑԷՔ ՏԵՍԷՔ ԼԻՈՆԻ ՄԷՋ
Cinéma REXY
Rue Cours Lafayette, angle Garibaldi.

ԳԱՑԷՔ ՏԵՍԷՔ
CIGALE CINÉMA
60 Avenue de Saxe-LYON.

Le Gérant: H. STEPHAN
Imprimerie A. DER (AGOPIAN) 17, Rue Damesme, PARIS (13)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՍԱՓՐԻՉՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ Բ. ցուցադասը (*démonstration*) տեղի պիտի ունենայ 22 Հոկտ. հինգշաբթի իրիկուն ժամը 8.30ին, միութեան չքեղ սրահներուն մէջ, 7 rue Bernardin, Paris (5)։ Ներկայ պիտի ըլլան Ֆրանսացի եւ իտալացի ճանաչ ոճանագէտներ։ կը խնդրուի օգտուիլ այս առիթէն։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՀԱՅ ՍԱՓՐԻՉՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ Բ. ցուցադասը (*démonstration*) տեղի պիտի ունենայ 22 Հոկտ. հինգշաբթի իրիկուն ժամը 8.30ին, միութեան չքեղ սրահներուն մէջ, 7 rue Bernardin, Paris (5)։ Ներկայ պիտի ըլլան Ֆրանսացի եւ իտալացի ճանաչ ոճանագէտներ։ կը խնդրուի օգտուիլ այս առիթէն։

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՁՆԱՒԱՐԻՆի Ֆրանսայի կեդրոնական վարչութիւնը կը փութայ յայտարարել, որ ինչպէս նախորդ տարիներուն, այս տարի ալ, իր նախանձեռնութեամբ եւ մշակութային բոլոր ճարիւններու մասնակցութեամբ, Նոյեմբեր ամսուան մէջ պիտի տօնէ ՄԵԱԿՈՅԱԻ ՕՐԸ, նուիրուած ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ։

Մանրամասնութիւններ չուտով պիտի հաղորդուին թերթերու միջոցով։

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՁՆԱՒԱՐԻՆի Ֆրանսայի կեդրոնական վարչութիւնը կը փութայ յայտարարել, որ ինչպէս նախորդ տարիներուն, այս տարի ալ, իր նախանձեռնութեամբ եւ մշակութային բոլոր ճարիւններու մասնակցութեամբ, Նոյեմբեր ամսուան մէջ պիտի տօնէ ՄԵԱԿՈՅԱԻ ՕՐԸ, նուիրուած ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ։

Մանրամասնութիւններ չուտով պիտի հաղորդուին թերթերու միջոցով։

ՉԱՐԹՈՂՔ

(ՎԷՊ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵԱՆՔԷ)

— o —

Ամէն մէկ հարուածի հետ կը բազմապակուէր «գազանի» կատաղութիւնը, որ անսահմանելի հայհոյանքներ թափելով կ'իջեցնէր մարակը, կարծես թէ սովորական վերմակ մը լինէր ծեծածը։ Անգամ մը միայն Սարգիս Աբերը բարձր ճչաց, երբ մարակի ծայրը աչքի մօտ քունքին հանդիպելով՝ մորթը պատռեց ու արիւնը երեսն ի վար սկսաւ վազել։ Որքան ալ որ տեսի ուշացածը անմարդկային, սոսկ գազանութիւն մըն էր, ոչ ոք յանդգնեցաւ միջամտել՝ դադրեցնելու համար այդ անուն չունեցող հրէշութիւնը։

Պոնտոլովսկին, չնորհիւ իր կնոջ, նահանգապետի պաշտպանեալն էր։ Այդքանը կը բաւէր, որ ան ինքզինքը անպատասխանատու փոքրիկ ցար մը զգար հեռաւոր Կովկասի յետ ինկած այդ ծայրագաւառին մէջ։ Դժբախտ Սուրմալուի մէջ ան տասը տարիներ անսահման ազատութեամբ իշխած էր վրէժխնդիր կառավարելու։ Բազմաթիւ թուրք ու հայ գիւղացիներ ծեծամահ ըրած էր, առանց նոյնիսկ նկատողութիւն մը ստանալու բարձր իշխանութենէն։ Ժողովրդի բազմաթիւ բողոքները անլսելի մնացեր էին։ Անոր մէկ խօսքը օրէնք էր, յօնքի մէկ շարժուածը անառարկելի հրաման մը։ Ո՞ր թշուառ մահկանացուն կրնար մտքէն իսկ անցընել անոր մէկ խօսքը երկուքընել տալու։

Ու ահա, թշուառ ողորմելի ծերուկ մը կը յանդգնէր, առաջին անգամը լինելով, դէմ կենալ իր հրամանին, ցեխոտել իր պատիւը, իր հմայքը։ Չէ՞ որ ինք վտահացուցեր էր նահանգապետը, որ շատ չէ, մէկ չարաթուան ընթացքին, օրէնքը տառացի կերպով պիտի գործադրուէր։

Բահանան՝ ինքն իր վրայ կծկուած ամբեցաւ գերեզմանաքարի մը մօտ։ Ներս ծերունիին սարսափէն ճմրթկուած դէմքին վրայ միայն դողացող շրթունքները կը շարժէին, «Տէր, դու ողորմիս, դու հասնիս օգնութեան»։ Տէր Աստուած... բայց ինչ լաւ էր, որ իր կողմն իսկ չէր նայեր... Ներս Սարգիս Աբեր ...

— Հը՞, հը՞, հը՞,— Մարակը կը բարձրանար ու կ'իջնէր Սարգիս Աբօր կորացած ուսերուն, դէպի վար հակած գլխուն՝ հետզհետէ աճող թափով մը։

Սարգիս Աբերը բառ մը իսկ չարտասանեց, եւ ոչ ալ դիմադրելու փորձ մը ըրաւ։ Արիւնը քունքէն ու բերնէն առատօրէն կը վազէր, ու ամբողջ մարմինը կարծես հրաշէկ չամիւրով տաղտուկ լինէր։ Զգաց որ հետզհետէ կը թմրի եւ գիտակցութիւնը պիտի կորսնցնէ, չանկարծ գլուխը բարձրացուց ու միակ բառ մը կրցաւ արտասանել։

— Շուն ...

Այլեւս ինքնիրմէ ելած՝ Պոնտոլովսկին անհնարին թափով մարակի կոթի հաստ կողմը իջեցուց Սարգիս Աբօր գլխուն։ Վայրկեան մը երկուք ծերունին կեցած տեղը երերաց ու խուլ հառաչանք մը հանելով փռուեցաւ գետին, բոլորովին գիտակցութիւնը կորսնցուցած։ Ակնթարթի մը մէջ Պոնտոլովսկին ինկնողի գլխուն վրայ էր։ Խթանաւոր կրունկը բարձրացուց ու ամբողջ թափով իջեցուց Սարգիս Աբօր բերնին, աչքին, քթին, կուրծքին, այն աստիճան կատաղած, որ վերջապէս էջմիածնի գաւառապետը թեւէն բռնեց ու մէկ կողմ քաշեց, աշխատելով զայն հանդարտեցնել։

— Զարժէ եռանդ սպառել, մեռած է արդէն..

Ծանր ծանր հեւալով՝ Պոնտոլովսկին թաշկինակը հանեց՝ քրտինքը սրբելու ու նորէն վրայ վազեց դիակի մը պէս երկնցած ծերունիին վրայ եւ ոտքով կոխկրտեց դէմքն ու կողերը։

— Դու, դու, չան գաւակ, Արմեաշկա, ես քու մէրը... ես քու մէրը... ես քու ....

Եւ, սակայն, արհամարհուած արմեաչկան յաղթած էր Իգոիրի «գազանին», հեգնած էր պետական նոր օրէնքը, ոտնակոխ ըրած էր մեծազօր ցարի հրամանը։ Թերեւս ամէնէն աւելի Սուրմալուի գազան գաւառապետը կը գիտակցէր այդ։ Ցանձնախումբի մը նշանակեալ անդամները ներքնապէս ուրախացած կ'երեւային Պոնտոլովսկիի կատարեալ անյաղթողութիւնը տեսնելով։ Անոնք ներքուստ կ'ատէին այդ դոռոզ մարդը եւ քիչ մըն ալ կը նախանձէին անոր դիրքին։

Բակի դրան առջեւ կանգնած ծերունիները՝ Սարգիս Աբօր վիճակը տեսնելով՝ անյայտացան, ամէն մէկը իր տունը։ Բերնէ բերան լուրը տարած ուեցաւ ամբողջ գիւղին մէջ, ու սակայն՝ ոչ ոք սեւ խապարը ուզեց հասցընել այդիները։

Փողոցները ամայի էին, նոյնիսկ դիւղի շուները չէին երեւար։ Կարծես կախարդանքով մը մէկ վայրկեանէն միւսը, չէն գիւղը ամայի աւերակ մը դարձաւ։ Փինայի Մարտօն եկեղեցիի բակին մէջ, եղած տեղը գամուած մնացեր էր։ Սարսափէն աչքերը դուրս ինկած, լեղուն չորցած էր բերնին մէջ։ Այ, եթէ միայն կարողանար փախչիլ, մէկ շունչով մինչեւ խանութը պիտի վազէր։ Եւ սակայն ոտքերը կարծես քարացած լինէին ու կպած գետին։

Երկու գաւառապետները իրարու եւս եկան, նոյնիսկ չնկատեցին ըրան կպած այդ ողորմելի հարթած մարդը, որու դէմքը այդ պահուն սարսափի մարմնացումն էր։ Ինչ լաւ որ չնկատեցին, մտածեց Փինայի Մարտօն եւ հրճուանքի նման բան մը զգաց։ Ինչի՞ էր որ նկատէին, փողոցի քոստած շուն մը։ Եթէ միայն կարողանար, Մարտօն անշուշտ բարձրաձայն պիտի ծիծաղէր ալ։ Ինչ լաւ եղաւ, որ այդ գազանը դուրս ելաւ, առանց իր աչքը հանելու։ Մէկ ալ Մարտօն կեցած տեղը սմքեցաւ եւ ուրախութիւնը փորը մը նայ։

Դատախազի երիտասարդ օգնականը, դուրս ելնելու ժամանակ, յանկարծ կանգ առաւ Մարտօյի առջեւ ու հանգստացնող ժպիտ մը դէմքին բանակական չեչտով հարցուց։

— Հը՞, բարեկամ, եթէ եկեղեցիի բանալին քովդ լինէր, դու ի՞նչ պիտի ընէիր..

(Շար.) ՄԱԼԽԱՍ

ՓՆՏՒԵՑԷՔ եւ ԿԱՐԴԱՑԷՔ երգիծաթերթ՝ «Մ Ե Ղ Ո Ւ», փարիզի եւ Ջրջանի Ցառաջի ցրուիչ։

Գ. ԱԽԵՏԻԱՆ։

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

17, Rue Damesme, PARIS (13e)
Téléphone : Glacière 15 - 70

ՀԻՆԳՇԱԲԹԻ 22 ՀՈԿՏԵՄԲԵՐ JEUDI 22 OCTOBRE 1936

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,—

ՏԱՐԵԿԱՆ ՎՃՑԱՄՍԵԱՑ		ԵՒԱՄՍԵԱՑ	
Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա	250 »	130 ֆրանք	—
Ամերիկա եւ ուրիշ երկիրներ	200 »	100 ֆրանք	—

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

Ամ ՏԱՐԻ — 12e Année No. 3250

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Լրկոյի ԽՕՍՔ

ԹՈՂՆ ԿԸ ՍՐՍԿԵՆ ՅՈՒՇԻԿ_ՅՈՒՇԻԿ

— • —

Հարկադրուած ենք նորէն չօչափել հրատապ հարց մը,— Ամերիկահայ գաղութին խաղաղութեան խնդիրը:

Ընթերցողները լսած օրէն ծանօթ են կացութեան վերջին փուլերուն, կարդացած ըլլալով թէ կաթող. Նուիրակին կոչը եւ թէ շարք մը խմբագրականներ՝ այս էջին վրայ:

Կը յիշեն, նաեւ, գոնէ Ամերիկայի ռամկավարներուն տեսակէտը՝ Նուիրակին ծրագրած կարգադրութեանց մասին, որուն մանրամասնութիւնները ալ իրենք հաղորդած էին:

« Պայքար », Ամերիկայի ռամկավարներուն պաշտօնաթերթը, չորս երկար սիւնակներու վրայ փռուած խմբագրականով մը, յուշիկ - յուշիկ Թոյն կը սրսկէր, խծբծելով Նուիրակին եղրակացութիւնները ու կարգադրութիւնները (25 սեպտեմբեր):

Կը կարծէինք թէ առով ալ պիտի գոհանար, իբրեւ յուսախաբութեան ռամկավար արտայայտութիւն մը:

Սխալած ենք, դժբախտաբար:

Զեռքի տակ են «Պայքար »ի վերջին թիւերը, ուր երկու յօդուածներ եւ նոր խմբագրական մը նորէն կը քերքերեն նոյն խնդիրը, իբր կը խառնեն հինն ու նորը, օրինականութիւնն ու ապօրինութիւնը, եւ... արդարութիւն կը պահանջեն:

Հատուած մը՝ խմբագրականէն (3 հոկտեմբեր):

— «Հարկաւ այս կարգադրութիւնը բաղձալի է Դաշնակցութեան: Անիկա կուսակցութիւնը պիտի փրկէ անել կացութենէ մը: Քանի մը անուանական եկեղեցի, մէկ երկու ողորմելի տէրտէրներ, առանց ժողովուրդի եկեղեցի չեն կազմեր: Գարեգին Սրբազանի կարգադրութիւնը *Հայրենիք* թերթը կ'ընդունի: Սրբազանը փրկիչ մըն է իրենց համար: Եկեղեցի ու եկեղեցական պահելու անկարող խմբակը յուսահատած է իր ներկայ վիճակէն: Այս իրողութիւնն աւելի ողբերգական գոյն մը կուտայ *Հայրենիք* թերթի այն յայտարարութեան որ՝ եթէ Գարեգին Սրբազան ժողովրդական քուէարկութիւն կատարէ, ժողովուրդը Դաշնակցութեան հետ պիտի գտնէ: Թող Սրբազանը կատարէ այս ընտրութիւնը ժողովուրդին մէջ, որպէսզի միամիտներն ու կոյրերն անգամ տեսնեն թէ հայ ժողովուրդին ջախջախիչ մեծամասնութեան կամքը եւ որոշումն է գոնէ իր եկեղեցիէն դուրս պահել ազգային կեանքը քանդող ներքին չարիքը »:*

Նոյն խմբագրականին գլուխէն կ'իմանանք հրաշապատում հէքեաթ մը եւս.

Ծրագրուած — եւ թերեւս գործադրուած — կարգադրութեանց առթիւ նոյն սմսեղուկ հոգեբանութիւնը կը մատնէն, նաեւ, «Պայքար»ի միւս երկու յօդուածները: (Մէկը ծածկանուն):

Մէկը, «Շիտակ ուղին», (26 Սեպտ.) կը փորձէ ապացուցանել թէ «այս գաղութին միասնականութիւնը խախտած չէ»: Իսկ իբր «չիտակ ուղի», կ'առաջարկէ որ «անջատողական գիծը խորտակելու համար», կարգադրութիւն մը ըլլայ համաձայն իրենց տակելու համար», կարգադրութիւն մը ըլլայ համաձայն իրենց «Ազգ. Երեսփ. Ժողովին եւ անկէ բխած կեդր. վարչութեան առաջարկած պայմաններուն »...

Միւսը (4 հոկտեմբեր) , «ուշի ուշով» կարդալէ յետոյ նուիրակին, բակին կոչը, կ'եզրակացնէ թէ «փոխան մտքերի խաղաղութեան, մտքեր վրդովելու պիտի ծառայէ Ս. Նուիրակին այդ պատգամը»: Եւ կ'աղաղակէ, սրտառո՛ւչ միամտութեամբ.— «Պահենք Թեմին ներկայ միասնականութիւնը »:

Այսինքն՝ չարունակենք եւ աւելի խորացնենք պառակտումը, որպէսզի հանդիսատ քուն քաշեն «Հայաստանասէր» եւ «եկեղեցասէր » ռամկավարները :

Զայն մըն ալ եգիպտոսէն, նոյնպէս ռամկավար :

Միշտ ծածկամիտ եւ դաւադիր, «Արեւ», որ յաջողութիւն մաղթած էր իր Նիւ Եորքի Թղթակցին բերնով, հոկտեմբեր 8ի խմբագրականին մէջ կը սահեցնէ հետեւեալ տողերը.

— « Կիրճը որ հրահրուեցաւ, արուեստական միջոցներով, Ամերիկայի «հեռաստանեայ ափերուն վրայ», պէտք է լռէ, այո՛, եւ բոլո՛ր կողմերուն վրայ իշխէ զիջողութեան ոգին»:

Բայց,— « Թող նախ «ոճրագործ»ները սկսին:

Զեզի ներկայացուցած եղանք հնչուն չարժանկար մը, արժանի՝ ցուցադրուելու ամերիկեան բեմերու վրայ:

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՄԱՏՐԻՏ ԿԸ ԼԱՐԷ ԲՈԼՈՐ ՈՒԺԵՐԸ

— o —

Ապստամբները գառաջ կը խաղան պաշարման թնդանօթներով, հրազէններով եւ օդանաւերով

— —

ՄԱՏՐԻՏԷՆ ՎԵՐՋԸ ՊԱՐՍԵԼՈՆԱ

Վերջին լուրերու համաձայն, Սպանիոյ ապստամբները կը չարունակեն յառաջ խաղալ հարաւէն, հիւսիսէն եւ արեւմուտքէն, պաշարելու համար Մատրիտը: Կառավարութիւնը ըմբռնելով կացութեան ծանրութիւնը, որոշեց յուսահատական փորձ մը կատարել, գոնէ պատուով անձնատուր ըլլալու համար: Հրամանագրով մը ղէնքի տակ առնուեցան բոլոր ընդունակ տղամարդիկը: Միեւնոյն առեն խիստ պատուէր տրուեցաւ թոյլ չտալ որ ո եւ է քաղաքի հեռանայ քաղաքէն, առանց մասնաւոր անցագրի: Այս անօրինութեան նպատակն է ոչ միայն արգիլել դասալիքներու փախուստը, այլեւ թոյլ չտալ որ ապստամբներուն համակիր տարրեր երթան միանան զօր. Ֆրանքոյի բանակին կամ տեղեկութիւններ հաղորդեն:

Մինչ այս մինչ այն, կառավարութիւնը պատրաստուած է Մատրիտի անկման համար: Այդ պարագային, հաւանական է որ մայրաքաղաքը փոխադրուի Պարսելոնա կամ Հարաւային - արեւելեան քաղաքներէն մէկը: Նախազգոն Պարսելոնա գնաց հոկտեմբեր 20ին, ինչ որ նշանակալից կը համարուի: Իրեն կ'ընկերանային երեք նախարարներ, որոնք հաւաքարար խորհրդակցութիւններ կատարեցին Քաթալոնիոյ նախագահին եւ կառավարութեան հետ: Զորոյգ մը համաձայն, վարչապետ Լարկօ Քապալլէրօ այժմ հակած է չափաւոր ընկերվարականներու տեսակէտին եւ անօգուտ կը գտնէ Մատրիտի դիմադրութիւնը, երբ ամբողջովին պաշարուած ըլլայ: Կը վախցուի որ ահռելի ջարդեր կատարուին, դիմադրութեան պարագային:

Ապստամբները երէկ մէյն էօթը մղոն հեռու էին էլ Էսքօրիալէն, որ կրեւոր մշինարերդ մը կը կազմէ, Մատրիտի գլխաւոր ճամբուն վրայ: Իսկ աւելի հեռու են արեւմուտքէն: Մայրաքաղաքին հարաւային ճակատին վրայ, Նավալքարնէրօ եւ Արանկուէզ տակաւին կը դիմադրեն :

Կառավարական վերջին զեկոյցները կ'ըսեն թէ մեծ յարձակողականի մը ձեռնարկուած է մայրաքաղաքին չուրջը: Կառավարական հինգ օդանաւերմասնակցած են գործողութեանց, բայց ապստամբներն ալ նոյն ուժգնութեամբ պատասխանած են, օդանաւերով եւ թնդանօթներով: Նոյն աղբիւրին համաձայն, հաւատարիմ նաւատորմը յաջողած է վերադառնալ Ձիպրալթարի նեղուցը, որով պիտի կրնայ խանգարել ապստամբ զինուորներու փոխադրութիւնը Մարոքէն : Նաւատորմը մինչեւ հիմա կը գործէր հիւսիսային ջուրերուն մէջ :

**** « Տէյլի Թէլէկրաֆ»ի Թղթակիցը կը հեռագրէ թէ Զօր. Վարէլա, որուն բանակատեղին է Թոլէտօ, ծանր թնդանօթներ կը տեղաւորէ այդ ճակատին վրայ, ապահովելու համար իր յառաջխաղացութիւնը դէպի Մատրիտ: Շրջակայ դիւղերն ու գաւառները լեցուած են Մարոքցի զինուորներով: Այս կառավարներուն բուսած էր թէ երբ Իլլէսքաս հասնին, պիտի տեսնեն Մատրիտի լոյսերը: Բայց անոնք յուսախաբ եղան, որովհետեւ ապստամբները կտրած էին Մատրիտի ելեկտրական լոյսին 60 աւ հարիւրը, գրաւելով գլխաւոր կայանները: Կ'ըսուի թէ երկու ռուս սպաներ ձերբակալուած են Իլլէսքասի մէջ:*

Մատրիտի թերթերը ապստամբներուն մերձեցումը կը հաղորդեն առանց վերապահութեան: Բացորոշապէս կը գրեն թէ Զօր. Ֆրանքոյի բանակները մայրաքաղաքը պաշտպանող լեռնաշղթաներէն իջնելով, այժմ կը դարձնեն Մատրիտի դուռները: Համայնավարական օրկանը կը գրէր առջի օր.— «Թշնամին մեր դուռը հասած է»: Ընկերվարական օրկանն ալ հաստատելով այս լուրը, յոյս կը յայտնէր թէ «բանուորներու քաղաքապահ զօրքը կրնայ նահանջի մատնել թշնամին»: Ազատական գլխաւոր օրկանը կը գրէ.— « Հասած է վճռական ժամը Մատրիտի համար: Օրուան նշանախօսքը պէտք է ըլլայ հաւատք, հանդարտութիւն, վճռականութիւն եւ կորով »: Մէկ խօսքով, բոլոր թերթերն ալ կը մատնանշեն մօտալուտ վտանգը, հետեւեալ ազդանշանը արձակելով.

— « Կարելի է վերադառնալ ռազմաճակատէն, բայց երբեք՝ փաշական կառավարիչներէն »:

Զինուորական նախարարը նոր կոչ մը ուղղեց ժողովուրդին, որպէսզի պաշտպանէ մայրաքաղաքը: Հազարաւոր այրեր եւ կիներ կամաւոր կ'արձանագրուին: Կարելի չէ համագրեսա ճարել բոլորին ալ, ուստի վերմակներ կ'առնեն, ցուրտէն պատսպարուելու համար: Շատերը հրացան ալ չունին եւ կը յուսան առնալ ճակատ հասնելէ վերջը:

Ամէն տրամադրելի աշխատաւոր կը գործածուի խրամներ փորելու համար քաղաքին չրջակաները: Մատրիտը այլափոխուած է: Ամէն տեղ կ'երեւան կոնաձեւ չէնքեր, որոնց գործածութեան նպատակը գաղտնի կը պահուի :

Ապստամբները կը յայտարարեն թէ Մատրիտի պաշարումը գրեթէ վերջացած է, բոլոր հիմնական դիրքերը իրենց ձեռքը անցած ըլլալով: Պաշարող բանակը 20 մղոն ճամբայ կտրած է երկու օրուան մէջ:

**** Լիզպոնայէն հասած հեռագրի մը համաձայն, Սպանիոյ վարչապետը, Լարկօ Քապալլէրօ, ատրճանակով սպաննած է ծովային եւ օդանաւային նախարարը, Ինտալէգիօ Փրիէթօ, որ աւելի չափաւոր կ'երեւար:*

Պատանդներու փրկութեան համար

Սպանիոյ քաղաքացիական կռիւներուն սկզբնաւորութենէն ի վեր , հազարաւոր պատանդներ վար դրուած են երկու կողմէն ալ, եւ չատեր անխնայ կը դնդակահարուին, փոխադարձ վրէժխնդրութեամբ: Հիմա որ Մատրիտի անկումն ալ անխուսափելի կը համարուի, կացութիւնը չատ աւելի ծանրացած է: Կ'ըսուի թէ միայն Մատրիտի մէջ կը գտնուին 8000 պատանդներ եւ ամէն օր ուրիշներ ալ կը ձերբակալուին, մանաւանդ ունեւոր եւ ազնուական դասէն:

Անգլիոյ արտաքին նախարարութիւնը նկատի առնելով այս խնդիրը, հեռագիր մը ուղղեց իր գործակատարին, որպէսզի համոզէ որ երկու հակառակորդները փոխանակեն իրենց պատանդները: Այս առթիւ անգլիական կառավարութիւնը պատրաստակամութիւն կը յայտնէ միջնորդելու, ինչպէս եւ իր նաւատորմը տրամադրելու, պատանդներու փոխադրութեան համար:

Այս առաջարկը անմիջապէս հաղորդուեցաւ Մատրիտի եւ Պուրկոսի (ապստամբ) կառավարութեանց :

ՕՐԸ ՕՐԻՆ

ԽԵՂՃ ՌԱՄԿԱՎԱՐՆԵՐ...

Երկարապատում խմբագրականի մը մէջ, որ պիտի արտատպուի ամբողջութեամբ, «Խորհրդային Հայաստան» հետեւեալ վճիռը կ'արձակէ (12 սեպտեմբեր).

— « Նացիոնալիստ - ուկլոնիստական չնչին խմբին պատկանողները, մանաւանդ նրա այն ներկայացուցիչները որոնք իրենց մասնագէտ են համարում «գաղութահայ» գործերին, փորձում են մշուշ ստեղծել ռամկավարների շուրջը, որ իբր թէ նրանց խաղաքականութիւնը հիմնական տարբերութիւն ունի Դաշնակցական քաղաքականութիւնից: Այդ տարբերութիւնն այնքան է, որքան տարբերութիւն կայ դաշոյնը սրողի եւ դաշոյնը խփողի միջեւ. մէկը ծառայում է միւսին, իսկ նպատակը մէկ է՝ նացիոնալիզմի ռեստաւրացիան (վերահաստատում), ըստ որում ռամկավարների դիրքաւորումը խորհրդային Հայաստանի նացիոնալիստական վերաբերման նկատմամբ՝ հանդիսանում է ինտերվենցիայի (միջամտութիւն) նախապատրաստման լաւագոյն ձեւերից մէկը, դա միեւնոյն շղթայի տարբեր օղակն է»:

Ձեմ գիտեր կրցա՞ծ ըմբռնել այս մանուածապատ նախադասութեան իմաստը:

Զարժեր միտք յոգնեցնել: Միայն առաջին խօսքը թարգմանենք, բաւական է, — Ռամկավարները դաշոյն սրողներ են, Դաշնակցականները՝ դաշոյնը գործածողներ:

կը յիշեմ որ ռամկավարները կատղեցան եւ ամէն գարշահոտութիւն թափեցին թուղթի վրայ, երբ «Ծառաջ» գրեց, նիւ եորքի սպանութեան առթիւ,— Դուք սրեցիք դանակը... Ի՞նչ պիտի ըսեն հիմա, երբ երեւանի պաշտօնաթերթը այնքան կոպտօրէն կը վիրաւորէ իրենց «Հայաստանասիրական » զգացումները:

Մանաւանդ որ, Արշակ Զօպանեան յանդգնութի՛ւնն ունեցաւ ապերասագիր մը խմբագրելու Լեւոն Բաշալեանի հետ, ներքին սահմանիներու ընդարձակման մասին: («Խ. Հայաստան»ի խմբագրականը այդ հարցն ալ կը յուզէ):

Ամէն պարագայի մէջ, ես շատ կը մեղքնամ ռամկավարներուն :

Ահա 15 տարիէ ի վեր հազար կտոր կ'ըլլան, ռոճեր եւ ձեռճեր կը շոյեն, կը լզեն երեւանէն մինչեւ Մոսկուա, —եւ սակայն, այնքան թուխ ու մուր ընդունելէ յետոյ, այսօր ալ պաշտօնապէս կը հռչակուին «դաշոյն սրող»:

Կարելի՞ է դիմանալ այսքան ապերախտութեան...

Այս ամբաստանութենէն վերջը, կասկածելի չի՞ դառնար Բարեգործականն ալ, իր ռամկավար վարիչ-պատուիրակով եւ հատորնոր գործիչներով :

Նոյն կասկածը չի՞ յնար, նաեւ, Հօկին վրայ, որ մինչեւ հիմա սիրայօժար կը գործակցի ռամկավարներուն, իբրեւ «Հայաստանասէր » ճանչնալով զանոնք :

Խե՛ղճ ռամկավարներ, ի՞նչ օրերու հասաք...

ՎԱՀԷ

«ԼՒՔ ՄԸ ԹՈՒՐՔԵՐՈՒ ՍԻՐՈՑՆ ՉԵՆՔ ԿՐՆԱՐ ՓՈԽԵԼ ՍՈՒՐԻԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԻ ՄԸ ՎԱՐՁՈՒԱԾԵԻՐ»

— o —

Թուրքերէն Ձիւմհուրիյէթ թերթը կը գրէ.

Բարեկամ Սուրիոյ թերթերուն մէկ մասը մինչեւ հիմա համեմատաբար չափաւոր լեզու մը կը գործածէր Իսքէնտէրունի եւ Անթաքիոյ խնդրին շուրջ. մինչդեռ անցեալ շաբթու, կարծես մէկ ազդիւրէ հրահանգ առած ըլլային, այդ թերթերը յանկարծ չարժման անցան եւ սկսան դէմ գրել Իսքէնտէրունի Թուրքերուն: Այսպէս, «Ճէմիյէթ Արաբ » (5 հոկտեմբեր) կը գրէ.—

« Ձեումհուրիյէթ»ի Թղթակից Նամի Ագվէրան Անթաքիա գացած եւ գործի անցած է այն անձերուն հետ որ թրքացած են եւ կ'ուզեն անջատուիլ Սուրիայէն: Շահագործելով քրիստոնեաներու դաղարի օրը (կիրակի), անոնք ուզած են գործադուլ մը սարքել, բայց ոչ ոք մտիկ ըրած է կիրենք: Խանութներու մեծ մասը բաց մնացած է եւ առուտուրը չարունակած է իր բնականոն ընթացքը, որ ցոյց կուտայ թէ այս նահանգը որքան կապուած է Սուրիոյ:

Այս առթիւ հեռագրեր ղրկուած են թէ Հալէմ պէյ էլ Սթաչիի եւ թէ մարզպանին, եւ բոլոր եղած է թուրք մամուլի հրատարակութեանց դէմ: Անթաքիոյ ժողովուրդին անունով մարզպանին ղրկուած հեռագիրը կ'ըսէ. —

«Թուրքիոյ արտաքին գործակարին յայտարարութիւնը, թուրք մամուլին խեղաթիւրումները եւ կարգ մը թրքացած անձերու պնդումը թէ Իսքէնտրունի նահանգը կը ներկայացնեն, որ եւ է օրինաւոր եւ հիմնական իրաւունքի մը չեն կրնար: Զենք կրնար ընդունիլ որ սուրիական նահանգի մը վարչութիւնը փոխուի ան մը Թուրքերու սիրոյն, որոնք նահանգին բնակչութեան քառորդը եւ Կիլիկիոյ Արարներու կէսն անգամ չեն կազմեր: Պատմական թէ աշխարհագրական տեսակէտով, այս նահանգը Սուրիոյ մէկ մասը կը կազմէ: Այս նահանգին մէջ Արաբներուն թիւը 150,000 է, իսկ թրքացածներունը՝ 60,000 : կը բողոքենք այն ձեռնարկին դէմ որով կ'ուզուի մասնաւոր վիճակ մը տալ այս նահանգին: Այդ ձեռնարկը յարձակում մըն է թէ իրաւունքի եւ թէ խաղաղութեան դէմ : կը հնդրենք որ մեր այս բողոքը հաղորդէք արտաքին նախարարութեան եւ Ազգերու Դաշնակցութեան »:

Նոյն թերթը կ'աւելցնէ թէ ոստիկանութիւնը խիստ միջոցներու դիմած է թուրք աշխատաւորներուն դէմ: Այսպէս, թուրք չարժավարները ստիպուած են նոր արտօնագիր առնել ոստիկանութենէն, իսկ չատնողները անմիջապէս դուրս պիտի հանուին երկրէն:

**** «Լը Քապէս» թերթն ալ կը գրէ հոկտեմբեր 8 թուականով.— Քալաքերուած թուրք մամուլին հրատարակութիւններէն, Անթաքիոյ Թուրքերը յայն քարոզութիւն մը կը կատարեն սուրիական դաշնադրին դէմ: Թուրք մամուլը կը պնդէ թէ նահանգին մէջ կան 280 հազար Թուրքեր որոնք կ'ուզեն միանալ Թուրքիոյ: երէկ Թուրքերը ցոյց ըրին Անթաքիոյ փողոցներուն մէջ, բայց ցոյց ըրին նաեւ 145,000 Արաբներ (Արաբներու ընդհ. թիւը 210,000 է) եւ ջերմօրէն ծափահարեցին Սուրիոյ միութիւնը: Այլեւս սպառած է Արաբներուն համբերութիւնը: Որ եւ է միջադէպ տեղի չունեցաւ. միայն թէ ցուցարար Արաբներուն թիւը Թուրքերու թիւին տասնապատիկն էր, ինչ որ հիանալի պատասխան մըն է թուրք մամուլի այն պնդումին թէ Թուրքերը մեծամասնութիւն կը կազմեն նահանգին մէջ»:*

— • —

Տիկին Մոլիսըն, օդաչու Անգլուհին որ այնքան յանդուգն թռիչքներ կատարած է թէ առանձին եւ թէ իր ամուսնին հետ, առջի օր Փարիզէն Լոնտոն թռած եւ վար իջած տեղն, վիրաւորուեցաւ քիմքէն: Հիւանդանոց փոխադրուելով, հաստատուեցաւ թէ ձախ ուսէն ալ վիրաւորուած է: Այս առթիւ յայտարարեց թէ այսուհետեւ թռիչքներ պիտի կատարէ իր սեփական անունով, իբրեւ Օր. Էմի Ճոնսըն: «Ես իմ ճամբով, ամուսինս իր ճամբով»:

(ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԴԱԼ Դ. ԷՋ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ ՀԱՅՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ ՀԱՅՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ, ՀԱՅՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԻ

Հրատարակչական Խմբագրական Գրասենեակ՝ Պոլիս, Գումգափու, Ղարաղոլ Սոկաղը, Թիւ 1։

Տարեկան գինը՝ Պոլսոյ եւ Գաղզիոյ համար ֆր. 20։ Արտասահմանի համար ֆր. 25։ Ամսական գինը՝ Պոլսոյ համար ֆր. 2։ Արտասահմանի համար ֆր. 2.50։

Ամսագիրը կը հրատարակուի ամէն ամսուան 15-ին։

Ձրի նմոյշներ կը տրուին ամէն պարագայի։

Ձեռագիրները չեն վերադարձուիր։

Ամսագրին համար նամակները եւ դրամական յանձնարարութիւնները կը խնդրուին ուղղել Ամսագրին Տնօրէնին անունով։

Ամսագրին համար գրուած նամակներուն մէջ պէտք է յիշել նաեւ նամակատան անունը, ուր կ՚ուզէք որ ամսագիրը ղրկուի

ՀԱՅԿԱԿԱՆ ՊՎԱՆՋԱՅԻՆ ԼՑԱԿԱԶՄԸ

Ե

Դիվիզիայի հրամանատարությունից ստանալով հրամանը՝ գնդի հրամանատարությունը ամբողջ գիշեր զբաղված էր մարտական ծրագրի մշակմամբ։ Գնդի հրամանատարը, ինչպես նաև գնդի շտաբի պետը, ամբողջ գիշեր չքնեցին։ Գնդի հրամանատարը, ինչպես նաև գնդի շտաբի պետը, ամբողջ գիշեր չքնեցին։ Գնդի հրամանատարը, ինչպես նաև գնդի շտաբի պետը, ամբողջ գիշեր չքնեցին։

— Ես ուզում եմ, որ մեր գնդի զինվորները գիտենան, թե ինչ նպատակի համար են կռվում, — ասում էր գնդի հրամանատարը։ — Ես ուզում եմ, որ մեր գնդի զինվորները գիտենան, թե ինչ նպատակի համար են կռվում, — ասում էր գնդի հրամանատարը։ — Ես ուզում եմ, որ մեր գնդի զինվորները գիտենան, թե ինչ նպատակի համար են կռվում, — ասում էր գնդի հրամանատարը։

Գնդի հրամանատարը ինքն էր կազմում գնդի հրամանը։ Գնդի հրամանատարը ինքն էր կազմում գնդի հրամանը։ Գնդի հրամանատարը ինքն էր կազմում գնդի հրամանը։

— «Ստանդկն ատրճմն ի մեր ձեռ ոտ-ձեռ»։ Ես ուզում եմ, որ մեր գնդի զինվորները գիտենան, թե ինչ նպատակի համար են կռվում։ Գնդի հրամանատարը ինքն էր կազմում գնդի հրամանը։

Գնդի հրամանատարը ինքն էր կազմում գնդի հրամանը։

Գնդի հրամանատարը ինքն էր կազմում գնդի հրամանը։

Գնդի հրամանատարը ինքն էր կազմում գնդի հրամանը։

—

ԻՆՉԵ՞Ր Կ'ՁԱՐՈՁԱՆ ԻՏԱԼԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ

Միջազգային մամուլը եւ հանրային կարծիքը անհամբերութեամբ կը հետեւին Պերլինի մէջ կատարուած է խորհրդակցութեանց, Իտալիոյ արտաքին նախարարին այցելութեան առթիւ: Բոլորին կարծիքով, Հիթլէր եւ Մուսոլինի կարեւոր ծրագիրներ ունին աչքի առջեւ, աւելի սերտ գործակցութիւն հաստատելու համար: Նախարար Ձիանօ, որ Մուսոլինիի փեսան է, իր կինը Պերլին ղրկած էր քանի մը ամիս: Ամբողջ երեք օր պիտի խորհրդակցի Գերմանիոյ արտաքին նախարարին եւ ուրիշ պաշտօնատարներու հետ, քաղաքական հարցերու մասին, իսկ չաբաթ օր պիտի ընդունուի Հիթլէրի կողմէ: Խորհրդակցութեանց գլխաւոր նիւթերն են . — Գործակցութիւն Եւրոպայի մէջ.— Երկու պետութեանց դիրքը՝ Ազգերու Դաշնակցութեան հանդէպ.— Հոխադարձ օգնութիւն.— Կեդր. Եւրոպայի եւ Միջերկրականի խնդիր . — Եթովպիոյ գրաւման ճանաչումը՝ Գերմանիոյ կողմէ.— Երկու պետութեանց քաղաքականութիւնը՝ Սպանիոյ ազգ. կառավարութեան հանդէպ եւն.:

Տարակոյս չկայ թէ պիտի քննուի նաեւ հակաբոլշեւիկ պայքարի խնդիրը, որուն մէջ չատ վճռական դիրք բռնած է Գերմանիան: Մինչ գերմանական եւ իտալական թերթերը ցնծութեամբ կ'արձանագրեն երկու երկիրներուն գործակցութիւնը, Մոսկուայի թերթերը չափազանց դժկամակ դիրք մը բռնած են: Այս առթիւ կ'ըսեն թէ Անգլիա եւ Ֆրանսա անճնաուր եղած են Գերմանիոյ, սպանիական հարցին մէջ:

**** Մուսոլինի Միլան պիտի այցելէ հոկտեմբեր 30ին, ֆաչականութեան 14րդ տարեդարձի ոճնակատարութենէն վերջը: Միլան ֆաչականութեան օրորոցն ըլլալով, մեծ կարեւորութիւն կը տրուի այս այցելութեան:*

ՁԱՆՁՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՄԸ ՏՐՂԱՎ

ԵԳԻՊՏՈՍԻ ՔՐԷՏԻ ՅՕՆՍԻԼԻՆ հոկտեմբեր 15ի վիճակահանութեան մէջ 100,000 ֆրանք չհած է 626,251 թիւը (1903), 50,000 ֆրանք ալ՝ 239,652 թիւը (1911):

ԱՇՈՒԻՒԻ ՆՈՒԱԶՈՒԹԻՒՆԸ դադրի կը դառնայ ամբողջ Ֆրանսայի մէջ: Հանքաուէրներու Դաշնակցութիւնը այս տագնապը կը վերագրէ աշխատանքի ժամերու կրճատման եւ վճարովի արձակուրդի նոր վերջին դործադուլներուն: Ցունիսէն Սեպտեմբեր հիւսիսային նահանգներու արտադրութիւնը 589,000 թոն պակաս եղած է 1935ի նոյն ժամանակաշրջանի արտադրութենէն (տնական ածուխ):

33 ԻՏԱԼԱԿԱՆ ՕԴԱՆԱՒԵՐ 500 գինուոր փոխադրեցին Ատոս Ապէպայի մօտերը, պատժելու համար ըմբոստ ցեղերը: Անցեալ յուլիսին այդ ցեղերու մարդիկը երեք իտալական օդանաւեր վար առնելով, բոլոր օդաչուները սպանած էին:

ԱՆԳԼԻՈՑ աշխատաւորական կուսակցութիւնը նամակ մը ուղղելով Պ. Պալտուինի, առաջարկեց անմիջապէս նիստի հրաւիրել խորհրդարանը, քանի որ միջազգային կացութիւնը ծանրացած է անցեալ յունիսէն ի վեր: Ըստ սովորութեան խորհրդարանին արձակուրդը կը վերջնայ հոկտեմբեր 29ին եւ հանդիսաւոր վերաբացումը տեղի կ'ունենայ նոյեմբեր 3ին, թագաւորին կողմէ: Նախարարական խորհուրդը որոշեց քննել այս առաջարկը, թէեւ հաւանական չէ որ ընդունի:

ՇՈՒԵՆԱՅ ՄԸ ԸՆԿՂՄԵՑԱՒ հոլանտական Հնդկաստանի բացերը: 250 ճամբորդներէն 72ը խեղդուեցան:

ՀԱԶԱՐ ԱԶՆՈՒԱԿԱՆ ԿԻՆԵՐ ձերբակալուեցան Մատրիտի մէջ, իբրեւ պատանդ: Բոլորն ալ արգելափակուած են երկու խոշոր չէնքերու մէջ: Իրենց ամուսինները եւ զաւակները կրցան դուրսէն տեսնել կամաւորները եւ խօսիլ, բայց չկրցան մօտենալ: Հաւանական է որ ուրիշներ ալ ձերբակալուին:

ՅՈՐՀՐԴԱՑԻՆ չոգենաւ մը 1000 թոն ցորեն, 124 թոն խողաճարպ, 75 թոն պահածոյ միս, 125 թոն խտացած կաթ, 323 թոն կարագ եւն. ցամաք հանեց Ալիքանթէ, Սպանիոյ հանրապետականներուն համար:

ՖՐԱՆՍԱՑԻ ԵԼՄՏԱԿԱՆ ԿԱՅՈՒԹԵԱՆ մասին վրդովիչ տեղեկութիւններ կը հրատարակեն Փարիզի եւ Լոնտոնի թերթերը: Սակարանն ալ ազդուած է: Կառավարութիւնը յայտարարեց եւմտացոյցին քննութիւնը: Հրատարակուած տեղեկութեանց համաձայն, տուրքերու հասոյթը աւելի քան մէկ միլիոն անգլ. ոսկի պակաս եղած է սեպտեմբերի ընթացքին: Կ'ըսուի թէ կառավարութիւնը կը քննէ դրամադրութիւնը տուրքի ենթարկելու խնդիրը:

75,000 ՁԱՓՈՆԱԿԱՆ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ համախմբուած են Հոփէյի մէջ (Զինաստան), «ռազմախոթձեր» կատարելու համար: Զինական թերթերը սրբազան պատերազմ կը քարոզեն ձախոնի դէմ:

15 ԿԻՆԵՐ ԹՈՒՆԱՒՈՐԱՅ ըլլալու ամբաստանութեամբ կը դատուի այրի մը, Լիէժի մէջ (Պելժիա): Նոր քննութեանց համաձայն, այս հրէչին առաջին զոհը եղած է իր ամուսինը, որ մեռաւ չորս տարի առաջ: Հրէչը, տիկին Պ-քէր, 65 տարեկան է, օժտուած՝ մանուկոր հրապոյրով մը: Թունաւորուած 15 զոհերը իր մերձիմներն էին, իրենք թէ ստամոքսի հիւանդութենէ մեռած:

ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒԵՑԱԻ Ազոի Տորժէր, Ֆրանսայի Գիւղացիական ճակատին վարիչը, 24 ժամ բանտարկուելէ վերջը 100 հետեւորդներու հետ: Ազգի օր գացած էր իր ընկերները արձակելու, բայց դինքն ալ վար դրին, ցոյցի մը հետեւանքով:

ՀԱՄԱՁՆԱՎԱՐԱԿԱՆ ԵՒ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ 15 թերթեր արդիւնեցան Պուկարիոյ մէջ:

ԱԺՈՒԻՒԻ ՆՈՒԱԶՈՒԹԵԱՆ հետեւանքով չատ մը գործարաններ փակուեցան Ռուպէ - Թուրքուանի մէջ:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Մարսէյլի Շրջ. կոմիտէի եւ մասնակցութեամբ Մարսէյլի եւ արուարձաններու բոլոր ենթակոմիտէներու եւ խումբերու,

Սիրայօժար մասնակցութեամբ տեղւոյս **S. F. I. O.**ի *Բ. Մասնաճիւղի:*

24 Հոկտ. դաբաձ երեկոյ ժամը 8.30ին, Պրէպան Մարսէյէի ընդարձակ սրահին մէջ,

146 Chemin des Chartreux

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ԸՆԿ. ՎՐԹԱՆԷՍ ՂԱԶԱՐԵԱՆ

կը բանախօսեն՝ LASSALARIÉ (Conseiller Général), F. MAILLE (Conseiller Général), J. FOSSE (Adjoint au Maire), F. MULTEDO (Avocat)

ԸՆԿ. ՎԱՀԱՆ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐՈՒՀԻ **Ն. ՔԻՊՐԻԹՃԵԱՆ**

Ներկայութեամբ ընկերվարական յայտնի ներկայացուցիչներու:

ԼԻՈՆԻ ՄԷՋ.—

Կազմակերպուած Լիոնի Վարանգեան կոմիտէի կողմէն

24 Հոկտ. դաբաթ երեկոյ ժամը 8.30ին, 3րդ թաղապետարանի սրահին մէջ,

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ **ԸՆԿ. Վ. ՁՈՒԼԼԻԷՐԵԱՆ**

ԿԸ ԽՕՍԻ **ԸՆԿ. ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՃԵԱՆ**

ՕՐՈՒԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՄԱՍԻՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՁՈՒԽ ԲԱԺԻՆ

Կ'երգեն՝ ՕՐ. Շ. ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ, Պ. ԱՐԱՄ ԱԻԵՏԻՍԵԱՆ, Պ. ԳՈՒՐԳԷՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ (սլիդ)

Կ'արտասանեն՝ Ընկերներ Մ. ՄԻՐՋԷ եւ ԼԵՒՈՆ ԱԼԷՄԵԱՆ:

ՎԻԷՆԻ ՄԷՋ.— 25 ՀՈԿՏ. ԿԻՐԱԿԻ ԿԷՍՕՐԷ ՎԵՐՋ ԺԱՄԸ 3ԻՆ

ՍԷՐՒԻԼԸ ԿԱԹՈԼԻԿԻ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ԸՆԿ. Ս. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

ԿԸ ԽՕՍԻ **ԸՆԿ. ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՃԵԱՆ**

Գեղարուեստական բաժինին կը մասնակցին տեղւոյն կարող ուժերը:

Ցախքերու մատուցուելեան դաւար մուտք 1 ֆրանք:

Հ. Ց. Դ.

Գալատ

ՄԱՐՍԷՅԼԻ վաճագն խումբի ընկերական ժողովը տեղի կ'ունենայ 22 Հոկտ. հինգշաբթի երեկոյ ժամը 8.30ի, Դրօշակ ընկերութեան սրահին մէջ: Ներկայանալ անդամատետրով:

ՄԱՐՍԷՅԼԻ Շրջ. կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ Մարսէյլի եւ արուարձաններու բոլոր ընկերները 25 Հոկտ. կիրակի կէսօրէ վերջ ժամը 2.30ին, Շահիրիկեան սրահին մէջ, կը խօսի ԸՆԿ. Վ.ԱՇԱՆ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ: Ներկայանալ անդամատետրով:

ՄԱՐՍԷՅԼԻ Իշխան ենթակոմիտէն ժողովի կը հրաւիրէ իր ընկերները, այս կիրակի կէսօրէ վերջ ժամը 3,30ին, սովորական հաւաքատեղին:

ՏԷՍԻՆԻ կոմիտէն անդամական ընդհ. ժողովի կը հրաւիրէ երեք խումբերու ընկերները, այս կիրակի (25 Հոկտ.), կէսօրէ վերջ ժամը 2.30ին, սովորական հաւաքատեղին, կարեւոր օրակարգ:

ՀԱՅ ՍԱՓՐԻԶՆԵՐՈՒ

ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ՅՈՒԶԱՀԱՆԴԷՍ—ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

29 Նոյեմբեր, կիրակի գիշեր, ժամը 9էն մինչեւ լոյս.

Salle des Ingénieurs Civilsի *սրահին մէջ,*

19 Rue Blanche, Métro: Blanche et Trinité

Պիտի խօսին՝ ֆրանսացի եւ ուրիշ արհեստակից մասնագէտներ,

Հ. Մ. Միութեան կողմէ խօսք պիտի առնեն՝

Պ. Պ. ԳԷՈՐԳ ՍՏԵՓԱՆԵԱՆ եւ ԾԱՏՈՒՐ ՊԷՐՊԷՐԵԱՆ,

կը յուցադրուին հայ սափրիչ-սափրիչուհիներու կողմէ պատրաստուած կանանց մազերու ամենավերջին նորաձեւութիւնները՝ ֆրանսական եւ հայկական թղթակիցներու ներկայութեամբ.

ԱՒՈՒՇԱՀՈՏՈՒԹԵԱՆՑ ԲԱՆԱՒՈՒՄ,

ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ՝ հիւսկաւոր պարուհի HUGUETTE O BINի եւ դաշնակահարուհի ANGÈLE ALICEի կողմէ (7 տարեկան)

14 ՀՈԳԻՆԱՑ ԸՆՏԻՐ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ

ՁՈՒ ՊԻՏԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳԻՆԵՐՈՎ

Մուտք՝ արանց 8 ֆր., կանանց 6 ֆր.:

Տոմսերը կը ծախուին բոլոր սափրիչներու մօտ:

ՀԱՅ ԱՐԾԻ

(Aigle d'Arménie)

ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ

Հիմնուած 1936ին, **Récépissé de déclaration No. 1929, le 8 Juillet 1936**

Նպատակն է հայ նորաճաս սերունդին մէջ զարգացնել ընդհանուր մարմնակրթանքը.

Մշակել երգի ճաշակը.

Պահել ու զարգացնել ընկերականն եւ իրերօգնութեան կապը իր բոլոր մէջ,

Գաշտպանել իր անդամակիցներուն բարոյական եւ ընկերային շահերը:

ՀԱՅ ԲՈԼՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆՑ

«ՀԱՅ ԱՐԾԻՒ» ակումբի վարչութիւնը կը խնդրէ, փարիզի եւ շրջակայից բոլոր հայ կազմակերպութիւններէն առանց խարութեան (հայրենակցական, միութիւններ, ընկերութիւններ, ակումբներ եւայլն), որ հաճին իրենց ճշգրիտ հասցէները տեղեկացնել ակումբիս, Բեռեւեան հասցէով.— Albert L. Achdjian F.P. 14 rue Meyerbeer, Blanc-Mesnil (S. et O.)

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՀԱՅ ՍԱՓՐԻԶՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ց. ցուցադասը (*démonstration*) տեղի պիտի ունենայ 22 Հոկտ. հինգշաբթի իրիկուն ժամը 8.30ին, Միութեան Հքեղ սրահներուն մէջ, 7 rue Bernardin, Paris (5): Ներկայ պիտի ըլլան Ֆրանսացի եւ իտալացի ճանաչի մասնագէտներ: կը խնդրուի օգտուիլ այս առիթէն:

ԳԱՑԷՔ ՏԵՍԷՔ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Cinéma REXY

Rue Cours Lafayette, angle Garibaldi.

ԳԱՑԷՔ ՏԵՍԷՔ

CIGALE CINÉMA

60 Avenue de Saxe-LYON.

Կ'ՈՒԶՈՒԻՆ *մաքուր կար կարող ափիէսէօրներ: Տեւական գործ, Livraisonի գիւրութիւն: Դիմել՝ 241 Rue Croix Nivert, մէթրօ Porte de Versailles:*

Կ'ՈՒԶՈՒԻ **tricoteurs façoniers maille retourné** եւ **jauge 7 cam façon d'origine** *մեքենաներ ունեցող* **façoniers** *ներկայանալ Քէպապճեանի, 14 Rue de Tracy, Paris. Central 87-19.*

ԱՐՔԱՅԱՆ ԽՄԻՉՔ

ՐԱՔԻ ՏԻՒԶ

ուստ խազող է քաշուած եւ անիսոնով պատրաստուած օղին է ՐԱՔԻ ՏԻՒԶը:

Զգուշացէք այլ եւ այլ նիւթերով պատրաստուած ւ ձեր կեանքին վնասակար օղիները խմելէ, այլ խմեցէք միայն ՐԱՔԻ ՏԻՒԶը, որուն անարատ, կազդուրիչ եւ ախորժաբեր ըլլալը հաստատուած եւ գնահատուած է:

UN·DUZE
MARQUE DÉPOSÉE
RAKI
40°
DUZE
Véritable Anisette Orientale
DISTILLERIE OTTOMANE ISTAMBOUL

Ֆրանսայի համար արտօնատէր՝ Ա. ՏԱՒԱՔԻՒԻԷԱՆ

8 rue Suffren, Marseille— Tél. D. 70-89

ԵԳԻՇԷ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

ՁԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

AMERICAIN LLOYD — **48 rue de la République**

ORIENT LLOYD — **7 rue Auber, Paris**

Մարսէյլ, Tél. C. 47-22 եւ C. 74-51 Tél. Opéra 67-77 67-78

Նաւային բոլոր ընկերութիւններու ներկայացուցիչ:

Տոմսակներ՝ ամէն տեղի համար, Հայ ճամբորդներու համար ամսնաւոր գին: Ունինք թղթակիցներ աշխարհի ամէն կողմը:

ՎԱՍԱՒԵԼԻ ՏՈՒՆ:

Le Gérant: H. STEPHAN

Imprimerie A. DER (AGOPIAN) — **17, Rue Dameme, PARIS (13)**

«ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ» ԹԵՐԹՈՂԸ (119)

ՋԱՐԹՕՆՔ

(ՎԷՊ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵԱՆՔԷ)

—o—

Կարծես ամբողջ երկինքը փուլ եկաւ Մարտոյի գլխուն: Ի՞նչպէս թէ բանալիները իր քովը լինէին, ինքը ո-ղորմելի փինալի մը... Լեզուն կապ-ուեցաւ, թէեւ երիտասարդ պաշտօնեան բարեմտօրէն կը ժպտէր իրեն նայելով:

— Ե..եմ՞... թէ կա-կա-ծողիկոսը հը-հը-հրաման ...

Առանց սպասելու որ Մարտօն խօսքը վերջացնէ, դատախազի օգնականը խորհրդաւոր կերպով գլուխը օրօրեց եւ դուրս ելաւ դռնէն՝ ինքնիրեն մը-մռմռալով. «Եթէ այս ղողմելին ալ կաթողիկոսի հրամանէն կը խօսի, ուրեմն գուր աշխատանք է մեր կառարածը»:

Փինալի Մարտօն աժան պրծելուն համար հազիւ թէ ուրախացած երկար չունէր մը քաշէց, երբ յանձնախումբի հետ եկած չորս ոստիկաններէն մէկը, վզակոթէն բռնեց դուրս բերաւ փողոց ու յանկարծ այնքան ուժեղ աքացի հասցուց խեղճի կռնակին, որ Մարտօն թաւալգլոր ինկաւ ջաղացքի ա-ուուին մէջ:

— Ա՛ռ քեզի կաթողիկոսի հրաման, — մրթմրթաց ոստիկանը ու ամպագրեց միանալ ընկերներուն:

Պաղ ջրի ակամայ լոգանքը սթափեցուց Մարտօն: Թերեւս տարիներէ ի վեր ուղեղը երբեք այնքան պայծառ չէր գործած, որքան այդ պահուն: Առաւի մէջ երկնցած՝ Մարտօն վերյիշեց քիչ առաջ տեղի ունեցած սարսափելի ողբերգութիւնը, Սարգիս Աբօր սրտրուած մարմինը, գազանացած Պոնտոլովսկի արիւնարբու դէմքը: Թրջուած կատուի մը արագութեամբ Մարտօն տեղէն վեր ցատկեց ու վազեց դէպի եկեղեցիի բակը:

Մարտօն մօտեցաւ ու բռնեց Սարգիս Աբօր ձեռքը: Մարմինը դեռ տաք էր. հազիւ նկատելի կերպով վիրաւորի կուրծքը կը բարձրանար ու կ'իջնէր:

— Վայ, տունդ չքանդուի, տէր-տէր,— ծերունին մխթելով փսփսաց Մարտօն,— դեռ կենդանի է. ի՞նչ մեռելի նման առեր նստեր ես. գեղականին լուր տալու է, այդին տանինք, — ու առանց պատասխանի սպասելու՝ Մարտօն փողոց վազեց ու հանդիպած դուռը սկսաւ զարնել պոռալով.

— Հէյ, ժամ եկէք, ժամ եկէք ...

Ինչպէս փեթակի մը մեղուները, երբ օտար ձեռք մը կը խառնշտէ փեթակը, տզղզալով- բզզալով դուրս կը թափին, այնպէս ալ ամայացած գիւղի տան դռները իրարու հետեւէ սկսան բացուիլ եւ կին, երեխայ՝ վարար գեղի հոսանքի նման խուժեցին եկեղեցիի բակը:

Ժողովուրդը՝ սարսափէն չշմած՝ չրջապատեց մեռելի նման ինկած Սարգիս Աբերը: Պառաւ կիները առաջ անցան, չրջապատեցին վիրաւորը եւ ձայն ձայնի տուած՝ սկսան լալ, երբ դռնէն ներս վազեց Սարգիս Աբեր որբեւայրի քոյրը՝ Ծալօն:

— Վայ, իմ ազիզ ախպերս, վայ իմ սասան ախպեր, վախ, քոռնամ ես, — հեծկլտալով Ծալօն բազմութիւնը ճեղքեց ու մօտեցաւ:

Եթէ կիները ժամանակին չբռնէին զայն, վիրաւորի վրան պիտի իյնար: Ծալօյի գալով մեղմ ողբը փոխուեցաւ մեռելատան մը վայնասունին: Երեխաներն իսկ, կիներու լացն ու կոծը տեսնելով՝ ձայներնին ձգած իրենք ալ սկսան լալ:

Ոչ ոք սակայն վիրաւորին օգնելու, զայն տեղափոխելու մասին կը մտածէր, մինչեւ որ Ալէքսան Ամին, խելքի գալով պոռաց կնիկներուն վրայ, որ մէկդի քաշուին:

— Տօ, թաղիք մը բերէք, այդին տանինք, դեռ ողջ է, չուտ թաղիք մը հասցուցէք...

Քիչ յետոյ Սարգիս Աբերը, թաղիքի մը մէջ երկնցուցած, դուրս բերին եկեղեցիի բակէն: Գիւղի նեղ ու ոլորուն փողոցէն անցած ժամանակ, լուր չունեցող հարեւաններն ալ տներէն դուրս թափեցան ու միացան թափօրին, այնպէս որ երբ խճուղին ելան, դիւղի մէջ գտնուող գրեթէ ամբողջ ժողովուրդը ծանր ծանր կը յառաջանար դէպի Սարգիս Աբօր այգին:

Բազմութիւնը այդին հասնելով, հանդարտօրէն լեցուեցաւ դռնէն ներս: Տնեցիք այդքան մեծ բազմութեան դալը տեսնելով, եւ մանաւանդ երկու կիներու թեւէն կախուած Ծալօյի աղեխարշ լացի ձայնը առնելով, դուրս թափեցան տնէն եւ վայնասուն մը փրցուցին: Դեռ եղելութիւնը խմացած չէին, բայց կը զգային, որ ծանր դժբախտութիւն մը պատահած էր: Բազմութիւնը հանդարտօրէն մօտեցաւ այդիի տանը:

Գէորգը, Վահէն ու Վարդանը այդ պահուն, այդիի վերի ծայրը, ծառի մը չուքին տակ նստած, կը լսէին Վահէի դէպի Տաճկաստան կատարած ճամբորդութեան պատմութիւնը, երբ տան կողմէն բարձրացող լացն ու ճիչերը լսեցին: Կանխազգալով ծանր պատահար մը, ոտքի ցատկեցին եւ վազէ վազ երկու րոպէէն հասան տան մօտ: Դրան առջեւ հաւաքուած բազմութիւնը կարծես կը խուսափէր Գէորգին նայելէ: Տան ներսէն կը լսուէր կիներու եւ երեխաներու լացը:

Վայրկեան մը սենեակի չէմքի վրայ քարացած մնաց Գէորգը: Կարծելով թէ հայրը արդէն մեռած է՝ յուսահատ աղաղակ մը արձակեց ու ինկաւ թխտի առջեւ, որուն վրայ կը հանգչէր վիրաւորը:

Վահէն ուշադրութեամբ վիրաւորը քննելով, նկատեց, որ դեռ կենդանութեան նշաններ կային Սարգիս Աբօր վրայ: Վարդանի օգնութեամբ գրեթէ բուն սենեակէն դուրս հանեց Գէորգն ու տնեցիները եւ անմիջապէս վիրաւորի չորերը հանելով՝ սկսաւ պաղ ջրով լուալ վէրքերը:

Հազիւհազով մէկը երեւան ճամբուած թժիշկ Տէր Յակոբեանը կանչելու համար: Վահէի մօտ ընկերն էր թժիշկը, Երեւանի յեղափոխական մարմնի անդամներէն մէկը:

Հետզհետէ ժողովուրդը սկսաւ ցրուիլ: Տղամարդիկ, կիներ կը հեռանային այդ տնէն, ուր մահը չուտով պիտի մտնէր, կը հեռանային հոգիներուն մէջ ահաւոր սարսափ մը տանելով: Ի՞նչ պիտի լինէր այս բոլորի վախճանը: Ո՞ր ձեռքը պիտի բարձրանար պատժելու Սուրմալուի Գազանը:

(Շար.) ՄԱԼԽԱՍ

ՓՆՏՐԻԵՑԻՔ եւ ԿԱՐԴԱՑԻՔ երգիծաթերթ՝ «ՄԵՂՈՒ» փարիզի եւ շրջանի Յառաջի ցրուիչ

Պ. ԱԽՑԻՈՒՆ:

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)
17, Rue Damesme, PARIS (13e)
Téléphone : Glacière 15 - 70

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,—

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՅ	ԵՒԱՄՍԵԱՅ
Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա	250 »	130 ֆրանք	—
Ամերիկա եւ ուրիշ երկիրներ	200 »	100 ֆրանք	—

ՈՒՐԲԱԹ
23
ՀՈԿՏԵՄԲԵՐ
VENDREDI
23 OCTOBRE
1936

ԺԶ ՏԱՐԻ — 12e Année No. 3251

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՕՔ ԽՕՍՔ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ «ՄԱՐԱՊԱ»ՆԵՐԸ

— . —

Անոնք որ ապրած են Թրքական գաւառները, մանաւանդ «ա – բեւելեան նահանգներ»ուն մէջ, գիտեն թէ ինչ կը նշանակէ «մա – րապա»: (Կամ «միրիպա»):

Զուներ (պրոլետար) հողագործներ էին «մարապա»ները: Զուներնալով ոչ հող, ոչ լուծք, ոչ ալ արօր կամ խուփ, անոնք իրրեւ հասարակ ճորտեր կը բանէին Թուրք եւ քիւրտ աղաներու կամ պէկերու արտերուն մէջ, յանուն պատառ մը հացի:

Այս տաժանակիր աշխատանքին լծուած էին ոչ միայն տղամարդիկը, այլեւ կիներն ու մանուկները: Այս վերջիններս, մանաւանդ կիները եթէ արտերը չերթային, կը ծառայէին աղաներու եւ պէկերու տուներուն մէջ, կերակուր եփելով, լուացք ընելով, կով կթելով, եւ ի հարկին կովու դեր կատարելով:

Արտն ըլլային թէ տունը, անոնք այլեւս տէր չէին ոչ իրենց աշխատանքին, ոչ ալ պատուին: Աղան կը տնօրինէր իրենց ճակատագիրը, աղան ալ կը վայելէր ամէն բան:

Վա՜յ, եթէ մէկին ու մէկը համարձակէր գլուխ վերցնել, տըրտնջալ, այս տաժանքը ընդունիլ եւ միւսը մերժել: Աղան ու իր «զօլամ»ները պատրաստ էին օրինակելի դաս մը տալու «կեա – ւուր»ին, իհարկին օգնութեան կանչելով հուշակաւոր «զապթիէ»ն ալ: Չէ՞ որ իրար կը լրացնէին աղային «զօնախա»ն ու կառավարութեան «զօնախա»ը:

1912ին, երկու Դաշնակցական ընկերներ կարնոյ դաշտին դիւղերը պտտած ատեն, կը հանդիպին Հինճք, և ժողովի հրաւիրելով դիւղացիները, կը խօսին անոնց տառապանքներու եւ տարբրական իրաւունքներու մասին:

Սահմանադրութիւնը վերահաստատուած էր, բայց չատ քիչ բան փոխուած էր ինչպէս քաղաքական, նոյնպէս ընկերային-տնտեսական կարգ ու սարքին մէջ: Աղան աղա էր նորէն, իսկ «մարապա»ն՝ նոյնքան տարուկ եւ թշուառ:

Անշուշտ երկու ընկերները կը ջանան միտքերը բանալ նաեւ այս ուղղութեամբ, կարելի եղածին չափ մատչելի բացատրութիւններ տալով:

Երկու օր չանցած, կուսակալը գանգատագիր մը կը ստանայ եւ բացատրութիւն կը պահանջէ: Եւ երբ երկու ընկերները դարձեալ նոյն դիւղէն կ'անցնին, այս անգամ կը դիմաւորուին բուն իսկ մարապաներուն կողմէ.

— Ինչո՞ւ կը խառնուիք մեր գործերուն: Մենք մեր աղաներէն գոհ ենք, ցերեկն ալ կ'աշխատինք, գիշերն ալ, մեր կիներն ու տըղաքն ալ ծառայութեան կուտանք, դուք ի՞նչ կը խառնուիք... Աղան ինչ կ'ուզէ ան կ'ընէ, մենք դուրսպան ենք աղային...

×

Այս պատմութիւնը կ'իյնայ մեր միտքը, ամէն անգամ որ կը կարդանք մեր կարմիր - տոտիկ, ամէն պարագայի մէջ խաւտուտիկ հակառակորդներուն «տեսութիւնները»ը՝ Հայաստանի ներքին սահմաններու ընդարձակման կամ ուրիշ որ եւ է տարբրական եւ տրամաբանական պահանջի առթիւ:

— Մենք սահմաններու խնդիր չունինք, կ'աղաղակեն անոնք ամենայն լրջութեամբ: Սահմաններու խնդիրը չատոնց լուծուած է... Նախիջեւանի եւ Ղարաբաղի ժողովուրդները իրենց ազատ կամքով կապուած ըլլալով խորհրդային Ադրբէջանէն, ոչ ոք իրաւունք ունի անոնց պարտադրել բան մը, հակառակ իրենց կամքին .. Մ. Հայաստանի սահմանները կը տարածուին աշխարհի մէկ վեցերորդ մասին վրայ...

Անհրաժեշտ չէ անուններ տալ: Նոյն խօսքերը, աւելի կամ պակաս ուժգնութեամբ, կրնաք ամէն օր կարդալ ինչպէս «Մ. Հայաստան»ի, «Պրոլետար»ի, «Կոմունիստ»ի կամ «Գրական Թերթ»ի, նոյնպէս արտասահմանի բոլոր հայատառ կարմրադրօշ օրգաններուն մէջ, Փարիզէն մինչեւ Ամերիկա: Կրնաք լսել, նաեւ, բեմերու վրայ, ինչպէս պատահեցաւ քանի մը ամիս առաջ, երբ երկու աւետաբեր խմբագիրներ վերադարձան Երեւանէն, եւ պատմեցին Աղասի Խանջեանի անձնասպանութեան պարագաները:

Նոյնիսկ ուղեկից թերթեր ու «Հայաստանասէր»ներ նոյն կանչը կ'արձակեն, աչքերը գոց եւ բերանները բաց.

— Մենք չատ գոհ ենք մեր աղայէն (հանճարափա՛յլ Սթալինէն). կ'ուզէ կուտայ, կ'ուզէ կ'առնէ, ինչո՞ւ կը խառնուիք ...

Մեր օրերու «մարապա»ներն են ասոնք, ուսումնակա՛ն, հայրենասէ՛ր եւ յեղափոխակա՛ն, որոնք յանկարծ կը վրդիւին, եթէ մէկն ու մէկը համարձակի արդար դատ մը պաշտպանել, գոնէ քանի մը տարբրական հարցումներ ուղղել :

— Ո՛չ. դուք իրաւունք չունիք աղային «քէյֆ»ը աւրելու... Աղան տեղ ունի մեր գլխուն վրայ, դուք ինչպո՞ւ էք...

Երկու քաղաքացիներ կը համարձակին մրմնջել, հազար զգուշութեամբ.

— Մենք ալ աղան կը սիրենք, ան մեր աչքին լոյսն է... բայց ... գոնէ աղերսագիր մը, ամենայն երկիւղածութեամբ :

— Ո՛չ, դուք թշնամիներ էք եւ գործիք ուրիշ թշնամիներու, գացէք ձեր գործին ...

Երէկ՝ անճար եւ տգէտ մարապան արտ կը վարէր, այսօր՝ ազատ եւ գիտուն մարապան կը վարէ հանրային կարծիք եւ քաղաքականութիւն:

Ո՞վ պիտի համարձակէր պնդել թէ բան չէ փոխուած մեր աշխարհին մէջ: Մանաւանդ ցամաքէ ցամաք նետուելէ վերջը:

Երէկուան թշուառ մարապան գոնէ չքմեղանք մը ունէր — բնութեան եւ անօթութեան սարսափը :

Իսկ այսօրուա՞նը,— ազատ քաղաքացի՞ն, ուսումնական, յառաջ համալսարանական մարապա՞ն, որ կը յածի ազատ ափերու վրայ...

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԳԵՐՄԱՆԻԱ ԿԸ ԲՈՂՈՔԷ ԵՒ Կ'ԱՄԲԱՍՏԱՆԷ...

— . —

Իտալիան ալ պիտի միանայ

Գերմանական կառավարութիւնը պատասխանելով չէզոքութեան յանձնախումբին հարցումներուն, խիստ ծանուցագիր մը ուղղեց, որով ոչ միայն կը բողոքէ Մ. Միութեան կողմէ եղած ամբաստանութեանց դէմ, այլեւ իր կարդին կը մեղադրէ Մոսկուան, իբրեւ աշակից սպանիական կառավարութեան : Համաձայն պաշտօնական դեկոյցին, գերմանական ծանուցագիրը երկար ցանկ մը — եւ մանրամասն — կը ներկայացնէ, ապացուցանելու համար թէ Խորհրդ. Իշխանութիւնը խախտած է չէզոքութիւնը, զէնք եւ ռազմանիւթ ճարելով Մատրիտի կառավարութեան : Գերմանական ծանուցագրին առաքումէն անմիջապէս վերջը, Պերլինի մամուլը խառն յարձակողականի մը ձեռնարկեց Մոսկուայի դէմ, չեշտելով թէ անոր ամբաստանագիրը «զարհուրելի լրբութիւն մը կը ներկայացնէ , քանի որ սուտերէ կազմուած է» : «Լօքալ Անցայկըր » կը գրէ — « Խորհրդային բռնաբարումներու մասին Գերմանիոյ ներկայացուցած փաստերը պիտի համոզեն յանձնախումբին բոլոր անդամները թէ Խորհրդային Ռուսաստան քաղաքական ռազմախազ մը կը փորձէ եւ թէ երկար ատենէ ի վեր բացէ ի բաց բռնաբարած է չէզոքութեան համաձայնութիւնը : Ցավորդ նիստին մէջ յանձնախումբը պիտի հարկադրուի քննել սա խնդիրը թէ Մոսկուա կը փորձէ պատերազմի վտանգ ստեղծել, զէնք ճարելով եւ խաղեր խաղալով յանձնախումբի գլխուն : Ցետոյ պիտի հարկադրուի միջոցներ ձեռք առնել , որպէսզի խորհրդային իշխանութիւնը նորէն անհիմն ամբաստանութիւններ չներկայացնէ ուրիշ պետութեանց դէմ» :

Իրազեկներ կը հաւատան թէ Իտալիան ալ պիտի միանայ Գերմանիոյ, նոյնիմաստ ծանուցագիր մը ուղղելով, թէեւ իր ներկայացուցիչը հոկտեմբեր 9ի փոթորկալի նիստին մէջ արդէն պատասխանեց Մոսկուայի ամբաստանութեանց : Գերմանեւիտալական այս գործակցութիւնը աւելի պիտի զօրանայ , քանի որ Իտալիոյ արտաքին նախարարը Պերլին կը գտնուի այս միջոցին, քննելու համար բազմաթիւ խնդիրներ : Գերմանիա պատրաստուած է ճանչնալու իտալական կայսրութիւնը, եթովպիոյ գրաւումով : Իսկ երկու երկիրները կը պատրաստուին ճանչնալ Սպանիոյ ժողմաեայ (ապստամբ) կառավարութիւնը, Մատրիտի անկումէն անմիջապէս վերջը :

ԿԱՏԱՂԻ ԿՈՒԻՆԵՐ ՄԱՏՐԻՏԻ ՇՈՒՐՋԸ

Կառավարական զօրքին հակայարձակումը

Մատրիտի կառավարական զօրքը հակայարձակումի ձեռնարկեց հոկտ. 21ին, եւ քանի մը մղոն յառաջ խաղաց, կատաղի կռիւներէ վերջը : Շարժելով Թոլէտոյի ճամբուն վրայ, մայրաքաղաքէն 15 մղոն հեռու, հաւատարիմ զօրագունդերը յառաջ խաղացին դէպի Իլլէսքաս, վեց մղոն դէպի հարաւ, այսկողմեամբ թնդանօթներու եւ օդանաւերու : Գիշերը անոնք յաջողած էին Իլլէսքասի շրջակայ դիւղերուն մէջ, մօտ մէկ մղոն հեռու՝ քաղաքէն արուարձանները մտնել, բայց չկրցան խորտակել ապստամբներուն տրամադրութիւնը : կառավարական զօրքը ուժգնօրէն ռմբակոծեց քաղաքը, հրդեհներ յառաջ բերելով : Իլլէսքասը ինքնին մեծ նշանակութիւն չունի, գինուորական տեսակետով, թէեւ կ'իշխէ երկու փոքր ճամբաներու վրայ : Բայց անոր վերագրաւումը պիտի բարձրացնէ Մատրիտի զօրքին եւ ժողովուրդին բարոյական կորովը : Նոյնիսկ հակայարձակումի ձեռնարկելու իրողութիւնը կարեւոր դէպք մըն է :

Օտար թղթակիցներ կը հետագրեն թէ բուն Մատրիտի մէջ ժողովուրդը թօթափած է իր թմրութիւնը, զգալով թէ թշնամին քաղաքին դուռները հասած է : Կիներու ազգ. կոմիտէն յայտարարութիւն մը հրատարակեց, յորդորելով որ Սպանուհիները կատարեն իրենց պարտքը : «Մրախուսենք մեր տղամարդիկը որ կռուին : Ամէն կին պէտք է պատրաստ ըլլայ տղամարդու մը տեղը բռնելու » :

Անհամաձայնութիւններ ծագած են

Երէկ արձանագրած էինք զրոյց մը, որ կ'ըսէր թէ Սպանիոյ վարչապետը սպանած է ծովային նախարարը, Ինտալէչիո Փրիէթօ : Սպանիական դեսպանատունը անմիջապէս հերքեց այս լուրը :

Տեղական թերթերը կը պնդեն թէ իսկապէս ծանր վէճ մը տեղի ունեցած է երկու նախարարներուն միջեւ, որոնք տուեր - առեր են, բայց զէնք չէ պարպուած : Բանավէճի նիւթն էր Մատրիտի պաշտպանութիւնը — պաշտպանե՞լ թէ անձնատուր ըլլալ : Թղթակիցի մը պատմութեան համաձայն, վարչապետը բանախօսութիւն մը կը կատարէր, յանձնարարելով զօրացնել մայրաքաղաքին պաշտպանութիւնը, եւ սուլուեցաւ : Քիչ յետոյ խօսեցաւ ծովային նախարարը եւ ջերմապէս ծափահարուեցաւ, ըսած ըլլալով թէ ինք անհատապէս կուսակից է անձնատուութեան :

**** Պ. Ազիանա, Սպանիոյ Հանրապետութեան նախագահը, Պարսելոնայի մէջ հաստատեց իր պաշտօնատունը : Կինը Ֆրանսա եկաւ : Այս առթիւ ճառ մը խօսելով, ըսաւ թէ անկարելի է որ Մատրիտը իյնայ : «Մենք պիտի աշխատինք մինչեւ վերջնական յաղթանակ : Քաթալոնիան Փաշականութեան գերեզմանը պիտի դառնայ » :*

**** Հետագրի մը համաձայն, ապստամբները գրաւած են Նավալքարնէրոն, որ ռազմագիտական չատ կարեւոր դիրք մըն է Մատրիտի ճամբուն վրայ :*

— . —

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ նախագահութեան կարմիր թեկնածուն առեւանգուեցաւ, երբ կը փորձէր ճառ մը խօսիլ : Առեւանգիչները ինքնաշարժի մը մէջ դնելով թեկնածուն, պրաուորը, քաղաքէն դուրս հանեցին : Առեւանգումէն առաջ հաւկիթի եւ լոլիկի տեղատարափի մը ենթարկուեցաւ :

ՌՈՒՄԱՆԻՈՑ ՎԱՐՉԱՊԵՏԸ Պելկրատ գնաց, խորհրդակցելու համար Մ. Միութեան հետ եղած յարաբերութեանց մասին : Կարծողներ կան թէ փոքր Համաձայնութիւնը պիտի բաժնուի Մոսկուայէն :

ՓԱՑՏԱՀԱՏ ՄԸ ՆԵՆԴԵՆԱՎՈՎ իրարու հետեւ սպաննեց կինը, երկու աղջիկները, տղան, երկու հովիւներ, եւ յետոյ լեռը ապաստանեցաւ (Ստորին Ալպեաններ) : Բազմաթիւ ոստիկան զինուորներ կը հետապնդեն կատաղած հրէշը :

ՕՐԸ ՕՐԻՆ

ՑԱՆՈՒՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ... ԿԵՂԾԻՒԻ

Բազմաթիւ գրողներ, փիլիսոփաներ, գիտնականներ, փաստաբաններ եւ երեւելի մտաւորականներ, վերջերս Լիթվինովի ուղղեցին նամակ մը, ուր կը կարդանք .—

« Երկու կարեւոր առիթներու մէջ, երբ ժողովուրդներու իրաւունքին եւ արդարութեան ճակատագիրը կը տնօրինուէր, ծրնող թէ Լոնտոն, Թռվոպոյ եւ Սպանիոյ խնդրով, Խորհ. Միութի՛ւնն եղաւ որ լսելի դարձուց տիեզերական խղճմտանքի խնդրուած ձայնը :

Մենք, մտաւորականներս, Մշակոյթի Ցան շուրջ հաւաքուած, պարտի կը համարինք արտայայտել մեր եռանախտագիտութիւնը հանդէպ Խորհ. Միութեան, որ, ներկայ բռասին եւ խաւարամտութեան մէջ, կանգնեցաւ պաշտպանելու համար խաղաղութեան, պատուոյ եւ արդարութեան ամենօրտակելի սկզբունքները» :

Եւ հիմա ստորագրութիւնները, — շա՛տ են, շա՛տ, այս բառերը : Ցիշենք մէկ բանի .—

Անտրէ Ժիտ, Լիւի Տիւրքէն, Փիէր Ապրահամ, Լուի Լալուա, Փօլ Էլիւար, Փօլ Նիզան, Անտրէ Լոթ, Մարսէլ Քոհէն, Ժորժ Ֆրիտման, Անրի Միլնէօր, Փօլ Լապէրէն, Ռէժի Պլանշէր, Անտրէ Իւման, Ժորժ Փիլման, Տիկին Հալպէֆ, եւայլն, եւայլն :

Ինչպէս կը տեսնէք, խստուտիկ մարդիկ, որ գոյնզգոյն ցեղերու փունջի մը տպաւորութիւնը կը բոնդուն :

Ի՞նչ կ'ըսեն այս մարդիկը.—

Թէ իրենց, այս չնաշխարհիկ եւ անզգուական մտաւորականներուն սիրտը վրդովուե՞ր է՝ տեսնելով որ Եթովպիան եւ Սպանիան չեն պաշտպանուիր :

Թէ կը հրճուին ու ծափ կը զարնեն՝ տեսնելով որ Մոսկովեան կարմիր աշխարհակալութեան ներկայացուցիչը կը խօսի յանուն ընկերային արդարութեան եւ ժողովուրդներու իրաւունքին :

Մենք սիրտ չունինք յիշեցնելու այս մարդոց թէ Մոսկովեան կարմիր աշխարհակալութիւնը, ինչն ալ իր կարգին, նստած է զապուն ժողովուրդի մը վզին, բռնաբարելով անոր պատմական իրաւունքները եւ մարդկայնօրէն ապրելու եւ ստեղծագործելու պայմանները :

Սակայն կ'ուզենք յիշեցնել որ ուրիշ գազան մը խողխողեց, յօշոտեց, փողոտեց նոյն ժողովուրդին կէսը :

Եւ դուք, մտաւորականնե՛ր, ողջ էիք, ձեր խելքը ձեր գլխուն մէջ էր, կը տեսնէիք ու կը զգայիք, դատելու կարողութիւն ալ ունէիք, վէպ եւ եղերերգութիւն գրելու վարժութիւն ալ ունէիք : Գոց գիտէիք նաեւ արդարութեան անխոցոտակելի՛ սկզբունքները, բայց լռեցի՛ք վատաբար :

Ինչո՞ւ, ա՛յ ախոյեանները ժողովուրդներու իրաւանց, վասնզի յօշոտուած ժողովուրդը արգասաբեր դաշտ մը չէր, հէ՞ :

Այո՛, ձեր ճարտարապետը չհետաքրքրուեցաւ մեր ճակատագրով, որովհետեւ բարիւղ չունէր մեր երկիրը, իսկ ձեր արուեստը չհետաքրքրուեցաւ մեր ժողովուրդով, որովհետեւ ձեր վէպն ու բանաստեղծութիւնները առատօրէն սպառելու չափ բազմութիւն մը չէր ներկայացներ Հայկազանց ժողովուրդը :

Ձեր արդարութեան սկզբունքնե՞րը, — անունը գրական աշխարհակալութիւն է : Անտրէ Ժիտերը կրնան շոյել ու շողոքորթել խորհ. Միութիւնը, որ աւելի քան **160** միլիոն բնակիչ ունի եւ վէպ կամ էքթրուած էշելու համար ընդարձակ դաշտ մըն է,— գրական աշխարհակալութեան համար աճո՞ւն ասպարէզ :

Ըրէք ինչ որ կ'ուզէք, բարիւղ ծծելու կամ վէպ էշելու համար՝ գրաւեցէք երկիրները եւ շողոքորթեցէք ժողովուրդները, բայց մի՛ խօսիք յանուն արդարութեան, մենք կը ճանչնանք ձեզ, եւ թողէք որ անուանեմ ձեզ, **allez!** դո՛ւք, վէպ ծախող չէրչիլնե՛ր, իսկ իմ անո՞ւնս, — անունն է այն գետին որ կըճանդէր ձեր կաուրցները եւ յաւիտենապէս պիտի փրփրի **contre vos gueules.**

ԱՐԱՋ

«ՁԵՐՄԱԿ ՇԱՊԻԿԱՒՈՐՆԵՐ»ՈՒ ԵՒ ԻՍԼԱՄՆԵՐՈՒ ԱՐԻՒՆԱԼԻ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ ՀԱԼԷՊԻ ՄԷՋ

Երեք ժամ կռիւ եւ բազմաթիւ վիրաւորներ

— o —

Գրած էինք թէ հոկտեմբեր 11ին (կիրակի) արիւնալի ընդհարում մը տեղի ունեցած է Հալէպի մէջ, «Ձերմակ չապիկաւորներ» կոչուած կազմակերպութեան եւ Իսլամներուն միջեւ, եւ այս առթիւ սպաննուած են նաեւ երկու Հայեր :

Սուրիոյ վերջին թղթաբերէն կը քաղենք հետեւեալ մանրամասնութիւնները այս դէպքի մասին.—

Շատ ցաւալի եւ արիւնոտ դէպք մը պատահեցաւ երէկ՝ կիրակի օր, քաղաքիս մէջ, որուն զոհ գացին քանի մը Հայեր եւ տեղացիներ ու վիրաւորուեցան չատեր : Այս կսկծալի դէպքին ծնունդ տուաւ չատ աննշան վէճ մը : Քանի մը ձերմակ չապիկաւորներ նպատակի մը համար հանդանակութեան կը ձեռնարկեն եւ կը դիմեն տեղացի մահմէտականի մը : Այս վերջինը ոչ միայն կը մերժէ, այլեւ ծանր խօսքեր կ'ուղղէ, պատճառ դառնալով վէճի մը, որ դժբախտաբար կը փոխուի կռուի : Ձերմակ չապիկաւորները կը փախին եւ կ'ապաստանին Կիւրինցիներու հայկական թաղը :

« Երկաթ չապիկաւորներ» եւ բազմահարիւր խուժանը այս անգամ կը յարձակին տուներու վրայ զէնքերով եւ տարճանակներով զինուած : Երկարատեւ բախումէ վերջ կը հասնին Ֆրանսական ուժեր եւ ոստիկաններ եւ կը յաջողին ապահովել հանդարտութիւնը : Բախումներու միջոցին սպաննուեցան հայ կին մը եւ տղեկ մը, ու երկու կողմէն եղան բազմաթիւ վիրաւորներ :

Ազգայնական կուսակցութեան տեղական գրասենեակը իսկոյն թուղթիկներ հրատարակեց ու ցրուեց ժողովուրդին՝ բոլորը հրաւիրելով հանդարտութեան ու պաղարիւնութեան, աւելցնելով որ գատաւորը երեւան պիտի հանէ պատասխանատուները եւ պիտի պատժէ յանցաւորները : Դրգռութիւնը կը չարունակուի : Այսօր՝ երկուշաբթի առաւօտ, Ագ-Եօլի մէջ Հայ մը արձակ - ման ենթարկուած եւ վիրաւորուած է : Ֆրանսական ուժեր կը հսկեն չարուն - նակ, տեղի չտալու համար նոր դէպքերու :

Հայերը այս բոլոր ցաւալի դէպքերու ընթացքին պահեցին կատարեալ չէզոք դիրք մը : Հայերու վրայ գործուած յարձակումներն ու սպանութիւնները կը նկատուին թիւրիմացութեան արդիւնք :

**** Կռուի վայրին մօտ գտնուող քանի մը տուներու վրայ յարձակում գործուած է եւ բազմաթիւ մարդիկ, որոնց մէկը կը գտնուէին նաեւ երախաներ, դաշնակահարուած են : Տեղւոյն վրայ հասնող բազմաթիւ ոստիկաններ ոչինչ*

(ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԴԱԼ Դ. ԿՋ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ, ՓԱՓՈՒԱԾ ԱՆՑԱԼՈՎ

Ինչ տարի էր որ Դիւանագիտական տարեգիրքը կը հրատարակուէր Ռուսական կայսրութեան մէջ։ Ամէն տարի կը հրատարակուէր ան Ս. Պետերբուրգի մէջ, ռուսերէն լեզուով։ Ամէն տարի կը հրատարակուէր ան նոյն ձեւով, նոյն ծրագրով, նոյն ոճով։ Ամէն տարի կը հրատարակուէր ան նոյն տպարանին մէջ։ Ամէն տարի կը հրատարակուէր ան նոյն խմբագրապետին ներքեւ։ Ամէն տարի կը հրատարակուէր ան նոյն խմբագրական կազմով։ Ամէն տարի կը հրատարակուէր ան նոյն գրաշարներով։ Ամէն տարի կը հրատարակուէր ան նոյն տպագրական սխալներով։ Ամէն տարի կը հրատարակուէր ան նոյն ուղղագրական սխալներով։ Ամէն տարի կը հրատարակուէր ան նոյն ոճական սխալներով։ Ամէն տարի կը հրատարակուէր ան նոյն տեսակէտով։ Ամէն տարի կը հրատարակուէր ան նոյն ոգիով։ Ամէն տարի կը հրատարակուէր ան նոյն հոգիով։ Ամէն տարի կը հրատարակուէր ան նոյն մարմնով։ Ամէն տարի կը հրատարակուէր ան նոյն կազմով։ Ամէն տարի կը հրատարակուէր ան նոյն ձեւով։ Ամէն տարի կը հրատարակուէր ան նոյն ոճ

ՍԵՓԱԿԱՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ

— Ի՞նչ, ձեզ դուր չեկավ ներկայացումը, ասես թե ոչ մի նոր բան չտեսաք։ Ես ինքս էլ ձեզ պես եմ մտածում, բայց ի՞նչ անեմ, որ ամեն անգամ ներկայացումից հետո ինձ այդպես եմ զգում։ Ինչ-որ բան պակասում է, ինչ-որ բան ինձ ասում է, որ ես ոչ թե դերասանուհի եմ, այլ ինչ-որ ուրիշ բան։ Ես ինքս էլ չգիտեմ, թե ինչ։ Ես ուզում եմ ինչ-որ բան ասել, բայց չգիտեմ, թե ինչ։ Ես ուզում եմ ինչ-որ բան անել, բայց չգիտեմ, թե ինչ։ Ես ուզում եմ ինչ-որ բան լինել, բայց չգիտեմ, թե ինչ։ Ես ուզում եմ ինչ-որ բան ունենալ, բայց չգիտեմ, թե ինչ։ Ես ուզում եմ ինչ-որ բան զգալ, բայց չգիտեմ, թե ինչ։ Ես ուզում եմ ինչ-որ բան հասկանալ, բայց չգիտեմ, թե ինչ։ Ես ուզում եմ ինչ-որ բան սիրել, բայց չգիտեմ, թե ինչ։ Ես ուզում եմ ինչ-որ բան ատել, բայց չգիտեմ, թե ինչ։ Ես ուզում եմ ինչ-որ բան վախենալ, բայց չգիտեմ, թե ինչ։ Ես ուզում եմ ինչ-որ բան ցանկանալ, բայց չգիտեմ, թե ինչ։ Ես ուզում եմ ինչ-որ բան հավատալ, բայց չգիտեմ, թե ինչ։ Ես ուզում եմ ինչ-որ բան ժխտել, բայց չգիտեմ, թե ինչ։ Ես ուզում եմ ինչ-որ բան հաստատել, բայց չգիտեմ, թե ինչ։ Ես ուզում եմ ինչ-որ բան ուրախանալ, բայց չգիտեմ, թե ինչ։ Ես ուզում եմ ինչ-որ բան տխրել, բայց չգիտեմ, թե ինչ։ Ես ուզում եմ ինչ-որ բան ծիծաղել, բայց չգիտեմ, թե ինչ։ Ես ուզում եմ ինչ-որ բան լաց լինել, բայց չգիտեմ, թե ինչ։ Ես ուզում եմ ինչ-որ բան...

— Ի՞նչ, ձեզ դուր չեկավ ներկայացումը, ասես թե ոչ մի նոր բան չտեսաք։ Ես ինքս էլ ձեզ պես եմ մտածում, բայց ի՞նչ անեմ, որ ամեն անգամ ներկայացումից հետո ինձ այդպես եմ զգում։ Ինչ-որ բան պակասում է, ինչ-որ բան ինձ ասում է, որ ես ոչ թե դերասանուհի եմ, այլ ինչ-որ ուրիշ բան։ Ես ինքս էլ

կրցան ընել. կառավարութիւնը պէտք տեսաւ ոստիկան զինուորներու միջամտութեան: Ոստիկանապետ մը ատրճանակի գնդակով վիրաւորուեցաւ եւ հիւանդանոց փոխադրուեցաւ:

Մեռելներու թիւը հինգի կը հասնի, բայց քարէ, դաշոյնէ եւ գնդակներէ վիրաւորուողներու թիւը մօտաւորապէս 200 է, որոնց մէջ կը գտնուին տասնեակ մը Հայեր — պատահական անցորդներ:

*** Քրիստոնեայ կրօնապետներ ժողով մը գումարելով հետեւեալ յայտարարութիւնը հրատարակեցին, ուղղուած Հալէպի բնակչութեան.

— « Շատ կը ցաւինք «կիրակիի չուկան» պատահած տխուր խռովութեանց եւ դէպքերուն համար: Մանաւանդ աւելի կը ցաւինք որ այդ դէպքերը պատահեցան այն տեսակ ժամանակ մը երբ երկիրն ու ժողովուրդը ամէն ժամանակէ աւելի պէտք ունին եղբայրութեան ու միութեան: Մենք բոլորս մէկ հայրենիք ունինք, մէկ լեզու եւ մէկ ճակատագիր: «Կարզ մը միամիտներ կարծեցին թէ այս դէպքը արդիւնք է կրօնական վէճերու եւ տարակարծութեանց քրիստոնեաներու եւ խալամներու միջեւ: Սակայն քննութիւնները կը ցուցնեն որ բոլորովին սխալ են այդ ենթադրութիւնները եւ զուտ անձնական եւ մասնակի խնդիրներու հետեւանք է ծագած դէպքը: Մեր բոլոր հայրենակիցները՝ իբրեւ թէ քրիստոնեայ, կը հրաւիրենք հանդարտութեան եւ կը թելադրենք ըլլալ խոհեմ եւ զգոյշ: Միեւնոյն ժամանակ կը պահանջենք կառավարութենէն որ անցողներ ըլլայ պատասխանատուներու հանդէպ, որպէսզի օրինակ ծառայէ ուրիշներու եւ չկրկնուին նման ցաւալի դէպքերը »:

*** Կառավարութիւնը ձեռնարկած է խիստ քննութեանց՝ երեւան հանելու համար պատասխանատուները: «Ձերմակ չապիկաւոր»ներու դեկավարներէն 21 ամբաստանեալներ ձերբակալուեցան եւ յանձնուեցան արդարութեան: Կան նաեւ ուրիշ ձերբակալեալներ: Բոլոր հետապնդումները կը կատարուին տեղական դատարաններու միջոցաւ:

Ընդհ. Ազատովութեան պետ Պ. Տիւպէք, պատասխանելով ազգայնականներու յայտարարութեան, կը յայտնէ թէ ոստիկանութիւնը որ եւ է պատասխանատուութիւն չունի վերջին դէպքերու մէջ եւ ինք քանիցս չեչտած է «Ձերմակ Շապիկաւորներ»ու կազմակերպութեան լուծման պէտքը:

*** Հալէպի «Եփրատ»ը կը գրէ (9 հոկտեմբեր).—

Քանի չափ «ձերմակ չապիկաւոր»ներ, անցեալ շաբաթ ձէգիրէ կ'երթան փրօփականտի համար: Անոնցմէ երեքը Տէր Զօր վերադարձին, յարձակման կ'ենթարկուին եւ փառաւոր տիպ մը կ'ուտեն մօտ 300 հոգիէ բազկացող զրգռուած ամբոխի մը կողմէ: Մոչտանգուած երեքը առջի իրիկուն Հալէպ հասան, սակայն իրենց ընկերներէն մինչեւ հիմա լուր չկայ:

Ի՞ՆՉ Կ'ԱՆՑՆԻ ԿԸ ԴԱՌՆԱՑ Խ. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷՋ

—o—

«Մաթէն» կ'իմանայ թէ Պ. Փոթէմքէն, Փարիզի խորհրդային դեսպանը, արտաքին գործոց պիտի նշանակուի, յաջորդելով Լիթվինովի:

*** Կարգ մը թերթերու տեղեկութեանց համաձայն, Մոսկուայի մէջ ձերբակալուած է Փարիզի խորհրդային դեսպանատան նախկին խորհրդականը, Զլենով, որ մասնակցած է միջազգային բոլոր խորհրդաժողովներու, սկսելով Ձենովայէն: Կը կարծուի թէ ձերբակալութիւնը տեղի ունեցած է սեպտեմբերի կիսուն կամ վերջերը: Ամբաստանեալը համայնավար չէ, այլ «անկուսակցական մասնագէտ» եւ Լիթվինովի մտերիմը:

Նոյն աղբիւրին համաձայն, պուլկար համայնավար Տիմիթրով, որ դատուեցաւ Գերմանիոյ խորհրդարանին հրկիզման առթիւ եւ յետոյ Մոսկուա երթալով Կոմինտէրնի ընդհ. քարտուղար նշանակուեցաւ, ձերբակալուած եւ Սիպերիա աքսորուած է, իբրեւ հետեւանք սպանիական քաղաքականութեան ձախողման:

Սպանիոյ կիներուն թափորը Մատրիտի մէջ

Զորեքշաբթի կէսօրին կիներու թափոր մը կազմուեցաւ, Մատրիտի գլխաւոր փողոցներուն մէջ: Տարէց, երիտասարդ, լաւ հագուած կամ աղքատ, բոլոր կիները կը մասնակցէին: Շատերը գրկած էին իրենց երախաները: Թափորի ճամբուն վրայ, համազգեստ հագած երիտասարդուհիներ խանութները մանելով դուրս կը հանէին ծառայող աղջիկները, որպէսզի միանան բազմութեան: Երթեւեկը դադրեցաւ ամէն կողմ: Ժամեր տեւեց թափորին անցքը: Օտար թղթակիցները անցած տեղն կիներ կը կեցնէին կառքերը, ազատագրելով: — «Այրերը դէպի ճակատ»: Երջանի մը վրայ կը կարդացուէր հետեւեալ արձանագրութիւնը.

— « Աւելի լաւ է հերոսներու այրիները դառնալ, քան վախկոտներու կիները »:

Կիներու այս ցոյցը եւ ուրիշ ցնցումներ կը վերագրուին արտաքին նախարար Ալվարէդ տէլ Վայոյէ, որ դիւնուորական լիազօր նշանակուած է, վերահաստատելու համար ժողովուրդին մարտական խանդավառութիւնը:

200,000 «Ռէքս»ու ցոյցը Պրիւսելի մէջ

« Ռէքս», Պելժիոյ ֆաշական կազմակերպութիւնը, ղղրզագին ցոյց մը կազմակերպած է այս կիրակի, մասնակցութեամբ 200,000 հետեւորդներու, «քշելու համար օրուան կառավարութիւնը»:

Թէեւ այս կազմակերպութեան երիտասարդ վարիչը, Լէօն Տէկրէլ, հակառակ է բռնութեան, բայց կը վախցուի որ ծանր խռովութիւններ ծագին, որովհետեւ ընկերվարականները ալ մեծ միթինկ մը սարքած են նոյն օրը, մայրաքաղաքին մէջ: Եթէ երկու ցոյցերն ալ չարգիլուին, ընդհարումները անխուսափելի են: Ընկերվարականները տարեկան համագումար ունին, եւ «Ռէքս» է ցոյցը կը նկատեն գրգռիչ քայլ մը՝ իրենց դէմ: Այս առթիւ կ'ազդարարեն թէ իրենք ալ հազարներ պիտի թափեն փողոցներուն մէջ եւ ամէն բան պիտի ընեն, ֆաշական թափորը խանգարելու համար:

Կառավարութիւնը երկու մասի բաժնուած է, այս ցոյցերը արգիլելու կամ արտօնելու հարցին առթիւ: Ձինուորական նախարար Սփաք (ընկերվարական), որ առջի օր բուն ճառ մը խօսած էր Ռէքսի դէմ, կը պահանջէ արգիլել անոր ցոյցը, բայց միւս նախարարները կ'առարկեն թէ արգելքը ընդհանուր պէտք է ըլլայ: Ցոյցին մանրամասնութիւնները դաղտնի կը պահուին:

ԱՐՄԱՏԱԿԱՆ ԱՌԻՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Երէկ, հինգշաբթի, բացուեցաւ արմատական կուսակցութեան տարեկան համագումարը, Պիարիցի մէջ: Ամբողջ Ֆրանսա եւ նոյնիսկ արտասահման լարուած հետաքրքրութեամբ կը սպասեն այս ժողովի ելքին, որմէ կախում ունի ժողովրդական ճակատի կառավարութեան ճակատագիրը: Իրողութիւն է որ Փուանքարէի կառավարութիւնը (1928), Տումէրկի դահլիճը (1934) եւ Լավալի դահլիճը (1935) իրենց արմատականներու այս տարեկան համագումարներուն հետեւանքով: Կացութիւնը փափուկ է նաեւ անոր համար որ, կուսակցութիւնը երկու մասի բաժնուած է, ալ եւ ձախ: Առաջինները չեն հանդուրժեր համայնավարներու ճնշումին, իսկ ձախերը, որոնք ընդհանրապէս երիտասարդներ են, կը նախընտրեն ընկերվարական - յեղափոխական մեթոտները:

Ժողովը պիտի տեւէ մինչեւ կիրակի եւ թերեւս աւելի: Բացման ճառը խօսեցաւ ազգ. պաշտպանութեան նախարարը, Պ. Տալատիէ, որ կուսակցութեան նախագահն է:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Մարսէյլի Շրջ. կոմիտէի եւ մասնակցութեամբ Մարսէյլի եւ արուարձաններու բոլոր երիթակոմիտէներու եւ խումբերու,

Սիրայօժար մասնակցութեամբ տեղւոյս **S. F. I. O.***ի Բ. Մասնաճիւղի՝*

24 Հոկտ. շաբաթ երեկոյ ժամը 8.30ին, Պրէալան Մարսէյէի ընդարձակ սրահին մէջ,

146 Chemin des Chartreux

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ԸՆԿ. ՎՐԹԱՆԷՍ ՂԱԶԱՐԵԱՆ

կը բանախօսեն՝ MM. LASSALARIÉ (Conseiller Général), F. MAILLE (Conseiller Général), J. FOSSE (Adjoint au Maire), F. MULTEDO (Avocat)

ԸՆԿ. ՎԱՀԱՆ ՆԱԻՈՒՄԱՐԴԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐՈՒՀԻ **Ն. ՔԻՊՐԻԹՃԵԱՆ**

Ներկայութեամբ ընկերվարական յայտնի ներկայացուցիչներու:

Կ'երգեն ՏԻԿ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ ԿԱ ՕՐ. Պ. ԳԷՈՐԳԵԱՆ, Կ'արտասանեն ընկերներ Մ. ԴԱՒԻԹԵԱՆ, Գ. ՔԷՆՏԻՐԵԱՆ եւ Կ. ԹԻՒԹՂԼԵԱՆ, կը նուագէ ԶԷՕՐՃԵԱՆ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲԸ:

ԿԷՍ ԳԻՇԵՐԵՆ ՄԻՆՉԵՒ ԼՈՒՍՍ ԽՆՁՈՅՔ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՐԵՐ

Պարերուն կը մասնակցի ՓԻԹՈՒ եւ ՔԷԹԻ զոյգը:

Դահլիճ մուտքը 3 ֆրանք:

ԼԻՈՆԻ ՄԷՋ.—

Կազմակերպուած Լիոնի Վարանգեան կոմիտէի կողմէն

24 Հոկտ. շաբաթ երեկոյ ժամը 8.30ին, 3րդ թաղապետարանի սրահին մէջ,

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ **ԸՆԿ. Վ. ՀՈՒԼԼԷՐԵԱՆ**

ԿԸ ԽՕՍԻ **ԸՆԿ. ՔԱՀԱՐԸ ՄԻՍԱՔԵԱՆ**

ՕՐՈՒԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՄԱՍԻՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՁՈՒԽ ԲԱԺԻՆ

Կ'երգեն՝ ՕՐ. Ծ. ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ, Պ. ԱՐԱՄ ԱԻԵՏԻՍԵԱՆ, Պ. ԳՈՒՐԳԷՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ (սլիգ)

Կ'արտասանեն՝ ընկերներ Մ. ՄԻՐԶԷ եւ ԼԵՒՈՆ ԱԼԷՄԵԱՆ:

ՎԻԷՆԻ ՄԷՋ.— 25 ՀՈԿՏ. ԿԻՐԱԿԻ ԿԷՍՕՐԷ ՎԵՐՋ ԺԱՄԸ 3ԻՆ

ՍԷՐԲԻԼԸ ԿԱԹՈԼԻԿԻ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ԸՆԿ. Ս. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

ԿԸ ԽՕՍԻ **ԸՆԿ. ՔԱՀԱՐԸ ՄԻՍԱՔԵԱՆ**

Գեղարուեստական բաժնին կը մասնակցին տեղւոյն կարող ուժերը:

Դահլիճ մուտքը ժամանցութեան համար մուտք 1 ֆրանք:

Հ. Յ. Դ.

Փարիզ

ՓԱՐԻԶԻ «ԵԳԻՊՏԱՑԻ» ԿՈՄԻՏԷՆ ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր շրջանիրընկերները երեքշաբթի երեկոյ (27 Հոկտ. ժամը 8.30ին, Chez Zeyer սրճարանի վերնայարկը, 4 rue St. Denis (Place du Châtelet), մէթրօ Châtelet կայարանը օրակարգ:

Գահ ատր

ՄԱՐՍԷՅԼԻ Շրջ. կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ մարսէյլի եւ արուարձաններու բոլոր ընկերները 25 Հոկտ. կիրակի կէսօրէ վերջ ժամը 2.30ին, Շահրիկեան սրահին մէջ, կը խօսի ընկ. ՎԱՀԱՆ ՆԱԻՈՒՄԱՐԴԵԱՆ: Ներկայանալ անդամատետրով:

ՄԱՐՍԷՅԼԻ Իշխան ենթակոմիտէն ժողովի կը հրաւիրէ իր ընկերները, այս կիրակի կէսօրէ վերջ ժամը 3,30ին, սովորական հաւաքատեղին:

ՏԷՍԻՆԻ կոմիտէն անդամական ընդհ. ժողովի կը հրաւիրէ երեք խումբերու ընկերները, այս կիրակի (25 Հոկտ.), կէսօրէ վերջ ժամը 2.30ին, սովորական հաւաքատեղին: կարեւոր օրակարգ:

Տիար Բենիամին Վարդավառեան, Այրի Տիկին Սիմոնեան, Տէր եւ Տիկին Մ. Սիմոնեան եւ զաւակ, Տէր եւ Տիկին Յ. Մոսկոփեան, Տէր եւ Տիկին Յ. Վարդավառեան (Եգիպտոս) եւ բոլոր պարագաները սրտի խորունկ ցաւով կը ծանուցանեն մահը իրենց կնոջ եւ ազգականին՝

ՏԻԿԻՆ ԶԱՊԵԼ Բ. ՎԱՐԴԱՎԱՌԵԱՆԻ

(ՆԻՒՍԱՐՑԻ)

որ կնքեց իր մահկանացուն երիտասարդ հասակի մէջ, Զորեքշաբթի առաւօտ, անմխիթար թողելով իր ամուսինը եւ պարագաները:

Յուղարկաւորութիւնը պիտի կատարուի Շաբաթ 24 հոկտեմբեր, ցերեկուան ժամը 1·45ին Պուսիֆօ հիւանդանոցին մէջ, **71, Rue Cévennes, Paris (15)** ուրկէ մարմինը պիտի տանիփուի Թիէի գերեզմանատունը:

Le Gérant: H. STEPHAN
Imprimerie A. DER (AGOPIAN) 17, Rue Dameame, PARIS (13)

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ՈԱՄԱԶԳԱՅԻՆԻ Ալֆոդվիլի մասնաճիւղին ընդ. ժողովը՝ 24 Հոկտ. շաբաթ երեկոյ ժամը 9ին, Հայ Միութեան մէջ: Օրակարգ — Ա.— Ջնջում տեղական մարմինի, Բ.— Ջնջում պատգ. ժողովի. Գ.— Ցեղական հարցեր եւ ընտրութիւն: Ներկայ կ'ըլլան կեդր. վարչութեան ներկայացուցիչը:

Դերձակներու եւ դերձակուհիներու վերաբերեալ ամէն տեսակ պիտոյքներու վաճառուտ

ՄԵԾԱՔԱՆԱԿ եւ ՓՈՔՐԱՔԱՆԱԿ

ԲԱՑՈՒԱԾ Է ԿԱՐՈՒԶԵԻ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Ամէն օր առաւօտէն մինչեւ կէսօր, Լեոնք ամսուան մէջ, պիտի տրվին ձեւագիտութիւն՝ ամենավերջին մէթոտով եւ յաջորդ երեք ամսուան մէջ կար։ Պիտի տրուին ճաշակի եւ կարի հրաւէրներ։ Մանրամասն տեղեկութիւններ։ Աշխատողներու համար կիրակի օրերը։ Մանրամասնութեանց համար դիմել՝ ՏԻԿԻՆ ԳՈՀԱՐ ՎԱՐԴԱՆԵԱՆի, 12 Rue Saint-Sulpice, Paris (6) 4րդ յարկ, Métro Odéon։

ԵՂԻՇԷ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

ՁԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

AMERICAIN LLOYD — **48 rue de la République**

ORIENT LLOYD — **7 rue Auber, Paris**

Մարոքյլ, Tél. C. 47-22 եւ C. 74-51 Tél. Opéra 67-77 67-78

Նաւային բոլոր ընկերութիւններու ներկայացուցիչ։

Ցոմսակներ՝ ամէն տեղի համար, Հայ ճամբորդներու համար

Վաստաւոր գին։ Ընտիր թոթակիցներ աշխարհի ամէն կողմը։

ՎՍՏԱՀԵԼԻ ՏՈՒՆ։

Le Gérant: H. STEPHAN

imprimerie A. DER (AGOPIAN) 17, Rue Damesme, PARIS (13)

ՉԱՐԹՕՆՔ

(ՎԷՊ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՏԱՆՔԷ)

— Այս գաղանային դէպքը, վաղը Արաբատեան Դաշտի մէկ ծայրէն միւսը բերնէ բերան պիտի տարածուի։ Անկասկած, այնպիսի հոգեբանական ծանր բեկում մը պիտի առաջացնէ հայ ժողովուրդի մէջ, որ ան սարսափած կրնայ գլուխը կորնչցնել եւ տեղը տալ՝ ամէն դիմադրութիւն անյոյս համարելով։ Այս պահուն ամենամեծ վտանգը այս չատ հաւանական տեղատուութիւնն է։ Այս մասին պէտք է մտածել։ Դժբախտաբար ամէն երէց-փոխ Սարգիս Աբեր մը չէ։ Պէտք է այս չշմեղնող հարուածին պատասխանել անմիջապէս նոյնքան ուժեղ հակահարուածով մը։ Այդ պիտի ընել առանց ժամանակ կորնչցնելու, որ-պէսզի երկու լուրերն մէկը միւսի հետեւ չըլլան ընեն։ Հայ ժողովուրդը պէտք է զգայ, որ կայ գաղտնի ուժ մը, արթուն հսկող աչք մը, որ կը հսկէ իր իրաւունքներու պաշտպանութեան վրայ։ Միեւնոյն ժամանակ այդ պատժող ձեռքը սանձահարած կրնայ պահել անսանձ պաշտօնեաները։ Ծանձնախումբերու անդամները պէտք է գան, որ չեն կրնար անպատասխանատու կերպով ամէն տեսակ լուրեր ընդունել։ Պէտք է զգաստացնող ձեռք մը, հարուածող ձեռք մը, որ կայծակի նման անսպասելի կերպով գարնէ։ Այդ աներեւոյթ ձեռքը մենք ենք։

— «Ակն ընդ ական, ատամն ընդ ատամն», հին մովսիսական առողջ օրէնքի գործադրութիւնը,— մեղմօրէն նկատեց բժիշկը,— հին, բայց միշտ նոր ու կենդանի։

— Ու բնական է որ,— չարունակեց Վահէն,— այս պայմաններուն մէջ մեր առաջին գործը պիտի լինի...

— Պոնտոլովսկիի գործը վերջացնել,— այլեւս համբերելու անկարող Վահէի միտքը լրացուց Վարդանը ու

— Այդ մասին թող Թիֆլիսի ընկերները մտածեն։ Հիմա մենք անցնինք գործի։ Դուք, բժիշկ, պէտք է հոս մնաք գէթ մինչեւ վաղը։ Այս վիճակին մէջ Գէորգը առանձին ձգել վտանգաւոր է։ Կրնայ գլխուն փորձանք մը բանալ։ Ես զինքը լաւ կը ճանչնամ. խաբուելու չէ անորերեւութականհանդարտութենէն։ Անակնկալ հարուածի ազդեցութեան տակ չէ մնար։ Կիսակենդան հօր վիճակը կը սանձէ զինքը, բայց երբ անգամ մը ամէն յոյս վերջացած լինի, դժուար պիտի լինի զայն սանձել։

— Ես ուրախութեամբ կը մնամ,— համաձայնեցաւ բժիշկը,— թէեւ չի-տակը իմ օգտակարութեան մասին չատ ալ վստահ չեմ։

— Պէտք է աշխատիլ հոս պահել զայն, մանաւանդ արգիլել չմտածուած քայլ մը առնելէ։ Վարդանն ալ կը մնայ ձեզ հետ, կրնայ օգտակար լինիլ ձեզ ...

— Ես աւելի օգտակար կը լինիմ ձեզ մօտ,— դժուան չորութեամբ ընդմիջեց Վարդանը,— կը խնդրեմ, որ թոյլ տաք ձեզ հետ գալու։

(Շար.) ՄԱԼԽԱՍ

ՀԱՅՐԱՆԻՔ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

EE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

17, Rue Damesme, PARIS (13e)
Téléphone : Glacière 15 - 70
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,—

	ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐՄԱՆ	ԱՅՍ ԹԻՒԻՆ	ՄԵԿ ԱՄԻՍ
Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա	250 »	130 ֆրանք	—
Ամերիկա եւ ուրիշ երկիրներ	200 »	100 ֆրանք	—

ԿԻՐԱԿԻ
25
ՀՈԿՏԵՄԲԵՐ
DIMANCHE
25 OCTOBRE
1936

ԺԲ ՏԱՐԻ — 12e Année No. 3253

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՆՈՐ ՀՈՒՆԻ ՄԷՋ ...

(ՀԱՑԱՍՏԱՆԻ ՅՈՇՈՏՈՒՄԻՆ ԱՌԻԹՈՎ)

Յորհրդային նոր սահմանադրութեամբ ծանրագոյն դաւը կը գործուի մեր հայրենիքի հանդէպ: Ամէնէն վատ երեւակայութեամբ օժտուած մեր յետին թշնամին իսկ չէր կրնար յուսալ, թէ բազմիցս յօշոտուած Հայաստանը այսքան տմարդաբար կրկին կարելի է յօշոտել՝ անկէ խլելով Նախիջեւանի չրջանը, Լեռնային Ղարաբաղն ու Ախալքալաքը:

Իր գործած ոճիրին ներքին բոլոր ծալքերուն լաւատեղեակ խորհրդային իշխանութիւնը դաժան պայքար բացած է բոլոր անոնց դէմ — ըլլայ ներսը՝ հայրենիքի մէջ, ըլլայ դուրսը՝ գաղթաշխարհի դէմ — որոնք կը յանդգնին ի պաշտպանութիւն եօթնկէս անիրաւուած Հայաստանի ծպտուն հանել նոր սահմանադրութեան դէմ:

— « Դաշնա՛կ», — ահա այն բառը, որ Մոսկուայի թաքուն հրահանգով կը նետուի ամէն մէկ բողոքողի հասցէին:

Հայաստանի մէջ դաժան հալածանքներու ենթարկուած համայնավար Բակունցներու, Ալազաններու, Վանանդեցիներու, Մաթեւոսեաններու, Տէր-Սիմոնեաններու, Գալոյեաններու եւ Ա-ղասի Յովնէեաններու հասցէին «Մ. Հայաստան» իր սեպտեմբեր 12ի խմբագրական յօդուածին մէջ կը գրէ:

— « Տրոցկիստ եւ նացիոնալիստ հակայեղափոխական թափթփուկները երբեմ չեն ունեցել եւ չունեն յենարան մեր երկրի մասսաների մէջ, որովհետեւ այդ սրիկաների ամբողջ խաղաքարտը քագաժը յանգում է մասսաների կողմից երիցս անիծուած դաշնակիզմին ... »:

Այսպէս ուրեմն, հայրենիք եւ Հայութիւն պաշտպանել, կը նշանակէ Դաշնակ ըլլալ ...

Ու նոյն հոգեբանութիւնը նաեւ արտասահմանի մէջ, « ամբողջական ճակատ »ին վրայ:

Հանրութեան եւրին « դաշնակ » ցուցադրուած Ա. Զօպանեան յուսահատօրէն կ'աւազէ « Արագած »ի հոկտեմբեր 8ի թիւին մէջ.

— « կարծել թէ Լեռնային Ղարաբաղի կամ Նախիջեւանի վրայ հայ ժողովուրդին իրաւունքները յիշեցնելը եւ այդ հարցին արդար լուծում մը խնդրելը զուտ Դաշնակցական քէզ մըն է, մեծ պատիւ ընել է Դաշնակցական կուսակցութեան եւ անարգել է այդ կուսակցութենէն դուրս գտնուող Հայութիւնը, այսինքն հայ ժողովուրդի ստուար մեծամասնութիւնը: Դաշնակցութեան սխալ — ներուն դէմ պայքարը պէտք չէ վերջապէս մեծամոլութեան մը աստիճանին հասցնել »:

Զուր է այս ուշացած բացագանչութիւնը: Հայութեան թշնամիներու աչքին ոչ թէ «կարծեօք», այլ իբրեւ՛մբ Դաշնակցական առաքինութիւն մըն է հայրենասիրութիւնը. տարակոյսէ մթագնած անոնց ուղեղները անկարող են ըմբռնել, թէ ի՞նչպէս կարելի է «Դաշնակ» չըլլալ եւ հայրենիք պաշտպանել ...

Այս առթիւ պատիւ մը Հ. Ց. Դաշնակցութեան — անկարելի է քողարկել սակայն մեծութիւնը այն դարին, որ կը գործուի մեր հայրենիքին դէմ: Հարցը կը դառնայ ոչ թէ կուսակցական, այլ բացառաբար ազգային եւ համահայկական ծանրագոյն անակնկալներով յղի անօրինակ աղէտքի մը չուրջ:

Դարին բովանդակ ահաւորութեանը տեղեակ պահելու համար մեր ընթերցողը, աւելորդ չենք նկատեր ընդարձակ քաղուածք մը ընել յօդուածէ մը, որ Վ. Ն. առորագրութեանը տակ լոյս տեսաւ « Հայրենիք »ի մէջ: Անդրադառնալով նոր սահմանադրութեամբ ծրագրուած Հայաստանի դաժան յօշոտումին, յօդուածագիրը կը նկատէ.

— « Գալիքը չատ աւելի ծանր փորձութիւն պիտի լինի մեզ համար, քան ինչ որ եղաւ: Այսօրուան «անկախութիւն »ները ոչ թէ արդիւնք են մի ինչ որ թերութեան՝ որ նշմար ունեցաւ անցեալի մէջ, այլ նախապատրաստութիւններ են մի ինչ որ գործի՝ որ նախատեսուած է ապագային:

« Անդրկովկասը Ռուսաստանի ցամաքային նեղուցներն են : Նրանք ռազմական նոյն կարեւորութիւնը ունին Թուրքիոյ համար, ինչ որ բուն նեղուցները՝ Ռուսաստանի համար: Երկուքն էլ, 1936 յուլիս 20ին, Մոնթրէօյի մէջ, Ռուսաստանը եւ Թուրքիան (ուրիշներ) յատուկ համաձայնութեան եկան նեղուցների չուրջ (ի նպաստ Ռուսաստանի): Հին, յետ-պատերազմեան համաձայնագիրը, որ ուղղուած էր նաեւ Ռուսաստանի դէմ, էնկլիւրին յօժարեցաւ փոխել ի նպաստ Ռուսաստանի:

« Այսօր, Ռուսիոյ ցամաքային նեղուցների նորագոյն կարգադրութեամբ, Թուրքիան եւ Ռուսաստանը լռելեայն նոր համաձայնութեան են գալիս (այս անգամ արդէն ի շահ Տաճկաստանի):

« Կապ չկա՞յ արդեօք այս երկուքի միջեւ: Յանդգնութի՞ւն պիտի լինէր մեր կողմից պնդել, թէ ճիշդ այն վայրկեանին, երբ Մոսկուան եւ էնկլիւրին վաւերացնում էին վերջին պայմանագիրը նեղուցների մասին (յայտնապէս ռուսասպաստ ոգիով, փոխանակ հին համաձայնագրի հակառուս ոգիի), ճիշդ նոյն վայրկեանին նրանց միջեւ կնքուած էր արդէն մի այլ դաշնագիր Ռուսիոյ ցամաքային նեղուցների՝ Անդրկովկասի մասին: Նախաձեռնուած էր, որ անդրկովկասեան դաշնակցային հանրապետութիւնը պիտի վերածուի երեք անջատ մասերի եւ վերածուի առաւելաբար ի հաշիւ Հայաստանի: Պիտի իրագործուի թրքական հին ծրագիրը, այն է՝ լուծել Սէյմը եւ ստեղծել երեք «անկախ» երկիրներ, յայտնապէս Հայաստանի յօշոտման գնով:

« Համոզուած ենք թէ այսպէս էր:

« Անդրկովկասի դռների առջեւ այսօր կանգնած չէ վեհիր փաշայի յաղթական բանակը, սակայն խորհրդաւորապէս այնտեղ իշխում է նոյն բնական յաղթական ոգին: Թուրքիա՛ն է բուն հեղինակը վերջին ամիսների եղերական իրադարձութեանց: Նա տեղի տուաւ բուն Նեղուցների հարցում, Անդրկովկասի մէջ փոխարէնը առնելու համար: Եւ կամ Ռուսաստանը չահեց Նեղուցների հարցում, Անդրկովկասի մէջ, ի հաշիւ առաւելաբար Հայաստանի, փոխարժէքը վճարելու պայմանով: Այստեղ որոնեցէք բուն բանալին վերջին ամիսների անօրինակ իրադարձութեանց »:

Այս ընդարձակ քաղուածքը կատարեցինք, անգամ մըն ալ ցոյց տալու համար մեծութիւնը այն դաւին, որ կը նիւթուի մեր հայրենիքին դէմ:

Այս նոր դաւով հայութեան ազգային պայքարը կը մտնէ նոր ու փոթորկալի չրջանի մը մէջ ..

Թերեւս երբեք հայութիւնը այնքան հրամայաբար պէտք ունեցած չէ ազգային ներքին համերաշխ կամքի մը, որքան այսօր:

Ե.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ ԿԸ ՀԱՄԱՁԱՅՆԻՆ

ԳՈՐԾԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ, ԱՓՐԻԿԷԻ ԵՒ ԱՍԻՈՅ ՄԷՋ

ԳԵՐՄԱՆԵԻՏԱԼԱԿԱՆ ՕԴԱՆԱՒԱԶԻՆ ԳԻԾ ԴԷՊԻ ՄԵՐՁ. ԱՐԵՒԵԼՔ

Համաձայնութիւնը, զոր կը կնքեն Գերմանիա եւ Իտալիա, ենթադրուածէն աւելի կարեւորութիւն կը ստանայ հիմա՝ երբ քիչ մը չատ ճշդուած են անոր գլխաւոր գիծերը: Նախ լայն տարողութիւն մը,— Համաձայնութիւնը կը չօշափէ ոչ միայն եւրոպական, այլեւ արեւելեան հարցեր: Եւ ետոյ կնքուած վաւերաթուղթը չունի դաշնագիրներու կամ համաձայնագիրներու նկարագիրը, որ պայմանագիր կողմերու չահերը կ'աշխատի ապահովել փոխադարձ զիջումներու հիման վրայ, այլ ընդհակառակն կը ներկայացնէ քաղաքական հաւատամքի մը առարկայական արտայայտութիւնը :

Գերմանեւիտալական այս համաձայնութիւնը, արդէն, ամիսներ առաջ կը մշակուէր Մուսոլինիի եւ Հիթլէրի կողմէ՝ իրենց առանձնութեան մէջ: Կոմս Զիանօ եւ Ցոն Նէօրաթ պարբերապէս վերջին ձեւն է որ կուտան անոր :

Նախ, Գերմանիա եւ Իտալիա ծրագրած են կազմել նոր Լոքարնօ մը, որ կէ դարս կը ձգեն Ռուսիան : Ասիկա առաջին քայլն է արդէն, որ երկու երկիրները մերժեն նաեւ հաւաքական ապահովութեան սկզբունքը, որուն խորհրդանշանը դարձած է Ազգերու Դաշնակցութիւնը: Թխտելէ վերջ այդ կախարդական սկզբունքը, Գերմանիա եւ Իտալիա կ'ընդունին որ հասարակաց չահեր ունին կեդր. Եւրոպայի մէջ ընդհանրապէս, Դանուբեան աւազանին մէջ մասնաւորապէս : Ուրեմն, Ազգերու Դաշնակցութեան տալով հանդերձ առաջին հարուածը, այսինքն ժխտելով հաւաքական ապահովութեան սկզբունքը, անմիջապէս կը համաձայնին որ կեդր. Եւրոպայի կամ Դանուբեան աւազանին մէջ խաղաղութիւնը պահպանուի՝ չխանգարելու համար իրենց ծրագիրները: Ուստի Գերմանիա եւ Իտալիա յանձն կ'առնեն քանդել ամէն փորձ, որ Աւստրիոյ հարցով դէմ դիմաց պիտի հանէր զիրենք: Աւստրիոյ հարցը, սակայն, չատ փչատ կը համարուի եւ կը թուի թէ Ցոն Փափէնի պիտի տրուի առաքելութիւն մը՝ հարթելու այդ դժուարութիւնները :

ԴԷՊԻ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ, ԴԷՊԻ ԱՍԻԱ ...

Իտալիա կարգ մը մենաշնորհներ կուտայ Գերմանիոյ եւ փոխարէն կը ստանայ դործելու լայն ազատութիւն դէպի Միջերկրական, դէպի Ասիա, դէպի Ափրիկէ :

Կեդր. Եւրոպայի եւ Մերձ. Ասիոյ մասին համաձայնութիւնը անչուչտ բան մը պիտի փոխէր նաեւ Արեւել. Եւրոպայի մէջ: Գերմանական թերթերը կը գրեն թէ, այդ իմաստով, բարերար չրջադարձ մը կը նշմարուի Ռումանիոյ եւ Եուկոսլաւիոյ մէջ, բան մը որ կը սարսէ Փրակայի համաձայնութիւնը, որ թումբի դեր կը կատարէր ի նպաստ Ռուսիոյ :

Սակայն Հոմ եւ Պերլին չեն ծածկեր իրենց մտածումները Ռուսիոյ մասին: Մաղթելէ վերջ, որ Ռուսիա հրաժարի չէզոքութեան համաձայնութենէն, կը հասկցնեն թէ պիտի ճանչնան Պուրկոսի կառավարութիւնը անմիջապէս որ Ֆրանքոյի բանակը մտնէ Մատրիտ: Միաժամանակ պիտի յայտարարեն թէ կ'ընդդիմանան խորհրդային անկախ հանրապետութեան մը կազմութեան՝ Բաթալոնիոյ մէջ:

Եւ այստեղ, գերմանեւիտալական համաձայնութեան պատմաթուղթը կը պարունակէ արթնութեան կոչ մը ընդդէմ բոլշեւիկեան խաղերուն, ցոյց տալու համար թէ համայնավարութիւնը ի՛նչ վտանգ կրնայ բերել Եւրոպայի գըլխուն: Մանաւորաբար կը հրաւիրեն Ֆրանսան, որ դրժէ իր ուխտը Մոսկուայի հետ:

ՕԴԱՆԱՒԱԶԻՆ ԳԻԾ ԴԷՊԻ ՄԵՐՁ. ԱՐԵՒԵԼՔ

Տնտեսական հարցերու մասին եւս խօսելով, նախանիթերու հայթայթումին համար համաձայնելէ վերջ, օդանաւային հասարակաց գիծ մը կը հաստատեն դէպի Մերձ. Արեւելք, ուրիշ գիծ մըն ալ, ֆէվրվիէներու համար, կը նետեն Ֆրանքֆորթէն Հոմ եւ մինչեւ Ատտիս - Ապէպա :

**** Ուրբաթ օր, Պերլինի մէջ, կոմս Զիանօ եւ Ցոն Նէօրաթ վերջնական ձեւ մը տուին այս պատմաթուղթին: Իրիկունը իտալական դեսպանատունը փառաւոր երեկոյթ մը տուաւ ի պատիւ կոմսին: Շաբաթ կէսօրին կոմս Զիանօ եւ Ցոն Նէօրաթ ստորագրեցին իրենց մշակած համաձայնութիւնը, յետոյ Պերլինի փաշական ակումբը պատուհանդէս մը տուաւ: Անկէ վերջ, Իտալիոյ երիտասարդ նախարարը, մասնաւոր չոգեկառքով, գնաց գտնելու Հիթլէրը՝ անոր վերջնական վաւերացումին ենթարկելու իրենց պատրաստած ծրագիրը: Կ'ըսուի թէ Գերմանիա, ստորագրելով այս համաձայնութիւնը, կը ճանչնայ նաեւ իտալական կայսրութեան հաստատումը Ափրիկէի մէջ:*

ՕՐԸ ՕՐԻՆ

ԵՐԲ ՀԱՑԵՐԸ ԿԸ ՁԱՐԴԷԻՆ ...

Պատահաբար ձեռքս անցաւ հին թերթ մը, «Լը Փըթի Ժուռնալ»ի պատկերազարդ յաւելուածին 1895 նոյեմբեր 24ի թիւը (**No 262**):

Առաջին էջին վրայ փառաւորապէս կազմուած են երեք թուրք սպաներ, երեմն ալ Համիտի թիկնապահները :

Վերջին էջն ալ ամբողջովին գրաւած է նոյնպէս գունաւոր պատկեր մը, հետեւեալ բացատրութեամբ.— «*ԱՐԵՒԵԼՔԻ ԴԻՊՔԵՐԸ.— ԳԱՐԶԱԿՈՒՄ ՄԸՆԿԻԹԻ ՄԸ ՎՐԱՑ ՀԱՅԵՐՈՒ ԿՈՂՄԷ*»:

Ներսը, 7րդ էջին վրայ, խմբագրութիւնը կը նկարագրէ պատկերները եւ ... «Արեւելքի դէպքերը»:

Առաջին տողէն իսկ, խմբագրութիւնը առանց վերապահութեան կը պարզէ իր տեսակէտը: Այն աստիճան որ, կը կարծես թէ ֆրանսատառ թուրքերէն թերթ մըն է:

Բայց ոչ: Մեր ամէն օր տեսած «Լը Փըթի Ժուռնալ»ն է որ կը գրէ.

— «*Մարդիկ որ չահ ունին ջուր պղտորելու մէջ որպէսզի կարենան ի-րենց ուզածին պէս որսալ, տարօրինակ չափազանցած են Արեւելքի անցուդարձը: Դաշնագիրները թոյլ կուտան որ կարգ մը եւրոպական ազդեր միջամտեն Թուրքիոյ գործերուն, երբ անհրաժեշտութիւն ներկայանայ: Մինչեւ որ բարեմիտ են, ամենամեծ վերապահութեամբ կը գործածեն այդ իրաւունքը, իսկ միւսները ամենափոքր միջադէպէն կ'օգտուին, կը չահագանգեն զայն, ի հարկին միջադէպ կը ստեղծեն, չահ մը ապահովելու համար :*

Այսպէս է որ ներկայիս Հայաստանի խռովութեանց կուտան կարեւորութիւն մը զոր երբեք ունեցած չեն անոնք:

Փարիզի օսմանեան դեսպանատունը բանսարկութեանց պատասխանեց հետեւեալ խիստ վճռական զեկոյցով» :

Կ'ուզէ՞ք այդ զեկոյցն ալ կարդալ:

Ջարժեր: Գիտէք թէ ինչ ըսած են եւ կ'ըսեն այդ կարգի զեկոյցները, սուլթանական իշխանութենէն մինչեւ իթթիհատականը եւ քամալականը:

Ջեզ կը ջարդեն, արիւնդ կը լակեն, տունդ ալ կրակի կուտան, յետոյ,— «*ասոյիշ պէրքէմալ տըր*»:

Հանութեամբ եւ նոյնութեամբ արտատպելով զեկոյցը, խմբագրութիւնը կ'աւելցնէ.

— «*Թրքական կառավարութիւնը բաւական ուժ ունի, զսպելու համար Հայերու ըմբոստութիւնը: Մեր տնօրէնը, Պ. Մարինօնի, վերջերս առիթ ունեցաւ ինք անձամբ ապահովուելու այս մասին*»:

Ու կը պատմէ թէ պատուարժան տրնօրէնը «երկար եւ շատ սիրալիր ունկնդրութեան մը արժանացած է Սուլթանին կողմէ, որուն միտքը լայնօրէն բաց է յառաջդիմութեան առթիւ», թէ ներկայ եղած է թուրք «սմանչելի» գինուորներու ռազմախոտներուն, այցելած է Թոփհանէի զինարանը, երկարօրէն խօսած՝ թուրք սպաներու հետ եւն.:

Ապա եզրակացութիւնը.

— «*Կը կրկնենք. Հայերու կացութիւնը որ եւ է վտանգաւոր հանգամանք չունի: Բայց եթէ ծանրանայ, ինչ որ անկարելի կը թուի, Սուլթանը, որուն բարձր իմաստութիւնը եւ բանիմաց հաստատակամութիւնը ծանօթ են ի սիւիւռս աչխարհի, դիւրաւ պիտի տանի յաղթանակը:*

Հետեւաբար եւրոպան պատճառ չունի մտատանջուելու այն հոչակաւոր կայծէն որուն վրայ չատ կը խօսին վերջերս. Թող անվթար ձգեն Սուլթանին հեղինակութիւնը եւ ան կրնայ առանց ո եւ է մկկուն աջակցութեան խելքի բերել քանի մը ըմբոստացած հպատակներ»:

Մեկնութիւնները աւելորդ են: Մանաւանդ երբ աւելցնեմ թէ՝ այս թերթը ալ կը գտնուէր այն ցանկին մէջ որ հրատարակուեցաւ 1921ին, ցուցնելու համար թէ Սուլթան Համիտ որքան դրամ բաշխած է եւրոպական մամուլին:

Այս բոլորին մէջ, ամէնէն աւելի ուշադրութիւնս գրաւեց «մզկիթի վրայ յարձակումը»:

Երեւակայեցէք շալվարով, հաստ կարմիր գօտիներով մարդիկ, գլխիները՝ փաթթոց, ձեռքերուն մէջ՝ դաշոյն կամ ատրճանակ, բոլորն ալ «թիւրբ օղլու թիւրբ» հրէշներ, որոնք մարդ կը խողխողեն մզկիթի մը դրան առջեւ:

Այս մէկ հատիկ պատկերը բաւական է, որպէսզի Թուրքերը բողոքեն եւ հոն պահանջեն ... «փուռպուառ»ը:

Վ.Ա.Հէ

ՌՈՒՍԻԱ Կ'ՈՒԶԷ ԽԶԵԼ ՀԷԶՈՔՈՒԹԵԱՆ ԴԱՇԻՆՔԸ

Ուրբաթ կէսօրէ վերջ, Հէզոքութեան միջազգային կոմիտէն նիստ մը դումարեց Լոնտոնի մէջ,— կը մասնակցէին 27 պետութեանց ներկայացուցիչներ, անոնք որ ստորագրած էին համաձայնութիւն մը չէզոք մնալու Սպանիոյ քաղաքացիական պատերազմին մէջ:

Ժողովը վերջացաւ ուշ ատեն: Շաբաթ առաւօտ եւս տեղի ունեցաւ նիստ մը: Իսկ յաջորդ նիստերը՝ չորեքչաբթի: Ուրբաթի նիստին մէջ կարդացուեցաւ խորհրդային պատուիրակութեան յուշագիրը: Ռուսիա բացէ ի բաց կ'մեղադրանէ Փորթուկալը, Իտալիան եւ Գերմանիան, որ կը սպառազինեն Սպանիոյ ապստամբները: Փորթուկալի նաւահանգիստները հսկողութեան տակ պահելու մասին ռուսական առաջարկը եւս ընդունուած չըլլալով, խորհրդային պատուիրակութիւնը կը յայտարարէ թէ չէզոքութեան համար կնքուած դաշինքը «քուրջի կտոր » մը դարձած է այլեւս: Ուստի կ'առաջարկէ ազատ ձգել ամէն պետութիւն, Սպանիոյ զինք ծախելու գործին մէջ: Դաշինքը չատոնց բռնաբարած են այն պետութիւնները, որոնք, ռազմանիւթ եւ սննդամթերք ապահովելով Սպանիոյ ապստամբներուն, այս վերջիններուն դրած են նպաստաւոր եւ առանձնաշնորհեալ դիրքի մը մէջ: Այնպէս որ տակաւին կառչած մնալ դաշինքին, կը ծառայէ ուժ տալ ապստամբներուն: Խորհ. պատուիրակութիւնը ասով կը յայտարարէ թէ ինքզինք կապուած չի զգար չէզոքութեան դաշնագրին:

Բայց եւ այնպէս պատուիրակութիւնը չհեռացաւ ոչ միայն Լոնտոնէն, այլեւ չարունակեց մասնակցիլ յաջորդ նիստերուն: Երէկ օրակարգի նիւթն էր Գերմանիոյ յուշագիրը, — Իտալիոյ եւ Փորթուկալի յուշագիրները քննութեան պիտի առնուին յառաջիկայ չաբաթ :

Ֆրանսական եւ բրիտանական պատուիրակութիւնները այն տեսակէտը կը յայտնեն թէ պէտք է ընդհակառակն զօրացնել չէզոքութիւնը :

Տիմիթրովի դիրքն ալ խախտած

Լիթվինովի չնորհազրկումով, որ կը հաստատուի այլեւս, կը խախտի նաեւ Տիմիթրովի դիրքը, ինչպէս կը տեղեկանայ «Մաթէն»: Արդարեւ Խորհ. Միութեան արտաքին գործակալութիւնն ու Կոմինտէրնի քարտուղարութիւնը սերտօրէն կապուած են իրարու, այնպէս որ արտաքին գործակալութեան մէջ կատարուած «զտում» մը կ'ենթադրէ հաւանական զտում մըն ալ Կոմինտէրնի քարտուղարութեան մէջ: Տիմիթրով, որ քարտուղարն է Կոմինտէրնի, այս ընթացքով կը կորնչնէ իր վայելած վստահութիւնը: Կարգ մը բոլշեւիկներ եւս, օգտուելով այս առիթէն եւ նախանձելով պուլկար համայնավարին յանկարծա-

(ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԴԱԼ Դ. ԷՋ)

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԷՋ

—o—

Այս երկար, այս ողբերգական արտագաղթի անհատնում տարիներուն՝ ինկայ այլազան քաղաքներու մէջ ու երկիրներու։ Դիպուածն ու ապրուստն էին որ զիս նետեցին այդ վայրերը։ Նախընտրութիւնը եւ որոշումը իմս չէին։

Գացի այն քաղաքները ուր որ նետուեց զիս կեանքի խոշորացած ալիքը, զարնելով այնքան խուրձերու։ Գացի ակամայ։ Ու չատ անգամ քան չխօսեցան ինծի — կամ գէշ բաներ խօսեցան — այն լուսատտա քաղաքները որոնց համար միլիոնատուրներ կը հիւծին հոգեվէտս։

Գացած վայրերէս մինակ Վենետիկն է որ ճամբորդած եմ խորարմատ ջերմութեամբ, անհուն փափաքի մը ալիքին ուժականութիւնով, եւեկտրականօրէն մղուած հոգիիս կեդրոնէն, առհասական տենդով, դիմառնական երջանկութեամբ եւ արձակուած ջիղերուս աղեղներէն։

Ամէն տարագիր Հայ ունեցաւ երկրորդ հայրենիք մը։ — Երկրորդ հայրենիքը չատախ գերիպմանատունն է առաջինին։ — Իրական երկրորդ հայրենիքը ան է ուր մարդ կ'երթայ աղգովին. կամ առնուազն կ'երթայ իր ընտրութեամբ, յանուն իր խառնուածքին ներդաշնակութեան։ Շատ քիչերը մենէ ունեցան գեղեցկօրէն ըմբռնուած երկրորդ հայրենիք։ Եթէ իւրաքանչիւր տարագիր մարդու ըսէինք թէ ընտրէ ազատ ու անշահախնդիր ձեւով քու երկրորդ հայրենիքդ՝ պիտի ստեղծուէր մեծ տեղափոխական չարժումներ անհայրենիք բազմութիւններու մէջ։

Այն ժամանակ ես պիտի ճամբորդէի դէպի Իտալիա։

×

Գիշեր է ու առաջին մեծ խախտումս կը սկսիմ Վենետիկի մէջ։ Մէջս կը բարախեն բազմաթիւ սիրտեր։ Ոտքերուս վրայ ծլած են ձղլիներ։

Մոռցեր եմ Վենետիկի ջուրերուն, կամուրջներուն եւ փողոցներուն զիւտութիւնը։ Ի՜նչ լաւ որ մոռցեր եմ։ Գիտցուածին հմայքը մաշած կ'ըլլայ։ Աւելի քան չամբարաբար միայն կը վերչիչեմ մոռցած գիտութիւնս։ Փողոցներ, երբեմն իրենց տեսքով, երբեմն ալ անունով զիս մղս կ'ելլեն հին բաներեկամներու նման։ Չեմ կրնար յիշել ճակատն թէ ո՞վ է ան բարեկամը, ո՞րուն ի՞նչն է։ Ու ճիղ չեմ ըներ՝ քանզի կորսուիլ կ'ուզեմ, կորսուիլ ու երազել, կորսուիլ ու ներքնապէս մեներգել, կորսուիլ ու ճոխանալ անակնկալներով, կորսուիլ ու գտնել վենետիկեան ոգին։

Տարագիրները ներհակ են բոլոր եւ մարդիկ կարծես բռնուած են անգութներէ։ Լաբիւրինթոսին կաւեայ ճամբաներէն Վենետիկցիները եւ զբօսաչրջիկները հոսանք են կազմեր դէպի Ս. Մարկոս։ Ես բոներ եմ հակառակ ուղղութիւնը, կեդրոնախոյս տենդով մը վարակուած։

Գիշերին մէջ կը հնչեն երբեմն թեւաւոր զանգակներ ու երբեմն ալ լռութիւնը իր թաթը դրած է ջրափոյտին վրայ։ Կեցած եմ փոքրիկ կամուրջի մը եզերքը։ Ջուրը կը չիչխայ, կը նայիմ վար կոնտոլա մը կ'անցնի, խորհուրդի մը պէս սեւ։ Կոնտոլավար չրջիկներ կ'առաջնորդէ դէպի քազաքին հանելուկները։ Կոնտոլին լապտերը կուլայ ջուրերուն վրայ, լուսաչիթ արցունքներով։ Մարդկային հոսանք մը կ'անցնի քովէս։ Ես կանգներ եմ ու կը նայիմ ջրանցքներուն, անոնց եզերքներէն բարձրացող տուներուն եւ զիս չրջապատող առարկաներուն ձեւին, բոյրին, գոյներուն։ Կը չնչեմ Վենետիկի հոտը, որուն մէջ խառն են նեխումը, բորբոսը, լոյսը, դինին ու միջնադարեան քաղցրութիւնները։ Դարերը կը չնչեմ ու ներկային մէջ կը ծաղկի քերթուած մը։ Ինկիր եմ բանասիրութիւններու, նկարչութիւններու, ճարտարապետութիւններու եւ զարդարուեստի ոստանի մը մէջ։ Այս քաղաքը մեր աչխարհի՞ն կը պատկանի թէ ոչ։ Այս քաղաքը դուրս է բոլոր քաղաքներուն ձանձրալի միօրինակութենէն, տակաւին նմանութենէն։ Ինծի կը թուի թէ մեծ խումբ մը հանճարեղ ու արտակարգ արուեստագէտներու՝ հիմ ներ են այս քաղաքաձեւը։ Միայն գեղարուեստագէտներու գեղեցիկ խենթութիւններով կրնայ ծնիլ նորօրեայ քաղաք մը։

Թող մէջոցներ տան քանի մը տասնեակ բանաստեղծներու, նկարիչներու եւ արձանագործներու ստեղծել նոր քաղաք մը։ Վստահ եմ որ պիտի հնարուին նոր ձեւեր, նոր ոճեր, նոր ոգիներ, ու մեծ գեղեցկութիւն։

Անոնք պիտի ստեղծեն համապատասխան չէնութիւնը, պիտի աչխարհ մը չինեն այս գարչելի աչխարհին վրայ։ Ժժոխքը պիտի սրբեն ու պարտէզներով եւ չէներով պիտի գոցեն բոլոր վէրքերը։

Վենետիկը ոսկեչրջանի մը մեկ դիւթահարաչ դիպուածն է։ Հոն խառնուած են Արեւելքի ու Արեւմուտքի ուղեղները։ Երկու կողմերուն, երկու կիսաչխարհներուն զուգաւորութեան դուստրն է այս գեղարուեստական ոստանը որ չուրերուն, կղզիներուն, կամուրջներուն մէջէն իրրեւ բանաստեղծական լաբիւրինթոս քարածաղկեր է։

Կը քալեմ ու բջիջներս կը լեցուին մտածումներով եւ կրնամ հինգ տարեդրոյ։

Ես հոն եմ ուր մարդ ունի արբեցման ակեր։ Կը քալեմ նեղ փողոցներէ, դռիհներէ, չուկաներէ, նկարելով եւ բաղանքներ։ Հոս լեցուն է գիչերը, լեցուն է լուսթիւնը, լեցուն են պարապութիւնները, հրապարակները, ջրհորները եւ հոգիները։ Ամէն կողմէ կը յորդի բանաստեղծութիւնը, երապին փրփուրներով։

Չեմ գիտեր թէ ուր եմ. գիտեմ սակայն թէ երկար տարի է որ այնքան մօտ չեմ եղած ինքս ինծի, այնքան մօտ չեմ եղած հոգեչահութեան։ Այո՛, երկար ժամանակ է որ ներքին աչխարհը այնքան չէ ներդաշնակուած արտաքինին հետ։

Կը քալեմ անդադար։ Լաբիւրինթոս։ Լաբիւրինթոս։ Հեռուն՝ պատուհան մը լուսավառ եւ սաղարթազարդ։ Լոյսը տերեւներուն տուեր է երկրորդվառ գոյն մը։ Երգ մը կ'անձրեւէ վրաս։ Գլխուս, ղէմքիս, կուրծքիս վրայ կը վազէ երգը։ Երաժչտութիւններ կան որոնք առաջին ունկնդրութեան կը բռնուին մեր մորթին ու վար կը թափին։ Պէտք է բազմաթիւ անգամներ լսել այդ երաժչտութիւնը, որպէսզի ան մեր մորթէն ներս մուտք ունենայ ու հասնի եւ տեղայ մեր հոգիին մէջ։ Երաժչտութիւններ ալ կան որոնք առաջին անգամէն ճամբայ ունին — ծովու, հովու, ծառուս ճամբայ, արեւուս ճամբայ — մտնելու մեր հոգիին մէջ եւ պղեղու մեր ղգացական հարստութիւնը։ Երգը այս երկրորդ տեսակէն է։ Իտալական ամբողջ երաժչտութիւնը կը պատկանի այս երկրորդ տեսակին։ Երգին մէջ կտոր մը արեւ կը չողայ, ափ մը հուր, բաժակ մը բրիւն կը վառի։ Սէրը տառապանքին հետ հիւսուած կը պարէ այդ քաղցր ու տրտում մեղեդիին մէջ։ Երգը ուղիղ կը վազէ մէջս, փոխուած արտասուքի կայլակներու, փոխուած հեղուկ կրակի։

Ցամբարար կը քալեմ։ Երգին յորդորակը կը հեռանի ինծի տրտիղ աւիքի մը պէս։ Գլխուս մօտ, ականջիս առակն է այդ աւիքը։ Փողոցին ծայրը գլուխս կը դնեմ չարժող աւիքին վրայ ու կ'օրօրուիմ։ Ի՜նչ անոյչ է այս տատանումը։ Հոգիս նաւաբեկութեան մէջ է։

Կը հեռանամ մութին մէջ, վառած հոգիիս լոյսերը։

Կը բարձրանամ կամուրջի մը վրայ։ Ջուրերը կը փսփսան անկիւններու եւ խորչերու մէջ։ Մատուռներ կը խտանան, խորհուրդի թուխ ծաղիկներ կ'երերան ու նաւակներ կը հանդչին օրօրուելով։ Հեռուն լապտեր մը դեղին ներկ է թափեր ջուրերուն վրայ։ Մաւորին մէջ եւ ջուրին վրայ բան մը կը չարժի, ջուրերը կ'արթննան ու ճամբայ կուտան կոնտոլայի մը։

Միջոցին մէջ լռութեան երաժչտութիւնը կայ։ Եկեղեցիները կը քնանան մեռելներու վրայ։

Ջրամբար մը մարմարեղէն՝ դէմքը փակեր է չտեսնելու համար մեր ժամանակը։ Հրեչտակ մըն է նստեր իր կափարիչին վրայ, թեւերը բացած։ Կը փախչիմ սատանան գտնելու համար։ Նորանոր փողոցներու եւ ռահեի մէջ կը մտնեմ։ Կը հասնիմ ջրեղերքներ, աներներ, կը վերադառնամ, կը փոխեմ ճամբաս։ Նոր կորուստներու մէջ կը կորսուիմ։ Հրապարակի մը անկիւնը երիտներանդ լոյսեր, փակ պարտէզ մը, նուագի ձայներ։ Կը պարին։ Հեթանոսութիւնը եւ քրիստոնէութիւնը բարի դրացիներ են։ Սատանաներու դեղեցիկ խումբ մը կը պարէ։ Քանի մը Վենետիկցիներ մարմար սանդուղներու վրայ բարձրացեր են։ Կ'ըմպեմ պարերգը։

Կէս գիշեր է։

Դիպուածը կը նետէ զիս չուկայի մը մէջ։ Ծանութներ տապկուած ձուկի, գինետուներ, ճաշարաններ, օշարակ ու պաղպաղակ վաճառող կրպակներ։ Ճաշարանի մը բաժնեակին մէջ մեծ է խանդավառութիւնը, բազմութիւնը, լոյսը։ Մէկը կ'երգէ, երիտասարդ մըն է, յոտնկայս կ'երգէ։ Փունջ մը ունկնդիրներ պատուհանին առջեւ կ'ունկնդրեն ու կը ծափահարեն։ Իտալացիի մը կը հարցնեմ.

— Փիացա տի Սան Մարկօ։

Մօտ եմ Ս. Մարկոսի հրապարակին։ Կը մտնեմ դիչերային դրախտին մէջ։

Ահա Ս. Մարկոսի տաճարը, աչտարակը, պալատները, մոյթերը, կամարները, արձաններները, սիւները, լոյսեր։ Գիչերին քարեղէն պարտէզն է հրապարակը։ Լռած են նուագարանները։

Կ'անցնիմ Տօժերու պալատին առջեւէն, կը նստիմ ծովեղերքը մարմար աստիճանի մը վրայ,— կը ծխեմ։

Ինծի կը նայի լուսինը քարեկամաբար։ Լուսինն ու ես կը ճամբորդենք։ Մեզի հետ կը ճամբորդեն կղզիները, ջուրերը, նաւերը։

Հոգիս կախօրրանի մէջ է ու անհուն օրօրի։

Բանաստեղծութիւնն ու երաժչտութիւնը կ'օրօրեն կախօրրանը։

Հեռուն լոյսերը կը լողան ջուրերուն մէջ եւ կղզիներ որոնք հաստատուեր են լուսասիւներու վրայ։ Ծառերի գիծ մը կը խառնայ եւ կը մօտենայ, պատճառելով գլխապտոյտ։

Կարծես ուրուականներով պաչարուած է Վենետիկը։

Ջուրին մոգական հայելին ունի խառարի փերթեր, աստղեր, բուռ մը գոհարներ։

Հոգիս օրօրուելով կ'ուղեւորի։

Ուչացած կոնտոլ մը կ'անցնի։ Մութին մէջ չառաչներ ու ծփանքներ։ Կ'արթննան քնացած հայելիներ ու կրկին կ'ընկղմին ջուրերուն մէջ։

Սան Ձօրճիօ կղզին նաւու նման կը սահի յամրօրէն։

Ամրողջ քաղաքով կը նաւենք ջուրերուն մէջ։

Երաղանքի պարիկը ճակատս կը չոյչ ու կ'անհետեւութիանայ։

Մեծ Ջրանցքին կողմէն կը լսուի պարբերոլ մը։ Ամէն ինչ կը նաւէ, հոգիները, երաղները, աչերը, ջրաձողերը, պալատները։

Կոնտոլի մը մէջ երիտասարդ մը կ'երգէ ցայգային մեղեդին։

Ջրանցքին վրայ պատուհան մը կը բացուի եւ կոյս մը կ'ելլէ պատչգամ։

Լուսինը կը ծածկուի, երգը կը լռէ։ Միայն սիրտերը ու ջուրերը կը փրփսան։

Դուռ մը կը բացուի, կոնտոլը կը մօտենայ ու կոյսը կ'առնէ իր մէջ։

Տարագիրները կ'արթննան, ամպհովանի մը կը կպչուին կոնտոլին վրայ որ մարդ չտեսնէ փախուստը։

Կոնտոլը կը մտնէ գիչերին հոգիին մէջ։

Ամէն ինչ կորսուած է գիչերին մէջ, միայն իմ երազս կ'ուրուականկարուի իբրեւ իրականութիւն։

Պարքարօլը կրկին կը լսուի, այս անգամ ուղղիս մէջ։

Հոգիս կը նաւէ լակունային վրայ ու կղզիներուն չուրջը՝ գտնելու այն երանութիւնները որոնց չհասաւ։ Երազական գիչերին մէջ ոչինչ կայ անհնարին։ Աչխարհի ամբողջ համը սրսկեր են այս տարածութեան վրայ ուր խաւարը խառնուեր է ջուրերուն, ուր լոյսի ծաղիկներ բացուեր են լճամասին մէջ, ուր կղզիները կը նիրհեն մթնչաղներու մէջ եւ առագաստանաւերը Ադրիականի կապոյտը կ'որոճան։

Կը նաւէ հոգիս բեռնաւոր իղձերով, նորանոր երազներով ու խորչ մը կը փնտռէ խարսխելու համար։

Երազին մէջէն կ'ելլեմ։

Կը ծխեմ։ Լուսինն կը բարձրանայ արձակած ծուխերս։

Կ'ամփոփուիմ ու կ'ելլեմ ոտքի։

Կ'անցնիմ ամայի հրապարակէն Ս. Մարկոսի։ Բարեղէն արքայութիւն։

Դուրս կ'ելլեմ կամարներէն ու կ'իյնամ փողոցներու մէջ։

Ջրանցքի մը մէջ կարգով կը քնանան կոնտոլները։

Ոտնաձայները կը մարին։ Գինով մը կ'անցնի երգի կտոր մը բերնին մէջ։ Բաժակս կը լեցնեմ այդ երգով ու ցրմրուր կը խմեմ։ Գինովը կը կանգնի, կը մենախօսէ ու կը կրկնէ մեղեդին.

— Փալումա ...

Կը զոցեմ աչքերս։

Վենետիկի բոլոր գերեզմանները կը բացուին։

Իրենց գամբարաններուն մէջ ոսքի կը կանգնին ասպետներ, հեչտասէրներ, վաճառականներ, արուեստագէտներ, կրօնաւորներ, բախտախնդիրներ, գեղուհիներ, կոնտոլավարներ։

Ամէն մեռել իր տունը կը վազէ։ Անոնցմէ խումբ մը կը խոնարհի Ս. Մարկոսին առջեւ։

Քանի մը հոգի վազելով կը մօտենան ինծի։

Կը փախչիմ ու կամուրջի մը վրայ կը բարձրանամ։ Ես ալ արդեօք մեռել մը չե՞մ. թափառական ուրուական մը։

Ջրափողոցը խաղաղութեան մէջ է։ Եզերքներէն վեր բարձրացող տուներ լուսթեան մէջ են։ Գլխիվայր սաղարթներ տուներէն կախուած են դէպի ջուրերը։

Մեւ թեւ մը կ'անցնի մթնոլորտին մէջէն։

Ցանկարծ տունի մը պատուհանը կը լուսաւորուի։

Արագ արագ պանդոկ կը վերածուի նամ։

Կը բարձրանամ վեցերորդ յարկը, կը հանուիմ ու կը նետուիմ անկողնիս վրայ։ Որքան յոգնած եմ։

Ջոյգ մը տատրակներ կը թառին կոպերուս վրայ ու կը հնչեն.

Կ'իջնեմ, կ'իջնեմ մեղրով լեցուն պենետիկեան ջրամբարի մը մէջ։

Կափարիչը կը փակուի վրայիս.

Հորին մէջ աստղեր կը խաղան։

Տատրակները վրաս վերմակ մը կը ձեւացնեն։

×

Երազիս մէջ Փարիզ էի։

Պողոտայի մը վրայ կը տեսնեմ կիսախելագար աղջիկ մը, աչքերը տարօրէն լոյսով։ Բազմութիւն մը չրջապատած է զինքը, հակառակ մաղուող անձրեւին։

Աղջիկը ափը կարկառած կ'ըսէ.

— Քիչ մը Վենետիկ տուէք ինծի, պատառ մը Վենետիկ, իր արեւէն, իր լոյսէն, իր երգերէն, իր քարերէն, իր ջուրերէն, իր երազներէն, իր քերթուածներէն ...

Մուրացկան աղջիկը ափը երկարած «Վենետիկ, պուտ մը Վենետիկ» կը մուրար իւրաքանչիւր անցորդէն։

Կը դիտէի աղջիկը հոգեկան մակընթացութեան մէջ։

×

Ու հիմակ, ես այստեղ, ամէն օր, քիչ մը նման չե՞մ արդեօք այդ կիսախելագար աղջկան։

— Օ՛ Վենետի՛կ, Վենետի՛կ ...

ՆՇԱՆ ՊԻՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՀԱՅՏԸՆ ԵՒ ՄՈՑԱՐԴ

ՎԱՐՊԵՏՆԵՐԸ

ԴԱՍԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ

Երաժչտական կեանքին համար նոր չրջան մը կը սկսի ԺԸ. դարու երկրորդ կէսին՝ ինչպէս Ֆրանսայի մէջ Լիւլլիի ու Ռամոյի յաջորդող կլուքով, նոյնպէս Գերմանիոյ մէջ։ Պախ ու Հէնտէլ եւթ եկող Հայդընով ու Մոցարթով։ Ամէն բան կը ձեւափոխուի քանի մը տարուան ընթացքին։ Նոյն արուեստը չէ այլ եւս. աւելի լուսաւոր ու յստակ, աւելի պարզ ու անթերի՝ դասական արուեստ կոչուելու արժանի է ան։

Շետակն ըսելով՝ գերմանական չէ դասական երաժչտութիւնը, այլ աւստրիական։ Գերմանիոյ ու Իտալիոյ միջեւ գոնուող ու անոնց ազդեցութիւնները հաւասարապէս կրող Վիէննայի կը վիճակուէր այդ խոչոր դերին կատարումը։ «Հիւսիսային Գերմանիոյ աւելի լուրջ ու խորազգած, բայց աւելի խստամբեր ու սքօլաստիք, եւ Իտալիոյ աւելի նրբին ու մակերեսային, բայց աւելի դիւրաթեք ու ինքնեղ արուեստներուն միաձուլումէն է արդարեւ որ սերելու էին նոր ձեւերն ու ներշնչումները»։

Առանց երկու վարպետները՝ Հայտընն եւ Մոցարթ՝ ժամանակակից են։ Թէեւ Հայտըն ծնած է Մոցարթէն 24 տարի առաջ, սակայն մեռած է անկէ 18 տարի ետք։ Սոյն վեմ երաժչտները իրար ճանչցան ու իրար սիրեցին։ Հայտըն կ'ըսէր Մոցարթի հօրը.

— «Աստուծոյ առջեւ կը յայտարարեմ ու պատիւս վրայ կ'երդնում ձեզի որ ձեր որդին կը նկատեմ ամենամեծ նուագաստեղծը որ գոյութիւն ունեցած ըլլայ երբեք»։ Մոցարթ կ'ըսէր՝ քառեակներ ձօնելով Հայտընի.— «Պարտք մըն է հաւատացածս, որովհետեւ միայն ինքն է որ զանոնք յօրինելու արուեստը ճանչցուց ինծի»։ Ան ոչ միայն կը յարգէր իր վարպետը՝ այլ ջերմ գորով մը ունէր անոր հասմար եւ իր սիրելի «Հայրիկ»ը կը կոչէր։ Կ'արտասուէր ան երբ տարիքոտ Հայտընը հրաժեչտ կ'առնէր իրմէ իր Անգլիա մեկնումին առթիւ, վախնալով որ ալ չպիտի տեսնէ զայն։ Արդարեւ՝ հուսկ բաժանումը եղաւ այդ, բայց անոնցմէ ոչ մէկը կը խորհէր թէ Հայտընը պիտի ըլլար որ՝ Վիէննա վերադարձին՝ ալ չպիտի վերադառնէր իր թանկագին բարեկամը։

Ֆրանց Յոզէֆ Հայտընն ծնաւ 1 ապրիլ 1732ին Ռոհրաուի մէջ, Հունգարիոյ սահմանակից աւստրիական գիւղակ մը։ Հայրը՝ որ սայլագործ եւ լուսարար էր՝ թէնօրի ձայնով մը օժտուած էր, ու կը սիրէր երգել իր տաւիղի ընկերակցութեամբ։ Մայրը՝ որ խոհարարուհի եղած էր՝ մերթ իր ձայնը կը խառնէր ամուսնին ձայնին։ Փոքրիկ Ֆրանց Յոզէֆը իբր ածողին վարպետ ունեցաւ Ռոհրաուի կաթոլիկ վարժարանին ուսուցիչ ու դպրապետ Յոհան Մաթիաս Ֆրանքը, որ երգել ու քիչ մը չուխակ ու չարադաչնակ նուագել սորվեցուց իրեն։ Ութ տարեկանին մտաւ Վիէննայի Ս. Ստեփանոս դպրանոցը, ուր կատարեց իր ամբողջ երաժչտական կրթութիւնը, մանաւանդ գործադրութեամբը արուեստի մը որուն սկզբունքը ոչ ոք կանոնաւորաբար սորվեցուց իրեն։ Տասնըեօթը տարեկանէն պարտաւորուեցաւ իր ղպիրի պաչտօնը ձգելու։

Վիէննայի մէջ առանց դրամի մնացած ըլլալով ատեն մը զուարթօրէն վարեց չրջուն երաժչտի կեանքը, չուխակ նուագելով փողոցներուն, բակերուն եւ գինետուներուն մէջ։ Իր ազատ ժամերուն՝ կ'արտագրէր կամ եւթժչտութեան դասագիրքեր կը սերտէր, եւ կամ կը կարդար Քարլ Ֆիլիփ Էմմանուէլ Պախի նոր սօնատները։ Նչանաւոր թատերագիր Մէթաստազիո չնորհի՝ ան ծանօթութիւն հաստատեց խոալացի յայտնի նուագաստեղծ Փորփորայի հետ, որուն քով իբր սպասաւոր մնաց ատեն մը, քանի մը խորհուրդներ առնելու համար անորմէ։

Երիտասարդ Հայտըն բախտ ունեցաւ վերջապէս հանդիպելու Քարլ Եօզէֆ Ֆօն Ֆիւրնպէրկ անունով ազնուականին, որ հաւնեցաւ իրեն, ու իր Վայնցիրլի բնակարանը տարաւ զինքը՝ ջութակահար - նուագաստեղծի պաչտօնով։ 1759ին մօտերը՝ ան անցաւ կայսրուհիին անհնակապան Մարիա Թերեզիէն Ֆօն Մօրցինի ծառայութեան տակ, պետը դառնալով երկոտանեակ մը երաժիչտներէ բաղկացած նուագախումբի մը, որուն համար գրօսերգութիւններ ու համերգութիւնները յօրինեց։ Երկու տարի ետք մտաւ Անտոն Էսթերհազիի իչխանական ծառայութեան, որուն կապուած մնաց ցմահ։ Նոյն տարի ամուսնացաւ սափրիչ Եօհան Փէթէր Քէլլերի երկրորդ աղջկան հետ։ Անդրանիկն էր սիրածը, եւ անոր ձեռքն էր որ խնդրած էր հօրմէն, սակայն իմանալով անոր նչանուած ըլլալը, բարի Հայտըն համակերպեցաւամուսնանալու կրտսերին հետ, զոր չէր սիրեր։ Կ'ուզէր հաճոյք պատճառել այն ազնիւ վարպետին որ թչուառութեան ճիրաններէն բազմիցս փրկած էր զինքը։ Իրմէ երեք տարուան մեծ, կամչտ ու գոռոզ Աննա Մարիա Քէլլեր կատղեցուց զինքը իր ամբողջ կեանքին ընթացքին, սակայն չկրցաւ կորնչցնել գուարթաբարոյութիւնը։

Հայտըն խաղաղ ու միօրինակ կեանք մը վարեց Էսթերհազիներուն դղեակը։ Երաժչտական ահագին սպառում մը կար հոն, ու հաղիւ թէ նոր դպրապետին անթաղդատելի բնդնաւորութիւնը բաւէր անոր։ Ամէն առտու կը նուագաստեղծէր ան, կէս օրէն վերջ սերտել կուտար իր երաժիչտներուն, իրիկունը՝ ըստ իչխանին պատուէրներուն՝ կը ղեկավարէր մէկ կամ բազմաթիւ նուագահանդէսներ. ճաչէն առաջ, նոյն միջոցին կամ անկէ ետք։ Անտոն իչխանին մահէն ետք անոր Նիկոլա եղբայրը ժառանգեց ախտասոն ու երիցութիւնը։ Այս իչխանը՝ որ երաժչտութեամբ կը չահագրգռուէր ոչ միայն իբրեւ սիրող, այլ եւ իբր նուագածու, Հայտընէն պահանջեց չատ աւելի խոչոր աչխատանք մը, որուն փոխարէն անոր տրամադրութեան տակ կը դնէր չատ ավել կարեւոր հնարաւորութիւններ։

Իր կեանքին վերջերը Հայտըն ֆանթազիաներուն քով վարած իր եզակատեայ պաչտօնէն չատ դոհ մնացած ըլլալը կը յայտնէր. «Իչխանս՝ կ'ըսէր ան՝ միչտ գոհ էր հեղինակութիւններէս։ Ոչ միայն անյեղլի հաւանութեան մը քաղաքացի ունէր, այլ եւ հրամաններուս բոլորովին անսացող նուագախումբի մը գլուխը գտնուելուս՝ կրնայի զանազան փորձեր կատարել։ Աչխարհիս մնացորդին պատուած ապրելուս՝ զերծ էի ամէն մտահոգութենէ, ու ստիպուած էի ինքնատիպ ըլլալու»։

Իր երջանիկ նկարագրին չնորհի՝ ան պիտի գոհանար որ եւ է դիրքէ։ Իրենք տաժանելի պիտի թուէր ուրիշներու։ Ոչ մէկ անկախութիւն ունէր արդարեւ։ Իչխանին ամենազօր կամքին չլու հպատակ՝ պարտաւոր էր անոր ուզածին չափ ու անոր հաճելի թուած ոճով նուագաստեղծել։ Նուագածութիւններու պահումն՝ բոլոր նը տագախումբը՝ պետով միասին՝ սպասագետ կը կրէր, ու ծառաներուն հետ միասեղ կը բնակէին երաժիչտները։ Սոյն տարկան վիճակէն չընդվզելէն զատ՝ Հայտըն հպարտ էր իր ընտիր ճաշակով ու պերճակեցութեամբ այսքան հոչակաւոր դարձած մեծ ազնուականի մը «պատկանելուն»։

Զարմանալի չէ այս. այս եղաւ գրեթէ բոլոր երաժիչտներու վիճակը մինչեւ ԺԸ. դարուն վերջերը։ Կլուք ու Պէթհովէն սկսան լուծը թօթափել։

Բնական չուտով տարածուեցաւ Հայտընի համբաւը՝ հակառակ Էսթերհազիներուն Այզենչթատի ղեկեակին մէջ իր մեկուսացած կեանքին։ Մանաւանդ 1780էն ի վեր՝ իր երաժչտութիւնը կը փնտռուի ամէն կողմէ նուագախումբներէն ու տպագրիչներէն։ 1784ին՝ ան վեց մեծ համերգութիւններէը յօրինէ Փարիզի Ողիմպիական օթեակի նուագահանդէսին համար։ 1790ին Նիքօլա Էսթերհազիի մահուան չնորհիւ, կրնայ աւելի զբաղիլ իր փառքով ու նիւթական կացութեամբ։

Երիցութեան ժառանգորդ իչխան Փաուլ Անտոն երաժիչտ չըլլալով, զատ արձակեց Հայտընը նիքօլա իչխանին անոր թոդած 1000 կուլդեն կենսաչխոյին վրայ 400 կուլդենի յատկացում մը ընելով։ Հայտըն կը չարունակէր իչխանատան անուանապէս կապուած մնալ իբր դպրապետ, սակայն՝ իրապէս կատարելիք որ եւ է պարտականութիւն չունենալով, կրնար իր ազատութենէն օգտուիլ ըստ հաճոյս։ Լոնտոնէն իմփրէզարիօ մը վայրկեան առաջարկներ ըրաւ իրեն, որպէսզի Անգլիա երթալով անձնապէս ղեկավարէ իր հեղինակութիւնները։ Այն ժամանակուան Անգլիան «երգերով լի կղզի» մըն էր, որ՝ ի բացակայութեան ազգային երաժիչտներու՝ հրաւիրուած ու պատուրուած էին արտասահմանի բոլոր մեծ արուեստագէտները։ Հայտըն արժանացաւ Օքսֆորտի համալսարան

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ...

ՀՄՈՒՆ ԼՈՒԶԵՐ

Երեք հարցազրույց Օրն Իր

ՀԱՐՈՒՑ ՆՈՐԱՎԱՆԵՑՈՒ

— Ներեցեք, որ ձեզ անհանգստացնում եմ, պարոն Օրն Իր, բայց ես ստիպված եմ ձեզ հետ զրուցել, որովհետև ձեր ընկերները ինձ ասացին, որ դուք ամենից լավ կարող եք ինձ տեղեկություններ տալ...

Ես ներկայացրի իմ անունը, ասացի, թե ինչ գործով եմ եկել, և ավելացրի, որ ինձ ուղարկել է «Գիշերաթերթը»:

— Գիտեմ, գիտեմ, ես ձեզ սպասում էի, — ասաց Օրն Իրը, ձեռքս սեղմելով: — Ես ամեն օր կարդում եմ ձեր թերթը, և ինձ շատ դուր է գալիս, որ դուք ուշադրություն եք դարձնում մեր գյուղական կյանքին: Ես ինքս էլ գյուղացի եմ, ծնվել եմ գյուղում, ապրել եմ գյուղում, և ինձ համար ոչ մի հաճելի բան չկա, քան գյուղական կյանքի մասին խոսելը...

Օրն Իրը ծիծաղեց, ապա ասաց.

— Ներողություն, որ ձեզ սպասեցրի, բայց ես ստիպված էի ավարտել մի նամակ, որ ստացել էի Ամերիկայից: Ես ունեմ շատ հարազատներ Ամերիկայում, և նրանք ինձ գրում են, որ ես անպայման գնամ Ամերիկա, որ այնտեղ ինձ համար ամեն ինչ պատրաստ է: Բայց ես չեմ ուզում գնալ, ես ուզում եմ մնալ այստեղ, իմ հայրենի գյուղում, իմ ծննդավայրում, որովհետև ես սիրում եմ իմ գյուղը, իմ հայրենի երկիրը, և ինձ համար ոչ մի տեղ չի կարող այնքան հաճելի լինել, որքան իմ հայրենի գյուղը: Ես ուզում եմ ապրել և աշխատել իմ հայրենի գյուղում, և ինձ համար ոչ մի ուրիշ տեղ չի կարող այնքան հաճելի լինել, որքան իմ հայրենի գյուղը: Ես ուզում եմ ապրել և աշխատել իմ հայրենի գյուղում, և ինձ համար ոչ մի ուրիշ տեղ չի կարող այնքան հաճելի լինել, որքան իմ հայրենի գյուղը...

Օրն Իրը ծիծաղեց, ապա ասաց.

— Ներեցեք, որ ես ձեզ կրկնում եմ, բայց ես ստիպված եմ ձեզ ասել, որ ես ուզում եմ ապրել և աշխատել իմ հայրենի գյուղում, և ինձ համար ոչ մի ուրիշ տեղ չի կարող այնքան հաճելի լինել, որքան իմ հայրենի գյուղը: Ես ուզում եմ ապրել և աշխատել իմ հայրենի գյուղում, և ինձ համար ոչ մի ուրիշ տեղ չի կարող այնքան հաճելի լինել, որքան իմ հայրենի գյուղը...

Ես ներողություն խնդրեցի, որ ստիպված եմ ձեզ ասել, որ

կան բարձրացումին վրայ, պայքար մը սկսած են արդէն Տիմիթրովի դէմ։

Այդ դժգոհներուն գլուխը կանուխ Մանուիլսկի, Կոմինտէրնի նախկին քարտուղարը։ Իրեն կը յարին Կուսինէն, Փիաթնիցկի, Նորինկ, Անտրէ Մարթի, Լուիճի Էրքոլի, Վիլհէլմ Փիք։

Այս դժգոհներուն անունով Սթալինի յանձնուելու նամակ մը, ուր խօսիւ կը քննադատուի Տիմիթրովի քաղաքականութիւնը։ Անոնք մասնաւորաբար դիտել կուտան թէ պուլկար համայնավարը անհատական քաղաքականութիւն մը կը վարէ, չի հետեւիր Մորս. Միութեան կոմունիստ կուսակցութեան Քաղաքական Բիւրոյին, որմէ պէտք է հրահանգ ստանան բոլոր կոմունիստ կուսակցութիւնները, թէ համաշխարհային յեղափոխութիւնը ունի միայն մէկ առաջնորդ,— «մեծ եւ հանճարեղ Սթալինը»։

Այս դժգոհութեան ալիքին արձագանգով, պահ մը զրոյց չրլեցաւ թէ Տիմիթրով պիտի աքսորուի։ Սակայն ստոյգ է որ պուլկար համայնավարին դիրքը չատ խախտած է։ Եժով սկսած է արդէն մեկուսացնել Տիմիթրովը, մաքրելով անոր չրջապատը։ Այսպէս ձերբակալուած են Տիմիթրովի չրջապատէն եւ անոր հայրենակիցներէն երկու հոգի, Իվան Դէչեւ, Վասիլի Պաքալով։

*** Վարչապետը կը հաղորդեն թէ Մորս. իշխանութիւնը վերջերս գնդակահարած է քանի մը ուկրէն համայնավարներ, որոնք արեւելեան Լեհաստանէն փախած՝ ապաստանած էին Ռուսիա։ Անոնց մէջ կը գտնուի արեւմտեան Ուկրանիոյ համայնավարական ապստամբութեան զեկավարները, կոսակ եղբայրները։

Ռէխիսքներ կը պատահանեն. «Ցառա՛յ»

—o—

Հակառակ պէյժ կառավարութեան խիստ արգելքին, ռէքսխթները վճռած են քալել Պրիւսէլի վրայ այսօր։ Առաջնորդը, Լէոն Տըկրէլ, յայտարարեց մամուլին.

— Հակառակ ամէն արգելքի եւ հակառակ բոլոր դրգռիչ փորձերուն, 250 հազար ռէքսխթներ պիտի հաւաքուին Պրիւսէլի մէջ եւ ես պիտի խօսիմ իմ մարդոցս առջեւ։

Նկատելով որ չոգեկառքով փոխադրութիւնը պիտի չթոյլատրուի իրենց, ռէքսխթները որոշեցին կանուխէն ճամբայ ելլել քալելով, անհատական մի-ջոցներով եւ Շարաթ հիւր մնալ Պրիւսէլ բնակող ռէքսխթներու տունը, որպէսզի այս առաւօտ 250,000նոց իրենց հսկայ զանգուածը մէկէն ցցուի մայրաքաղաքին մէջ։

Մինչ զրոյց կը չրլի թէ կառավարութիւնը վերջին պահուն մտադիր է ձերբակալել Տըկրէլը՝ իբրեւ մէկը որ չի հնազանդիր օրէնքին, միւս կողմէ կըրակ կը ժայթքեն ռէքսխթ թերթերը։

Տըկրէլ մամուլին յայտարարեց թէ կը ճանչնայ թագաւորութիւնը, բայց կ'ուզէ վերահաստատել պետութիւնը նոր հիմերու վրայ՝ որոշ ինքնավարութիւն տալով վալոն եւ Ֆլամա նահանգներուն։ Միւս կողմէ Իրական երկիրը անուանով ռէքսխթ թերթը կը գրէ.— Կիրակի, 250,000 ռէքսխթներ Պրիւսէլ պիտի մտնեն եւ պիտի ուզեն Վան Զէէլանտի կառավարութիւնը։ Ռէքս կ'ուզէ որ տապալի կառավարութիւնը։ Ռէքս կ'ուզէ անցնիլ երկրին իշխանութեան գլուխը։

Երէկ բախումներ տեղի ունեցան ռէքսխթներու եւ համայնավարներու միջեւ։ Հաղորդակցութիւնը մասամբ դժուարացած է, բազմաթիւ չոգեկառքերու եւ հանրակառքերու երթեւեկը ընդհատած է։ Ոստիկանութիւնը կամ եւ պատրաստ կը սպասէ իր դիրքերուն վրայ, մինչ ռէքսխթները կը պատրաստուին իրենց արշաւին։

ՍՐՄԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ ԱՄՊ ՈՒ ԱՐԵՒՈՎ

—o—

Ուրբաթ, Արմատականներու համագումարին օրակարգի նիւթն էր արտաքին քաղաքականութիւնը։ Կը նախագահէր Ալպէր Սարօ։

Արտաքին քաղաքականութեան մասին կուսակցութեան զեկոյցը կարդաց Ժան Միխլէր։

— Ֆրանսայի քաղաքականութիւնը կարելի է համառօտագրել երեք կէտերու մէջ. Ցանկութիւն՝ խաղաղութեան մէջ ապրելու համար, կամք՝ խաղաղութիւն պարտադրելու համար, գիտութիւն՝ խաղաղութիւն տալու համար։

Այժմ պատերազմի սպառնալիք մը կայ մթնոլորտին մէջ, այդ սպառնալիքը կը ծագի երկու պատճառներէ,— խորունկ եւ պատմական։ Խորունկ պատճառները հետքերն են ընդհ. պատերազմին։ Միւս կողմէ, Եւրոպայի անտեսական անհաւասարակշռութեան կողքին՝ ցցուեցան երկու դաղափարական ճակատներ,— գերմանական ազգ. ընկերվարութիւնը եւ ռուսական համայնավարութիւնը։ Կը վախցուի որ այս երկու ճակատներուն խօսքի պատերազմին յաջորդէ իրական պատերազմը։

Ժան Միխլէր յետոյ ցաւ յայտնեց Պելժիոյ չէզոքութեան յայտարարութեան համար, գնահատեց ռուսեւֆրանսական դաշինքը, փափաք յայտնեց որ Գերմանիա վերադառնայ Ժընեւ, մաղթեց որ Սպանիոյ ներքին հրդեհը չտարածուի։

Այնուհետեւ խօսեցաւ Խտուար Խոխ, որ իր ճառը բաժնեց երեք մասի.— Անգլեւֆրանսական գործակցութիւն, ռուսեւֆրանսական դաշինք, գերմանեւֆրանսական յարաբերութիւնները։

Խոխ չերմօրէն պաշտպանեց անգլեւֆրանսական գործակցութիւնը, առանց որուն՝ ուրկէ՞ գտնել ուրկէ՞ գտնել զանազան ձեւի օժանդակութիւններ։ Գալով ռուսեւֆրանսական դաշինքին, բաւ թէ կը վախնայ որ կը յաջողին Ֆրանսան մեկուսացնելու աշխատողները։ Պարտք համարեց իրեն յայտնել թէ ռուսեւֆրանսական դաշինքը իր գործը չէ, ինք հեղինակն է 1932ի չէզոքութեան դաշինքին, որովհետեւ չուզեր որ օտար մը միջամտէ իր երկրին գործերուն։

Իսկ Գերմանիոյ մասին արտայայտուելով, Խոխ ըսաւ թէ կը փափաքի որ Գերմանիա վերադառնայ Ժընեւ.— Ես չէի որ պարպեցի Ռուրը, ես չէի որ 1924ին Գերմանիան հրաւիրեցի աղատօրէն խմբագրելու խաղաղութեան դաշինքը։ Բայց մենք ոչ մէկ նախապաշարում ունինք հանդէպ Գերմանիոյ։

Ճառայ հրաւէր մը կարդաց ներքին խաղաղութեան եւ արտաքին աշխարհի։ Արմատականներու համագումարը ուրբաթ գիշեր եւ չաբաթ առաւօտ չարունակուեցաւ երբեմն լարուած մթնոլորտի մը մէջ, երբեմն խաղաղած։ Դարձեալ լսուեցաւ Մարսէյեզը ձեռնաւարած, ֆրանսական դրօշակի մը ձեւով։ Բարձրացան նաեւ բռունցքներ։ Համագումարին ալ եւ ձախ թեւերը ճակատ ցցեցին յաճախ, Խոխ ոգեկոչեց Վալմիի ճակատամարտին օրերը, առանց գըլխարկի եւ առանց կօշիկի պատերազմող Ֆրանսացիները, որոնք իրենց արիւնը թափեցին, որպէսզի այս «հրաշալի Ֆրանսան ապրի երջանիկ եւ օտար սպառնալիքներու դէմ ապահով»։

Մնողներ,

ԳՆԵՑԷՔ «ՄԱՍԻՍ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐՔՈՅԿՆԵՐԸ

Պատկերազարդ, ընտիր թուղթ եւ օգտակար բովանդակութիւն։

Գինը՝ ծառը Ֆրանս. ֆր. 1.25 Դիմել «Վէմ»ի վարչութեան։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ ՎԻԵՆԻ ՄԷՋ

ԱՅՍՕՐ, ԿԻՐԱԿԻ ԿԷՍՕՐԷ ՎԵՐՋ ԺԱՄԸ 3ԻՆ
ՍԷՐՓԷԼԸ ԿԱԹՈԼԻԿԻ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ
ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ԸՆԿ. Ս. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ
ԿԸ ԽՕՍԻ *ԸՆԿ. ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ*

Գեղարուեստական բաժինին կը մասնակցին տեղւոյն կարող ուժերը։
Դրախքերու վաճառակցութեան դիւաւոր մուտք 1 ֆրանք։

ՅՕՒՇԱՏԵՏՐ

ՎԱՀԱՆՍԻ Շաւախարբերցիական Միութեան անդամական ընդհ. ժողովը 27 Հոկտ. երեքշաբթի երեկոյ ժամը 8ին, ֆաֆէ Միտիի սրահին մէջ։ Օրակարգ՝ Ֆրանսայի չրջանի պատգամաւորական ժողովի պատգամաւորի ընտրութիւն, չրջաբերականի ընթերցում եւ խիստ կարեւոր ֆարցեր։ Ներկայանալ անդամատետրով։

Հ. Ց. Դ.

Ճաշկոց

ՓԱՐԻԶԻ «ԵՂԻՊՏԱՑԻ» ԿՈՄԻՏԷՆ ընդհ. ժողովի կրիրաւիրէ իր չրջանիրնկերները երեքշաբթի երեկոյ (27 Հոկտ.) ժամը 8.30ին, Chez Zeyer սրճարանի վերնայարկը, 4 rue St. Denis (Place du Châtelet), մէթրօ Châtelet կարեւոր օրակարգ։

ԸՆԿԵՐԱՀԱՄԱԿՐԱԿԱՆ ԹԷՅԱՍԵՂԱՆ

Նախաձեռնութեամբ Մարսէյլի Շրջ. Կոմիտէի,
Այսօր, կիրակի իրիկուն ժամը 8ին, Շահրիկեան սրահին մէջ։
Գեղարուեստական բաժին։
Մուտք 3 ֆրանք։

“ՀԱՑ ԵՐԳԻ ՕՐ,,

ԱԶԳԱՅԻՆ ՅԱՐԳԱՆՔԻ ՅՈՅՑ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ
իր մահուան տարելիցին առթիւ
Մեծ Հաւաք
կազմակերպուած ՄԻՓԱՆ-ԿՈՄԻՏԱՍ երդչախումբի կողմէ
Հովանաւորութեամբ ԿՈՄԻՏԱՍԵԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎի
8 Նոյեմբեր, կիրակի կէսօրէ վերջ, Salle Erardի մէջ։
Ղեկավարութեամբ Ա. ՊԱՐԹԵՒԵԱՆի։

ՀԱՑ ՍԱՓՐԻԶՆԵՐՈՒ *ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ—ՊԱԶԱՀԱՆԴԷՍԸ*

29 Նոյեմբեր, կիրակի գիշեր, ժամը 9էն մինչեւ լոյս,
Salle des Ingénieurs Civilsի *սրահին մէջ,*
19 Rue Blanche, Métro: Blanche et Trinité
Պիտի խօսին՝ ֆրանսացի եւ ուրիշ արուեստակից մասնագէտներ։
Հ. Ս. Միութեան կողմէ խօսք պիտի առնեն՝
Պ. Պ. ԳԷՈՐԳ ՍՏԵՓԱՆԵԱՆ եւ ԾԱՏՈՒՐ ՊԷՐՊԷՐԵԱՆ։
Կը ցուցադրուին հայ սափրիչ սափրիչուհիներու կողմէ պատրաստուած կանանց մազերու ամենավերջին նորաձեւութիւնները՝ ֆրանսական եւ հայկական թղթակիցներու ներկայութեամբ։
ԱՆՈՒՇԱՀՈՏՈՒԹԵԱՆՑ ԲԱՇԽՈՒՄ։
ԱՆԱԿՆԿԱԼԸՆԵՐ՝ Ֆուչակաւոր պարուհի HUGUETTE O BINի եւ դաշնակահարուհի ANGÈLE ALICEի կողմէ (7 տարեկան)
14 ՀՈԳԻՆՈՑ ԸՆԴԻՐ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ
ՃՈՒԽ ՊԻՒՖԷ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԻՆԵՐՈՎ
Մուտք՝ արանց 8 ֆր., կանանց 6 ֆր.։
Ցոմսերը կը ծախուին բոլոր սափրիչներու մօտ։

Ֆրանսահայ Հայր. Միութիւններուն

Եթէ նպատակ ունիք յառաջիկայ տարուան համար պատի օրացոյցներ պատրաստել տալու, փութացէք այժմէն յանձնարարել ձեր ապսպրանք օրացոյցները, որոնք արտակարգ չքեղութեամբ կը պատրաստուին մեր տպարանին մէջ, եւ որոնց ընդօրինակութեան իրաւունքը վերապահուած է միշտ։ Հետեւաբար ամէն նախաձեռնող միութիւն կրնայ ունենալ տեսակ մը իրայատուկ ձեւով օրացոյցներ, որոնք շահեկան ըլլալէ զատ կը ծառայեն նաեւ դեղեցիկ զարդ մը բոլորին տան մէջ։
ԳՈՐԾԸ ԿՐ ՅԱՆՁՆԵՆՔ ԿԱՐՃ ԺԱՄԱՆԱԿՈՒԱՆ ՄԷՋ։
Դիմել կամ գրել՝ Տպարան «Եփրատ», Հ. Թադէոսեան, 97bis rue de la Part-Dieu, Lyon։

Կ'ԱՒԱԶՈՒԻ tricoteurs façoniers maille retourné եւ jauge 7 cam façon d'origine *մեքենաներ ունեցող* **façoniers** *ներկայանալ ՔԷպապճեան'ի, 14 Rue de Tracy, Paris. Central 87-19.*

ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Անիլէ-Փուա-Քոլոնպի եւ Քոլոնպի շրջանի Հ. Բ. Ը. Միութեան հայերէնի դասարնթացքին հետեւող երկսեռ աշակերտներու ծնողքներէն կը խնդրուի արձանագրել տալ իրենց զաւակները մինչեւ նոյ. 1, 345 Ave. d'Argenteuil նախկին պալրոցը կամ Գ. Գաբրիէլ Երամեանի քովակարանը, 14 rue Loradoux, Bois Colombes. իսկ հոն պիտի հայրենակիցներուն դիւրանան համար. դիմել Պ. Մինիկ Էքիզեանի, 207 rue St. Denis, Colombes, ինչպէս նաեւ Անիէդ-Փուա-Քոլոնպի եւ շրջանի Անժէ. Հոգաբարձութիւն

ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԷՍ

«Հայ Արծիւ» (l'Aigle d'Arménie) Ակումբի վարչութիւնը կը ծանուցանէ թէ՝ նորակազմ Ակումբի բացման հանդէսը տեղի պիտի ունենայ 1 նոյ. կէսօրէ վերջ ժամը 2.30-7, Salle Tubleri մէջ, 19 rue de la Pompe, ցերեկոյթի պատշաճ զգեստ պարտաւորիչ է. ի հարկին գոց գոյն զգեստ կրել ընդունելի է։ Առանց հրաւիրագրի մուտք քարտոնուած չէ։ Հիւրասիրութիւն առանց դրամի։

վարչութիւն «Հայ Արծիւ» Ակումբի
14 rue Meyerbeer, Blanc-Mesnil (S. et O.)

CIGALE CINÉMA
60 Avenue de Saxe. LYON
23 — 29 Հոկտ.
Առաւօտեան ժ. 2.30ին երեկոյեան 8.30ին
Maxudian
dans
Les Deux Gamins
Գիներ 5 եւ 7 ֆր. location gratuite.
Ներկայ յայտարարութիւնը բեռցուած կը տրուի 2 մուտքի տոմսակ՝ զեղչուած գինով

REXY CINEMA (Lyon)
Cours Lafayette, angle Rue Garibaldi
23— 29 Հոկտ.
Երեկոյեներ ժամը 8.30
Իսկ Հինգ. եւ Կիր. ցերեկ եւ գիշեր։
2 grands films
Raimu daas Fanny
et dans Marius
Գիներ 3, 5 եւ 6 ֆրանք։
Ներկայ յայտարարութիւնը բեռցուած կը տրուի 2 մուտքի տոմսակ զեղչուած գինով

ՓՆՏՌԵՑՔ եւ ԿԱՐԴԱՑԷՔ

երգիծաթերթ՝ «Մ ե ղ ո ւ»
փարիզի եւ շրջանի *Ցառայի* ցրուիչ
Պ. ԱՒԵՏԻՍԵՆ։

Le Gérant: H. STEPHAN
Imprimerie A. DER (AGOPIAN)
17, Rue Damesme, PARIS (13)

ԲԱՑՈՒԱԾ Է ԿԱՐՈՒԶԵԻԻ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Ամէն օր առաւօտէն մինչեւ կէսօր, եռեք ամուսան մէջ, պիտի տրուին ձեւագիտութիւն՝ ամենավերջին ոէթոտով եւ չաշորդ երեք ամսուան մէջ կարճ։ Պիտի տրուին ճաշակի եւ կարի նրբութիւններու մանրամասն տեղեկութիւններ։ Աշխատողներու համար կիրակի օրերը մանրամասնութեանց համար դիմել՝ ՏԻԿԻՆ ԳՈՀԱՐ ՎԱՐԴԱՆԵԱՆի,
12 Rue Saint-Sulpice, Paris (6) 4րդ յարկ, Métro Odéon։

ԵԴՈՒԱՐԴ ԳԱԼՓԱՔՃԵԱՆ

ԴՐԱՄԱՏՈՒՆ, **48 rue de la République, Marseille**
Tél. Colbert 74—51, 47—22
Ծտար դրամներու փոփոխութիւն, չէքեր կը տրուին ամէն երկրի համար։ կը գնենք եւ կը ծախենք ոսկի դրամներ։
ՀԱՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ,

Cabinet A. HANDJIAN O. ✠

Officier de la Légion d'Honneur
Expert-Traducteur, Juré près des Trlbuneaux
Administrateur de Sociétés
57, Bld. Barbès—Paris (18) Tél. Montmartre 70-17

Պ. Արտաւազդ Խանճեան որ 40 տարիէ ի վեր ծանօթ է փարիզի իրաւարանական, ֆրանսական կառավարութեան եւ դատական իշխանութիւններուն, պատրաստ է օգտակար ըլլալ իր հայրենակիցներուն իր երկարամեայ փորձառութեամբ։ Ամէն ոք կրնայ դիմել իր գրասենեակը օգտուելու համար դատական, վարչական, առեւտրական եւ ամէն տեսակ գործերու մասնագէտներէն։ Պ. Խանճեան կը հրաւիրէ իր հայրենակիցները որ իրեն դիմեն ամէն դժուարութիւններու առթիւ որ եւ է ձեռնարկ ընելէ առաջ, օգտուելու համար իր խորհուրդներէն որ կը տրուին ձրիաբար։

Պ. Խանճեան կը ստանձնէ ամէն տեսակ գործերու հետապնդում, շատ մատչելի պայմաններով եւ իր սովորական ուղղամտութեամբ։
Դիմել ամէն օր ժամը 9—10 եւ 14—15։ Կ'ընդունի նաեւ ժամադրութեամբ։

ԿԱՊՈՑՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ռուսաստանի մէջ գտնուած ձեր ազգականներուն եւ բարեկամներուն *չաւագոյն եւ իրական օժանդակութեան ձեւն է՝ ղրկել անոնց կապոցներով բրդեղէն կտորներ, ճերմակեղէն, կօշիկներ եւ թրիքօթաժ։*

Այս բոլոր իրեղէններէն մենք ունինք ճոխ մթերք եւ կ'ուզարկենք զանոնք Ռուսաստան շատ ձեռնտու եւ մատչելի գիներով։

Ունինք տրաժադրելի ընտրութուն եւ թէյինկոն զրաժեքնաներ, ինչպէս նաեւ դաշնակներ՝ շատ մատչելի գիներով։

Գիներու ցանկը եւ նմոյշները կը ղրկուին առաջին իսկ պահանջին

Դիմել՝ American Lloyd, Paris (9), 7 rue Auber
Tél. Opéra 67-77, 67-78

ԱՐՔԱՅԱՆ ԽՄԻՋՔ

ՐԱՔԻ ՏԻՒԶ

Գ ւս խաղողէ քաշուած եւ անխառնով պատրաստուած օղին է ՐԱՔԻ ՏԻՒԶԸ։

Զգուշացէք այլ եւ այլ նիւթերով պատրաստուած եւ ձեր կեանքին վնասակար օղիները խմելէ, այլ խնդացէք սիսկան ՐԱՔԻ ՏԻՒԶԸ, որուն անարատ, կազդուրիչ եւ ախորժաբեր ըլլալը հաստատուած եւ գնահատուած է։



Ֆրանսայի ներածող արտօնատէր՝ Ա. ՏԱԼԱՓԻԲԻԵԱՆ
8 rue Suffren, Marseille— Tél. D. 70-89

ՀԱՅԵՐԻՆ ԺԱՄԱԴՐԱՎԱՃԱՐԸ

Ճաշարան Ֆլօրիկ

61, Rue Monsieur le Prince, Paris (6)
Մէթրօ՝ Օտէօն եւ Սէն Միշէլ Հեռաձայն Danton : 52 73
Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ։

Etude de Me BERNARD WAHÉ
(17e ANNÉE)
Licencié en Droit de la Faculté de Paris
Ancien élève de l'École des Hautes Études Sociales
JURISCONSULTE
de]
Droit Français et International Privé
Mandataire en Justice]
159 rue Lafayette, Paris (Gare du Nord) Tél. NORD 68—02

ԿԸ ՍՏԱՆՁՆԷ ամէն տեսակ դատեր, Փարիզի, դաւառի, գաղութներու եւ արտասահմանի մէջ։ Խորհրդակցութիւն իրաւագիտ. ամէն տեսակ խնդիրներու Արկածի դատեր, ամէն լեզուէ թարգմանութիւններ։ Նաթերալիզասիոնի օրինական ձեւակերպութիւններ եւ անուններու փոփոխութիւն, ընկերութիւններու կազմութիւն եւ լուծում։ Ամէն տեսակ գործերու խմբագրութիւն։ Իրաւագիտական քննութեանց եւ մրցումներու պատրաստութիւն։ Ճառերու եւ դատախօսութիւններու խմբագրութիւն։ Խորհրդակցութիւն 25 ֆր.։ Կ'ընդունի ամէն օր ժամը 5—7, բացի շաբաթ, կիրակի եւ տօնի օրերէ։

Կ'ընդունի նաեւ ժամադրութեամբ։

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

EE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)
Téléphone : Glacière 15 - 70
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,— ՏԱՐԵԿԱՆ ՎՃՑԱՄՍԵԱՑ ԵՒԱՄՍԵԱՑ

Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա	250 »	130 ֆրանք	—
Ամերիկա եւ ուրիշ երկիրներ	200 »	100 ֆրանք	—

ԵՐԵՔՇԱԲԹԻ
27
ՀՈԿՏԵՄԲԵՐ
MARDI
27 OCTOBRE
1936

ԺԲ ՏԱՐԻ — 12e Année No. 3254

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՉԸ՝ ԹՈՒԱՆՇԱՆՆԵՐՈՎ

Նոր տարեգլուխ Ամերիկայի Կ. Խաչի կեդր. վարչութեան տեղեկագիրը (1935 - 1936), որ կը ներկայացնէ մէկ տարուան գործունէութիւնը եւ ԺՋ. պատգ. ժողովին որոշումները:

Որ եւ է հանրօգուտ ձեռնարկ դատելու համար, բառերը եւ արձականները չեն որ դեր պիտի կատարեն, այլ գործերն ու թուանշանները:

Այսպէս եւ ներկայ պարագային: Մեր ձեռքին տակ եղած տեղեկագրին նիւթերն ու թիւերը շատ աւելի բան կը խօսին, քան բոլոր ճառերն ու յօդուածները:

Թոյլ տուէք ձեզի ներկայացնել քանի մը թուանշաններ.—

1. ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ԹԻՒԸ.— Հիւս. Ամերիկա՝ 2500, Հարաւ. Ամերիկա՝ 407, Ֆրանսա՝ 1000, Ռումանիա՝ 200, Պուլկարիա՝ 1000, Մակեդոնիա - Թրակիա՝ 462, Հին Յունաստան՝ 477, Եգիպտոս՝ 260, Սուրիա՝ 2078, Ատրպատականի՝ 200: Ընդհ. գումար՝ 8584:

2. ՄՈՒՏՔ.— Հիւս. Ամերիկա՝ 17,774 տոլար, Հարաւ. Ամերիկա՝ 1940, Ֆրանսա՝ 7868, Ռումանիա (հաշիւ չէ ղրկած), Պուլկարիա՝ 412, Մակեդոնիա – Թրակիա՝ 793, Հին Յունաստան՝ 2801, Եգիպտոս՝ 1319, Սուրիա՝ 4013, Ատրպատականի՝ 323: Ընդհանուր գումար՝ 37,247 տոլար: (Կոտորակները զանց կ'առնենք):

Ընդհ. ելքէն վերջը պատրաստ կը մնայ 7030 տոլար:

3. ՆԱԽԱՀԱՇԻՒ 1936 - 1937 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ.— Կը նախատեսուի 18,024 տոլար (ձեռնարկներէ՝ 8200, անդամատուրքէ՝ 4000, նուէրներէ՝ 750, ծոմապահութենէ՝ 1000, «Բարեկամներու օր»էն՝ 500 եւայլն):

Ի՞նչ կ'ապացուցանեն այս թուանշանները:

— Ցարատեւ աշխատանք եւ աճում: Հաւատաւոր, վճռական կամք եւ արդիւնաւէտ գործունէութիւն:

Տակաւին քանի մը տարի առաջ, Կ. Խաչի տարեկան նախահաշիւը կը տատանէր 10 — 13,000 տոլարի միջեւ: Այժմ հասած է 18,000ի (360,000 ֆրանք): Գումար մը, որուն մէջ տեղ չունին ոչ փարթամ նուէրներ, ոչ ալ կտակներ:

Ինչպէս բուն ձեռնարկը, նոյնպէս անոր նիւթական աղբիւրները ժողովրդական են,— առաւելապէս լումաներ, որ Կ. Խաչի գանձը կը հոսին իրրեւ անդամատուրք, նուէր կամ «ծոմապահութիւն»: Բացառիկ հասոյթները պատահական են, եւ մեծ գումար մը չեն կազմեր:

Ուրիշ խօսքով, ժողովուրդը ինքն է որ կը գուրգուրայ այս հաստատութեան վրայ, գիտակցաբար ընծայելով ե'ւ բարոյական ե'ւ նիւթական աջակցութիւն, հաւատալով անոր կոչումին եւ ցանկալով յարատեւն յաջողութիւն, ծաւալում:

Կ. Խաչը այդ իրողութեան կը պարտի, նաեւ, իր անդամներուն ճաճումը,— մօտաւորապէս 10,000 նուիրեալներ, առանց հաշուելու համակիրներն ու բարեկամները:

Իր գործունէութեան դա՞շտը:

Բազմազան ճակատ մը, որ կ'ամփոփուի երեք հիմնական աշխատանքներու մէջ.—

Ա.— ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ (օգնութիւն հիւանդներու, մայրերու, երախաներու, դարմանատուն, սնունդ, կաթ եւն.):

Բ.— ՊԱՑԻԿԱՐ ԱՑԼԱՍԵՐՄԱՆ (սեփական դպրոցներ կամ օգնութիւն եղած հաստատութեանց, դասընթացքներ, ինքնագործակցութիւն, սաներ եւ սանուհիներ եւն.):

Գ.—Ազատագրում բեկորներու, ընկերային օգնութիւն եւն.):

Ինչ որ կատարուած է, մինչեւ այսօր, այս լայն ճակատին վրայ, յաճախ աչքի չի զարներ:

Հարկ է մօտէն հետեւած ըլլալ, գաղափար կազմելու համար թափուած ճիգերուն եւ ձեռք բերուած արդիւնքի մասին: Հարկ է ոչ միայն կարդալ պարբերական զեկուցումներ, այլ անձամբ տեսնել, հետաքրքրուիլ եւ դատել: Մանաւանդ նկատի առնելով այն միջավայրը ուր գործելու հարկադրուած է Կապոյտ Խաչը:

Եթէ արեւելեան գաղութներու մէջ կ'երեւայ գործը, դպրոցական չէնքերով, հիւանդներու եւ թշուառներու խնդումով կամ մեռատառ, խրամներու մէջ կռուող մեր ընկերներուն կեանքը նուիրական է մեզի համար: Պաշտօնաթերթը կը հրատարակէ հրովարտակներ, որոնք կը վերաբերին յեղափոխական գաւառաններու կազմութեան:

Մեր կողմէ Ֆրանքոյի բանակը հետզհետէ կը ճնշէ Մատրիտի պաշտպանութեան դիծերը: Զօր. Վարէլայի ալ թեւը գրաւեց Իլէսքաղը, կատաղի կռիւ մը վերջ: Երեք զօրախումբեր յառաջացան դէպի Ագանա, Փանթոքա, Ալամէտա, կտրելու համար Մատրիտի հաղորդակցութիւնը երկաթուղիով: Կառավարական ուժերու հրամանատարութիւնը եւս չի ծածկեր որ կացութիւնը ճգնաժամային դարձած է այլեւս:

Մեր կողմէ Ֆրանքոյի բանակը հետզհետէ կը ճնշէ Մատրիտի պաշտպանութեան գ

ՀԱՅՏՆԻ ԳԻՏՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ

— •• —

ՀԱՅՏՆԻ ԳԻՏՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ

— •• —

Հայտնի գիտութիւն առաջին տպագրութիւնը ... 1
Ս. Վահան Ծաղկանեցի, վերապատուելի Մխիթարեան Միաբան Վենետկոյ. Տաղարան ... 2
Տաղարանք ... 3

ՍԵՓԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 6

— Ես ձեզ ասում եմ, որ ես ոչ մի հանցանք չունեմ, — կրկնեց Լիսան։

«Ես էլ ասում եմ, որ ես ոչ մի հանցանք չունեմ, բայց ինձ ձերբակալել են։ Ինչո՞ւ։ Ես չգիտեմ։

րուն համաձայն իբր թէ պէտէվիները յարձակում պիտի գործեն եւ պիտի հրդեհեն հայկական թաղերը: Հայերը երբ լսեցին այս լուրը, չափազանց գրգռուեցան :

Ազգայնական պարագլուխներ, եւ մասնաւորաբար Տոքթ. Քէեալի եւ Ցուսուֆ Իպրահիմ վաչա մեծ գործունէութիւն ցոյց տուին անդորրութիւնը վերահաստատելու համար: Անոնք այցելեցին հայկական թաղերը եւ հաւաստիքներ տուին :

Կառավարութիւնը մէկ կողմէն, ազգայնական կուսակցութիւնը միւս կողմէն, հասկնալէ վերջ թէ դիտումնաւոր աշխատանքներ տարածուած են խառնակելու համար խաղաղութիւնը, հարկ եղած միջոցները ձեռք առին եւ ամէն կողմ հսկիչներ ղրկեցին: Հայկական թաղերու մէջ պտտող ժանտարմաները նշմարեցին երեք Հայեր, պէտէվիի տարազ հագուած: Ձերբակալեցին խնդրոյ զանոնք եւ պահականոց առաջնորդեցին: Անոնց վրայէն գտնուած է երեք տարբանակ եւ «Ճերմակ Շապիկաւոր»ներու նշաններ: Քննութիւնները ցոյց տուին որ անոնք Հայեր են եւ խոստովանեցան որ հրդեհ պիտի յառաջացնէին հայ թաղերու մէջ եւ պիտի վերագրէին պէտէվիներու: Կը փնտռուին զանոնք ղրդողները :

«Ֆրանսա Մոսկուայի վարձու զինուորը չէ»

Ֆրանսայի ընկերվարական - հանրապետական կուսակցութիւնն ալ, իր կարգին, համագումարի հրաւիրուած էր Նանսիի մէջ:

Փօլ - Պոնքուր իր համակրանքն արտայայտեց Ժողովրդական Ճակատին: Էնտրի երեսփոխանը, Տէչիզ, քննադատեց օրուան կառավարութիւնը, եւ մասնաւորաբար անդրադառնալով ռուսեւֆրանսական դաշինքին, ըսաւ .— « Ֆրանսա պէտք չէ զառնայ Մոսկուայի վարձու զինուորը»: Ապա նաեւ Լօժէն Ֆրօ, նախկին ներքին նախարարը, որ խստիւ քննադատեց համայնավար կուսակցութիւնը: Մասնաւորաբար ըսաւ թէ կարելի չէ վստահիլ համայնավար կուսակցութեան դիրքին վրայ, ամէն ամիս դիրք կը փոխէ, ներչնչուած ոչ թէ կուսակցութեան շահերէն, այլ Մոսկուայի թելադրանքներէն :

Մոնթանեն քննադատեց կառավարութեան ելմտական քաղաքականութիւնը եւ Ֆրանքին արժեզրկումը :

Ի վերջոյ համագումարը ընդունեց հետեւեալ բանաձեւը եւ փակուեցաւ.

— Համագումարը ցաւով կ'արձանագրէ այն ծանր դէպքերը, որ տեղի ունեցան անցնող տարեշրջանին՝ արտաքին ճակատի վրայ.— Ազգերու Դաշնակցութեան ձախողումը եթովպական հարցին մէջ, Հռենոսի ձախ եղերքին վերազինումը ի հեճուկս Վերսայլի դաշնագրին, դրժումը Լոքարնոյի դաշինքին, կատարուած իրողութիւն մը պարտադրելու քաղաքականութիւնը, Սպանիոյ քաղաքացիական դէպքերը: Այս առթիւ, իր համակրանքն ու ողջոյնը կը ղրկէ Սպանիոյ հանրապետութեան՝ իր հերոսական պաշտպանութեան համար, բայց կ'ընդունի որ միայն չէզոքութիւնը կրնայ արգիլել միջազգային բռնկումը: Միւս կողմէ վստահութիւն յայտնելով Ֆրանսայի ներկայ կառավարութեան, փափաք կը յայտնէ որ խաղաղասիրական աւելի կորովի ջանքեր գործադրուին եւ աւելի ուժեղ դործէ միջազգային հակակշիռի կոմիտէն :

ԼԵՈՆ ՏԸԿՐԷԼ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԵՑԱՒ

Ռէգքոխթները չդրժեցին իրենց խօսքը, բայց խաղը վերջացաւ իրենց համար աննպաստ: Կիրակի առաւօտ Պրիւսէլ արձնցաւ կծու ցուրտով մը: Ամէն կողմ, փողոցներու անկիւնը ոստիկանական եւ հեծելազօրաց ջոկատներ: Մայրաքաղաքը պաշտպանուած էր ամէն կարգի խռովութեանց դէմ: Ժամը 11ին յորդ անձրեւ մը, որ աւելի եւս կը դժուարացնէր ռէգքոխթներու շարժումը :

Նախկին պատերազմիկները կը հաւաքուին իրենց ժամադրավայրը: Ու կը սկսի տողանցք մը թաղաւորին առջեւէն: Ոչ մէկ միջադէպ: Քանի մը նախկին պատերազմիկներ կը բարեւեն, թափօրին մէջէն, ռէքսեան ողջոյնով: Սակայն անձրեւին տակ՝ տողանցքը կը կատարուի քիչ մը աւելի արագաքայլ: Կէս օրին վերջացած է տողանցքը :

Եւ ահա ռէքսխթները: Անձանօթ Զինուորին դամբարանին առջեւ են ա. նոնք: Բազուկ մը կը բարձրանայ, հրաման մը կ'արձակուի, եւ ռէքսեան բազմութիւնը կը սկսի աղմկել. «Ռէքս պիտի յաղթէ», «Կեցցէ՛ Լէոն», «Հրաժարեցէ՛ք»: Քիչ յետոյ ռէքսեան ուրիշ բազմութիւն մը, Լա Պրապանսոնն երգելով, կը խռնուի Սէնթ - Կիւտիւլ Եկեղեցիին հրապարակը: Բախում մը ռէքսխթներու եւ բանուորներու.— «Ռէքս պիտի յաղթէ»:— «Ռէքս պիտի սատկի»: Ոստիկանութիւնը կը միջամտէ, կը ձերբակալէ քանի մը ռէքսխթներ, որոնք կ'երթան՝ իրենց թեւը տուած ոստիկաններուն եւ ժպտագին: Ցանկարծ տան մը տանիքէն կը բարձրանայ ռէքսեան դրօշը, եւ պատշգամէն կ'երեւի Լէոն Տըկրէլ Բարձրախօս մը հազիւ քանի մը խօսք կը նետէ բազմութեան, հրապարակին վրայ կը սկսի հրմշտուքը: Այնքան կը սաստկանայ աղմուկը որ բարձրախօսն իսկ չի լսուիր: Տըկրէլ կարճ կը կապէ: Վարը ձերբակալութիւններ տեղի կ'ունենան, ռէքսխթ ձերակուտական մը եւ երեսփոխան մը կ'առաջնորդուին պահականոց: Երբ Տըկրէլ վար կ'իջնէ, ոստիկանները կը պաշարեն զինք եւ կը տանին մօտիկ պահականոցը:

Ժամը 4ին լուրը տարածուած է թէ ձերբակալուած է Տըկրէլ: Հսկայ բազմութիւն մը կը գրաւէ հրապարակներն ու փողոցները: Սակարանէն մինչեւ Տըպրուքսէլի հրապարակը անանցանելի է. «Ռէքսը պիտի յաղթէ»: Ոստիկանութիւնը, հեծելազօրքը չարժման մէջ են, սակայն կարելի չէ մաքրել ճամբան: Այս անգամ իրական յարձակում մը, ոստիկանութիւնը կը զարնէ թոպերով, հեծելազօրքը՝ հրացաններու կոթով: Ոմանք կը փախչին, ոմանք կը դիմադրեն, ոմանք գետին կ'իյնան վիրաւոր: Ժամը 3ին հրապարակը մաքրուած է, բայց քիչ յետոյ ցուցարարները զարձեալ կ'երեւին,— ազգայնական երգեր, սուլոցներ օդը կը թնդացնեն :

*** Կիրակիէն երկուշաբթի լուսնալու գիշերը, առաւօտեան դէմ, ազատ արձակուեցան Տըկրէլ եւ իր ընկերները:

Թուրքիա կը կասկածի Իտալիան

— o —

Թուրքերէն « Թան » այս վերնագրով կը հրատարակէ «Թայմզ»ի Միլանոյի թղթակցին հետեւեալ հեռագիրը .—

ՄԻԼԱՆՕ.— Ազգային համաժողով մը, որուն կը նախագահէ Տոքթ. Ալպէրթօ Փիրէլլի, կը քննէ Իտալիոյ արտաքին քաղաքականութիւնը: Բացում մը կատարեց արտաքին նախարար Կոմս Զիանօ: Նստաշրջանը երեք օր պիտի տեւէ :

Համաժողովը քննեց նաեւ Միջերկրականի խնդիրը, Կոմս Վոլփիի նախագահած նիստին մէջ: Զեկոյցը կարդաց Հռոմի համալսարանի դասախօսներէն Փրօֆ. Պկկօ Փաչէ, որ երեք մասի բաժնեց իտալական շահերը արեւելեան Միջերկրականի մէջ.— Քաղաքական, տնտեսական եւ բարոյական: Ցիշեց թէ 1934ին ամէնէն աւելի իտալական դրօշը կրող նաւերն են որ հանդիպած են Թրքական նաւահանգիստները: Տարողութեան տեսակէտով, համեմատութիւնը հարիւրին 30 է: Անգլիոյ, Ֆրանսայի եւ Սպանիոյ չհագթգռութիւնը համեմատաբար քիչ է Միջերկրականի մէջ, մինչդեռ այդ ծովը կենսական կարեւորութիւն ունի Իտալիոյ համար եւ ամբողջ ներածման հարիւրին 86ը անոր միջոցով կը կատարուի :

Քաղաքական մասին գալով, Իտալիա ամբաստնեց երկոտասան կղզիներու սեփականատիրութիւնը, որուչց Լիբիոյ անորոշ սահմանները, աշխատեցաւ հաստատել Թուրք եւ Հելլէն գործակցութիւնը եւ անկեղծ յարաբերութիւններ հաստատել արաբական երկիրներու հետ: Յունաստան եւ Իտալիա, որոնք երկու ծովով կապուած են իրարու, չէին կրնար չճանչնալ զիրար: Թուրք եւ Իտալական յարաբերութիւնները անբացատրելի վիճակի մը մէջ են: Հակառակ անոր որ Իտալիան միակ պետութիւնն է որ մեծ պատերազմէն յետոյ չմասնակցեցաւ Օսմանեան հողերու մեծ աւարին, կասկածի եւ անապահովութեան առարկայ դարձած է Թուրքիոյ կողմէ :

Արեւելեան Միջերկրականի վերջին փուլը՝ անգլեւիտալական անհամաձայնութիւնն է : Անցեալին մէջ, Իտալիա կոթնած էր Անգլիոյ հետ գործակցութեան սկզբունքին եւ ապահով կը զգար ինքզինք՝ նկատելով որ Անգլիոյ ձեռքը կը գտուին Միջերկրականի երկու դուռները: Բրիտանական թշնամական արարքներուն պատճառով, այս վստահութիւնը վերցած է :

Միջերկրականի մասին խօսուած ատեն, երկու տեսակէտ մէջտեղ դրուեցաւ: Առաջին՝ Անգլիա եւ Իտալիա իրաւախոհութեան մը կուգան, իրարու շահերը ըմբռնելով, բայց մեծամասնութիւնը չի հաւատար ասոր եւ կը պնդէ թէ Անգլիա իր մենատիրութիւնը պիտի չարունակէ Միջերկրականի մէջ: Հետեւաբար կը մնայ երկրորդ տեսակէտը, որուն համաձայն Իտալիա միայն պատերազմով մը կրնայ ջնջել Միջերկրականի իր գերութիւնը: Ասոր համար ալ երեք տեսակ պատերազմներ կրնան ծագիլ.— 1· Իտալիա կը կռուի Անգլիոյ կողքին, 2· Իտալիա կը պատերազմի Անգլիոյ դէմ, 3· Իտալիա պետութիւններու խմբակի մը հետ կռիւ կը մղէ Անգլիոյ դէմ: Այս խառնակութիւնները նկատի առնելով, Իտալիա կ'ուզէ լաւ յարաբերութիւններ պահպանել արաբական երկիրներու, Թուրքիոյ եւ Յունաստանի հետ :

ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Լէոն Պլումի ճառին մէկ ակնարկէն յուզուած, Ֆրանսերէն Թերթերու Ագց. Դաշնակցութիւնը նիստ մը գումարեց երեքշաբթի օր եւ միաձայնութեամբ ընդունեց հետեւեալ բանաձեւը.—

Ֆրանսերէն Թերթերու Ագց. Դաշնակցութիւնը, վարչապետին վերջին ճառերէն տեղեկանալով կառավարութեան ծրագիրներուն, իր ուրախութիւնը կը յայտնէ կարծելով որ ծրագրուած փոփոխութիւնները պիտի կատարուին՝ ուժ տալու համար մամուլի անկախութեան, որ արդէն նուիրագործուած է հանրապետական օրէնքով :

Ու կը հաւատայ, որ այդ բարեփոխութիւնները պիտի կատարուին ամենայն անկողմնակալութեամբ, աշխատելով

1.— Հակակշռել նիւթական աղբիւրները բոլոր Թերթերուն, առանց բացառութեան, եւ ուրկէ՛ ալ գան :

2.— Ջնջել գաղտնի վարկերը ամբողջապէս, անկեղծութեամբ :

3.— Վերաքննել 1881ի օրէնքը, որ կը վերաբերի անուանարկութեան հարցերու մէջ արագ դատաստանի եւ դատապարտութեան ծանրացման :

ԼԵՈՆ ՊԼՈՒՄԻ ՃԱՌԸ ՆԱՐՊՈՆԻ ՄԷՋ

ՄԱՄՈՒԼԻ ՕՐԷՆՔԸ ՊԻՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒԻ

Լէոն Պլում, չարաթ օր կարեւոր ճառ մը խօսելէ վերջ Թուլուզի մէջ, անցաւ Նարպոն, ուր եւս խօսեցաւ քաղաքական ճառ մը :

Լէոն Պլում նախ դասեր հանեց Ժողովրդական Ճակատի կառավարութեան գործունէութենէն, յետոյ աւելցուց որ, իրրեւ վարձատրութիւն այդ գործունէութեան, «տնտեսական վերածնունդի մը նշանները սկսան երեւիլ ամբողջ երկրին մէջ»: Ցայտարարեց թէ նախարարական խորհուրդը, որ պիտի գումարուէր ուրբաթ, հրաւիրուած է այսօր: Այսօրուան նիստին մէջ է, որ պիտի որոշուի խորհրդարանին բացման թուականը: Կառավարութեան փափաքն է որ աւելի կանուխ բացուի, որովհետեւ բազմաթիւ հարցեր կան սեղանի վրայ, որոնք պիտի յանձնուին խորհրդարանին քննութեան :

Լէոն Պլում, այստեղ, յայտնեց թէ տեղական ելմտական դրութեանց մէջ բարեփոխութիւններ պիտի կատարուին, մամուլի օրէնքը եւս վերաքննութեան պիտի դրուի.

-- Մամուլի օրէնքը չատ է ծեծուած : Անհրաժեշտ է բարեփոխութիւն մը կատարել նաեւ մամուլի օրէնքին մէջ, որպէսզի մէկ կողմէ մարդիկ միջոց ունենան իրենց պատիւը պաշտպանելու անուանարկիչ յօդուածներու դէմ, միւս կողմէ իշխանութիւնը կարենայ հակակշռել նիւթական աղբիւրները այն բոլոր Թերթերուն, որոնք հանրային կարծիքը առաջնորդելու առաքելութիւնն ունին :

Խորհրդարանին ներկայացուելիք օրինագիծը պիտի թոյլ տայ, որ անուանարկութեան հեղինակները կարենան հայթայթել իրենց տրամադրութեան տակ դրուած բոլոր ապացոյցները: Արդի օրէնքները թոյլ չեն տար այդ բանը, — կարելի է հիմա դատապարտուիլ իրրեւ անուանարկիչ՝ երբ նոյնիսկ ճշմարտութիւնը կ'ըսես : Ես կ'ուզեմ որ ապացոյցը մէջտեղ դրուի, ճշմարտութիւնը հաստատուի, բայց կ'ուզեմ որ ծանր պատիժներ տրուին՝ չախչախելու համար զրպարտիչը :

Լէոն Պլում այնուհետեւ խօսեցաւ պիւտճէին հաւասարակշռելու մասին : Կառավարութիւնը պիտի չանայ պիւտճէն վաւերացնել տալ տարեգլխէն առաջ :

*** Նարպոնի մէջ խօսուած այս ճառէն վերջ բախում մը տեղի ունեցաւ աջակողմեան եւ ձախակողմեան տարրերու միջեւ : Հռոմէական բարեւին դէմ բռունցքներ բարձրացան, եւ «Էնթէրնասիոնալ»ն ու «Մարսէյէզ»ը խառնուեցան իրարու՝ աղմուկի եւ բացագանչութիւններու մէջ :

*** Սալանկրօ Լիլի մէջ յայտարարեց թէ խորհրդարանը պիտի վերաբացուի նոյեմբեր 3ին :

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԱԿՈՒՄԲ

Ճաոաչիկայ դասախօսութիւնը տեղի կ'ունենայ այս հինգշաբթի ժամը 21ին, Մօսիէթէ Մալանթի մէջ, 28 rue Serpente, *մէթրօ* Odéon.

Դասախօս՝ Պ. ԽՈՆԴԿԱՐԵԵՆ

ցարեշրջանի բացման դասախօսութիւն:

ՀՅՄ Ա. Ը. Դ.

Փարիզ

ՓԱՐԻԶԻ «ԵԳԻՊՏՈՍԻ» ԿՈՄԻՏԷՆ ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր շրջանիկներն երեքշաբթի երեկոյ (27 Հոկտ.) ժամը 8·30ին, Chez Zeyer սրճարանի վերնայարկը, 4 rue St. Denis (Place du Châtelet), մէթրօ Châtelet կարեւոր օրակարգ:

ԱՆԻԷՌ-ՊՈՒԱ-ՔՈԼՈՆՊԻ «Ալրաս» ենթակոմիտէի ընդհ. ժողովը, այս հինգշաբթի երեկոյ ժամը 9ին, սովորական հաւաքատեղին: կարեւոր օրակարգ:

ԹԷՅԱՍԵՂԱՆ

Համազգայինի Փարիզի Վարչութեան ԹԷՅԱՍԵՂԱՆԸ տեղի կ'ունենայ Նոյեմբեր 13ին, կիրակի կէսօրէ վերջ, Ռուսական Քոնսէրվատուարի սրահին մէջ: Գեղարուեստական բաժին:

ԲԱՑՈՒԱԾ Է ԿԱՐՈՒԶԵԻԻ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Ամէն օր առաւօտէն մինչեւ կէսօր, եոեք ամսուան մէջ, պիտի սորվին ձեւագիտութիւն՝ ամենավերջին մէթոտով եւ յաջորդ երեք ամսուան մէջ կարւ: Պիտի տրուին ճաշակի եւ կարի նրբութիւններու մանրամասն տեղեկութիւններ: Աշխատողներու համար կիրակի օրերը: Մանրամասնութեանց համար դիմել՝ ՏԻԿԻՆ ԳՈՀԱՐ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ, **12 Rue Saint-Sulpice, Paris** (6) 4րդ յարկ, **Métro Odéon**:

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Հ. Մ. Ը. Մ.ի Մարսէյլի մասնաճիւղի վարչութիւնը խոր կսկիծով իր ցաւակցութիւնը կը յայտնէ Այրի Տիկ. Հայկանուշ Արզումանեանի, Ադրամ Արզումանեանի, Եղերակ Արզումանեանի, Հայկուհի Արզումանեանի, Տէր եւ Տիկ. Պօղոս Արզումանեանի եւ իր պարագաներուն, իրենց սիրելի որդւոյն, եղբօր, եղբօրորդւոյն եւ ազգականին՝ ՀԱՅԿ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆի դառնադէպ մահուան առթիւ:

ՅԱՅՑԱՐԱԶՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսահայ կ խայի փարիզի մասնաճիւղին հայերէնի եւ հայոց պատմութեան դասընթացքը կը վերաբացուի 5 Նոյ. Բինգշաբթի առաւօտ ժամը 9ին, Maison Mutualité, 24 rue St. Victor: Նախօրօք արձանագրուիլ հետեւեալ հասցէին. Օր. Գրիգճեան, 5 rue Mayran, փարիզ. հեռաձայն՝ 46-52: Այս տարի աշակերտներէն կը գանձուի 4 ֆր. ամիսը, ծախքերու հայմար: Ընտանիքի մը մէկէ աւելի երախաներու համար մասնաւոր զեղչ: Դասերը տեղի կ'ունենան ամէն հինգշաբթի առաւօտեան ժամը 9—12:

ՀԱՅՑԷԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Տքթ. Ալլահվէրթի Որդի փոխադրուած է՝ **27 Ave. de Versailles, Paris** (16), **Tél. Jasmin 45—19**

Le Gérant: H. STEPHAN
Imprimerie A. DER (AGOPIAN)
17, Rue Damesme, PARIS (13)

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ջ. Ո. ՄԻՈՒԹԵԱՆ Պալանսի Մասնաճիւղի անդամական ընդհ. ժողովը 29 Հոկտ. հինգշաբթի երեկոյ ժամը 8ին, սովորական հաւաքատեղին: Խիստ կարեւոր օրակարգ: Բոլոր անդամներու ներկայութիւնը պարտաւորիչ է: Ներկայանալ անդամատետրով:

ՎԱԼԱՆՍԻ Համախարբերգիական Միութեան անդամական ընդհ. ժողովը 27 Հոկտ. երեքշաբթի երեկոյ ժամը 8ին, Քաֆէ Միտիի սրահին մէջ, օրակարգ՝ Ֆրանսայի շրջանի պատգամաւորական ժողովի պատգամաւորի ընտրութիւն, շրջաբերականի ընթերցում եւ խիստ կարեւոր հարցեր: Ներկայանալ անդամատետրով:

ՀԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԱԿՈՒՄԲ

Ճաոաչիկայ դասախօսութիւնը տեղի կ'ունենայ այս հինգշաբթի ժամը 21ին, Մօսիէթէ Մալանթի մէջ, 28 rue Serpente, *մէթրօ* Odéon.

Դասախօս՝ Պ. ԽՈՆԴԿԱՐԵԵՆ

ցարեշրջանի բացման դասախօսութիւն:

ԳԱՑԷՔ ՏԵՍԷՔ ԼԻՈՆԻ ՄԷՋ
Cinéma REXY
Rue Cours Lafayette, angle Garibaldi.

ԳԱՑԷՔ ՏԵՍԷՔ
CIGALE CINÉMA
60 Avenue de Saxe-LYON.

ԵՂԻՇԷ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ
ՁԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
AMERICAIN LLOYD — **ORIENT LLOYD**
48 rue de la République — **7 rue Auber, Paris**
Մարսէյլ, Tél. C. 47-22 եւ C. 74-51 Tél. Opéra 67-77 67-78
Նաւային բոլոր ընկերութիւններու ներկայացուցիչ,
ցոմսակներ՝ ամէն տեղի համար, Հայ ճամբորդներու համար ամսնաւոր գին: Ընտիր Թղթակիցներ աշխարհի ամէն կողմը,
ՎՈՍՏԱՆԵԼԻ ՏՈՒՆ.

ՁԱՒԱՁՅԻ ԹՈՒՐԹՈՆԸ (172)

ՁԱՒՐԹՕՆՔ

(ՎԷՊ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵԱՆՔԷ)

— o —

Վահէն անգամ մը փորձած էր Վարդանը, Քաչալի փախուստի ժամանակ : Վատահ էր անոր սառնարիւնութեան եւ վտանգը դիմագրաւելու վճռականութեան վրայ, բայց հաւանական ձախողանքի մը ծանր հետեւանքները մտածելով՝ կը տատամսէր :

Որքան ալ որ ընկերական եւ զեղուն սրտի տէր, Վահէն գործի մէջ դաժան լինելու ատիճան խստասիրտ եւ անողոք էր: Առնչուիք քայլը սառնօրէն կը հաշուէր: Երբեք չէր խնայեր ինքզինքը, չէր խնայեր նաեւ ուրիշները: Կեանք մը, որքան ալ որ թանկագին լինէր, եթէ անխուսափելի անհրաժեշտութիւն մըն էր զայն զոհաբերելը, պէտք էր զոհաբերել: Վարդանի պարագան սակայն մտածել տուաւ: Վահէի համար Վարդանը հարկաւ տարբեր չէր հարիւրաւոր ուրիշ երիտասարդներէ, որոնք յեղափոխական գործի մէջ մտած էին: Բայց կար պարագայ մը, որ Վահէի համար ունէր չատ մեծ նշանակութիւն: Վարդանը նոր երեւան եկած խոստմնալից ուժ մըն էր, որ ապագային կրնար ղեկավարող գործիչ մը դառնալ: Որքա՞ն խելօքութիւնը պիտի լինէր այդ պատանին գործի մը մէջ խառնել, որուն հետեւանքը ինք անկարող էր գուշակել: Ցեղափոխական գործունէութեան մէջ տեսորը կը համարուի ամենավտանգաւորը, անակնկալներով հարուստ գործերէն մէկը: Երբեք առաջուց կարելի չէ անխախտ հաշիւ բռնել. պատահական դէպք մը կրնայ տակն ու վրայ ընել նախօրօք կազմուած ամենալաւ ծրագիրն իսկ :

Գլուխը ձեռքերուն մէջ առած՝ Վահէն կը մտածէր տալիք պատասխանի մասին: Վարդանը՝ անոր բերնէն կախուած՝ կը սպասէր: Երբ Վահէի պատասխանը քիչ մը չատ ուշացաւ, տղան աղերսանքով նայեցաւ ընկերոջը ու զսպուած ձայնով կրկնեց .

— Կը խնդրեմ, չմերժէք :

Վահէն , առանց Վարդանին պատասխանելու, խօսքը ուղղեց թժիշկին.

— Հա, արդեօք կրնայի՞ք ըսել, թէ վերջը ե՞րբ կը սպասէք ...

Այս հարցումը այնքան սառն, անհոգի կերպով մը տրուեցաւ, որ Վարդանը ակամայ սարսափով նայեցաւ Վահէին: Տէր Աւետած, մի՞թէ այդ մարդը բոլորովին զգացում չունի...

— Դժուար է ճշդել, կարող է որ եւ է վայրկեան պատահի, երբ արիւնը խռնուի...

— Իսկ ամենաչատը որքա՞ն կրնայ տեւել, — միեւնոյն չոր ձայնով հարցուց Վահէն:

— Մէկ օր, նոյնիսկ երկու օր: Իսկապէս, դժուար է ճշդութօրէն պատասխանել :

— Լաւ, սիրելի թժիշկ, ինչպէս կ'ըսէիր , դուք առանձին պիտի մնաք հոս, իսկ ես ու Վարդանը ձեր եկած կառքով կը վերադառնանք երեւան:

Երեքը միասին վերադարձան վիրաւորի մօտ, որ նոյն վիճակի մէջ կը մնար: Աւելորդ էր Դէորգի հետ խօսիլ փորձելը. քարացածի նման առջեւան պէս նստած էր հօր գլխուն վերեւը, աչքը անոր դէմքէն չբաժնելով:

Շատպով Վահէն երկտող մը գրեց ու յանձնելով բժիշկին՝ յանձնարարեց, որ Դէորգին տայ, երբ ան ուզէ դուրս գալ տնէն :

Վահէն ու Վարդանը ժամը տասնի աւեւտները ճամբայ ելան: Ժամ մը չանցած, անոնք կանգ առին երեւանի կողմնակի փողոցներէն մէկուն վրայ դտնուող միայարկանի ընդարձակ չէնքի մը արտասովոր մեծութեամբ դարպասի դրան առջեւ:

Դրան հին ձեւի մրճակը ձեռք առնելով՝ Վահէն ուժով մը սկսաւ զարնել երկաթէ տախտակին, որ սուր եւ անախորժ ձայն մը հանեց :

— Ո՞վ է,— քանի մը վայրկեան վերջը հարցուց մէկը ներսէն :

— Ես եմ, Վահէն, բաց :

(Շար.) ՄԱԼԽԱՍ

ՓՆՏՌԵՑՔ եւ ԿԱՐԴԱՑԷՔ
երգիծաթերթ՝ «Մ Ե Ղ Ո Ւ»
փարիզի եւ Ընջանի Ցառաջի ցրուիչ
Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ:

ՀԱՐԱԶԱՏ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)
Téléphone : Glacière 15 - 70
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,— ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՄՍԵԱՑ ԵՒԱՄՍԵԱՑ

Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա	250 »	130 ֆրանք	—
Ամերիկա եւ ուրիշ երկիրներ	200 »	100 ֆրանք	—

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
28
ՀՈԿՏԵՄԲԵՐ
MERCREDI
28 OCTOBRE
1936

ՅԹ ՏԱՐԻ — 12e Année No. 3255

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՅԱՒ ԽՕՍՔ

ՈՂՋՄՏՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Արմատական - ընկերվարական կուսակցութեան տարեկան համագումարը վերջացաւ բանաձեւով մը, զոր պատգամաւորները քուէարկեցին միաձայնութեամբ:

Այս արդիւնքը անակնկալ մը եղաւ անոր համար, որ Պիարիցի համագումարը բացուած էր փոթորկալից մթնոլորտի մը մէջ եւ երկու հակոտնեայ հոսանքներ առաջին վայրկեանէն իսկ ուժգնօրէն բախեցան իրարու: Սակաւաթիւ ցցուած բռունցքներու դէմ— խորհրդարանի ձախակողմեան հոսանքի — չախչախիչ մեծամասնութեան բազուկներըբարձրացան հոմիկական բարեւիճեւով, խորհրդարանական ազգայնական ձգտումներու: Իսկ ֆրանսական ազգային թալէրդը քանիցս թնդացուց համագումարի սրահը :

Երկու մտայնութիւններ օրերով պայքարեցան իրարու դէմ : Յարձակումը համայնավարութեան դէմ մասնաւորապէս ուժգին եղաւ կարդ մը վարիչներու կողմէ եւ անոնցմէ էր պատգամաւոր - ներու մեծամասնութեան հակառակութիւնը հակահամայնավա - րական սկզբունքներուն եւ մանաւանդ գործելակերպին դէմ :

Ձիշդ է թէ արմատական - ընկերվարական կուսակցութիւնը մկին է «ժողովրդական ճակատ»ը կազմող երեք գլխաւոր հոսանք - ներէն եւ թէ այդ «ճակատ»ը նոր չէ որ կազմուած է : Սակայն վեր - ջին խորհրդարանական ընտրութեանցհետեւանքով ժողովրդական ճակատը իշխանութեան գլուխ անցած ըլլալով, Պիարիցի համա - գումարը պարտականութիւն ունէր քննել նոր կառավարութեան չորս ամսուան գործունէութեան չարն ու բարին: Ու հրապարա - կուի իր խօսքն ըսել այդ մասին:

Համագումարէն առաջ արդէն գժգոհութեան ալիքը ծաւալած էր արմատական չարքերուն մէջ:Շատեր կը նախատեւէին թէ «ժո - ղովրդական ճակատ»ին մէջ առաջ պիտի գայ ճեղք մը, որ պատ - ճառ պիտի դառնայ անոր քայքայումին: Այս մտավախութեան արտայայտիչը հանդիսացաւ պետական նախարար Քամիլլ Շո - թան, կուսակցութեան գլխաւոր վարիչներէն մէկը, որ նախ քան համագումարը ճառ մը խօսելով յայտնեց թէ՝ «կա՛մ երեք ձախ կուսակցութեանց հետ միասին պիտի կառա - վարէ եւ կամ պիտի լքէ իշխանութիւնը »:

Շնորհիւ կուսակցութեան նախագահ եւ պատերազմական նա - խարար Պ. Խուսար Տալատիէի ջանքերուն, համագումարին մէջ այդ տագնապը առաջ չեկաւ, որով կանգուն կը մնայ «ժողովրդա - կան ճակատ»ը իր ներկայ կազմով:

Քաղաքական այս ճգնաժամային օրերուն, խիստ ծանր պիտի ճնշէր Ֆրանսայի վրայ՝ ներքին տագնապի մը առեղծուած: Օրե - րը չդի են. Ֆրանսայի հարեւան երկիրներուն մէջ պատահած դէպ - քերը կրնան մէկ օրէն միւսը անդարմանելի ազէտի մը վերածուիլ: Այս պայմաններուն տակ, Ֆրանսա պէտք ունի ներքին խաղաղու - թեան :

Պիարիցի մէջ ողջմտութիւնն է որ յաղթանակեց՝ այդ անհրա - ժեշտ խաղաղութիւնը պարգեւելով երկրին:

Այլապէս ներքին տագնապը անխուսափելի դարձնող մէկէ ա - ւելի պատճառներ կային: Գլխաւորը այդ պատճառներուն — ինչ - պէս ըսինք — արմատականներու ստուար մեծամասնութեան ա - տելութիւնն է համայնավար սկզբունքներու եւ գործելակերպին դէմ: Մանաւանդ գործարաններու գրաւումը եւ ընկերային կարգուսարքի յեղաշրջումը վերջին քանի մը ամիսներու ընթաց - քին, ծայր աստիճան վրդոված են արմատական - ընկերվարա - կանները, որոնք կը ղեկավարուին 1789ի մեծ Յեղափոխութեան սկզբունքներով եւ «Մարդու ու Քաղաքացիի Իրաւունքներ»ու նշա - նախօսքերով: Սեփականութեան իրաւունքը նուիրական է անոնց համար, մինչ համայնավարները սեփականապրկում կը քարոզեն:

Ձիշդ այս պատճառով ալ ընդունուած բանաձեւին մէջ որոշա - պէս չեշտուած է թէ «սեփականութիւնը անձեռնմխելի է», իսկ «գործարաններու, արհեստանոցներու, ագարակներու եւ վաճա - ռատուններու գրաւումը անընդունելի հարուած մըն է ազատու - թեան», գալով «փողոցային անգադրում գրգռութեանց, ուսկից ալ դրդուած ըլլան, տնտեսական վերազարթումին հետ կարելի չէ հաշտեցնել զանոնք »:

Համագումարը բացարձակապէս դէմ արտայայտուեցաւ գոր - ծարաններու գրաւման, գրութիւն մը՝ որ ամիսներէ ի վեր կը կի - բարկուի Ֆրանսայի զանազան շրջաններուն մէջ, չլսելով տնտե - սական կեանքը եւ տեղ տեղ պատճառ դառնալով գործերու փակ - ման: Արմատականները կը պահանջեն ընկերային վէճերը լուծել հաշտարար եղանակով եւ պարտադիր իրաւարարութեամբ: Այս ձեւով կը կարծեն թէ առանց բռնի միջոցներու դիմելու կարելի կ'ըլլայ օրավարձքի յաւելում եւ տնտեսական կեանքի այլ բարելա - ւումներ ձեռք բերել:

Տակաւին կանուխ է՝ վճռական դատումներ ընելու համար Պլումի կառավարութեան քուէարկել տուած ընկերային տնտեսա - կան ու եւմտական օրէնքներուն մասին: Փորձի նոր շրջան մըն է որ կը բոլորէ Ֆրանսա: Տնտեսական տագնապը, որ առնուազն հինգ տարիէ ի վեր կը ճնշէ այս երկրին վրայ, անհետացած չէ տակաւին եւ կացութեան բարելաւման նշաններ ալ չեն երեւար դեռ հորիզո - նին վրայ:

Ամէն բանէ առաջ ներքին եւ արտաքին խաղաղութիւն պէտք է երկրի մը զարգացման համար: Խաղաղութիւնէն կը ծնի վստահու - թիւնը մարդէ մարդ, ազգէ ազգ ու երկրէ երկիր: Ու վստահու - թիւնը կ'առաջնորդէ բարօրութեան:

Պիարիցի համագումարը դիտցաւ գնահատել վայրկեանի լրը - ջութիւնը եւ իր քուէարկած խոհեմ բանաձեւով, գոնէ ժամանակի մը համար, երկրին տուաւ այդ անհրաժեշտ խաղաղութիւնը :

ՀՐԱՆՏ — ՍԱՄՈՒԷԼ

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՍԹԱԼԻՆԻ ՀԻԻԱՆԴՈՒԹԻՒՆԸ ԾԱՆՐԱՑԱԾ

« Մաթէն » կը պնդէ թէ, իր քաղած տեղեկութիւններուն համաձայն, հիւանդ է Սթալին: Բոլշեւիկեան աւանդութիւնը, սակայն, կը սիրէ ծածկել առաջնորդին հիւանդութիւնը, ճիշդ ինչպէս եղաւ Լէնինի հիւանդութեան պարագային: Լէնին խօսելու կարողութիւն իսկ չունէր, բայց իր մարդիկը կառքով զայն կը պտըտցնէին երբեմն Մոսկուայի մէջ, հերքելու համար հի - ւանդութեան մասին տարածուած զրոյցները: Համայնավար կուսակցութեան Քաղաքական Բիւրօն եւս, հիմա, չուզեր որ շարքերը գիտնան Սթալինի հի - ւանդութիւնը՝ երբ տակաւին վերջացած չեն զտումները կամ նշանակուած նոր ղեկավարները վարչական կամ կուսակցական ասպարէզի մէջ: Ահա թէ ինչո՛ւ խնդրած էր վերջերս Սթալինէն, որ ցոյց տայ իր ներկայութիւնը կրեմլի մէջ: Սթալին պատասխանելով այդ «անհրաժեշտութեան», պահ մը վերադարձաւ Կրեմլի պալատը, ստորագրեց Մատրիտ ու Պարսելոնա ղրկուած քանի մը հեռագիր, տեսակցեցաւ ներկայացող պատուիրակութեանց պետե - րուն հետ: Սակայն հիւանդութիւնը աւելի եւս ծանրացաւ:

Սթալին լաւագիտ եւ սիրտի հիւանդութիւն ունի: Նոր տագնապ մը անցուց Կրեմլի մէջ, այնպէս որ ստիպուեցաւ հեռանալ պալատէն: Երկու բժիշկներ , Վորոբեւ ու Սոմով , երկուքն ալ մասնագէտներ սիրտի եւ լեարդի հիւանդու - թեանց , ընկերացան իրեն եւ տարին սանաթորիում մը, որուն տեղը գաղտնի կը պահուի : Այսուհանդերձ որոշ է թէ կը գտնուի Վորոնէժի շրջանին մէջ : Այս ապաքինարանը վերապահուած է Քաղաքական Բիւրոյին անդամներուն, կը գտնուի սոճիներու անտառի մը մէջ: Հեռախօսի եւ հեռագրի մասնաւոր գիծ մը զայն կը կապէ ուղղակի Կրեմլի պալատին:

Եթէ վիճակը չդանդատայ, Սթալին Մոսկուա պիտի վերադառնայ միայն նոյեմբեր 25ին, ներկայ գտնուելու համար խորհուրդներու համագումարին, ուր պիտի քննուի նոր Սահմանադրութիւնը:

Իր բացակայութեան ժամանակ, Վորոշիլով եւ Եժով կը վարեն գործերը ... եւ մաքրագործումը:

ՍԵՐՊ ՎՍՐՋԱՊԵՏԸ ԱՆԳՍՐԱ ԳՆԱՑ

Եուկոսլաւիոյ վարչապետը, Սթոյատինովիչ, որ ճամբայ ելաւ դէպի Թուրքիա, այսօր Անգարա կը հասնի: Սահմանագլուխին վրայ ընդունուեցաւ դինուորական մեծ պատիւներով: Բիւշիւ Արաս, յանուն Թուրք կառավարու - թեան բարիգալուստ մաղթեց: Թէեւ Սթոյատինովիչի այս ճամբորդութիւնը պատրաստուած էր չատ կանուխ, այսուհանդերձ մանաւանդ կարեւորութիւն մը կը ստանայ այս պահուն՝ երբ միջազգային քաղաքական կացութիւնը որոշ մտահոգութիւն կը պատճառէ ամէն երկրի մէջ: Փոքր Համաձայնութեան եւ Պալքանեան Դաշնակցութեան անդամները եւս մեծ չահագրգռութիւն ցոյց կու - տան սերպ վարչապետին այս ճամբորդութեան, որ անշուշտ տեղի չունենար պարզապէս ներկայ ըլլալու համար Թուրքիոյ ազգային հանդիսութեանց : Կ'արժէ յիշեցնել որ Սթոյատինովիչ, այս ճամբորդութիւնը կատարելէ ա - ռաջ, կարեւոր տեսակցութիւններ ունեցաւ նախ Պուկարիոյ վարչապետին՝ Քիօսէիվանոֆի , յետոյ Ռումանիոյ վարչապետին՝ Թաթարէսքոյի հետ :Պէտք արձանագրել նաեւ որ պուլկար վարչապետը դիմաւորելու գացած էր Եուկո - սլաւիոյ վարչապետը երկու երկիրներուն սահմանին վրայ, յետոյ միասին ճամբորդած մինչեւ Սոֆիա: (Ռումանիոյ Թագաւորն ալ այս պահուս կը գըտ - նուի Փրահա) :

**** Անգարայէն կը հեռագրեն Պոլսոյ Թերթերուն թէ Պալքանեան համա - ձայնութեան սպայակոյտերու պետերը մօտերս Ժողով մը պիտի գումարեն Պուքրէշի մէջ, ինչպէս կը հաստատեն նաեւ Աթէնքի Թերթերը: Այդ Ժողովին օրակարգի գլխաւոր նիւթը պիտի կազմեն, կ'ըսուի, Փոքր Համաձայնութեան պաշտպանութեան գործերը: Թուրքիոյ կողմէ Պուքրէշի Ժողովին պիտի մաս - նակցի մարշալ Ճէվդէտ Զաքմաք: Թուրք կառավարութեան անդամները, այս օրերուս, դիչեր ցերեկ նիստ կը գումարեն: Մարշալ Ճէվդէտ Զաքմաք դեռ նոր վերադարձաւ արեւելեան նահանգներէն, ուր գացած էր քննական պտոյտ մը: Նոր վերադարձած է նոյնպէս վարչապետը Զօր.Ջմէլէթ Ինէօնիւ իր քննական ճամբորդութենէն, զոր կատարեց Իզմիրի եւ արեւելեան նահանգ - ներուն մէջ :*

ՍՊԱՆԻԱՑ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌԻՒՆԵՐԸ

Մատրիտի վերջին օրերը

Ապստամբները հետզհետէ կը սեղմեն պաշարման օղակը Մատրիտի չուրջ: Բայ է միայն արեւելեան ճամբան: Ապստամբները երկուշաբթի գրաւե - ցին նաեւ Կուատալաճարան, եւ ելի եւս դժուարացնելով մայրաքաղաքին պա - րէնաւորումը:Զօր.Վարէլա կը յայտարարէ թէ այս շաբթու պիտի մտնէՄատ - րիտի դռներէն ներս: Կառավարութեան անդամները, Լարկո Քապալէրոյէն զատ, բոլորը Պարսելոնա մեկնած են: Մոլային նախարար Փրիէթօ օդանաւով Մատրիտէն Պարսելոնա մեկնեցաւ, այնտեղ տեսակցելէ վերջ Հանրապետու - թեան նախագահին հետ, վերադարձաւ Մատրիտ:

Ապստամբ բանակին վերջնական գրոհը դէպի Մատրիտ տեղի կ'ունենայ այսօր կամ վաղը, ինչպէս կը յայտարարէ Սէվիլլայի ձայնասփիւռը :

**** Պերլինէն կը հաղորդուի, որ Գերմանիա եւ Իտալիա կը խորհին խզել իրենց դիւանագիտական յարաբերութիւնները Մատրիտի հետ, ինչպէս ըրաւ Փորթուկալ :*

Ֆոն Ռիպպրոփի Լոնտոն հասաւ

Լոնտոնի զերման դեսպանը, Ֆոն Ռիպպէնթրոփ, իր պաշտօնատեղին հա - սաւ եւ անգլիացի Թերթերուն յայտարարեց.

— Առաջնորդը համոզուած էր որ Եւրոպայի, բնականաբար նաեւ բրի - տանական կայսրութեան համար իրական միակ վտանգն է բոլշեւիզմին ծաւա - լումը, այս ահաւոր հիւանդութիւնը, որուն զոհերը այն աստէն միայն կը հաս - կնան վտանգին մեծութիւնը, երբ այլեւս չատ ուշ է :

Ահրաժեշտ է որ Անգլիոյ եւ Գերմանիոյ միջեւ ստեղծուի ջերմ գործակ - ցութիւն մը ոչ միայն բոլշեւիկեան վտանգին պատճառով, այլ եւ պաշտպանե - լու համար մեր քաղաքակրթութիւնը, մեր մշակոյթը: Ձիշդ է թէ կարելի չէ չուտով ստեղծել այդ գործակցութիւնը, բայց կը ստեղծուի անպայման, եւ ես պիտի աշխատիմ ատոր համար առաւելագոյն :

ՕՐԸ ՕՐԻՆ

ԽԵՋԵՓԱՌԻ ՄԱՍԻՆ

Մեր դպրոցականները լաւ կը ճանչ - նան այս իմիճատիպ կենդանին,— երբ խաղալ սկսի, ոչ առաջ կ'երթայ, ոչ ալ ետեւ, այլ դէպի ձախ (առանց համայ - նավար ըլլալու), կամ դէպի աջ (ա - ռանց փաշիստ ըլլալու):

Ես այս անասնիկը կը ճանչնամ ի տղայ տիոց, (գրաբարս տեղը գնա՞ց, ո՛վ խստադատ Տարազ): Եգիպտացո - րենը հասունցած շրջանին՝ կ'իջնէինք մեր ձորերը, ոտ֊ոտքերը բոպիկ (ե՞րբ կօշիկ հագած կ'ըլլայինք՝ չեմ յի - շեր), մեր վարտիճին աղը բրջելու աստիճան՝ կը մտնէինք խորունկ ջու - րերուն մէջ, չուչուլիկ - մամա դար - ձած՝ կը ծռէինք վար, մէկիկ - մէկիկ հարերը վեր կ'առնէինք,— բիչ մը կը պղտորէր ջուրը, ու փոքրիկ ամպիճ մէչէն կը տեսնէինք որ կը փախչէր մկրատիկը: Այս անունը կուտայինք մեզ խեչեփառին՝ իր մկրատիճ հա - մար, որով կը խածնէր երբեմն մեր մատները: Երբեմն ալ տաշտիկ(moule) կը ժողվէինք ժայռերուն տակէն: Քիչ յետոյ տաշտիկը կը խաշէինք, մկրա - տիկը կը խորովէինք՝ ճովի արտէն գողցուած եգիպտացորենին հետ: Ես հաց ու միս ուտելու պէս՝ կը ճաշա - կէինք երջանկօրէն, մեր բիթը տնկած գիւղին դէմ:

Ի՞նչ լաւ կը կարմրի մկրատիկը , կրակին մէջ:

Եթէ մեր գիւղացին մկրատիկ կ'ա - ուանէ խեչեփառը, ֆրանսացի ժողո - վուրդն ալ «գոց-բռունցք» (poingclos): Սակայն մեզի անծանօթ է խեչեփառի տեսակ մը, որ 6 ճիլօ կշռելու չափ մեծ կ'ըլլայ,— կը կոչուի tourteau: Այս հրէշ խեչեփառը իրապէ՛ս սար - սուռ ազդելու էր գիտուններուն խիղճ - դը (քանսէր) կը պատկերացնեն խե - չեփառի մը նկարով (արդէն բանէր կը նշանակէ խեչեփառ) ,— այլապէս անվնաս անասնիկ մըն է ան , եւ հա - մով ալ կ'ուտուի :

Իմ նպատակս ձեզի կենդանաբա - նութեան դաս տալ չէ, սակայն: Ոչ ալ սորվեցնել խեչեփառ որսալու մեր ճարպիկութիւնները :

Ժուռնալի մէջ յօդուած մը կարդա - ցի խեչեփառ որսալու ձեւերու մա - սին: Այնտեղ կը յիշատակուէր նաեւ գիտուն մը, (կ'երեւի խեչեփառի մասնագէտ) , որուն ծննդավայրը ցոյց կը տրուէր Նիկօ - Թլազեց, եւ գրողը կ'ըսէր թէ այս բաղաբը կը գտնուի··· Հայաստանի մէջ:

Ես, ուրիշ առթիւ մը, իմ զարմանքս յայտնած եմ այստեղ, փռանսե - րէն թերթի մը մէջ կարդալով որ Իշ - խանաց կղզիները կը գտնուին··· Սեւ ծովուն մէջ:

Եւ հիմա կը հարցնեմ ինքզինքիս··— Մէ՞նք եմք խեչեփառը, որ կ'աշխա - տինք ուղեղ հնչել օտար անուններ, շիտակ տեղեկութիւն տալ օրուան դէպքերուն եւ աշխըրհիքի բաներուն մասին.

Թէ սա եւրոպացի լրագրողները, ո - րոնք կը կարծեն թէ ինչ որ օտար բան է կամ անուն, կարելի է գրել ձախէն աջ կամ աջէն ձախ, բայց երբեմ շի - տակ գրելու ճիգով մը:

Կը ցաւիմ որ մեր խմբագրապետը փոթորիկ կը հանէ, երբ Հայկազանց լեզուին մէկ բառին տառիկը հեռուն է ինկեր, ձախ կամ աջ, կամ ծուռ է ին - կեր, կռնակի վրայ կամ կուշտի :

Ի՞նչ կ'ըլլայ, այդիսի մըն ալ խե - չեփառութիւն մեզի ընենք,— երբ աշ - խարհիս, մանաւանդ մեծն Եւրոպայի մէջ, ճիշդ ու ճիշդ խեչեփառի պէս՝ ծուռ կը բալեն ոչ միայն լրագրողնե - րը, այլ եւ նոյնիսկ բաղաքագէտները, բաղաքակրթութեան ախոյեանները՞ը , սարօֆն հանդերձ :

ԱՐԱԶ

«Ռէխ իշխանութեան գլուխ ուխիեն»

Լէոն Տլկրէյ, որուն համախմբումի փորձը ձախողեցաւ Պրիւսէլի մէջ, անգլիական Թերթի մը Թղթակցին կը յայտարարէ թէ չուտով պիտի կազմա - կերպէ նոր համախմբում մը, 250,000 բազմութիւն նետելով մայրաքաղաքին հրապարակներուն վրայ:

— Ոստիկանները, չարունակեց Ռէքսի առաջնորդը, որոնք ձերբակալե - ցին զիս, համակիր են ռէքսեան չարժումին: Երբ այդ համակրանքը կը վա - րակէ երիտասարդապահմութիւններէն սկսեալ մինչեւ ոստիկանութիւնը,զարմա - նալու չէ եթէ ըսեմ որ վեց ամիս վերջ Ռէքս պիտի անցնի իշխանութեանգլուխ եւ ես ինքս պիտի հրամայեմ պետ ոստիկանական ու զինուորական ուժերուն:

Իմ կուսակցութիւնս կը հաշուէ 800,000 անդամ , որով կը գառնայ ամէնէն զօրաւոր կուսակցութիւնը Պելժիոյ մէջ: Մենք ֆաչական չենք , այլ պելժ ազ - գայնականներ: Գալ կիրակի հաւաքոյթ մը ունինք Անվէրսի մէջ, այնտեղ կը տեսնէք թէ ժողովրդական համակրանք կը վայելո՞նք թէ ոչ: Համայնավարնե - րը Պելժիոյ մէջ կը կազմեն խղճալի քանակ մը, որ կը ծառայէ միայն զրգռու - թիւն սերմանելու: Մենք ուրախ ենք որ կը քարոզենք նոյն այն սկզբունքները, ինչ որ Լէոփոլտ Թագաւորը: Մեր իսկ մտածումները տեսանք իր վերջին ճա - ռին մէջ, երբ կը խօսէր Պելժիոյ մեկուսի քաղաքականութեան եւ սպառազի - նութեան անհրաժեշտութեան մասին, պատրաստ դիմադրելու արտաքին որ եւ է յարձակման, ո՛ր կողմէն ալ զայ :

Կացութիւնը Սուրիոյ մէջ

Հալէպէն ստացուած նամակ մը (16 հոկտեմբեր) կը տեղեկանանք թէ միտքերու զրգռութիւնը փարատած չէ տակաւին: Իսլամ Թաղերու մէջ աչխա - տող քրիստոնեայ խանութպաններէն չեն համարձակիր բանալ իրենց խանութ - ները: Հակասական եւ մութ լուրեր չրջան կ'ընեն բերնէ բերան: Կիրակի օր - ուան դէպքին ընթացքին վիրաւորուածներէն Հայ մը, Դանիէլ Սարգսեան, ինչպէս նաեւ տեղացի երկու քրիստոնեաներ, մեռան: Հայկական Թաղերու մէջ, դէպքէն ասդին, միս չի ծախուիր, որովհետեւ մսավաճառները կը վախ - նան երթալ մինչեւ Մասլախ:

Պատասխանատուները «ձերմակ Շապիկաւորներն են, սակայն գրգռիչ լուրերը, զորս դիտմամբ կը տարածեն, վախի մէջ ձգած են Հայերս: Երեք - շաբթի օր լուր տարածուեցաւ Նոր Գիւղի մէջ թէ մահմետական Արաբները պիտի յարձակին Հայոց վրայ: Նոր Գիւղի ոստիկանութիւնն իսկ խաբուեցաւ պահ մը եւ միջոցներ ձեռք առաւ: Միւս կողմէ լուր տարածեցին Ադ - եոլի մահմետական բնակչութեան մէջ թէ Հայերը պիտի յարձակինիսլամներուննե - րայ: Բոլոր այս լուրերը, դիտմամբ տարածուած , կը պատրաստուին թշնա - մի պետութեան մը գործակալներուն կողմէ (ՄՄՔ.— Ակնարկը Թուրքիոյ մասին է) :

Կիւրինցիները , դէպքին ազդեցութեան տակ, ձգած են իրենց տունն ու տեղը եւ ապաստանած՝ քրիստոնեայ Թաղերը: Կիրակիի դէպքէն զատ նոր պատահարներ ուժ կուտան մեր վախերուն: Գաղտնի անունով Հայ մը, Հա - լէպէն քիչ հեռու Գարլըխի մէջ կը կողոպտուի ու կը խոշտանգուի: Ոստիկա - նութիւնը չորեքշաբթի խուզարկեց «ձերմակ Շապիկաւոր»ներու կեդրոնատե - ղին, կարեւոր փաստաթուղթեր գտաւ, զէնքեր եւ նշաններ: Ձերբակալեց 20 հոգի: Ցարդ ձերբակալուած են 30 «ձերմակ Շապիկաւոր»ներ, որոնց մէջ 2

(ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԴԱԼ Դ. ԷՋ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅՑԸ, ՐԱՖՖԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ

ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ

ՀԱՅՑԱՍՊԱՐԱԿԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԸ

Հայցասպարակային կոմիտեի նիստում քննարկվեց հետևյալ հարցը՝

Հայցասպարակային կոմիտեի նախագահ ընկ. Ա. Ղազարյանի զեկուցումը՝ «Հայցասպարակային կոմիտեի գործունեության մասին»։

Զեկուցումից հետո ելույթ ունեցան ընկ. Ա. Ղազարյանը, ընկ. Ս. Մելիքյանը,

ՎԵՊ ՊԱՏՏԱԿԱԾ ԼՐՏԱՎԱՃԱՌ

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ամառ էր։ Ես ու Գրիգորը ճամբա էինք ելել Ղարաքիլիսայից դեպի Ալեքսանդրապոլ։ Ճանապարհին մեզ հանդիպեցավ մի ծեր հայր, որ ուզում էր գնալ Ղարաքիլիսա։ Ես ու Գրիգորը նրան առանց կանգնելու անցանք։ Ծերը մեզ կանչեց, որ կանգնենք։ Մենք կանգնեցինք։ Ծերը մոտեցավ մեզ ու ասաց.

— Ես ձեզ ճանաչում եմ, որդիներ, դուք Ղարաքիլիսայի տղերքն եք։ Ես ձեզ ճանաչում եմ, որովհետև ես էլ Ղարաքիլիսայից եմ։ Ես ձեզ խնդրում եմ, որ ինձ էլ տանեք Ղարաքիլիսա։

Ես ասացի.

— Հայր, մենք ձիով ենք եկել, ինչպե՞ս քեզ էլ տանենք։

Ծերը ասաց.

— Ես ձեզ հետ կգամ, ձիերը ձեզ համար կքաշեմ։

Ես ասացի.

— Հայր, ես ձիավոր չեմ, ինչպե՞ս կքաշեմ։

Ծերը ասաց.

— Ես ձեզ կսովորեցնեմ։

Ես ասացի.

— Հայր, ես ժամանակ չունեմ, որ սովորեմ։

Ծերը ասաց.

— Ես ձեզ կսովորեցնեմ, ես ձեզ կսովորեցնեմ։

Ես ասացի.

— Հայր, ես ձիավոր չեմ, ինչպե՞ս կքաշ

Հայ :

Տեղական թերթերը գովեստով խօսեցան Հայոց բռնած դիրքին մասին, միայն « Էլ- Շէպապ» թերթն էր որ յարձակեցաւ Հայոց վրայ, գրելով թէ բազմաթիւ Իսլամներ դաշնակահարուած են Հայոց կողմէ :

**** Կայէնի քրքիջով մը, Թուրքը կ'ուզէ խուճապ ստեղծել տակաւին : Ահա թէ ինչ կը հեռագրեն Պոլսոյ Թուրք թերթերուն, Քիլիսէն.—*

ԱՐԱՒ ԵՒ ՀԱՑ ՆՈՐ ԸՆԴՀԱՐՈՒՄԻ ՎԱԽ

ՔԻԼԻՍ, 21 (Թ.).— *Հալէպի մէջ մեծ ջղայնութիւն կը տիրէ եւ վախ կայ որ նոր ընդհարումներ կը ծագին Արաբներու եւ Հայերու միջեւ : Հայ երեւելիները գրեթէ ամբողջովին մեկնած են Հալէպէն : Ներկայիս կ'աշխատին զինել Արաբներու թշնամութիւնը Հայերուն հանդէպ : Կը կարծուի թէ այս անգամ - ուան ընդհարումը աւելի ահաւոր պիտի ըլլայ : Այս առթիւ բուռն վիճաբա - նութիւններ սկսած են արաբական մամուլին մէջ : Թերթերը կ'ըսեն թէ Ֆրան - սացի Ֆաշականները գաղտնի դեր մը կատարած են տեղի ունեցած ընդհարման մէջ, դրամ ծախսելով :*

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

«ԳՈՑԱՄԱՐՏ» ՕՐԱՑՈՑՑ, Ը. ՏԱՐԻ 1937

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱՐՍԷՅԼԻ Հ. Ց. Դ. ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԿԸ ԾԱՆՈՒՑԱՆԻ՝ Մարսէյլ Միութեանս Գրադարան-Ընթերցարանը, 5 Rue de l'Eclipse, *Միութեանս բոլոր անգամներուն եւ հետեւեալ հաս - ցէներուն քով.—*

Ապսպրանքներու համար դիմել՝ G. Djarayan, *5* Rue de l'Eclipse, Marseille
Մարսէյլ, *Ն. Գակոսեան*, 49 Rue Nationale
Փարիզ, *Հրանտ Սամուէլ*, 51 Rue Mr. le Prince (6)
Տեսին եւ Լիոն, *Վ. Հիւսեան*, 3 Rue Tellier, Décines, Isère
Վալանս, *Ղ. Գալուստեան*, 58 Rue Bouffier, Valence, Drôme
Սեն'Էթիէն, *Վ. Յորիմեան*, 34 Rue des Frères Chape. St. Etienne
Վիէն, *Ն. Խաչիկեան*, 124 Rue Lafayette, Vienne, Isère
Նիս, *Գ. Շէհրէրեան*, 55 Bd. de la Madeleine, Nice. A. M.
Կարաճ, *Լ. Գայաճանեան*, Puits Bivert
Ալժէրի, *Պ. Արզումանեան*, Hôtel Atlas, Blida, Algérie
Պորտօ, *Ա. Քէնտէրեան*, Rue Ed. Vaillant, Cenon, Gironde
Պէյրութ, *Ս. Ազնաւորեան գրատուն*, Bab Yacoub, Beyrouth
Ապատան, *Ս. Աբգարեան*, P. O. Box 22, Abadan, Iran
Շամ, *Ա. Լօչխաճեան*, Hart. Djanvar, 32 Bay Charky, Damas
Գանատա, *Ա. Սիրունեան*
Պաղտատ, *Տք. Գ. Կարապետեան*, Surgeon-Deutist, Bagdad
Կըրնոպլ, *Տիգրան Ալիքեան*, 9 Ave Giers
Պասրա, *Յակ. Ծնունգեան*, Seef st. Basrah, Irak
Պէյրութ, *Ա. Հօրիմեան*, Photo Mourad, Rue Gouraud
Փօճ տ'Օպճա, *Ա. Կարապետեան*, Chez M. Chaberte
Շարվիէօ, *Ստ. Թիւրքմէնեան*, B. H. 84 Charvieu
Հալէպ, *Խ. Քրքէսլէեան*, 22 Rue Boustan Kulab, Alep, Syrie
Ամերիկա, *Պ. Պալեան*, 119 P. O. Box, Milford, Mass.
Լա Սիօթա, *Ս. Սարգիսեան*, 2 Rue Foces, La Ciotat
Թեհրան, Journal «Alik» Téhéran Ave. Postkhaneh
Թուլուզ, *Ղ. Մարկոսեան*, 36 Pl Lucas, Toulouse, *H. G.*
Ապթ, *Թ. Պաղտասարեան*, 11 Pl. des 4 Poulies, Apt Vaucluse
Ռոմանս, *Ս. Պիլալի*, 5 Rue Puy, Romans
Բօնքեմ, *Մատոյեան*, Usines Berles Carrelage
Ժերս, *Խ. Թորոսեան*: Բիւժէ Սու Ալժան, *Մանասէլեան*: Կրաս, *Գրիգորեան*
Aix, *Գ. Աւետիսեան*, 3 Rue Emerie-David:

Նաեւ Մարսէյլի եւ արուարձաններու դաշնակցական Ակումբները եւ բոլոր դաշնակցական Թերթերու խմբագրատունները:

Բացման հանդէս

«Հայ Արծիւ» (l'Aigle d'Arménie) Ակումբի վարչութիւնը կը ծանուցանէ թէ՝ նորակազմ Ակումբի բացման հանդէսը տեղի պիտի ունենայ *1* Նոյ. կէսօրէ վերջ ժամը 2.30ին,

7, Salle Tublerի մէջ, *19* rue de la Pompe, փարիզ

ցերեկոյթի պատշաճ զգեստ պարտաւորիչ է. ի հարկին գոց գոյն զգեստ կրել ընդունելի է: Ատանց հրաւիրագրի մուտքը արտօնուած չէ: Շիւրասիրութիւն առանց դրամի:

Վարչութիւն «Հայ Արծիւ» Ակումբի *14* rue Meyerbeer, Blanc-Mesnil (*S. et O.*)

ՖՐԱՆՍԱՀԱՅ Կ. ԽԱՉԻ Փարիզի մասնաճիւղի պարգեւախաղէն չհան եղ հետեւեալ թիւերը.—

1060, 32, 129, 9643, 217, 329, 485, 811, 875, 104, 466, 813, 147, 269, 42, 830, 910, 511, 867, 528, 1050, 22, 1069, 660, 462, 520, 985, 486, 754, 242, 31, 844, 1053, 558, 490, 472, 352, 105, 610, 38, 973, 862, 152, 495, 26, 1052, 940, 943, 867, 601:

Շահողները կը խնդրուի վերջին անգամ ըլլալով, մինչեւ Նոյեմբեր 30, դիմել Օր. Պետրոսեանի, 6, Rue de Trétaigne, Paris (18), առանալու համար իրերը:

Վերոյիշեալ Թուահանդէն յետոյ, դիմումները նկատի չեն առնուիր :

Մասնաճիւղի վարչութիւն

Հ. Ց. Դ.

Փարիզ

ԱՆԻԷՒ-ՊՈՒԱ-ՖՈԼՈՆՊԻ «Արամ» ենթակոմիտէի ընդհ. ժողովը, վաղը Երկուշաբթի երեկոյ ժամը 9ին, սովորական հաւաքատեղին: կարեւոր օրակարգ:

Գաւառ

ԼԻՈՆԻ «Վարանդեան» կոմիտէն ընդհանուր ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները, *30* Հոկտ. ուրբաթ երեկոյ ժամը *8.30*ին, *181* Cours Lafayette, «Զարդալեան» գրադարանին մէջ: Բոլոր ընկերներու ներկայութիւնը պարտաւորիչ է:

ՄԱՐՍԷՅԼԻ Ռոստոմ ենթակոմիտէի եւ հրիստափոր խումբի ընկերական ընդհ. ժողովը *29* Հոկտ. Երկուշաբթի երեկոյ ժամը *8.30*ին, շահիրիկեան սրահին մէջ, 5 rue de l'Eclipse: Ներկայ ըլլալ անդամատետրով: կարեւոր օրակարգ:

ՑԵՐԵԿՈՑԹ_ԵՐԵԿՈՑԹ_ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

կազմակերպուած

Փարիզի Հար. Շրջանի Ցառաջդիմասիրաց Միութեան կողմէ

Ի ՆՊԱՍՏ ԻՐ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

15 Նոյ. *կիրակի ժամը 4էն մինչեւ կէս գիշեր:*

150 Route d'Orléans, Bagneux

Աշակերտութեան կողմէ երգեր, արտասանութիւն:

Կը ներկայացուի առաջին անգամ ըլլալով

ԿԱՐԵՒՈՐ ԺՈՂՈՎ ՄԸ (կատակերգութիւն մէկ արար)

ԹԱՌ եւ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՆՈՒԱԳԱԽԱՒԻՒՄԲ Ա.ԹԱՆ ՊԻՒՖԷ

Գին 3 ֆրանք:

ԲՌՆՈՒԱԾ ՕՐԵՐ

Ֆրանսահայ Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղը կազմակերպած է

Պարահանդէս

6 Դեկտ. կիրակի կէսօրէ վերջ ժամը 4—12

Salle Victor Hugo, 46bis rue St. Didier

«Պտուղի Օր»

Դեկտ. 27ին, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2—12

Ռուսական եկեղեցւոյ սրահին մէջ, 26 Ave. de Tokio

Կը խնդրուի նկատի առնել այդ Թուականները չխանգարելու համար:

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՃԸՐ

Ճաշարան Ֆ Լ Օ Ր Ի Ա

61, Rue Monsieur le Prince, Paris (6)

Մէթրօ՝ Օտէօն եւ Սէն Միշէլ Հեռաձայն Danton : 52 . 73

Արեւելեան Եւ Եւրոպական խնամուած կերակուրներ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսահայ Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղին հայերէնի եւ հայոց պատմութեան դասընթացքը կը վերաբացուի *5* Նոյ. Հինգշաբթի առաւօտ ժամը *9*ին, Maison Mutualité, 24 rue St. Victor: Նախօրօք արձանագրուիլ հետեւեալ հասցէին. Օր. Դրլեճեան, 5 rue Mayran, Փարիզ. Հեռաձայն՝ *46-52*: Այս տարի աշակերտներէն կը գանձուի 4 Ֆր. ամիսը, ծախքերու համար: Ընտանիքի մը մէկէ աւելի երախաներու համար վճարաւոր զեղչ: Դասերը տեղի կ'ունենան ամէն հինգշաբթի առաւօտեան ժամը *9—12*:

ՀԱՍՑԷԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Տքթ. Ալլահվէրտի Որդի փոխադրուած է՝ **27 Ave. de Versaill s, Paris** (*16*), **Tél. Jasmin 45—19**

ՀԱՍՑԷԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

O. M. Ohanessian, Patisserie Orientale, 4 Rue de la Pavillon, Paris (20)

Փոխադրուած է՝

44 Ave. de la Porte du Pré-St-Gervais, Paris (19):

ՑՈՒՇԱՏԵՏՐ

Ց. Ռ. ՄԻՈՒԹԵԱՆ Պալանսի Մասնաճիւղի անդամական ընդհ. ժողովը *29* Հոկտ. հինգշաբթի երեկոյ ժամը *8*ին, սովորական հաւաքատեղին: Խիստ կարեւոր օրակարգ: Բոլոր անդամներու ներկայութիւնը պարտաւորիչ է: Ներկայանալ անդամատետրով:

ՇԱՐԺԱՆԿԱՐ

Շետաքրքրական պատկերները Այս երեկոյ ժամը ճիշտ 9ին,

5 rue de l'Eclipse,

Մարսէյլի «Շահրիկեան» սրահին մէջ:

Կը գանձուի մեծերէն 1 ֆրանք փոքրերէն 50 սանթիմ:

ԳԱՑԷՔ ՏԵՍԷՔ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Cinéma REXY

Rue Cours Lafayette, angle Garibaldi.

ԳԱՑԷՔ ՏԵՍԷՔ

CIGALE CINÉMA

60 Avenue de Saxe-LYON.

(L'lle de Beauté)

ՄՈՆՄԱՐԹՐԻ ԱՄԷՆԷՆ ԸՆՏԻՐ
ԱՐԵՒԵԼԱ-ՖՐԱՆՍԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆԸ

90 Bld. de la Chapelle, Paris (18)

R. C. S. 670-643 Հեռաձայն՝ **Mont.** 62-04

Մէթրօ՝ Պարպէս, կառ. տիւ Նօռ, Լա Շափէլ

(Լառիպուազիէռ հիւանդանոցի մայրանոցի բաժինին դիմաց)

Կախարդական շրջանակի մը մէջ, որ աւելի եւս հաճելի գարձած է որմանկարներով, գ'ուած՝ հայ տաղանդաւոր նկարիչի մը վրձինով, ինչպէս նաեւ սարսափայով (փէրկոլա), լուսազարդուածիններով, ուր կրնաք խմել, ճիշդ ինչպէս Վոսփորի ափերուն վրայ, լաւագոյն օրին՝ ընտիր ֆրանսական եւ արեւելեան այլազան ազանդներով, ճաշակել ոստրէ եւ խեցգետին, համտեսել ընտանեկան լաւագոյն ճաշերը, անարատ թարմ կարագով,— այս ամէնուն համար չափաւոր գին մը, որ կրնայ մրցիլ բոլոր ճաշարաններուն հետ: Բանջարակերներու յատուկ ճաշը 4 ֆր. 50: Միասով, ըմպելիով ճաշը 7 ֆր. 50: Պատրաստ ճաշ ամէն ժամու,—շուքրութ Ալզասեան յատկութեամբ, սոխի ապուր եւ սաւշուիկ (մուլ): Ճաշարանը բաց է մինչեւ Իր գիշերուան:

ԿԱՊՈՑՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ռուսաստանի մէջ գտնուած ձեր ազգականներուն եւ բարեկամներուն *յաւագոյն եւ իրական օժանդակութեան ձեւն է՝ ղրկել անոնց կապոցներով բրդեղէն կտորներ, ճերմակեղէն, կօշիկներ և Թրիքօճաժ:*

Այս բոլոր իրեղէններէն մենք ունինք ճոխ մթերք եւ կ'ուղարկենք զանոնք Ռուսաստան շատ ձեռնտու եւ մատչելի գիներով:

Ունինք սրաժադրելի ընտրութիւն եւ ըմպինկոմն գրաժեքներ, ինչպէս նաեւ դաշնակներ շատ մատչելի գիներով:

Գիներու ցանկը եւ նժոյգները կը ղրկուին առաջին իսկ պահանջին

Դիմել՝ American Lloyd, Paris (9), 7 rue Auber

Tél. Opéra 67-77, 67-78

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ, ԲԱՑՈՒԱԾ Է

ԹՈՐԳՈՄ ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ

Fournitures pour tailleursի ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

43 Rue Richer, Paris (9), *մէթրօ* **Cadet**

Գերձակներու եւ Գերձակուհիներու վերաբերեալ ամէն տեսակ

պիտոյքներու վաճառում,

ՄԵԾԱԾԱՆԱԿ ԵՒ ՓՈՔՐԱԾԱՆԱԿ

ԱՐՔԱՅԱԱՆ ԽՄԻՋՔ

ՐԱՔԻ ՏԻՒԶ

ո խադդէ քաշուած եւ անիսոնով պատրաստուած օղին է ՐԱՔԻ ՏԻՒԶԸ:

Զգուշացէք այլ եւ այլ նիւթերով պատրաստուած եւ ձեր կեանքին վնասակար օգիները խմելէ, այլ խմեցէք միմիայն ՐԱՔԻ ՏԻՒԶԸ, որուն անարատ, կազդուրիչ եւ ախորժաբեր ըլլալը հաստատուած է գնահատուած է:

UN·DUZE
MARQUE DÉPOSÉE
RAKI
40°
DUZE
Véritable Anisette Orientale
DISTILLERIE OTTOMANE ISTANBOUL

Ֆրանսայի հաւար արտօնատէր՝ Ա. ՏԱԼԱՓԻԼԵԱՆ

8 rue Suffren, Marseille— Tél. D. 70-89

Le Gérant: H. STEPHAN

Imprimerie A. DER (AGOPIAN) 17, Rue Damesme, PARIS (13)

ՁԱՐԹՕՆՔ

(ՎԷՊ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵԱՆՔԷ)

— o —

Դուռը անմիջապէս բացուեցաւ կիսովին ու մարդ մը դիշերանոցով մէկդի քաշուեցաւ, ճամբայ տալով երկու ընկերներուն : Ինչպէս կ'երեւէր, Վահէն լաւ ծանօթ էր տան : Առանց սպասելու առաջ անցաւ Վարդանի հետ, դէպի ձախ ծռեցաւ դրան առջեւ բացուող նեղ բակէ մը ու մտաւ սալայատակուած ընդարձակ երեսպաշ բակ մը, որու մէկ կողմը կ'երեւէր պարտէզի մը կանանչութիւնը :

— Լաւ վախցուցիր դիս,— մանկական անհոգութեամբ սկսաւ ծիծաղիլ տանտէրը՝ տեղաւորուելով տան ներսի սենեակի մէջ դրուած թախթի վրայ, որու վրայ փռուած էր անկողինը :

— Ի՞նչ կայ որ,—նոյնպէս ծիծաղելով հարցուց Վահէն,— նոր բա՞ն մը :

— Այս քանի օրս մոծակները (ոսոխիկանական լրտեսները) շատ են . չորս օր առաջ յանկարծ դիշերով թափեցան ներս, խուզարկութեան համար : Բարեբախտաբար, մաքրած էի բայց տեղը շատ լեցուած է, Վահէ, պէտք է ճար մը մտածել.... Միւս կողմէն ալ անընդհատ կը հասնի Ա - պարանով :

Առանց խօսքի խառնուելու, Վարդանը, թախթի ծայրը նստած, հետաքրքրութեամբ կը դիտէր տանտէրը, որուն առաջին անգամն էր որ կը հանդիպէր : Բարձրահասակ, շատ տպաւորիչ դէմքով երիտասարդ մըն էր տանտէրը. թաւ յօնքերու տակ պարմանալի գրաւիչ ու խոհուն աչքեր, որոնք առաջին իսկ վայրկեանէն անպայման վստահութիւն կը ներշնչէին դիմացինին : Լեցուն, թաւչային ձայն մը ունէր ու մտերմիկ հաղորդական չեչո մը :

— Վահէ, պէտք է ճար մը մտածել, — չարունակեց տանտէրը,— ինչպէս կ'երեւի Արաքսի ափին գործերը դանդաղ կ'երթան : Հոս ալ, չարժուելու տեղ չմնաց : Բերնէ բերան լեցուած է տեղը...

— Այդ մասին յետոյ կը խօսինք, Գալուստ : Գրած եմ Զոփուրին, որ մէկ երկու օրով հոս հանդիպի : Այն ժամանակ կը կարգադրենք... Դու մէկ հարցուր թէ ինչո՞ւ համար եկած եմ գիշերով...

Գալուստը, առանց պատասխանելու, երկմտօրէն նայեցաւ Վարդանին ու հարցական հայեացքը ուղղեց Վահէին :

— Ախ, ներէ որ չծանօթացուցի,— ընկերոջ միտքը հասկնալով՝ Վահէն աճապարեց ներկայացնել Վարդանը, — այս այն երիտասարդն է, որ Քաջալի գործին մէջ... Այո, ճիշդ այն Էրիտասարդը, որու մասին խօսած եմ քեզ...

Տանտէրը ջերմօրէն սեղմեց Վարդանի ձեռքը : Ինչպէս չէ, շատ լաւ կը յիշէր Քաջալի փախուստի պատմութիւնը ու Վահէի ոգեւորութիւնը հսկայ ժանտարմը զգետնող պատանիի մասին :

— Տէ, հիմա պատմէ՝ տեսնենք,— դարձաւ Գալուստը Վահէին, — հիմա պատմէ՝ տեսնենք, թէ ինչո՞ւ կէս գիշերով նորէն մէջտեղ բուսար ... Տնաքանդ, բոշայի նման ես, ամէն գալուդ կամ աղէտ պակաս կը լինի կամ մադղ ...

— Նախ՝ ան ըսէ, Գալուստ, Առիւծ Գեւօն ո՞ւր է ...

— Երկար պատմութիւն է...

— Երկու խօսքով :

— Կ'երեւի, չես լսած : Զարտախ - լուի Հարթեցող Տէր Գարեգին քահանան, ոչ միայն կառավարական յանձնախումբը սիրով ընդունած է իր տան մէջ, ոչ միայն բացած է եկեղեցին անոնց առջեւ ու ատորագրած հաչիւնեբը եւ թղթերը՝ հակառակ գեղականի բուռն բողոքներուն, այլեւ բռնութեամբ ատորագրել տուած է երէցփոխին՝ սպառնալով Սիպիր քշել տալ զայն, եթէ ընդդիմանայ : Երէցփոխը չատ ծեր ու խեղճ մարդ մը, խուճապի մատնուած, կաչին ազատելու համար ստորագրած է յանձնումի թուղթը : Ամբողջ շրջանի գիւղերը սաստիկ զայրացած են :

Հարիւրաւոր ստորագրութիւններով բողոքագիր մը ուղարկած էին թեմական Առաջնորդին՝ պահանջելով որ կարգադրէ ընէ անարժան քահանան : Առաջնորդն ալ, կը տատամսի պատժել կառավարութենէն պաշտպանուած այդ քահանան : Մտիպուած Առիւծ Գեւօն ուղարկեցինք Զարտախլուլ : Մեր խելօք Դաւիթը, փոխանակ առանց աղմուկի գործը վերջացնելու, օրը ցերեկով վերջ կուտայ Թշուառական քահանայի կեանքին : Դեռ մինչեւ հիմա լուր մը չունինք Գեւոյէն :

Գիտենք միայն, որ ապահով տեղ մըն է, թէեւ կառավարութիւնը շրջակայ գիւղերը տակն ու վրայ ըրաւ պայն ձերբակալելու համար : Անպիտանը կ'երեւի տաքուկ անկիւն մը գտեր է : Զարտախլուլի գինին նշանաւոր է, գիւղացիներն ալ՝ հիւրասէր, իսկ մեր Գեւօն ալ քիչ մը շատ կը սիրէ կոնծել ...

— Ախսոս, հիմա մեզի օգտակար կը լինէր, անկախ ու փորձառու մարդ մըն է ...

— Թէեւ քիչ մը չատախօս եւ սարսափելի փչող,— ծիծաղելով աւելցուց Գալուստը :

— Անվնաս տեսակի ստախօս մը սակայն : Նկատե՞ր ես, որ երբեք ըրածներու մասին բերանը չի բանար ... կը սիրէ հասարակութենէն չրջապատուիլ, չըրած եւ չտեսած բաները պատմել, չուրջիններու զարմացկոտ դէմքերով հրճուիլ... Ախսոս որ հիմա հոս չէ ... սպասելու ալ ժամանակ չունինք :

Գալուստը, որ անկողնին մէջ երկնցած մտիկ կ'ընէր Վահէին, չկրնացաւ ու հարցական նայեցաւ անոր անշուշտ Վահէն նորութիւն մը ունէր ըսելիք :

— Մեր տղայ, լեզուիդ տակը բան մը ունիս նորէն, ի զուր չէ որ բռնես. տէ, չուտ դուրս տուր տեսնենք...

Վահէն չատ հակիրճ պատմեց այդ օրը Փարաքարի մէջ պատահած դէպքը, ժողովուրդի յուսաբեկումը, Սարգիս Աւրօր անյոյս վիճակը :

(Շար.) ՄԱԻԽԱՆ

ՀԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԱԿՈՒՄԲ

Ցառաջիկայ դասախօսութիւնը տեղի կ'ունենայ այս հինգշաբթի ժամը 21ին, Մօսիէմէ Մովանքի մէջ, 28 rue Serpente, Odéon.

Դասախօս՝ Պ. ՅՈՒՆԴԿԱՐԵՆ

Նիւթ՝ Հայ գրականութիւն: Ցարեշրջանի բացման դասախօսութիւն:

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

EE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)
Téléphone : Glacière 15 - 70
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,— ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԱՄՍԵԱՑ ԵՒ ԱՄՍԵԱՑ

Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա	250 »	130 ֆրանք	—
Ամերիկա եւ ուրիշ երկիրներ	200 »	100 ֆրանք	—

ՀԻՆԳՇԱԲԹԻ 29 ՀՈԿՏԵՄԲԵՐ JEUDI 29 OCTOBRE 1936

ԺԲ ՏԱՐԻ — 12e Année No. 3256

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՐԻՑ ԻՍՕՒԱԾ

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ

Օրուան քաղաքական թոհուբոհին մէջ, խիստ կարեւոր դէպք մըն էր Իտալիոյ արտաքին գործերու նախարարին Գերմանիա այցելութիւնը:

Այս ճամբորդութիւնը անակնկալ մը չէր: Երկար ամիսներէ ի վեր Պերլինի եւ Հռոմի միջեւ բուռն թափով մը առաջ տարուած դիւանագիտական բանակցութիւնները դեռնէ պատրաստած էին արդէն այս պաշտօնական հանդիպումին համար: Կոմս Ձիանօ իր այցելութիւնով նուիրագործած եղաւ քաղաքական գործակցութեան այն դիմաւոր կէտերը, որոնց շուրջ համաձայնած էին նա – խապէս :

Սովորութիւն է, որ նման հանդիպումներու առթիւ կատարուած պաշտօնական ընդունելութեանց կը հրաւիրուին օտար պետութեանց դիւանագիտական ներկայացուցիչները: Սակայն Պերլինի մէջ ի պատիւ կոմս Ձիանոյի արուած հացկերոյթներուն ոչ մէկ օտար դեսպան հրաւիրուեցաւ: Այս պարագան խոր տպաւորութիւն թողած է մանաւանդ այն պետութեանց վրայ, որոնք բացարձակապէս դժգոհ են գերմանեւիտալական մերձեցումէն:

Իսկ դիտելի էր նաեւ որ գերման թերթերը խիստ վերապահ գտնուեցան եւ այս կարեւոր այցելութեան մասին չատ աննշան լուրեր միայն հրատարակեցին: Նոյնպէս Պէրխթէսկատէնի մէջ Հիթլերի հետ իր 2 ժամուան տեսակցութեան միջոցին մասնաւոր խնամք տարուեցաւ որ ոչ մէկ լրագրող մօտենայ: Ամէն բան գաղտնի պահելու ակներեւ ձգտում մը կար:

Հակառակ այս զգուշաւորութեան, կոմս Ձիանոյի պաշտօնական զեկոյցը եւ իրարդի տրբերակներէ առնուած տեղեկութիւնները կը հաստատեն թէ, իտալեւգերման գործակցութիւնը ապահովուած է զանազան ճակատներու վրայ:

Նախ՝ գերման կառավարութիւնը պաշտօնապէս կը ճանչնայ Եթովպիոյ կցումը Իտալիոյ կողմէ: Գերմանիա անգամ չըլլալով Ազգերու Դաշնակցութեան, չէր մասնակցած Իտալիոյ դէմ ժրնեւի մէջ ձեռք առնուած պատժական միջոցներուն: Ուստի եւ այս ճանչնումը քաղաքական տեսակէտով ո եւ է անպատեհ դիրք մը չի ստեղծեր իրենց համար: Անցեալ յուլիսին, երբ Գերմանիա ետ կանչեց Աւստրիա - Ապէպային իր դիւանագիտական ներկայացուցիչը, նախաքայլը առած էր իտալական կայսրութեան ճանչումին:

Երկրորդ, Իտալիա եւ Գերմանիա կը համաձայնին քաղաքական նոյն ուղեգիծին հետեւիլ՝ Լոքառնոյի դաշինքին վերաքննութեան առեն: Արեւմտեան Եւրոպայի մէջ խաղաղութիւնը պահպանելու համար նոր երաշխիքներ ու ապահովութիւններ պիտի տան: Բայց ամէն դնով պիտի հակառակին կնքուելիք նոր դաշինքին մասնակից ընել տալ Խորհրդային Միութիւնը: Այս կէտին վրայ գերմանեւիտալական թէզը ուժգնօրէն կը բախի Ֆրանսա - կանին հետ: Ֆրանքեւխորհրդային դաշնագիրը որ մղձաւանջ մը դարձած է Գերմանիոյ համար, այժմ նոր հակառակորդ մը եւս պիտի ունենայ յանձին Իտալիոյ: Պէտք չէ մոռնալ այս առթիւ նաեւ Պելճիքան, որ գլխաւորաբար այդ դաշնագիրը պատճառ բռնելով՝ երկու չաբաթ առաջ իր թագաւորին բերնով չեզոքութիւն յայտարարեց :

Երրորդ. Դանուբեան աւազանին մէջ Գերմանիա եւ Իտալիա համերաշխաբար պիտի գործեն: Երկու պետութիւններն ալ կենսական շահեր ունին Աւստրիոյ եւ Հունգարիոյ մէջ ու մինչեւ Պալքանները: Իտալիա երկու տարի առաջ յաջողեցաւ սերտ գործակցութիւն ապահովել Վիէննայի եւ Փեշթայի գաւիճներուն հետ՝ Հռոմի համաձայնագիրներով: Գերմանիա, որ տարիներով աշխատեցաւ Աւստրիան իրեն կցել նպատակի չարժումի տեղծելով հարեւան երկրին մէջ, իվերջոյ համաձայնեցաւ հրաժարիլ այդ ծրագրէն եւ յուլիս 11ին համաձայնագիր մը ստորագրեց Վիէննայի գաւիճին հետ:

Ուրեմն այս խիստ փափուկ խնդիրն ալ ժամանակաւոր կերպով կարգադրուած է: Գերմանիա այսուհետեւ պիտի աշխատի իր ազդեցութեան ենթարկել Եուկոսլաւիան եւ Ռումանիան, որոնք վաղեմի եւ բնական դաշնակիցներն են Ֆրանսայի:

Արդէն չլուկներ կան թէ Ռումանիա եւս հետեւելով Պելճիքայի օրինակին, չեզոքութիւն պիտի յայտարարէ: Վերջերս Տոքթ. Շախթի կողմէ դէպի Պալքանեան մայրաքաղաքները կատարուած ճամբորդութիւնը նախաքայլ մըն էր այդ երկիրները Ֆրանսական ազդեցութենէն ձերբազատելու: Ռումանիոյ արտաքին գործերու նախարար Ֆրանսասէր Թրթուլէսքուի չեզոքացումը նոյնպէս յատկանշական էր այս տեսակէտէն:

Չորրորդ. Սպանիոյ խնդիրը: Գերմանիա յաջողեցաւ իր թունդ հակախորհրդային քաղաքականութեան կառքին լծել նաեւ Իտալիան: Այս վերջինը առեւտրական - տնտեսական չահերով կապուած Ռուսիոյ հետ, ցարդ բաւական յարաբերութիւններ կը մշակէր Մոսկուայի հետ, Գ. Միջազգայինը բոլորովին անչահեկան կրկմելէն: Սպանիական հարցին մէջ այժմ Պերլին եւ Հռոմ նոյն հակախորհրդային եւ հակահամայնավարական ուղեգիծին կը հետեւին: Լոնտոնի ժողովին մէջ բոլշեւիկ պատուիրակ Ռայսքիի սպանութիւնները Գերմանիոյ եւ Իտալիոյ դէմ՝ աւելի եւս խոցոտեցին այդ հակառակութիւնը: Սպանիոյ ո եւ է մասին մէջ բացուցին այդ հակառակութիւնը: Սպանիոյ ո եւ է մասին մէջ համայնավարական վարչաձեւի հաստատումը Գերմանիոյ եւ Իտալիոյ ուժգին ընդդիմութեան պիտի բախի: Մինչ ապստամբ տալիոյ ուժգին ընդդիմութեան պիտի բախի: Մինչ ապստամբ ներուն կողմէ Մաորիտի դրաւումէն վերջ, երկու երկիրներն ալ պաշտօնապէս պիտի ճանչնան Ֆրանքոյի կառավարութիւնը :

Գերմանիա եւ Իտալիա պարտականութիւն կը առնձնեն իրենց ամբողջ ուժերով պաշտպանելու եւրոպական քաղաքակրթութիւնը՝ հիմնուած ընտանիքի եւ ազգի գաղափարին վրայ: Ասով պաշտօնապէս կը յայտարարեն թէ ամէն գնով պիտի պայքարին համայնավարութեան հաստատումին դէմ՝ Եւրոպայի մէջ:

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՆ ԱՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Խորհրդարանը կը վերաբացուի Նոյեմբեր 5ին

Ինչպէս հաղորդած էինք, ֆրանսական դահլիճը նիստ գումարելով երեքշաբթի առաւօտ, տուաւ կարեւոր որոշումներ, որոնք ենթարկուեցան, կէսօրէն վերջ, Հանրապետութեան Նախագահին վաւերացման, նախարարաց խորհուրդին մէջ:

Տրուած որոշումները.—

1.— *Խորհրդարանը պիտի վերաբացուի Նոյեմբեր 5ին:*

2.— *Մանր առեւտրականներու վրայ դրուած գործառնութեանց տուրքը (շիֆր տ'աֆֆէր) լայն չափով կը զեղչուի, մինչ կողմէ՝ տուրք մը կը դրուի արդիւնաբերութեան վրայ (6 առ հարիւր չափով), ապրանքը տակաւին վաճառման չհանուած: Այս ձեւով պետական գանձը կը մտնէ 6 միլիար:*

3.— *Կը զնջուի հողային արտադրութեան եւ անունդի վերաբերեալ նիւթերու վրայ դրուած տուրքը: Առանց փոխադրութեան վրայ դրուած տուրքն ալ կը վերցուի միաժամանակ: Մանր առեւտուրը այս ձեւով կ'ունենայ 250 միլիոնի խնայողութիւն մը:*

3.— *Շահատուրքի համեմատութիւնը պիտի բարձրացուի, բայց չահատուրքի այդ բարձրացումին ենթակայ պիտի դառնան տարեկան 70,000էն վեր հասոյթները միայն:*

5.— *Սակարանային գործառնութեանց վրայ դրուած տուրքերը պիտի զեղչուին: Զեղչին համեմատութիւնը ճշդուած չէ տակաւին:*

6.— *Պիտի զեղչուի նոյնպէս ամուսնական ժառանգութեանց վրայ դրուած տուրքը: Փոքր ժառանգութիւնները տուրքէ զերծ պիտի ըլլան:*

7.— *Ինքնաշարժի տէրերը ենթակայ կը դարձուին տուրքի:*

8.— *Որոշ բարեփոխութիւններ նաեւ նահանգներու կամ համայնքներու տեղական եմտացոյցին պատրաստութեան մէջ: Այդ բարեփոխութիւններով պետութիւնը կը ստանձնէ կարգ մը ծախքեր, թեթեւցնելով նահանգներու եւ համայնքներու բեռը:*

9.— *Բազմապաշտօն անձերու աշխատավարձին եւ եկամուտին մասին քննութիւն կատարուած ժամանակ, հանգստեան կոչուած գործիչներու եւ մտաւորական, արուեստագէտ պաշտօնեաներու ցոյց պիտի տրուի նպաստաւոր ընթացք :*

10.— *Պետական գանձը որոշ չափով նպաստաւորուած է ֆրանքին արժեզրկումով, դրամական միջազգային հաւասարակարգռումով:*

11.— *Մի քերու փոխանակութիւն մը կատարուեցաւ նախարարական պիտանիներու մասին:*

12.— *Արտաքին նախարարը զեկոյց մը կարդաց քաղաքական կացութեան մասին, մէկիկ մէկիկ ներկայացնելով հարցերը.— Լոքարնոյի խորհրդաժողովը, Պելճիքայի դիրքը, Սպանիոյ դէպքերը, իտալեւգերմանական համաձայնութիւնը :*

13.— *Պատերազմական նախարարը տեղեկութիւններ տուաւ ռազմական ճարտարարուեստը պետականացնելու ձեռնարկներուն մասին, յետոյ ըսաւ թէ, ընկերակցութեամբ Զօր. Կամըլէնի եւ սպայակոյտի անդամներուն, քննական պտոյտ մը պիտի կատարուի հիւսիսային սահմանապահներուն վրայ՝ ամբացնելու ծրագիր մը բերելու համար յառաջիկային:*

14.— *Օդային տորմիղի վերակազմութեան մասին մշակուած է հնգամեայ ծրագիր մը, որուն համար պիտի բացուի 5 միլիոնի վարկ մը: Համաձայն այդ ծրագրին, ուժ պիտի տրուի որ աւելի մեծ չափով օդանաւեր չինուին եւ աւելի կարճ ժամանակի մը մէջ: Պիտի պատրաստուին օդանաւային նոր կայաններ, ինքպէս նաեւ պիտի չինուին նորատիպ ռազմական օդանաւեր: Օդանաւային դպրոցներ պիտի հիմնուին Սալոն - ը - Փրովանսի մէջ:*

15.— *Շաբաթական 40 ժամու օրէնքը պիտի գործադրուի հանքագործութեան եւ հացագործութեան մէջ:*

16.— *Խիստ պայքար պիտի բացուի վէներական հիւանդութեանց տարածման եւ կատաներու գործունէութեան դէմ :*

ՍՊԱՆԻՈՅ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌԻԻՆԵՐԸ

Հգհամաժասային orkr

Կատաղի կռիւներ կը մղուին, այս պահուս, Մաորիտի արեւմտեան կողմը: Ֆրանքոյի բանակը գրաւեց նաեւ երկու նոր գիւղեր, որոնք կը գտնուին Արանճուէզի հիւսիսը: Կառավարական բանակը, սակայն, անսպասելի ընդդիմութիւն մը ցոյց կուտայ: Ապստամբները, իրենց նիւթական գերակչռութեամբ, կը ճնշեն, բայց դիմադրութիւնը տկարացած չէ երբեք:

Գերմանեւիտալական այս համաձայնութեան գլխաւոր յատկանիշն այն է, որ Իտալիա այլեւս չատ պիտի զբաղի կեդրոնական Եւրոպայի գործերով, այդ դաշտը առաւելապէս ձգելով Գերմանիոյ: Իր ուշադրութիւնը գլխաւորապէս պիտի դարձնէ Միջերկրականի եւ Արեւելքի վրայ:

Իտալիոյ քաղաքականութեան այս դիծը չեչտուած էր արդէն 1934ին՝ ֆաչական վարչաձեւի հնգամեայ համաժողովին մէջ Մուսոլինիի կողմէ, որ յայտարարեց թէ Իտալիոյ պատմական նպատակակէտները երկուք են՝ Ասիա եւ Ափրիկէ :

Տեսանք արդէն թէ Ափրիկէի երազը իրականացաւ:

Կարզը եկած է հիմա Ասիոյ: Գերմանիոյ աջակցութիւնը ապահովելէ վերջ, Մուսոլինի պիտի ձգտի Ասիոյ երազին իրականացման: Այդ մասին տարակոյս չկայ :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՎՐԻՊԱԿ.— Մեր թիւ 3253 խմբագրականին մէջ սպրդած են հետեւեալ սխալները.—

— Հանրութեան եաին (29րդ տող, վերէն), պիտի ըլլայ՝ հանրութեան իրեւ ...

— Նչմար ունեցաւ (28րդ տող, վարէն), պիտի ըլլայ՝ նչմարուեցաւ...

ՕՐԸ ՕՐԻՆ

ՍԻՐՈՑ ՄԱՍԻՆ

Թող ներեն ինձ բանաստեղծները, — ներս մտայ իրենց կալուածէն: Ինչ յետոյ պիտի տեսնեն, սակայն, որ մեր նիւթը տարբեր է եւ չի նմանիր երբեմ բանաստեղծներու այն կատակերգութեան, ուր սէրը կրակ է, սխրանիին՝ աստուածուհի, թագուհի, իշխանուհի, բայց երբեմ... բանուորուհի,— ուր սիրուհին լուսնկայի կը նմանցուի, վարդի կամ շամամի, բայց երբեմ խոնարհ բոյսերու կամ բանջարեղէններու: Ինչ խօսք, որ պիտի մոռցուին յետոյ բոլոր այդ բաները, երազի մը պէս: Եւ պիտի ցնդին յանգերն ալ, ոտիերն ալ յօրինուած էրտնաչան ոտանաւորներուն:

Ուրեմն այսպիսի սիրոյ մը մասին չէ մեր խօսքը,— ոչ բառարան պիտի ճայինք՝ յանգ գտնելու, ոչ ալ մատ պիտի համրենք՝ ոտի շինելու համար: Պէտք չունինք նաեւ մուսային, տալտկելու համար անոր առջեւ ջրագարի պէս :

Մենք պիտի խօսինք տարբեր սիրոյ մը մասին:

Բայց նախ պատմութիւնը.—

Պուտափէշթէն կը հեռագրեն թէ նուագածու բոշայ մը, Պալոկ - Մոկա, 62 տարեկան, իմզինք կախեց եւ անմնասական եղաւ: Պատճառը.— Մեծահարուստ արուեստասէր մը ջարդուփշուր էր իր ջութակը :

40 տարի առաջ, կ'ըսէ հեռագիրը, գերման կոմսուհի մը բոշային էր նուիրած այդ ջութակը,— կախարդական գործիք մը, որ նոյնիսկ նախարդական մատներուն տակ արուեստագէտին՝ լեզու կ'տուէր, աշխարհի վիշտն ու ծիծաղը կ'երգէր: Անգուգական արուեստագէտ մըն էր բոշան, կարծես աշխարհի սիրտն էր որ կը խօսցնէր ջութակին լարերուն վրայ: Մեծահարուստ արուեստասէր մը, անցեալները, երբ դարձեալ բոշան լեզու տուեր էր ջութակին, այնքան խանդավառուեցաւ եւ իմզինքմէ ելաւ որ ատուածային յափշտակութեան եւ սխալչացումի պահու մը մէջ խլեց ջութակը եւ գետնէ գետին զարկաւ: Ջարդուփշուր եղաւ ջութակը, մինչ մեծահարուստը գերագոյն երանութեան մը մէջ թաղուած՝ ջութակին ձայները կը փնտռէր, ականջ տուած ահաւոր լռութեան, դէմքը բարձրացուցած դէպի երկինք:

Ով սէր, ո՛վ սէր, երաժշտութե՞ն սէր:

Բոշային սէրը, սակայն, նոյնքան իմքնատիպ եւ խորունկ, բացատրելի ցաւ իսկոյն:

— Ես ի՞նչպէս ապրիմ այլեւս առանց ջութակիս:

Մեծահարուստը ի զուր աղաչեց, ոսկի լեցուց ափը, մարդկային աղեղարէ եւ վարդի փայտէ ջութակ խոստացաւ,— բոշան մերժեց, անիկա կ'ուզէր ի՛ր ջութակը:

Եւ կախեց իմքզինքմ :

×

Տարիներէ ի վեր, երեւանի թէ արտասահմանի հայ բոլշեւիկները ջութակի մը վերածած են Հայաստանը, զայն կը նուագեն ոսկեձայն, փառաձայն, բազմաձայն: Ի՞նչ երաժշտութիւն,— էնտուզիաստները ձեռք կը գալարեն էպիլէպտիկներու պէս, հարուածայինները կը կաֆաւեն հին արհուեստական վարձակներու պէս:

Ո՛վ կրնայ չափել Հայաստանասէրներու սէրը,— Արարատեան աշխարհը ջութակէ մը աւելի բան մըն է: Ի՞նչեան կը սիրեն զայն,— խեղճ կ'ըլլան ձայնն առնելով:

Սթալինեան ձեռքը փշրեց վերջերս այդ ջութակը, խորտակեց Հայաստանի բաբախուն ու ճնարական սիրտը, — թերեւս ուզելով հասկնալ թէ այս մարդիկը Հայաստա՞նը կը սիրեն թէ զայն ջախջախող ձեռքը:

Դուք տեսա՞ք որ մէկը ելլէր կախէր իմքզինքը:

Հայաստանասէրները բոշայի մը սիրտն ալ չունին, որ վշտակրկին եւ ի մահ յուսահատին՝ տեսնելով ջախջախումը իրենց այնքան սիրած Հայաստանին:

ԱՐԱԶ

Երեքշաբթի կառավարական դիւնուրները հակայարձակում մը փորձեցին Էսքորիալի եւ Իլլէսքաղի չրջանին մէջ, բայց այդ հակայարձակումը որ եւ է կարեւոր արդիւնք չտուաւ: Ապստամբները կը յայտարարեն թէ կառավարական բանակը այդ հակայարձակումի փորձին մէջ կորսնցուց 1500 հոգի: Այդ հակայարձակումը ձախողման մատնելէ վերջ, ապստամբները դրոհ տուին եւ յառաջացան կենթաֆէլի ճամբուն վրայ, մօտենալով Մաորիտի բանուորական արուարձաններուն:

Ֆրանքոյի բանակին օդանաւերը չարունակ կը ռմբակոծեն հակառակորդ բանակին դիրքերը: Երեքշաբթի ռումբ նետեցին Մաորիտի ռազմագիտական կէտերուն վրայ: Մաորիտի օդանաւերը գործունէութիւն ցոյց չտուին: Ակնկ ապստամբները կը հետեւցնեն, որ մայրաքաղաքը օդանաւ չունի կռուելու համար :

Օվիէտոյի կացութեան մասին կը հասնին հակասական տեղեկութիւններ: Մաորիտ կը յայտարարէ թէ հանքագործները դարձեալ պաշարած են քաղաքը:

Ընդհակառակն Պուրկոսէն կը հաղորդեն թէ Օվիէտոն կը գտնուի ապստամբներուն ձեռքը, նոյնիսկ ապստամբները կը չարունակեն իրենց յառաջխաղացութիւնը դէպի Ձիժոն :

Մինչերկրականի մէջ նաւամարտ մը տեղի ունեցաւ Խայիմ Ա. զրահաւորին եւ Ալմիրանթէ - Զերվերա յածանաւին միջեւ: Զրահաւորը, հակառակորդին ռումբերէն վնասուած, խոյս տուաւ ռազմաթաւորէն: Ապստամբ նաւատորմը գրաւեց, Զուիցայի առջեւ, քանի մը առագաստանաւեր, որոնք ռազմանիւթ բարձած էին,— նաւաղները Ռուս էին:

Ռուսական նաւեր օգնութի՞ն կը փութան

«Տէյլի Էքսփրէս»ի թղթակիցը Պոլսէն կը հեռագրէ թէ 23 ռուսական չոգենաւեր անցան Տարտանէլի նեղուցը: Նոյն թղթակիցը կը ճշդէ նաեւ կարգ մը նաւերու անուններն ու անոնց տարողութիւնը.—

« Կարլ Լէփին», տարողութիւնը 3,974 թոնս, նեղուցներէն անցաւ անցեալ հինգշաբթի, բարձած էր 12 բեռնակառքեր, 2 օդանաւ, 500 թոնս ռազմանիւթ:

« Թրանսպլաթ», տարողութիւնը 11,439 թոնս, նեղուցներէն անցաւ հինգշաբթի, կ'երթար դէպի Պարսկոլոնա, բարձած էր 50 բեռնատար կառքեր, 6 օդանաւեր, 1500 թոնս ռազմանիւթ, երկու հարիւր թոնս պարէն եւ դեղօրայք:

« Շախթէր», տարողութիւնը 3028 թոնս, նեղուցներէն անցաւ ուրբաթ, կ'երթար դէպի Ալիքանթէ, բարձած էր վեց բեռնատար կառքեր, չորս թնդանօթ, երկու օդանաւ եւ հազար թոնս ռազմանիւթ:

« Վարլաամ Ավասինով», տարողութիւնը 6,557 թոնս, նեղուցներէն անցաւ կիրակի, բարձած էր 1,665 թոնս քարիւղ, կ'երթար դէպի Կարթագինէ:

*** Լոնտոնի խորհրդային դեսպանը բացարձակապէս կը հերքէ վերի տրուած լուրը, բայց իր հերքումը կը վերաբերի ուրիշ նաւերու: Այսպէս կ'ըսէ որ սուտ է այն լուրը թէ «Սիսկիր», «Վոլկա» եւ «Էվէնինկրատ» չոգենաւերը անցած են Սուէզի ջրանցքէն եւ մեկնած՝ Պարսկոլոնա: Խորհրդային դեսպանը կը հաւաստէ թէ այդ նաւերը կը գտնուին ռուսական նաւահանգիստներուն մէջ :*

(ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԴԱԼ Գ. ԷՋ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ներքին հակառակորդը ամենավտանգավորն է, քանի որ նա ծածկված է, քողարկված է, խորամանկ է, հնարամիտ է, ինչպես ասում է մեր ժողովուրդը, «ոչ ոքի աչքին մատ չի խրում», բայց ամեն քայլափոխի վնասում է, ամեն առիթից օգտվում է, որպեսզի հարված հասցնի։ Ներքին հակառակորդը ամենից առաջ ձգտում է ներթափանցել մեր շարքերը, ամեն կերպ ձգտում է ներթափանցել մեր կուսակցական, խորհրդային, տնտեսական, մշակութային, կոոպերատիվ, կոլտնտեսային, ինչպես նաև մեր զանգվածային հասարակական կազմակերպությունների մեջ։ Ներքին հակառակորդը ամենից առաջ ձգտում է ներթափանցել մեր կուսակցական, խորհրդային, տնտեսական, մշակութային, կոոպերատիվ, կոլտնտեսային, ինչպես նաև մեր զանգվածային հասարակական կազմակերպությունների մեջ։ Ներքին հակառակորդը ամենից առաջ ձգտում է ներթափանցել մեր կուսակցական, խորհրդային, տնտեսական, մշակութային, կոոպերատիվ, կոլտնտեսային, ինչպես նաև մեր զանգվածային հասարակական կազմակերպությունների մեջ։

ՄԵԾԱԳՈՒՅՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ

— «Հայոց նոր հերոսները» խորագրի ներքո մենք մեր ընթերցողներին ծանոթացրինք Ալեքսանդրապոլի գավառի Ղարաքիլիսա գյուղի 19-ամյա հերոսուհի Լուսանկար Ղազարյանի հետ։ Այսօր մենք ներկայացնում ենք մեր հերոսուհու մասին մի նոր նյութ, որ ստացել ենք Ղարաքիլիսայի ազգային դպրոցի ուսուցչուհի Ա. Ղազարյանից։

Լուսանկարը ծնվել է Ղարաքիլիսա գյուղում 1900 թվականի հունվարի 1-ին։ Նրա հայրը՝ Ղազար Ղազարյանը, եղել է գյուղի ամենահարուստ մարդկանցից մեկը։ Ունեցել է մեծ տուն, շատ հողեր, անասուններ։ Լուսանկարը ուսումը ստացել է գյուղի ծխական դպրոցում։ Ուսման տարիներին նա աչքի է ընկել իր ուշիմությամբ, ինչպես նաև ազգասիրական զգացմունքներով։ Դպրոցում նա սովորել է մինչև 1915 թվականը։ Այդ տարի նա ավարտել է դպրոցի 6 դասարանները։

Ղազարյանների ընտանիքը ապրել է ուրախ ու երջանիկ կյանքով։ Բայց 1915 թվականի գարնանը, երբ թուրքերը սկսեցին ջարդել հայերին, Ղազարյանների ընտանիքը ևս ենթարկվեց հալածանքների։ Ղազարը, որ ազգասեր մարդ էր, ստիպված եղավ թողնել իր տունը, ունեցվածքը և ընտանիքով գաղթել Ալեքսանդրապոլ։ Այստեղ նա հաստատվեց Ղարաքիլիսայի ճանապարհին, մի փոքրիկ տնակում։ Ղազարը ստիպված էր աշխատել ուրիշների մոտ, որպեսզի կարողանա ապրուստ հայթայթել ընտանիքի համար։

Լուսանկարը այդ ժամանակ 15 տարեկան էր։ Նա տեսնում էր, թե ինչպես է հայրը տանջվում, և որոշեց օգնել նրան։ Նա սկսեց աշխատել հարևանների մոտ, ինչպես նաև ծխական դպրոցում։ Այդ ժամանակ դպրոցի տնօրենը Ա. Ղազարյանն էր։ Նա նկատեց աղջկա ընդունակությունները և սկսեց նրան հետաքրքրել ուսումով։ Լուսանկարը սկսեց հաճախել դպրոց և ուսումնասիրել հայոց պատմությունը։ Նա կարդում էր հայ հերոսների մասին, որոնք իրենց կյանքը զոհաբերել էին հայրենիքի համար։ Նա ցանկանում էր նմանվել նրանց։

1918 թվականին, երբ Ղարաքիլիսան ազատագրվեց թուրքերից, Լուսանկարը վերադարձավ հայրենի գյուղ։ Այստեղ նա սկսեց աշխատել դպրոցում որպես ուսուցչուհի։ Նա սիրում էր իր աշակերտներին և ջանում էր նրանց սովորեցնել հայրենասիրություն։ Նա պատմում էր նրանց հայ հերոսների մասին, որոնք կռվել էին հայրենիքի համար։ Նա ցանկանում էր, որ իր աշակերտները մեծանան որպես ազգասեր և հայրենասեր մարդիկ։

Լուսանկարը ամուսնացել է 1920 թվականին։ Նրա ամուսինը եղել է Ղարաքիլիսայի ազգային դպրոցի ուսուցիչ Ա. Ղազարյանը։ Նրանք ունեցել են երեք երեխա։ Ամուսինները միասին աշխատել են դպրոցում։ Նրանք ջանացել են իրենց երեխաներին դաստիարակել հայրենասիրության ոգով։

1920 թվականի գարնանը, երբ թուրքերը նորից հարձակվեցին Ղարաքիլիսայի վրա, Լուսանկարը ամուսնու և երեխաների հետ գաղթեց Ալեքսանդրապոլ։ Այստեղ նա շարունակեց աշխատել որպես ուսուցչուհի։ Նա աշխատել է մինչև 1925 թվականը։ Այդ տարի նա թոշակի անցավ։ Նա ապրեց ուրախ ու երջանիկ կյանքով։ Նա տեսավ իր երեխաների հաջողությունները։ Նրանցից մեկը դարձավ ուսուցիչ, մյուսը՝ բժիշկ, երրորդը՝ ինժեներ։

Լուսանկարը մահացել է 1960 թվականի հունվարի 15-ին։ Նա թաղվել է Ալեքսանդրապոլում։ Նրա մահվան լուրը մեծ տխրություն պատճառեց նրա աշակերտներին և գյուղի բնակիչներին։ Նրանք հարգանքի տուրք մատուցեցին նրա հիշատակին։

Լուսանկարի կյանքի և գործունեության մասին մենք ստացել ենք նաև նրա թոռնուհի Ա. Ղազարյանի նամակից։ Նա գրում է, որ իր տատիկը միշտ պատմել է նրանց իր մանկության մասին։ Նա ասել է, որ ինքը միշտ ցանկացել է օգնել հայրենիքին։ Նա ասել է, որ ինքը միշտ ցանկացել է լինել ուսուցչուհի, որպեսզի կարողանա սովորեցնել երեխաներին հայրենասիրություն։ Նա ասել է, որ ինքը միշտ ցանկացել է, որ իր աշակերտները մեծանան որպես ազգասեր և հայրենասեր մարդիկ։

Լուսանկարի թոռնուհին գրում է, որ տատիկը միշտ հպարտացել է իր աշակերտների հաջողություններով։ Նա ասել է, որ իր աշակերտներից շատերը դարձել են ուսուցիչներ, բժիշկներ, ինժեներներ։ Նա ասել է, որ իր աշակերտները միշտ հարգել են իրեն։ Նա ասել է, որ իր աշակերտները միշտ եկել են իրեն տեսնելու։ Նա ասել է, որ իր աշակերտները միշտ նվերներ են բերել իրեն։

Լուսանկարի թոռնուհին գրում է, որ տատիկը միշտ ասել է, որ ինքը միշտ ցանկացել է, որ իր աշակերտները մեծանան որպես ազգասեր և հայրենասեր մարդիկ։ Նա ասել է, որ ինքը միշտ ցանկացել է, որ իր աշակերտները միշտ հիշեն իրեն։ Նա ասել է, որ ինքը միշտ ցանկացել է, որ իր աշակերտները միշտ սիրեն հայրենիքը։

Լուսանկարի թոռնուհին գրում է, որ տատիկը միշտ

« Ժուրնալ », խօսելով այս լուրին մասին, կ'ըսէ թէ կ'երեւի Ֆրանքոյի համակիր պետութիւնները կ'ընդունին չէզոքութեան բռնաբարումի այս իրողութիւնը, անշուշտ որոշ նկատումներով:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՄԸ ՏՐՂՈՎ

ՊՈԼՍԷՆ կը հեռագրեն թէ Տաւրոսեան ճեպընթացը զարնուելու, Էսքիչէհիրի առջեւ, չոգեկառքի մը որ Էսքիչէհիրէն կը մեկնէր Պրուսա: 16 հոգի մեռան եւ 19 հոգի վիրաւորուելան ծանրապէս:

*** Նէրքին նախարար Սալանկրօ թերթի մը մէջ յայտնօրէն ամբաստանած ըլլալով որ յատկապէս փախած եւ գերի ինկած է Գերմանացիներուն ձեռքը եւ այդ պատճառով՝ դատապարտուած, մասնաւոր յանձնախումբ մը կազմուեցաւ քննելու համար զինուորական հին արձանագրութիւնները:

Հ. Ը. Դ.

Փարիզ

ԱՆԻԷՆ-ՊՈՒԱ-ՖՈՒՆՊի «Արամ» ենթակոմիտէի ընդհ. ժողովը, այսօր հինգշաբթի երեկոյ ժամը 9ին, սովորական հաւաքատեղին: կարեւոր օրակարգ:

ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼինոյի «Զաւարեան» կոմիտէն ընդհանուր ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս շաբաթ երեկոյ ժամը 9ին, սովորական հաւաքատեղին: կարեւոր օրակարգ:

ԱՒՆՈՒՎիլի Ռագմիկ խումբի ընկերները ժողովի կը հրաւիրուին *30* Հոկտ. ուրբաթ երեկոյ ժամը 9ին, ընկ. Արփիար Թարտիրոսեանի բնակարանին մէջ: կարեւոր օրակարգ:

Գալատ

ԼԻՈՆի «Վաթանդեան» կոմիտէն ընդհանուր ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները, *30* Հոկտ. ուրբաթ երեկոյ ժամը *8.30*ին, *181* Cours Lafayette, «Զարդարեան» գրադարանին մէջ: Բոլոր ընկերներու ներկայութիւնը պարտաւորիչ է:

ՄԱՐՍԷՅԼի Ռոստոմ ենթակոմիտէի եւ Քրիստափոր խումբի ընկերական ընդհ. ժողովը *29* Հոկտ. հինգշաբթի երեկոյ ժամը *8.30*ին Շաւրիկեան սրահին մէջ, 5 rue de l'Eclipse: Ներկայ ըլլալ անդամատետրով կարեւոր օրակարգ:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ

Կազմակերպուած Առնուվիլ-Կուսէնվիլի վարդան ենթակոմիտէի կողմէ

1 Նոյ. կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ին, *Salle Gallemant*ի մէջ, Առնուվիլի կայարանին դիմացը:

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ԸՆԿ. ԳԵՐԱՍԻՄ ԲԱԼԱՅԵԱՆ

ԹԷՅԱՍԵՂԱՆ

Համաղգային Սարսէլի Մասնաճիւղին կողմէ,

Իր վարձած սեփական ընթերցարան–ակումբի բացման առթիւ, 31 Հոկտ. շաբաթ երեկոյ ժամը 9ին, 31 Rue Beauséjour, Սարսէլ

ցեղի սիրտ ունեցող վիճակախաղ:

ԳԹՈՒԹԵԱՆ ՊԱԶԱՐ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ

ՕՐԲԵՐՈՒ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԿՈՂՄԷ

ի նպաստ իր պաշտպանած որբերուն մնունդի, զգեստաւորման, պատսպարութեան եւ դաստիարակութեան

22 Նոյ. կիրակի օր, ժամը *14*էն սկսեալ մինչեւ *20*

Salle Jean Goujonի մէջ, **8 Rue Jean Goujon,** *Փարիզ* (8)

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ Է՝

Ընտիր նուագախումբ, պարունդիկ թէյ, քօքթէյլ, ճոխ պիւֆէ

կը հրաւիրուին բոլոր այն ազնուասիրտ անձնաւորութիւնները, որոնք կը հաճակին ժիւթեանս գործունէութեան:

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

“ԱՂԷՄ„ *ի ժե. թիւը հետեւեալ բովանդակութեամբ.*

Վ. Մինախորեան, *Արհաւիրքի օրեր.*— Վ. փափազեան, *Համաշխարհային պատերազմը եւ Տարօնի աշխարհը.*— Տօքթ. Յ. Թորգոմեան, *Յուշատետրէս.*— Գ. Գիւլպենկեան, *Մեծ յոբելեանի առթիւ.*— Յ. կազանչեան, *Հայ մեծահարուստ մը Հռոմի Ս. Պետրոս եւ Վաղարշապատի Ս. Հռիփսիմէ եկեղեցիներուն յատկացիցներու մէջ.*— Փ. Անանեան, *Թիւրքիա մի պատմութիւն.*— Ն. Պաղիրեանեան, *Քաղաքական ուղեւորի մը յուշերէն.*— Յ. Աւետիսեան, *Աշղարհիկ Սիւնեաց երկրագործ.*— *Հայ–Հայկական բանակցութիւններ.*— *Հին թուղթեր.*— *Շերմանդատէ նամակներ.*— *Անդլերէն.*— Ա. Խանջեան, *Բարգէն կաթողիկոս, գեղեցան Յ. Սրբեանի.*— *Կեանք եւ ժշակոյթ.*— *Գիրք եւ Մամուլ.*— *Գրախօսական:*

Տարեկան բաժնեգին 70, 60 եւ 50 ֆրանք, համապատասխան իւրաքանչիւր երկրի թղթատարական սակի:

Հասցէ.— S. Vratzian, 13 Rue des Platanes, Gité Jardin de Plessis-Robinson, (Seine).

“ԱՅԳ ԵՐԳԻ ՕՐ„

ԱՋԳԱՅԻՆ ՅԱՐԳԱՆՔԻ ՅՈՒՅՑ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԱՀՈՒԱՆ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻԻ

8 Նոյեմբեր, կիրակի կէսօրէ վերջ ժամը 3ին, Salle Erardի մէջ

11 Rue de Mail, Métro Bourse *կամ* **Sentier**

ՄԵԾ ՀԱՄԵՐԳ

Կազմակերպուած ՄԻՓԱՆ-ԿՈՄԻՏԱՍ երդչախումբի կողմէ

Հովանաւորութեամբ ԿՈՄԻՏԱՍԵԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎի

Ղեկավար՝ Ա. ՊԱՐԹԵՒԵԱՆ:

Կը մասնակցին՝ Յ.Կ. ՄԱՀԻ ԹԷՐԶԻ (մեներգ), ՕՐ. ԱՐՈՒՍԵԱԿ ԱԼՊԱՆ (մեներգ),

Mme EDWIGE BERGERON *(թաւջուժակ), ՕՐ. Տ. ՋԱՒԱՓԵԱՆ (դաշնակ):*

ԳԻՆԵՐ՝ Reservé 20 ֆր., Թիկնաթոռ՝ *10* եւ *15*, կալերի՝ *10* եւ *5* ֆրանք:

Տոմսերը կարելի է հայթայթել փարիզի Հայոց եկեղեցիէն եւ պ. Հրանտ Սամուէլէն *61 Rue Mr. le Prince*

ՀԱՄԵՐԳԻ ԶՈՒՏ ՀԱՒՈՏՔԸ ՊԻՏԻ ՅԱՏԿԱՑՈՒԻ Կ. ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՆՏԻՊ ԳՈՐԾԵՐՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ:

ՀԱՅ ՍԱՓՐԻՉՆԵՐՈՒ

ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ–ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

29 Նոյեմբեր, կիրակի գիշեր, ժամը 9էն մինչեւ լոյս,

Salle des Ingénieurs Civilsի *սրահին մէջ,*

19 Rue Blanche, Métro: Blanche et Trinité

Պիտի խօսին՝ Ֆրանսացի եւ ուրիշ արհեստակից մասնագէտներ,

Հ. Ս. Միութեան կողմէ խօսք պիտի առնեն՝

Պ. Պ. ԳԷՈՐԳ ՍՏԵՓԱՆԵԱՆ եւ ՕԱՏՈՒՐ ՊԷՐՊԷՐԵԱՆ,

Կը ցուցադրուին հայ սափրիչ-սափրիչուհիներու կողմէ պատրաստուած կանանց մազերու ամենավերջին նորաձեւութիւնները՝ Ֆրանսական եւ հայկական թղթակիցներու ներկայութեամբ:

ԱՆՈՐՇԱՀՈՏՈՒԹԵԱՆՑ ԲԱՇԽՈՒՄ:

ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ՝ Դէպակաւոր պարուհի HUGUETTE O. BINի եւ դաշնակահարուհի ANGÈLE ALICEի կողմէ (7 տարեկան)

14 ՀՈԳԻՆՈՑ ԸՆՏԻՐ ՆՈՒԱԳԱՒՈՒԹԻՒՆ

ՃՈԽ ՊԻՒՖԷ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳԻՆԵՐՈՎ

Մուտք՝ արանց 8 ֆր., կանանց 6 ֆր.:

Տոմսերը կը ծախուին բոլոր սափրիչներու մօտ:

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Հ. Ց. Դ. Մարսէյլի Ռոստոմ ենթակոմիտէն իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ ընկ. Արիստագէս Պետրոսեանի, իր զաւակին՝ փոքրիկ ՊԵՏՐՈՍ ՊԵՏՐՈՍԵԱՆի մահուան առթիւ, որ տեղի ունեցաւ *23* Հոկտ. ուրբաթ օր:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսահայ կ խայի փարիզի մասնաճիւղին հայերէնի եւ հայոց պատմութեան դասընթացքը կը վերաբացուի *5* Նոյ. Բիւզշաբթի առաւօտ ժամը 9ին, Maison Mutualité, 24 rue St. Victor: Նախօրօք արձանագրուիլ հետեւեալ հասցէին. Օր. Գրիգորեան, 5 rue Mayran, փարիզ, հետաձայն *Trudaine 46-52*: Այս տարի աշակերտներէն կը գանձուի 4 Ֆր. ամիսը, հակառակ ընտանիքի մը մէկէ աւելի երեխաներու համար վճարելիք յատուկ զեղչերուն:

ՀԱՅՏԷՒ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Տքթ. Ալեահվէրտի Որդի վոխադրուած է **27 Ave. de Versailles, Paris** *(16).* **Tél. Jasmin 45—19**

ՀԱՅՏԷՒ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

O. M. Ohanessian, Patisserie Orientale, 4 Rue de la Pavillon, Paris (20)

փոխադրուած է՝

44 Ave. de la Porte du Pré-St-Gervais, Paris (19):

ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Անիէն-Պուա-Ֆոլնպի եւ Ֆոլնպի շրջանի Հ. Բ. Ը. Միութեան հայերէնի դասընթացքին հետեւող երկսեռ աշակերտներուն ծնողքներէն կը խնդրուի արձանագրել տալ իրենց զաւակները մինչեւ նոյ. *1*, 345 Ave. d'Argenteuil նախկին դպրոցը կամ պ. Գաբրիէլ երամեանի բնակարանը, *14* rue Loradoux, Bois Colombes. իսկ Ֆոլնպի հայրենակիցներուն պիւլուեան համար, դիմել պ. պնիկ էքիգեանի, 207 rue St. Denis, Colombes, ինչպէս նաեւ Անիէնցիներու համար՝ պ. պետրոս երամեանի, *12* rue des Mourincux, Asnières:

Անիէն-Պուա-Ֆոլնպի եւ շրջանի Առժ. Հոգաբարձութիւն

ՖՐԱՆՍԱՀԱՅ Կ. ԽԱՉԻ Փարիզի *մասնաճիւղի պարգեւախաղէն չհաճած եւ հետեւեալ թիւերը.—*

1060, 32, 129, 9643, 217, 329, 485, 811, 875, 104, 466, 813, 147, 269, 42, 830, 910, 511, 867, 528, 1050, 22, 1069, 660, 462, 520, 985, 486, 754, 242, 31, 844, 1053, 558, 490, 472, 352, 105, 610, 38, 973, 862, 152, 495, 26, 1052, 940, 943, 867, 601:

Շահողներէն կը խնդրուի վերջին անգամ ըլլալով, մինչեւ նոյեմբեր 30, դիմել Օր. Պետրոսեանի, 6, Rue de Trétaigne, Paris (18), ստանալու համար իրերը:

Վերոյիշեալ թուականէն յետոյ, դիմումները նկատի չեն առնուիր:

Մասնաճիւղի վարչութիւն

Բացման հանդէս

«Հայ Արծիւ» (l'Aigle d'Arménie) ակումբի վարչութիւնը կը ծանուցանէ թէ՝ նորակազմ ակումբի բացման հանդէսը տեղի պիտի ունենայ *1* Նոյ. կէսօրէ վերջ ժամը 2.30ին,

7, Salle Tublerի մէջ, *19* rue de la Pompe, Մէթրօ՝ *Muette*

ցերեկոյթի պատշաճ զգեստ պարտաւորիչ է. ի հարկին գոց գոյն զգեստ կրել ընդունելի է: Առանց հրաւիրագրի մուտքը արգիլուած չէ: Հիւրասիրութիւն առանց դրամի:

Վարչութիւն «Հայ Արծիւ» ակումբի *14* rue Meyerbeer, Blanc-Mesnil *(S. et O.)*

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԱԿՈՒՄԲ

Ցառաջիկայ դասախօսութիւնը տեղի կ'ունենայ այսօր, հինգշաբթի *31* Հոկտ. ժամը 21ին, Սօսիէթէ Սավանթի սէյ, 28 rue Serpente, մէթրօ Odéon.

Դասախօս՝ Պ. ԽՈՆԴԿԱՐԵՆ

Նիւթ՝ Հայ գրականութիւն: Ցարեշրջանի բացման դասախօսութիւն:

ԳԱՑԷՔ ՏԵՍԷՔ ԼԻՈՆԻ ՄԷՋ
Cinéma REXY
Rue Cours Lafayette, angle Garibaldi.

ԳԱՑԷՔ ՏԵՍԷՔ
CIGALE CINÉMA
60 Avenue de Saxe.LYON.

ՀԱՅԵՐԻՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՃԸՐ
Ճաշարան ՖԼՕՐԻԱ
61, Rue Monsieur le Prince, Paris (6)
Մէթրօ՝ Օտէօն եւ Սէն Միշէլ Հեռաձայն Dantor : 52 . 73
Արեւելեան եւ եւրոպական խոհանոց կերակուրներ:

ԵՂԻՇԷ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ
ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
AMERICAIN LLOYD — **48 rue de la République**
ORIENT LLOYD — **7 rue Auber, Paris**
Մարսէյլ, Tél. C. 47-22 եւ C. 74-51 Tél. Opéra 67-77 67-78
Նաւային բոլոր ընկերութիւններու ներկայացուցիչ:
Տոմսակներ՝ ամէն տեղի համար, Հայ ճամբորդներու համար մասնաւոր գին: Ունինք թղթակիցներ աշխարհի ամէն կողմը:
ՎՍՏԱՀԵԼԻ ՏՈՒՆ:

Etude de Me BERNARD WAHÉ
(17e ANNÉE)
Licencié en Droit de la Faculté de Paris
Ancien élève de l'École des Hautes Études Sociales
JURISCONSULTE
de la
Droit Français et International Privé
Mandataire en Justice
159 rue Lafayette, Paris (Gare du Nord) **Tél. NORD 68—02**
ԿԸ ՍՏԱՆՁՆԻ ամէն տեսակ գաւառ, Փարիզի, գաւառի, գաղութներու եւ արտասահմանի մէջ: Խորհրդակցութիւն իրաւագիտ. ամէն տեսակ խնդիրներու Ազգածի գաւառ, ամէն լեզուէ թարգմանութիւններ: Նաթարլիզասիօնի օրինական ձեւակերպութիւններ եւ անուններու փոփոխութիւն, ընկերութիւններու կազմութիւն եւ լուծում: Ամէն տեսակ գործերու խմբագրութիւն: Իրաւագիտական քննութեանց եւ մրցումներու պատրաստութիւն: Ճառերու եւ գաւաճսոսութիւններու խմբագրութիւն: Խորհրդակցութիւն 25 ֆր.: Կ'ընդունի ամէն օր ժամը 5—7, բացի շաբաթ, կիրակի եւ տօնի օրերէ:
Կ'ընդունի նաեւ ժամադրութեամբ:

Le Gérant: H. STEPHAN
Imprimerie A. DER (AGOPIAN) **17, Rue Damesme, PARIS (13)**

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (14)

ՁԱՐԹՕՆՔ

(ՎԷՊ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵԱՆՔԷ)

— o —

Երբ վերջացուց խօսքը, Գալուստը, որ լարուած ուշադրութեամբ մտիկ կ'ընէր, բունցքը ուժեղ թափով զարկաւ թախթին: Համակրելի դէմքը մը ուռկլիցան, հասու յօնքերը վեր քաշուեցան: Երբ սկսաւ խօսիլ, ձայնը կը դողար բարկութենէն:

— Ալ բաւական է այդ սրիկայ Պոնաւոլոկիի բրածը... Պէտք է վերջ տալ... Ախտոս եղաւ Սարգիս Աբօրը. խօսքին տէր, ազա մարդ էր... Բայց վատահ չեմ, որ յանձնախումբը վերադարձներ է քաղաք ...

— Ասոր ոչ մէկ կասկած... Բայց էդ անիրաւ Գեւոյի բացակայութիւնը ...

— Այդ մասին մի մտահոգուիր, — հանդարտացուց Գալուստը,— ես վատահելի երիտասարդ մը ունիմ, որ..

— Ո՞վ :

— Նորքեցի Մաթոսը:

— Հմ,— Վահէն մօրուքին հետ խաղալով սկսաւ մտածել: Պիտի նախընտրէր Գեւօն, եթէ հնարաւոր լինէր գտնել:

— Փորձուած կարիճ մըն է, յանդուգն եւ միաժամանակ զգամանալի կերպով չըլջահայեաց,— վստահացուց Գալուստը:

— Մօսքդ թող լինի... Հիմա պէտք է ...

— Հիմա պէտք է, որ անմիջապէս անկողին մտնես հանգստանալու համար,— ծիծաղելով Վահէի խօսքը ընդմիջեց Գալուստը,— երկուքդ ալ պառկեցէք եւ աչքերնիդ գոցել, պէտք եղածը կը կարգադրեմ :

Գալուստը ցաւակից անկողնէն ու հապճեպով սկսաւ չորերը հագնիլ : Քիչ անցած, երբ Վարդանն ու Վահէն, օրուան յոգնութենէ վերջ, իրարու կողքի երկնցած քնացան, Գալուստը արթնցուց այն սպասաւորը՝ Ա. պարանցի երիտասարդ մը եւ երկու տոմսակ յանձնելով անոր՝ պատուիրեց անմիջապէս հասցնել տէրերուն:

Գալուստը երեւանցի յայտնի ընտանիքի մը մէկ հատիկ զաւակն էր: Գալուստ Թիֆլիսի Արհեստաւորաց վարժարանը աւարտելէ ետքը, հազիւ դեռ նորաթոյս պեխերով երիտասարդ մը, ծննդավայրը վերադարձաւ եւ անդուսպ եռանդով նետուեցաւ ազգային չարժման մէջ, որ այն ժամանակ դեռ նոր կը սկսէր կազմաւորուիլ: Իր անձին ու ապագայի մասին բոլորովին անտարբեր՝ ան երբեք անձնական կեանք մը չապրեցաւ, չլոգնող դերվիշի մը անտարբերութեամբ, թափառեցաւ երկրէ երկիր: Մէկ Պարսկաստան կ'անցնէր, մէկ Տաճկահայաստան, մէկ Կովկասի հեռաւոր չրջանները, ուր հայկական գաղութներ կային եւ ամէն տեղ ալ անսպառ եռանդով կը քարոզէր ու կը կազմակերպէր հայ ժողովուրդը :

Բնականաբար այդքան գործունեայ անձնաւորութիւն մը չէր կրնար խուսափիլ ոստիկանութեան հետապնդումներէն: երկու անգամ, արդէն երեւանի բանտը նստած էր, իսկ ամէն անգամ որ քաղաքին մէջ խուզարկութիւններ սկսէին, Գալուստենց տունը առաջին կարգի վրայ կը գտնուէր : Հակառակ Գալուստի աքթիւ մասնակցութեան, յեղափոխական բոլոր ձեռնարկներուն, ոստիկանութեան բոլոր չանքերը զայն գործի վրայ ձերբակալելու՝ անյաջող անցած էին:

Անգամ մը, ուշ գիշերով, սնուցիկ մը չալկած երիտասարդ մը Գալուստի տունը կը մտնէ: Երեք գաղտնի ոստիկաններ որոնք կը հետեւին եղեր այդ մարդուն, անմիջապէս դուռը կը գարնեն, բայց երբ ներս կը մտնեն, միայն Գալուստը, քոյրն ու տան ծառան կը գտնեն հոն :

Անմիջապէս տունը կը չրջապատուի բազմաթիւ ոստիկաններով, չհաշուած այն գաղտնի ոստիկանները, որոնք արդէն տան մէջ կը գտնուէին:

Լոյսը բացուելուն, թիղ առ թիղ ամբողջ տունը կը խուզարկեն, պատերը կը ծեծեն, երկու տեղ կը քանդեն տախտակամածը, մեծ սենեակի մը մէջ գտնուած հին ձեւի բուխերի կը կը փլցնեն, նոյն իսկ պարտէզի ջրհորը կ'ինչնեն, բայց ոչ մարդու եւ ոչ ալ սնուցիկի հետք կը գտնեն: Ոստիկանապետը կատղած՝ բակի քարերը տեղահան կ'ընէ, պարտէզը փորել կու տայ, եւ դարձեալ ոչ մէկ հետք:

Ամբողջ քաղաքը կը ծիծաղի ոստիկաններու ձախողութեան վրայ: Քլլլպներու մէջ ծիծաղելի անեքտոտներ կը պատմեն: Դրեթէ չաթաթ մը, այդ չլսուած հրաշքի մասին կը խօսին տներու մէջ: Անշուշտ, թէեւ բան մը չէն գտներ, բայց Գալուստը կը ձերբակալուի եւ բանտը կը տարուի, ուր կը մնայ երեք ամիս, մինչեւ որ դատավարութեան ժամանակ անպարտ կ'արձակուի :

Այս պատմութեան մէջ զուարճալին այն էր, որ ոչ ոք հաւատաց գաղտնի ոստիկաններու ցուցմունքներուն : Նոյնիսկ դատարանի նախագահը դատավարութեան ժամանակ բարձրաձայն ծիծաղեցաւ, երբ լրտեսները կ աշխատէին հաւատացնել թէ իրենք հետեւած էին երիտասարդին քաղաքային պարտէզի անկիւնէն, եւ եթէ չէին ձերբակալած անմիջապէս, պատճառը այն էր, որ կ'ուզէին երեւան հանել մեղսակիցները:

— Տէր դատաւոր,— ըսած էր գաղտնի ոստիկան մը, որ քաղաքին մէջ մեծ համբաւ ունէր իբրեւ չատ ճարպիկ լրտես մը,— հազիւ երկու րոպէ անցած երիտասարդի ներս մտնելէն՝ ներս խուժեցինք:

Տանը մէկ պատը փղոցի վրայ էր, իսկ պարտէզի պատերը այնքան բարձր՝ որ առանց չատ երկար սանդուխի անկարելի էր վեր մագլցիլ: Սակայն, ոչ սնուցիկը գտանք եւ ոչ երիտասարդը. պարզապէս աներեւութացեր էին:

Այս ոստիկանական յերիւրանքն ալ աւելի վրան բաց սուտ մը կը թուէր դատարանի նախագահին, երբ կը նայէր Գալուստի ազնուական դէմքին, լայն ճակատին եւ այնքան տպաւորիչ եւ վստահութիւն ներշնչող աչքերուն, որոնց մէջ մանկունակ անմեղութիւն մը կը ցոլար :

(Շար.) ՄԱԼԽԱՍ

ԱՆԳԼԻԵՐԷՆ ԴԱՍԵՐ

Անգլիերէն լեզուի ուսուցման եւ գրականութեան դասընթացքներ, Դիւրուսոյց եղանակ եւ չափաւոր գին: Դիմել՝ ՎԱՀԱՆ ՔԷՉԻԱՊԱՔ ՃԵՄԱՆի, վկայեալ Թէհրանի Ամերիկեան գոլէճէն, Bachelor of Arts: Հասցէ՝ V. Kerestedjian, 17 Rue Maître-Albert, Paris (5):

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

EE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

17, Rue Damesme, PARIS (13e)
Téléphone : Glacière 15 - 70

(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,—

Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա	250 »	130 ֆրանք	—
Ամերիկա եւ ուրիշ երկիրներ	200 »	100 ֆրանք	—

ՈՒՐԲԱԹ
30
ՀՈԿՏԵՄԲԵՐ
VENDREDI
30 OCTOBRE
1936

ԵՒ ՏԱՐԻ — 12e Année No. 3257

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

Երկայն խօսք

ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅԵՐԸ ԵՒ «ԷՆԿԻՒՐԻԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ»

Անցեալ ամիս Փարիզի մէջ ստորագրուած ֆրանքեւսուրիա - կան դաշնագրին մեծանը հազիւ չորցած, վրդովիչ լուրեր սկսան հասնիլ Սուրիայէն:

Թուրքերը, որոնք իրենց քունը փախցուցած են այդ օրէն ի վեր, ամէն միջոցի կը դիմեն՝ Սուրիոյ արար եւ հայ տարրերը իրարու դէմ լարելու, Որոնդէսի ջուրերը պղտորելու եւ ստեղ - ծուած չփոթ կացութեան մէջ՝ ձուկ որսալու համար:

Պոլսոյ եւ Էնկիւրիի թերթերը՝ վերէն դրդուած՝ մէջտեղ դրած են Իսքէնտէրունի եւ Անտիոքի անկախութեան խնդիր մը, առաջ քշելով Էնկիւրիի ծանօթ համաձայնագիրը:

Արդ, Էնկիւրիի դաշնագիրը՝ կնքուած 1921 հոկտեմբեր 20ին՝ Ֆրանս. կառավարութեան լիազօր Ֆրանքլէն – Պուէյոնի եւ Էնկիւ- րիի Ազգ. Մեծ Ժողովի կառավարութեան արտաքին գործերու նախարար Եուսուֆ Քէմալ պէյի միջեւ, հետեւեալ յօդուածը կը պարունակէ այս մասին.

ՅՕԴ. 7.— Մասնաւոր վարչաձեւ մը պիտի ստեղծուի Իսքէնտէրունի շրջանին համար: Այս շրջանի բրքացեղ բնակիչները ամէն դիւրութիւն պիտի վայելեն զարգացնելու համար իրենց մշակոյթը: Թուրք լեզուն այնտեղ պաշ- տօնական հանգամանք պիտի ունենայ:

Այս յօդուածը լաւագոյնս բացատրելու եւ թիւրիմացութեանց տեղի չտալու համար, սորեւ կուտանք նաեւ Լոնտոնի Համաձայ- նագրին (1921 մարտ 9ին կնքուած Պրիանի եւ Պէքիր Սամի պէյի միջեւ) համապատասխան յօդուածը.

ՅՕԴ. Ժ.— Ֆրանս. կառավարութիւնը մասնաւոր վարչաձեւ մը պիտի ստեղծէ Իսքէնտէրունի շրջանին համար, ուր բնակչութիւնները խառն հան - գամանք մը կը ներկայացնեն, ու յանձն կ'առնէ բրքացեղ բնակիչներուն տալ ամէն դիւրութիւն՝ անոնց մշակոյթի զարգացման եւ գործածութեանը հա - մար թուրքերէն լեզուին, որ հոն պաշտօնական հանգամանք պիտի ունենայ, նիշդ ինչպէս արաբերէն եւ ֆրանսերէն լեզուները:

Էնկիւրիի համաձայնագրին 7րդ յօդուածին ոգին չատ յստակ օրէն լուսաբանուած է ուրեմն Լոնտոնի համաձայնագրին Ժ. յօդ– ուածին մէջ: Ո՛չ մէկ խօսք անկախութեան մասին:

Հոս աւելորդ չենք նկատեր յիշեցնելու թէ Էնկիւրիի համաձայ– նագրին կից նամակով մը Պէքիր Սամի կը խոստանար 99 տարուան համար Ֆրանսական խմբակի մը տալ Արդնի – Մաահէնի երկաթի, քրոմի եւ արծաթի հանքերուն մենաշնորհը, ուրիշ հանքերու, եր- կաթուղիներու, նաւահանգիստներու եւ կամուրջներու շինու - թեանց մենաշնորհներուն հետ, ասկէ զատ Ֆրանսացի մասնագէտ- ներ պիտի կանչուէին՝ դասախօսելու համար թուրք արհեստա - գիտական վարժարաններու մէջ...:

Էնկիւրիի համաձայնագիրը բուռն քննադատութեանց ենթար- կուեցաւ այն առեն եւ Անգլիոյ արտաքին գործերու նախարարը բողոքագիր մը ներկայացուց Լոնտոնի Ֆրանսական դեսպան Սէնթ Օլերի, յիշեցնելով որ ըստ 1915 նոյեմբեր ամսուն Լոնտոնի մէջ կնքուած դաշինքին, Ֆրանսա իրաւունք չունէր անջատ հաշտու - թիւն կնքելու թշնամի պետութեան մը հետ:

Այդ բոլորը սակայն մնաց ձայն բարբառոյ յանապատի, կիլիկիան պարտուեցաւ առանց այլեւայլի եւ Հայերը մեծ մասով ապաստանեցան Սուրիա, ենթակայ Ֆրանս. հոգատարութեան:

Այժմ այդ հոգատարութիւնն է, որ կը ջնջուի, որոշ պայման- ներով եւ Սուրիան վերջնական անկախութիւն կը առնայ քանի մը տարիէն: Ֆրանքեւսուրիական դաշնագրին մէջ ապահովուած են փոքրամասնութեանց իրաւունքները: Անոնց շարքին՝ նաեւ ի- րաւունքները Իսքէնտէրունի շրջանի բնակչութեանց՝ ըլլան ա – նոնք հայ, թուրք կամ արաբ:

Տասնեւհինգ տարի անցած է Էնկիւրիի համաձայնագրէն ի վեր: Ֆրանսացիները լիուլի գործադրեցին անոր տրամադրութիւն- ները: Ամբողջովին պարպեցին Կիլիկիան եւ Թուրքերուն յանձնե- ցին: Իսքէնտէրունի եւ Անտիոքի շրջանին մէջ մասնաւոր վարչա- ձեւ մը ստեղծեցին, թուրքերէնը իբրեւ պաշտօնական լեզու ընդու- նեցին այդ շրջանի դատարաններուն եւ թուրք դպրոցներուն մէջ: Ամէն դիւրութիւն ընծայեցին Թուրքերուն՝ զարգացնելու համար իրենց մշակոյթը: Թուրքերէն լեզուով թերթեր կը հրատարակ- ուին՝ զերծ ամէն կաշկանդումէ:

Իսկ Թուրքերը իրենց խոստումներէն եւ ո՛չ մէկը գործադրե- ցին: Մասնաւորաբար մենաշնորհներու խայծը՝ որով չկացուցին Ֆրանքլէն - Պուէյոնի աչքը՝ կիլիկիան կորզելու համար Ֆրանսա- յէն՝ պարզ խաբեբայութիւն մը եղաւ: Ֆրանսացիք ո՛չ մէկ հան - քային կամ երկաթուղային մենաշնորհ ստացան: Ֆրանսացի մասնագէտներ չկանչուեցան Թուրքիա: Ընդհակառակն Ֆրանսա– կան դպրոցները փակուեցան Թուրքիոյ մէջ, Պոլսոյ համալսարա– նի Ֆրանսացի վրօիֆէսօրները ճամբուեցան եւ անոնց տեղ դեր - ման - Հրեաներ առնուեցան: Ֆրանսացիներուն արգիլուեցաւ նոյն- իսկ աշխատանքի իրաւունքը Թուրքիոյ մէջ եւ երկու տարի առաջ այս երկրի զաւակներէն հարիւրաւորներ ստիպուեցան Ֆրանսա վերադառնալ:

Այս բոլորէն ետք, Թուրքերը դեռ կը յաւակնին լեզու երկարել եւ յորդորել: Կիլիկիան դիւրաւ կրնային վերջ, ախորժակները սբր- ուած են եւ կ'ուզեն իրենց թաթը երկարել նաեւ անոր սահմանա - կից հողամասին վրայ:

Հայկական եւ եւրոպական պարեր,

մասնակցութեամբ եփրատ նուագախումբի:

Մուտք՝ 5 ֆր., անգործներու՝ 3 ֆր.:

ՀԱԿ. ՄԻՋ.— Շոգեկառք կառ տիւ Նօռէն՝ ժամը 1.17, 1.27 եւ 3.17:

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Հ. Ը. Դ. վիէնի կոմիտէն իր եւ բոլոր ընկերներու կողմէ խորին ցաւակցութիւն կը յայտնէ ընկ. Մ. Մուրատեանի, իր տիկնոջ եւ զոքանչ մայրիկին, իրենց չորսաւեայ փոքրիկին վաղաժամ մահուան առթիւ:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Օր. Հայկուհի Սիսակեան եւ պարագաները շնորհակալութիւն կը յայտնեն ամէն անոնց, որոնք անձամբ, գրաւոր եւ ծաղկեպսակով ցաւակցութիւն յայտնեցին իրենց սիրելի մօր՝ Այրի Տիկ. Արուսեակ Սիսակեանի դառնապատ մահուան առթիւ, ոչ տեղի ունեցաւ Սարսէլի մէջ:

×

Ֆ. Հ. Կ. Խայի Ալֆորվիլի մասնաճիւղի վարչութիւնը իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ Պ. Նշանեանի, որ իր թոռան՝ Արսէնի ծննդեան առթիւ միութեանս նուիրեց 50 ֆր.: Այս առթիւ կը շնորհաւորենք տէր եւ տիկ. Նշանեանը:

վարչութիւն

Ֆր. Բանակի դախկին Հայ կամաւորներու Միութեան Մարսէյլի մասնաճիւղի պարզեւավաճառէն շահած են հետեւեալ թիւերը.—

210, 1821, 2504, 2781, 610, 2826, 554, 228, 905, 323, 2410, 1093, 1155, 614, 1406, 2738, 1675, 171, 2391, 2227:

Պարգեւները ստանալու համար դիմել չորեքշաբթի երեկոները ժամը 7ին, միութեան կեդրոնը, 7 rue des Petites Maries, Մարսէյլ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Մարսէյլ—Փրատոյի Ս. Սահակ Մեսրոպ Մայր եկեղեցիի վարչութիւնը կը ծանուցանէ թէ՝ այս ապրիլի 1 Նոյ., ողբացեալ ԿՈՄԻՏԱՍ Վ. ԱՐԴԱՊԵՏԻ մահուան տարելիցին առթիւ մասնաւոր հոգեհանգիստ պիտի կատարուի, նախաձեռնութեամբ Մարսէյլի Հայ Երաժշտական Միութեան: Պիտի նախագահի, պատարագէ ու քարոզէ Տ. Գարեգին Եպսկ. Խաչատուրեան, կը հրաւիրուի Մարսէյլի Հայ հասարակութիւնը:

ՅԱՒՇԱՏԵՍ

Ֆ. Կ. Խաչի Պանեէօ-ֆաշանի մասնաճիւղը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերուհիները եւ ընկերները՝ 1 Նոյ. կիրակի կէսօրէ վերջ ժամը 4ին, 150 Route d'Orléans, պանեէօ, Véronի սրահին մէջ: Խիստ կարեւոր օրակարգ:

ՓԱՐԻՋԻ Տարօն-Տուրուբերանի Նահ. Հայր. Միութեան, անդամական ընդհ. ժողովը. 1 Նոյ. կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ին, 119 Ավընիւ տ'Իթալիի սրճարանին մէջ: Օրակարգ՝ Տարեկան հաշուետուութիւն, վարչութեան ընտրութիւն եւ ընթացիկ հարցեր: Ներկայանալ անդամատետրով:

ՀԱՍՑԷԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

O. M. Ohanessian, Patisserie Orientale,
4 Rue de la Pavillon, Paris (20)
Փոխադրուած է՝
44 Ave. de la Porte du Pré-St-Gervais, Paris (19):

ՀԱՆԴԷՍ — ՑԵՐԵԿՈՑԹ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՍԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՒ

Կիրակի, Նոյ. կիրակի առաւօտ ժամը 9ին, 10ին, Շաւիրիկեան սրահին մէջ,

5 Rue de l'Eclipse, *Մարսէյլ*

կը նախագահէ Պ. Կ. ԳՈՒԼՈՒՄԵԱՆ

կը խօսի՝ Պ. ՏԻԳՐԱՆ ՓԻՐԱՆԵԱՆ

«Լսարաններու դերը գաղթահայութեան մէջ»

Քաղաքական կարեւոր անցքերու մասին համառօտ տեղեկութիւնները կը տրուին:

Գեղարուեստական բաժինին իրենց մասնակցութիւնը կը բերեն Զուլթակհար Պ. Ս. ՉԷՕՐՃԵԱՆ եւ Պ. Տ. ԹՈՒՈՅԵԱՆ (արտասանութիւն)

Մուտքը ազատ է:

ԹԷՅԱՍԵՂԱՆ

Համազգայինի Սարսէլի Մասնաճիւղին կողմէ,
Իր վարձած սեփական ընթերցասրահ—ակումբի բացման առթիւ,
31 Հոկտ. շաբաթ երեկոյ ժամը 9ին, 31 Rue Beauséjour, Սարսէլ
Տեղի պիտի ունենայ վիճակախաղ:

Բացման ճաշկերոյթ

«Հայ Արծիւ» (l'Aigle d'Arménie) ակումբի վարչութիւնը կը ծանուցանէ թէ՝ նորակազմ ակումբի բացման ճաշկերոյթը տեղի պիտի ունենայ *1 Նոյ.* կէսօրէ վերջ ժամը 2.30ին,

7, Salle Tublerի մէջ, *19* rue de la *Pompe*, մէթրօ՝ *Muette*

Ցերեկոյթի պատշաճ գեղեցիկ պարտաւորիչ է. ի հարկին գոգ գոյն գեղեցիկ կրել ընդունելի է: Առանց հրաւիրագրի մուտքը արգիլուած չէ: Հիւրասիրութիւն առանց դրամի:

Վարչութիւն «Հայ Արծիւ» Ակումբի *14* rue Meyerbeer, Blanc-Mesnil *(S. et O.)*

ԳԱՑԷՔ ՏԵՍԷՔ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Cinéma REXY
Rue Cours Lafayette, angle Garibaldi.

ԳԱՑԷՔ ՏԵՍԷՔ

CIGALE CINÉMA
60 Avenue de Saxe-LYON.

ԿԱՊՈՑՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ռուսաստանի մէջ գտնուած ձեր ազգականներուն եւ բարեկամներուն *յաւազոյն եւ իրական օժանդակութեան ձեւն է՝ ղրկել անոնց կապոցներով բրդեղէն կոտորներ, ճերմակեղէն, կօշիկներ եւ Բրիքօթաժ:*

Այս բոլոր իրեղէններէն մենք ունինք ճոխ մթերք եւ կ'ուզարկենք զանոնք Ռուսաստան շատ ձեռնտու եւ մատչելի գիներով:

Ունինք տրամադրելի ընտրութիւնը եւ ըմպելիներուն ղրկանքներ, ինչպէս նաեւ գաշնակներ՝ շատ մատչելի գիներով:

Գիներու ցանկը եւ նմոյշները կը ղրկուին առաջին իսկ պահանջին

Դիմել՝ American Lloyd, Paris (9), 7 rue Auber
Tél. Opéra 67-77, 67-78

ԱՐՔԱՅԱՆ ԽՄԻՋ

ՐԱՔԻ ՏԻՒԶ

Զուտ խաղողէ քաշուած եւ անխտիրաբար պատրաստուած օղին է ՐԱՔԻ ՏԻՒԶԸ:

Զգուշացէք այլ եւ այլ նիւթերով պատրաստուած եւ ձեր կեանքին վնասակար օղիները խմելէ, այլ խմեցէք միմիայն ՐԱՔԻ ՏԻՒԶԸ, որուն անարատ, կազդուրիչ եւ ախորժաբեր ըլլալը հաստատուած է պետական քննութեամբ:

UN·DUZE
MARQUE DÉPOSÉE
RAKI
40°
DUZE
Véritable Anisette Orientale
DISTILLERIE OTTOMANE ISTAMBOUL

Ֆրանսայի համար ագենտները՝ Ա. ՏԱԼԱՖԻԲԵԱՆ
8 rue Suffren, Marseille — Tél. D. 70-89

Le Gérant: H. STEPHAN

Imprimerie A. DER (AGOPIAN) 17, Rue Damesme, PARIS (13)

ՉԱՐԹՕՆՔ

(ՎԷՊ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՑ ԿԵԱՆՔԷ)

—o—

Այդ առասպելական դէպքէն ետքը, ուսուիկանութիւնը աչալուրջ կը հսկէր Գալուստի վրայ: Բազմաթիւ անգամներ զիչերով յանկարծ չորթասատած եւ խուզարկած էին տունը, բայց ամէն անգամ ալ ապարդիւն:

Ուշագրկութիւնները անշուշտ պատճառ մը չէին, որ Գալուստը ձեռնթափ լինէր գործէն: Առաջուան նման երեւանի մէջ, ինք կը մնար կեդրոնական մարդը, յեղափոխական ամէն գործի ամէն չարժման իսկական առանցքը:

Իր անկողնին մէջ վահէն եւ Վարդանը տեղաւորելէ վերջ, Գալուստը քաշուեցաւ պարտէզի վրայ բացուող իր սենեակը: Ծառայի մեկնելէն քիչ անցած եկաւ տարիքը առած պառաւ օրիորդ մը, որ յեղափոխական չորթչանների մէջ ծանօթ էր Քոյրիկ անունով: Կարճահասակ պառաւ մըն էր, տեղական տարազով, ճերմակ քօղը գլխուն:

Շատ կենդանի եւ աշխուժ աչքեր ունէր, որոնց պսպղուն փայլը տարիքին հետ զուգընթաց չէին:

— Հը՞, Գալուստ,— պառաւը՝ մինչեւ քթին ծայրը հասած ակնոցը չտկելով՝ դարձաւ ընկերոջը,— ի՞նչ խապար է, հէս գիչերէն վերջ...

— Հիմա Պետրոսն ու Ահարոնն ալ կուգան... կը պատմեմ ... քոյրիկ, քեզի անհանգիստ ըրի գիչերով...

— Բան չունիս ... ինչ անհանգիստ լինելու խնդիր կայ,— ու Քոյրիկը տեղաւորուեցաւ Գալուստի դրասեղանին առջեւ եւ առաջին պատահած գիրքը վերցնելով՝ սկսաւ կարդալ:

Իրարու ետեւէ երկու հոգի սենեակէն ներս մտան: Մէկը երիտասարդ ուսուցիչ մըն էր, իսկ երկրորդը՝ տարիքն առած վաճառական մը, միջահասակ, դանդաղաշարժ մարդ մը, որուն վրայ ամէնէն աւելի աչքի զարնող բանը պատկառելի փորն էր, կլորը, խոշոր դդումի նման դուրս ինկած:

— Տօ, Գալուստ,— բարձրաձայն յօրանջելով ըսաւ վաճառականը տանտիրոջ, — հը, նորէն ի՞նչ կայ ... չես ձգեր որ մարդ հանգստանայ ... Առտու չէ՞ր կարելի.., — ու երկու ձեռքերը պարզած, բերանը խոշոր մը բացաւ ու յօրանջեց:

— Ահարոն, նստիր եւ չատ մի խօսիր,— յանդիմանեց Քոյրիկը.— անչուշտ կարեւոր բան մը լինելու է...

Երիտասարդ ուսուցիչը, առանց ձայն հանելու, դիւանի վրայ տեղաւորուեցաւ:

— Բայց բժի՞շկը ուր մնաց,— հարցուց Ահարոնը՝ տեղաւորուելով ու սուցչի մօտ.— ինչո՞ւ զայն չես կանչեր:

— Բժիշկը Փարաքար մնացեր է: Հիմա մտիկ ըրէք, — ու Գալուստը յայտնեց ընկերներուն այդ օրուան դէպքը, Վահէի գալը եւ Պոնտոլովսկիի մասին տրուած որոշումը:

Ներկաներէն ոչ մէկը նկատողութիւն ըրաւ տեղւոյն մասին: Միակ հարցը, որ կը հետաքրքրէր զիրենք, գործի յաջողութիւնն էր: Բազմաթիւ անգամներ Պոնտոլովսկիի հարցը դառնալ ժողովուրդի գլխուն:

Դժբախտաբար, ժամանակը չատ կարճ էր նման գործուքին ձեռնարկ մը այնպիսի կերպով կազմակերպելու, որ յաջողութիւնը անկասկածելի լինէր: Ասով մէկտեղ, Գալուստի մօտ հաւաքուածները կը գիտակցէին, որ հայ ժողովուրդի հոգեկան տագամաստ վիճակին մէջ, այդ տեռորը բարերար յեղաշրջում մը պիտի առաջացնէր: Պէտք էր այդ տեռորը կատարել, թէկուզ մեծ զոհողութեան գնով:

Երկար վիճաբանութիւններէ ետքը, որոշուեցաւ, տեռորը կատարել Հըրազդանի կամուրջէն անդին՝ այդի ներու ճամբուն վրայ գտնուող լերկ բլուրի մօտ, որտեղէն պիտի անցնէր Պոնտոլովսկին Սուրմալու երթալու համար:

Քոյրիկը, չատ գործնական կին մը, իր վրայ վերցուց Պոնտոլովսկիի չարժումները լրտեսելու պատասխանատու գործը, իր «ագռաւներու» միջոցով: Ագռաւները, արիասիրտ աղջիկներ էին, որոնք չատ մը պարագաներու մէջ կ'օժանդակէին Քոյրիկին:

Լուսաբացէն առաջ Գալուստ արթնցուց Վահէն ու Վարդանը: Մաթոսը արդէն եկած էր Նորքէն, ու Գալուստէն իմացած կատարուելիք գործի մասին: Շատ մեծ ոգեւորութեամբ էր որ ան համաձայնեցաւ այդ գործին մասնակցիլ. նախ որ ժամանակը չատ կարճ կը դանէր, երկրորդ որ կ'ուզէր իր մօտ ընկերներէն մէկն ունենալ հետը: Բայց երբ Վահէն վճռական կերպով յայտնեց, թէ ինքն ալ պիտի մասնակցի, Մաթոսը անմիջապէս համաձայնեցաւ:

Ոտքի վրայ թէյեւ նախաճաշ մը ըրին ու ընկերները համբուրուելով բաժնուեցան իրարմէ: Մաթոսը, Վահէն ու Վարդանը, լոյսը բացուելու մօտ, անցան Հրազդանի կամուրջէն, քիչ մը առաջացան այգիներու մէջով եւ մտան ձախ կողմի վրայ գտնուող այգի մը, քարքարուտ բլուրի մօտ, ուր ճամբան կիսաշրջան մը կը դառնայ:

(Շար.)

ՄԱԼԽԱՍ

ՓՆՏՈՒԵՑԻՔ եւ ԿԱՐԴԱՑԵՔ

երգիծաթերթ՝ «Մ Ե Ղ Ո Ւ»

փարիզի եւ շրջանի Յառաջի ցրուիչ

Պ. ԱՒԵՏԻՍԵԱՆ:

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

EE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

17, Rue Damesme, PARIS (13e)
Téléphone : Glacière 15 - 70

(ԵՐԹԵԽԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,— ՏԱՐԵԿԱՆ | ՎԵՑԱՄՍԵԱՑ | ԵՒԱՄՍԵԱՑ

Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա	250 »	130 ֆրանք	—
Ամերիկա եւ ուրիշ երկիրներ	200 »	100 ֆրանք	—

ՇԱԲԱԹ
31
ՀՈԿՏԵՄԲԵՐ
SAMEDI
31 OCTOBRE
1936

ԺԶ ՏԱՐԻ — 12e Année No. 3258

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒՈՐ ԽՕՍՔ

ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՌՈՒՉԵՒԸ

Անախորժութեաց եռուզեռ մը կը տիրէ այս օրերս դիւանագիտական աշխարհին մէջ :

Իտալիոյ արտաքին գործերու նախարարը հաղիւ Հռոմ վերադարձած իր Գերմանիա այցելութենէն, մայրաքաղաքէ մայրաքաղաք նշանակալից երթեւեկ մը սկսաւ : Մուսոլինիի դուռ չարժման մէջ են Փոքր Համաձայնութիւնն ու Պալքանեան Համաձայնութիւնը :

Ռումանիոյ վարչապետ Թաթարէսքու Պելկրատ այցելեց եւ իր ճամբորդութիւնը խորհրդաւոր քօղով մը ծածկուեցաւ : Անկից հազիւ վերադարձած, Կարոլ Թագաւորը ճամբայ ելաւ դէպի Զեխոսլովաքիոյ մայրաքաղաքը :

Եուկոսլաւիոյ վարչապետ Սթոյատինովիչ, իր կարգին կատեւոր ճամբորդութեան մը ձեռնարկեց եւ Սոֆիայի վրայով դնաց մինչեւ Էնկիւրի :

Լոնտոնի գերմանական նոր դեսպան Ֆոն Ռիպպենթրոփ — Հիթլերի մտերիմ խորհրդականը — սպասեց որ կոմս Զիանոյի հետ հանդիպումները վերջանան, իր պաշտօնատեղին մեկնելու համար, անշուշտ նոր հրահանգներով :

Արեւելեան ճակատին վրայ, Աֆղանիստանի պատերազմական նախարար Սէրտար Շահ–Մահմուտ խան քանի մը չաբաթ առաջ Էնկիւրի այցելեց եւ յայտարարեց թէ սերտ գործակցութիւն պիտի տեղծուի Թուրքիոյ, Աֆղանիստանի, Իրանի եւ Իրաքի՝ այսինքն Մերձաւոր Արեւելքի չորս իսլամ պետութեանց միջեւ :

Հարկ չկայ յիշելու ժրնեւի խորհրդակցութիւնները, Լոնտոնի խորհրդաժողովները, Անգլիոյ եւ Ֆրանսայի պատասխանատու վարիչներու յաճախակի տեսակցութիւնները, բարեկամ կամ դաշնակից պետութեանց սպարապետներուն փոխադարձ այցելութիւնները, Պալքանեան Համաձայնութեան ապագայ նստաշրջանը խորհրդաժողովը, եւայլն :

Այս բոլորը ցոյց կուտան թէ բան մը կ'անցնի կը դառնայ աշխարհի, մանաւանդ Եւրոպայի մէջ :

Չինադաշարէն ի վեր ա՛յքան խառնակ չէր եղած կացութիւնը :

Մինչեւ Եթովպիոյ պատերազմը, մեծ եւ փոքր պետութեանց փոխյարաբերութիւնները սարքեր ձեւով դասաւորուած էին : Անկէ իվեր չատ ջուր անցաւ կամուրջներու տակէն : Եթովպիոյ պատերազմը առաջին, ֆրանքեւխորհրդային դաշինքը երկրորդ, կարեւոր դարձակէտները եղան՝ Եւրոպայի քաղաքական դիմագիծի փոփոխութեան համար :

Առաջինին պատճառով, Իտալիա իրեն դէմ գաւ Մեծն Բրիտանիան : Ցարաբերութիւնները այնքան լարուեցան, որ քիչ մնաց Միջերկրականի մէջ անգլեւիտալական պատերազմ մը բռնկէր : Անգլիան պատրաստ չէր : Անկէ ի վեր սրարշաւ կը սպառազինուի՝ զալիք պատերազմին համար, որ չի դիտցուիր թէ ե՛րբ պիտի պայթի :

Իտալիա կայսրութիւն դարձած ըլլալով, Միջերկրականի մէջ եւ Հնդկաստանի ճամբուն վրայ հաշուի առնուելիք մրցակից մըն է այժմ Մեծն Բրիտանիոյ : Այդ մրցակիցին դէմ յանդիման մինակ չմնալու համար, Անգլիա զինակիցներ փնտռեց եւ գտաւ զանոնք յանձին Եուկոսլաւիոյ, Յունաստանի ու մանաւանդ Թուրքիոյ :

Այս վերջինը՝ սարսափահար իտալական ջախջախիչ յաղթանակէն եւ զգալով որ յաջորդ փոթորիկը իր գլխուն կրնայ պայթիլ, պինդ կառչեցաւ Անգլիոյ, որուն չահը այս անգամ կը պահանջէր վերագինել Նեղուցները :

Իտալական վտանգը բարեկամ դարձուց Անգլիան ու Թուրքիան : Լօզանի դաշնագիրը սրբագրուեցաւ ի նպաստ Թուրքիոյ : Անգլիա չքնաղարձ մը ըրաւ եւ հրաժարեցաւ Նեղուցներու մասին իր աւանդական քաղաքականութենէն :

Անգլիոյ նոր թագաւորը Էտուըրտ Ը· որ ծրագրած էր արձակուրդը անցընել Ֆրանսայի հարաւային կապոտուն ափերուն վրայ, փոխեց ուղեգիծը եւ Ափէնքի ճամբով գնաց Պոլիս՝ ողջունելու համար Քամալ Աթաթիւրքի հետ : Անկէ անցաւ Պալքաններ ու Վիէննա :

Իտալական սարսափը, որ Անգլիոյ մօտեցուց Թուրքիան, զայն մասամբ հեռացուց Մոսկուայէն : Նոյն հասարակաց սարսափը իրարու զինակից դարձուցած էր Թուրքիան ու Եուկոսլաւիան : Ալեքսանդր Թագաւորը՝ Մարսիլիոյ մէջ սպաննուելէն անմիջապէս առաջ, Պոլիս երթալով, Մուսթաֆա Քէմալի հետ կնքած էր պէս առաջ, Պոլիս երթալով, Մուսթաֆա Քէմալի հետ կնքած էր այդ զինակցութիւնը :

Անգլիոյ Թագաւորին Պոլիս եւ Պելկրատ այցելութենէն ու գերմանեւիտալական բարեկամութեան ամրապնդումէն վերջ, Սերպիոյ վարչապետ Սթոյատինովիչի էնկիւրի այցելութիւնը շատ նշանակալից երեւոյթ է :

Նոյնքան չատականչական են Ռումանիոյ Թագաւորին Փրակա, Ռումանիոյ վարչապետին Պելկրատ այցելութիւնները : Կընչանակէ թէ՝ Փոքր Համաձայնութիւնն ու անոր լրացուցիչ Պալքանեան Համաձայնութիւնը ծանրակիր խնդիրներու առջեւ կը գտնուին :

Ըսինք թէ Եւրոպայի քաղաքական դիմագիծի փոփոխութեան երկրորդ կարեւոր դարձակէտն եղաւ Ֆրանքեւխորհրդային դաշինքը :

Այս դաշինքը պատրուակ բռնելով, Գերմանիա խախտեց Լոքառնոյ եւ զինեց Հենոսեան հողամասերը : Միեւնոյն պատճառով, Պելճիքա չէզոքութիւն յայտարարեց՝ որպէսզի չտիպուի Գերմանեւռուս պատերազմի մը պարագային Ֆրանսայի կողքին կռուիլ Գերմանիոյ դէմ :

Ակնէ զատ, Ֆրանսայի հանրային կարծիքին մէջ ալ դժգոհութիւնը ծայր առած է այդ դաշինքին դէմ : Ծերակուտական մը՝ Հերիօ, ամէն առիթով կը պոռայ թէ Ռուսիա ներքին քաոսի մէջ է, անկարելի է որ ան կարենայ պատերազմի մը մէջ մտնել Գերմանիոյ դէմ : Ֆրանսայի ներկայ նախագահ Լեպրէն ալ կը կարծէ թէ Ռուսիա ներքին քաոսի մէջ է, եւ ինքն ալ կը հակակշռէ Հերիօն : Ֆրանսայի ներկայ վարչապետ Սարրոն ալ կը կարծէ թէ Ռուսիա ներքին քաոսի մէջ է, եւ ինքն ալ կը հակակշռէ Հերիօն : Ֆրանսայի ներկայ արտաքին նախարար Ֆլանտէն ալ կը կարծէ թէ Ռուսիա ներքին քաոսի մէջ է, եւ ինքն ալ կը հակակշռէ Հերիօն : Ֆրանսայի ներկայ ներքին նախարար Մանտել ալ կը կարծէ թէ Ռուսիա ներքին քաոսի մէջ է, եւ ինքն ալ կը հակակշռէ Հերիօն : Ֆրանսայի ներկայ ռազմական նախարար Տալատիէ ալ կը կարծէ թէ Ռուսիա ներքին քաոսի մէջ է, եւ ինքն ալ կը հակակշռէ Հերիօն : Ֆրանսայի ներկայ ծովային նախարար Տեա ալ կը կարծէ թէ Ռուսիա ներքին քաոսի մէջ է, եւ ինքն ալ կը հակակշռէ Հերիօն : Ֆրանսայի ներկայ օդային նախարար Պիշ ալ կը կարծէ թէ Ռուսիա ներքին քաոսի մէջ է, եւ ինքն ալ կը հակակշռէ Հերիօն : Ֆրանսայի ներկայ գաղութներու նախարար Մանդել ալ կը կարծէ թէ Ռուսիա ներքին քաոսի մէջ է, եւ ինքն ալ կը հակակշռէ Հերիօն : Ֆրանսայի ներկայ աշխատանքի նախարար Ռամատիէ ալ կը կարծէ թէ Ռուսիա ներքին քաոսի մէջ է, եւ ինքն ալ կը հակակշռէ Հերիօն : Ֆրանսայի ներկայ առողջապահութեան նախարար Ռեմեզ ալ կը կարծէ թէ Ռուսիա ներքին քաոսի մէջ է, եւ ինքն ալ կը հակակշռէ Հերիօն : Ֆրանսայի ներկայ տեղեկատուութեան նախարար Ժան Զեյ ալ կը կարծէ թէ Ռուսիա ներքին քաոսի մէջ է, եւ ինքն ալ կը հակակշռէ Հերիօն : Ֆրանսայի ներկայ ազգային պաշտպանութեան նախարար Ռեյնոդէն ալ կը կարծէ թէ Ռուսիա ներքին քաոսի մէջ է, եւ ինքն ալ կը հակակշռէ Հերիօն : Ֆրանսայի ներկայ ներքին նախարար Մանտել ալ կը կարծէ թէ Ռուսիա ներքին քաոսի մէջ է, եւ ինքն ալ կը հակակշռէ Հերիօն : Ֆրանսայի ներկայ ռազմական նախարար Տալատիէ ալ կը կարծէ թէ Ռուսիա ներքին քաոսի մէջ է, եւ ինքն ալ կը հակակշռէ Հերիօն : Ֆրանսայի ներկայ ծովային նախարար Տեա ալ կը կարծէ թէ Ռուսիա ներքին քաոսի մէջ է, եւ ինքն ալ կը հակակշռէ Հերիօն : Ֆրանսայի ներկայ օդային նախարար Պիշ ալ կը կարծէ թէ Ռուսիա ներքին քաոսի մէջ է, եւ ինքն ալ կը հակակշռէ Հերիօն : Ֆրանսայի ներկայ գաղութներու նախարար Մանդել ալ կը կարծէ թէ Ռուսիա ներքին քաոսի մէջ է, եւ ինքն ալ կը հակակշռէ Հերիօն : Ֆրանսայի ներկայ աշխատանքի նախարար Ռամատիէ ալ կը կարծէ թէ Ռուսիա ներքին քաոսի մէջ է, եւ ինքն ալ կը հակակշռէ Հերիօն : Ֆրանսայի ներկայ առողջապահութեան նախարար Ռեմեզ ալ կը կարծէ թէ Ռուսիա ներքին քաոսի մէջ է, եւ ինքն ալ կը հակակշռէ Հերիօն : Ֆրանսայի ներկայ տեղեկատուութեան նախարար Ժան Զեյ ալ կը կարծէ թէ Ռուսիա ներքին քաոսի մէջ է, եւ ինքն ալ կը հակակշռէ Հերիօն : Ֆրանսայի ներկայ ազգային պաշտպանութեան նախարար Ռեյնոդէն ալ կը կարծէ թէ Ռուսիա ներքին քաոսի մէջ է, եւ ինքն ալ կը հակակշռէ Հերիօն :

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՍՊԱՆԻՈՅ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՈՒԻՆԵՐԸ

Կառավարական զօրք հակապարձակման սկսաւ

Սպանիոյ հանրապետութեան պատերազմական նախարարին կոչը, զոր հրատարակեցինք երէկ, նախանչան մըն էր հակայարձակումի : Արդարեւ հինգշաբթի օր Մատրիտի ռազմիկները զրոհ մը տուին մայրաքաղաքին հարաւէն, ձեռք ձգելով որոշ յաջողութիւններ : Ուրիշ կերպ ալ չէր կրնար ըլլալ : Թշնամին ոչ միայն իր կրակին տակ առած էր մայրաքաղաքը, այլեւ խլած էր չոգեկառքով հաղորդակցութեան վերջին ճամբան : Անհրաժեշտ էր ազատել այդ գիծը եւ թշնամին հետեւ քիչ մը աւելի հեռու, որպէսզի ազատ չնչէր մայրաքաղաքին բնակչութիւնը, որ արդէն, առանց ատոր ալ, կը տագնապի պարէնի, նոյնիսկ ջուրի պակասութենէն :

Ապստամբները, որքան որ կը սպասէին այդ հակայարձակման, այսուհանդերձ անակնկալ մը եղաւ զրոհը՝ իր ուժգնութեամբ եւ պատրաստութեամբ : Հակայարձակումը ուղղուած էր դէպի Իլլէսքաս : Բազմաթիւ հրասայլերու եւ զօրաւոր հրետանիի մը պաշտպանութեան տակ, կառավարական զօրքը յառաջ խաղաց, գիրկընդխառն կռիւ մը մղեց, վերջապէս կրցաւ թշնամին ետ նետել՝ դրաւելով անոր կրակի առաջին գիծերը : Ապստամբները կորսնցուցին Թուրրէճան, Քուպաս, Քուէնթա գիւղերը : Մատրիտ մեծ խանդավառութեամբ ողջունեց այս յաղթանակը, որ «սկիզբն է փրկութեան », ինչպէս կը գրեն :

Թղթակից մը այսպէս կը նկարագրէ կռիւը ·—

Հինգշաբթի առաւօտուն, կանուխ, կառավարական հրետանին դժոխային կրակ մը կը փսխէր ապստամբներու դիրքերուն վրայ : Հրետանիի այս կրակը, որքան չանկարծակի, նոյնքան սաստիկ էր, ինչ որ պահ մը անչարժութեան մատնեց հակառակորդը : Մաւրիտանական այրուձին նետուեցաւ յառաջ, սակայն զնդացիր խաչաձեւ կրակ մը ընկրկեց հեծելազօրքին զրոհը : Եռանիւ մեքենաշարժ կառքեր, որոնք ցածէն չառաջնանալով՝ զնդացիրի կրակէն քիչ թէ չատ պաշտպանուած էին, թռելով չառաջ անցան եւ իրենց բացած կրակով խուճապ մը ստեղծեցին թշնամի գիծերուն մէջ : Ժամը 9 էր : Եւ ահա հրասայլերը արշաւասոյր չարժակում մը կատարեցին, անոնց ետեւէն զօրքը զրոհ տուաւ վրէժխնդիր աղաղակներով, որոնց հետ զնդացիրներու ճարճատիւնը դժոխային մթնոլորտ մը ստեղծեր էին :

Թշնամին տակաւին չէր չարժեր : Պահ մը փորձ մը կատարեց զրոհին զրոհով պատասխանելու, սակայն տեղի տուաւ եւ կառավարական զօրքը մտաւ թշնամին առաջին գիծերուն մէջ : Հարաւ - արեւելեան թեւին վրայ զրահապատ չոգեկառք մը յառաջացաւ ճիշդ ժամանակին՝ հնձելով մաւրիտանական այրուձիի չոկատ մը : Եւ 30 քիլոմեթր երկայնքով, թշնամի գիծը նահանջեց՝ կառավարական զօրքին ձեռքը ձգելով Սէսէնան, Խոքիվասը, Քուէս - թան, որ կը տիրէ Իլլէսքասի բարձունքներուն :

Հանրապետական բանակին առաջին յաղթանակն էր այս, կռիւներուն սկիզբն է ի վեր :

Ապստամբները թէեւ բաւական կորուստ ունեցան, սակայն Պուրկոսի մէջ կը յայտարարուի որ Մատրիտ չի կրնար փրկուիլ, այս յաղթանակը ուրիշ հետեւանք չի կրնար ունենալ, բայց եթէ միայն մէկ չաբաթով ուշացնել մայրաքաղաքին անկումը :

ՉԷՋՈՔՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Անգլ. Երեսփ. Ժողովին մէջ

Հինգշաբթի Անգլիոյ Երեսփ. Ժողովին մէջ հարցապնդում մը կատարուեցաւ Սպանիոյ դէպքերուն առթիւ :

Արտաքին նախարարը պատասխանելով ըսաւ ·

— Սխալ է թէ Ֆրանսական կառավարութիւնն ստանձնեց չէզոքութեան համաձայնագիր մը կնքելու հրաւէրը եւրոպական պետութեանց՝ բրիտանական կառավարութեան ի գործ դրած ճնշումին հետեւանքով : Ցերիւրանք է այդ : Ֆրանսական կառավարութիւնը հրաւէրը կատարեց իր իսկ նախաձեռնութեամբ : Եւ տակիկ կատարելով մեծ ծառայութիւն մը մատոյց Եւրոպայի խաղաղութեան :

Չէզոքութեան միջազգային յանձնախումբը կը գործէ կանոնաւորաբար : Ոչ մէկ կառավարութիւն հրաժարած է : Վերջին այս տագնապալի չաբթուներուն՝ մենք գործեցինք Ֆրանսական կառավարութեան հետ սերտիւ կապուած : Եւ կը յուսամ թէ մինչեւ վերջ ոչ մէկ որոշում պիտի տանք առանձնակի, — մեր երկու մեծ պետութիւնները կարեւոր պարտականութիւն մը ունին այս գործին մէջ : Մեր ժողովուրդը եւս կը կարծէ թէ լաւագոյն քաղաքականութիւնը այն է որ չէզոքութիւն պահուի եւ սահմանափակուին Սպանիոյ արիւնոտ դէպքերը՝ առանց երբեք տարածուելու այլ երկիրներ : Միայն Խորհրդային Միութիւնն է որ դժգոհ է : Այնոնք ամբաստանեցին Փորթուգալը, բայց հիմ չունէին իրենց ամբաստանութիւնները :

Իսըն յետոյ ցաւ յայտնեց որ Մատրիտի կառավարութիւնը մերժեց փոխանակել պատանդները եւ պատերազմական գերիները :

Այնուհետեւ խօսք առին ընդիմադիրները, որոնք քննադատեցին չէզոքու-

(ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԴԱԼ Դ· ԷՋ)

Հանրի - Հէյ՝ ծրագրած էհրաւիրել կառավարութիւնը, որ չեղեալ նկատէ կամ գոնէ վերագնահատման ենթարկէ Ֆրանքեւխորհրդային դաշինքը : Հակառակ ակնկալուածին, ո՛չ մէկ պետութիւն յարեցաւ այդ դաշինքին· ընդհակառակն ատոր պատճառաւ Ֆրանսա հետզհետէ կը կորսնցնէ իր զինակիցները՝ սկսեալ անմիջական հարեւանէն :

Սպանիոյ դէպքերը աւելի եւս ծանրացուցին արդէն իսկ հեղձուցիչ դարձած քաղաքական մթնոլորտը : Համաձայնավար եւ հակաբոլշեւիկ ճակատները ո՛չ միայն բուն իսկ երկրին այլեւ արտաքին աշխարհին մէջ ալ իրարու կը բախին չարունակ :

Աշխարհ նստած է ժայթքելու պատրաստ հրաբուխի մը վրայ : Փոքրիկ ցնցում մը կրնայ բռնկցնել զայն :

ՀՐԱՆՏ - ՍԱՄՈՒԷԼ

ՕՐԸ ՕՐԻՆ

ՇԻՐԻՄԻ ՄԸ ՎՐԱՑ

« Ցառաջ »ի յուլիս 28ի թիւով, մեր բանաստեղծ երիտասարդ աշխատակիցը, Արամայիս Սրապեան, խնդրանք մը կը ներկայացնէր Վենետիկի Միխիթարեան Միաբանութեան ·—

Հ· Արսէն Ղազիկեանի աճիւնը, որ նետուած է փառովայի մէկ անշուք անկիւնը, փոխադրել Ս· Ղազար, հոն ուր նոճիներն ու ձիթենիները իրենց խորախորհուրդ երգով կը բնացնեն միաբանութեան փառայեղ դէմքերը :

Ցետոյ Արամայիս, մանկական հաւատով մը՝ արդէն իսկ(և ի՛նչ շուտ) կատարուած ենթադրելով իր խընդրանքը, կը գրէր·

— Հիմա բնացիր դարձեալ, սիրելի վարդապետ, վասնզի կը զգամ որ աճիւնիդ վրայ Ս· Ղազարու նոճիները կը ծռին արդէն, մինչ ձիթենիներ կ'օրօրեն ինծի : Բնացի՛ր, վարդապե՛տ, իրիկունը կ'իջնէ արդէն եւ մոմերը կը վառեն Ս· Ղազարի խորան - ներուն վրայ : Բայց դուն կը բարձրաձա՛ս հոդէն, հասակդ կը ցցես իբր կոնին մէջ ու կը բալես տուներնե - րուն մէջէն, կը ժպտիս անծանօթին որ կ'անցնի բովդէդ, կը հրճուիս ծո - ւոյն դիմաց որ կ'ուռի, արեւուն դէմ՝ որ կը վառի ջուրերուն մէջ, մինչ դուն գլխահակ կը սկսիս մրմնջել հո օրուան վերջին աղօթդ » :

Ինծի համար՝ ռոմանթիք աւանդութեան մը տրտմութիւնը, որ կայ հիւ մը ամէն մարդու մէջ, շիրիմ մը կ'ուզէ մեռելին համար : Որեան ալ հիւ խօսի ինծի շիրիմ մը իմ ոսկորներուս վրայ, գիտեմ որ յիշատակարան մըն է ան, երբ կը դրուի մէկու մը վրայ, որ մեր մտաւորական եւ բաղաքակրթական լաւագոյն ժառանգութեան՝ լեզուին բաջահունտ մշակը դարձաւ : Վենետիկի Միաբանութեան համար՝ Ղազիկեան ունի ուրիշ արժէք մըն ալ, — իր անդամներուն մէջ հետզհետէ կը նուազի այն զար մեծ կը պաշտեցիք Մխիթար աբբահօր, Բագրատունիի եւ Ալիշանի եւ այդ փառայեղ հոյլին մէջ : Ս· Ղազար իր պարիսպներէն հեռու պահելով փառ մը, պիտի նմանէր մատանիի մը, որուն վրայէն ինկած է թանկագին քարերէն մին : Պարսպապահութեան սարսափն իսկ կը թելադրէ Ս· Ղազար փոխադրել մեր լեզուի ամպրոպագոռ մշակը, իրենց դաշտին ծաղիկը, — որպէսզի այդ մեծ Պարսիզակցին երբեմն երբեմն վեր բարձրանայ հոդէն, հայերէնի դաս մը կարդայ վանէէն ներս եւ վանէէն դուրս : Եւ մանաւանդ խօսի մեր գրաբարին փառերուն մասին, — առանց այդ մեռեալ բայց անմահ լեզուին՝ պիտի սառի, պիտի անշնչանայ արդի աշխարհաբարը : Չէ՞ որ այդ մեծամասնիչ լեզուին (խօսքը գրաբարի մասին է միշտ), այդ պատուածախառն բարբառին արուեստը հիմա, ո՛վ դժբախտութիւն, շատ բիչեր միայն գիտեն : Հիմա թերեւս Տարագ մը ունինք մի - այն, ուսուցիչը Ղազիկեանի, եւ այդ անուններէն վերջ (եթէ չյիշենք կարգ մը արժէքաւոր Մխիթարեաններ), կը վախնա՛մ, իրապէս կը մեռնի գրաբարը, կը լռէ հին նուագարանի մը պէս, ու կը փակուի Հայկազանց փառերու տաճարին դուռը :

Պէտ է Ս· Ղազար փոխադրել Ղազիկեանի աճիւնները, անոր անունով եւ գործով ներշնչուելու համար : Մենք այս պահանջը պիտի կրկնենք յաճախ, երբեմն մեր լեզուին թթուն աւելցնելով, եթէ չկրնանք հասկցնել թէ ի՛նչ բան մեզ կը կապէ Ղազիկեանի անունին, ի՛նչ բան մեզի սիրելի կը դարձնէ Մխիթարեան անունը :

Ստորագրողը չի սիրեր պայմանական ձեւերը, եւ մամուլով պայքարի իր աւանդութիւններուն մէջ ոչ շեղիլ գիտէ, ոչ ալ մոռնալ արդար պահանջ մը, ինչպէս պիտի հասկցուի, եթէ հարկ տեսնուի :

ԱՐԱԶ

ԳՆԴԱԿԱՀԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ...

«Մաթէն»ի թղթակիցը Մոսկուայէն կը տեղեկացնէ, որ հալածանքներն ու գնդակահարութիւնները կը շարունակուին ամբողջ Ռուսաստանի մէջ :

Թերթի տեղեկատուութեամբ, միայն Թիֆլիսի մէջ գնդակահարուած են 135 հոգի :

ՊԱՅՔԱՐԸ ԿԸ ԹԱՐՈՒՆԱԿՈՒԻ ՏԱԿԱՒԻՆ...

Խորհրդային մամուլի վարիչներէն Եարոսլավսկիյ *Մոլոդայա Գւարդիա*յի մէջ (Մոսկուա, թիւ 9) յօդուած մը գետեղելով, կը յայտարարէ, որ թրոցքիականներու դէմ մղած պայքարին մէջ թերացումներ ունեցած են ոչ միայն պաշտօնական իշխանութիւնները (օրինակ, Չեկան, գլխաւորութեամբ Ցընռիազրկուած Եակոտայի), այլ եւ կուսակցական վերին մարմինները : Եարոսլավսկիի տեղեկատուութեամբ, իր ատենին երկու հայ համայնավարներ գաղտնաբար Համամիութենական Կոմկուսի Կեդրոնական Կոմիտէին լուր տուած են այն «դաւադիր» աշխատանքի մասին, որ Աղասի Խանջեանն ու Գուլյեանը Հայաստանի մէջ կը տանին «սթալինեան գծի» դէմ : Կեդր· Կոմիտէն, փոխանակ ընթացք տալու այս բողոքին եւ անհրաժեշտ ճնշուքիւններ կատարելու, կ'առնէ եւ բողոքագիրը կը յղէ Ա· Խանջեանին եւ Գուլյեանին : Արդիւնքը կ'ըլլայ այն, որ բողոքողները չարաչարօրէն կը պատժուին ...

Եարոսլավսկիի «ելոյթ»ը կուգայ վկայելու, որ իշխանութիւնները տակաւին կրցած չեն լրիւ կերպով «արատաւորել» ոչ Գուլյեաններ եւ ոչ ալ Խանջեանի գերիզմանը :

ՕՏԱՐԱԿԱՆՆԵՐԸ ԱԶԱՏ ԵՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԵԼՈՒ ՖՐԱՆՍԱՑԻ ՄԷՋ

Պաշտօնաթերթը կը գրէ թէ ընդունած է օտարականներու ազատ տեղափոխութեան արգելքը, որ դրուած էր 6 փետրուար 1935 թուակիր հրովարտակով :

6 փետրուար 1935ի հրովարտակին Գրդ յօդուածին համաձայն, ամէն օտարական կրնար բնակիլ միայն այն նահանգին մէջ, ուր ստացած էր իր ինքնութեան թուղթը : Մէկ նահանգէն միւսը փոխադրուիլ ուզած ժամանակ, նախօրօք պէտք էր դիմէր փոխադրուիլ ուզած չրջանի նահանգապետին, եւ այնտեղ փոխադրուէր միայն արտօնութիւնը ստանալէ վերջ : Անոնք որ չէին կատարեր այս ձեւակերպութիւնը, կը վտարուէին Ֆրանսայէն :

Կառավարութիւնը տեսնելով որ օգտակար չեղաւ այս կարգադրութիւնը օտարականներու հսկողութեան տեսակէտով, այլ ընդհակառակն աւելորդ նեղութիւններ պատճառեց, նոր հրամանագրով մը ջնջեց զայն :

Այս ձեւով ամէն օտարական կրնայ մէկ նահանգէն միւսը փոխադրուիլ, առանց նախապէս արտօնութեան համար դիմում կատարելու, այլ միայն ներկայանալով հաստատուած վայրին ոստիկանապետութեան, արձանագրուելու համար այնտեղ :

Փորթուկալ կը ճանչնայ Սպանիոյ ապստամբները

Հաւասի մէկ հեռագրին համաձայն, Փորթուկալ յուշագիր մը ղրկած է Պուրկոսի կառավարութեան, թէ կը ճանչնայ Զօր· Ֆրանքօն իբրեւ պետը Սպանիոյ պետութեան :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀՀ ԳԵՐԱԳՈՅՆ ՍՈՎԵՏԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ

ՀՀ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ելնելով Հայկական ԽՍՀ Գերագույն Սովետի Նախագահության 1938 թվականի հոկտեմբերի 31-ի հրամանագրից՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հայկական ԽՍՀ Գերագույն Սովետի Նախագահության 1938 թվականի հոկտեմբերի 31-ի հրամանագրի համաձայն՝ Հայկական ԽՍՀ Գերագույն Սովետի ընտրությունները նշանակել 1938 թվականի դեկտեմբերի 11-ին։

2. Հայկական ԽՍՀ Գերագույն Սովետի ընտրությունները կատարել ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ։

3. Հայկական ԽՍՀ Գերագույն Սովետի ընտրությունները կատարել ընտրական նոր տեղամասերով։

4. Հայկական ԽՍՀ Գերագույն Սովետի ընտրությունների ընդհանուր ղեկավարությունը հանձնել Հայկական ԽՍՀ Գերագույն Սովետի Նախագահության կից Կենտրոնական ընտրական հանձնաժողովին։

5. Հայկական ԽՍՀ Գերագույն Սովետի ընտրությունների անցկացման կարգի մասին հրահանգները հրատարակել Հայկական ԽՍՀ Գերագույն Սովետի Նախագահության կից Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից։

Հայկական ԽՍՀ Գերագույն Սովետի Նախագահ
Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Հայկական ԽՍՀ Գերագույն Սովետի Նախագահության քարտուղար
Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Երևան, 1938 թ. նոյեմբերի 1-ին։

Ի ՊԱՏՍՎ ՀԱՅԿԱԿԱՆԱՅԻՆ

— · —

Նիկոլի Նիկոլ — Իրենք Լեռնատափ գյուղատնտեսական ճեմարանի ուսանող են և ամբ Լեռնատափ քաղաքում են ծնվել և մեծացել։ Ամբողջ կյանքում ոչ մի անգամ չեն եղել գյուղում, ոչ էլ գյուղատնտեսությամբ են զբաղվել։ Ինչպե՞ս կարող են նրանք գրել գյուղատնտեսական թեմաներով։

Ա. Ա. Ա. — Ձեր նամակը մեզ չի հասել։ Ինչպե՞ս կարող ենք պատասխանել

թեան քաղաքականութիւնը: Աշխատաւորական կուսակցութեան կողմէ կրինուուա յայտարարեց ·

-— Եթէ ֆաշական կառավարութիւն մը ըլլար յարձակման ենթարկուողը, մի՛թէ պիտի չարժէիք այսպէս: Ապստամբներու յաղթանակը կրնայ վազը տեղի տալ նման չարժումներու նաեւ ուրիշ երկիրներու մէջ: Կրակի հետ կը խաղանք չէզոքութիւն խաղալով: Անգլիա պարտաւոր է ազատ ընթացք տալ միջազգային օրէնքներու գործադրութեան:

Ցետոյ խօսեցան ուրիշներ, որոնք ըսին թէ պատիւ պիտի համարէին կռուիլ Սպանիոյ կոմունիստներուն կողքին: Վիճաբանութիւնները փակեց վարչապետը ըսելով որ բրիտանական կառավարութիւնը չէզոքութեան յանձնախումբին տուած է իրենց քաղաքականութիւնը արդարացնող կարգ մը ապացոյցներ, որոնք գաղտնի պիտի պահուին եւ պիտի չյայտարարուին երեսփ. ժողովին մէջ: Ցետոյ աւելցուց ·

-— Կրնանք ըսել թէ չէզոքութեան բռնաբարում մը կատարուած է արդէն, բայց երկու կողմէ, այսուհանդերձ այնքան կարեւորութիւն չէր ներկայացներ որ փոխէինք մեր ընթացքը :

*** Չէզոքութեան միջպետական յանձնախումբը որոշեց խստացնել հակչիռը բոլոր այն փորձերուն վրայ, որոնք կը կատարուին օգնելու համար Սպանիոյ կռուող կողմերուն:

ԻՍՔԷՆՏԷՐՈՒՆԻ ՎԷՃԻՆ ԱՌԹԻՒ

ԹՈՒՐՔԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ՇՈՑԵԼ ՄԵԶ

Երէկ տուած էինք այն հերքումը, զոր «Ճիւմհուրիյէթ» կը հրատարակէր՝ հաղորդելով թէ Հայերը խուճապի մատնուած չեն Իսքէնտէրունի չուրջ բացուած պայքարին առթիւ, այլ ընդհակառակն «կապուած են Թուրքերուն»:

Թուրքերէն «Թան» թերթը, պատասխանելով «Ճիւմհուրիյէթ»ի· դիտել կուտայ հակնալի քծինքով մը·—

« Մեր տուած լուրը կը վերաբերի սեպտեմբեր 25ին: Կրնայ պատահիլ որ Հայերը այդ միջոցին առժամեայ վարանումի մը եւ խուճապի մը ենթարկուած ըլլան: Բայց բոլորս գիտենք թէ այդ նահանգին Հայերը յետոյ հակցան որ իրենց համար վրդովումի որ եւ է պատճառ չկայ եւ անմիջապէս վերջը չտո չիտակ եւ բարեկամական ընթացք մը բռնեցին:

Աբդէն, եթէ չհաւատանք ան մը ծայրայեղ գրգռիչներ, աշխարհի ամէն կողմը Հայերու Թրքահպրութիւնը եւ մեր լեզուին, երաժշտութեան, մշակոյթին հանդէպ անոնց յարումը՝ զարմանալի աստիճանի մը վրայ կը գտնուի: Ամերիկահայերէն չատերը ինքնաբերաբար իրենք Թուրք կը ներկայացնեն ի - րենք վերենք »:

**** « Թան » (Թուրքերէն) այս առթիւ կը գրէ թէ Իսքէնտէրունի իր Թղ - թակիցը վտարուած է այդ սանճաքէն:*

Էվգաճր կ'ուզէ Տավուտ Փաշայի կտակը

Գրած էինք թէ Պէյրութի Հայ Կաթոլիկ Պատրիարքութիւնը «Ս· Ցակոբ » անունով նոր հիւանդանոց մը բացած է, ստանալու համար Տավուտ Փաշայի 20,000 սթերլինի կտակը, որ եղած է Պոլսոյ Ս· Ցակոբ հիւանդանոցին համար եւ Լոնտոն կը գտնուի :

Իր կարգին, Էվգաճի տնօրէնութիւնն ալ ձեռնարկներ ըրած է այդ կտակը ստանալու, նկատելով որ ինքը ստանձնած է Ս· Ցակոբի մատակարարու - թիւնը:

Շարլ Մորրաս թանւսարկութեան

Շարլ Մօրրաս, այս կատաղի հրապարակագիրը, որ Լէոն Տօտէի հետ կը վարէ «Ակբտիոն Ֆրանսէզ» արքայական թերթը, ձերբակալուեցաւ հինգշաբթի կէսօրին, երբ կը ճաշէր խմբագրատան մօտիկը, ճաշարանի մը մէջ: Անմիջապէս տարուեցաւ բանտ :

25 մայիսին դատապարտուած էր երեք ամսուան, իսկ 21 յուլիսին ութ ամսուան բանտարկութեան, ամբաստանուած ըլլալով թէ մարդասպանու - թեան կը հրաւիրէ իր գրած յօդուածներով:

Արդարեւ, բարկաճայթ յօդուածով մը՝ Շարլ Մօրրաս մահուամբ կը սպառնար 140 մտաւորականներու եւ երեսփոխաններու, իբրեւ պատասխանատու Իտալիոյ դէմ գործադրուած պատժամիջոցներու, ուրիշ աւելի բիրտ յօդուածով մը կը սպառնար Լէոն Պլումի:

Իր երկու դատապարտութիւններէն վերջ դիմած էր Վճռաբեկ Ատեանին, որ մերժեց բեկանել վճիռը :

Արջ մը յօղոտից իր պահապանը

Սթրազպուրկի կենդանաբանական պարտէզին մէջ ահաւոր տեսարան մը պարզուեցաւ առջի օր :

Գիշատիչ կենդանիներու բաժնին պահապանը, Վաֆֆէնշմիտ, 39 տարեկան, առաւօտուն կեր տալու համար մտաւ արջի մը դառագեղը: Արջը յանկարծ յարձակեցաւ պահապանին վրայ, պատկեցուց գետինը, ճանկերը մխեց ձեց պահապանին վիզին մէջ: Դժբախտ պահապանը, որ միս էր բերած՝ մոռցած էր միասին առնելու իր երկժանի երկաթը: Սկսաւ օգնութիւն պոռալ : Գառագեղին առջեւը կեցած էին բազմաթիւ պատանիներ, որոնք սկսան նոյն - պէս օգնութիւն պոռալ, ոմանք փորձեցին քար նետելով՝ ազատել պահապանը պէս օգնութիւն պոռալ, ոմանք փորձեցին քար նետելով՝ ազատել պահապանը ճանկերէն: Արջը կատաղութեամբ կը խրէր ճանկերը եւ կը ըզկ - տէր իր զոհը, երբ հասաւ դրացի սրճարանին տէրը՝ հրացանը ձեռքին: Հար - ուած մը եւ կենդանին ինկաւ դիտապատս: Պահապանը փոխադրուեցաւ հի - անդանոց, ուր մեռաւ քիչ վերջ :

ՋԱՆՁԱՂԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՄԸ ՏՂՐՈՎ

Նոպելի բնախօսութեան եւ բժշկութեան 1936ի մրցանակը յատկացուեցաւ Սըր Հէնրի Տէյլի, որ տնօրէնն է Լոնտոնի բժշկագիտական քննութեանց պետական ուսումնարանին, ինչպէս նաեւ Օթթօ Լէէվիի, որ ծանօթ է իբրեւ փրօֆէսէօր բնախօսութեան :

**** Երկրաշարժի թեթեւ ցնցումներ զգալի եղան հինգշաբթի Լոս Անճե - լոսի, երեքշաբթի Թոքիոյի մէջ: Վնաս չկայ :*

**** Շուտպէ - լը - Ռուայի մէջ հինգշաբթի գիշեր ընդհարում մը տեղի ունեցաւ կոմունիստներու եւ Տը լա Ռոքի մարդոց միջեւ: Մօտ քսան հոգի վի - րաւորուեցան, մէկը հիւանդանոց փոխադրուեցաւ :*

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Մարսէյլ—փրաւոյի Ս. յանկ մեսրոպ մայր եկեղեցիի վարչութիւնը կը ծանուցանէ թէ՝ այս կիրակի 1 Նոյ., ողբացեալ ԿՈՄԻՏԱՍ Վ.ԱՐԴԱՊԵՏի մաիւսն տարելիցին առթիւ մատնա. ւոր հոգեհանգիստ պիտի կատարուի, նախածեռնութեամբ Մարսէյլի Հայ երաժշտական միութեան: Պիտի նա - խագահէ, պատարագէ ու քարոզէ Տ· Գարեգին եպսկ. Խաչատուրեան, կը հրաւիրուի Մարսէյլի Հայ ճաստ - րակութիւնը:

ՀԱՍՑԷԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

O. M. Ohanessian, Patisserie Orientale, 4 Rue de la Pavillon, Paris (20)

Փոխադրուած է՝

44 Ave. de la Porte du Pré-St-Gervais, Paris (19)։

ՀԱՍՑԷԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՒԱԶԴ ՀԱՆԸՄԵԱՆ իր

դրասենեակը փոխադրած է 122 *Bld. Myrat, Paris* (16), *մէթրօ Porte de St. Cloud. Հեռաձայն՝ Jasmin* 52-69

Le Gérant: H. STEPHAN

Imprimerie A. DER (AGOPIAN) 17, Rue Damesme, PARIS (13)

Հ· Ց· Դ·

Ֆարիզ

ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՈՑի «Զաւարեան» կոմիտէն ընդհանուր ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այսօր շաբաթ երեկոյ ժամը 9ին, սովորական հաւաքատեղին: կարեւոր օրակարգ:

Գաւառ

ՎԻԷՆի կոմիտէն ընկերական ընդհ. ժողովի կը հրաւիրէ Քրիստափոր եւ Մուրատ խումբի բոլոր ընկերները, վաղը կիրակի կէսօրէ վերջ ժամը 2,30ին, Թաժակ Ակուժքին մէջ, կարեւոր օրակարգ: Բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է: Ներկայանալ անդամատետրով:

Հ· Ց· Դ· ՄԱՐՍԷՑԼԻ ՇՐՋ· ԿՈՄԻՏԷԻ
Դասախօսական ժողովները

ԹԱԹՈՒԻ խումբի դասախօսական ժողովը տեղի կ'ունենայ երկուշաբթի (2 Նոյ.) երեկոյեան ժամը 8ին, Ֆանօթ հաւաքատեղիին մէջ:

ՎՐԻԺ խումբի ժողովը Նոյ. 4ին, երեկոյեան ժամը 8ին, Ֆանօթ հաւաքատեղիին մէջ:

ԶԱՒԱՐԵԱՆ ենթակոմիտէի դասախօսական ժողովը՝ Նոյ. 5ին, երեկոյեան ժամը 8ին, «Վարանդեան» սրահին մէջ:

ՎՐԱՄԵԱՆ ենթակոմիտէի դասախօսական ժողովը՝ ուրբաթ (Նոյ. 6) երեկոյեան ժամը 8ին, Ֆանօթ հաւաքավայրին մէջ:

Վերոյիշեալ ժողովներուն պիտի դասախօսէ՝

ԸՆԿ. Շ. ՄԻՍԿՃԵԱՆ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ

կազմակերպուած Ամնուվիլ-կուսէնվիլի Վարդան ենթակոմիտէի կողմէ

վաղը կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ին, *Salle Gallemant*ի մէջ, Ամնուվիլի կայարանին դիմացը:

Կը խօսին՝ ընկ. *ՍԵԴՐԱԿ ՍԱՍՈՒՆԻ* (հայերէն եւ ֆրանսերէն)

Mr GRANDFILS (Maire de Gonesse), Mr MAZOURIER (Secrétaire de la Section de S· F. I O. d'Arnouville)

ԳԵՂԱՐԻԵՍՏԱԿԱՆ ՃՈՒՆ ԲԱԺԻՆ:

Կ'արտասանեն՝ ՕՐ. ՄԵԼԵՆԷ ՕՍՄԱՆՃԵԱՆ, Պ. ՍՏԵՓԱՆԵԱՆ (ֆրանսերէն), ընկ. ՕՆՆԻԿ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Կ'ԵՐԳԷ ՏԻԿ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ, ՕՐ. ԿՆԵԱՉԵԱՆ եւ Մ. ՅՈՒԿՈՅԵԱՆ:

Սարսէլի Համազգայինի Մանուճիւղը կը ներկայացնէ

ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐԷՆ մէկ արար եւ գաւեշտ մը:

Հայկական եւ եւրոպական պարեր,

մասնակցութեամբ եփրատ նուագախումբի:

Մուտք՝ 5 ֆր., անգործներու՝ 3 ֆր.:

ՀԱԳ· ՄԻՋ·— Շոգեկառք կառ տիւ Նօռէն՝ ժամը 1,17, 1,27 եւ 3,17:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Պ. ԲԵՆԻԱՄԻՆ վարդավառեան եւ պարագաները շնորհակալութիւն կը յայտնեն ամէն անոնց որոնք անձամբ, գրաւոր եւ ծաղկեպսակով ցուցակցութիւն յայտնեցին իրենց սիրելի կնոջ եւ ազգականին՝ ՏԻԿ· ԶԱՊԻԼ Բ· ՎԱՐԴԱՎԱՌԵԱՆի դադարեցումն ժամուան առթիւ:

ՑՈՒՇԱՏԵՏՐ

Ֆ· Կ· ԹԱՂԻ ՊԱՆԵԷՕ-ՔԱՇԱՆի ժասնաճիւղը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերուհիները եւ ընկերները 1 Նոյ. կիրակի կէսօրէ վերջ ժամը 4ին, *150* Route d'Orléans, պանեէօ, Véronի սրահին մէջ: Թիստ կարեւոր օրակարգ:

ՓԱՐԻԶԻ Ցարօն-Ցուրուբերանի Նահ. Շայր· Միութեան, անդամական ընդհ. ժողովը, 1 Նոյ. կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ին, 119 Աւընիւ տ'Իթալիի սրճարանին մէջ: Օրակարգ՝ Ցարեկան հաշուետուութիւն, վարչութեան ընտրութիւն եւ ընթացիկ հարցեր: Ներկայանալ անդամատետրով:

ՓԱՐԻԶԻ ՍԵՐԱՍՏԻՈՑ Նահ. Միութիւնը իր բոլոր հայրենակիցները անխտիր անդամական ժողովի կը հրաւիրէ, որ տեղի կ'ունենայ 1 Նոյ. կիրակի կէսօրէ վերջ ժամը 2·30ին, Շ. փամպուքեանի ընակարանին մէջ, 20 rue Saigne, Montreuil s/Bois,

Բաժանորգներէս կը խնդրեմ ներողամիտ ըլլալ, իրենց թերթերը քիչ մը ուշ կամ անկանոն ստանալնուն համար: Պատճառը հիւանդութիւնս է:

«ցառաջ»ի Մարսէյլի գործակալ
Գ· ՄԵՐԻԿԵԱՆ

Լիոնի մէջ երեկոյեան դասաւանդութիւնները կը սկսին 2 Նոյ. երկուշաբթի երեկոյ ժամը 7-9, Շայոց եկեղեցիին մէջ, *69* բիս Լուի Պլան, Ուսուցչուհի ցասմիկ փիւթենէրեան պիտի աւանդէ շաբաթը երեք անգամ, երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ երեկոները: Երկսեռ պատանիներէ կը խնդրուի կանոնաւորաբար հետեւիլ դասաւանդութիւններուն: Մանրամասնութեանց համար դիմել տեղւոյն վրայ:

կրթական մարմին

ՀԱՆԴԷՍ — ՑԵՐԵԿՈՑԹ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՍԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՒ

1 Նոյ. կիրակի առաւօտ ժամը 9ին 10ին, Շահրիկեան սրահին մէջ,

5 Rue de l'Eclipse, *Մարսէյլ*

Կը նախագահէ Պ. Կ. ԳՈՒԼՈՒՄԵԱՆ

Կը խօսի՝ Պ. ՏԻԳՐԱՆ ՓԻՐԱՆԵԱՆ

«Լսարաններու դերը գաղթահայութեան մէջ»

Քաղաքական կարեւոր անցքերու մասին համառօտ տեղեկութիւններ կը տրուին:

Գեղարուեստական բաժինն իրենց մասնակցութիւնը կը բերեն՝ Զաքեմակահար Պ. Ս. ՉԻՕՐՔԻՃԵԱՆ եւ Պ. Տ. ԹՈՒՈՅԵԱՆ (արտասանութիւն)

Մուտքը ազատ է:

ԹԷՑԱՍԵՂԱՆ

Համազգայինի Մարսէլի Մասնաճիւղին կողմէ,

Իր վարձած սեփական ընթերցասրահ—ակումբի բացման առթիւ,

Այսօր, շաբաթ երեկոյ ժամը 9ին, *31 Rue Beaujour*, Մարսէլ

ՏԵՂի պիտի ունենայ վիճակախաղ:

(L'Ile de Beauté)

ՄՈՆՄԱՐԹրԻ ԱՄԷՆԷՆ ԸՆՏԻՐ
ԱՐԵՒԵԼԱ-ՖՐԱՆՍԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆԸ

90 Bld. de la Chapelle, Paris (18)

R. C. S. 670-643 Հեռախօս՝ **Mont.** 62-04

Մէթրօ՝ Պարպէս, կառ տիւ Նօռ, Լա Շափէլ

(Լաւիպուազիէռ ֆիւնիւլաճոցի մայրանոցի բաժինն դիմաց)

Կախարդական չքնաղակի մը մէջ, որ ուշեի եւս հաճելի զարձած է որմանկարներով, գ'ուած՝ հայ տպաւորչուր նկարիչի մը վրձինով, ինչպէս նաեւ սարփինայով (փերկոյա), լուսազարդութիւններով, ուր կրնաք խմել, ճիշդ ինչպէս Վոսփորի ափերուն վրայ, լաւագոյն օդին՝ ընտիր ֆրանսական եւ արեւելեան այլազան աղանդերներով, ճաշակել ոստրէ եւ խեցգետին, համտեսել ընտանեկան լաւագոյն ճաշերը, անարատ Թարմ կարագով,— այս ամէնուն համար չափաւոր գին մը, որ կրնայ մրցիլ բոլոր ճաշարաններուն հետ: Բանջարակերներու յատուկ ճաշը 4 ֆր. 50: Միսով, ըմպելիով ճաշը 7 ֆր. 50: Պատրաստ ճաշ ամէն ժամու,—շուքրութ Ալգոսեան յաւելուածով, սոխի ապուր եւ սաշափիկ (մուլ): Ճաշարանը բաց է մինչեւ Իր գիշերուան:

ԵՂԻՇԷ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

AMERICAIN LLOYD — **48 rue de la République**

ORIENT LLOYD — **7 rue Auber, Paris**

Մարսէյլ, Tél. C. 47-22 եւ C. 74-51 Tél. Opéra 67-77 67-78

Նաւային բոլոր ընկերութիւններու ներկայացուցիչ:

Տոմսակներ՝ ամէն տեղի համար: Շայ ճամբորդներու համար մասնաւոր գին: Ընծինք թղթակիցներ աշխարհի ամէն կողմը:

ՎՍՏԱՀԵԼԻ ՏՈՒՆ:

ԵԴՈՒԱՐԴ ԳԱԼՓԱՔՃԵԱՆ

ԴՐԱՄԱՏՈՒՆ, **48 rue de la République, Marseille**

Tél. Colbert 74—51, 47—22

Ծտար դրամներու փոխոխութիւն, ջէքեր կը տրուին ամէն երկրի համար: կը գնենք եւ կը ծախենք ոսկի դրամներ:

ԼԱՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ:

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

Ճաշարան ՓԼՕՐԻԱ

61, Rue Monsieur le Prince, Paris (6)

Մէթրօ՝ Օտէօն եւ Սէն Միշէլ Հեռաձայն Danton : 52 - 73

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ:

ԳԱՑԷՔ ՏԵՍԷՔ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Cinéma REXY

Rue Cours Lafayette, angle Garibaldi.

ԳԱՑԷՔ ՏԵՍԷՔ

CIGALE CINÉMA

60 Avenue de Saxe-LYON.

«ՁԱՐԱՑԻ» ԹԵՐԹՕՂԸ (126)

ՉԱՐԹՕՆ Ք

(ՎԷՊ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵԱՆՔԷ)

—o—

— Ախտս եղաւ, չատ ախտս , յաւ կը ճանչնայի Սարգիս Աբերը, հացով պատուով մարդ էր,— ու Սրբազանը յանկարծ ձայնը ցածցնելով շարունակեց·— Էդ Պոնտոլովսկին մարդ չէ, դազան է, դազան... ամբողջ Սուբ - մալուն ձեռքին մէջ կը դողայ... Վատ օրերու մէջ կ'ապրինք Հոյրիկ , ... չատ վատ... պէք է զգոյշ լինել ... Ախ, մեր ջահիլներն ալ,— ու սկսաւ քաշել ձեռքի սաթէ գեղեցիկ համրիչի խոշոր հատիկները՝ ալեհեր գլուխը չարժելով :

Երեւանի Առաջնորդարանը նստած է Հրազդան գետի ձախ ափին, ուղիղ կարուած քարաժայռի մը վրայ: Քաղաքի ամենաբարձր դիրքն ունեցող չէնքն է, որու ընդարձակ պատշգամը կը կախուի անդունդի վրայ: Այդ տեղէն հոյակապ համայնապատկեր մը կը պարզուի, քաղաքի մէջէն ոչ մէկ տեղէ մարդ կարող է տեսնել նման տեսարան մը:

Պատշգամի առջեւ Սրբազանն ու Հոյրիկը նստած կը խօսէին: Հին ծանօթներ էին: Հոյրիկը, որ յայտնի էր ամբողջ քաղաքին մէջ, որպէս «Ահնոցմէկ մէկը, դանազան խնդիրներու համար երբեմն կուգար Առաջնորդին մօտ:

Սրբազանը չիտակը չատ ալ չէր սիրեր այդ պատուած աղջիկը, որ տղամարդու նման կը ծխէր ու մանաւանդ քաղաքական հարցերով կը զբաղէր, բայց լաւ գիտէր, թէ որո՞նց կողմէ կուգար ան, ի՞նչ հոսանքի ներկայացուցիչ էր, այդ պատճառով ալ սիրալիր քաղաքավարութեամբ կ'ընդունէր զայն :

Բայց Հոյրիկի այդ օրուան այցելութիւնը չիտակը, զարմացուցեր էր Սրբազանը: Որպէս թէ ան եկած էր այդ կողմէն պատահաբար անցնելու ժամանակ, քանի մը վայրկեանով Սրբազանը տեսնելու համար: Բայց ամբողջ երկու ժամ արմուկը չէնած պատշգամի ճաղին՝ աչքը չէր հեռացներ Զանգուի կամուրջէն, որու վրայէն կ'անցնի էջմիածնի խճուղին :

Սրբազանը կենցաղագէտ կրօնաւոր մը, միշտ բան մը կը գտնէր խօսելու հիւրը զբաղած պահելու համար, թէեւ վերջինս հաղիւ թէ մտիկ կ'ընէր իր խօսքերուն՝ երբեմն ցրուած անորոշ հայեացքով մը իրեն նայելով: Սրբազանը չատ ալ վստահ չէր, թէ այդ կինը բառ մը կը հասկնար իր խօսքերէն, կամ նոյնիսկ գինք կը տեսնէր :

— Հա, քիչ առաջ դիւղացի մը եկաւ փարաքարէն· կ'ըսէր թէ Սարգիս Աբերը հոգեվարքի մէջ է,— բան մը ըսած լինելու համար խօսեցաւ Սրբազանը որ սկսեր էր ջղայնանալ հիւրի անսովոր լռութենէն :

Հոյրիկը մէկ վայրկեան գլուխը դարձուց դէպի Սրբազանը, կարծես թէ ուզեց խօսիլ, բայց անմիջապէս նորէն նախկին դիրքը վերստացաւ :

Տէր Աստուած, ի՞նչ ունէր այդ կինը: Սրբազանին թուեցաւ, որ Հոյրիկը անբնական լինելու աստիճան զգայնի վիճակի մէջ է ու երբեմն կը սարսռայ չերմ ունեցողի մը նման· դէմքը բոլորովին դունաթափ ՝ ու շրթունքը կը դողան :

— Հեր... հերսիս....,— յանկարծ փնգտաց Հոյրիկը ու ծոցէն մեծ թաշկինակ մը հանելով քիթը սրբեց : — Ներեցէք, Սրբազան, հեր ... հեր ... հերսիս ... հարբուխ ունիմ,—ու Հոյրիկը նորէն թաշկինակը փարատելով քթին տարաւ — այս տաքերուն ալ հարբուխ, կ'երեւի պաղ առած եմ· հեր... հեր ... հերսիս,— նորէն քիթը սրբեց, ջղային անհամբերութեամբ ոտքի ելաւ ու պատշգամի սիւներէն մէկուն կրթնեցաւ :

Սրբազանը նստած տեղը մնաց՝ յօնքերը կիտած : Այս յիմար կինիկը իր հետ խաղի՞ եկած էր թէ ինչ : Այդ ի՞նչ անբնական փոնգտոց էր, ի՞նչ անշնորհք վերաբերմունք· կռնակը իրեն դարձուցած՝ կարծես թէ ինքը հոն նստած չէինէր : Վայրկեան մըն ալ, ու Սրբազանը սրտնեղած տեղէն բարձրանալով՝ առանձնասենեակը պիտի քաշուէր, երբ այդիներու կողմէն նախ մէկ՝ ու քանի մը վայրկեան վերջ, բազմաթիւ հրացաններու որոտը իրարու խառնուեցաւ :

(Շար·) ՄԱԼԽԱՍ